

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

ՀԱՅԱՇՈՒՆԶ  
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ԹՈՐՈՒԹՅՈՒՆ, 2017

Krikor Hotoyan

HAYASHOUNCH  
BADMEVATZKNER

Կողքի լուսանկարը՝ Յովհաննավանք,  
Օհանաւան գիւղ, Աշտարակի շրջան

Printed and bound in Canada by:

**THE RELIABLE PRINTER**

Zohrab Sarkissian  
Unit 6 - 366 Bloor St. East,  
Toronto, ON M4W 1H4  
Canada

T: 416 792-9394

F: 416 733-9001

Email: [info@thereliableprinter.com](mailto:info@thereliableprinter.com)

[www.thereliableprinter.com](http://www.thereliableprinter.com)





ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

**ՀԱՅԱՇՈՒՆՉ  
ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ**

ԹՈՐՈՆԹՕ  
2017











Այս հապորդին մեկենասությունը  
սիրով սրանձնեցին աղջիկս՝  
Անի Նոթոյեան-Ժոլի  
ամուսինը՝ Մայքըլ Ժոլի  
և թոռներս՝  
Քրիստափորը և Սյրեփան-Արմենը:

Նազար շնորհակալություն իրենց ազգային  
և ծնողատեր ոգիին:

*ԳՐԻԳՈՐ ՆՈԹՈՅԵԱՆ*



## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

• Իմ խորին շնորհակալություններս կը յայտնեմ Գանատայի Հայոց Թեմի նախկին առաջնորդներուն՝ Գերաշնորհ Տէր Խաժակ Ս. Արք. Յակոբեանին եւ Գերաշնորհ Տէր Մեղրիկ Եպս. Բարիքեանին, եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ նախկին հովիւ՝ Գերապատիւ Տէր Շահէ Ծ. Վրդ. Փանոսեանին, ինչպէս նաեւ եկեղեցւոյ ներկայ հովիւներ՝ Գերապատիւ Տէր Գեղարդ Ծ. Վրդ. Քիւսպէքեանին եւ Արժանապատիւ Տէր Կոմիտաս Աւագ Քինյ. Փանոսեանին:

• Խորին շնորհակալություններ ազնուագոյն տիկնոջս՝ Շաքէ-Ալիս Հոթոյեանին, անդրանիկ զաւկիս՝ Անդրանիկ Հոթոյեանին, մշակութասէր աղջկանս՝ Անի Հոթոյեանին եւ իր ամուսնոյն՝ Մայքըլ Ժոլիին եւ իրենց զաւակներուն՝ Քրիստափորին եւ Ստեփան-Արմէնին:

• Խորին շնորհակալութիւն սոյն գիրքիս կողքը բարձր արուեստով օժտող սիրելի եւ մտերիմ ընկերոջս՝ գեղանկարիչ, քանդակագործ եւ արուեստագէտ ընկեր Յակոբ Գանապազեանին, գիրքիս գրաշարութիւնը, սրբագրութիւնը եւ էջադրումը սքանչելի ճաշակով գեղեցկացնող Պրն. Եփրեմ Թոքճեանին:

• Ընկերական մօտեցումով գրեթէ բոլոր գիրքերս տպող ընկեր Զօհրապ Սարգիսեանին՝ սրտագին շնորհակալութիւն:

• Եւ բոլոր անոնց, որոնք քաջալերեցին եւ օգտակար դարձան սոյն գիրքին հրատարակութեան:



## ՆԵՂԻՆԱԿԻՆ ԿՈՂՄԷ

Հալւալի մէջ, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու մէջ աշակերտութեանս շրջանին, յատուկ ուշադրութեամբ եւ սիրով հետեւած են ուսուցիչ-ուսուցչուհիներու կողմէ պատմուած բարոյալից պատմութիւններուն, անոնցմէ քաղելով ցուցմունքներ եւ ուղղութիւններ, որոնք օգնեցին ինծի ապագայ կեանքս մարդկային, բարոյական, ճշմարիտ եւ աստուածահաճոյ սկզբունքներու վրայ հաստատելու եւ ապրելու:

Ապագային, կիրակնօրեայ դպրոցներու մէջ որպէս ուսուցիչ եւ տեսուչ երեսուն տարիներու ծառայութեանս ընթացքին, պատմուող բարոյալից պատմութիւններու օգտակարութիւնները նկատի առնելով, իմ կարգիս բարոյալից պատմութիւններ կը պատմէի աշակերտութեան՝ գրուած օտար հեղինակներու եւ իմ կողմէ:

Իմ կողմէ գրուած եւ պատմուած պատմութիւնները միշտ հիմ կ'ունենային ազգային եւ եկեղեցական պատմութիւններէ առնուած դէմքեր (նկատի ունենալով, որ այդ օրերուն Սուրիոյ հայկական դպրոցներու ծրագրերուն մաս չէր կազմեր հայոց պատմութիւնը), ինչպէս նաեւ բարոյալից դէպքեր:

Նոր Կտակարանի չորս Աւետարաններուն մէջ յաճախ կը կարդանք Յիսուսի քարոզներու նկարագրութիւնները: Յիսուս, իր խօսքն ու ըսելիքը պարզացնելով, առակներով կը խօսէր, որպէսզի ժողովուրդին աւելի հասկնալի դառնան իր խօսքերը, այդ առակներու ճամբով ըմբռնելու Յիսուսի փոխանցած պատգամը:

Կիրակնօրեայ դպրոցներու մէջ պատմուած բարոյալից պատմութիւնները կը մեկնին Յիսուսի օրինակէն, որպէսզի 5-17 տարեկան աշակերտները դիւրութեամբ ըմբռնեն պատմութեան բարոյական իմաստը եւ դաս առնեն պատմութեան դէպքերէն եւ հոն յիշուող անձերու կեանքէն:

Անցեալին, Հալւալի կիրակնօրեայ դպրոցներու մէջ իմ գրած եւ պատմած պատմութիւններուն քանի մը հատը Թորոնթոյի Ս. Աստուածածին հայց. առաք. եկեղեցւոյ «Շողակաթ» կրօնական ամսագրին մէջ տպագրելը եւ ընթերցող հասարակութեան կողմէ գնահատանքով ընդունուիլը պատ-

ճառ դարձան, որ շարունակեմ գրել նոյնաման բարոյալից պատմուածքներ եւ առանձին հատորով մը հրատարակել:

Կեանքի որոշ տարիքէ մը ետք, երբ կը կորսնցնենք երիտասարդական մեր կարողութիւնները, ականայ կը հաշտուիմք մեր նոր կացութեան հետ, եւ մեզ նոր կեանքին կապող մեր զգացումները մեզ կը տանին մեր անցեալի եռանդուն կեանքին եւ ապրումներուն, որոնք մեզի կը պարգեւեն սփոփիչ երանութիւն: Այդ իմաստով, մեզի «ինչպէ՞ս ես» եղած հարցումին՝ ականայ կը պատասխանենք հռչակաւոր երաժշտագետ-խմբավար Բարսեղ Կանաչեանին պէս (Յալէպ, 1948-ին, Յոգետան բակին մէջ, Սասունցի Յակոբի փուռին մօտ նստած ցած աթոռի մը վրայ, երբ արդէն իր աչքերը տկարացած էին եւ խոշորացոյցով կը կարդար երաժշտական նօթաները), որ պատասխանեց՝ «Տղա՛ս, ինչպէ՞ս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ»:

Գիրքիս մաս կազմող կարգ մը պատմուածքները կը ներկայացնեն հայոց պատմութենէն, Մերձաւոր Արեւելքի, Եւրոպայի եւ Ամերիկայի զանազան քաղաքներու մէջ հաստատուած հայ բեկորներու կեանքէն, որոնք ապրած են այդ երկիրներուն մէջ: Այդպիսիներ, կարդալով այդ պատմուածքները, կ'երեւակայեն իրենց երիտասարդ տարիներուն անցուցած օրերը եւ իրաւունք կ'ունենան Բարսեղ Կանաչեանի պէս ըսելու՝ «Անցեալի յուշերով կ'ապրիմք»:

Ամէն պարագայի, բազմաթիւ պատմուածքներ մեզի կը փոխանցեն բարոյական, կրօնական եւ ազգային զգացումներ եւ դաստիարակչական օրինակներ, որոնց ընթերցումը մեծապէս կ'օժանդակէ հայ նոր սերունդներու զաւակներուն հայեցի եւ տոհմային նկարագրի կազմութեան եւ հայրենասիրական ու ազգասիրական ոգիի ընկալման, պայքարելու համար այլասիրական ուժացման թշնամիներուն եւ փոթորիկներուն դէմ:

Սոյն հատորը կ'ամփոփէ այն բոլոր պատմուածքները, որոնք նախապէս հրատարակուած էին զանազան գիրքերու մէջ, որպէսզի ընթերցողները տիրապետեն բոլոր պատմուածքներու բովանդակութեան եւ իւրացնեն պատգամներու նպատակները, ինչպէս կը կատարէր Աստուծոյ Որդին՝ Յիսուս, առակներով փոխանցելով իր պատգամները:

ԳՐԻԳՈՐ ՅՈԹՈՅԵԱՆ

**ՄՏԱԾՈՂ ՄԱՐԴՈՒՆ ՄԻՏՔԸ  
ՄԻՇՏ ԱՆՎԵՐՁ Է**

**Գրիգոր Հոթոյեանի «Մայրամուտի Ցուլքեր»  
գիրքի հրատարակութեան առթիւ**

Գիրքերը ձեր միտքի նաւերն են, որ կը  
նանապարհորդեն ժամանակի ալիքներու  
վրայով եւ գգուշաբար կը տանին իրենց  
թանկագին բեռը սերունդէ սերունդ:

*Սիրելի Պրն. Հոթոյեան, սրտաշարժ ուրախութեամբ ստացայ եւ  
կարդացի «Մայրամուտի Ցուլքեր» գիրքդ: Մանաւանդ ինքզինքս եր-  
ջանիկ համարեցի՝ գիրքին յառաջաբանի պատուին արժանանալուս  
համար: Հազար պատիւ Ձեզի՝ մօտաւորապէս 90-ամեայ ճանապար-  
հորդ: Ձեր կեանքը դեռ մօմի պէս լոյս կու տայ, որ մեր սիրելի հայ ժո-  
ղովուրդին մշակոյթը յաւերժ պահպանուի:*

*Պրն. Հոթոյեան, այս անգամ եւս վերահաստատեցիք Ձեր հաւա-  
տոյ հանգանակը հանդէպ մեր ազգին: Ձեր վերջին գիրքը՝ «Մայրա-  
մուտի Ցուլքեր»-ը տակաւին ծերացած չէ: Ձեր միտքն ու գործը յարա-  
տեւ են:*

*Ձեր բոլոր հատորները, այս վերջինին հետ միասին, ուղղուած են  
ամէն հայու, որ տակաւին չէ կորսնցուցած զգացումը ազգային հը-  
պարտութեան, գնահատանքը՝ հայ գրականութեան: Այս գիրքը նոյն-  
պէս կենդանի խօսող փաստ է: Անկեղծութիւնը յաջողութեան բանա-  
լին է գրական այս 209 էջնոց գիրքին, որուն էջերուն մէջ տրուած են  
ծանօթագրութիւններու արժէքը, հարստութիւնը. փոխանցուած գի-  
տելիքներու տարածքը հիացումի արժանի է:*

*Առաջին էջերուն մէջ կը կարդանք կարեւոր տեղեկութիւններով  
հարուստ յօդուածներ: Ընթերցողին կը ներկայացնէք սեղմ ուսումնա-  
սիրութիւն մը արցախեան աշխարհի մասին: Տեղահանութեան դըր-  
ուագներ ու հերոսական սիրանքներ, պատմութիւններ եւ եղելու-  
թիւններ:*

*Պրն. Հոթոյեան, դուք փաստերով նկարագրած էք, թէ Ղարաբաղի  
բարբառը ինչպիսի՜ ծագում ունեցած է ժողովուրդներու նախալեզ-  
ուին մէջ: Բաղդատութիւններ ըրած էք, թէ արցախեան բարբառին  
մէջ կան բազմաթիւ բառեր, որոնք գործածական են միայն այդ բար-*

բառով եւ չեն մտած հայերէնի ընդհանուր բառապաշարին մէջ: Ինչ-պէս նաեւ Ղարաբաղի բարբառին մէջ կան բազմաթիւ բառեր, որոնք իրենց արտայայտած իմաստով պահպանուած են տարբեր լեզուներու մէջ: Ձեր այս ուսումնասիրութեան մէջ դուք եղած էք լեզուի մտածողութեան աշխատաւորը:

Գրած էք նաեւ Լեռնային Ղարաբաղի մշակութային եւ հոգեւոր ժառանգութեան մասին: Կը յուսամ, որ այս յօդուածը օգտակար պիտի ըլլայ կարգացողներուն՝ որպէս տեղեկութեանց եւ գաղափարներու աղբիւր: Այստեղ նաեւ յատկանշական է Ձեր մարդկային ու բարոյական հաւատարմութիւնը անցեալի եւ հարագատ արմատներու հանդէպ:

Բաւական է թերթի գիրքին էջերը եւ հոն անգամ մը եւս կը տեսնենք հայ կեանքին եւ իրականութեան հայեիլին, կը տեսնենք, որ բոլոր հերոսները ազգային պատկանելիութիւն ունին: Դուք անհատները կը նկարագրէք իրենց իսկ էութեամբ, կը նկարագրէք զանոնք ինչպէս որ են: Այս երկուքը նմոյշներ են անկեղծութեան: Ձեր զգացումները վեհ են ու արդար:

«Զօն Գերապատիւ Տէր Մեղրիկ Մ. Վարդապետ Բարիքեանին՝ եպիսկոպոս ձեռնադրութեան եւ օծման առթիւ» գրութեան մէջ կ'ըսէք:

Եկեղեցական շարականներով,  
Սաղմոսներով եւ աղօթքներով ու  
Աստուածային սուրբ օրհնութիւններով,  
Կեանքի դարձուցիւր կանթեղ մշտավառ:

Անտարակոյս, մասունքի պէս համբուրելի կը գտնենք այս երախտաւորին՝ Մեղրիկ Սրբազանին նուիրուած պաշտամունքի աստիճանին հասնող հիացական այս տողերը, ուր բանաստեղծութիւնը կ'առանձնանայ եւ ցոյց կու տայ սրբազանին հոգեւոր արժէքներուն գեղեցիկ իրականութիւնը:

Պրն. Հոթոյեան, Ձեր գիրքին մէջ ներկայացուցած էք հանգուցեալ Գերաշնորհ Տ. Կորիւն Ս. Արք. Պապեանի յիշատակը յաւերժացրնելու մտածումը, անոր իրական կեանքի կենդանի պատկերներով եւ դէպի բարին ու գեղեցիկը ունեցած հաւատքով: Դուք կրկին գեղեցկացուցած էք Կորիւն Սրբազանի մարդկային եւ հոգեւոր կեանքը: Նմանապէս՝ հոգելոյս Տ. Արմէն Աւագ Քահանայ Իշխանեանի յիշատակին եւ Յակոբ Արսլանեանի յուղարկաւորութեան մասին: Այս բոլորը գրած էք Ձեր կեանքի փորձառութեամբ, մարդոց հետ յարաբերութիւններու պարզ ու ջերմ, անկեղծ զգացումներով, իմաստասիրական ու հաւատքի խոր ըմբռնումներով:

Այս բոլորին հետ մեծ էր զարմանքս, երբ զգացի, որ ամէն մէկ անձ կարծես իմ առջեւ բացաւ նոր, չտեսնուած աշխարհ մը՝ կարդալով



այս արժանաւորներուն զգացմունքներուն, մտքերուն ու յարաբերութիւններուն մասին, որոնք ինծի ծանօթ չէին եւ չէի տեսած զինքնք:

«Պաշտելի մօրս յիշատակին» բանաստեղծութեամբ կը վերադառնաք Ապրիլեան Եղեռն: Այս բանաստեղծութիւնը այն խորհուրդն է, որով դուք կը ստեղծէք Ձեր թափանցիկ աշխարհը, յուսաբեկ, շլմորած կ'ոգեկոչէք անցեալը, ուր ամենայն մանրամասնութեամբ պատկերած էք դժոխային այն ճանապարհը, ուրկէ անցած է Հայ ընտանիքը: Բանաստեղծութեան մէջ ինքնակենսագրական փաստերով թափանցած էք պատմական ծանր ժամանակաշրջանէ մը ներս: Դուք իրադարձութիւններն ու ժամանակի դէպքերը արձանագրած էք Ձեր յիշողութեան մէջ եւ գեղարուեստական բարձր արժանիքներով ներկայացուցած էք ընթերցողին: Կը պատմէք մօր, ընտանիքի, քրոջ եւ զաւկի սէրերուն մասին: Սակայն ասիկա սոսկ ընտանիքի մը պատմութիւնը չէ, աւելին՝ այս մէկը ամբողջ ժողովուրդի մը Հալածանքի ու դեգերումներու պատմութիւնն է: Ասիկա ամբողջ սերունդի մը կորուստի շարունակուող ցաւն է՝ 1915-էն ցայսօր պահպանուող կարծրացած կարօտը, սուր ցաւի նման խոցող ամենաանասելի պահերուն անգամ:

Մայր իմ,  
Դուն եւ որդիդ կը գտնուէիք  
Եփրատի հոսող ջուրերուն վրայ,  
Մօրդ գլուխը մարմինէն բաժնուած  
Կը տեսնես, որ կը ծփար ազատօրէն,  
Պատեառ դառնալով սարսափելի լացի  
Եւ աղաղակի:

Մայրական սիրերգութիւնը դարձած է Ձեզ Համակող էութիւն՝ իր բազմազան երեւոյթներով: Խորապէս ապրուած զգացում, ուր Դուք բազմաթիւ բառեր կ'որոնէք՝ մօր սիրոյ կարօտը զգալով: Համոզուած ըլլալով, որ մօրդ սէրը անհասանելի է, սակայն իբրեւ բալասան՝ կ'ամօքէ Ձեր տառապանքը: Հակառակ տարիներու թաւալին, Դուք հետեւած էք Ձեր սրտի թելադրանքին:

Բաւականին լայն է, Պրն. Հոթոյեան, Ձեր հետաքրքրութիւններու շրջագիծը: Մանր ու մեծ հատորներով, բազմաթիւ ու բազմազան յօդուածներով նուաճած էք սեփական ստորագրութեան իրաւունք: Այս հսկայածաւալ գիրքերը գրելով՝ աշխատած էք վառ պահել Հայ ոգին: Ամէնէն առաջ այդ «Հոգին» է, «Կենդանի շունչը»՝ դրոշմուած անկենդան թուղթի վրայ: «Գրողին մեծագոյն գրգռիչ գաղափարը դիւրամատոյց ըլլալն է», ըսած է Միսաք Մեծարեհնց: Ահա թէ ինչո՞ւ Ձեր գիրքերը ընթերցելու ժամանակ կը թուի, թէ Հոթոյեանը կը խօսի

քեզի հետ եւ դուն կը զգաս, որ կը ճանչնաս Հոթոյեան մարդը: Ձեր խմբագրած եւ ծանօթագրած հատորներուն շնորհիւ՝ մեր ծանօթութիւնը կը զարգանայ ու կը խորանայ:

Այսպիսով, Պրն. Հոթոյեան, Ձեր մտաւորականի գանձը հայրենասիրական սխրանքն է: Ձեր գրական ժառանգութիւնը ծայրէ ի ծայր ներծծուած է վսեմ հայրենասիրութեամբ: Այդ ոգիով դաստիարակած էք Ձեր դուստրը՝ Անին, ամուսինը՝ Մայքըլը եւ թոռներդ՝ Բրիտափորն ու Ստեփան-Արմէնը, որոնք կրկին անգամ ստանձնած են այս հատորին մեկենասութիւնը:

Ընդունեցէ՛ք, խնդրեմ, անկեղծ շնորհակալութիւնս, որ Ձեր վերջին գիրքը՝ «Մայրամուտի Յուլքեր»-ը ինծի արժանացուցիք:

Սիրելի՛ Պրն. Հոթոյեան, գոյգ տօներուն՝ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան առթիւ կը մաղթեմ Ձեզի եւ ազնուափայլ տիկնոջդ՝ Շաքէին, քաջառողջ կեանք, խաղաղ ու արեւշատ օրեր:

Մնամ յարգանքով՝  
ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ

24 Դեկտեմբեր 2016  
Թորոնթօ



Բերիոյ բեմի բարեջան առաջնորդ Գերաշնորհ Տ. Զարեհ Ա. Արք.  
Փայալեան (ապագային կաթողիկոս) կ'այցելէ Ռագգայի հայ գաղութին,  
14 Հոկտեմբեր 1950

**ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ**



## ԱՂՕԹՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Սասնոյ Տալւորիկ գաւառի Սպաղանք գիւղը կը հաշուէր 26 ընտանիք, որոնք քաջ եւ կրօնասէր գիւղացիներ էին, փարած իրենց ազգային աւանդութիւններուն եւ կրօնական սրբութիւններուն: Ունէին պատմական եկեղեցի մը, որ կը կոչուէր Մարուքէի Ս. ձգնաւոր եկեղեցի: Կը պատմուի, թէ այս եկեղեցին հրաշագործ գորութիւն ունէր եւ բազմաթիւ հիւանդներ բուժուած էին՝ հաւատալով Մարուքէ ձըգնաւորի գորութեան:

Սպաղանք գիւղը նշանաւոր էր թուրք եւ քիւրտ աւազակախումբերու Սասունի գիւղերուն վրայ կատարած յարձակումներուն դէմ դնող եւ որպէս Ֆետայի Սասնոյ լեռներուն վրայ ապաստանած ազատ եւ պատուով ապրելու համար կռուող Մակարի, Գալէի եւ Ակէի նման քաջազուն Ֆետայիներով, որոնք իրենց արիւնը թափեցին հայ ժողովուրդի ազատ եւ անկախ ապրելու ճանապարհին:

Սպաղանք գիւղի բնակիչներէն Հայրօ Տէր Սարգիսեան ընտանիքը կը սերէր Տէր Սարգիսի սերունդէն, որ իր ժամանակին հռչակաւոր քահանայ մը եղած է: Հայրօ իր քահանայ մեծ հօրմէն ժառանգած էր կրօնասիրութիւն եւ ատիկա պատճառ եղած է, որ ան իր միակ մանչ գաւակը՝ Պօղոսը, հայեցի դաստիարակութեամբ կրթելէ ետք, ուղարկած էր Մշոյ Ս. Կարապետ վանքը, որպէսզի ան եկեղեցական դառնայ եւ յաջորդէ արդէն իսկ ծերացած գիւղի քահանային:

Պօղոս, Ս. Կարապետ վանքը ուսանելով, բաւական յառաջդիմած էր եկեղեցական եւ կրօնական գիտութեան մէջ: Ամառնային արձակուրդներուն գիւղ գալով, գիւղի եկեղեցիին կը ծառայէր որպէս դպիր եւ իր գեղեցիկ ձայնով շարականներ երգելով՝ հոգեպարար շունչով կը յուզէր բարեպաշտ ժողովուրդը:

Պօղոս, ինչպէս որ վանքին մէջ սովորութիւն ըրած էր, կերակուրէն առաջ եւ վերջ կ'աղօթէր եւ մանաւանդ գիշերը, պառկելէ առաջ, ծունկի գալով՝ իր հաւատացեալ ծնողքին հետ կ'աղօթէր:

Այդ օրերուն հայ Ֆետայիներուն կողմէ տխուր լուրեր կը հասնէին Սասուն: Հայկական բոլոր գաւառներուն հայերը օսմանեան պետութեան հրահանգով սկսած էին աքսորուիլ:

Ծագած էր Համաշխարհային Առաջին Պատերազմը եւ թուրքիան օգտուելով պատերազմի մթնոլորտէն՝ որոշած էր միանգամընդմիշտ ազատուիլ Հայկական Հարցէն՝ հայ բնակչութիւնը աքսորելով եւ աքսորի ճամբաներուն վրայ վայրագօրէն սպաննելով:

Առաջին հերթին ձեռքակալուած եւ աքսորուած էր հայ մտաւորականութիւնը: Ապա, հայ երիտասարդութիւնը զինուորագրելով՝ ամայի ձորերու մէջ գնդակահարած էին, անպաշտպան ձգելով տաքազրուող հայ կիները, ծերունիներն ու մանուկները:

1915-ին, Սպաղանք գիւղի երիտասարդներն ու պատանիներն ալ չկրցան ազատիլ թրքական պարտադիր զինուորութենէն, հակառակ Սասնոյ ժողովուրդին մղած ինքնապաշտպանական կռիւներուն՝ թրքական կանոնաւոր բանակներուն եւ քրտական աւազակախումբերուն դէմ:

Հաւաքուած զինուորացուներուն մէջ էր նաեւ սպաղանքցի Պօղոս: Շատերուն ծնողները վշտով եւ արցունքներով կը բաժնուէին իրենց սիրասուն զաւակներէն: Բաժանման ընթացքին Պօղոսի մայրը արտասուլթոր աչքերով փաթթուեցաւ իր զաւակին՝ ըսելով.

— Աստուած, Յիսուս Քրիստոս, Քեզի կը յանձնեմ իմ միակ որդիս: Պաշտպանէ՛ զինք ամէն տեսակ թշնամիներէն: Փրկէ՛ իր կեանքը: Վտանգի մը պարագային՝ թող թշնամիին աչքերը վարագուրուին եւ անկարող ըլլան տեսնելու եւ վնասելու որդեակիս:

Իսկ Պօղոսին թելադրեց, որ միշտ աղօթքով եւ յոյսով ապրի: Երբեք չմոռնայ իր հաւատքն ու եկեղեցին, միշտ յիշելով, որ ինք հայ քրիստոնեայ է, եւ վտանգի մը պարագային՝ հաւատքով արտասանէ Ս. Կարապետ վանքին մէջ իր ուսանողութեան ընթացքին սորված Ներսէս Շնորհալիի «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը:

Ծառայութեան կանչուած հայ զինուորացուներուն խումբը ճամբու ընթացքին կը ստուարանար մերձակայ գիւղերէն հաւաքուած հայ զինուորացուներով: Երկու օրուան հետիոտն ճանապարհէ մը ետք, խումբը տեղաւորեցին խոր կիրճի մը մէջ, ուրկէ միայն կապոյտ երկինքը կ'երեւէր: Իսկ կիրճի բարձունքներուն վրայ դիրք բռնած էին թուրք զինուորները, անհամբեր կեցած իրենց գնդացիներուն ետեւ, պատրաստ՝ կրակելու:

Պօղոս եւ հայ զինուորացուները հասկցան իրենց սպառնացող վրտանգին ահաւորութիւնը: Ազատումի ոչ մէկ յոյս, որովհետեւ անկարելի էր այդ անգնդախոր ձորէն առանց նշմարուելու փախուստ տալ:

Թուրք սպային կողմէ արձակուած հրամանին վրայ, բազմաթիւ հրացաններ եւ գնդացիներն որոտացին հայ խելակորոյս երիտասարդներուն վրայ, որոնց թիւը հինգ հարիւրը կ'անցնէր:

Կէս ժամ վերջ մեռելային լռութիւն մը իջած էր մահասփիւռ ձորին մէջ: Միայն քանի մը ծանր վիրաւորներու հոգեվարքի հեծեծանքները կը լսուէին, որոնք շուտով դադրեցան, երբ քանի մը զինուորներ սուիներով վերջ տուին անոնց կեանքին:

Ի՞նչ եղաւ Պօղոս:

Հրացանաձգութեան ընթացքին, իր կողմը եկած փամփուլտները չէին դպած Պօղոսին, որ գժոխային մթնոլորտէն սարսափահար ինկած

էր մեռելներուն մօտ: Երբ հրացանաձգութիւնները դադրեցան, Պօղոս աչքերը բացաւ: Քննեց ինքզինք: Ի՛նչ տեսնէ...: 500-է աւելի սասունցի երիտասարդներ արիւնլուայ, բաց աչքերով կը գիտէին երկինքը, ուրկէ իրենց անմեղ հոգիները կը սլանային դէպի վեր...: Այդ միջոցին լսեց հեռուէն եկող պոռչտուքներ: Ուզեց փախչիլ կամ պահուրտիլ, բայց ո՞ւր...: Զինուորներէն մէկը տեսած էր զինք: Խուճապով զինուորներ իջան ձոր, փնտռեցին ողջ մնացած պատանին, տակնուվրայ ըրին մեռելներուն դիակները, սակայն չկրցան գտնել զայն:

Պօղոս, տեսնելով, որ զինուորները իրեն կը մօտենան, նշմարած էր ձորին մէջ գտնուող խոշոր ծառի մը բունին մէջ բացուած խոռոչը եւ պահուրտած հոն: Այդ վայրկեաններուն, Պօղոս ծունկի եկած, մայրը յիշելով, ամբողջ սրտով կ'արտասանէր «Հաւատով Խոստովանիմ»-ի 24 համարները:

Զինուորները ծառին առջեւէն բազմաթիւ անգամներ անցան, պոռացին, կանչեցին, սակայն ապարդիւն: Այն զինուորը, որ զինք տեսած էր, զարմացած կ'ըսէր.

— Քիչ առաջ հոս տեսայ, պատանի մըն էր, ո՞ւր գնաց, ինչպէ՞ս աներեւութացաւ:

Իսկ ընկերները կը մեղադրէին զինք՝ ըսելով, որ իր տեսածը անպայման երեւակայութիւն է:

Երբ թուրք զինուորները Պօղոսին գտնուած ծառի խոռոչին առջեւ կեցած էին, Պօղոս հասած էր «Հաւատով Խոստովանիմ»-ի 15-րդ համարին: «Պահապան ամենայնի՝ Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել՝ զի մի երբեք սասանեցայց, եւ ողորմեա՛ք արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս»:

Վերջապէս զինուորները յուսահատած՝ մեկնեցան: Այդ ձորին մէջ ամէն օր այդպիսի ջարդ կը կատարուի եղեր եւ յաջորդ օր, նոր խումբի մը ժամանումէն առաջ, սպաննուածները կը թաղեն եղեր հսկայ փոսի մը մէջ, որպէսզի նորեկները չտեսնեն եւ դիակները չհօտին:

Սարսափելի վայրկեաններ ապրած, մահը տեսած, սակայն աստուածային հրաշքով ազատած Պօղոս, մինչեւ գիշերուան ուշ ժամերը իր թաքստոցին մէջ մնալէ ետք, գաղտագողի հեռացաւ այդ անիծեալ վայրէն: Բաւական քալելէ ետք, հեռուէն ցոլացող լոյսին հետեւելով, հասաւ գիւղ մը, որուն բնակչութիւնը կը բաղկանար քրիւրտերէ: Մինչեւ առաւօտ փողոցները թափառելէ ետք, համարձակութիւնը ունեցաւ տունի մը դուռը թակելու, որովհետեւ յոգնութենէ եւ անօթութենէ կը տառապէր:

Տանտէրը քրտական տոհմիկ հիւրընկալութեամբ ընդունեց անկողն հիւրը եւ երբ տեղեկացաւ անոր ազգութեան եւ կրած չարչա-

րանքներուն, առաջարկեց մնալ իրենց տունը եւ դաշտային եւ կենդանական աշխատանք կատարելով ապահովել իր ապրուստը:

Պօղոս 15 տարի ծառայեց քիւրտ ընտանիքին՝ ի գին փոր մը հացի: Գիւղացիները գինք որպէս քիւրտ կը ճանչնային, որովհետեւ փոխած էին անոր անունը՝ տալով քրտական Արէֆ անունը:

Պօղոս 15 տարի հայերէն չխօսեցաւ, սակայն Ս. Կարապետ վանքին մէջ սորված աղօթքները ամէն օր կ'արտասանէր: Նախիրը արածելու ընթացքին երանութեամբ կը յիշէր իրենց գիւղը, իր ծնողքն ու ազգականները, որոնց ճակատագիրը անյայտ էր իրեն համար: Գիւղացիները իրեն հաւատացուցած էին, որ հայ ժողովուրդը ամբողջութեամբ ջարդուած է, եւ հայ գոյութիւն չունի այլեւս աշխարհի վրայ:

Պօղոսի պաշտպանը, որ շատ կը սիրէր գինք, գոհ էր անոր հաւատարմութենէն եւ աշխատանքէն, եւ կը փափաքէր իր աղջիկը կնութեան տալ Պօղոսին: Սակայն Պօղոս զանազան պատճառաբանութիւններով տարուէ տարի յետաձգել կու տար իսլամական այդ ամուսնութիւնը:

1941-ի գարնան, Պօղոսի պաշտպան քիւրտ աղան կ'որոշէ մեկնիլ Մեքքէ-Մետինէ, որպէսզի հաճի դառնայ: Կ'առաջարկէ Պօղոսին իրեն ընկերանալ, սակայն մէկ պայմանով. վերադարձին անպայման ամուսնանալ իր աղջկան հետ:

Պօղոս, երկար մտածելէ ետք, իրեն եղած առաջարկը կ'ընդունի՝ մտածելով, որ մինչեւ իսլամական սուրբ տեղերուն իրենց այցելութիւնը, թերեւս ճշգրիտ տեղեկութիւններ կրնայ առնել իր ազգին եւ հարազատներուն մասին:

Ճամբորդական պատրաստութիւնները վերջանալէն ետք, ուխտաւորներու կարաւանը ճամբայ կ'ելլէ դէպի Արաբիա: Երկար եւ ձանձրացուցիչ ճամբորդութենէ մը ետք կը հասնին Սուրիոյ Հալէպ քաղաքը: Պանդոկի կարգադրութիւններէ ետք, Պօղոս կը շրջագայի Հալէպի պատմական բերդին մօտ գտնուող շուկաները: Օրը Ուրբաթ ըլլալով, Ուրբաթ օրուան տօնավաճառին ներկայ կ'ըլլայ եւ հետաքրքրութեամբ կը դիտէ ծախուող զանազան առարկաները եւ ուտելիքները: Յանկարծ ականջալուր կը դառնայ հայերէն խօսակցութեան: Կը մօտենայ հայերէն խօսողներուն, որոնք ամերիկեան գործածուած հագուստներ կը ծախէին: Հայերէն բառեր եւ խօսակցութիւններ լսելով, իր աչքին կը պատկերանան իր անցեալը, իր մանկութիւնը եւ կը սկսի մանուկի նման լալ:

Հայ վաճառականները, տեսնելով քրտական հագուստով երիտասարդի մը արցունքոտ աչքերը, կը մօտենան անոր եւ իրեն հարց կու տան.

— Դուն հա՞յ ես:

Պօղոս կը խոստովանի իր ազգութիւնը, պատմելով Եղեռնի տարիներուն եւ անկէ յետոյ իր կեանքին մանրամասնութիւնները:



Ամերիկեան գործածուած բաճկոններ եւ վերարկուներ ծախող վաճառականներէն մէկը, սասունցի ըլլալով, տէր կը կանգնի Արէֆ Պօղոսին՝ զայն փախցնելով քիւրտ աղային ծառայութենէն:

Յետագային, Պօղոս սասունցի վաճառականին գործակիցը կը դառնայ եւ ամուսնանալով Հայ աղջկայ մը հետ, կը կազմէ Հայկական տոհմիկ բոյն մը՝ ունենալով զաւակներ, որոնց երբեմն կը պատմէր իր կեանքը եւ կ'աւելցնէր.

– Սիրեցէք ձեր ազգը, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին եւ աղօթեցէք ամէն օր, որովհետեւ ես իմ կեանքս կը պարտիմ մօրս կողմէ ինծի յանձնարարուած եւ Ս. Կարապետ վանքին մէջ սորված աղօթքներուն:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Գրիգոր Հոբոյեանը կը պատուէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ 1 Հոկտեմբեր 2005-ին

## ՀԱՒԱՏՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Արմեն Գրիգորեանը 24 Յունիս 1943-էն սկսեալ կը ծառայէր Ազատ Ֆրանսայի բանակի Սուրիա-Լիբանան գտնուող հրետանիական բաժանմունքին մէջ, եւ շուրջ երեք տարիներու ընթացքին, հետեւելով թնդանօթաձգային գիտութեան դասընթացքներուն, յատկապէս մասնագիտանալով ամերիկեան 75 միլլիմետր եւ ֆրանսական 105 միլլիմետր տրամագիծով թնդանօթներու, որպէս ենթասպայ կը վարէր թնդանօթաձգային բոլոր պաշտօնները, նշանառութենէն մինչեւ փամփուշտներու (OBUS) տեսակներու ընտրութիւնը եւ պայթելու չափը:

1945-ին, Սուրիոյ մէջ սկսած անկախութեան եւ ֆրանսական հոգատարութենէն ազատագրման պայքարներուն հետեւանքով եւ Համաշխարհային Երկրորդ Պատերազմէն առաջ ֆրանսական եւ սուրիական կառավարութիւններու կողմէ կնքուած համաձայնութեան եւ անգլիական կառավարութեան երաշխաւորութեան պարտադրումով, Սուրիոյ մէջ գտնուող ֆրանսական բանակները տեղափոխուեցան Լիբանան, այնտեղէն Ֆրանսա փոխադրուելու համար:

Ենթասպայ Արմենի թնդանօթային գումարտակը տեղաւորուեցաւ Լիբանանի Ռայազ քաղաքի օդակայանին մէջ գտնուող յատուկ զինուորական կայաններուն մէջ:

Կեանքը բնական եւ հեզասահ կը շարունակուէր Ռայազի օդակայանին մէջ: Արմեն եւ ընկերները երեկոները քաղաք կ'իջնէին եւ կը յաճախէին նշանաւոր եւ տեսարժան վայրերուն մէջ գտնուող սրբաւաններն ու ճաշարանները, երբեմն ալ կը հանդիպէին Ռայազ բնակող հայերու, անոնց հետ ծանօթանալով եւ բարեկամանալով՝ կ'ընդառաջէին անոնց հրաւերներուն՝ այցելելով անոնց տունները, հայկական ընտանեկան ջերմութիւն եւ հիւրասիրութիւն վայելելով հոն:

1945-ի Յունիսին, թնդանօթային արկածի մը հետեւանքով, Արմեն անմիջապէս փոխադրուեցաւ Ռայազի զինուորական օդակայանի երեք յարկանի ընդարձակ զինուորական հիւանդանոցը եւ ֆրանսական բանակի զինուորական սպայ բժիշկներու կողմէ ենթարկուեցաւ վիրահատութեան, փրկուելով ձախ ձեռքի դաստակէն ձեռքը կորսընցնելու վտանգէն:

Այդ օրերուն Ռայազի զինուորական հիւանդանոցին մէջ կը դարձանուէին ֆրանսական բանակի զինուորներն ու անոնց ընտանիքները: Արմեն ահաբեկիցաւ փոխադրուեցաւ հիւանդանոցի իրեն յատկացուած անկողինը: Զախ ձեռքի դաստակին ներսի կողմի միսերը ցաւալիօրէն ճզմուած էին եւ ոսկորը կ'երեւար: Ի պատիւ զինուորա-

կան բժիշկ Եօթնյան Ժորժի ճարտարութեան եւ հմտութեան, ան իր ամբողջ կարելիութիւնները ի գործ դրաւ՝ յատուկ ուշադրութեամբ կտրելու բացուածքին վնասուած միսերը եւ մաքրելու վէրքը՝ յանձնարարելով, որ երբեք չհամարձակի քակել վիրակապերը:

Նոյն օրը, կէսօրէ ետք, վէրքին սկիզբի ցաւերը ժամէ-ժամ գօրացան, արիւնը կը շարունակէր մեղմօրէն հոսիլ, կարմիր գոյնով ներկելով վիրակապերը:

Անդիմադրելի ցաւին ազդեցութեան տակ, Արմէն դիմեց հիւանդապահուհիներուն՝ աղաչելով, որ ճար մը գտնեն ցաւը մեղմացնելու եւ արիւնահոսումը կեցնելու: Անօգուտ: Հիւանդապահուհիները մերժեցին վիրակապերը քակել, քանի որ այդպէս յանձնարարուած էր գլխաւոր բժիշկին կողմէ:

Սակայն, ստիպուած, աղօթելով եւ ցաւը մեղմացնող դեղեր առնելով դիմադրեց ցաւերուն, ամբողջ գիշերը չկրցաւ քնանալ: Առաւօտուն, հիւանդապահուհիները Արմէնին վիրակապերը քակեցին. արիւնը դադրած էր հոսելէ. դեղերով մաքրեցին վէրքը եւ նոր վիրակապերով կապեցին՝ յուսադրելով, որ ցաւերը օրէ օր մեղմանան:

Օրեր եւ շաբաթներ անցան: Արմէնին վէրքը դարմանումի ենթարկուելով՝ ցաւերը մեղմացան եւ տրամադրութիւնն ալ բարելաւուեցաւ, ժպիտ երեւցաւ դէմքին, ուրախութիւն պատճառելով դարմանող բժիշկին, հիւանդապահուհիներուն եւ դարմանող այլ հիւանդներու, որոնց հետ մտերմիկ յարաբերութիւն հաստատած էր, եւ մանաւանդ հայ զինուորներու ընտանիքներուն եւ անոնց պարագաներուն հետ, որոնք յաճախակի կ'այցելէին իրենց հիւանդ ազգականներուն եւ հարազատներուն:

Արմէն հիւանդանոցին մէջ, մանաւանդ անտանելի ցաւ ունեցած շրջանին, իր մարմնական ցաւին տառապանքներուն դիմադրելու համար, ամէն օր ժամանակ կը գտնէր կարդալու իր մօտ տարիներէ ի վեր գուրգուրանքով պահած Աստուածաշունչէն համարներ, որոնք իրեն ուժ եւ եռանդ կու տային սիոփուելու աստուածային օրհնութեամբ: Ան մեծապէս կը խրախուսուէր Պօղոս Առաքեալի հոովմայեցիներուն ուղղուած թուղթի 12-րդ գլուխի 12-13 համարներու ընթերցումով, ուր կ'ըսուէր. «Յոյսով ուրախացէք, նեղութեան մէջ համբերող եղէք, յարատեւ աղօթեցէք: Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք եւ միշտ հիւրասէր եղէք»:

Պօղոս Առաքեալի իմաստուն այս խօսքերը Արմէնին կեանքի հանդէպ հասկացողութիւնը ճիշդ ճամբաներով առաջնորդեցին, թեթեւցնելով իր հոգեկան տառապանքները, իրեն յոյս ներշնչելով ամբողջական բուժման հասնելու:

Արմէն, մէկ ամիսէն աւելի հիւանդանոցին մէջ դարմանուելով, իր նախկին առողջութիւնը գրեթէ գտած էր, կը մնար իր ստացած վէրքին վերջնական բուժումը: Մտաբերելով Պօղոս Առաքեալի հետեւեալ

խօսքը՝ «Կարիքի մէջ եղող եղբայրներուն օգնեցէք», Արմէն որոշեց իր օգնութիւնը առաջարկել հիւանդներուն՝ նախաճաշի, ճաշի եւ ընթրիքի սպասարկութեան:

Արմէնին առաջարկը գնահատութեամբ ընդունուեցաւ հիւանդանոցի պատասխանատուներուն կողմէ, առիթ տալով, որ հիւանդանոցին մէջ իր բարեկամական շրջանակը ընդլայնի:

Այդ օրերուն հիւանդանոց բերին հայ զինուոր մը, որ արաբ ազգայնականներու կողմէ ծանրօրէն վիրաւորուած էր Սուրիոյ Տէր Զօր քաղաքին մէջ սկսած սուրիական ազատագրական կռիւներուն ընթացքին, նկատելով, որ ան Ֆրանսական զինուորական ոստիկանութեան կը պատկանէր եւ ազատուած էր ստոյգ մահէ տեղացի հայ բնակիչի մը կողմէ, որ որպէս հայորդի ծանօթ էր անոր, որ միշտ կ'օգնէր տեղւոյն հայ գաղութին:

Վիրաւոր հայ զինուորը, որ Ֆրանսական հպատակութիւն ժառանգած էր իր հօր Ֆրանսական բանակի Օտար Լեգէնին մէջ ծառայած ըլլալուն համար, շատ ծանր կերպով վիրաւորուած էր եւ նոյնիսկ խօսելու կարողութիւն չունէր: Միայն ցաւերու ընդմէջէն կ'արտասանէր «մայրիկ, հասի՛ր» խօսքերը:

Արմէն հետաքրքրութեամբ մօտեցաւ վիրաւոր զինուորի մահճակալին եւ յստակօրէն լսեց անոր արտասանած «մայրիկ, մայրիկ» բառերը: Ուրեմն, ծանրօրէն վիրաւորուած զինուորին հայորդի մը ըլլալը փաստելէ ետք, մտածեց ամէն ձեւով օգտակար ըլլալ անոր, մղուած մարդկային, քրիստոնէական եւ հայկական զգացումներէ:

Շաբաթ մը ետք, բժշկական ամէնօրեայ դարմանումներու ենթարկուելէ ետք, Ժան (այդպէս կը կոչուէր վիրաւոր հայ զինուորը, որուն ինքնութիւնը Արմէն ստուգեց կարդալով մահճակալի վրայի պատին գրուած անոր անունը), կամաց-կամաց աչքերը բացաւ եւ զարմանքով դիտեց չորս կողմերը, եւ տեսնելով իրեն յուզումով նայող անձ մը, Ֆրանսերէնով հարցուց անոր ով ըլլալը:

Արմէն, վստահ ըլլալով անոր հայ ըլլալուն, հայերէնով ինքզինք ծանօթացուց եւ յայտնեց իր պատրաստակամութիւնը իրեն օգնելու, որպէսզի իր ցաւերը մեղմանան եւ վէրքերը բուժուին ամենակարճ ժամանակամիջոցին եւ թելադրեց անոր, որ աղօթէ առ Աստուած, որպէսզի չուտով ապաքինի:

Ժան դժգոհութեամբ ընդունեց Արմէնին թելադրութիւնը՝ յայտարարելով, որ ինք անհաւատ է եւ հակառակ իր ծնողքին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ զաւակներ ըլլալուն, ինք չի հաւատար Աստուծոյ եւ Քրիստոսի գոյութեան եւ իր կեանքի ընթացքին ո՛չ աղօթած է եւ ո՛չ ալ եկեղեցի գացած:

Արմէն այս խօսքերը լսելով խորապէս տրտմեցաւ, որովհետեւ երբեք չէր կրցած երեւակայիլ հայորդի մը, որ անհաւատ ըլլար եւ դէմ՝

Քրիստոսի վարդապետութեան եւ անոր աստուածային եւ մարդկային կեանքին:

Արմէն նեղուած հեռացաւ ժանի մահճակալէն եւ որոշեց ամէն գնով արթնցնել ժանի խիղճը, որպէսզի ան հաւատայ Աստուծոյ դոյութեան, յաւիտենական կեանքի եւ հոգեւոր ճշմարտութիւններու:

Շաբաթ մը ետք, հէգ ու անհաւատ գինուորին վիճակը տակաւ առ տակաւ կը ծանրանայ ու կը մօտենայ մահուան: Անոր աչքերուն առջեւ պատկերացաւ ստոյգ մահուան ստուերը, մահուան անարգել եւ սեւ վարագոյրի իջնելը իր վրայ: Վայրկեանները արագ-արագ կը սահէին, ստոյգ մահուան դաղափարը յանկարծ ցնցեց անհաւատ եւ մեղաւոր գինուորը: Տխուր էր ոչ թէ լոկ անոր համար, որ քիչ ետք պիտի մեռնէր, այլ անոր համար, որ իր անմահ հոգին անսուղ մնացած էր եւ ինք՝ իր անձը սոսկ պատասխանատու էր այդ աններելի եւ աղիտաբեր թերացումին, որով շատ յստակ կը տեսնէր իր հոգւոյն կորուստը:

Հիւանդապահուհիին միջոցաւ կանչել տուաւ Արմէնը եւ լալագին աղերսանքով խնդրեց փրկել իր հոգին, որպէսզի մեղաւոր չմեռնի:

Արմէն ժանի սնարին մօտենալով բացաւ Աստուածաշունչը եւ կարդաց Յովհաննու Աւետարանի երրորդ գլուխի 16-րդ համարէն. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ՝ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած իր որդին աշխարհ զրկեց ոչ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ: Ով որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ով որ չի հաւատար անոր՝ արդէն իսկ դատապարտուած է Աստուծոյ միածին որդիին չհաւատալուն համար»:

Ապա Արմէն շարունակեց կարդալ Աւետարանի 5-րդ գլուխի 24-րդ համարը, ուր Յիսուս կ'ըսէ. «Լաւ գիտցէք, ով որ իմ խօսքերս կը լսէ եւ հաւատայ անոր, որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չդատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է»:

Անհաւատ գինուորը մտիկ ըրաւ եւ հասկցաւ համարին իմաստը եւ վայրկեանական կեանքի փոփոխութիւն ունեցաւ: Աչքերը բացաւ եւ Արմէնէն խնդրեց, որ հայ քահանայ մը բերուի, որպէսզի իր մեղքերը խոստովանի եւ հաղորդուի:

Արմէն ծանօթ ռայագցի հայու մը հետ լուր զրկեց Զահլէի հոգեւոր հովիւ արժանապատիւ Տ. Մաշտոց Աւագ Քհնյ. Ոսկերիչեանին, որպէսզի հոգեվարքի հասած հայ գինուորի մը վերջին կամքը կատարէ:

Շատ ժամանակ չանցած, Տէր Մաշտոց հիւանդանոց ժամանեց եւ հիւանդանոցի պաշտօնեաներուն եւ գինուոր Արմէնին ներկայութեան

յատուկ արարողութեամբ, աղօթքներով Աստուծէ խնդրեց, որ ներէ գինուոր ժանին մեղքերը:

Զինուոր ժան արտասուալից աչքերով խոստովանեցաւ իր մեղքերը՝ աղաչելով, որ հայ քահանան միջնորդէ Աստուծոյ եւ Քրիստոսի մօտ, որ ներեն իրեն անհաւատ կեանք մը ապրած ըլլալուն համար:

Եւ հրաշք... Հոգեվարքի մէջ եղող գինուոր ժանը, իր քրիստոնէական հաւատքին զօրութեամբ, արթնցաւ եւ նստեցաւ անկողնին մէջ, փառք տալով Աստուծոյ, որ իրեն նոր կեանք պարգեւեց, որպէսզի հետեւի իր ծնողներուն եւ հայ ազգի կրօնքին, հաւատալով Աստուծոյ գոյութեան եւ Քրիստոսի Աստուծոյ Որդի ըլլալուն:



Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա. Սարգիսեան  
եւ Գրիգոր Հոթոյեան

## ՅԱՐԳԵՆՔ ՄԵՐ ՏԱՐԵՑ ՀԱՅՐԵՐԸ

Դարեր առաջ, եւրոպական երկրի մը թագաւորը նկատելով, որ իր երկրին մէջ ծերունիներուն թիւը զգալիօրէն բազմացած է եւ անոնք բեռ են իրենց զաւակներուն եւ պետութեան, հրաման կ'արձակէ եւ յատուկ մունետիկներով ժողովուրդին կը տեղեկացնէ, որ իր հպատակներէն անոնք, որոնք 60 տարիքը բոլորած են՝ որպէս ձրիակերներ պէտք է մահանան, այդ օրերուն գտնուող մահաբեր զանազան միջոցներով:

Այս անմարդկային հրամանը անսովոր դժգոհութեամբ կը դիմաւորուի ժողովուրդին մեծ մասին կողմէ, որոնք որդիական սէրէն մըրդուած՝ չէին կրնար բաժնուիլ իրենց կեանք պարգեւող, մանկութենէն ի վեր անձնուիրութեամբ եւ զոհաբերութեամբ զիրենք մեծցուցած, ուսում ջամբած ծնողներէն:

Կը փորձեն ապստամբիլ եւ զանազան ձեւերով իրենց դժգոհութիւնը հասցնել թագաւորին, սակայն վախը եւ անմիաբանութիւնը կը ձախողեցնեն իրենց ծրագիրները, եւ ստիպուած կը գործադրեն անխիղճ թագաւորին հրամանը:

Ժամանակ մը վերջ, թագաւորը իր խորհրդականներով զիչերատեն կը շրջի քաղաքի բնակչութեան շրջանները: Ծպտուած հագուստներով կ'այցելեն կարգ մը տուներ եւ ահանատես կ'ըլլան հոն տիրող սուգին եւ տխրութեան եւ թագաւորին հանդէպ արձակուած անպատշաճ եւ անվայել արտայայտութիւններու, իսկ կարգ մը տուներու մէջ կեանքը կը շարունակուէր նախկին գնացքով, նոյնիսկ կը հանդիպի տօնախմբութիւններու եւ ուրախութիւններու:

Պետութեան կողմէ բաժնուած թոյներու տեսակները հնձած էին քաղաքի տարեցներու կեանքերը, տխրութիւն կամ ուրախութիւն պատճառելով ժողովուրդի զանազան հատուածներուն մէջ: Հագարաւոր տարեցներ երկրային կեանքէն հեռացած էին անիծելով անխիղճ թագաւորը, որ ո՛չ Աստուծոմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամհնար, իր հրամանին դէմ դնողները՝ եկեղեցականները եւ յանդուգն երիտասարդները ծանր պատիժներու ենթարկելով:

Տարիները կ'անցնին երիտասարդներով բնակուած երկրի կեանքին մէջ: Երկրի տնտեսութիւնը տարուէ տարի կը տկարանայ եւ սրնանկութիւնը երկրի դռներուն կը հասնի: Ի՞նչ ընել այս ճգնաժամային կացութենէն դուրս գալու համար: Խորհրդակցութեան կը հրաւիրէ իր նախարարները եւ անոնց հետ երկար խորհրդակցութենէ հտք

կ'որոշէ պատերազմ յայտարարել դրացի երկրին դէմ՝ յափշտակելու եւ թալանելու անոր հարստութիւնը:

Թագաւորը կը ձեռնարկէ զինուորահաւաքի եւ զինուորական մարզումներու, որպէսզի հարուածային արագութեամբ գրաւէ դրացի երկիրը եւ յաջողցնէ իր ծրագիրները:

Երկար պատրաստութենէն ետք, անակնկալ յարձակումը կը սկսի դրացի երկրին վրայ եւ արագութեամբ կը գրաւէ թշնամի երկրի հողամասին մէկ երրորդը: Թէեւ թշնամի բանակները զօրաւոր դիմադրութիւն ցոյց կու տան, սակայն ստիպուած կը նահանջեն եւ նահանջի ճամբուն վրայ կրակի կու տան եւ կ'ամայացնեն գիւղերն ու քաղաքները:

Ագահ եւ միահեծան իշխանութիւն ունեցող թագաւորը կը հրճուի իր բանակներուն յաղթարշաւ արշաւանքին ի տես, սակայն խորապէս կը տխրի, երբ իրեն կը տեղեկացնեն, որ զինուորներուն կերակուր պատրաստելու համար պահեստի փայտերը գործածուած են եւ փայտ չգտնելով՝ զինուորները անօթի են եւ անօթի չեն կրնար կռուիլ:

Թագաւորը կը սարսափի՝ մտաբերելով չարաչար պարտութիւնը եւ ստեղծուելիք խայտառակութիւնը, իրեն սպառնալով իր գահին կորուստը: Կը հրաւիրէ իր խորհրդականներն ու զօրավարները եւ անոնց հետ խորհրդակցելով՝ կացութենէն յաղթական դուրս գալու միջոցներ կը փնտռէ:

Ամառուան անտանելի տաքը, անօթութիւնը եւ ծարաւը բանակին մէջ յուսահատութիւն եւ երկչոտութիւն կը ստեղծեն:

Ի՞նչ ւնել:

Բանակի զօրավարներէն մէկը, որ օրին թագաւորին հրամանը չէր գործադրած եւ որպէս քաջ ծնողասէր երիտասարդ պահած էր իր հայրը իր տան գաղտնի մէկ սենեակին մէջ, յատուկ խնամք եւ հոգածութիւն ցոյց տալով անոր, երբ պատերազմը կը սկսի, զինուորական որդին իր հայրը տուներ առանձին չի ձգեր եւ սնտուկի մը մէջ պահած իր հետ կը տանի ռազմաճակատ, միշտ օգտուելով անոր զինուորականի փորձառութենէն:

Երիտասարդ զօրավարը զինուորական վրան կը վերադառնայ տրտում-տխուր եւ իր հօր կը յայտնէ ստեղծուած կացութիւնը, որ զիրենք կրնար պարտութեան տանիլ:

Հայրը մանրամասն կը տեղեկանայ գրաւուած երկրի կիլիմայական վիճակին եւ թշնամի բանակներուն կողմէ քաղաքներու եւ գիւղերու հրկիգումին, եւ այդ պատճառով վառելիքի չգոյութեան:

Հայրը, երկար մտածելէ ետք, բանակի զօրավար իր որդիին կը հարցնէ.

— Տղա՛ս, ձեր բանակը անշուշտ վրաններու տակ պատսպարուած է. կրնա՞ս ինձի յայտնել, թէ բանակը քանի՞ վրան ունի եւ ամէն մէկ վրան քանի՞ փայտէ ձողով կազմուած է:



*Զորավար որդին կը պատասխանէ.*

— Հայրիկ, մեր բանակը պատասպարուած է հազար վրաններու տակ եւ ամէն մէկ վրան ունի եօթը ձող:

— Այդ պարագային,— կ'ըսէ հայրը,— ամէն մէկ վրանէն մէկ ձող խնայելով կ'ունենաք հազար ձող եւ հազար ձողը ձեզի մինչեւ պատերազմի վերջաւորութիւն կերակուր կ'եփէ:

Զորավար որդին, հօրը թելագրութեան հետեւելով, ամէն մէկ վրանէն մէկ ձող վերցնելով կերակուր եփելու կը սկսին: Զինուորները կը կազդուրուին եւ նոր յարձակումով կը գրաւեն ամբողջ երկիրը:

Թագաւորը, լսելով այս յաղթանակի մասին եւ զօրավարին կողմէ գործադրուած միջոցառումին, իր մօտ կը կանչէ զօրավարը եւ կը խնդրէ անկէ, որ պէսզի իրեն յայտնէ կատարուած հրաշքին գաղտնիքը:

Զօրավարը ներողութիւն խնդրելով թագաւորէն կը յայտնէ, թէ ինք օրին չգործադրելով իր հրամանը եւ հօրը մեղքնալով՝ պահած էր զայն:

— Պատերազմի դաշտին վրայ ստեղծուած կացութիւնը երբ իրեն յայտնեցի, ինծի տուաւ այս լուծումը, որ մեզի յաղթութեան տարաւ,— ըսաւ զօրավարը:

Թագաւորը յուզումով եւ զղջումով կը լսէ զօրավարին պատմութիւնը եւ կը հրամայէ, որ իր պետութեան սահմաններուն մէջ տարեցները յարգուին եւ ժողովուրդը գուրգուրանքով վարուի անոնց հետ եւ պէտք եղած ատեն օգտուին անոնց փորձառութենէն եւ իմաստութիւններէն:



Տարեցներու Միջազգային Տարուան առթիւ, Թորոնթօյի Նորթ Եորթ շրջանի մրցանակին արժանացած Գրիգոր Հոթոյեան նախարարէն կը ստանայ վկայականը:

## ՀԱՅ ՀԱՅՐԵՐՈՒՄ

Ժամանակին թագաւորներ ծպտուած Հագուստներով կը շրջէին իրենց ժողովուրդին մէջ, հասկնալու համար անոնց կենցաղը եւ անոնց կարծիքը թագաւորին հանդէպ:

Թագաւոր մը իր նախարարին (վէզիր) հետ քաղաքի փողոցները շրջած ատեն կը հանդիպի վարժարանի մը, որուն աշակերտները զբօսանքի ելած էին: Աշակերտներէն ոմանք ընկերներով կը խաղային, ուրիշներ պոռչտուքներով իրարու ետեւէ կը վազէին՝ մոռցած իրենց դպրոցական պարտականութիւնները:

Թագաւորը կը նշմարէ աշակերտ մը, որ մէկ կողմ քաշուած, վերացած զբօսանքի ժխորէն, դասագիրք մը ձեռքին, կը պատրաստուէր յաջորդ դասին:

Թագաւորը հետաքրքրուեցեամբ կը մօտենայ դաս սորվող աշակերտին եւ կ'ըսէ.

— Տղա՛ս, ինչո՞ւ դուն ալ միւս աշակերտներուն նման չես խաղար եւ հոս նստած առանձին դաս կը սորվիս:

Տղան կը պատասխանէ.

— Սիրելի՛ Հայրիկ, ինչո՞ւ ժամանակս պարապ անցընեմ, հայրս հազիւ մեր ընտանիքին օրապահիկը կը շահի, պարզ գործաւոր մըն է, եւ կ'ուզէ, որ ես ուսում առնելով աւելի դրամ շահիմ: Գիտե՞ս, թէ ան ի՛նչ դժուարութեամբ կը վճարէ իմ դպրոցական թոշակս եւ ծախսերը, եւ եթէ ես ալ ընկերներուս նման անհոգութեամբ խաղամ կարեւորութիւն չտալով դասերուս, ապերախտ պիտի գտնուիմ հօրս հանդէպ:

Տղուն այս խելացի խօսքերուն թագաւորը կը սքանչանայ եւ առ ի գնահատանք ոսկի մը կը նուիրէ անոր: Տղան չ'ուզեր առնել ըսելով.

— Եթէ այս ոսկին հօրս տամ, պիտի կարծէ թէ գողցած եմ, որովհետեւ այս օրերուն մարդ ոեւէ մէկուն ոսկի նուէր չի տար:

— Տղա՛ս,— կ'ըսէ թագաւորը,— քանի այդպէս է, թագաւորը տըլաւ ըսէ:

Տղան երբ կը հասկնայ, որ իր հետ խօսողը քաղաքի թագաւորն է, աւելի սրամտութեամբ կ'ըսէ.

— Թագաւորին նուէրը մէկ ոսկի չ'ըլլար:

Թագաւորը, հասկնալով իր սխալը, մէկի տեղ հարիւր ոսկի կու տայ տղուն ու կը մեկնի:

Դպրոցէն տուն վերադառնալով երեկոյեան, տղան հարիւր ոսկին յանձնելով իր հօրը՝ կը պատմէ պատահարը:

Թագաւորը իր նախարարին հետ պալատ կու գայ եւ անոր հետ կը խորհրդակցի ու կու գայ հետեւեալ եզրակացութեան.

— Եթէ որդին այսչափ խելացի է, ուրեմն ասոր հայրը աւելի խելացի եւ ուշիմ կրնայ ըլլալ: Եւ ես որպէս թագաւոր նման խելացի անձերու պէտք ունիմ եւ կրնամ գայն շահագործել՝ պետական պաշտօն մը տալով անոր:

Թագաւորը ոստիկան մը ղրկելով պալատ բերել կու տայ տղուն հայրը: Հայրը, պալատ գալով, պալատական սովորութիւններու անտեղեակ անձ, համարձակօրէն դուռը կը բանայ եւ անքաղաքավար ու կոշտ ձեւով կը բարեւէ:

Թագաւորը այս կոշտութենէն եւ անքաղաքավարութենէն գայրացած՝ կը հրամայէ, որ գայն պատժեն կախաղան բարձրացնելով:

Տղուն ընկերներէն աչակերտ մը, որ դպրոցէն տուն ղրկուած էր դպրոցական թոշակ բերելու համար, ճամբան կը տեսնէ տղուն հայրը, որ ոստիկանի մը հետ կ'երթար: Շուտով կը վազէ դպրոց եւ իր տեսածը կ'իմացնէ իր ընկերոջ:

Տղան, սարսափած այս լուրէն, կը ձգէ դպրոցը, կը հասնի տուն եւ թագաւորին տուած ոսկիները առնելով կը վազէ պալատ: Ներս կը մտնէ ու ոսկիները թագաւորին առջեւ նետելով կը գոչէ.

— Յարգելի՛ թագաւոր, ես հայրս հարիւր ոսկիի չեմ ծախեր:

Թագաւորը կ'ըսէ.

— Տղա՛ս, ես այս ոսկիները քեզի տուի, գնահատելով քու ծնողասիրութիւնդ եւ ուսումնատենչութիւնդ:

— Այո՛, ինծի նուիրեցիք, — կ'ըսէ տղան, — սակայն անոր փոխարէն հայրս կ'առնէք: Ձեմ ուզեր ձեր տուած ոսկիները, որոնց գինը հօրս կեանքը պիտի ըլլայ: Շատ շնորհակալ եմ ձեզմէ: Հայրս ինծի վերադարձուցէք, խնդրեմ: Իր բոլոր տգեղութիւններով եւ անքաղաքավարութիւններով՝ անիկա իմ հայրս է, որուն միակ նպատակը եղած է չարաչար աշխատելով իր ընտանիքին ապրուստը ապահովել եւ իր գաւակներուն լաւագոյն կըթուլթիւնը տալ:

Այս խելացի խօսքերուն վրայ թագաւորը անգամ մը եւս կը հիանայ տղուն ծնողասիրութեան վրայ: Անմիջապէս հրաման կ'արձակէ, որ տղուն հայրը ազատ կացուցուի իր տուած մահապատիժէն:

Ոստիկանը երբ թագաւորին հրամանը կը հասցնէ դահիճներուն, անոնք կախաղանի չուանը տղուն հօրը վիզէն անցընելու վրայ էին: Տղան վազելով հասած էր քաղաքի կեդրոնը կազմուած կախաղանին եւ լացակումած քայլերով կը փաթթուի ազատ արձակուած հօրը վիզին եւ կ'ուխտէ միշտ սիրել ու յարգել իր հայրը եւ երախտապարտ մնալ անոր կատարած զոհողութիւններուն՝ իր ընտանիքին երջանկութեան համար:

Թագաւորին հրամանով պատանի տղան կը ղրկուի գինուորական վարժարանը, ուր գինուորական բարձր կըթուլթիւն ստանալով ա-

*պագային կը դառնայ զինուորական հրամանատար, ազնուօրէն ծառայելով իր հայրենիքին եւ միշտ բարձր պահելով իր ծնողքին անունը:*



Գրիգոր Հոթոյեան եւ իր թոռները՝ Քրիստափոր եւ Ստեփան-Արմէն,  
1 Հոկտեմբեր 2005-ին,  
«Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանի տուչութենէն ետք

## ՀԱՅՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ

13 Ապրիլ 1975-ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմը, որ տեւեց շուրջ 20 տարի, պատճառ դարձաւ մարդկային հազարաւոր զոհերու, տնտեսական եւ կալուածային վնասներու, աւերումներու, քանդումներու, կողոպուտներու:

Անմարդկային պատերազմին պատճառաւ, Լիբանանի մայրաքաղաք Պէյրուսը բաժնուեցաւ երկուքի՝ Արեւմտեան Պէյրուսը իսլամական շրջանի եւ Արեւելեան Պէյրուսը՝ քրիստոնէական: Այս բաժանումին հետեւանքով շատեր կորսնցուցին իրենց տուներն ու կալուածները, փոխադրուելով մէկ շրջանէն միւսը, ըստ իրենց կրօնին:

Իրարու դէմ պատերազմող կողմերու կրօնական, քաղաքական, կուսակցական, համայնքային եւ գաղափարական ղեկավարներ հովանաւորուեցան արտաքին ազդեցութիւններէ, որոնք նիւթապէս եւ բարոյապէս կ'օգնէին պատերազմող կողմերուն՝ անոնց ձեռքով իրականացնելու իրենց նպատակները:

Պատերազմող կողմերու ղեկավարներ Քամիլ Շամուն, Փիեռ Ժեմայէլ, Յրանճիէ, Շոմպլաթ, Քարամէ, Սաէպ Սալամ, ինչպէս նաեւ պաղեստինցիներու ղեկավարը՝ Արաֆատ, կը ղեկավարէին այս միջհամայնքային կռիւները, գործածելով պատերազմական արդիական զէնքեր, միջոցներ եւ նոյնիսկ առեւանգում ու սպանութիւն կատարելով արձակազէններու կողմէ, որոնք նիւթական հատուցման կ'արժանանային իրենց սպաննած մարդոց թիւին համաձայն՝ իրենց այս ոճրային գործին ղեկավար կազմակերպութիւններուն կողմէ:

Գործածուած զէնքերը արտասահմանէն կու գային յատուկ գործակալներու կողմէ: Ատրճանակներ, զէնքեր, արագահարուածներ, ձեռնառումբեր, հրթիռներ, 155 եւ 210 միլլիմետրոց թնդանօթներ իրենց քանդիչ պատականութիւնը կը կատարէին անընդհատ, անհաշիւ վնաս պատճառելով ամէնուրեք եւ անմարդկային տառապանք՝ ժողովուրդին, որոնք իրենց տուներուն զետնայարկերուն եւ ապաստանարաններուն մէջ կ'ապրէին՝ արձակուող ահռելի ուղումբերէն պատշպանուելու համար:

Երկրին մէջ ստեղծուած անիշխանութեան եւ թոհուփոհին հետեւանքով, քաղաքին նաւահանգիստին մէջ գտնուող միլիոնաւոր տուրներու արժէքով ապրանքներ, մեծ ընկերութիւններու պատկանող մթերանոցներ եւ խանութներ կողոպտուեցան: Շատեր հարստացան եւ ուրիշներ աղքատացան: Անգործութեան եւ պատերազմական մթնոլորտին պատճառով, հազարաւոր ընտանիքներ, մեծագումար ծախ-

սերով, կաշառքներով եւ ճամբորդական աներեւակայելի դժուարութիւններով, Կիպրոսի ճամբով կը հեռանային Լիբանանէն, իրենց կեանքին ապահովութեան համար միջոցներ գտնելով՝ հաստատուելով եւրոպական երկիրներ եւ Ամերիկա:

Քաղաքացիական այս անիմաստ պատերազմին հետեւանքով Լիբանանի հայ գաղութն ալ ենթարկուեցաւ ահռելի վնասներու: Ի պատիւ հայ նախարարներու, երեսփոխաններու եւ ազգային ղեկավարներու առողջ եւ հեռատես քաղաքականութեան, որոնք մերժեցին միանալ կռուող կողմերուն, հաւատարիմ մնալով Լիբանանի պետականութեան եւ անկախութեան, դրական չէզոքութեան դիրք բռնելով՝ հայ ժողովուրդին խնայեցին անդարմանելի աղէտներ:

Հայ ժողովուրդին որդեգրած դրական չէզոքութեան քաղաքականութիւնը ողջունուեցաւ քաղաքացիական կռիւններուն մասնակցող գլխաւոր ուժերու ղեկավարներուն կողմէ, առիթ տալով հայ ղեկավարութեան, որպէս Լիբանանի գերիշխանութեան կողմնակից համայնք, որ կարենան միջնորդել պատերազմող կողմերուն մօտ, ստեղծելու համար ազգային հաշտութիւն եւ պատերազմի դադրեցում:

Հայկական թաղերու ապահովութեան եւ պաշտպանութեան համար, Հայկական Միջկուսակցական Մարմինը ստեղծեց Հայկական թաղերու պաշտպանութեան նուիրուած երիտասարդական ջոկատներ, որոնք գիշեր-ցերեկ հսկեցին հայ ժողովուրդի ապահովութեան, առաջըր առնելով հայ ժողովուրդի մարդկային եւ նիւթական վնասներուն:

Դժբախտաբար, հայկական թաղերէ հեռու ապրողներ կալուածային եւ նիւթական վնասներու ենթարկուեցան, յատկապէս անոնք, որոնք իսլամական թաղերէն քրիստոնէական թաղեր փոխադրուեցան, իրենց տուները, կալուածները եւ գործատեղիները ձգելով ետին:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով հազարաւոր հայ ընտանիքներ միջոցներ գտան արտագաղթելու Լիբանանէն եւ հաստատուելով ապահով երկիրներ՝ սրտի խոր կսկիծով հեռացան Սփիւռքի մէջ երկրորդ Հայաստան հանդիսացող Լիբանանէն, ուր հաստատուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Հայկազեան Համալսարանը, հայկական երկրորդական վարժարաններ եւ նախակրթարաններ, հայկական տպարաններ, ուրկէ լոյս կը տեսնէին հայկական բազմաթիւ ամսաթերթեր, պարբերաթերթեր, շաբաթաթերթեր, ինչպէս նաեւ գրական եւ այլ բովանդակութեամբ գիրքեր, որոնք իրենց լոյսը կը տարածէին Սփիւռքի տարածքին գրասէր հասարակութեան:

\*\*\*

Հալէպ ծնած եւ մեծցած Յակոբ Սիմոնեան, հրապուրուած Լիբանանի հմայքէն եւ գեղեցկութենէն, 25 տարեկանին կը փոխադրուի

Լիբանան, ուր կը բնակէր իր աւագ եղբայրը՝ Զաւէն, որ հինգ տարի առաջ՝ 1965-ին հաստատուած էր Լիբանան եւ ատաղձագործութեամբ կը զբաղէր:

Քանի մը տարի եղբօրը ատաղձագործարանին մէջ աշխատելէ ետք, եղբօրը ստիպուեց իր ամուսնանայ Էշրէֆիէ Թաղամասը բնակող Օր. Հռիփսիմէ Գուլումճեանին հետ եւ Գուլումճեան ընտանիքին մօտ ըլլալու համար՝ յարկաբաժին մը կը գնէ Էշրէֆիէի Ս. Յակոբ հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ մօտ շէնքէ մը:

Յակոբ եւ Հռիփսիմէ Սիմոնեանները կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Գուրգէն եւ Դալար, որոնք իրենց դպրոցական տարիքը բոլորելով՝ կը յաճախեն ազգային Չաթալպաշեան վարժարան:

Մինչ այդ, Յակոբ նպարավաճառի խանութ մը կը բանայ նոյն Թաղամասին մէջ, մեծապէս սիրուելով Թաղի դրացիներէն, որպէս պարկեշտ եւ պատուաւոր անձնաւորութիւն, յարգելով եւ ծառայելով իր յաճախորդներուն:

\*  
\*  
\*

Յակոբ Սիմոնեանի ընտանիքին ուրախութիւնը կը խանգարուի 1975-ին սկսած Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով: Պէշրութ կը սկսի այրիլ ուսմբերու կրակներով, որոնք խելայեղօրէն կ'արձակուէին թշնամի ուժերուն կողմէ:

Պատերազմական այս պայմանները եւ ոմբակոծումներու պատճառած վնասները սկիպեցին շրջանի բնակիչներուն ապաստանիլ շէնքերու ապաստանարաններուն մէջ, ապրելով խոնաւութեան եւ անմարդկային մթնոլորտի մէջ, դժուարութեամբ ճարելով ապրելու եւ սնունդի անհրաժեշտ պիտոյքներ:

Եւ նկատելով, որ սկսուած պատերազմը վերջ գտնելու յոյս չէր տար եւ անօթի-ծարաւ, անտանելի պայմաններու տակ ապրելու հեռանկարով՝ ամէն մարդ կը խորհէր հեռանալ Լիբանանէն:

Եւ պատահեցաւ աննախատեսելին: Ռումբ մը եկաւ եւ քանդեց սնունդի աղբիւր Յակոբի նպարավաճառի խանութը, քանի մը տարիէ ի վեր իր ընտանիքին քաջած տառապանքն ու վախը աւելի խորացրնելով:

Այր եւ կին կը խորհրդակցէին. ինչպէ՞ս ապրիլ, ինչպէ՞ս տոկալ ստեղծուած անտանելի ցաւերուն, երբ այլեւս գործ չունէին եւ չէին կրնար թաղեցիներուն սնունդ ապահովել եւ դրամ շահիլ:

Երկար խորհրդակցելէ ետք, կը մտածեն իրենց տունը ծախել եւ այդ գումարով Միացեալ Նահանգներ փոխադրուիլ:

Նկատի ունենալով, որ իր աւագ եղբայրը հինգ տարի առաջ փոխադրուած է Լոս Անճելըս եւ կը բնակի Հոլիվուտի շրջանը, եւ քոյրը՝ Օրէնճ Քաունթի, որոնք Լիբանանի պատերազմական կացութենէն

փախչելով եւ բազմաթիւ դժուարութիւններ յաղթահարելով հաստատուած էին Մ. Նահանգներ, եղբօրը լուր կը զրկէ, որ միջոցներ գտնէ իր ընտանիքին Մ. Նահանգներ մուտ գործելու արտօնութիւն ապահովելու համար:

Տարի մը տեւող դիմումներէ ետք, Յակոբ Սիմոնեանի ընտանիքին կ'արտօնուի գաղթելու Մ. Նահանգներ:

Սիմոնեան ընտանիքը, ծախելով իր սեփական տունն ու տան առարկաները, 1984-ին կը բաժնուի հայահոծ Լիբանանէն, հաստատուելով Լոս Անճելըսի Հոլիվուտ թաղամասին մէջ, ուր կը բնակէր եղբայրը:

Լոս Անճելըս հասնելէն քանի մը օր ետք, եղբօրը օգնութեամբ, եղբօրը տան մօտերը տուն մը կը վարձեն եւ շուկայ իջնելով կը սկսին գնել տունին կենսական առարկաները եւ կահ-կարասիները:

Յակոբին եղբայրը՝ Զաւէն, իր եղբօր կ'առաջարկէ աշխատիլ իր ատաղձագործական գործարանին մէջ, նկատի ունենալով, որ Յակոբին նախնական արհեստը ատաղձագործութիւնն է, զոր սորված էր Հալէպի մէջ:

Երկու եղբայր իրենց մասնագիտութեամբ հռչակաւոր կը դառնան շրջանին մէջ եւ մեծ յաջողութիւն կը գտնեն, յաճախորդներուն գնահատանքին արժանանալով:

Յակոբին քոյրը, որ Օրէնճ Քաունթի կը բնակէր, յաճախ իր ընտանիքին հետ այցելութեան կու գար եղբայրներուն, եւ երեք ընտանիք ուրախ եւ երջանիկ ժամեր կ'անցընէին իրարու հետ, սակայն, զարմանալիօրէն, իրենց խօսակցութիւններուն ընթացքին երկու եղբայր եւ քոյր կը յիշէին Սուրիոյ եւ Լիբանանի իրենց կեանքը, ազգականները եւ բարեկամները, քաղաքացիական պատերազմէն առաջ Լիբանանի հայութեան բարգաւաճ կեանքը եւ պատերազմի պատճառով ստեղծուած անապահովութիւնը, արիւնահեղութիւնները եւ անմարդկային սպանութիւններն ու կործանումները, որոնք պատճառ դարձած էին հազարաւոր հայ ընտանիքներու արտագաղթին:

\*\*

Առիթով մը, երկու եղբայրներ իրենց ընտանիքներով կը հրաւիրուին Օրէնճ Քաունթի բնակող իրենց քրոջ տունը: Հոլիվուտէն Օրէնճ Քաունթի տանող մայրուղին եղբայրները իրենց ինքնաշարժներով եւ օրինական արագութեամբ մէկ ժամէն առաջ կը հատեն եւ կը հասնին քրոջը տունը, մեծ խանդավառութիւն ստեղծելով երեք ընտանիքներու անչափահաս զաւակներուն մէջ:

Օրը Կիրակի ըլլալով, երեք կիներ իրենց զաւակներով նախ կը հանդիպին շրջանի Ս. Քառասնից Մանկանց հայաստանեայց առաքելական եկեղեցի, ներկայ ըլլալով եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Գերա-



պատիւ Տ. Մուշեղ Մ. Վրդ. Մարտիրոսեանի կողմէ մատուցուող պատարագին:

Պատարագէն ետք, խումբը, Յակոբ եւ Զաւէն եղբայրներուն եւ քրոջ առաջնորդութեամբ, կ'ուղղուի Օրէնճ Քառնթիի մօտ, Խաղաղական ովկիանոսի եզերքը գտնուող տեսարժան վայրերը եւ Հանդարտ քալելով կը յառաջանայ դէպի ովկիանոսի խորը ձգուած նաւամատոյցը, որուն երկու կողմերը շուրջ 150 սանթիմետր բարձրութեամբ պաշտպանական երկաթէ բազրիքներ կային:

Տղաքը ուրախ-գուարթ կը քալէին դէպի ովկիանոս, դիտելով ալիքներու մակընթացութիւնը եւ տեղատուութիւնը:

Այդ միջոցին, տախտակամածին վրայ երթեւեկող բազմութեան մէջ աչքի զարկաւ բարձրահասակ սեւամորթ երիտասարդ մը, որ խնդրութեամբ անցաւ մանուկներուն առջեւէն: Յակոբ Սիմոնեանի աղջիկը՝ 12 տարեկան Արաքսին, լալով եւ վախով փաթթուեցաւ մօրը, խնդրելով շուտով հեռանալ այս սեւ մարդուն մօտէն, որ կորելլայի կը նմանէր:

Խումբը կը յառաջանար դէպի ովկիանոս:

Մանուկները կը շարունակէին դիտել մինչեւ հորիզոն տեսանելի ովկիանոսը, իրարու ցոյց տալով ջուրերուն վրայէն անցնող նաւակները:

Արաքսի, բազրիքին յենած, ինքն ալ իր կարգին կը դիտէր երթեւեկող նաւակները, սակայն ուզելով աւելի մօտէն տեսնել զանոնք, աւելի ծռեցաւ եւ գլուխը մարմինէն ծանր գալով՝ հետաքրքիր Արաքսին հինգ մետր բարձրութենէ ինկաւ ովկիանոսին մէջ:

Արաքսիին մայրը, նանուկը եւ հօրաքոյրը, տեսնելով Արաքսիին իյնալը, սարսափահար բացագանչութիւններով օգնութիւն կը խընդրէին անցորդներէն, որոնք հետաքրքրութեամբ կը դիտէին աղջնակին խեղդուիլը ովկիանոսի ջուրերուն մէջ:

Այդ պահուն, Արաքսիին աչքերուն կորելլայի նմանող երիտասարդը, առանց ժամանակ կորսնցնելու, նետուեցաւ ովկիանոս եւ վարպետ լողորդութեամբ ջուրերու յատակէն դուրս հանեց Արաքսին եւ ցամաք հանելով շնչատուութեամբ պարպեց Արաքսիին խմած ջուրերը:

Եւ, ով հրաշք, Արաքսին աչքերը բացաւ եւ հազալով դիտեց շըրջապատը:

Արաքսիին մայրը, նանուկը եւ հօրաքոյրը իրենց շնորհակալութիւնները յայտնեցին ազատարար երիտասարդին եւ անոր առաջարկեցին որոշ գումար մը: Սեւամորթը մերժեց ընդունիլ նման վարձատրութիւն: Խնդրեց անոնցմէ մարդկային ազնիւ զգացումներով սիրել եւ յարգել զիրար եւ պէտք եղած ատեն օգնութեան հասնիլ անօգնական մարդոց, հետեւելով Քրիստոսի պատուիրաններուն:

*Իսկ Արաքսիին մայրը՝ Հռիփսիմէ, խոր յուզումով փաթթուեցաւ իր զաւակին ու ըսաւ.*

*— Տեսա՞ր, աղջիկս, մեր օգնութեան աղաղակներուն ականջալուր եղան հոն գտնուող բազմաթիւ մարդիկ, բայց անոնց մէջէն միայն սեւամորթ այս երիտասարդը, որուն համար գարշանքով կ'ըսէիր թէ կորելլայի կը նմանի, իր կեանքը վտանգելով՝ քեզ ազատեց ովկիանոսի ջուրերու մէջէն: Մարդիկ հաւասար են առանց գոյներու տարբերութեան եւ ցեղային պատկանելիութեան: Մարդոց զգացումներուն խորհրդաւորութիւնը միայն Աստուծոյ ծանօթ է, միայն Ան կրնայ լուծել անոր գաղտնիքը:*



Դրոյի գերեզմանին Համագգայինի անդամներուն այցելութեան ընթացքին խօսք կ'աւնէ Գրիգոր Հոթոյեան, 9 Հոկտեմբեր 1988, Պոսքըն

## ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԳՈՒՐԳԷՆԸ

Ամբողջութեամբ հայերէ բնակուած Վան քաղաքի Այգեստան շրջանին մէջ կ'ապրէր Իշխանեան ընտանիքը, որ կը բաղկանար վեց անդամներէ: Իշխանեան ընտանիքը շրջանի համբաւաւոր ընտանիքներէն մէկն էր՝ ճանչցուած որպէս հարուստ, հայրենասէր եւ կրօնասէր:

Կարապետ եւ Սիրանոյշ Իշխանեան ունէին երեք մանչ եւ մէկ աղջիկ զաւակներ: Յովհաննէս՝ 25 տարեկան, Մարտիրոս՝ 22, Գուրգէն՝ 19 եւ Սաթենիկ՝ 16: Տղաքը իրենց ուսումը ստացած էին քաղաքի Արամեան երկրորդական վարժարանէն եւ շրջանաւարտ ըլլալէ ետք՝ ձեռք առած էին իրենց հօր վաճառատան գործերը:

Պրն. Կարապետ Իշխանեան, որպէս եկեղեցասէր հայ, անդամ էր իրենց թաղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ թաղականութեան եւ անձնուէր ծառայութեամբ նիւթապէս եւ բարոյապէս սատար կը հանդիսանար եկեղեցւոյ պայծառութեան: Իսկ իր կրտսեր մանչը՝ Գուրգէն, որպէս սարկաւազ կը ծառայէր եկեղեցիին:

Պրն. Իշխանեան, եկեղեցւոյ եւ հայ դպրոցին հանդէպ իր ունեցած պարտականութիւններէն դուրս, որպէս հայրենասէր իր մասնակցութիւնը կը բերէր հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան, որովհետեւ թուրք կառավարութեան հայութեան հանդէպ վարած քաղաքականութիւնը եւ խժժութիւնները կու գային փաստելու, որ հայ ժողովուրդի կեանքն ու գոյութիւնը վտանգուած են ամբողջ թուրքիոյ մէջ, եւ առանց ինքնապաշտպանութեան միջոցներու կարելի չէ տեւապէս ապրիլ վայրենի թուրք եւ քիւրտ ժողովուրդներուն հետ, որոնք ազատօրէն կ'ասպատակէին հայոց գիւղերուն վրայ, կողոպտելով գիւղացիներուն ունեցուածքները, անպատիժ սպաննելով դիմադրողները:

Այս վայրագութիւններուն վերջ տալու եւ յանցաւորները պատժելու համար, Վանի մէջ կազմուած էին յեղափոխական եւ հայդուկային խմբակներ, որոնք սարսափ տարածած էին թուրք պետութեան պաշտօնատարներուն եւ թուրք ու քիւրտ զանգուածներուն մէջ, որոնք սկսած էին զգուշանալ իրենց ծրագիրներուն գործադրութեան համար սխալ քայլերու դիմելէ, սակայն այս անգամ խաբեբայութեամբ, ստախօսութեամբ եւ կեղծաւորութեամբ կը փորձէին ծուղակը ձգել հայ ղեկավարները, որոնք կը կազմակերպէին հայ ժողովուրդին ինքնապաշտպանութիւնը:

Վանայ հայութեան բաւական հանգստաւէտ կեանքը խանգարուեցաւ Համաշխարհային Առաջին Պատերազմի յայտարարութիւնով եւ Թուրքոյ այդ պատերազմին մասնակցութեամբ, որուն հետեւանքով Վանի մէջ Թուրքերու եւ հայերու յարաբերութիւնները ձգտուած վիճակ մը ունեցան: Թուրք գաղտնի սպասարկութիւնը, կեդրոնէն ստացած հրահանգներուն ենթարկուելով, կը ձգտէր ձեռքաւարել հայ յեղափոխականները եւ գրաւել անոնց գինապահեստը:

Այդ օրերուն պատահեցաւ գինապահեստներու տեղը մատնող Դաւոյի սպանութիւնը դաշնակցական պատանի Թէրլէմէզեանի կողմէ՝ շուկային մէջ, երբ մատնիչը քանի մը Թուրք ոստիկաններու ընկերակցութեամբ կ'անցնէր շուկայէն: Այդ դէպքին վրայ, Թուրք վայրագ խուժանը յարձակուամբ գործեց հայերու պատկանող խանութներուն վրայ:

Իշխանեան եղբայրները աճապարեցին խանութը գոցել եւ տուն հասնիլ: Ճամբան՝ մահաբեր գնդակ մը եկաւ զգետնելու հայրը: Տղաքը արտասուելից աչքերով իրենց հայրը հասցուցին տուն: Պրն. Իշխանեան, ժամ մը մահուան դէմ պայքարելէ ետք, իր հոգին աւանդեց՝ իր գաւակներուն ըսելով.

— Շարունակեցէ՛ք գործս:

Երբ Պրն. Իշխանեանի դագաղը կը յանձնուէր ցուրտ հողին, երեք եղբայրներ ուխտեցին քալել իրենց հօր ուղիէն, իրենց կեանքը նուիրելով հայրենիքի եւ հայութեան պաշտպանութեան սուրբ գործին:

Այդ դէպքին օրը 15 հայեր սպանուեցան անձանօթ գնդակներէ: Հայ սրտերը սգաւոր էին: Կը գուշակէին իրենց սպառնացող վտանգը եւ բացարձակ գաղտնապահութեամբ ինքնապաշտպանութեան համար գէնք եւ ռազմամթերք կ'ամբարէին:

Պատերազմի յայտարարութեամբ՝ Թուրքիա գերմանացիներու կողքին մասնակցեցաւ պատերազմին, եւ, 1915-ին, Համաշխարհային Առաջին Պատերազմի թոհուրէն օգտուելով, Թուրք կառավարութիւնը սկսաւ գործադրել իր վաղուց ծրագրած ծրագիրը՝ աքսորել, տարագրել եւ ջարդել Թրքահայաստանի ամբողջ հայ ժողովուրդը:

Արեւմտեան Հայաստանի քաղաքներէն եւ գիւղերէն հարիւր հազարաւոր հայեր տեղահանուեցան իրենց բնակարաններէն, անմարդկային միջոցներով, անօթի-ծարաւ քալելով, քաղաքէ-քաղաք փոխադրուելով, Թուրք եւ քիւրտ հրոսակներու յարձակումներուն ենթարկուելով շարունակեցին իրենց երթը դէպի սուրիական անապատները, դաժանօրէն սպանութեան ենթարկուելով աքսորի ճամբաներուն վրայ:

Հայ երիտասարդներէ պարպուած բազմաթիւ քաղաքներու մէջ տեղի ունեցան ինքնապաշտպանութեան կռիւներ, սակայն Թուրք բանակներու եւ բանտէն արձակուած աւազակներու կազմակերպուած

յարձակումներուն չդիմանալով, անոնք ալ ստիպուած աքսորուեցան անձանօթ ուղղութիւններով:

Աքսորուելու հերթը եկած էր Վանայ հայութեան: Թուրք կուսակալը, մունետիկներու միջոցաւ եւ պաշտօնական աղբիւրներով, կը հրահանգէր հեռանալ Վան քաղաքէն եւ շրջաններէն:

Սակայն Վանայ հայութիւնը, իր ղեկավարներուն հրահանգներուն համաձայն, պատրաստ էր մղելու ինքնապաշտպանութեան կըռիւներ եւ մնալ իր հայրենի տուներուն մէջ:

Կառավարութիւնը ուզեց բռնի միջոցներ գործադրել, սակայն հանդիպեցաւ հայ զինեալներու զօրաւոր դիմադրութեան եւ ինքնապաշտպանութեան: Կռիւներու ընթացքին, ուրիշներու կարգին, Իշխանեան եղբայրներէն երկուքը՝ Յովհաննէս եւ Մարտիրոս ինկան հերոսաբար, իմացեալ մահով պաշտպանելով իրենց հայրենիքը:

Պատնէշի վրայ կը մնար Գուրգէն Իշխանեան, որ մեծ հռչակ ունեցաւ հայ եւ թուրք կռուող շրջանակներու մէջ, որպէս խիզախ կռուող եւ անշղջ նշանառու: Որպէս խմբապետ՝ միշտ օրինակ կը հանդիսանար իր խումբին, քաջաբար յարձակում գործելով թշնամի խրամներուն վրայ:

Հայերը ամէնուրեք յաղթական էին: Արդէն իսկ կազմուած էր հայկական կառավարութիւն: Հասած էին հայկական կամաւորական գունդերը եւ ռուսական կանոնաւոր բանակը: Թուրք բանակը ջարդուած՝ փախուստ տուած էր:

Ռուսական եւ հայկական զօրքերու ներկայութեամբ, Վանի հայութիւնը երկու տարի խաղաղութեամբ ապրեցաւ: Այդ շրջանին Գուրգէն վերաբացաւ շուկայի իրենց խանութը եւ գործերը լաւ կ'ընթանային: Ան միեւնոյն ատեն կը շարունակէր զբաղիլ քաղաքի ինքնապաշտպանութեան կազմակերպութեամբ, պատրաստ ըլլալու համար որեւէ անակնկալ յարձակում իր սաղմին մէջ խեղդելու:

Սակայն, ի մեծ դժբախտութիւն հայ ժողովուրդին, 1917-ի վերջերը ռուսական զօրքերը Մոսկուայէն եկած հրահանգին ենթարկուելով՝ հեռացան Վանէն: Իսկ հայկական կամաւորական գունդերը, չկարենալով դիմադրել թշնամի գերագանց ուժերու յարձակումներուն, ստիպուեցան նահանջել Վանայ հայ ժողովուրդին հետ: Ժողովուրդին մէկ մասը կռուելով քիւրտ աշիրէթներուն դէմ՝ ապաստանեցաւ Պարսկաստան եւ Իրաք, իսկ խոշոր զանգուածը, հայ զօրքերու պաշտպանութեամբ, ուղղուեցաւ դէպի Արեւելեան Հայաստան:

Գուրգէն կրկին հագած էր զինուորական զգեստները: Անոր գըլխաւոր մտահոգութիւնը իր հայրենակիցներուն ապահով վայրեր հասցնելն էր, այդ նպատակով իր զինակիցներուն կը թելադրէր երբեք չլքել յոգնած եւ տառապած ժողովուրդը:

Այսպէս, ամիսներով, ձմեռուան ձիւնին եւ ցուրտին, թիզ առ թիզ

պաշտպանելով հայրենի հողը եւ գաղթական ժողովուրդը, հայ զօր-  
քերը կը նահանջէին:

Գուրգէն իր ժողովուրդին հետ մայրը եւ քոյրն ալ ապահով հաս-  
ցուց Երեւան, եւ իր գինուորականի հանգամանքով կրցաւ բնակարան  
մը ճարել անոնց համար:

Սակայն ռազմաճակատ վերադառնալէ առաջ ան ուզեց իր ման-  
կութեան երագին գոհացում տալ եւ այցելեց Սուրբ Էջմիածին վանքը:

Գուրգէն իր դպրոցական շրջանէն կարդացած էր Էջմիածնի մա-  
սին, տեսած էր այդ հնադարեան տաճարին պատկերը եւ ուխտած, որ  
երբ մեծնայ, անպայման այցելութեան պիտի երթայ Ս. Էջմիածին:

Սուրբ Էջմիածին վանք Գուրգէնի այցելութիւնը կը պատահէր  
չատ աղեխարչ եւ տխուր պայմաններու ներքեւ, ուր հաւաքուած էին  
Արեւմտեան Հայաստանէն աքսորուած հազարաւոր հայեր, որոնք  
կ'ապրէին սրտաճմրիկ միջավայրի մը մէջ:

Երբ հասաւ Էջմիածին, արցունքը քարացաւ Գուրգէնի աչքերուն  
մէջ: Միրտը կը բզբտուէր անծանօթ ուժերէ: Ինչո՞ւ այս ժողովուրդը,  
այս հնադարեան մշակոյթով քրիստոնեայ ժողովուրդը կը մեռնէր:

Մտաւ մայր տաճար, ծունկի եկաւ մայր խորանին առջեւ, աղօ-  
թեց եւ միեւնոյն ատեն վերանորոգեց իր ուխտը՝ ըսելով.

— Տէր Աստուած, հայրս եւ եղբայներս մեռան այս ժողովուրդի  
պատշպանութեան համար: Ես ալ պիտի մեռնիմ նոյն նպատակին հա-  
մար՝ կատարելէ ետք իմ հայրենասիրական եւ ազգասիրական պար-  
տականութիւններս: Ուժ տուր ինծի, որ այս ճակատամարտերուն ա-  
ւելի լաւ կուռիմ, որովհետեւ թշնամին մօտեցած է քու Որդիիդ՝ Յի-  
սուս Քրիստոսի իջեւանած տաճարին, հայ ժողովուրդի հաւատքի կեդ-  
րոնին եւ կը սպառնայ քանդել զայն, ինչպէս որ քանդեց Արեւմտեան  
Հայաստանի տաճարները: Այս ճակատամարտը Էջմիածնայ ճակա-  
տամարտն է, հայ մնալու եւ ապրելու ճակատամարտը:

Դուրս ելաւ եւ մեկնեցաւ Երեւան: Մեկնեցաւ ռազմաճակատ:  
Ճգնաժամային մարտեր կը մղուէին բոլոր ռազմաճակատներուն վրայ:  
Մեր դարաւոր թշնամին, ամբողջ թրքահայութիւնը աքսորելէ եւ  
ջարդելէ ետք, կ'ուզէր Արեւելեան Հայաստանի հայութեան հաշիւն  
ալ մաքրել եւ հիմնայատակ կործանել մեր հաւատքին բերդը՝ Սուրբ  
Էջմիածինը:

Հայ ժողովուրդի զաւակները՝ մեծով-պգտիկով ամբողջութեամբ  
գինուոր դարձած, իրենց կարողութեան սահմաններուն մէջ կ'ուզէին  
օգտակար դառնալ հայրենիքի պաշտպանութեան, որովհետեւ ամէն  
հայ կը գիտակցէր իրեն սպառնացող վտանգի ահաւորութեան: Բոլոր  
ըրոշած էին Էջմիածնայ պատերուն առջեւ մեռնիլ եւ չթողուլ, որ  
թշնամին իր պիղծ ոտքերը կոխէ անոր սրբազան հողին վրայ:

Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի եւ Սարդարապատի ճակատա-  
մարտերը որոշեցին հայ ժողովուրդի ապագան: Այդ կռիւններուն

Գուրգէն իր վանեցի մարտիկներուն հետ անձնուիրաբար կը կռուէր Ղարաքիլիսայի ճակատին վրայ: Ան իր հերոսական մարտնչումներով արժանացած էր բազմաթիւ շքանշաններու եւ հարիւրապետի աստիճանի:

Եւ օր մը, կռիւի ահաւոր մէկ վայրկեանին, թշնամի դաւադիր ռումբ մը իր քով պայթելով՝ ծանրօրէն վիրաւորեց Գուրգէնը: Զինք փոխադրեցին հիւանդանոց, ուր իր քոյրը՝ Սաթենիկ, որպէս գթութեան քոյր կ'աշխատէր: Բժշկական կազմի բոլոր ճիգերը հերոսին կեանքը փրկելու ի դերեւ ելան: Մահուընէ քանի մը ժամ առաջ Գուրգէնին մայրը կանչուեցաւ հիւանդանոց, որ տեսնելով իր որդւոյն ծանր վիճակը՝ դառնօրէն լացաւ, յիշելով իր ամուսինը եւ երկու մանչերը...:

Գուրգէնի վերջին խօսքերը ուղղուած իր մօր՝ եղան.

— Սիրելի՛ մայր, կը տեսնեմ որ կու լաս: Սակայն ես հանգիստ կը մեռնիմ, որովհետեւ ես տեսայ իմ ժողովուրդիս վերընձիւղումը: Ես կատարեցի իմ պարտականութիւնս իմ հայրենիքիս, իմ ազգիս եւ իմ հաւատքիս հանդէպ: Ես քալեցի հօրս գծած ուղիէն: Կ'ուզեմ, որ դուն երբեք չտխրիս եւ չլաս, այլ՝ հպարտ կանգնիս եւ քալես մեր անկախ հայրենիքի հողին վրայ, որովհետեւ դուն այն մայրն ես, որ սնուցիր ու դաստիարակեցիր երեք մանչ զաւակներ եւ ամուսինովդ միասին գոհեցիր մեր հայրենիքի անկախութեան բազինին: Եթէ քեզի պէս մայրեր գոյութիւն չունենային, մեզի պէս մարտիկներ եւս գոյութիւն պիտի չունենային: Մնա՛ք բարով...:

Ապա, իր ստացած վէրքերուն ահաւոր ցաւերէն Գուրգէնի շըրթները դողացին եւ փակուեցան հերոսին աչքերը առյաւէտ...:

Փառաւոր յուղարկաւորութեան մը արժանացաւ հերոս Գուրգէնը: Զինուորական մեծ պատիւներով դադաղը առաջնորդուեցաւ գերեզմանատուն, ուր դամբանականներ խօսեցան բարձրաստիճան գինուորականներ եւ պետական պաշտօնատարներ, որոնք գովեցին անոր հայրենասիրական եւ կրօնական զգացումներուն վեհութիւնն ու մարտական օրինակելի քաջագործութիւնները:



## ՀԵՐՈՍԱԿԱՆ ՍԷՐ ԴԷՊԻ ՄԱՅՐԸ

Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունին թագաւորած է 908-943: Ան իր եղբօր՝ Գուրգէնին հետ նահանգի տարածքը բաժնուած է: Ինք տիրացած է Վասպուրականի հիւսիս ու արեւմտեան գաւառներուն: Յետագային Վասպուրականին միացուցած է Մոկքը եւ հայկական ուրիշ տարածքներ: Հայաստանը մասնատելու, թուլացնելով նպատակով, Ատրպատականի կուսակալ Եուսուֆը 908 թուականին Գագիկ Արծրունին հռչակած է հայոց թագաւոր, որով հիմնուած է Վասպուրականի Արծրունիներու հայոց թագաւորութիւնը: Ան հռչակաւոր դարձած է շինարարական գործունէութիւնով: Նորոգած է Ոստանը, Վանը եւ կառուցապատած է Աղթամարը:

Գագիկ Արծրունիի օրով Վանի ծովակիրն մէջ գտնուող Աղթամար կղզիին վրայ կառուցուած է Աղթամար բերդաքաղաքը, որուն պսակը եղած է 915-921 թուականներուն հրաշակերտուած Սուրբ Խաչ եկեղեցին: Տաճարի կառուցողը եղած է Մանուէլ ճարտարապետը: Հանճարաչէն տաճարի պատերուն քանդակուած են դրուագներ Հին ու Նոր Կտակարանէն, Արծրունիներու տոհմանդամներ, քրիստոնէական հաւատքը քարոզող առաքեալներ, աստուածաշնչական այնպիսի տեսարաններ, որ կարելի է կոչել քարեղէն հայաստանաշունչ: Պատերու վրայ թուղաններու 42 քանդակներ, որսորդական յաղթանշաններ, խաղողական խնձոյք, եղնիկներու եւ այծեամներու փախուստ, յովազներու հետապնդում: Տաճարի պատին, եկեղեցիին մանրակերտը ձեռքին, Գագիկ արքան է: Քանդակուած են նաեւ արքայի մայրը՝ Սոֆի իշխանուհին եւ կինը՝ Մլքէ թագուհին:

Թագաւորներ կան, որոնք միայն իրենց անունը կը ձգեն: Թագաւորներ ալ կան, որոնք սերունդներուն կ'աւանդեն ազգին յարատեւելու աւիշ ներարկող վսեմափայլ հրաշալիքներ: Այդպիսի հրաշալիք է Գագիկ Արծրունիի թագաւորութեան օրով կառուցուած Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին:

Կը պատմուի, որ Գագիկ թագաւորի թագաւորութեան շրջանին, Վասպուրականի Վան քաղաքի Այգեստան շրջանին մէջ կ'ապրէր աղքատ ընտանիք մը՝ մայր մը երեք մանչ զաւակներով, որոնց հայրը արկածով մեռած է, խոր թշուառութեան մատնելով իր կինն ու զաւակները:



Այս բոլորը կարծես չէին բաւեր, վրայ հասաւ այրիացած մօր հիւանդութիւնը: Տղաքը բժիշկ կանչեցին: Բժիշկը քննեց եւ գրեց պատշաճ դեղագիր մը՝ յանձնարարելով, որ շուտով գրուած դեղերը դեղարանէն բերեն, այլապէս, ուշանալու պարագային, իրենց մօր կեանքը վտանգի տակ է:

Տղաքը վազելով գացին քաղաքին մէջ գտնուող դեղարանը եւ դեղագործին պատմելով իրենց մօր առողջական վիճակը, խնդրեցին որ բժիշկին գրած դեղերը շուտով պատրաստէ, որպէսզի իրենց մայրը առողջանայ:

Դեղագործը դեղագիրը առնելով տղոց ըսաւ, թէ շուտով դեղը պատրաստ կ'ըլլայ, եթէ 5000 դրամ կանխիկ վճարու՞մ կատարեն: Տըղաքը խնդրեցին ապառիկ վճարումով դեղը ունենալ, որպէսզի իրենց մայրը շուտով առողջանայ, սակայն դեղագործը համաձայն չեղաւ:

Տղաքը դեղագիրը առին եւ գացին ուրիշ դեղարաններ, բայց ոչ ոք համաձայն եղաւ ապառիկ դեղ տալ, ինչ որ ալ ըլլան տրուած պատճառաբանութիւնները: Եղբայրները յուսահատեցան, քանի որ անկարելի էր օգնել իրենց հիւանդ մօրը: Դժուարին կացութեան մը մէջ էին: Ինչպէ՞ս եւ որմէ՞ պիտի գտնէին 5000 դրամ, որպէսզի փրկեն իրենց մօր կեանքը, որպէսզի իրենց հայրը կորսնցնելէ ետք, այս անգամ մօր կողմէ ալ որբ մնալու չդատապարտուէին:

Այդ օրերուն Վանի մէջ յաճախադէպ դարձած էին աւագակային դէպքերը, երկիւղալի մթնոլորտ մը ստեղծելով քաղաքի բնակիչներուն մօտ, որոնք իրենց կեանքին եւ ունեցածին ապահովութեան համար կը դիմէին պատշաճ նախարարութեան եւ թագաւորին:

Թագաւորը զայրացած տասը հազար դրամ խոստացաւ անոր, որ պիտի ձեռքաւալէր այդ աւագակներէն մէկը:

Խոսքով, այդ էր երէց գաւկիին անունը, ըսաւ իր երկու եղբայրներուն՝ Տիրանին ու Արամին.

— Եղբայրնե՛ր, որպէսզի կարենանք տասը հազար վարձատրութիւնը ստանալ եւ մեր մօր դեղերը գնել, կապեցէք զիս եւ յանձնեցէք դատարան՝ իբրեւ ահաւոր աւագակներու գլխաւորը:

Փոքր եղբայրը չհամաձայնեցաւ: Ամէն մէկը ուզեց, որ ինք փոխարինէ մեծ եղբայրը եւ զինք յանձնեն դատարան:

— Չէ՞ որ մայրիկին համար է. զիս կապեցէք եւ դատարան յանձնեցէք,— ըսին միջնեկն ու կրտսերը:

Վերջապէս համաձայնեցան վիճակ քաշել: Բախտը ինկաւ կրտսերին՝ Արամին:

Երկու եղբայրները կապեցին Արամը եւ յանձնեցին դատարան: Դատարանը երկար հարցաքննելէ ետք, հրամայեց շղթայել ու նետել զայն ամենածանր յանցաւորներու յատուկ բանտը, իսկ երկու եղբայրներուն տուաւ խոստացուած նուէրը:

Երկու եղայրները արագորէն մեկնեցան, վճարեցին դեղարանին, գնեցին հաւ ու հաւկիթ, զանազան կանաչեղէններ եւ պտուղներ, վազեցին իրենց մօր մօտ այն խոր համոզումով, որ պիտի կարենան իրենց հիւանդացած մայրը փրկել:

— Այս բոլորը բաւական սուղ են, տղաքս, ուրկէ՞ առիք զանոնք: Որմէ՞ բերիք ինձի համար գրուած դեղագիրին եւ այս ուտեստեղէններու դրամները,— հարցուց մայրը:

Տղաքը չկրցան գտնել որեւէ արդարացուցիչ ատասխան:

— Գողցած չըլլա՞ք,— հարցուց մայրը:

— Ո՛չ, մենք պատուաւոր ենք,— ըսին տղաքը:

— Չեմ հաւատար ձեզի. ըսէք, ուրկէ՞ բերիք դրամը՝ դեղը եւ ուտելիքները գնելու համար: Յետոյ, ո՞ւր է ձեր եղբայրը՝ Արամը:

Երկու եղբայրները անկարող եղան ծածկելու իրողութիւնը եւ պատմեցին իրենց մօր: Բայց անիկա գոհ չմնաց: Մերժեց ընդունիլ դեղերն ու սնունդը եւ ըսաւ.

— Կը նախընտրեմ անօթութենէ եւ ծարաւէ մեռնիլ, քան դարմանուիլ իմ անմեղ զաւկիս արիւնով:

Տղաքը ի գուր բացատրեցին, թէ իրենցմէ ամէն մէկը պատրաստ է զոհուելու իրենց կրտսեր եղբօր տեղը: Մայրը շարունակեց պահանջել իր զաւկին ազատութիւնը: Խոսքով եւ Տիրան շատ ցաւեցան, որ չեն կրնար ազատել իրենց եղբայրը, կամ գոնէ տեսնել զայն:

Այդ օրերուն Վանի մէջ դրամով կարելի էր բանալ բոլոր դռները: Երկու եղբայրները բանտին ծեր բանտապահը կաշառեցին եւ մտան ներս՝ տեսնելու համար իրենց եղբայրը: Գրկեցին զայն եւ աչքերնին լեցուած արտասուքով ըսին, թէ մայրիկը մերժեց դեղերը ընդունիլ, հետեւաբար իր զոհաբերութիւնը ոչ միայն անօգուտ է, այլեւ կը ծանրացնէ անոր վիճակը:

Այս խօսքին վրայ արտասուեց Արամը:

Ծեր բանտապահը, որ ունկնդրած էր ամբողջ խօսակցութիւնը, անկարող եղաւ զսպել իր արցունքները, գնաց դատաւորին եւ պատմեց եղելութիւնը:

Այս հերոսական սէրը դէպի մայրը ցնցեն դատաւորը, ան հրամայեց իր մօտ բերել բանտարկեալը: Նախ ոչինչ ըսաւ Արամին, բայց երբ դատաւորը անոր հաղորդեց, թէ տեղեակ է բանտին մէջ իր եւ եղբայրներուն միջեւ եղած խօսակցութեան, Արամ խոստովանեցաւ ամէն ինչ, թէ ինչո՞ւ եւ ի՞նչ նպատակով երեք եղբայրներ որոշած էին դատաւորին յանձնել իրենց կրտսեր եղբայրը՝ Արամը, որպէսզի աւագակապետին համար խոստացուած գումարով իրենց մօր դեղ գնեն եւ առողջացնեն:

Դատաւորը կառավարիչին պարզեց խնդիրը եւ բանտարկուած Արամ ազատ արձակուեցաւ:

*Դէպքին տեղեկացաւ նաեւ Գագիկ արքան, որ շատ յուզուեցաւ եւ հրամայեց երեք եղբայրները վարձատրել Վասպուրականի թագաւորութեան ամենամեծ շքանշանով եւ ամէն մէկուն տուաւ պետական բարձր պաշտօններ: Իսկ տղոց հիւանդ մայրը բուժուեցաւ պետական դրամով, միեւնոյն ատեն անոր թոշակ կապեց մինչեւ մահ:*

*Եւ այսպէս, որդիներուն ծնողասիրութիւնը գնահատուեցաւ եւ վարձատրուեցաւ հայոց թագաւորին կողմէ, գնահատուելով նաեւ անոնց զոհաբերութեան ոգին իրենց մօրը հանդէպ:*



Զախէն աջ՝ Մետաֆսէի աղջիկը՝ բանաստեղծուհի, քարգմանիչ Լիլիթ,  
Գրիգոր Հոթոյեան եւ բանաստեղծուհի Մետաֆսէ

## ԻՆՉՊԷ՞Ս ԳՏԱՆՔ ԱՐԱԲԱՅԱԾ ՄՕՐԱՔՈՅՐԱ

Կիրիկիոյ քաղաքներէն Պեհեսնին կը գտնուի Մալաթիոյ, Ուր-Ֆայի, Մարաշի եւ Այնթապի մէջտեղը, Հայաստանը, Կիրիկեան եւ Սուրիան իրարու զօդող առաջնակարգ դիրքի մը վրայ: Այս չորս մեծ քաղաքները գրեթէ հաւասար հեռաւորութեան վրայ կը գտնուին Պեհեսնիէն: Անոնց հեռաւորութիւնը շուրջ 150 քիլոմետր է:

Պատմական քաղաք մըն է Պեհեսնին: Ըստ պատմագէտ Ադոնցի, Պեհեսնիի անունը յիշատակուած է եռզրատի մօտակայքի Պողազ Քէօյի հին արձանագրութիւններուն մէջ՝ Եաուվան անունով: Ըստ Իրեն, Վանի սահմանապահ զինուորական կայաններէն մէկը եղած է Պեհեսնին, Կիրիկիոյ եւ Սուրիոյ սահմաններուն վրայ: Իսկ Պեհեսնիի պատմական բերդի անեղծ մնացած մէկ պատին վրայ կը գտնուի արձանագրութիւն մը, որ ըստ անգլիացի Լինչի, Չանի Պեհեսթունիս անունով ճանչցուած արձանագրութեանց նմանութեամբ քանդակուած է, կրանիտեայ ժայռերու վրայ, բերդի այդ բարձրաբերձ պատին կեդրոնը:

Յայտնի էր, որ Պեհեսնիի հնադարեան ճարտարապետները զայն որպէս զինուորական քաղաք կառուցած էին, նկատի ունենալով լոկ ռազմագիտական տեսակէտը: Այլապէս պարտաւորուած պիտի չըլլային լեռն ու չոր լեռնաշղթաներու գիրկը դիւրաւ պաշտպանելի ձորերով եւ կիրճերով շրջապատուած անառիկ դիրքի մը վրայ կառուցանել զայն:

Պեհեսնիի հայկական թաղերը կը պարփակէին հինգ-վեց հազար հայութիւն: Գոյութիւն ունէին Ս. Աստուածածին հայաստանեայց առաքելական եկեղեցին երեք քահանաներով՝ Տէր Յովհաննէս, Տէր Սուքիաս եւ Տէր Աբրահամ, հայ կաթողիկէ եկեղեցի, որուն հոգեւոր հովիւն էր Հայր Կղեմէս Սինկերեան եւ հայ աւետարանական եկեղեցի, որուն հոգեւոր հովիւն էր Վեր. Կարապետ Հասէսեան:

Գերմանիոյ կողքին պատերազմի թուրքիոյ մուտքը 1914 Օգոստոս 3-ին, պաշտօնապէս կը յայտարարուի Պեհեսնիի մէջ, գաւառի մուխթարներուն զրկուած գոց պահարաններու բացումովը: Այդ թուղթերէն հարիւրաւոր օրինակներ փակցուած էին թաղերուն, շուկաներուն եւ պետական հասարակական հաստատութիւններուն պատերուն եւ անկիւնադարձներուն վրայ: Միեւնոյն ատեն կառավարութեան մուկետիկները կատաղի հնչումով, բարձրագոյն եւ խորիստ

բացագանչութիւններով գէնքի տակ կը կանչէին 18-45 տարեկանի միջեւ եղող բոլոր երիտասարդները, իսկ փախուստ տուողները պիտի յանձնուէին նորակազմ պատերազմական ատեաններուն:

Զօրաշարժի ենթարկուած Հայ երիտասարդները, առանձին ջոկատներ կազմած, դէպի կովկասեան ճակատ կ'ուղղուէին, բռնելով Մալաթիոյ ճամբան: Անոնք կը քալէին օգոստոսեան կիզիչ արեւուն տակ այնպիսի ճամբաներէ, որոնք կորսուած էին փուշերու եւ փոշիներու մէջ:

Ճակատ մեկնող սիրելիներուն քաղաքէն բաժանումը ողբերգական եւ սրտաճմլիկ տեսարաններ կը պարզէր ամուսիններու եւ Հայրերու մեկնումով, անտէր մնացած եւ թշուառութեան գիրկը իյնալու դատապարտուած էին մեծ թիւով ընտանիքներ:

Կառավարութեան հրահանգով՝ զօրակոչի չէին ենթարկուեր 41 ոսկի փրկագին տուողները:

Այնուհետեւ, տեղի ունեցած են բռնագրաւումներ. վաճառատուներու մէջ գտնուող բոլոր ապրանքները կը բռնագրաւուէին պետութեան կողմէ:

Ապա, պետութեան կողմէ առնուած որոշումով, քաղաքի հայերուն կը հրահանգուէր պետութեան յանձնել իրենց մօտ գտնուող գէնքերը, միեւնոյն ատեն Հայ երեւելիներուն տուները կը խուզարկէին՝ գէնք գտնելու վճռակամութեամբ:

Պեհեսնիի հայութիւնը թէպէտ իմացած էր ճակատ տարուած իր զաւակներուն ոչխարներու հօտի նման սպանդանոց տարուելը, խող-խողուելը, սակայն տակաւին չէր գիտեր, թէ թշնամիին հարուածը ընդհանուր հայութեան սրտին ուղղուած էր:

Խուզարկութիւններէն ետք տեղի կ'ունենայ Հայ ղեկավարներու ձերբակալութիւնը, որոնց մէջ կը գտնուէին թաղերու բոլոր երեւելիները, պետութեան եւ քաղաքապետութեան հայ պաշտօնեաները, հարուստները, նշանաւոր արհեստաւորները, կուսակցականները եւ այլն:

Պեհեսնիի գայմագամին կողմէ հայութեան եւ Հայ կիներուն դաւանափոխութեան առաջարկ կ'ըլլայ, սակայն Հայ առաքինազարդ մայրերը, մահուան գաղափարին հետ հաշտուած, բացարձակապէս կը մերժեն ընդունիլ այդ առաջարկը:

Հայ կիներու կողմէ գայմագամին հաւատափոխութեան առաջարկը մերժուելէն ետք, գայմագամը երեք օր պայմանաժամ կու տայ, որպէսզի տեղւոյն հայութիւնը պատրաստ ըլլայ աքսորի:

Պայմանաժամի վերջաւորութեան, Պեհեսնիի հայութիւնը կարաւաններով, առաջնորդութեամբ կարաւանապետերու եւ ժանտարմաներու, ճամբու կը դրուի դէպի չարչարանք, տառապանք եւ մահ՝ Պեհեսնիէն մինչեւ Տէր Զօր, ենթարկուելով վայրենի թուրք եւ քիւրտ աւազակներու, ինչպէս նաեւ պատասխանատու ժանտարմաներու դա-

զանուլթիւններուն, կողոպուտներուն, բռնաբարումներուն եւ սպանուլթիւններուն:

Պեհեանի մեծամեծերու եւ աչքառու կուսակցականներու շարքին ձերբակալուած էին իմ մօրենական մեծ հայրս՝ ոսկերիչ Օհան Գուլումճեանը եւ իր որդին՝ Ռուբէնը՝ որպէս դաշնակցականներ, որոնք երբեք չվերադարձան տուն եւ աներեւակայելի չարչարանքներով սպանուեցան Տէվէճի խանին մէջ, ուր բանտարկուած էին բոլոր ձերբակալուածները:

Մեծ հայրս ունէր նաեւ երկու աղջիկ, մեծը՝ Մարիամ, որ ամուսնացած է 15 տարեկանին եւ ունէր մանչ զաւակ մը Յարուլթիւն անունով, որ այն ատեն երկու ամսու էր, իսկ երկրորդ աղջիկը՝ Զարուհի, տարագրութեան ատեն հազիւ 5 տարեկան:

Ուրեմն, մեծ մայրս եւ Զարուհին առաջին կարաւանով ճամբայ կ'իյնան, իսկ մայրս՝ Մարիամ՝ երկրորդ կարաւանով:

Պեհեանիէն ճամբայ ելած կարաւաններու խլեակները ջարդուելէ ետք ճամբու ընթացքին, պահ մը կանգ առնելէ ետք Սուրֆազ աւանի պատմական ծառախումբերուն տակ, իրիկուան դէմ կը հասնին իր առաջին հանգրուանը՝ Գարակէօջէք գիւղը: Ծամբան կրկին կը կողոպտուին Քիւլէֆ-էօնիւ գիւղ չհասած, ապա ճամբան շարունակելով կայք կը հաստատեն Կէօքսուլի ափին, ուր որոշ ատեն մը հանգչելէ ետք, կարաւանի առաջին մասը կ'անցնի կիսամութին, երկրորդը՝ առաւօտուն:

Գետի ափէն հեռացող կարաւանները կ'ենթարկուին ջարդարարներու վայրագ խուժանի մը յարձակման, որոնք կացիներով եւ սուրերով կը կոտորէին անմեղ եւ անպաշտպան հայ կիները եւ աղջիկները:

Վերջապէս, առաջին կարաւանի մնացորդացը կը հասնի Եփրատի ափին, որուն մակերեսին վրայ անհամար դիակներ կը ծփային: Առաջին կարաւանէն վերապրողները նաւակով կ'անցնին միւս ափը, որուն մէջ կը գտնուէին մեծ մայրս եւ մօրաքոյրս՝ Զարուհին:

Ժանտարմաները լսած ըլլալով, որ մեծ մօրս ամուսինը ոսկերիչ է, խուզարկելով անոր մարմինը՝ կը գտնեն պահուած ոսկիները եւ սուրի մէկ հարուածով կը մեռցնեն անպաշտպան մեծ մայրս եւ կը նետեն Եփրատի ալիքներուն:

Մայրս, իր գրկին Յարուլթիւն անունով որդին, երկրորդ լաստանաւով կ'անցնի Եփրատի միւս ափը, ջուրի ալիքներուն վրայ արցունքոտ աչքերով եւ աղիողորմ լացերով կը տեսնէ մօրը զարհուրած դէմքը եւ ոսկեգոյն մագերը Եփրատի հոսանքն ի վար:

Յամաք հասնելով, մայրս կը փնտռէ իր հինգ տարեկան քոյրը՝ Զարուհին, սակայն չի գտներ: Ականատեսները կ'ըսեն, որ հոն եղող արաբները, տեսնելով անտէր մնացած եւ մայրը փնտռող աղջնակը, գինք առին եւ իրենց տունները տարին:

Փնտուտուքները ի դերեւ կ'ելլեն: Կարաւանը կը շարունակէ իր ընթացքը՝ անցնելով Պերեճիկէն: Մայրս եւ քանի մը կիներ իրենց քովը մնացած ոսկիները կաշառք տալով կարաւանապետին, յատուկ ջորեկաններով կը հասնին Քիլիս, սակայն ճամբու ընթացքին մօրս անդրանիկ զաւակը՝ Յարութիւնը կը մեռնի, չդիմանալով անօթութեան եւ ծարաւի:

Քիլիս հասնելով՝ մայրս, հազիւ 18 տարեկան, նորահաս գեղեցկուհի մը, հօրս կը հանդիպի աքսորականներու ապաստանարանին մէջ եւ կ'ամուսնանան՝ նկատելով, որ մօրս առաջին ամուսինը սպաննուած էր Պեհեսնիի մէջ թրքական բանակին միանալով՝ պարտադիր զինուորագրութեամբ:

Քիլիս հաստատուած սասունցի հայրս ջաղացպանութիւն ընելով իր ընտանիքը կ'ապրեցնէր, յաճախ խուսափելով եւ փախուստ տալով թրքական զինուորական հետապնդումներէ:

Քիլիսի մէջ 1918-ին կը ծնի մեծ քոյրս՝ Սիրանուշը, ապա հայրս կ'անցնի Սուրիա եւ կը հաստատուի Ազէզ գիւղաքաղաքը, ուր կը ծնի Յարութիւն եղբայրս՝ 1922-ին:

Հալէպ հաստատուելով՝ 1927-ին կը ծնիմ ես, 1929-ին՝ Յովհաննէս եղբայրս եւ 1932-ին՝ Արշալոյս քոյրս:

Մանկութեան տարիներուս, շատ լաւ կը յիշեմ մօրս լացերը իր ծնողքին թուրք գազաններու կողմէ սպանութեան եւ իր քրոջ՝ Զարուհիին կորուստին համար: Զանազան միջոցներով, զանազան մարդոց միջոցաւ կատարուած փնտուտուքները արդիւնք չտուին: Փափիրներ, գուշակներ, ֆալիներ չկրցան յայտնագործել մօրաքրոջս գտնուած տեղը: Եւ տարիներու լաց ու կոծը, աքսորի ճամբաներուն վրայ զգացած տառապանքները, սիրելիներուն մահը եւ քրոջ անհետ կորուստը՝ մաշեցուցին խեղճ մօրս դիմադրական կարողութիւնները:

Մեծ քրոջս՝ Սիրանուշին ամուսնութիւնը եւ զաւակով մը բախտաւորուելը քիչ մը սփոփանք բերաւ մօրս, սակայն դժբախտ պարագաներու տակ քրոջս առաջին զաւակին՝ Վարդուհիին մահը նոր ցաւ մը աւելցուց իր կրած ցաւերուն վրայ:

Տասըմէկ տարեկան էի, երբ մայրս քանի մը հիւանդութիւններու պատճառով տկարացած էր եւ պէտք եղած դեղերու գնումը անկարելիութիւն դարձած ըլլալով հօրս համար, ան մահացաւ 1938 Նոյեմբեր 2-ին, 38 տարեկան ծաղիկ հասակին, որբ ձգելով իր հինգ զաւակները, անիծելով թրքական արիւնարբու կառավարութիւնը, որ իր տունը քանդելով, ծնողքը եւ ամուսինը չարչարանքով սպաննելով, պատճառ դարձած էր, որ աքսորական տառապալից կեանք մը ունենայ:

Մայրս մեռաւ առանց քոյրը տեսնելու:

1953 թուական:

Հայրս, որպէս հայրենասէր սասունցի, միշտ կ'այցելէր իր հայրե-

նակիցներու տուները: Օր մը, այցելելով Նոր Գիւղի չորրորդ թաղամասին վրայ գտնուող իր մէկ հայրենակիցին տունը, կը սկսի խօսիլ (ժղլիլ՝ իրենց բարբառով), վերլիչելով իրենց անցեալը, Սասունի ապստամբական կռիւները, հպարտանալով Գէորգ Չաւուշով, Գալէով, Մակարով, Անդրանիկով, Սերոբ Աղբիւրով եւ հարիւրաւոր ֆետայիներու քաջութիւններով, որոնք սարսափ տարածած էին թուրք պետութեան եւ քիւրտ ցեղապետերուն մօտ:

Երբ ազուր եռացած սուրճը կու գայ, հայրս կը նկատէ կին մը, որ բակէն կ'անցնի եւ խոհանոց կ'երթայ: Ուշադրութեամբ դիտելէ ետք, հայրս իր սասունցի հայրենակիցին կը հարցնէ, թէ այս կինը արաբ է, թէ՞ հայ, հակառակ ձեռքերուն եւ ոտքերուն վրայ արաբական դաջերու գոյութեան:

Սասունցին կ'ըսէ, որ հայ է, սակայն արաբներու մէջ մնացած է, ամուսնացած արաբի հետ եւ ունի մէկ որդի՝ Իսա անունով:

Հայրս այդ կնկան արտաքինը հանգուցեալ մօրս նմանցնելով, կը խնդրէ իր հայրենակիցէն, որ կանչէ իր տանտիրոջը տիկինը՝ իրեն ուղղելու կարգ մը հարցումներ:

Կինը կու գայ: Հայերէն չէր գիտեր, ինչպէս բոլոր պեհսանիցիները. կը խօսէր արաբերէն եւ թրքերէն: Հայրս կը հարցնէ, թէ ինք ուրկէ՞ է, հօրը անունը ի՞նչ է, ընտանիքը քանի՞ հոգի է կը բաղկանայ, իրենց տունը ի՞նչ ձեւի էր եւայլն:

Մօրաքոյրս կը պատասխանէ այնպէս, ինչպէս մայրս պատմած էր: Հայրս կ'որոտխանայ եւ կը յայտնէ, թէ իր կնոջ քոյրն է, որ կորսուած է տարագրութեան տարիներուն՝ երբ Եփրատ գետէն կ'անցնէին:

Մօրաքոյրս՝ Զարուհի, կը պատմէ իր ողբիսականը: Երբ մայրը կը կորսնցնէ, լալով կը փնտռէ եւ չի կրնար գտնել զայն: Արաբ կիներ կու գան եւ կ'առնեն զինք ու կը տանին իրենց գիւղը: Կ'որդեգրուի գիւղի ազնուական արաբի մը կողմէ: Երբ 15 տարեկան կը դառնայ, արաբ մարդը Զարուհին կ'ամուսնացնէ իր երիտասարդ մանչին հետ:

Ամուսնանալէ ետք, որոշ շրջան մը կ'ապրին գիւղը, ապա զաւակ մը ունենալէ ետք, ամուսինը երկաթուղագիծի վրայ պաշտօն մը կը ստանձնէ եւ կը բնակին Պերեճիկի մօտ գիւղ մը:

Պաշտօնէն եւ գիւղական կեանքէն ձանձրացած, ընտանեօք կը փոխադրուին Հալէպ եւ Նոր Գիւղի մէջ տուն մը գնելով՝ կ'ապրին:

Մօրաքոյրս գտնուեցաւ:

Մեր յարաբերութիւնները որպէս հարագատներ՝ շարունակուեցան: 1965-ին ամուսինը մահացաւ: Մնացին մայր եւ որդի: Որդին Հալէպի արաբական երկրորդական վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ ետք Գերմանիա մեկնեցաւ: Աշխատելով եւ ուսանելով, հայրս կամքով եւ ուշիմութեամբ բժշկութիւն ուսանեցաւ: Ամուսնացաւ գերմանուհիի մը հետ եւ ունեցաւ երեք զաւակներ՝ մէկ աղջիկ եւ երկու մանչ:



Որպէս գերմանական հպատակութիւն ունեցող անձ՝ մինչեւ այսօր կը մնայ Գերմանիա, եւ հակառակ 68 տարեկան ըլլալուն՝ կը շարունակէ աշխատիլ, եւ իր անունով գիւտ մը յայտնաբերած ըլլալով՝ կը բուժէ մահացու հիւանդութիւններ եւ կը զօրացնէ յոգնած զգայարանքները:

Իսկ մօրաքոյրս՝ Զարուհին, որուն արաբական անունը Նուրիէ դրած էին, քանի մը անգամ այցելեց իր զաւակին՝ Գերմանիա: Իր միակ զաւակին բժշկական խնամքին ենթարկուելով՝ կրցաւ ապրիլ մինչեւ 93 տարեկան, մահացաւ՝ միանալով իր զոհուած ծնողներուն եւ գինք մինչեւ մահ փնտռող քրոջ՝ Մարիամին:

Մօրաքրոջս տղան՝ Իսան, յաճախ հեռաձայնով կը խօսի Գերմանիայէն եւ կը խնդրէ, որ Գերմանիա երթամ՝ սրսկուելու համար իր գիւտը եղող պատուաստներէն, որպէսզի առողջ եւ երջանիկ ապրիմ, միշտ յիշելով արաբ-հայ մօրաքոյրս եւ արաբ-հայ մօրաքրոջս որդին:



Արաբացած մօրաքոյրս՝ Նուրիէ (Զարուհի) Աթայ

## ՔՐՏՆԱՇԱՀ ՆՈՒԷՐԸ

Համաշխարհային Երկրորդ Պատերազմի երկրորդ տարին՝ 1940 թվականը, դժուարին տարի մըն էր Հայկաի հայութեան համար: Ազգայնամոլ Գերմանիան, Հիթլերի ղեկավարութեամբ եւ ծրագրով, արդէն իսկ գրաւած էր Լեհաստանը, Չեխոսլովաքիան, Աւստրիան եւ Պելճիքայի վրայով հասած Ֆրանսա:

Ֆրանսայի պարտութեամբ՝ ստեղծուած էր Վիշիի կառավարութիւնը, որ կը գործակցէր Գերմանիոյ հետ: Սակայն Զօրավար Տը Կոլ, Անգլիա ապաստանելով, կազմած էր Ազատ Ֆրանսայի Բանակը, իր զօրամասերը հաստատելով Ֆրանսայի տիրապետութեան տակ գրտնուող երկիրներուն մէջ:

Սուրիա եւ Լիբանան, որոնք Ֆրանսական զաղթավայրեր էին, 1940-ին կը գտնուէին Վիշիի Ֆրանսական իշխանութեան ենթակայ: Զօրավար Տը Կոլ Սուրիոյ եւ Լիբանանի Վիշիի ենթակայ իշխանութիւններուն վերջնագիր տուաւ, որպէսզի յանձնուին Ազատ Ֆրանսայի իշխանութեան: Տեղի ունեցան օդային եւ ցամաքային կռիւներ Ֆրանսական բանակներուն միջեւ, որոնք վերջացան Տը Կոլականերու յաղթանակով:

Սուրիոյ մէջ այդ տարիներուն կը տիրէր անգործութիւն եւ տընտեսական անձուկ վիճակ: Սուրիոյ հացահատիկը եւ այլ արտադրութիւնները ինքնաշարժներով եւ երկաթուղիով կը փոխադրուէին պատերազմող դաշնակից բանակները կերակրելու համար, իսկ ժողովուրդը հաց ճարելու դժուարութիւն կ'ունենար: Հաց ապահովելու համար, կէս դիշերին փուռին առջեւ կարգի կեցող ժողովուրդը կ'աղաչէր փոապանին՝ իր ընտանիքին բաւար հաց ապահովելու համար:

Կեանքի այս պայմաններուն մէջ, կէս կուշտ, կէս անօթի, դպրոց կ'երթար Գէորգ Գրիգորեան: Ազգային Սահակեան վարժարանի վեցերորդ դասարանի աշակերտ ըլլալով՝ ամէն ճիգ ի գործ կը դնէր, որպէսզի կարենար յաջողութեամբ աւարտել տարեշրջանը, արժանանալու համար շրջանաւարտի վկայականին:

Գէորգ թէեւ չար էր, սակայն վարժարանի տնօրէն Պրն. Կարապետ Իւլիւպէյեան, դաստիարակ՝ Պրն. Նափոլէոն Հազրոյեան, դաստիարակներ՝ Եղուարդ Տասնապետեան, Պարգեւ Միսիրեան, Սարգիս Չուլճեան եւ ուրիշներ, զինք շատ կը սիրէին, որովհետեւ ան միշտ կ'օգնէր դպրոցի տնտեսուհի, սասունցի Նմլօ Մայրիկին, մանաւանդ ձմրան օրերուն, դասարանները տաքցնելու համար կրակարանները պատրաստելու, վառելու եւ դասարանները տեղափոխելու գործին:

Իսկ միև ուսուցիչները իրեն կը վստահէին անձնական կարգ մը առաքելութիւններ:

Գէորգ, հակառակ աղքատ ընտանիքի մը զաւակը ըլլալուն եւ տետրակ, մատիտ, գրիչ, դասագիրքեր գնելու անկարող ըլլալուն, կ'օգտուէր իր ընկերներուն ունեցածներէն եւ դասարանի լաւագոյն աշակերտներու կարգին մէջ կը գտնուէր: Հայրը դժուարութեամբ դպրոցական երեք զաւակներուն թոշակները կը վճարէր եւ ուշացնելու պարագային՝ դպրոցէն տուն կը ղրկուէր, որպէսզի դպրոցական թոշակը վճարուի:

Սակայն, 1940-ին, Գէորգի չար բախտէն, հայրը բանտէն փախած հայու մը օգնած ըլլալու յանցանքով բանտարկուած ըլլալով, ընտանիքին միակ սնունդը Գամիչլիէն բերուած պարկ մը ձաւարն էր: Մայրը ձաւարը կը խաշէր եւ առանց իւղի կ'ուտէին եւ երբեմն ալ Միս Եփեփի կողմէ կառուցուած որբանոցին կերակուրներէն կ'օգտուէին:

Կեանքի այս պայմաններուն տառապանքով կը դիմադրէին Գրիգորեան ընտանիքի անդամները՝ յուսալով, որ իրենց հայրը շուտով բանտէն կ'արձակուի եւ իրենց տնտեսական վիճակը կը բարելաւուի:

Այդ օրերուն, վարժարանի տնօրէնութեան ջանքով կը կազմուի Սահակեան Վարժարանի Շրջանաւարտից Միութիւնը, ի մի հաւաքելով 1929-ին հիմնուած վարժարանի շրջանաւարտները, գանոնք կապելով վարժարանին:

Շրջանաւարտից Միութեան նորընտիր վարչութեան անդրանիկ ձեռնարկներէն մէկը կ'ըլլայ գրագարանի մը շինութիւնը, որպէսզի հոն հաւաքուած գիրքերէն օգտուին շրջանաւարտները եւ աշակերտները: Վարժարանին մէջ աշակերտ ունեցող ընտանիքներուն տնօրէնութիւնը նամակներով տեղեակ կը պահէ Շրջանաւարտից Միութեան որոշումը եւ կը խնդրէ նիւթապէս օգնել ծրագրի յաջողութեան:

Նամակներու առաքումէն քանի մը օր ետք, բազմաթիւ ծնողներ, գնահատելով ծրագրուած գաղափարը, իրենց կարողութեան սահմաններով, իրենց նուիրատուութիւնները կը ղրկեն տնօրէնութեան:

Գաղափարը քաջալերութիւն եւ օգնելու պատրաստակամութիւն ստեղծած էր ծնողներու մէջ, որոնք իրենց նուիրատուութիւններէն զատ, իրենց ազգականներուն եւ բարեկամներուն կը թելադրէին, որպէսզի օգտակար հանդիսանային ծրագրի յաջողութեան, որ պիտի ծառայէր իրենց զաւակներուն մտաւոր զարգացումին եւ ազգասիրական ոգիի զարգացումին:

Գէորգ ամէն օր ակնառես կ'ըլլար իր դասընկերներուն բերած նուիրատուութիւններուն: Տնօրէնը յաճախ կը յիշեցնէր յապաղած աշակերտներուն, որ շուտով բերեն իրենց նուիրատուութիւնները, որպէսզի ամավերջի հանդէսէն առաջ գրագարանը շինուած եւ գիրքերով ճոխացած ըլլայ:

Գէորգ կը տառապէր, չէր ուզեր պզտիկ մնալ իր դասընկերներուն

առջեւ, որոնք պահանջուածէն աւելի գումարներ կը նուիրէին գրադարանի շինութեան: Ի՞նչ ընէր, ուրկէ՞ հայթայթէր տրուելիք գումարը: Տնօրէնը ամէն առաւօտ, առաւօտեան աղօթքէն ետք, հրապարակաւ կը յայտարարէր նուիրատուներուն անունները:

Գէորգ երկար ատեն անքուն մնաց եւ զանազան ծրագիրներ մշակեց՝ իր ճակտի քրտինքով շահուած գումար մը նուիրելու գրադարանի շինութեան:

Իր սրտակից դասընկերներէն՝ Յակոբ, իրեն մօտեցաւ եւ ուզեց գիտնալ, թէ գրադարանի շինութեան համար բացուած հանգանակութեան մասնակցելու համար որեւէ կարգադրութիւն ըրա՞ծ է: Գէորգ, անակնկալի եկած այս հարցումէն, չկրցաւ որեւէ պատասխան տալ եւ երեսը ծածկելով հեռացաւ, որպէսզի ընկերը չտեսնէ իր արցունքոտ աչքերը: Յակոբ, որ շատ կը սիրէր իր ընկերը, տեսնելով անոր յուզումը՝ խոստացաւ, որ ինք իր հօրը պիտի խօսի, որպէսզի օգնէ Գէորգին, զինք ազատելով ստեղծուած խայտառակ վիճակէն, որ կը սպառնար իր արժանապատուութեան:

Գէորգ, լսելով իր ընկերոջ առաջարկը, բացարձակապէս մերժեց նման գաղափար մը:

— Ես,— ըսաւ Գէորգ,— հակառակ հօրս բանտարկուած ըլլալուն եւ ընտանեօք նիւթական մեր ծանր վիճակին, չեմ կրնար ընդունիլ ուրիշի կողմէ ինծի տրուած գումար մը՝ որպէս իմ տալու գրադարանի շինութեան: Ես պիտի փորձեմ իմ քրտինքով շահուած գումարով մասնակցիլ այս հանգանակութեան, որպէսզի ամէն անգամ սրտայոյզ գոհունակութիւնը ունենամ, որ իմ արդար քրտինքովս շահուած գումարը դեր մը ունեցած է գրադարանի շինութեան մէջ:

Գէորգ քանի մը գիշերներ անքուն տառապելէ ետք, առաւ իր վերջնական որոշումը:

Համաշխարհային Երկրորդ Պատերազմի եւ Սուրիոյ վրայ կատարուած Տը Կոլիստներու օդային յարձակումներուն պատճառով, Հալէպի Նոր Գիւղ թաղամասին մէջ բազմաթիւ ընտանիքներ գետնափոր պատսպարաններ կը շինէին:

Գետնափոր պատսպարան շինելու աշխատանքին ձեռնարկած էին նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ ազգային Սահակեան վարժարանի հանգիւպակաց թաղին անկիւնի տան բնակիչ արժ. Տէր Նշան Ա. Քհնյ. Մարգարեանը եւ իր զաւակը՝ Մարգար Մարգարեան, իրենց ընտանիքը պաշտպանելու համար օդային յարձակումներէն:

Գէորգ նոյն շրջանի բնակիչ ըլլալով, ամէն օր կը տեսնէր, որ դորձաւորներ կառքերով բեռնուած դիւրաբեկ ճեմակ քարերը կը փոխադրէին Մարգարեաններու տունէն քսան մեթր հեռաւորութեան գրտնոռ փոսին մէջ: Մտածեց եւ եկաւ այն եզրակացութեան, որ ինքն ալ կրնար այդ գործը ընել: Դիմեց Մարգարեաններուն: Անոնք սիրով ընդունեցին Գէորգին առաջարկը:

Գէորգ, ամէն օր, դպրոցէն արձակուելէն ետք, օրական չորս կառք քար կը փոխադրէր եւ կը շահէր մէկ սուրիական ոսկի: Ամէն մէկ կառքը՝ 25 սուրիական դահեկան:

Երկու շաբաթ չարաչար աշխատելով կրցաւ 12 սուրիական ոսկի շահիլ: Ուրախ էր: Միայն մայրը տեղեակ էր Գէորգին աշխատանքէն, եւ աշխատանքի ընթացքին երթեւեկող մարդիկ անոր մեղքնալով կ'անցնէին՝ 14 տարեկան մանչի մը յարմար չգտնելով կատարած աշխատանքը, անշուշտ անտեղեակ ըլլալով այն պատճառին, որուն համար այս քաջ եւ արժանապատուութիւն ունեցող տղան չարաչար կ'աշխատէր:

Գէորգ երկու շաբաթ ետք, բաւարար գումար շահելէ ետք, Մարգարեաններուն յայտնեց, որ այլեւս պիտի չկարենայ աշխատիլ՝ յայտնելով, որ վարժարանի գրադարանին իր նուիրատուութիւնը ապահոված է արդէն:

Տէր Հայրը եւ Պրն. Մարգար լսելով Գէորգին ընտանիքին պատմութիւնը եւ Գէորգին պատուաբեր նպատակը, մեծապէս գնահատեցին զինք եւ անոր շահած 12 սուրիական ոսկիին հետ երեք ոսկի ալ յաւելում տուին, որովհետեւ իր աշխատանքը բծախնդրութեամբ եւ կանոնաւորութեամբ կատարած էր:

Գէորգ յաջորդ երկուշաբթի առաւօտ 15 սուրիական ոսկին եւ զայն շահած ըլլալը բացատրող երկտող մը յանձնեց ուսուցիչին: Երբ ուսուցիչը բացաւ պահարանը եւ կարդաց բացատրողական գրութիւնը, բարձրաձայն կարդաց զայն ամբողջ աշակերտութեան առջեւ:

Աշակերտները, մանաւանդ իր դասընկերները, որոնք ցաւակցելով կը նայէին Գէորգին, խանդավառ բացազանչութիւններով եւ գրնահատական խօսքերով արտայայտուեցան՝ իմանալով իրենց ընկերոջ պատուաբեր քայլը, որուն արձագանգը հասաւ մինչեւ դպրոցի հոգաբարձութեան անդամներուն:

Տարեկերջին՝ գրադարանի նուիրատուներուն անունները յատուկ ցուցափեղկի մը մէջ արձանագրուեցան, որոնց առաջին անունը աշակերտ Գէորգ Գրիգորեանի անունն էր, որ իր նուիրատուութիւնը գոյացուցած էր իր աշխատանքի քրտինքով:

Գէորգ 1941-ին շրջանաւարտ եղաւ ազգային Սահակեան վարժարանէն բարձր նիշերով եւ յատուկ գնահատանքով: Յաջորդ տարին՝ Շրջանաւարտներու Միութեան անդամները զինք վարչական ընտրեցին:

Ան, վարչութեան ատենապետի պաշտօնը ստանձնելով, միութեան կողմէ կազմակերպուած ձեռնարկներով նիւթապէս եւ բարոյապէս օգտակար հանդիսացաւ վարժարանի յառաջդիմութեան եւ բարգաւաճման, ինչպէս նաեւ շինուած գրադարանը նորանոր գիրքերով օժտելու աշխատանքին՝ իր անձնական ճիւղերով եւ շարունակական հետապնդումներով:

## ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍԷՐ

*Մկրտիչ արթնցաւ: Գիշերը ուշ քնացած էր: Իսկ քնանալէ ետք, երկար ատեն մտածումներու, արկածալից երազներու եւ յուսահատութեան ճիրաններուն մէջ գալարուած էր: Քաշեց պատուհանին վարագոյրը: Արեւը արդէն բաւական բարձրացած էր: Մարմնին վրայ կոտորտուք մը զգաց, թուլութիւն մը: Արդեօք ուշացա՞ծ էր: Զըլլայ որ շոգեկառքը մեկնած ըլլայ: Առանց նախաճաշի մասին մտածելու՝ դուրս խոյացաւ:*

*Փողոցը տարբեր էին մարդիկ, տարբեր՝ հնամենի քաղաքը: Մարդկային բազմութեանց ալիքներ կը դիմէին դէպի շոգեկառքի կայարանը: Մկրտիչ գրեթէ կը վազէր: Նոյնիսկ հանրակառքը սպասելու տրամադրութիւն չունեցաւ: Մարիին պէտք է հասնիլ: Կ'ուզէր գոնէ վերջին անգամ ըլլալով տեսնել զայն: Դիտել անոր հրեշտակային դէմքը եւ լսել հրաժեշտի սրտայոյզ խօսքերը: Միակ սեւեռում մը ունէր՝ շուտով հասնիլ կայարան:*

*1947-ի վերջին կարաւանն էր, որ կը մեկնէր: Այդ օր, 1946-ին սկսած դէպի Հայաստան ներգաղթելու արտօնութիւն ստացած տարագիր հայեր կ'աճապարէին հասնելու Հալէպի շոգեկառքի կայարանը: Շոգեկառքը եւ նաւը կը բաժնէր մօտ երկու հարիւր մղոն հեռաւորութիւն մը:*

*Շոգեկառքի մեկնումէն կէս ժամ առաջ, Մկրտիչ հասաւ կայարան: Առանց կողմերը նայելու, ճեղքեց ծովացած բազմութիւնը, որ բարի ճանապարհ մաղթելու եկած էր իր հարազատներուն եւ հսկայ շոգեկառքի վակոններով պատուհաններուն առջեւէն անցնելով՝ փնտռեց իր սիրած էակը: Գնացքը կը բաղկանար պարզ վակոններէ, որոնք տրամադրուած էին ներգաղթող ընտանիքներուն: Արցունք կար անոնց աչքերուն մէջ, նաեւ բարի ճանապարհ մաղթելու եկած ազգականներուն աչքերուն մէջ, արցունք, որ կը բխէր ուրախութեան եւ յուզումի զգացումներու միաձուլումէն:*

*Հինգերորդ վակոնին մէջ տեղաւորուած էին Մարին եւ իր ընտանիքը: Մարի, տեսնելով Մկրտիչին արտասովոր դէմքը, այլայլեցաւ եւ պատրուակով մը ծնողքին իմացուց, որ կ'ուզէր վար իջնել: Գնացքէն վար իջնելով՝ գրկախառնուեցաւ Մկրտիչին եւ յուզումնախառն զգացումներով գինովցած, դանդաղօրէն հեռացան հաւաքուած բազմութենէն: Այդ վայրկեաններուն երկուքն ալ վերացած էին: Կը նայէին իրարու, կարծես առաջին անգամ կը տեսնէին զիրար: Բան մը կը պատահէր: Կը քալէին մագնիսացած, նայելով իրարու աչ-*

քերու՛ն եւ զարմանալիօրէն կը հասկնային զիրար: Առաջին խօսողը եղաւ Մարին:

— Մկրտիչ, ինքզինքս աշխարհի ամենաերջանիկ անձը կը զգայի երբ ճանչցայ քեզ, հակառակ բազմաթիւ խոչընդոտներու ու պատահարներու, սիրեցի քեզ առանց վհատելու: Բայց այսօր այնպիսի պատուար մը կը բարձրանայ մեր միջեւ, որ անկարելի կը դարձնէ մեր երջանկութիւնը: Բազմաթիւ դժուարութիւններ անցուցի, բայց չյուսահատեցայ: Քու լայն սիրտդ հովանի եղած էր ինծի եւ սէրդ՝ ճանապարհ: Շատ տառապեցայ, բայց երբեք չմտածեցի նահանջի մասին, որովհետեւ առանց քեզի աշխարհը ունայն է ինծի համար: Բայց այսօր... յիշատակ դարձան մեր բոլոր ապրումները, երազներն ու իտէպիները, որոնցմով կը շինէինք մեր ապագայ երջանկութեան բոյնը: Հազար անգամ պիտի ցանկայի մեռնիլ քու ձեռքերուդ մէջ եւ չտեսնել այս օրը: Շատ մտածեցի, բայց չկրցայ եզրակացութեան մը յանգիլ:

— Շատ ծայրայեղութեան կ'երթաս, Մարի,— ըսաւ Մկրտիչ,— անցեալը քրքրելով բան չենք շահիր, հիմա ներկայով զբաղինք: Մի քանի վայրկեանէն արդէն մեկնած կ'ըլլաս, զիս ձգելով հոս առանձին: Այժմ կ'ողբէի քու անոյշ ու սփոփարար խօսքերդ լսել: Բայց երբեմն ալ իրաւացիօրէն արդար կ'ըլլայ անցեալի վերյիշումը: Քանի՛ք քանի՛ անգամներ ուզեցի համոզել ծնողքդ, որ չերթան, անկարելի եղաւ: Հայրդ բաւական յամառ է: Չկրցայ համոզել զինք, որ եղածը իրական ներգաղթ է, թէ կոմիտէներուն պոռոտախօսութիւններուն պէտք չէ հաւատալ, թէ Հայաստան հնարաւորութիւն չունի մեծ թիւով ներգաղթողները ընդունելու, թէ եթէ իրապէս հայեր պիտի տանէին հայրենիք, հապա ինչո՞ւ ազգային միութիւններէ եւ կազմակերպութիւններէ հրաժարելու խայտառակութիւնը ստեղծեցին:

— Ինծի կ'ըսես, որ անցեալը մի՛ քրքրեր,— ըսաւ Մարի,— բայց դուն հիմա, վերջին պահուն նման հարցերու մասին կը խօսիս: Հաշտուի՛նք իրականութեան հետ:

— Իմ պատմածս պատմութիւն չէ,— պատասխանեց Մկրտիչ,— այլ եւ ճշմարիտ ու անողոք իրականութիւն: Հայաստան մեկնողներուն հարիւրին ինիսունը փոր մը հացի եւ հանգիստի համար կ'երթան, ատոնց կարգին քու հայրդ: Այս է իրական վիճակը: Այդ գացողներէն շատեր պիտի յուսախաբուին: Դուն պիտի տեսնես եւ դուք ձեր մորթին վրայ պիտի զգաք այս բոլորը, եւ, մտքիդ մէջ իմ խօսքերս լաւ դրոշմուած ըլլալով, երբ ոտքդ կոխես հայրենի պաշտելի հողին վրայ, իմ խօսքերուս ճշմարտութիւնը հաստատելով՝ պիտի յիշես զիս ու իմ պատկանած կուսակցութիւնը, եւ յիշելով անոր անշահախնդրի հայրենասիրութիւնը՝ պատմես մեր երկրի նորահաս սերունդներուն: Բոլոր անոնք, որոնք մեզի «հակահայաստանեան», «բաւաճան» եւ «պուրժուա» կը կոչեն, անոնք շատ լաւ գիտեն, թէ մենք ստեղծուած

ենք հայ ժողովուրդին եւ հայ հայրենիքին ծառայելու համար: Մենք գաղափար մը ունինք, որուն իրականացման համար պատրաստ ենք մինչեւ իսկ մեր կեանքը զոհելու եւ մեր արիւնը տալու: Այդ է՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի ստեղծումը: Ներկայ Հայաստանը մեր պատմական հայրենիքին հազիւ մէկ տասներորդն է: Մնացեալ հողերը կը մնան թշնամիներուն կողմէ գրաւուած: Պիտի ստեղծենք հայրենիք մը, որ իր դռները լայն բանայ բոլոր հայերուն առջեւ անխտիր: Ուրեմն հասկցա՞ր մեր հայրենասիրութեան աստիճանը:

Տակաւին այս խօսակցութիւնները երկար պիտի տեւէին, եթէ չլսուէր շոգեկառքին սուլիչը: Մարի սթափեցաւ, մօտեցած էր բաժանումի պահը: Կ'ուզէր «մնաք բարով» ըսելով մեկնել, սակայն ոտքերը գամուած էին գետնին: Մինչ այդ երկու թեւեր կամարուեցան աղջկան մէջքէն եւ սիրոյ կարօտ շրթներ զիրար փնտռեցին... Այսպէս, առանց խօսակցութեան, քանի մը անգամ, որոնք աղջիկէն մնալիք վերջին յիշատակները պիտի ըլլային:

Այնուհետեւ երկու սրտերն էին, որոնք արագ զարնելով կը խօսակցէին իրարու հետ: Անդին, զոյգ մը թռչուններ կեցած քովի ելեկտրական ճողին, նախանձող աչքերով կը դիտէին երկու սիրահարներուն սրտածմլիկ բաժանումը, իսկ հեռուն, ճերմակ ամպի մը ետեւէն արեւը անտարբեր կը դիտէր եւ կը տարածէր իր քաղցր ջերմութիւնը:

Հնչեց շոգեկառքին երկրորդ զանգը: Բաժանում...

Մարի շնչասպառ հասաւ ծնողքին մօտ, որոնք մտահոգութեամբ զինք կը փնտռէին: Տեղաւորուեցաւ վակոնին մէջ: Մօտեցաւ պատուհանին ու սկսաւ դիտել դուրսը: Մկրտիչ միայնակ, հեռուէն կը դիտէր իր սիրոյն վերջին արարը:

Եւ ահա շոգեկառքին անիւնները սկսան դառնալ: Ճերմակ թաշկինակներու ալիք մը բարձրացաւ օդին մէջ: Շոգեկառքին անիւնները արագացան, աներեւոյթ դառնալով հորիզոնին վրայէն, հետը տանելով Մկրտիչին սիրտը...:

\*\*

Գնացքը մեկնելէն ետք, Մկրտիչ, արցունքները զսպելով, քայլամուր, հալածուած անտեսանելի յուզումի ալիքներէ, հասաւ տուն եւ յոգնաբեկ՝ ինքզինքը նետեց մահճակալին վրայ: Առտուան խօսակցութիւնները, բաժանման սիրակէզ համբոյրները եւ Մարիին սրբտաճմլիկ արցունքները կ'այրէին ողջ էութիւնը: Ան գոցեց աչքերը եւ ահա ժապաւէնի նման անցեալի դրուագներ սկսան տողանցել իր մտքի պատառին վրայէն:

Մկրտիչ հազիւ 18 տարեկան էր, երբ ծանօթացաւ Մարիին: Ազատ ֆրանսական բանակին կը ծառայէր, հազիւ մէկ տարուան շրջան մը բոլորած, տասնապետ ըլլալու դասընթացքը աւարտած ըլլալով



պրիկատէի կոչումը ստացած էր, միեւնոյն ատեն ինքնաշարժ վարելու դասընթացքի ալ հետեւելով՝ ստացած էր նաեւ ինքնաշարժ վարելու վկայականը:

Մկրտիչ, որպէս ուշիմ գինուոր, արժանացած էր սպաներուն ուշադրութեան եւ գնահատանքին, որոնք թնթանօթածիք բանակի բոլոր գիտելիքները սորվելու դասընթացքներուն հետեւելու առիթը ընծայած էին իրեն:

Մարիին ծանօթացաւ իր մէկ ընկերոջ միջոցաւ, որ իր մօրը հետ կը բնակէր Նոր Գիւղի չորրորդ թաղամասին մէջ գտնուող Մարիենց պատկանող բակով տունին մէկ սենեակին մէջ: Մկրտիչին եւ իր ընկերոջ յարաբերութիւնները շատ սերտ էին: Ան ամենայն ազատութեամբ մուտք կը գործէր ընկերոջ տունը, նկատի ունենալով, որ ընկերը տան մէջ կը զբաղէր դերձակութեամբ եւ միշտ տունն էր:

Մկրտիչ գինուորական տեսակաւոր ինքնաշարժներով, քիչ մըն ալ ցուցամոլութեամբ կը մտնէր թաղը եւ թաղեցիներուն նախանձելի աչքերուն առջեւ ժամերով կը հանգչէր Մարիենց դուրսի դուռին առջեւ:

Օր մը, երբ Մարի կը գտնուէր Մկրտիչին ընկերոջ տունը, Մկրտիչ գինուորական տարագով ներս մտաւ: Զինուորական ինքնաշարժը դուրսի դուռին առջեւն էր. Մկրտիչին մուտքովը Մարի յանկարծակիի եկաւ եւ միայն «բարի եկաք» մը կրցաւ փսփսալ Մկրտիչին: Լուռութեան մէջ, Մկրտիչին եւ Մարիին նայուածքները բաւական ատեն զիրար փնտռելէ ետք կանգ առին, քննեցին, խօսեցան, գրկեցին զիրար եւ աւամայ բաժնուեցան:

Հոգեկան կապը հաստատուած էր: Սիրոյ կրակը վառուած էր երկու սրտերուն մէջ:

Մինչ այդ, Մկրտիչ անծանօթ աղջիկը ճանչնալու պէտքը զգաց եւ դիմելով ընկերոջը հարցուց.

— Գէորդ, օրիորդը չեմ ճանչնար, կ'ուզե՞ս ներկայացնել:

— Օ՛, ներողութիւն,— պատասխանեց Գէորդ,— Օրիորդ Մարի Պալեան, մեր տանտէրին աղջիկը,— եւ դառնալով Մարիին ըսաւ,— իմ ամենասիրելի ընկերս՝ Մկրտիչ Սահակեան, որ ներկայիս կը ծառայէ Ֆրանսական բանակին:

Երկու ձեռքեր, կարծր եւ փափուկ, զիրար գրկեցին եւ դողդողագին սեղմումէ մը ետք աւամայ բաժնուեցան, նոյն ատեն իրենց ուրախութիւնը յայտնեցին այս բարեբաստիկ ծանօթութեան համար: Մկրտիչին այցելութիւնները բազմացան Գէորդենց տունը, որոնք պատճառ դարձան, որ աղջկան ծնողքը նկատեն ստեղծուած յարաբերութիւններու մասնաւոր նպատակ մը հետապնդելը: Աղջիկը մօրը խոստովանեցաւ, որ կը համակրէր Մկրտիչին:

Մայրը, որ միշտ մտահոգուած էր աղջկան արժանի ամուսին մը ունենալու համար, վայրկեան մը անճրկեցաւ, սակայն, նկատի ունենալով իր աղջկան մօտեցումը Մկրտիչին, հաշտուեցաւ եղբուլութեան

Հետ: Եւ երբ Մկրտիչ կրկին այցելութեան եկած էր Գէորգենց, Մարին մայրը նամակ մը գրել տալու պատճառաբանութեամբ Մկրտիչը հրաւիրեց իրենց տունը: Նամակը գրեց եւ այդ առիթով ծանօթացաւ Մարինին ընտանիքին բոլոր անդամներուն: Մկրտիչ ժամէ մը աւելի հոն մնալով, հաճելի ժամանակ անցուց եւ ուշացած ըլլալը յայտնելով՝ պատրաստուեցաւ մեկնելու, նկատի ունենալով, որ կէսօրուան կէս ժամ մնացած էր: Բայց Մարի եւ մայրը խնդրեցին, որ անպայման իրենց հետ ճաշէ: Մկրտիչ սկիզբը պատճառաբանեց, որ շատ կարեւոր գործ ունի եւ պէտք է երթայ, սակայն վերջիվերջոյ տեղի տուաւ, հրաւէրը իր սրտին ալ շատ մօտ ըլլալով:

Անոնք ճաշեցին ուրախ եւ հաճելի մթնոլորտի մը մէջ: Մկրտիչ եւ Մարի միշտ գաղտնի եւ գմայլելի նայուածքները կը փոխանցէին իրարու, փափաքելով, որ ճաշի արարողութիւնը երկար տեւէր: Այնթապցիական չիֆեօֆթան եւ սալաթան ախորժակով կերաւ եւ քաղաքավարական շնորհակալութիւններ յայտնելէ ետք՝ ստիպուեցաւ մեկնիլ: Երբ գօրանոց հասաւ՝ ժամը երկուքը անցած էր:

Մկրտիչ առանց բացակայութեան սկսած էր յաճախել իր ընկերոջ՝ Գէորգենց տունը, չհամարձակելով ուղղակի Մարիենց տունը մտնել: Բայց Մարի Մկրտիչին գալը զգալով, իրենց դրան առջեւ կը կենար եւ Մկրտիչին դուրս ելած ատեն իրենց տունը կը հրաւիրէր:

Օր մը, երբ կրկին Մկրտիչ Գէորգենց տունէն դուրս կ'ելլէր, Մարին զինք իրենց տունը քաշեց: Մայրը տունն էր, սակայն հինգ վայրկեան ետք, շաղած խմորը փուռը տանելու պատճառաբանութեամբ, տունէն հեռացաւ՝ Մկրտիչը եւ Մարին մինակ ձգելով: Երկու սիրահարներ հիացումով կը նայէին իրարու, խօսելու տրամադրութիւն չունենալով: Վերջապէս բան մը ըսելու համար՝ Մարի ըսաւ.

— Մկրտիչ, կրնամ զինուորական գլխարկդ՝ քէփիդ գլուխս դնել, նայիս՝ ինձի պիտի վայելէ՞:

— Անշուշտ կը վայելէ,— գլխարկը Մարինն տալէ ետք ըսաւ Մկրտիչ:— Գեղեցիկ մը ինչ որ հագնի կամ կրէ մարմնին վրայ՝ անպայման կը վայելէ: Դուս պարզութեանդ մէջ իսկ գեղեցիկ ես: Ես քեզ սիրեցի պարզութեանդ մէջ: Կը յիշե՞ս քեզ տեսած առաջին օրը, պարզ հագուստ մը կը կրէիր:

— Կը սիրե՞ս զիս, Մկրտիչ,— հարցուց Մարի:

— Այո՛..., իսկ դո՞ւն:

— Պատասխանս աւելորդ է:

— Վստահի՞մ, որ ուրիշը չես սիրեր:

— Երբե՛ք, դուն ես իմ առաջին սէրս:

— Սիրելի՛ս, մեկնիմ այլեւս, արդէն ուշացայ, մայրդ կրնայ ուշանալ:

— Ե՞րբ մեզի ինքնաշարժովդ պիտի պտըտցնես:

— Այս իրիկունս...

- Ուրեմն պատրաստուի՞նք:
- Այո՛...:
- Ժամը քանի՞ի՞ն:
- Ութի՞ն:
- Յը՛...:
- Յը՛...:

Իրիկունը, Մկրտիչ գինուորական ինքնաշարժով մը եկաւ: Մարի տեղաւորուեցաւ Մկրտիչին քով: Մայրը չէր ուզած գալ: Ֆրանսական գինուորական մեքենան թաղէն դուրս գալով միացաւ կուպրուդիին: Մարին, որ զմայլելի ձայն ունէր, սկսաւ ապրումով երգել: Երկու սրտերուն մէջ խռովք մը կար, պաղ դող մը, անհասկնալի սարսուռ, որ գերեզարած էր գիրենք: Մկրտիչին աջ ձեռքը եւ Մարիին ձախը միշտ գրկած էին գիրար... Իսկ Մկրտիչ ձախ ձեռքով հագիւ կրցած էր զսպել ինքնաշարժին արագութիւնը: Միայն երբեմն աջ ձեռքը չուզելով կը բաժնէր Մարիին ձախէն՝ փոխելու համար ինքնաշարժին արագութիւնը:

— Վարպետ քչող ես, Մկրտի՛չ,— ըսաւ Մարի:

— Վրա՞ս կը խնդաս, չե՞ս տեսներ, որ ինքնաշարժը ինչպէ՛ս դէպի ձախ եւ աջ կ'ողուի գիւնովի մը քալուածքին պէս:

Երկար ատեն, սիրահարները իրարմով արբեցած, չէին տեսներ ինքնաշարժին արագութիւնը ցոյց տուող գործիքը: Արագութեան աննախընթաց թիւի մը վրայ կը սուրար ինքնաշարժը, երբ յանկարծ ինքնաշարժը ճամբայէն շեղեցաւ եւ վայրենի ցուլի մը պէս կատաղութեամբ ճամբու եզերքի ջուրը ճեղքելով՝ իջաւ փոսի մը մէջ եւ զօրաւոր ցնցումով դուրս ելաւ: Մկրտիչ շուարած եւ վախցած էր: Վայրկեան մը սառն լուծիւն տիրեց եւ Մկրտիչ, որ մինչ այդ փարուած կը մնար աղջկան, յուզուած խօսեցաւ.

— Ո՛հ, Մարի, ստոյգ մահէ ազատեցանք: Գիտե՞ս, թէ ինչ դառն հետեւանք պիտի ունենար այդպիսի վախճան մը մեզի եւ մեր ծնողներուն համար:

— Ճշմարիտ է, սիրելի Մկրտիչ, բայց փառք տանք Աստուծոյ, եւ այս չարադէտ վայրկեանին մեզ փրկող Աստուծոյ անունով երդնունք, որ մեր սէրը պիտի ըլլայ յաւիտենական եւ մենք պիտի պատկանինք իրարու, պայքարելով բոլոր տեսակի դժուարութիւններու դէմ:

Մկրտիչ յուզուած երեւոյթ մը ունէր եւ պատասխանելու ուժ չէր գտներ իր մէջ: Մօտեցուց սիրատոչոր շրթները Մարիին... եւ ա՛յդպէս մնացին երկար ատեն...: Օղբ ցուրտ էր, բայց անոնք չէին մտեր: Կրակ կար սրտերուն մէջ: Ժամանակը բաւական յառաջացած էր: Ինքնաշարժը բոլորովին անվնաս կը հսկէր անոնց սիրային արարողութիւններուն: Երկինքը պարզ էր, լուսնակ չկար, բայց երկինքէն անհամար աչքերը կը դիտէին երկու սիրայեղջ հակները:

— Երթա՛նք, Մարի,— ըսաւ Մկրտիչ,— ալլեւս այս վիճակով անկարելի է մեր պտոյտը շարունակել:

— Այո՛,— ըսաւ Մարի,— երթա՛նք, որովհետեւ մայրս կը սկսի մըտահոգուիլ, թէեւ լուր ունի մեր պտոյտէն:

Մարի երբ տուն հասաւ, երկար ատեն կը մնար պատահարին ազդեցութեան տակ:

\* \* \*

Տարիները թաւալեցան: Մկրտիչին եւ Մարիին սէրը աւելի խոր եւ անքակտելի դարձած էր: Միշտ իրարու հետ էին, երբեմն Մարիին ընտանիքն ալ իրենց կը միանար պտոյտներու ատեն:

Օր մը, կրկին պտոյտի գացած էին Յակոբին «ձէնկիէ» պարտէզը: Ամառնային կլիման մթնոլորտի ջերմութիւնը բաւական զովացուցած էր պարտէզի ծառերուն ընդմէջէն անցնող հովերու ազդեցութեան տակ: Ամէնուրեք ծառերը հագած էին իրենց կանաչ գգեստները: Ամէն կողմ կանաչ ծով էր կարծես: Բնութեան գեղեցկութեամբ արփեցած, ազատ-համարձակ կը պտըտէին, պարտիզպանէն վախ չունէին, որովհետեւ ան չէր համարձակեր արգելք հանդիսանալ գինուորականի մը ազատ շրջագայութեան պարտէզէն ներս:

— Որքա՛ն գեղեցիկ ես այսօր, Մարի,— ըսաւ Մկրտիչ:

— Սկսաւ նորէն: Մայրի՛կ, Մկրտիչը միշտ այսպէս վրաս կը խընդայ,— ըսաւ Մարի:

— Ձէ՛, աղջիկս,— ըսաւ Մարիին մայրը,— Մկրտիչ ճշմարտութիւնն է որ կը խօսի, այդ է իր ստացած իրաւ տպաւորութիւնը: Դուն այս վայրկեանիս կրնաս ուրիշին տգեղ երեւիլ, բայց Մկրտիչին համար չնաչխարհիկ էակ մը կրնաս ըլլալ: Անշուշտ ես կը խօսիմ փորձառութեանս:— Դառնալով Մկրտիչին՝ հարցուց.— Մկրտի՛չ, կ'ուզե՞ս որ Մարին իր մագերը գանգրացնէ, թէ՞ այսպէս մնայ:

— Ո՛չ, ո՛չ, ես կ'ուզեմ, որ Մարին մնայ պարզ, առանց շպարի: Դուն պէտք է գիտնաս, որ ես մարմնական գեղեցկութենէն աւելի հոգիի գեղեցկութիւնը կը փնտռեմ:

Անոնք այսպէս մտերմաբար կը զրուցէին, երբ պարտիզպանները եկան եւ լճացած ջուրը բացին, որպէսզի ջրեն արտերը: Աւազանը հետըզհետէ կը պարպուէր:

Մկրտիչ եւ Մարի թեւանցուկ կը յառաջանային պարտէզին ամայութենէն օգտուելով, յաճախակի համբոյրներով կը յայտնէին իրենց սէրը իրարու:

\* \* \*

Մկրտիչ արթնցաւ սրտատրոփ երազանքէ, ուրախ եւ տխուր յիշատակներով ողողուած: Մայրը զինք ճաշի կը հրաւիրէր: Գրեթէ ու-

ժասպառ՝ մօրը օգնութեամբ մօտեցաւ ճաշի սեղանին, սակայն չկրցաւ ճաշել, ախորժակ չունէր: Երեւակայութեամբ Մարիին հետ էր: Շոգեկառքը կը մօտենար Պէյրութ, ուսական «Փոպետա» նաւը պատրաստ էր ընդունելու սովետական նոր քաղաքացիները:

\* \* \*

Մարի Հայաստան հասնելէ եւ հաստատուելէ ետք, միջոցներ գրտաւ ձեւով մը կապուելու Մկրտիչին հետ, սակայն այդ կապը չչարունակուեցաւ: Մկրտիչին ուղարկած նամակները անպատասխան մնացին...

Անդադրում հետապնդումներէ ետք, Մկրտիչ իմացաւ, որ իր սիրելին՝ Մարին, չկարենալով դիմադրել իր ծնողքին եւ բարեկամներուն եւ յատկապէս յուսահատելով, որ Մկրտիչին Հայաստան գալը անկարելի դարձած է, յօժարած է ամուսնանալ նոյնպէս 1947-ին Պէյրութէն ներգաղթած Յակոբ Թաշճեան անունով երիտասարդի մը հետ:

\* \* \*

Մկրտիչ, Մարիին ամուսնութենէն վեց տարի վերջ, Մարիին միանալու յոյսէն յուսահատած, ամուսնացաւ Հալէպի մէջ եւ բախտաւորուեցաւ երկու գաւակներով՝ մանչ մը եւ աղջիկ մը:

Տարիները անցան, սովետական կարգերը քանդուեցան, 21 Սեպտեմբեր 1991-ին Հայաստանի մէջ կատարուած քուէարկութիւններով Հայաստան յայտարարեց իր անկախութիւնը որպէս Հայաստանի Հանրապետութիւն, ի մեծ ուրախութիւն ամբողջ հայութեան:

Հակառակ Հայաստանի մէջ ստեղծուած դժուարին պայմաններուն, արտասահմանէն հազարաւոր հայեր այցելեցին մայր հայրենիք, գոհացում տալու համար իրենց հայրենաբաղձութեան եւ ազգականներու տեսութեան կարօտին:

Մկրտիչ երբեք չէր մոռցած իր առաջին սէրը, հակառակ իրենց բաժանումէն 50 տարիներ անցած ըլլալուն, 1997-ին մեկնեցաւ Հայաստան, եւ իր արմատներուն փնտռութեամբ՝ այցելեց գրեթէ բոլորին, որոնք կ'ապրէին գիւղերուն եւ քաղաքներուն մէջ:

Բախտի բերմամբ, շուկայի մը մէջ հանդիպեցաւ հալէպցի կնկայ մը, որ 1947-ին ներգաղթած էր Հայաստան: Կնկան հարցուց, թէ կը ճանչնա՞ր 1947-ին Հալէպէն ներգաղթած Մարի Պալեան անունով աղջիկ մը, որ 1948-ին ամուսնացած է Հայաստանի մէջ:

Հայաստանցի կինը յայտնեց Մարիին ճանչցած ըլլալը՝ աւելցրնելով, որ Մարիենք իրենց շրջանը կը բնակին եւ պատրաստ է զինք անոր բնակարանը առաջնորդելու:

Մկրտիչ շատ ուրախ եղաւ այս հանդիպման համար եւ կանխա-յայտ շնորհակալութիւն յայտնելով՝ հետեւեցաւ Տիկին Հերմինէին,

այդպէս էր տիկնոջ անունը, որոնք ճամբան հետաքրքրական խօսակցութիւններ ունեցան իրարու հետ, յատկապէս Հալէպի հայութեան կեանքին շուրջ:

Երբ նոր Մալաթիա թաղը հասան, Տիկին Հերմինէ հեռուէն ցոյց տուաւ Մարիին տունը եւ ուզեց վերադառնալ, սակայն Մկրտիչ խնդրեց, որ ստուգէ եթէ Մարին տունն է: Ինք չէր համարձակեր ուղղակի դուռը գարնել եւ ներս մտնել:

Մարիին տունը ըլլալը ստուգելէ ետք, հիւրերը ընդունուեցան Տէր եւ Տիկին Յակոբ եւ Մարի Թաշճեաններու կողմէ, առանց ճանչնալու դրացի Հերմինին հետ եկող անձը:

Մկրտիչ արդէն իսկ ճանչցած էր 68 տարիքը բոլորած, սակայն իր առուզութիւնն ու գեղեցկութիւնը պահած իր սիրեցեալ Մարին, առանց զգացական շարժում մը ընելու: Միեւնոյն ատեն Մարին ալ ճանչցած էր իր սիրելի Մկրտիչը, իր ճանչցած ըլլալը յայտնելով դէմքի գունափոխութեամբ եւ աչքերու ճառագայթումով:

Մկրտիչ ինքզինք ծանօթացուց Թաշճեան ընտանիքին, յայտնելով իր յարաբերութիւնները Պալեան ընտանիքին հետ, Մարիին եղբայրներուն հետ ունցեած իր ընկերական յարաբերութիւններուն շրնորհիւ: Եւ Տիկին Հերմինէին հետ իր ունեցած հանդիպումը պատճառ դարձաւ այս անգամ Հայաստանի մէջ հանդիպելու իր մտերիմ ընտանիքի մէկ անդամին, վերլիչելու եւ վերականգնելու 50 տարիով կտրուած բարեկամութիւնը, մասամբ մեղմացնելով իր սիրտը կրծող կորսւնցուցած սիրոյ տագնապները:

Մկրտիչ այդ օր ստացած ուրախութեան տպաւորութիւններով եւ յոգնածութիւնը պատճառաբանելով բաժնուեցաւ Թաշճեան ընտանիքէն՝ խոստանալով, որ ուրիշ օր մը կրկին հանդիպի իրենց:

Մարիին ամուսինը՝ Յակոբ, որպէս հիւրասէր հայ, հրաւիրեց Մկրտիչը անպայման իրենց ճաշի հիւրը ըլլալու շաբաթավերջին, քանի իրենց զաւակներն ալ կրնան ներկայ ըլլալ եւ ընկերակցիլ ճաշկերոյթին:

Մկրտիչ սիրով ընդունեց հրաւէրը եւ որոշուած օրը եւ ժամուն արդէն Մարիենց դուրսի դրան առջեւ էր: Երբ ներս մտաւ, խումբ մը մանուկներ ուրախութեամբ դիմաւորեցին Մկրտիչ հօբարը:

Արդարեւ, Յակոբ եւ Մարի ունեցած էին երեք մանչ եւ մէկ աղջիկ, որոնք ամուսնանալով՝ ունեցած էին բազմաթիւ զաւակներ:

Ճաշի ընթացքին եւ ճաշէն ետք, Մկրտիչ պատմեց իր 50-ամեայ կեանքին դրուագները, ապա պահանջեց, որ Յակոբ եւ Մարի պատմեն իրենց անցուցած կեանքին մասին:

Մարին սկսաւ պատմել իր ընտանեկան կեանքէն Պաթումի նաւահանգիստէն մինչեւ իր ամուսնանալը: 1948-ին ամուսնացած էր Յակոբ Թաշճեանին հետ: Իր ամուսինը ուսանած եւ վարպետ մեքանիք ըլլալով, իր Հայաստան իջեւանելէն ամիս մը ետք արդէն իսկ գործ

գտած էր եւ կ'աշխատէր եւ սիրուած էր ղեկավարներէն: Ամուսնութենէն ետք, ամսականի յաւելում ալ ունեցած էր, սակայն դժբախտաբար այդ յաւելումը պաշտօնակիցներուն նախանձը շարժած էր:

Յակոբ այդ յաջողութենէն ետք, հագլել ամիս մը անցած, Հայաստանի գաղտնի ոստիկանութեան կողմէ կը ձերբակալուի ոսկրի եւ դրամական առեւտուրով զբաղած ըլլալու ամբաստանութեամբ:

Ոստիկանութիւնը Յակոբ Թաշճեանին, նշանաւոր խառատ-մեքանիքին, որպէս դրամական առեւտուրով զբաղով՝ դատարան կը յանձնէ: Յակոբ, դատախազին կողմէ իրեն հանդէպ եղած ամբաստանութեան որպէս ինքնապաշտպանութիւն՝ հետեւեալ պաշտպանողականը կ'արտասանէ դատարանին մէջ.

«Քաղաքացի դատաւոր, քաղաքացի դատախազ, «վալութչիկ» կամ «վալութային սպեկուլացիա»-ն, ահա յանցագործութեան նշաւակ այս երեք բառերը, որոնք մօտիկ անցեալում կարգ մը ընտանիքների անդամներին կանգնեցրին ողբերգութեան անդունդի եզրին:

«Ո՞վ է եղել վալութչիկ կամ ովքեր են զբաղուել վալութային սպեկուլացիայով:

«Ո՛չ, քաղաքացի դատաւոր, Թաշճեան Յակոբը երբեք էլ չի զբաղուել վալութային սպեկուլացիայով, ոչ ոք չի կարող ասել, թէ Թաշճեան Յակոբը ոեւէ մէկից մի բան է գնել եւ ապա վերավաճառելով ուրիշին՝ գերշահոյթ է կործել:

«Ահա նրանք, ահա այն մի տուժին անձինք, որոնք սիստեմաթիւֆաբար զբաղուել են վալութային սպեկուլացիայով եւ դարձել են այդ կեղտոտ գործարքների մոլեռանդ հեղինակները:

«Ահա նրանք, ահա այն անյագուրդ շահամոլները, որոնք հրապուրուած ոսկու շքեղափայլ տեսքից, պարապել են հեշտ կերպով հարստանալու մարմաջից եւ գիտակցաբար կատարել են այդ յանցագործութիւնները, ո՛չ քաղաքացի դատաւոր, մի որեւէ քաղեկոյրիայի պատկանող սպեկուլանդ չի եղել: Այն ժամանակ երբ փրոֆեսիոնալ վալութչիկներ վարակուած շահամոլ նեարդախտից, ոգեւորուած հեշտ եկամտաբեր զբաղմունքից հարստութիւն էին կուտակում, Թաշճեան Յակոբը այդ կեղտոտ գործարքի առաջին անհրաժեշտութիւնը համարուող իր սեփական ոսկեղրամները վատնում էր իր աջ ու ձախին, նոյնիսկ մտքովն էլ չէր անցկացնում, որ այդպիսի սպեկուլացիաների միջոցաւ դրանց քանակը աւելցնել կամ կրկնապատկել:

«Ա՛յո, քաղաքացի դատաւոր, ինչպէս դերասանները, գրողները, նկարիչները, երգիչները, եւայլն, օժտուած են իրենց արուեստի առանձնայատկութիւններից, նոյնպէս ալ փրոֆեսիոնալ վալութչիկները օժտուած են սպեկուլադիվ առանձնայատկութիւններից, եթէ Թաշճեան Յակոբն էլ ունենար այդպիսին, ինչպէս իր դէմքին չի սագում ճաղատութիւնը, այնպէս էլ չի սագում ինձ՝ անշահամոլիս, սպե-

կուլանտի կոչումը: Ինձ հաճելի չէ երբեք տեսնել իմ արդար կրճքին կպցրած վալութչիկ մակագրութեան պիտակը: Բայց եւ այնպէս ինչպիսի՛ անհեթեթ մակդերով էլ ինձ կոչեն, չեմ դադարիր ես ինքս լինելուց:

«Հապա իմ ամենավերջին խօսքս, քաղաքացի դատաւոր, թոյլ տուէ՛ք կրկնել իր ժամանակի ատեն լատին բանաստեղծի այն խօսքերը, որտեղ ասուած է. *Fiat Justitia Mundus*. Արդարութիւնը թող կատարուի, թէկուզ աշխարհը կործանուի»:

Արդարութիւնը չկատարուեցաւ եւ Յակոբ ու Մարի Թաշճեանները դատապարտուեցան Սիպերիա աքսորի:

Յակոբ եւ Մարի պատմեցին իրենց աքսորը դէպի Սիպերիա, 13 Յունիս 1949-ին՝ շոգեկառքով:

«Մեզ խաբեցին՝ ըսելով, որ 20 քիլոմետր պիտի երթանք, սակայն 20 օր ճամբորդեցինք մինչեւ Սիպերիոյ Սարսքին քաղաքը: Անկից՝ կառքերու մէջ նստեցուցին ծերերը եւ երեխաները, իսկ երիտասարդները քալելով՝ 24 քիլոմետր հեռու Ալամպայսքի շրջան, եւ կացին եւ սղոց տուին անտառին ծառերը կտրելու: Երկու տարի մնացինք այդ շրջանը: Մեզի հետ եկողներուն 40 տոկոսը այդ ծանր գործին եւ ցուրտին պատճառով մահացաւ:

«Հայաստանէն եւ Ղարաբաղէն 50 հազար հայեր կային այդ շրջանին մէջ: Ամէն ամսուան վերջը ռուս չեկիստ քոմանտան մը կու գար եւ կը ստուգէր ապրողներուն թիւը: Չեկիստը՝ քոմանտան Մարկերով, այդ ամիս եկած էր: Աքսորուած 95 տարեկան հայ ծերուկ մը, որուն երիտասարդ տղան զոհուած է Քերչի Պարանացի կոլիւններուն, մօրուքը բռնած քոմանտանին մօտեցաւ եւ ըսաւ. «Ամօթ Սթալինին, ամօթ ռուս ժողովուրդին, ամօթ ռուս բանակին, այս սպիտակ մօրուքէն վախցան եւ 8 տարեկան թոռնիկիս հետ աքսորեցին Սիպերիա»:

«Չեկիստ քոմանտանը, ձեռքը կզակին դրած, հինգ ռուպլէ յետոյ, շատ խեղճ եւ ցաւալի ձայնով ըսաւ. «Պապա ջան, ինչո՞վ է մեղաւոր Սթալինը, ինչո՞վ է մեղաւոր ռուս ժողովուրդը, ինչո՞վ է մեղաւոր ռուս բանակը, որոնք ոչինչ չեն իմանում, թէ Հայաստանում ի՛նչ է կատարուում: Եթէ ես իրաւունք ունենայի, հիմա քեզ կ'ողարկէի Հայաստան: Ո՛չ Սթալինը գիտէ քու 95 տարեկան ըլլալը, ո՛չ ռուս ժողովուրդը, ո՛չ ալ ռուս բանակը: Մեղաւորը ձեր պետութիւնն է: Անմեղ մարդկանց բռնի աքսորած է հոս, որպէսզի աշխատին չարաչար եւ ցուրտէն մեռնին»:

«1956-ին Մալենքովը ազատեց մեզ: Եկանք Ուզպաքստան, Ուզպաքստանի մէջ գործ գտնելով՝ աշխատեցայ եւ մէկ տարուան ընթացքին 500 ռուբլի խնայելէ ետք եկանք Հայաստան:

«Իմ մասնագիտութեանս յատուկ գործ կը գտնէի, սակայն անձնագիրս երբ ուզէին, հոն գտնուող գաղտնի նշանի մը հետեւանքով գիւս գործի չէին առներ: Վերջապէս խղճով եւ մաքուր հայ մը, որ մե-



քենական գործարանի մը տնօրէնն էր, համարձակութիւնը եւ քաջութիւնը ունեցաւ զիս գործի առնելու: Մարին ալ դերձակութեան գործ մը գտաւ եւ ապրեցանք:

«Չորս զաւակներ ունեցանք, երեք մանչ եւ մէկ աղջիկ, որոնք ամուսնացան եւ զաւակներու տէր դարձան:

«Հիմա, փառք Աստուծոյ, մենք կենսաթոշակ կը ստանանք եւ մեր զաւակներն ալ մեզի կ'օգնեն: Տունը մեր սեփականութիւնն է, վարձք չունինք եւ ուրախ կ'ապրինք անկախացած Հայաստանի մէջ, իրականացած տեսելով մեր երազը՝ ապրիլ ազատ եւ անկախ Հայաստանի մէջ, ոգեւորութեամբ դիտելով հայկական դրօշը, որ կը ծածանի Հայաստանի եւ արտասահմանի պաշտօնական հաստատութիւններու վրայ:

«Մենք հպարտ ենք, որ բախտը ունեցանք տեսնելու Անկախ Հայաստանի Հանրապետութիւնը իր դրօշով, զինանշանով, օրհներգով, բանակով, դեսպանատուներով եւ պետական հաստատութիւններով, նախագահով, վարչապետով եւ նախարարներով: Մենք վստահ ենք, որ Հայաստանին պիտի միանան Արցախի եւ Արեւմտեան Հայաստանի հողերը, ստեղծելով Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստան:

«Մենք ուրախ ենք, որ քեզ ընդունեցինք մեր յարկին տակ: Մեծապէս ուրախ պիտի ըլլանք, եթէ տիկնոջս Մարիին ընտանիքին եւ մեր ընտանիքին հետ մեր բարեկամութիւնը շարունակուի, այս անգամ հայրենիքի հողին վրայ»:

Մկրտիչ Հալէպ վերադարձաւ նորոգուած սիրով, այս անգամ դէպի Թաշճեան ընտանիքի անդամները:



Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաֆէ Հոթոյեաններ երգչուհի, երաժշտագետ եւ յօրինող Անահիտ Կուսուղեանի հետ՝ 26 Մայիս 2006-ին

## ՃԱՐՊԻԿ ՀՆԱԿԱՐԿԱՏԸ

Կը պատմուի, որ ժամանակին Պարսկաստանի արքաները կը սիրէին գիշերով ծպտուած դուրս ելլել, միշտ ժողովուրդի բազմութեան մէջ մտնել՝ անոնց ցաւերը քննելու, իմանալու ու կեանքը անձամբ տեսնելու:

Պարսկաստանի արքաներէն Շահ-Աբասը, շաբաթը քանի մը գիշեր, երբեմն վաճառականի հագուստով, երբեմն՝ ուխտաւորի եւ կամ օտարականի, ծառայի մը ընկերակցութեամբ, երբեմն՝ առանձին, կը պտըտէր փողոց եւ պազար, կը լսէր ամէն խօսակցութիւն, գանգատ ու վիշտեր, եւ յաճախ ժողովուրդը կը լսէր, որ այս կամ այն դատաւորը, խանն ու իշխանաւորը յանկարծ կը պատժուէին, առանց իմանալու թէ ո՞վ զանոնք մատնեց կամ ո՞վ բողոքեց:

Երեկոյ մը, այդպէս, մեծ արքան մինակը դուրս ելաւ: Հագած էր բարեպաշտ ու թափառական տերվիշի հագուստ, մագերը զգզգած, ճաշամանը կախած, տապարը ձեռքին եւ մտաւ Սպահանի պազարը:

Խանութները արդէն գոցուած էին: Գիշերային պահակները կրծկուած էին ձէթի աղօտ ճրագներու կողքին եւ ծանր կը ննջէին: Շահ-Աբաս երկար պտըտեցաւ, զննեց ամէն բան եւ երբ խանութի մը առջեւ էն կ'անցնէր, նկատեց որ ներսը լոյս կար:

Հետաքրքրուեցաւ, կանգ առաւ, աչքը դրան ճեղքին դրաւ եւ ահա ինչ տեսաւ. հնակարկատի խանութ մըն էր ան: Խեղճուկ, ողորմելի անկիւն մը: Հագիւր քանի մը հին կօշիկ կար, քանի մը ժանգոտած գործիք, կտրուած, հնամաչ կարպետ, որուն վրայ նստած էր աղքատ հնակարկատը, առջեւը ունենալով սեղան մը, որուն վրայ գտնուող կերակուրն ու խմիչքը կրկնապատիկ գին ունէին, քան ամբողջ խանութին եղած-չեղածը:

Շահը զարմացաւ:

— Այս ի՞նչ գաղտնիք է,— մտածեց ան,— ուրկէ՞ է այս հնակարկատին այս շքեղ ճաշը:

Ու վճռեց իմանալ: Տապարով բաղխեց խանութին դուռը եւ որպէս տերվիշ՝ սկսաւ երգել.

— Ես՝ Հագրաթը Ալի, տերվիշ եմ ես, ո՞վ հաւատացեալ, բա՛ց դուռդ եւ տո՛ւր տերվիշին բաժինը:

— Հեռացի՛ր, տերվի՛շ,— գոչեց ներսէն հնակարկատը,— ոչինչ ունիմ քեզի տալու:

— Կը ստես, միւսլի՛ման, առջեւդ կերակուր կայ, տուր տերվիշին բաժինը:

Ան այնքա՛ն երգեց, այնքա՛ն պահանջեց, որ հնակարկատը ըստիպուեաժ, քրթմնջելով, իր մտքով գրողին ուղարկելով բոլոր տերվիչները, դուռը բացաւ:

— Ի՞նչ կ'ուզես, մա՛րդ,— գոչեց հնակարկատը,— ինչո՞ւ չես թողուր, որ հանգիստ հաց ուտեմ:

— Անուշ ըլլայ,— ըսաւ Շահը տերվիչի շեշտով,— միայն թէ ե՛ս ալ անօթի եմ, թող մասնակցիմ այդ շքեղ ճաշին:

— Լա՛ւ,— ըսաւ հնակարկատը,— ներս մտի՛ր եւ հաց կե՛ր. միայն կ'երդնում Մարգարէի երկար մօրուքին եւ սուրբ Ալիի զօրեղ բազուկին վրայ, որ եթէ որեւէ հարցով ձանձրացնես զիս, իսկոյն դուրս կը դնեմ քեզ:

Շահը լռութեամբ ներս մտաւ, նստաւ սեղանին առջեւը, բայց ձեռք չտուաւ որեւէ բանի:

— Կե՛ր, տերվիչ աղա:

— Ո՛չ, երբեք,— ըսաւ Շահը,— չեմ կրնար ուտել ես այն սեղանէն, որուն ուրկէ եկած ըլլալը չեմ գիտեր: Դուն խեղճ հնակարկատ ես, ունեցածդ ոչինչ է, ուրկէ՞ ձեռք բերեր ես այսպիսի լաւ ճաշ:

— Դո՛ւրս, դո՛ւրս, իսկոյն դուրս ելի՛ր, երդմնագանց տերվիչ, խօսք չտուի՛ր, որ հարցում չպիտի տաս:

— Ե՛ս,— ժպտաց Շահը,— ե՞րբ քեզի խօսք տուի: Վկայ՝ Մարգարէն՝ դուրս այլեւ չեմ ելլեր, մինչեւ որ հարցիս չպատասխանես:

Հնակարկատը տեսաւ, որ ուրիշ ճար չկայ, քիչ մը մրթմրթաց, քիչ մը հայհոյեց, բայց յետոյ ըսաւ.

— Լա՛ւ, ի՞նչ կայ այստեղ ծածուկ կամ հրաշք: Ամբողջ օրը կը գործեմ եւ շա՛տ լաւ կը գործեմ, իսկ երեկոյեան, ես մինակ մարդ եմ, կը սիրեմ լաւ ճաշ. ինչ որ շահիմ, բոլորը ճաշի կու տամ, ամէն երեկոյ նոյն ճաշը ունիմ:

Հնակարկատին պարզ խօսքերը Շահը շատ գուարճացուցին:

— Դուն խնայող չես, միւսլիման,— ըսաւ,— իսկ եթէ հիւանդանաս կամ գործ չունենա՞ս:

— Թէ հիւանդանամ, ուտելու պէտք չկայ, Աստուած ողորմած է: Թէ գործ չունենամ, ուրիշ գործ կ'ընեմ. ուտել շատ կը սիրեմ, լա՛ւ որկոր ունիմ:

Շահը ծիծաղեցաւ:

— Իսկ եթէ...,— ըսաւ ան,— վաղը Շահը յանկարծ արգելիէ հնակարկատութեան արհեստը, ի՞նչ կ'ընես այն ժամանակ:

— Բերանդ բարո՛վ բաց, է՛, աղա տերվիչ. Շահը ինչո՞ւ պիտի արգելի խեղճ մարդոց գործելը եւ լաւ ուտելը:

— Ո՞վ գիտէ, Շահ է, արգելեց եւ վերջ: Ի՞նչ կրնաս ընել:

Հնակարկատը գլուխը քերեց, յետոյ ծիծաղեցաւ եւ ըսաւ.

— Շատ գուարճալի մարդ ես դուն, տերվիչ. է՛հ, եթէ Շահը հնակարկատութիւնը արգելիէ, Աստուած ողորմած է, քաղցած չենք մնար:

Միւս օրը, յիրաւի, Շահ-Աբաս հրաման արձակեց, որ հնակարկատուութեան գործը լիովին արգիլուի եւ ոչ ոք համարձակի այդ գործով զբաղիլ:

Շահ էր, արգիլեց գնաց, ո՞վ կրնար ըսել ինչո՞ւ, ի՞նչ պատճառով:

Ապա, երբ մթնած էր, Շահը կրկին տերվիշի հագուստ հագած, տապարը ձեռքն առաւ եւ գնաց պազար:

Կրկին բաւական պտրտեցաւ եւ երբ մօտեցաւ հնակարկատի խանութին ու ներս նայեցաւ դուռի ճեղքէն, սաստիկ զարմացաւ: Հնակարկատը կրկին ուրախ-զուարթ, երէկուան նման առջեւը փառաւոր ճաշ դրած, ուտելով, խմելով կը գեղգեղէր, կ'երգէր:

— Այս ի՞նչ բան է,— մտածեց Շահը,— պէտք է իմանալ, որ այժմ ուրկէ՞ գտած է ճաշը,— եւ դուռը բաղխեց:

— Ես՝ Ալի Հազրաթ... ո՞վ հաւատացեալ, բա՛ց դուռդ եւ տուր տերվիշին բաժինը:

— Գնա՛, կորի՛ր, չարամի՛տ տերվիշ,— գոչեց ներսէն հնակարկատը:— Դուն չարագուշակ մարդ ես, հեռացի՛ր քանի դեռ չեմ բարկացեր, ոչինչ ունիմ քեզի տալու:

— Կը ստես, միւսլիման, առջեւդ ճոխ կերակուրներ ունիս, տո՛ւր տերվիշին բաժինը:

Հնակարկատը դուռը չբացաւ: Շահը յամառեցաւ, երեսը պնդացուց, խնդրեց, համոզեց եւ վերջապէս մտաւ: Բայց կրկին հաց չկերաւ եւ նոյն հարցումը ուղղեց.

— Խեղճ հնակարկատ ես, Շահն ալ այդ արհեստը այսօր արգիլեց, ըսէ՛ ինձի, միւսլիման, ուրկէ՞ քեզի այս փառաւոր ճաշը, չըլլայ որ գողութեամբ սկսար զբաղուիլ:

— Լուէ՛, տերվիշ աղա,— գոչեց հնակարկատը,— ինձի Ահմէտ կ'ըսեն, լաւ հօր որդի եմ եւ կեանքիս ընթացքին երբեք չեմ ստած, ոչ ալ գողութիւն ըրած:

— Բացատրէ՛ ուրեմն, իմ բարի Ահմէտ:

— Դուն աներես ես, ո՞վ աղա տերվիշ,— բարկացաւ հնակարկատը,— չեմ գիտեր ինչպէս վարուիլ հետդ, բայց ես կուուիլ չեմ սիրեր, ոչ ալ բարկանալ, ուրեմն իմացիր: Շահը պատրաստուած է ամբարնոց երթալ, անոր համար Շահին ծառաները այսօր փողոց ու պազար իջած՝ որքան ջորի կը տեսնէին, մտրակելով պազար կը տանէին, որ Շահին բեռները կրեն: Եթէ ջորեպանը քիչ մը կաշառք տար, անոր ջորիներուն չէին դպչեր: Ես ալ այդ տեսայ, իսկոյն Ֆերրաշիի (պետական պաշտօնեայ) նշան մը գտայ, եւ փակցուցի գլխարկիս: Հայրիկէս սուր մը մնացած էր, կապեցի կողքիս, փողոցները իջայ, ջորիներ գտայ, շատ աղմկեցի, շատ սպառնացի, կաշառքներ առի, եւ այնքան՝ որքան պէտք էր իմ ճաշիս համար:

— Ճարպի՛կ ես, Ահմէտ, բայց չե՞ս մտածեր, որ Շահը կրնայ իմա-  
նալ եւ այդ ալ արգիլել, ի՞նչ կ'ընես այն ժամանակ այդ մեծ որկորիդ  
հետ:

— Կրկին բերանդ չար բացիր, տերվիշ. եթէ արգիլէ, Աստուած ո-  
ղորմած է, քաղցած չե՛նք մնար:

Միւս օրը Շահը դարձեալ հրամայեց, որ արգիլուի ջորիներ հա-  
ւաքելը: Օրը երբ մթնած էր, դարձեալ տերվիշի հագուստը հագած՝ ե-  
կաւ եւ կեցաւ Ահմէտի խանութին առջեւ:

Ճեղքէն ներս նայեցաւ եւ այս անգամ կատարեալ ապշեցաւ՝ տես-  
նելով, որ հնակարկատը նորէն ուրախ-գուռարթ, երէկուան պէս փա-  
ռաւոր ճաշ մը առած, նստած, սկսած էր ուտել:

— Աստուած վկայ, որ այս հնակարկատը կախարդ եղած է ան-  
պայման, չեմ գիտեր այս ճաշը ուրկէ՞ գտած է:

Եւ դուռը բաղխեց:

— Ես՝ Հասրաթ Ալի, ո՛վ միւսլիման, բաց դուռը եւ այս անգամ ալ  
տուր տերվիշին բաժինը:

Հնակարկատը ճանչցաւ տերվիշին ձայնը, իսկոյն վեր թռաւ, հին  
կօշիկ մը գտաւ, շտապեց դէպի դուռը եւ գոչեց.

— Կորի՛ր, հեռացի՛ր, դժոխքի որդի, հերիք չէ՞ր, որ բերանէդ չար  
խօսքեր ելան եւ բոլորը կատարուեցան: Գնա՛, այլեւս ո՛չ մէկ փշուր  
հաց ունիմ քեզի տալու:

— Կը ստե՛ս, Ահմէտ,— ըսաւ Շահը,— սեղանին վրայ լաւ կերա-  
կուրներ կան, տուր տերվիշին բաժինը:

Ու այնքա՛ն բաղխեց, այնքա՛ն երգեց, այնքա՛ն աղաչեց, որ հնա-  
կարկատը, իսկապէս ո՛չ անգութ եւ ո՛չ ալ չար մարդ, դուռը բացաւ,  
տերվիշը ներս մտցուց:

Շահը դարձեալ հացին ձեռք չտուաւ:

— Այս ի՞նչ է, Ահմէտ,— ըսաւ Շահը,— դուն խեղճ հնակարկատ  
մըն ես, Շահն ալ այդ արհեստը արգիլեց, խորամանկութեան դիմեցիր,  
Ֆերրաշ եղար, Շահը այդ ալ արգիլեց, հիմա ըսէ ինձի, ուրկէ՞ է այս  
ճաշը, չըլլա՞յ որ մուրացկանութեամբ կը զբաղուիս:

— Լսէ՛, տերվիշ աղա,— գայրացաւ Ահմէտ,— ես մեծ հօրս որդին  
եմ, թէկուզ աղքատ մեռնիմ, բայց ձեռք չեմ բանար: Իմ այս ճաշը լսէ՛-  
թէ ինչպէ՛ս գտած եմ: Հայրս հին եւ ժանգոտած սուր մը ունէր բայց  
լաւ տեսակի, տարի պազար, երկաթը ծախեցի, կոթն ալ որպէս յիշա-  
տակ պահեցի, ես անոր դրամով այս ճաշը առի:

— Բայց չէ՞ որ սուրդ ահա այստեղ է:

— Այո՛, բայց երկաթին տեղը փայտ դնել տուի: Ահա՛ գաղտնիքը:  
Շահը կուշտուկուռ ծիծաղեցաւ: Արդէն ան Ահմէտը սկսած էր  
սիրել եւ հաւնիլ:

Եւ բան մը չըսաւ, կերաւ, խմեց, երգեց ու օրհնեց եւ բարեկամա-  
բար Ահմէտէն բաժնուեցաւ:

Երրորդ օրը, Շահ-Աբաս իր գահին վրայ նստելով՝ հրամայեց երթալ եւ փնտռել քաղաքին մէջ որքան Ֆերրաշներ կան, կամ նոյնիսկ մէկ օր Ֆերրաշութիւն ընողներ կան, ժողովել եւ իր առջեւ բերել իրենց հագուստներով եւ սուրերով:

Ու գացին նախարարները: Երեկոյեան դէմ երկար շարք մը Ֆերրաշներ եկան եւ կեցան Շահին առջեւ:

Շահ-Աբաս նայեցաւ: Ահմէտն ալ անոնց մէջ էր իր փայտէ սուրով, որ պատեհանին մէջն էր անշուշտ:

Եւ Շահը մտածեց նորէն զուարճանալ: Ու երբ Ղուրանը երկար կարդաց, յանկարծ գլուխը բարձրացուց, խստութեամբ նայեցաւ բոլորին, նայեցաւ Ահմէտին, դէմքը խիստ կնճռոտեց ու ըսաւ.

— Դո՛ւն, անունդ ի՞նչ է:

— Ահմէտ, քեզի ծառայ:

— Լաւ ուրեմն, Ահմէտ, կողքիդ ընկերը հանգիստ չէ կանգնած, հանէ՛ սուրդ եւ կտրէ՛ անոր գլուխը:

Սարսափը տիրեց ամէնքին: Ահմէտ շփոթեցաւ, սաստիկ գունատեցաւ:

— Ձերդ մեծութիւն,— գոչեց ան ուժգին եւ քիչ մը ծաղրական,— ընկերս ահա շատ հանգիստ է կեցած, մի՛ հրամայեր ինծի անմեղ արիւն թափելու:

— Ինչո՞ւ,— որոտաց Շահը,— դուն կը համարձակիս հրամանս չկատարե՞լ: Ե՛տ, հանէ սուրդ եւ անոր գլուխը կտրէ:

Շահը մտքով կը զուարճանար՝ տեսնելով Ահմէտին շփոթութիւնը: Բայց հաշուի առած չէր Ահմէտին ճարպիկութիւնը:

Հնակարկատը երկրպագեց Շահին, փորձեց աղաչել, խնդրել, համոզել եւ ատիկա աւելի կը զուարճացնէր ինքնակալը:

— Կտրէ՛,— գոռաց Շահը,— կտրէ՛, թէ չէ քու գլուխդ կը կտրեն:

Ահմէտ տեսաւ, որ ուրիշ ճար չկայ: Ձիսայտառակուելու համար՝ շուտով հնարք մը գտաւ: Աչքերը երկինք բարձրացուց, աղօթեց ու գոչեց բարձրաձայն.

— Ո՛վ դուք արդար Աստուած եւ մեծ Մարգարէ, կը տեսնէք, որ այստեղ կը ստիպեն ինծի անիրաւ բան ընելու: Եթէ ընկերս անմեղ է, թող սուրս պատեհանին մէջ իսկոյն փայտ դառնայ:

Եւ մեծ ուժով սուրը դուրս քաշեց: Ամէնքը ապշեցան՝ սուրը փայտ դարձած էր:

Արքան այնքան ծիծաղեցաւ, շատ զուարճացաւ, հրամայեց իսկոյն Ահմէտին դատաւորի պաշտօն տալ եւ ըսաւ անոր.

— Ահմէտ, այժմ դատաւոր ես, յիշէ՛ փայտէ սուրդ, եւ ամէն անգամ երբ կասկածի մէջ ըլլաս յանցաւորի մը համար, աղօթէ Աստուծոյ այնպէս, ինչպէս այժմ աղօթեցիր:

Կ'ըսուի, թէ Ահմէտ մինչեւ իր խոր ծերութիւնը միայն փայտէ

*սուրը իր վրայ կրէր եւ երբեք չպատահեցաւ, որ փայտը երկաթի փոխէր, կամ նոյնիսկ ջարդէր:*

*Իսկ երբ մեռաւ, փայտէ սուրը հետը գերեզման դրին, եւ պարսիկ յայտնի բանաստեղծ մը հետեւեալ տողերը արձանագրեց անոր շիրիմին վրայ.—*

«Հանգիստ քեզի, արդա՛ր, բարի՛ դատաւոր,  
Թէեւ մեծ որկոր ունէիր, խել՛ք՝ հնակարկատի,  
Բայց կշիռքդ հաւասար էր եւ սուրդ՝ փայտի...»:



Հայ տաղանդաշատ գրագէտ Յակոբ Կարապետեան եւ Գրիգոր Հոթոյեան

## ԽՈՇՈՐ ԿՂՊԱՆՔԸ

Թեհրան բնակող պարսիկ նկարիչ Ալի Խտըրը մեռնելէ առաջ ծըրագրեց լաւ բան մը նկարել եւ յետոյ մեռնիլ:

Այս մտքով ալ ան սկսաւ ճամբորդութիւններ կատարել եւ նկարի նիւթ որոնել: Ան կ'ուզէր գտնել նոր, ցանկալի եւ տարօրինակ նիւթ մը, որ զարմանցնէ նկարչական ասպարէզով զբաղող նկարիչները եւ արուեստասէրները:

Մտաւ խոր ձորեր, պրպտեց իւրաքանչիւր խուլ անկիւն, մագլցեցաւ լեռներն ի վեր, աչքի տակ առաւ շատ տեսարաններ, բայց նկատի առնելով, որ շատ տեսարաններ տեսած էր եւ նկարիչի իր աչքերէն ոչինչ խուսափած էր, այդ պատճառով չէր կրնար գտնել առարկայ մը, տեսարան մը, որ ըլլար նորութիւն մը եւ գրգռէր իր ցանկութիւնը:

Եւ մեր արուեստագէտ նկարիչը տխուր էր: Անտառի ոգին, լեռներու հուրիները եւ ծովի ձուկ-կանայք նոյնիսկ անկարող եղան նկարիչին նիւթ տալ, նիւթ թելադրել: Ի գուր ան անվհատութեամբ ոտքի տակ առած էր բազմաթիւ երկիրներ եւ զինք հմայող ոչինչ գտած էր:

Եւ ան կը տխրէր եւ կը յուսահատէր:

Այսպէս սրտաբեկ՝ ան կը թափառէր Շիրազի դաշտերուն եւ լեռներուն մէջ, երբ հասաւ գերեզմանատուն մը: Մտաւ այնտեղ, ուր բացառիկ շիրիմ մը նկատեց եւ կանգնեցաւ հոն:

Մեծ շէնք էր այդ շիրիմը՝ բարձր պատերով: Բայց ինչ որ զարմացուց նկարիչը, այն խոշոր կղպանքն էր, որ դրուած էր շիրիմին փակուած դրան վրայ:

Դրան ճակատին ալ արաբական տառերով գրուած էր.— «Մտիր այստեղ եւ կը գտնես ինչ որ կը փնտռես անդադար»:

Մեծ նկարիչը զայրացած բացազանչեց.

— Ո՞ր տխմարն է արդեօք գրած այս տողերը: Միթէ գերեզմանի մէջ է միայն, որ մարդ կարող է գտնել իր որոնածը:

Յետոյ ծիծաղելով ըսաւ.

— Այս անպայման մեռնողի մը խօսքն է: Չկարենալով ապրիլ, կամեցած էր մահը ցանկալի դարձնել,— ու մէջըք դարձուց հեռանալու:

Բայց ստիպուած՝ միտքէն չէր կրնար հեռացնել վերոյիշեալ գրութիւնը:

Քանի մը վայրկեան մտածելէ ետք, քանի մը քայլ մօտեցաւ դէպի խոշոր կղպանքը, նայեցաւ կղպանքին եւ ըսաւ.

— Չարմանալի է, ինչո՞ւ գոցած են շիրիմին դուռը, եւ յետոյ, ի՞նչ մտքով դրան վրայ դրած են այսպիսի մեծ կղպանք, որ միայն բանտերու ու գանձարաններու դռներուն վրայ կը դրուի:



Եւ ան նորէն վեր նայեցաւ ու կարդաց.— «Մտիր այստեղ եւ կը գտնես ինչ որ կը փնտռես անդադար»:

— Մտնենք,— մտածեց ան,— գուցէ իրապէս նոր բան կայ թաքնուած այդ խոշոր կղզւանքին ետեւը: Թշուառութի՞՞ն կամ գիտութի՞՞ն արդեօք, թէ՞՞ գանձ կամ իշխանութիւն...:

Շարժեց կղզւանքը, շատ ծանր էր: Մեծ քար մը վերցուց եւ սկսաւ զարնել կղզւանքին, փորձելով կոտրել զայն: Հետաքրքրութիւնը հետըզհետէ նկարիչին ուժ կու տար:

Երկար չարհարուեցաւ եւ երեկոյեան վերջապէս կղզւանքը բացուեցաւ, առիթ տալով ազատօրէն մտնելու ներս:

Յոգնած եւ չարհարուած նկարիչը քարը ձեռքէն ձգեց, քայլ մը առաւ, ներս մտաւ ու զարմանքի մեծ աղաղակ մը արձակեց: Բացուածքէն կ'երեւէին Շիրազի տուները եւ հիանալի պարտէզներն ու այգիները:

Շիրիմը միայն երեք պատ ունէր: Ետեւի պատը չէր շինուած: Իսկ շիրիմին ներքին տեսքը եւ փոշին կ'ապացուցանէին, որ այնտեղ առաջին ոտք կոխողը նկարիչն էր՝ շիրիմին կղզւանքը դրուելէ ետք:

Ինչպէ՞ս... Ինչո՞ւ այս այլանդակ շինութիւնը...:

Շինել շէնք մը միայն երեք պատով: Ետեւի պատին տեղը բաց ձգել եւ ապա դրան վրայ մեծ կղզւանք մը դնել: Ինչո՞ւ:

— Լաւ ծաղրուեցայ,— ճակատը կնճռոտեց արուեստագէտ նկարիչը,— եւ սակայն դրան ճակատին գրուածը չկատարուեցաւ, որովհետեւ փնտռածս ահա չեմ գտներ:

Հազիւ թէ այսպէս մտածած էր, երբ աչքին զարկաւ պատին վրայ քանդակուած հետեւեալ երեք տողերը, ուր գրուած էր.—

«Ամէն ինչ նոր է աշխարհիս վրայ, սակայն ոչինչ նոր է:

«Ձեռք բերելու դժուարութիւնը՝ առարկան ցանկալի՝ կը դարձնէ:

«Անգամ մը ձեռք բերուած՝ ան կը դառնայ սովորական...»:

Նկարիչը ընկղմեցաւ մտածումի մէջ. այդ տողերը շատ խիստ ազդեցին իր վրայ:

Գտած էր իր փնտռածը, բայց չէր գտած, որովհետեւ եթէ գտնէր՝ փնտռածը այդ չէր ըլլար:

Ուրեմն կը փնտռէր այնպիսի բան մը, որ պիտի չգտնէր:

Սկսած էր հասկնալ եղելութիւնը:

Դուրս եկաւ շիրիմէն, գնաց տուն, ձեռքն առաւ վրձինը եւ նըստաւ կտաւին առջեւը:

Նկարեց շիրիմը երեք պատով, ետեւի բացուածքով: Նկարեց դուռը եւ անոր վրայ տեղաւորեց խոշոր երկաթեայ կղզւանքը: Յետոյ, փոխանակ գրելու շիրիմի վրայի խօսքերը, գրեց հետեւեալը.—

«Ցանկալի առարկան կը նմանի այս շիրիմին՝ երեք պատով, ետեւի բացուածքով եւ դրան վրայ դրուած խոշոր կղզւանքով»:

## ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՕԴԱՆԱԻՆ ՄԷՁ

Ազգասիրութեան, հայրենասիրութեան, եկեղեցասիրութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարաբանութեան զգացումները Սասնոյ պաշտելի լեռներէն՝ Ծովասարէն, Գրգուռէն, Մարութասարէն եւ Հայ Ֆետայիններու գործունէութեան մասին հօրս ազատատենչ արիւնին եւ իր ականատեսի վկայութիւններուն միջոցաւ փոխանցուած ըլլալով իմ արիւնիս ու մտածումներուս, ծնած օրէս՝ ժառանգած օրէս ժառանգելով այդ բոլորը, մանաւանդ ապագային հօրս կողմէ պատմուած Սասնոյ ապստամբութիւններուն եւ ֆետայիններու կռիւներուն մասին, հօրս ազգականներէն առիծասիրտ ֆետայիններ Սպաղանաց Գալէի, Մակարի, իմբապետ Յակոբի եւ այլ ֆետայիններու սխրագործութիւնները, ինչպէս նաեւ Սասնոյ քաջ եւ հայրենասէր ժողովուրդի մղած պատուի, ազատութեան եւ ինքնապաշտպանութեան կռիւները թրքական բանակներու արշաւանքներուն եւ քրտական կրօնամոլ եւ թուրք կառավարութեան հովանաւորութիւնը վայելող հայատեաց աշխրթներուն դէմ, իմ մէջս ստեղծած են փափաքը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան միջոցաւ ծառայելու հայ ժողովուրդին:

Այնուհետեւ, Հալէպի ազգային Սահակեան վարժարան յաճախած օրերէս մինչեւ շրջանաւարտ ըլլալու 1941 թուականը, այդ ոգին մէջս աւելի շօշափելի կերպարանք առաւ ազգային ազատատենչ ոգիով տոգորուած, Հայոց Մեծ Եղեռնէն հրաշքով փրկուած հայորդիներու զաւակներուն հայեցի դաստիարակութեան նուիրուած ուսուցիչներ եւ տնօրէններ Շաւարշ Մակարեանի, Կարապետ Իւլիւպէյեանի, Եղուարդ Տասնապետեանի, Նափոլէոն (Սիսակ) Հազրոյեանի, Օսնիկ Սարգիսեանի, Սարգիս Չուլճեանի, Պարգեւ Մսրեանի, Սարգիս եւ Ազատ Եափուճեաններու շունչին տակ ազգային ոգիով դաստիարակուելով, որոշեցի հետեւիլ հօրս հայրենասիրական եւ ազգասիրական գաղափարներուն, ծառայելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին եւ ազգային զանազան միութիւններուն:

Յրանսական բանակին շուրջ երեք տարի ծառայելէ ետք, 1946-ին հրաժարեցայ հօրս թախանձանքներուն հետեւանքով՝ Հայաստան ներգաղթելու համար: Հայաստան ներգաղթելու պատիւին չարժանացանք՝ գաղափարական պատճառներով:

Բանակէն վերադարձիս, որպէս զբաշար նախ աշխատեցայ Հայ Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանին մէջ, որուն ղեկա-

վարն էր մեր հայրենակիցը՝ Սիմոն Սիմոնեան, ապա՝ նախ «Արեւելք» օրաթերթի տպարանը, ապա՝ Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» տրպարանը, մինչև 1949:

1950-1951 տարեշրջանին Սուրբոյ Ռազգա քաղաքի Նուպարեան վարժարանի տնօրէնութիւնը վարելէ ետք, վերադարձայ «Արեւելք» օրաթերթի գրաշարութեան, 1951-1961 վարելով գրաշարութեան եւ այլ պաշտօններ, միեւնոյն ատեն աշխատակցելով թերթին՝ բանաստեղծութիւններով, յօդուածներով եւ թղթակցութիւններով:

Մեր ղեկավարներուն կողմէ տրուած դասախօսութիւններով, թերթերով եւ գիրքերով պատմուած յօդուածներով եւ գրութիւններով տեղեկացայ հայ ժողովուրդին դէմ թուրք պետութիւններու կատարած Ցեղասպանութեան, Սարգարապատի, Ղարաքիլիսայի եւ Բաշապարանի ճակատամարտներով 28 Մայիս 1918-ի Հայաստանի Հանրապետութեան ստեղծումին, ռուսական համայնավար ուժերուն կողմէ Հայաստանի անկախութեան տապալումին եւ 2 Դեկտեմբեր 1920 թուականին Հայաստանի կառավարութեան հայ համայնավարներու փոխանցումին, 18 Փետրուար 1921-ին համայնավար վարչաձեւին դէմ կատարուած հայ ժողովրդային ապստամբութեան եւ ի վերջոյ համայնավար ուժերու կողմէ կրկին Հայաստանի գրաւումին եւ Հայաստանի պետական եւ գինուորական անձնաւորութիւններու համայնավարներու կողմէ աքսորի, հայ եկեղեցականներու եւ հայ եկեղեցիներու դէմ եղած հալածանքներուն ու հայ ժողովուրդի տառապանքներուն՝ համայնավարութեան կողմէ:

Հայ ժողովուրդի ազգային զգացումներուն՝ ազատ եւ անկախ ապրելու, միացեալ Հայաստանի հողին վրայ ապրելու եւ գոյատեւելու արդար իրաւունքը ոտնակոխող թուրք պետութեան եւ համայնավար իշխանութիւններու դէմ մէջս պայքարելու զգացում մը ստեղծած ըլլալով, Հալէպի «Արեւելք» օրաթերթին մէջ համայնավար, անկրօն եւ ազգային զգացումներ խափանող ու պատժող վարչաձեւին դէմ յաճախ քննադատական յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ կը գրէի:

Ոճրագործ եւ բռնակալ Ստալինի մահէն ետք, հետզհետէ բարեկարգութիւններ կատարուեցան Խորհրդային Միութեան մէջ եւ թոյլ տրուեցաւ անձնական ներգաղթի եւ զբօսաշրջութեան:

1970-ական թուականէն սկսեալ, հայկական գաղութներէ բազմաթիւ հայրենակիցներ սկսան ճամբորդել դէպի Հայաստան: Գացողներէն շատեր իրենց ազգականները տեսնելու առաջադրութեամբ գացին-եկան Հայաստան իրենց անձնական ծախսով: Ուրիշներ իրենց ազգականները եւ հայրենիքը վայելելու նպատակը իրագործեցին Հայաստանի մէջ արժէք ունեցող եւ փնտռուող առարկաներ տանելով եւ ծախելով, ու այդ ձեւով իրենց երթեւեկի ծախսերը ապահովելէ ետք, որոշ գումար մըն ալ իրենց շահ կը մնար: Իսկ կարգ մը «հայրենա-

սէրներ» նման ապրանքներ տանելով եւ ծախելով՝ իրենց երթեւեկի ծախսերը կը հոգային եւ Հայաստանէն արգիլուած ապրանքներ, մետաղներ եւ գոհարեղէններ բերելով՝ մեծ գումարներու տէր կ'ըլլային: Անոնցմէ մաքսատուէն անցնիլ փորձող անձեր երբեմն կը ձերբակալուէին եւ կը բանտարկուէին Հայաստանի մէջ, կորսնցնելով իրենցմէ բռնագրաւուած արգիլուած եւ արժէքաւոր ապրանքները:

Շատեր մեր ազգականներէն, բարեկամներէն եւ ծանօթներէն առեւտրական այս շահաւոր, բայց վտանգաւոր ճամբայէն երթեւեկելով, Հայաստան կեցութեան եւ երթեւեկի ծախսերը ապահովելէ գատ, շօշափելի գումարներու տիրացան:

Մանկութենէս Հայաստանը եւ հոն Սասունէն հրաշքով Հայաստան հասած իմ հարազատներս, հօրս հօրեղբայրներու զաւակները տեսնելու փափաքը միշտ ունեցած եմ, սակայն, ինչպէս կ'ըսեն, պատուաւոր, առանց վաճառականութեան: Երթեւեկի ծախսերը հոգալու նիւթական միջոցներու չգոյուլութեան պատճառաւ՝ հայրենիքը տեսնելու կարօտով կ'այրէի:

Միեւնոյն ատեն կը վախնայի, որ համայնաւարութեան եւ Հայաստանի իշխանութիւններուն դէմ գրած քննադատութիւններուս ծանօթ Հայաստանի չէկայի գործակալները, ապրանքները քննելու ատեն, զիս ձերբակալելու պատճառներ կրնան գտնել, Հայաստան ուխտագնացութիւնս ցաւագնացութեան վերածելով:

Վերջապէս, 70 տարի Հայաստանի վրայ իշխող Խորհրդային Միութիւնը տապալեցաւ եւ Հայաստան վերանկախացաւ 21 Սեպտեմբեր 1991-ին: Այդ թուականէն սկսեալ հազարաւոր հայ ընտանիքներ, համայնաւար լուծին տառապանքները վայելելէ ետք, առիթը գտան հեռանալու հայրենիքէն փոր մը հացի համար, հաստատուելով Ռուսիա, Ամերիկա, Գանատա եւ եւրոպական երկիրներ:

Իսկ ուրիշներ, հայրենապաշտ եւ ազգային ոգիով մեծցած եւ ապրած հայեր, «Դէպի Երկիր» Դաշնակցութեան կոչին ունկնդիր, ներգաղթեցին եւ հաստատուեցան Հայաստան, իրենց գիտութիւնը, արուեստը, արհեստը եւ նիւթական միջոցները նուիրելով հայրենիքի բարգաւաճումին:

Հայրենիքի ազատութիւնը եւ իմ նիւթական միջոցներս թոյլատրեցին, որ որոշեմ արմատներուս հետքերով երթալ Հայաստան եւ ճանչնալ մանկութենէս ի վեր երազած հայրենիքս, ուր հաստատուած ազգականներուս հետ թէ եւ կը նամակցէի, սակայն զիրար ճանչնալու եւ մեր հարազատի զգացումներով զիրար վայելելու առիթներ չէի ունեցած:

Որոշ պատրաստութենէ ետք, 5 Սեպտեմբեր 1997, երեկոյեան ժամը 6:40-ին, KLM 747 Boeing 300 օդանաւով ճամբայ ելանք եւ տեղական ժամով առաւօտեան ժամը 7:45-ին հասանք Ամսթերտամ, նկատի ունենալով, որ Թորոնթոյի եւ Ամսթերտամի ժամերու տարբերութիւ-

նը 6 ժամ է: Ամսթերտամի օդակայանին մէջ կը տիրէր ճամբորդական եռուզեռ: Արեւը ծագած էր:

Ինը ժամ Ամսթերտամի օդակայանին մէջ թափառելէ ետք, երեկոյեան ժամը 5:30-ին երեցաւ հայկական օդանաւը՝ Հայաստանի պետական դրօշի կարմիր, կապոյտ, նարնջագոյն գոյներով եւ ARMENIAN AIRLINES մակագրութիւնով:

Աչքերուս չէի հաւատար: Փառք կու տայի Աստուծոյ, որ մանկութենէս ի վեր հոգեկան հայրենիքի սիրով ապրելէ ետք, ազատ եւ անկախ հայրենիք մը ունենալու բախտը ունեցանք, որ առիթ տուաւ ինծի ուխտաւորութեամբ հայրենիք մեկնելու, միեւնոյն ատեն հօրս հարազատները եւ անոնց ընտանիքները տեսնելու, որոնք Սասնոյ Տալուրիկ գաւառի Սպաղանք գիւղէն 1915-ի Եղեռնէն հրաչքով եւ ինքնապաշտպանական կռիւներ մղելով թրքական զօրքերուն եւ քրտական աւազակներու դէմ, ռուսական եւ հայ կամաւորական բանակներու հետքերով հասած էին Արեւելեան Հայաստան եւ իրենց ապրելու տարածքը ստեղծած էին Ռուբէն Փաշայի հրամանով եւ սասունցի խմբապետ Մուշեղի հրամանատարութեամբ եւ ղեկավարութեամբ Արագածի փէշերուն, մաքրագործելով թաթար-ազերի հայատեաց բնակչութիւնը, որոնք տարիներ առաջ իրենց ոչխարներով եկած էին եւ տեղաւորուած հայկական այդ հողամասերուն վրայ:

Հայկական TU 154 B2 (Թոփոլեւ) օդանաւը մուտք գործեցի խաչակնքելով եւ Աստուծոյ փառք տալով, որ իմ առաջին ճամբորդութեանս Ամսթերտամէն Երեւան՝ բախտը կ' ունենամ ճամբորդելու հայկական օդանաւով:

Օդանաւը կիսով լեցուած էր մեծամասնութեամբ հայ ճամբորդներով, մաս մը ինծի պէս որպէս ուխտաւոր Հայաստան մեկնող, ուրիշներ՝ Հայաստանցիներ, որոնք արտասահման գաղթած ըլլալով, իրենց ծնողներուն եւ ազգականներուն տեսութեան համար եկած են Միացեալ Նահանգներու հայաբնակ գանազան քաղաքներէն: Կային նաեւ օտարազգի ճամբորդներ, որոնք գործով կամ զբօսաշրջութեամբ Հայաստան կ'երթային:

Հայկական այս օդանաւին մէջ բախտը ունեցայ աթոռակից ըլլալու գեղեցիկ օրիորդի մը, որուն հետ ծանօթանալու առիթ ստեղծուեցաւ ճամբորդութեան ընթացքին, երբ օդանաւի հայ հիւրընկալները մեզի հրամցուցին հայկական ճոխ ճաշեր եւ խմիչքներ:

Օրիորդը ըստ երեւոյթին գինի խմելու սովորութիւն չունենալով՝ փոքր շիշով գինին ինծի հրամցուց եւ այդ պատճառով, քաղաքավարական խօսակցութիւններէ ետք, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով փորձեցի հասկնալ իր ինքնութիւնը եւ Հայաստան այցելութեան շարժառիթը:

Օրիորդը ըսաւ, որ ինք ծնունդով հոլանտացի է եւ մաս կը կազմէ Բժիշկներ Առանց Սահմանի բժշկական միջազգային կազմակերպու-

թեան: Մասնագիրտութեամբ դայեակ է եւ զրկուած է աշխատելու Հաստատանի Տաւուշի շրջանի Բերքաբեր, Այգեհզովիտ, Դիտաւան, Մովսէս, Ակնաղբիւր գիւղերուն մէջ, կեդրոն ունենալով Բերդ գիւղաքաղաքը, նպատակ ունենալով օգտակար դառնալ Հայ մայրերուն՝ ապահով եւ առողջապահական միջոցներով զաւակներ ունենալու համար, որպէս մարդկային օգնութիւն Հայ մայրերուն իրենց կազմակերպութեան կողմէ, ապա տուաւ իր այցեքարտը, որուն վրայէն կարգացի մականունը եւ Հոլանտայի եւ Պելճիքայի հասցէները:

Օրիորդը կը կոչուէր Jisemarysol Ferket:

Ճամբու ընթացքին մեր բոլոր խօսակցութիւնները ընթացան գիրար ճանչնալու, ապա ան անդրադարձաւ Բժիշկներ Առանց Սահմանի կազմակերպութեան առաքելութիւններուն շուրջ՝ աշխարհի կարիքաւոր բազմաթիւ երկիրներու մէջ: Ան աշխատած էր Ափրիկէի Կինէ եւ այլ երկիրներու մէջ եւ այս անգամ կը զրկուէր Հայաստան:

Հայաստանի եւ մանաւանդ Տաւուշի շրջանի գիւղական շրջաններուն մէջ անգլերէն եւ Ֆրանսերէն թարգմանիչներ գտնելու դժուարութեան մասին խօսելով, առաջարկեց Հայ ժողովուրդի պատմութեան եւ հայերէն լեզուի շուրջ տեղեկութիւններ եւ ծանօթութիւններ փոխանցել իրեն:

Խանդավառուած ինծի եղած առաջարկէն, նախ ամփոփ գիծերով խօսեցայ Հայ ժողովուրդի ծագումէն մինչեւ ներկայ օրերը՝ ընդգծելով, որ Հայ ժողովուրդը առաջին ժողովուրդն է, որ 301 թուականին պետականօրէն ընդունած է քրիստոնէութիւնը եւ 404 թուականին Ս. Մեսրոպ Մաշտոցին կողմէ հնարուած են հայերէն գիրերը, որ կը բաղկանայ 38 տառերէ, որոնցմով կարելի է արտայայտել հայերէն լեզուի բոլոր հնչիւնները:

Հայերէնի դասը սկսանք հայերէն գիրերու ծանօթացումով, գրելով պարզ եւ գլխագիր տառեր, ապա ամէն օր գործածուող գոյականներ, ածականներ, բայեր եւայլն:

Սկսայ արտասանել եւ թարգմանել հայր, մայր, քոյր, եղբայր, մօրաքոյր, հօրաքոյր, հօրեղբայր, հաց, ջուր, ճաշ, նախաճաշ, հրամմէ, բարի լոյս, բարի կէսօր, բարի իրիկուն, բարի գիշեր, գիշեր բարի, եկո՛ւր, գնա՛, սիրելիս, անունդ ի՞նչ է եւայլն: Այս բոլորը՝ մինչեւ հասնինք Երեւանի Զուարթնոց օդակայանը: Ամսթերտամէն մինչեւ Երեւան, չորս ժամուան տեւողութեամբ հայերէնի ուսուցումը շարունակուեցաւ Հայաստանեան օդանաւին մէջ, ուր հասանք 6 Սեպտեմբեր 1997, գիշերուան ժամը 12:00-ին:

Մինչ այդ, Հոլանտացի հայերէնի աշակերտուհիս եւ ես, որուն հայերէնի եւ հայոց պատմութեան դաստիարակը դարձած էի Ամըսթերտամէն Երեւան 3600 քիլոմետր ճամբորդութեան ընթացքին, իրարու ծանօթանալով, բարեկամանալով, խոստացանք մեր բարեկամութիւնը պահել նամակագրութեամբ:

Հայաստան մուտքի վիզա օթթառուայի Հայաստանի դեսպանատունէն առած ըլլալով, շատ դիւրութեամբ, նոյնիսկ առանց պայուսակներու խուզարկութեան, դուրս ելայ մաքսատունէն: Մինչ այդ դուրսը՝ դիմաւորողներուն մէջ տեսայ երիտասարդ մը, որ բարձրացուցած էր հոլանտացի օրիորդին անունը կրող պաստառը:

Հաճելի ճամբորդութիւն մը ունեցայ հոլանտացի օրիորդին հետ, եւ նոյնիսկ չգագի հինցած օդանաւին ավտոներուն անհանգստութիւնը եւ օդանաւին անհաճոյ թրթռացումները:

28 օր մնացի Հայաստան, ուր վայելեցի ազգականներու հիւրընկալութիւնը՝ Երեւանի եւ սասունցիներէ բնակողոց Նոր Արտագերսի, Վերին Բարձրաբերդի, Ներքին Սասնաշէնի, Կաթնաղբիւրի, Աշնակի, Թալինի եւ այլ գիւղերու մէջ: Այցելեցի Հայաստանի բոլոր տեսարժան վայրերը՝ Էջմիածին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա.-ին, Մատենադարան, պատկերասրահ, Ծիծեռնակաբերդ, Սեւան եւ Արցախի Գանձասար վանք, Ստեփանակերտ, Շուշի եւ գատագրուած կարգ մը տարածքներ:

Հայաստանէն Թորոնթօ վերադարձիս, երկար ատեն ապրեցայ Հայաստանէն ստացած տպաւորութիւններու եւ զգացումներու յաճախանքով: Չէի մոռցած հոլանտացի աշակերտուհիս՝ Օրդ. Ferket-ը, սակայն չէի յուսար, որ օրին մէկը իրմէ նամակ մը կրնամ ստանալ՝ հակառակ իր խոստումին:

Բայց պատահեցաւ անյուսալին: 1997-ի վերջաւորութեան նամակ մը ստացայ Հայաստանէն: Պահարանին երեւոյթէն կարծեցի, որ իմ ազգականներէս զրկուած է պահարանը, աչքերու չէի հաւատար՝ կարգալով գրողին անունը:

Ահաւասիկ նամակին բովանդակութիւնը:

«Հայերէնի առաջին ուսուցիչս՝  
Սիրելի Պարոն Գրիգոր Հոթոյեան,

Հայերէն լեզուով կը գրեմ քեզի իմ քեզի խոստացած առաջին նամակս, շնորհաւորելով քեզ եւ ընտանիքդ մօտակայ զոյգ տօներուն՝ Նոր Տարիին եւ Սուրբ Ծննդեան առթիւ, քեզի մաղթելով առողջութիւն եւ արեւշատութիւն:

Օդանաւին մէջ ծանօթացտանք իրարու եւ քու միջոցաւ ծանօթացայ հայ ժողովուրդի անցեալի եւ ներկայի պատմութեան, ինչպէս նաեւ հայերէն լեզուի տառերուն եւ խօսակցական կարգ մը անիրաւի թեւոյթներու, որոնք տեսակիս մէջ արձանագրած էի օդանաւին մէջ քու դասաւանդութեանը ընթացքին:

Հայաստան, Տաւուշի մարզին մէջ իմ մասնագիտական աշխատանքներու առընթեր, հայերէն լեզուի դասագիրքեր նախեցի եւ ինքնագարգացումով հայերէն գրել-կարդալ սորվեցայ եւ ժողովուրդին հետ սկսայ հայերէն խօսիլ:

Հայերէն լեզուն եւ հայ ժողովուրդը սիրելիս պատճառ եղան, որ կապուիմ Բերդ գիւղաֆաղաֆի երկրորդական վարժարանի տնօրէնին, որ նաեւ իմ հայերէն լեզուի երկրորդ ուսուցիչս եղաւ: Այդ դասաւանդութիւնները պատճառ դարձան, որ գիրար սիրեմք եւ ամուսնանանք:

Ներկայիս ունիմ իմ հայկական տունս եւ հրաժարելով Բժիշկներ Առանց Սահմանի կազմակերպութենէն, կը շարունակեմ իմ մասնագիտութիւնը ի գործ դնել Տաւուշի շրջանի հայ մայրերուն:

Կեանքի այս փոփոխութիւնը կը պարտիմ իմ բախտիս եւ յատկապէս քեզի, որ բարի եղար հայկական օդանաւին մէջ ինծի հայերէն լեզուն սորվեցնել փորձել, որուն հետեւանքով ես Տաւուշի մէջ աւելի սիրեցի հայ լեզուն եւ հայ ժողովուրդը, եւ ամուսնանալով հայ ուսուցիչի մը հետ՝ հոգուով եւ սրտով հայացայ:

Կը յուսամ, որ յաջորդ Հայաստան գալուդ կ'այցելես մեզի, Բերդ գիւղաֆաղաֆի մեր տունը»:

Սիրով՝

Ճիսիմարիսուլ Ֆիրքէթ-Մանուկեան

*(Ծանօթ.— Վերոյիշեալ նամակի ուղղագրութիւնը եւ լեզուն իմ կողմէս փոխուած են մետրոպեան ուղղագրութեան եւ արեւմտահայերէնի — Գ. Հ.)*

*Նամակին պատասխանը անապարանքով գրեցի, շնորհաւորելով իր ամուսնութիւնը, ինչպէս նաեւ Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով երջանկութիւն եւ բարի օրեր:*



Երաժշտագէտ-խմբավար Էդիկ Յովսէփեանի (կեդրոնը)  
եւ գրագէտ Կարապետեանի հետ



## ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ԿԵԱՆՔԸ ՀԱՅՈՒՆ

Թիմուր Պըն Թարակէյ Պարլաս, տարբեր անուններով Թիմուր Լենկ, Լենկ Թիմուր, Ամիր Թիմուր, Թամէր Լան, Թամպուրլէն, 14-րդ դարաշրջանի աշխարհակալը, ծնած է 1336-ին, Թրանսաքսիանա, Քէշի մօտ, Իւզպեքիստանի Սամարղանտ քաղաքէն 50 մղոն դէպի հարաւ:

Լենկ Թիմուր կը սերէր մոնկոլ աշխարհակալ ձենկիզ Խանէն: Անոր հայրը՝ Թարակէյ, եղած է Պարլաս ցեղախումբի պետը: Ան կրօնքով իսլամ էր: Որպէս արկածախնդիր բռնակալ, ան հիմնադիրը եղած է Թիմուրիտ կայսրութեան (1370-1405):

Լենք Թիմուր իր հսկայ բանակով եւ սուրով հիմնեց իր կայսրութիւնը՝ գրաւելով Սուրիան, Իրաքը, Քուէյթը, Իրանը, Արեւելեան Թուրքիան եւ իր երկաթեայ տիրապետութեան տակ առնելով Ղազախըստանը, Աֆղանիստանը, Թուրքմենիստանը, Իւզպեքիստանը, Գրկիզիստանը, Փաքիստանը եւ Հնդկաստանը, հասնելով մինչեւ Չինաստանի Քաշքար քաղաքը եւ Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուայի դռները:

Ան որպէս հերոս ճանչցուած է Միջին Ասիոյ ժողովուրդներէն, եւ մինչեւ այսօր Արեւմտեան Ասիոյ ժողովուրդները իրենց գաւակներուն անունները կը կոչեն Թէյմուր Աշխարհակալ:

Լենք Թիմուր, իր աշխարհակալական պատերազմներու ընթացքին, իրեն հաւատարիմ մոնկոլ հազարաւոր ձիաւորներով գրաւած էր վերոյիշեալ երկիրները, եւ, որպէս անգուլթ եւ ջարդարար անձ, սարսափ տարածած էր գրաւեալ երկիրներու ժողովուրդներուն մէջ:

Սուրիոյ մէջ մինչեւ այսօր կը պատմուի, որ Լենկ Թիմուրի բանակները երբ կը գրաւեն Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսը, Լենկ Թիմուր հրաման կու տայ իր բանակներուն ազատօրէն կողոպտել քաղաքի հարստութիւնները եւ բռնաբարել կիները: Այդ իմաստով, Դամասկոսի բնակչութեան մէջ գտնուող անգուլթ եւ վայրենի անձերուն համար կ'ըսեն Թիմուր Լենկի ընկեցիկներ (պանատիկ Թիմուր Լենկ):

Այս վայրագ եւ անգուլթ աշխարհակալը, Իրանը գրաւելէ ետք, իր ահաւոր բանակով կը մտնէ Արեւելեան Հայաստանի սահմաններէն ներս, իր ճամբուն ընթացքին ջարդելով, սպաննելով իր ուժերուն դիմադրողները եւ կողոպտելով բնակչութիւնը, եւ կը հասնի Հայաստանի Իջեւանի շրջանին մէջ գտնուող Գօշավանքը: Լենկ Թիմուր կը

գրաւէ վանքը եւ վանքի շքեղութիւնը տեսնելով՝ նախանձով լեցուած կը հրամայէ անմիջապէս քանդել վանքը: Ծառաները գործի անցնելով՝ շուտով կը համոզուին, որ վանքը շատ ամուր շինուած է եւ անկարելի է քանդել, ուստի վանքին մէջ մեծ քանակութեամբ փայտ կը լեցնեն եւ կ'այրեն: Հրդեհէն վանքը չի վնասուիր, այլ՝ միայն պատերը կը սեւնան:

Գօշավանքի (Նոր Գետիկ) շրջափակին մէջ կը գտնուէին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցիները, որոնք կառուցուած են 12-13-րդ դարերուն՝ սքանչելի ճարտարապետութեամբ եւ վեհութեամբ:

Կը յիշատակուի, որ վանքին մէջ գոյութիւն ունեցած են վարժարան, համալսարան-ձեմարան, ուր պահուած եւ ստեղծուած են բազմաթիւ ձեռագրեր, ուր կրթուած եւ գործած են հայ մշակոյթի նշանաւոր գործիչներ՝ Վանական Վարդապետը, Կիրակոս Գանձակեցին եւ ուրիշներ: Վանքը ունեցած է բազմաթիւ կալուածներ, գիւղեր եւ վարելահողեր: Վանքային այս համալիրը հիմնադրուած է Մխիթար Գօշի ջանքերով՝ 1237-1241 թուականներուն:

Լենկ թիմուր, գրաւելով Գօշավանքը, վանքի կրօնաւորներէն եւ գիւղացիներէն կը պահանջէ պահուած ոսկիները, վանքի հարստութիւնը: Կատարուող տանջանքները եւ չարչարանքները որեւէ արդիւնք չեն տար, ոչ ոք կը խոստովանէր եւ կ'ըսէր վանքի հարստութիւններուն տեղը:

Լենկ թիմուրի խորհրդականներէն մէկը, որ կ'երեւի լաւ գիտէր հայ մարդոց ուժն ու թուրութիւնը, խորհուրդ կու տայ զօրավարին.

— Սիրելի՛ զօրավար, եթէ կ'ուզես յաջողութեան հասնիլ, այրէ՛ վանքին գիրքերը եւ պիտի տեսնես, թէ ինչպէ՛ս անոնց լեզուները պիտի բացուին:

Հաւաքեցին, իրարու վրայ դիզեցին վանքի ձեռագիր մատեանները եւ շուտով կրակի պիտի տային, երբ ժողովուրդը կը փակէ կրակի ճանապարհը ու կ'ըսէ.

— Մի՛ այրէք, կ'ըսենք հարստութեան տեղը:

Եւ ըսին ոսկիներու եւ հարստութեան պահուած տեղը:

Ապշած է ազահ զօրավարը:

Բերին, գիրքերու մօտ դիզեցին ոսկի, թանկարժէք քարեր եւ առարկաներ:

Լենկ թիմուր ձեռքը առաւ ձեռագիր գիրք մը, թերթեց. նկարները գեղեցիկ էին, սակայն ափսոս, մագաղաթի վրայէն ոսկին անհնար էր հանել:

— Կարգա՛, ի՞նչ է գրուած,— Լենկ թիմուր գիրքը երկարեց քովի գիւղացիին:

Մարդը զգուշութեամբ վերցուց մատեանը, ինչպէս քնացող երեխայ մը, թերթեց, թերթեց...

— Կարդալ չեմ գիտեր, գորավար,— ըսաւ գիւղացին մեղաւորութեամբ:

Լենկ թիմուր գիրքը խլեց անոր ձեռքէն, տուաւ մէկ ուրիշին, յետոյ երրորդին:

— Մենք կարդալ չենք գիտեր, գորավար, վանականներուն ըսէ՛:

— Մեր պատմութիւնն է, գորավար,— տեղէն ոտքի կանգնելով ըսաւ վանահայրը,— մեր պատմութիւնն է եւ մեր աղօթքը:

Լենք թիմուր նայեցաւ հաւաքուածներուն, նայեցաւ դիզուած գիրքերուն, յետոյ՝ ոսկիներուն, թանկարժէք քարերու կոյտերուն եւ կնճռոտեցաւ ճակատը:

Հասկցա՞ւ արդեօք Լենք թիմուրը, թէ ո՞րն էր իրական հարստութիւնը:

Փրկուած այդ գիրքերէն շատերը ներկայիս կը գտնուին Հայաստանի Մատենադարանին մէջ, իսկ ո՞ւր են Լենկ թիմուրի յափշտակած ոսկիները եւ թանկագին քարերը, հայ ժողովուրդէն յափշտակուած հարստութիւնները...:

Մեր նախահայրերը հայ գիրքերը նախընտրեցին ոսկիէն եւ թանկագին քարերէն: Սակայն, 1915-ի Մեծ եղեռնի շրջանին, թուրքերու կողմէ կազմակերպուած հայ ժողովուրդին հանդէպ կատարուած ցեղասպանութեան հետեւանքով, հազարամեայ մեր վանքերն ու եկեղեցիները կողոպտուեցան եւ մեր մշակութային եւ գրական հարստութիւնները յափշտակուեցան թուրքերու եւ քիւրտերու կողմէ:

Ամենայն Հայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեան հայ գիրքին հանդէպ հայ մարդուն վերաբերումը կը պատկերացնէ սա գողտրիկ բառերով.

Թէպէտեւ բախտն մեզ շատ հարուածեց,  
Երկար դարերով, ահեղ հարուածով,  
Թէպէտ էսպէս ցրուեց, տարածեց,  
Ձրգեց հողէ հող, փրոնց ծովէ ծով:

Վկայ է սակայն բովանդակ երկիր,  
Որ մենք կարեւոր ապրո՛ւմ ենք կրկին,  
Եւ ուր հասնում է հայ գիրքն ու գիր,  
Կենդանի է դեռ հայութեան ոգին:

Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. (յետագային Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս), Անթիլիասի մայրաքաղաքի շրջափակին մէջ 1985-ին կազմակերպուած ութերորդ հայ գիրքի ցուցահանդէսին առթիւ կը գրէ.

«Յեղասպանութենէն ետք, հայութեան վերապրումի շքեղ երեւոյթը շատ բան կը պարտի հայ գիրքին: Անապատի աւազին վրայ հայ

մօր կմախքացած ու դողդողացող մատներով գրուած Ա.Բ.Գ.-ի տեսիլքին խորհուրդէն լուսարձակուած իմաստը Հայ Գիրին՝ կ'ուզեմ որ դառնայ մեր համայնական մօր՝ մեր մայր եկեղեցիին եւ մայրենի լեզուին կաթը մեր կեանքի առողջ սնուցումին եւ աճումին համար՝ ի խնդիր մեր յաղթանակին: Երբ յորդառատ ժայթքով կը շատրուանուի մեր կեանքի աւազանին մէջ, կ'ուզեմ որ Հայ Գիրքը ստանայ նոր փայլ եւ տա՛յ նոր փայլ յատկապէս մեր սփիւռքեան տժգունող եւ լուսահատնող կեանքին: Եթէ աւագներուն մէջ իր կեանքին վերջին շունչը աւանդող Հայ մայրը իր յոյսին սլաքը ուղղեց Հայ Գիրին, կը հաւատամ, որ Ս. Մեսրոպը ծնող ազգին բնազդական իմաստութիւնն է, որ շարժում տուաւ իր անշարժացող մատներուն: Եւ այդ իմաստութիւնը պա՛րզ էր եւ բիւրե՛ղ՝ ցերեկուան լոյսին պէս եւ երկնքի կապոյտին նման ջինջ ու վճիտ: Առանց Հայ Գիրքին կը մեռնի հայը այսօր, ինչպէս կրնար մեռնիլ Ե. դարուն, եթէ Մեսրոպ իր «մաքուր արգանդ»-ին մէջ երկնած չըլլար Գիրը որպէս ազգային ստեղծարար մեր ուժին բանալի եւ տագնապակոծ ու տառապահար մեր դարաւոր կեանքին վկայ՝ ի սպաս մեր հայկեան ինքնութեան եւ անկապտելի անկախութեան»:

Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմէ հայերէն գիրերու ստեղծումն եւ հայերէն գիրերով գրուած գիրքերու հայ թարգմանիչներու եւ հայ հեղինակներու կողմէ հրատարակուելէ ետք, մինչեւ մեր օրերը հայ ժողովուրդը գոյատեւեց, ոսկիէ եւ թանկագին քարերէ աւելի գիտնալով արժէքը հայ գիրքին եւ հայ գրականութեան, իսկ ձենկիզ իմանի, լենկ թիմուրի նման աշխարհակալներ պատմութեան բեմէն անժառանգ կորսուեցան:

Պատմութեան բեմէն ջնջուեցան նաեւ բազմաթիւ հօր ազգեր, որոնք գիրքի, գրականութեան եւ մշակոյթի արժէքը չգիտցան:

Երկրի մը ուժը եւ կարողականութիւնը չի գնահատուիր իր բնակչութեան եւ բանակներու թիւով: Առանց գիրի եւ գրականութեան նման ազգեր չեն կրնար գոյատեւել, ինչպէս որ չգոյատեւեցին բազմաթիւ աշխարհակալ ազգեր:

Սիրենք, գուրգուրանք եւ արժեւորենք Հայ գիրքը ոսկիէ եւ թանկագին հարստութիւններէ աւելի, որովհետեւ նիւթական հարստութիւնները կ'ոչնչանան, կը հալին, կը կորսուին, սակայն հայ գիրքը յաւիտենական արժէք կը ներկայացնէ եւ կեանք կու տայ հայուն:

## ՀԱԼԷՊԻ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ

Սասունի եօթը հիմնական շրջաններով՝ Խութ-Բռնաշէնի, Մոտկանի, Փսանքի, Խուլբ-Խիանքի, Տալուրիկի, Շատախի եւ Սասունի հայաբնակ 300-է աւելի գիւղերէն բազմաթիւ սասունցիներ, տասնը-հինգերորդ դարէն սկսեալ, իրենց տնտեսական կացութիւնը բարելաւելու համար, որպէս պանդուխտ կու գային Սուրիա, յատկապէս Հալէպ քաղաքը եւ շրջանները, ինչպէս նաեւ՝ Կիլիկիոյ Այնթապ, Քիլիս եւ այլ շրջաններ:

Որպէս պէ՛տք եկողները դրամ շինելով կը վերադառնային Սասուն, սակայն անոնցմէ ոմանք, Հայաստանի կարգ մը քաղաքներէն եւ գիւղերէն եկած հայորդիներուն հետ համայնք ստեղծելով, կը մնային Հալէպի մէջ, ընդհանուր եւ հաւաքական միջոցներով կը ձեռնարկէին Սուրբ Քառասնից Մանկանց հայաստանեայց առաքելական եկեղեցիին շինութեան:

Դարերու ընթացքին հայ համայնքի թիւը կը բազմանար նոր եկողներով եւ ամուսնութիւններով, որոնք աշխատելով տուն-տեղ կ'ըլլային եւ կ'օգնէին Սասուն ապրող իրենց ընտանիքներուն եւ հարազատներուն:

19-րդ դարու երկրորդ կիսուն, թրքական եւ քրտական անտանելի ճնշումներու, թշնամութիւններու, անարգարութիւններու, արիւնահեղութիւններու եւ արհաւիրքներու հետեւանքով, Սասունի մէջ կը ստեղծուին դիմադրական եւ պաշտպանողական հայդուկային խումբեր, ղեկավարութեամբ Բռնաշէնի Կուլթեր գիւղը 1863-ին ծընած Արաբոյի (իսկական անունով Առաքել), որ ժողովուրդին պատուին, իրաւունքներուն ու ազատութեան համար պայքարի ծանր, փշոտ ու վտանգներով լեցուն ուղին նախընտրեց, գնաց Հալէպ, մշակ դարձաւ, եւ վաստակած դրամով հրացան գնեց ու վերադառնալով՝ կազմակերպեց խումբ մը, որ կը կռուէր քրտական աշիրաթներու եւ թրքական ճնշող բանակներու դէմ:

Գէորդ Չաւուշ (Սարհատ) ծնած է Փսանք գաւառի Մկթենք գիւղը: Ան եւս միացաւ Արաբոյի խումբին՝ կռուելու համար հայ ժողովուրդի պատուին եւ ազատութեան համար, սակայն դրամ չունէր հրացան գնելու: Գէորդ որոշեց Արաբոյի օրինակով Հալէպ երթալ, դրամ չահլի եւ հրացան գնել: Անոր ընկերացաւ Գալչոյի Մանուկը, եւ 1889-ի Սեպտեմբերին երկու ընկեր ճամբայ ելան դէպի Հալէպ: Տիգրանակերտի մէջ միացան առեւտրական կարաւանի մը: Հալէպ հաս-

նելով, հարցուփորձ ընելով՝ գտան հայկական եկեղեցին: Հալէպի մէջ շատ սասունցի պանդուխտ հայեր կ'աշխատէին: Անոնց մէջ կային մկթենքցիներ, որոնք Գէորգին եւ Գալչոյի Մանուկին ապաստան տրւին:

Առաջին անգամ Սասունէն ոտքը դուրս դրած Գէորգի համար Հալէպը այլ աշխարհ էր, իր շինութիւններու անծանօթ ոճով, անծանօթ տարագ կրող բազմութիւններու եռուզեռով, շուկաներու աղմուկով, մզկիթներու կանչերով:

Գէորգը սկիզբը աշխատեցաւ սասունցիի մը ջաղացքին մէջ, ապա՝ հացի փուռի մը մէջ:

Այդ փուռը կը գտնուի Պապ Էլ-Նասր ներսի շուկայի մուտքին, գոր ինծի ցոյց տուաւ հանգուցեալ հայրս՝ Տալւորիկ գաւառի Սպաղանք գիւղէն, Ֆետայի Գալէին հօրեղբօրորդին եւ Մակարին սանուկը:

Վեց ամիս աշխատելէ ետք, իր հաւաքած չնչին գումարին աւելցնելով հարազատներու եւ հայրենակիցներու հաւաքած դրամները (անոնք Գէորգի հայրենասիրական նպատակները գիտէին եւ օր առաջ կ'ուզէին, որ Գէորգ հասնի Սասուն, ուր անոր ներկայութիւնը օգի պէս անհրաժեշտ էր), Գէորգ հրացան մը գնեց եւ իր հայրենակիցներուն շնորհակալութիւն յայտնելէ վերջ՝ ըսաւ.

— Հէ՛յ Մարաթուկ, քու գօրութեանը մատաղ, ինծի կամք եւ ուժ տուր մինչեւ կեանքիս վերջը Արաբոյի նման իմ այս «Արաբոյով» խփել թշնամիներուն եւ դաւաճաններուն, պաշտպանելու թշուառները եւ զրկուածները:

Այդ օրուրնէ Գէորգ իր հրացանը կնքեց «Արաբօ» անունով:

Սասունցի պանդուխտներ Սուրիա եւ Կիլիկիա գալով կրցան իրենց եւ իրենց ընտանիքներուն ապրուստը ապահովել ընդհանրապէս ջաղացպանութեամբ եւ փռապանութեամբ, քանի որ բոլորն ալ գիւղացիներ էին, ընդհանրապէս անուս եւ արհեստ չունեցող անձեր:

Հալէպի փուռերուն մեծամասնութիւնը սասունցիներուն կը պատկանէր, եւ երբ Ս. Ծնունդի եւ Ս. Զատիկի առիթով փուռերը գոց կը մնային, ժողովուրդը տուներուն մէջ լաւաջ հաց կը պատրաստէր, որպէսզի երեք օր հաց ունենայ: Իսկ արաբները «փուռ կ'երթամ» ըսելու տեղ՝ կ'ըսէին «Անա ռայիի անտ սուսանի» (ես սասունցիի կ'երթամ): Փուռ եւ սասունցի հոմանիշ դարձած էին:

Ուրեմն, ինչպէս ըսի, Եղեռնէն ետք Հալէպ կայք հաստատած գրեթէ բոլոր սասունցիները կա՛մ ջաղացպան էին, կա՛մ փռապան: Եւ եթէ սասունցի մը վաճառականութիւն ընելու եւ առեւտրական գործ մը բանալու համարձակէր, շատ շուտով կը ձախողէր, որովհետեւ առեւտրականի ճարպիկութիւն, դիւանագիտութիւն եւ խաբեբայութիւն ըսուածները չէր գիտեր եւ չէր փորձած:

Գիւղացի հայրս Կիլիկիոյ շրջանին մէջ ջաղացականութիւն ըրած է, Նոր Գիւղի մէջ (Հալէպ) շինած իր տունին մէկ սենեակը խանութի վերածելով մսավաճառութիւն փորձած է, չէ յաջողած: Ֆրանսական բանակը երբ Սուրիան կը գրաւէ, անոնց անուշեղէն (մուշապպաֆ) շինելով ծախած է, չէ յաջողած: Թան շինելով Հալէպի կեդրոնին մէջ (Պապ էլ-Ֆարաճ) ծախած է, չէ յաջողած: Ամերիկայէն գործածուած ժաֆէքներ ուսին վրայ դնելով Հալէպի ներսի շուկաներուն մէջ շրջագայելով ծախած է, երբեմն ալ իր երեք գաւակները հետը ունենալով, տեղ չէ հասած: Նոր Գիւղի տունը ծախելով Ազէզ գիւղաքաղաքին մէջ ամերիկեան գործածուած հագուստներ ծախելու խանութ մը վարձելով գործի լծուած է ինքզինք առեւտրական կարծելով՝ չէ յաջողած, որովհետեւ ուրիշ առեւտրական արաբ մը հինգ ոսկի ֆրուղ տալով խանութը առած է: Իսկ ինք շահ ըրաւ կարծելով՝ թաղին մէջ ուրիշ խանութ մը վարձած է՝ չէ յաջողած, որովհետեւ իր յաճախորդները երբ իր նախկին խանութը կու գան եւ զինք կը փնտռեն, հինգ ոսկիով խանութը առնող արաբը կ'ըսէ.

— Այդ մարդը խանութը ծախեց եւ Հալէպ գնաց:

Հայրս անգործ մնալով՝ կը ստիպուի իրապէս Հալէպ երթալ, եւ այս անգամ Ուրբաթ եւ Կիրակի օրերուն տեղի ունեցող պագարներուն պաւթա բանալով՝ շրջան մը իր ունեցածը կամաց-կամաց կը կորսնցնէ եւ կը վերադառնայ ուսին վրայ կրկին ժաֆէք ծախելու:

Հալէպի մէջ սասունցիները յաճախ զանազան սրճարաններու մէջ մտերիմ հաւաքոյթներ կ'ուսննային, մինչեւ որ բացուեցաւ Տարօն-Տուրուբերանի Հայրենակցական Միութեան ակումբը, ուր տաման եւ թղթախաղը գիրենք զբաղ կը պահէր, քանի բաւական տարիք առնելով՝ ծանր գործ աշխատելու կարողութիւն չունէին:

Անշուշտ իրենց խօսակցութիւնները ընդհանրապէս իրենց հայրենի երկրին՝ Սասունի իրենց ապրած կեանքին մասին կ'ըլլային, եւ մանաւանդ՝ հերոս ֆետայիներու մղած ազատագրական եւ պաշտպանողական կռիւներուն եւ մարտերուն մասին:

Հալէպի մէջ ապրող սասունցիներուն մէջ արհեստով բացառութիւն կը կազմէր Սասունի Սեմալ գիւղէն Լեւոն Շառոյեանը, որ Հալէպի ձիտէյտէ թաղամասի ոսկերիչներու շարքին հնակարկատի խանութ ունէր, ուր գրեթէ ամէն օր կարգ մը սասունցիներ հոն կը հաւաքուէին զիրար տեսնելու, վիճաբանելու, իրենց անցեալը յիշելու, երագելով Սասունի դաշտերն ու այգիները, լեռներն ու ձորերը:

Այդ հաւաքոյթներուն հօրս հետ ներկայ գտնուեցայ, թէեւ հազիւ 12 տարեկան էի, եւ ուշադրութեամբ մտիկ կ'ընէի ներկաներուն խօսակցութիւնները, որոնք ընդհանրապէս կ'ընդգրկէին Սասունի աշխարհագրական դիրքը եւ կորսուած հայրենիքի կարօտը:

Հայրենասիրական արտայայտութիւններու կարգին՝ կարօտով

կը յիշէին Սասունի կանաչազարդ եւ մէկը միւսին զուգահեռ խոյացած լեռները եւ լեռնաթեւերը: Ասոնց կատարներէն մինչեւ ստորոտները ամէն քայլափոխին կը հոսէին առատ աղբիւրներ: Լեռներու որոշ մասերը ծածկուած են անտառներով եւ մացառուտներով: Սասունը ծածկուած կ'ըլլար կաղնիի, կաղամախիի, ուռենիի, հողենիի, թրխկիի, կէչիի, նորգենիի, ալուճի, քարճինի, եղուիթի, դառինջի, շլորի, մասրենիի, բղնջի, մրկիթի, փշատենիի, ընկուզենիի եւ ուրիշ տասնեակ տեսակի պտղատու եւ անպտուղ ծառերով ու թուփերով: Սասնոյ սարերը հարուստ են նաեւ բանջարով, ինչպէս՝ խանէն, կանկառ, խաւրձիլ, քեղ, բեժոկ, թթուաչ, ժախ, նուիկ, մանդակ: Սասնոյ նշանաւոր լեռներն են Անդոկ, Կեքին, Ծոփասար, Մարաթուկ, Գրգուռ:

Սասունի մասին իր զգացումները բանաստեղծութեամբ արտայայտած է սասունցի մտաւորական, 1948 թուականի Սուրիոյ Լաթաքիա քաղաքի հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Հմայեակ Քահանայ Երէցեանը, որ այդ օրերուն Սասնոյ Հայրենակցական Միութեան «Սասուն» տարեգիրքին մէջ լոյս տեսած էր, եւ ես սեմալցի Լեւոնին հնակարկատի խանութին մէջ հաւաքուած հայրենակիցներու արտասանեցի, որովհետեւ Հալէպի սասունցիները հայերէն գրել-կարդալ չէին գիտեր: Հայերէն գրել-կարդալ գիտցողներ էին սասունցի Տէր Մկրտիչ Աւագ Քահանայ Մուրատեանը եւ հայրս՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեանը, որոնք ուսանած էին Մուշի Ս. Կարապետ վանքին մէջ, անշուշտ տարագրութենէն շատ առաջ:

Կու տամ բանաստեղծութիւնը.—

## ՊԱՇՏԵԼԻ ՍԱՍՈՒՆԻՍ

Կեանքիս արփին դէպ՝ արեւմուտ կը հակի,

Պարմանի եմ ես սակայն,

Ջի հին արեւդ՝ իմ ամէն մէկ երակի

Մէջ կը պահէ հուրն արեան:

Տարիները՝ գըլխուս ձիւն են, ձիւն դիզեր,

Բայց հասակս է ուղղաձիգ,

Մէջս են կանգունն քու վեհ լեռներդ հողմաբեր,

Ուր կը շընչեն մեր նախնիք:

Իմ ակնոցս է քու ջուրդ, Սասուն, ջուրդ զուլալ,

Ու կը տեսնեմ լոկ անով,

Իմ մանկական դէմքիս խամրած վարդն դարձեալ,

Եւ ժըպիտներս հոգեթով:



Պարզ, անշուք է այսօր սեռ՝ սրբեմն իմ,  
Բայց զարդարուած զիս կը զգամ,  
Երազներովս ամէն գիշեր կը հագնիմ  
Բի՛ւր ծաղիկներ անթառամ:

Խաչի համեստ պաշտօնեայ եմ թէպէտեւ,  
Բայց բուրվառիս նշմարիտ.  
Խունկըն եղաւ բարկ վառօդը, որ՝ յարատեւ՝  
Ամպերն կազմեց երկնփիղ:

Պատարագիս՝ ես յիշած եմ անդադար  
Ծուռ-Գաւիթներդ շանթարկու,  
Որ տանարիդ դարձան պաշտպան դարէ դար՝  
Ընդդէմ բի՛ւր ոսոխներու:

Ու յիշած եմ դարուս անմահ Գէորգներդ,  
Մակար, Գալէն եւ Մուշեղ,  
Վեղարաւոր քաջըն Պետրոս վարդապետ,  
Ամէն մէկը վե՛հ, ասե՛ղ:

Հաղորդուած եմ, Սաս՛նն, հողովդ արիւնթոր,  
Ու սրբացած է հոգիս,  
Երանի՛ թէ սուրբ քարերէդ մէկ կտոր  
Օր մը դրուէր շիրիմիս:

\*  
\*  
\*

*Սասունցիներու դէպի Հալէպ հոսքը հինգ դարերու պատմութիւն ունի, որոնք ընդհանրապէս եկած են դրամ վաստակելու եւ իրենց ընտանիքներուն եւ հարազատներուն օժանդակելու, որոնք ապրուստի դժուարութիւններ ունէին՝ ապրելով օսմանեան պետութեան կրօնամոլ հովանիին տակ եւ քիւրտերու վայրագութիւնները եւ դժուարութիւնները դիմագրաւելով:*

*Հալէպի մէջ ընդհանրապէս եղած են փռապաններ եւ Հալէպէն դուրս՝ գիւղական շրջաններու մէջ՝ ջաղացպաններ:*

*Հայոց Մեծ Եղեռնէն վերջ, Սասունէն հեռացած սասունցիները, տարիներու ընթացքին տարիքի բերմամբ հանգստեան կոչուելով, ինչպէս նախապէս ըսի, միշտ իրարու մօտ կու գային եւ Սասունի կարօտով ու օր մը կրկին տեսնելու յոյսով կ'ապրէին:*

*Հայրս տասնեակ արհեստներ փորձելէ ետք, միացաւ սասունցի արմատներով քեռայրիս, որ փուռ մը ունէր Հալէպի Սիւլէյմանիէ թա-*

ղի դէպի քաղաք վերելքին աջ կողմի առաջին փողոցին մէջ, որուն մէջ ես ալ աշխատելու բաժին ունեցայ՝ յաճախորդներուն ծառայելով:

Հալէպ քաղաքը մինչեւ 20-րդ դարու սկիզբները ունէր Քուէյք անունով գետ մը, որ Թուրքիայէն գալով կ'անցնէր Հալէպէն, ճամբուն վրայ աշխատցնելով ջաղացքներ, որուն ջուրերէն կ'օգտուէին գետեզերքի պարտէզները, սակայն Թուրքերը, ինչ-ինչ պատճառներով, գետին ջուրերը օգտագործեցին Թուրքիոյ մէջ, եւ այդ պատճառով քիչ քանակութեամբ ջուր կը հասնէր Հալէպ: Գետին ջուրերով աշխատող ջաղացքները անգործածելի դարձան, իսկ ամրան շրջանին, գետեզերքի պարտէզներուն գործածելու համար հազիւ առուի մը քանակութեամբ ջուր կը հոսէր:

Պարտիզպանները, որպէսզի եկած ջուրերէն լիովին օգտուին, մաքրել կու տային պարտէզներու մէջէն անցնող գետակին ցեխերը, որպէսզի եկող ջուրերը արագ հոսին:

Հայրս, պալիսայի ժաֆէթ ծախած ատեն ծանօթացած ըլլալով քանի մը պարտիզպաններու, անոնց հետ համաձայնութիւն կնքած էր մաքրելու աշխատանքը ստանձնելու սասունցի իր հայրենակիցներով, որոնք թէեւ հանգստեան կոչուած էին, սակայն աշխատելու կարողութիւն ունէին: Անոնցմէ շուրջ 10 հոգի ամէն ամառ հօրս ղեկավարութեամբ կը մաքրէին գետակի ցեխերը, օրական չորս ոսկի աշխատավարձքով:

Այդ տարիներուն, ես, հազիւ 10-12 տարեկան, չար եւ արկածախնդիր ընկերներով՝ հօրս աշխատանքի միջավայրին մէջ գտնուող ծառերուն վրայ կ'ելլէինք, ծիրանի ծառերը կը մաքրէինք եւ, շատ լաւ կը յիշեմ, Այն Այնթէլի մօտերը գտնուող աւերակ (չաշխատող) ջաղացքին մօտ գտնուող ճերմակ եւ սեւ թուփի ծառերուն վրայ հասունցած թուփերը կ'ուտէինք ու տուն ալ կը տանէինք, երբեմն հալածուելով պարտիզպաններէն:

Անշուշտ հայրս եւ իր հետ աշխատող սասունցիները կէսօրուան ճաշին իրենց բարբառով կը յիշէին իրենց անցեալը եւ կարօտով կ'երգէին հայրենասիրական երգեր, ինչպէս՝ Գէորգ Չաւուշի երգերը, «Սուլուխի կոիւ»-ի երգը, «Ձայն մը հնչեց»-ը, «Սերոբի եւ Սօսէին երգը», «Սերոբ փաշայի երգը» եւայլն:

Եւ այսպէս, տարիներու թաւալումով Սասուն ծնած, ապրած եւ վայելած սասունցի մեր հայրերը Սասունէն հեռու՝ օտար հողերու մէջ թաղուեցան, Սասուն վերադառնալու կարօտը իրենց սրտին, մեզի կրտակելով Սասունը ազատագրելու սրբազան պարտականութիւնը:

Սասունի կարօտը, էրգիր երթալու հնարաւորութիւնը եւ փափաքը ծնունդ տուին Հայաստանի մէջ ժողովրդային երգի մը՝ «Քելէ, լաօ», այրող զգացմունքով, խորքի ու մեղեդիի ներդաշնակութեամբ, որ ցաւագին պատմութեան մը տարողութիւնը ունի:

Ահա այդ սրտամորմոք երգը.—

## ՔԵԼԷ, ԼԱՕ

Քելե՛, լաօ, ֆելե՛ էրթանֆ մըր էրգիր,  
Երթանֆ ըն ձոր, ֆաղինֆ մատաղ խաւրծիլ,  
Քաղինֆ, ֆաղինֆ, էնինֆ մըրգի դեղ ու նար,  
Քելե՛, լաօ, ֆելե՛ էրթանֆ մըր էրգիր:

Ամէն թփին կ'իջնի ֆաղցրիկ մանանայ,  
Մէկ-մէկ փշուր ուտինֆ, մըր սիրտ հովանայ,  
Սասնայ էրգիր մըր աչու ու դէմ ծովանայ,  
Քելե՛, լաօ, ֆելե՛ էրթանֆ մըր էրգիր...

Հոն արոսներ կտուց-կտցի կը երգին,  
Ծիծեռնակներ թելիկ-թելիկ կը ծափին,  
Քարեր առանց մըրգի արցունֆ կը թափին,  
Քելե՛, լաօ, ֆելե՛ էրթանֆ մըր էրգիր:

Մըր հէր էնտեղ, մըր մէր էնտեղ կը ծաղկին,  
Անուշ գիլան, մրմուռ ձէնով կը կակչին,  
Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանֆ մըր էրգիր,  
Էլի՛, լաօ, ֆելե՛ էրթանֆ մըր էրգիր...

\*  
\*  
\*

*Մեր բազմադարեան բանահիւսական արուեստին մէջ մեծ ժողովրդապահանջութիւն գտած է այս երգը: Սակայն շատ պարզ է, որ այս անանուն հեղինակը սասունցի է, Սասունի լեռնաշխարհին մէջ ծնած, այդ աշխարհի սքանչելի լեռներուն, դաշտերուն, ձորերուն եւ ջուրերուն պատկերներն ու կարօտը աչքերուն մէջ, այդ կորսնցուցած աշխարհի ցաւով ապրող եւ տոչորող սասունցի մը, որ իր սրտին մէջ ամբարուած յուզմունքը կ'արտայայտէ բանաստեղծութեամբ, չգտնելով ուրիշ ճանապարհ Սասուն՝ իր ծննդավայրը վերադառնալու:*

*Այս սքանչելի երգէն ազդուած, ամենայն հայոց կրն բանաստեղծ Սիլվա Կապուտիկեանը հետեւեալ բացատրողական եւ բովանդակալից բանաստեղծութիւնը գրած է, բանաստեղծական արուեստով յագեցած եւ հայրենասիրական զգացումով առլցուն:—*

## ՔԵԼԷ, ԼԱՕ

Գիշեր-ցերեկ նոյն երգն է իմ ունկերում,  
Զայնի տեղակ ծուխ է ելնում այդ երգից.

Ու ծխի մէջ կսկծում է մի ծերուկ՝  
«Քեկէ՛, լաօ, քեկէ՛ էրթանք մըր էրգիր»:

Արնոտել է ոտքը ճամբից քարքարոտ,  
Մանգաղն ուսած, գաղթի մախաղը մէջքին,  
Դեռ քայլում է սարով՝ ձորով, աշխարհով՝  
«Քեկէ՛, լաօ, քեկէ՛ էրթանք մըր էրգիր»:

Աչքերի մէջ յամառ մի ուխտ ու հարցում,  
Ու մի զարմանք, խեղճ մի զարմանք անմեկին,  
Հարցնում է իրեն, բախտին, Աստըծուն՝  
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իր ի՞նչ գործն է, թէ կայ սահման ու կայ վէճ,  
Իր ի՞նչ գործն է, թէ կան ոռւմբեր ու հրթիռ,  
Հողի, հոգու միամիտ կանչն է իր մէջ՝  
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Իմա՞լ կ'եղնի, ինքը՝ այստեղ, հողն այնտեղ,  
Արտը կղծել, սպասում է իր ձեռքին,  
Ինչպէ՞ս թողնենք տունն ու ջաղացը՝ անտէր,  
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Ինչպէ՞ս խեղդենք սեւ խոռովքը Սասնայ տան,  
Ինչպէ՞ս մարենք այսֆան կարօտ, վառք ու կիրք,  
Այսֆան երազ ինչպէ՞ս թաղենք գետնի տակ,  
«Իմա՞լ կ'եղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր»:

Թէ աշխարհում արդարութիւն կայ վերուստ,  
Ու թէ հաշտ են Աստուած, երկիր ու երկինք,  
Պիտի փլուի՛ ամէն պատնէշ, ամէն սուտ,  
Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մեր երկիր...:

\*  
\*  
\*

*Հայրս, Սասուն գաւառի Տալուորիկ շրջանի Սպաղանք գիւղը ծը-  
նած Ղազար (Խարզօ) Հոթոյեան, Ֆետայիներ Մակարի, Գալէի, Ակէի  
ազգականը եւ գործակիցը Սասնոյ ազատագրական եւ ինքնապաշտ-  
պանական կռիւներու ընթացքին, Սասունէն հեռանալով՝*

Հայր իմ սիրասուն,  
Քու ծննդավայրէդ հեռու ապրելով,

Շատ տառապեցար,  
 Հայոց Եղեռնի մահուան դարպասէն,  
 Թուրք գազաններու եաթաղաններէն  
 Քաջագուն սրտով միշտ ազատեցար,  
 Եւ հաստատուեցար քաղաքը Հալպայ,  
 Ուր ապրեցար քու ծննդավայր Սասնոյ կարօտով,  
 Յուսալով ընդմիշտ օր մը անպայման  
 Վերադառնալու ու տէր կանգնելու քու պապենական  
 Տունին ու դաշտին:  
 Սակայն երագդ անկատար մնաց,  
 Տարիները արագ սահեցան.  
 Սասունցիական կարօտը սրտիդ՝ կեանքէն հեռացար,  
 Եւ որպէս կտակ դուն փոխանցեցիր քու զաւակներուդ  
 Հայրենակարօտ սէրդ անսահման Սասնոյ աշխարհին,  
 Եւ պայքարով ազատագրելու հողը հայրենի,  
 Ու տէր կանգնելու մեր պապենական հողին ու ջուրին,  
 Գերեզմաններուն ընտանեկան:



Ձախէն աջ՝ սասունցիներ  
 մշակոյթի նախկին նախարար Յովիկ Յովէեան, Գրիգոր Հոթոյեան  
 եւ բանաստեղծ, պատմաբան Սասուն Գրիգորեան

## ԿԱՐՆԵՑԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ՈՒԻՍԱԿԱՆԸ

Կարին կամ էրզրում քաղաքն ու գաւառը կը գտնուէին պատմական Հայաստանի Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգին մէջ, ծովէն 2070 մեթր բարձրութիւն ունեցող լեռնադաշտի մը վրայ, Եփրատ եւ Երասխ գետերու ակունքներուն մօտ, նշանաւոր իր միջնաբերդով, Հայոց Ս. Աստուածածին եկեղեցիով, Սանասարեան վարժարանով, ինչպէս նաեւ Ս. Թարգմանչաց, Հռիփսիմեանց աղջկանց, Մսրեան, Տէր Ազարեան, Գաւաֆեան երկսեռ եւ ուրիշ բազմաթիւ վարժարաններով եւ եկեղեցիներով:

1829-ի եւ 1878-ի ռուս-թրքական պատերազմներու հետեւանքով, Բարձր Հայք նահանգի 400 հազարէ աւելի բնակչութենէն շուրջ 90 հազար Հայեր ռուսական բանակներու նահանջին հետ կը գաղթեն Կովկաս եւ կը հաստատուին Ախալցխա, Ախալքալաք, Ալեքսանդրապոլ եւ ապա Կարս քաղաքներու եւ գիւղերու մէջ: Ապա այս գաղթականներու մէկ մասը, Հայրենիքի կարօտէն տարուած, վերադարձած է էրզրում եւ վերաշինած իր քանդուած բոյնը: Գաղթողներու ճնշիչ մեծամասնութիւնը մնացած է Կովկաս, պահելով իր տոհմիկ սովորութիւններն ու ավանդութիւնները:

1910-1914, Կարինը դարձած էր հայ մտաւորական եւ յեղափոխական դէմքերու ժամադրավայր: Սիմոն Զաւարեան, Ռոստոմ, Աւետիս Ահարոնեան, Գ. Խաժակ, Նիկոլ Աղբալեան, Արշակ Զամալեան, Յովհաննէս Քաջազնունի, Աւետիք Իսահակեան, Ռուբէն Տէր Մինասեան, Սիմոն Վրացեան, Շաւարշ Միսաքեան, Ռուբէն Զարդարեան, է. Ակնունի, Նիկոլ Դուման, Մուրատ, Սեպուհ, Կայծակ Առաքել եւ այլ բազմաթիւ մտաւորական եւ մարտական դէմքեր, որոնցմէ ամէն մէկը ողջ դաստիարակութիւններ էին երիտասարդութեան եւ նորահաս սերունդին:

Կարնոյ մէջ գոյութիւն ունէր «Յառաջ» տպարանը, ուրկէ լոյս կը տեսնէր «Յառաջ» պաշտօնաթերթը՝ Եղիշ Թոփճեանի խմբագրութեամբ: Աւելի վերջ, թերթի խմբագրութիւնը կը ստանձնեն Սիմոն Վրացեան եւ Շաւարշ Միսաքեան:

Երիտասարդութեան պաշտօնաթերթ «Յառաջ»-ը կը հրապարակէ Կարնոյ ազգային կեանքն ու կառավարութեան տնտեսական եւ քաղաքական գործունէութիւնը լուսաբանող յօդուածներ: Յետագային, «Յառաջ» թերթին կը յաջորդեն «Երկիր», ապա՝ «Արեւելք» երկօրեաները:

Կարնոյ մէջ գոյութիւն ունցեած են նաեւ գրական թերթեր, որոնցմէ կարելի է յիշել «Սիրտ»-ը, որ 32 էջերէ բաղկացած խմորատիպ հրատարակութիւն մըն էր:

Կարնոյ մէջ յիշատակութեան արժանի բազմաթիւ վանքեր գոյութիւն ունեցած են, որոնցմէ կ'արժէ թուել Սուրբ Լուսաւորչեայ վանքը, Կարմիր եւ Կարմրու Ս. Աստուածածին վանքը եւ Խաչավանքը:

Քաղաքի յիշատակութեան արժանի կոթողներէն անհրաժեշտ է յիշել հոյակերտ վարժարանները, որոնցմէ ծանօթ է Արծնեան մայր վարժարանը, որ հայ մշակոյթի ու լուսաւորութեան մեծագոյն կեդրոններէն մէկը համարուած է: Հիմնադիրը եղած է Կարապետ Արք. Բագրատունին՝ 1811-ին:

Կարնոյ կրթական օճախներէն նշանաւոր է Սանասարեան վարժարանը, որ հիմնուած է 1881-ին, ուր դաստիարակուած են հարիւրաւոր ուսանողներ, որուն տնօրէնութիւնը վարած է Ռոստոմ Զօրեան:

Կարին քաղաքին բնական եւ առանձնայատուկ առաւելութիւններէն էին բազմաթիւ աղբիւրներ, որոնք ամէն փողոցի մէջ եւ իրարմէ ոչ շատ հեռու, եւ կամ տուներու մէջ մշտապէս կը հոսէին, խմելու առատ ջուր եւ մաքրութեան լայն միջոցներ տալով Կարնոյ ժողովուրդին: Այս ձեւի 600-ի մօտ աղբիւրներ կը հաշուէր Կարինը:

Հայահոծ եւ պատմական այս քաղաքին մէջ, հակառակ թրքական հայատեաց քաղաքականութեան, հայերը միշտ կրցած են տընտեսական, ազգային, մշակութային եւ կրօնական աշխոյժ կեանք մը վարել, ղեկավարութեամբ ազգային փորձառու եւ վաստակաւոր մշտաւորականութեան:

Թոքաճեան ընտանիքը կ'ապրէր երկյարկանի ընդարձակ տունի մը մէջ, որ շինուած էր Կարինի ցուրտ կլիմային դիմադրող կառուցուածքով, որովհետեւ գրեթէ վեց ամիս տեղացող ձիւնը կը փակէր ճամբաները՝ դուրս ելլելը անկարելի դարձնելով: Ժողովուրդը ուտելիք վեց ամսուան պաշարը ամառուընէ կը սկսէր ապահովել:

Պրն. Յակոբ Թոքաճեան արհեստով դերձակ էր եւ իր ուղղամտութեամբ կրցած էր դժուարահաճ յաճախորդներուն գոհացում տալ: Տիկինը՝ Սանամ Թոքաճեան, ծնեալ Իքիթիանեան, որ ապագային փոխուած է Քաջազնունիի, ազգականն էր Հայաստանի 1918-ի Հանրապետութեան վարչապետերէն Յովհաննէս Քաջազնունիի, որոնք 1878-ի ռուս-թրքական պատերազմին պատճառով Կարինէն գաղթած եւ հաստատուած են Գիւմրի կամ Ալեքսանդրապոլ քաղաքը:

Պրն. Թոքաճեան կանուխ մահացած իր առաջին կնոջմէն ունեցած էր աղջիկ զաւակ մը Նուարդ անունով, իսկ երկրորդ կնոջմէն՝ երկու մանչ եւ չորս աղջիկ: Ինը հոգինոց ընտանիք մը: Բարօր կեանք մը կ'ապրէին շնորհիւ Պրն. Յակոբի աշխատասիրութեան, որ դերձակի իր անձնական խանութը ունէր քաղաքի շուկային մէջ եւ հինգ գործաւոր կ'աշխատցնէր:

Ինչպէս Կարնոյ բոլոր ընտանիքները, Թոքաճեան ընտանիքն ալ կ'ապրէր նահապետական կեանք մը, կառչած հայ ազգային, մշակութային եւ եկեղեցական ավանդութիւններուն եւ սովորութիւններուն: Տան մէջ բոլորը իրարու հանդէպ սէր եւ համակրանք կը տածէին: Ընտանիքին բոլոր հարցերը կը լուծէր հայրը կամ մեծ հայրը՝ եթէ ողջ էր: Բոլորը կը հնազանդէին անոնց կարգադրութիւններուն: Ճաշի կը նստէին այրերը առանձին: Կիները կը սպասարկէին սեղանին:

Ամէն Կիրակի եւ տօնական օրերուն բոլորը եկեղեցի կ'երթային: Տղաքը դպրութիւն կ'ընէին եւ երբեք չէին բացակայեր: Ընտանեկան սրբութիւն, իրար հասկացողութիւն, սէր, միաբանութիւն եւ յարգանք մեծերու հանդէպ: Եւ այսպէս՝ մինչեւ 1915՝ աղէտալի թուականը:

Կառավարական մունետիկներ փողոցներու մէջ ժողովուրդին յայտարարեցին Թուրքիոյ պատերազմի մուտքը եւ երիտասարդութեանէն պահանջեցին ներկայանալ զինուորական կեդրոններ:

Պրն. Թոքաճեան ստիպուած ներկայացաւ զինուորական կեդրոն եւ զինուորագուեցաւ: Սակայն մէկ ամիս անց, ծառայութեան փոխարէն օրէնք դարձած որոշ գումար մը վճարելով՝ ազատ կացուցուեցաւ եւ լծուեցաւ զինուորական հագուստներ կարելու աշխատանքին:

1915-ի Ապրիլին սկսաւ Կարնոյ հայութեան գաղթականութիւնը: Իսկ 1915-ի Մայիսին՝ Կարնոյ դաշտի հայ գիւղացիներու զանգուածային բռնագաղթը:

Դաշտի բնակչութիւնը կը կոտորուի Կարին-Երզնկա ճանապարհներուն վրայ, իսկ Կարնոյ հայութիւնը՝ Կամախի եւ Մալաթիոյ լեռներուն վրայ:

Թոքաճեան ընտանիքը երեք կառք վարձելով, ճամբու ընթացքին պիտանի առարկաներով, սրտակէզ յուզումով եւ արցունքոտ աչքերով ճանապարհ կ'իյնայ դէպի անծանօթ ուղղութեամբ: Կարինէն Բաբերդ ճամբորդութիւնը երկու օր կը տեւէ: Գիշերը վրաններու տակ անցընելէ ետք, ճամբան կը շարունակուի դէպի Ակն, Արաբկիր, Երզնկա, Կամախ, ամէն տեղ մէկ-երկու օր մնալով, ուր գաղթականները կ'ենթարկուին տեղացի քիւրտերու բարբարոսութիւններուն եւ կողոպուտին: Մինչեւ Կամախ հասնող կարաւաններու այր մարդիկը արդէն իսկ հաւաքուած եւ ջարդուած էին թուրք զաբթիաներու կողմէ՝ համաձայն պետական հրահանգի: Կարնեցիներու կարաւանին մօտեցած էր նաեւ սեբաստիացիներու կարաւանը:

Քամախի կամուրջին մօտ աքսորեալ կարաւաններէն զատուած շուրջ 250 երիտասարդներ գազանաբար կը սպաննուին:

Կարաւանը զաբթիաներու հսկողութեամբ ճամբայ կ'ելլէ դէպի Մալաթիա, ուր երկու օր մնալէ ետք, իր ցաւալի կեանքը չարչարանքով եւ տառապանքով քաշքշող ժողովուրդը կը հասնի Մալաթիա, ուր ժողովուրդին մնացորդացը, կիզիչ արեւու տակ, անօթի-ծարաւ,



քաղելով կը հասնի Սամսոն: Հոն Թոքաճեաններ 30 օր կը մնան, ուր հաւաքուած էին ողջ մնացած խումբ մը հայեր:

Թոքաճեանները շարունակելով իրենց երթը՝ կը հասնին Ատրեաման, ուր քիւրտերու քովէն ազատուած Պրն. Յակոբ իր արհեստը կիրարկելով ընտանիքին ապրուստը կը հոգայ: Սակայն տեղացի թուրքերը լաւ աչքով չեն դիտեր հայերու ներկայութիւնը իրենց մէջ:

Ատրեամանի գայմագամը չորս ընտանիքները իր մօտ կանչելով կ'ըսէ.

— Գիտենք, որ հայ էք, սակայն եթէ կ'ուզէք ապրիլ եւ ապահով հաց մը ուտել, պէտք է իսլամանաք, որպէսզի իսլամները ձեզի հանդէպ թշնամութիւն չսերմանեն:

Ատրեաման հասած չորս ընտանիքները ընտանեկան ժողով կը գումարեն եւ կ'որոշեն առ երես իսլամանալ, որպէսզի ժամանակ շահին եւ իրենց կեանքը ազատեն թուրք եւ քիւրտ ոճրագործերու ձեռքէն:

Ատրեամանի գայմագամին իրենց որոշումը փոխանցելէ ետք, թուրք շէյխ մը գալով բոլորին իսլամական անուններ կը դնէ: Այսպէս՝ Պրն. Յակոբը կը դառնայ Ապտիւլազիզ, Տիկիյն Մարիճան՝ Էմինէ, Նուարդը՝ Ֆիտան, Ձուարթը՝ Ֆերուզ, Նագելին՝ Ճամիլէ, Լեւոնը՝ Շաւքէթ, Արամը՝ Շիւքրի, Գոհարիկը՝ Սայիտէ, իսկ Քնարը մինչ այդ կը մեռնի թիֆոյիտ հիւանդութեան բռնուելով:

Պրն. Յակոբը, Արամը եւ Լեւոնը պարտադրաբար կը թլփատուին եւ թրքական դպրոց կը յաճախեն:

Թոքաճեանները չորս տարի իսլամացած Ատրեաման կը մնան, ուր Պրն. Յակոբ թրքական ֆէսիին վրայ սարլըս փաթթած դերձակութիւն կ'ընէ, յատուկ խանութ բանալով:

Առ երես իսլամացած Թոքաճեան ընտանիքը անշուշտ տան մէջ հայերէն կը խօսէր եւ հոն բնակող ժիրայր Մսրլեանի մայրը, որ քահանայի աղջիկ էր, գաղտնի կը հաւաքէր Թոքաճեանները եւ «Տէր, ողորմեա՛» կ'երգէին: Տօնական օրերը կը յիշատակէին, Համբարձման վիճակ կը բանային եւ քրիստոնէական պահքերու կը հետեւէին: Սակայն արտաքուստ՝ իսլամական տօնական օրերը եւ ժամերը պահող յոյց կու տային:

Չորս տարի Ատրեաման մնալէ ետք, Պրն. Թոքաճեան լսելով, որ անգլիացիներ Ուրֆա հասած են, կ'որոշէ ընտանեօք Ուրֆա մեկնիլ:

Ուրֆա հասնելով, Պրն. Յակոբ Թոքաճեան գլխուն ֆէսը եւ փաթթոցը հայհոյելով աղբաման կը նետէ եւ իր ընտանիքին հետ պաշտօնապէս կը վերադառնայ հայութեան եւ քրիստոնէութեան:

Կիլիկիա հասած հայ կամաւորները, որպէս ֆրանսական բանակի ծառայող զինուորներ, թրքական քաղաքներու եւ գիւղերու մէջ ապրող եւ բռնութեամբ իսլամացած հայ մանուկները կ'ազատագրէին:

Թոքաճեանները մահուան սարսափներէն եւ ճիրաններէն ազատուելով՝ Ուրֆա հասնելու բախտը ունեցան: Կարինէն մինչեւ Ուրֆա տառապալից ճամբորդութեան ընթացքին, ականատես եղան հարիւր հազարաւոր հայերու ջարդին եւ անօթի-ծարաւ մնալով եւ հիւանդանալով՝ անոնց մահուան:

Թոքաճեան ընտանիքը, 1920-էն մինչեւ 1923, Ուրֆա մնալէ ետք, ֆրանսական բանակներու նահանջին հետ Ուրֆայէն հեռացաւ եւ երկու օր ճարապլուս սուրիական գիւղաքաղաքը մնալէ ետք, ճամբայ ինկաւ դէպի Հալէպ: Ճամբան, ինչ որ խնայած էր Ուրֆայի իր կեցութեան ընթացքին, քիւրտերու կողմէ կողոպտուեցաւ:

Հալէպ հասնելով, Արամը դպրոց արձանագրուեցաւ, Լեւոնը հօրմէն վարժուած դերձակութիւն ըրաւ, իսկ աղջիկները տան մէջ Այնթապի ձեռագործներ աշխատելով իրենց ապրուստը ապահովեցին:

Թոքաճեան ընտանիքի անդամները ժամանակի ընթացքին ամուսնանալով տուն-տեղ կազմեցին, զաւակներու տէր եղան, որոնք որպէս ազգասէր եւ եկեղեցասէր ընտանիքներ ապրեցան, ամուր պահելով հայկական աւանդութիւնները եւ տոհմիկ սովորութիւնները, իրենց սրտին մէջ պահելով հայութենէն պարպուած էրզրումի սրտաճմլիկ կարօտը:

Ներկայիս Թոքաճեան ընտանիքի անդամները ցրուած են Սուրիոյ, Լիբանանի, Գանատայի եւ Ֆրանսայի զանազան քաղաքներուն մէջ, հպարտ՝ որպէս հայ եւ էրզրումցի ընտանիքներ:

Թուրք պետութեան կողմէ ծրագրուած եւ 1915-ին գործադրուած Հայոց Մեծ Եղեռնին զոհ հացին 1,5 միլիոնէ աւելի հայեր եւ հայ ժողովուրդէն ամայացան հազարաւոր տարիներով հայկական հայրենիքի քաղաքներն ու գիւղերը: Կորսնցուցինք Արեւմտեան Հայաստանն ու Կիլիկիան, սակայն այսօր գոյութիւն ունի Ազատ եւ Անկախ Հայաստանը:

Թալաթի եւ Էնվէր փաշաները ուղեցին հայ ժողովուրդը ոչնչացրնել, սակայն չյաջողեցան: Շատեր մեռան, շատեր սպաննուեցան, սակայն գտնուեցան կարնեցի Թոքաճեաններու, Եղիայեաններու, Եղոյեաններու նման ընտանիքներ, որոնք աքսորի ճամբաներուն վրայ իրենց կեանքը փրկելու համար առ երես իսլամացան, միշտ պահելով իրենց քրիստոնէական հաւատքն ու ազգային աւանդութիւնները եւ երբ առիթը ներկայացաւ, վերադարձան իրենց հայրական հաւատքին եւ մայրական լեզուին, պահանջատէր դառնալով տէր դառնալու իրենց հողային եւ ազգային իրաւունքներուն՝ ստիպելով Թուրք կառավարութիւնները, որ ճանչնան Հայոց Յեղասպանութիւնը եւ հատուցանեն գործուած ոճիրները:

Թոքաճեան ընտանիքներու շառաւիղները կը հաւատան, որ պիտի վերադառնան Կարին-էրզրում եւ տէր պիտի դառնան իրենց կալուածներուն եւ տուններուն:

## ԱՐԴԱՐ ԴԱՏԱԽՈՐԸ

Կիլիկեան Հայաստանի Հեթում Ա. թագաւորը իշխած է 1226-1270 թուականներուն: 1226 թուականին ամուսնացած է Լեւոն Մեծագործի դստեր՝ Զապէլի հետ եւ հռչակուած հայոց թագաւոր:

Հեթում Ա.-ին գահակալուամով հիմնադրուած է Հեթումեան գահատոհմը: Մինչեւ Հեթումի եւ Զապէլի չափահաս դառնալը, տէրութիւնը ղեկավարած է Հեթումի հայրը՝ Կոստանդին Պայլը:

Հեթում Ա.-ի ժամանակ Կիլիկեան Հայաստանը տնտեսական ու մշակութային մեծ վերելք ապրած է: 1254 թուականին, Հեթում Ա. մեկնած է Մոնկոլիայի մայրաքաղաք Կարակորում եւ բարեկամական դաշինք կնքած մոնկոլեան կայսրութեան հետ: Այդ դաշինքին շնորհիւ Կիլիկեան Հայաստանը ոչ միայն զերծ մնացած է մոնկոլեան ասպատակութիւններէն, այլեւ՝ մոնկոլներու զինակցութեամբ ամրապնդած է միջազգային դիրքը:

Հեթում Ա. թագաւորը իմաստութեամբ վարած է Կիլիկեան Հայաստանի թագաւորութիւնը: Անգամ մը իմաստասէրներէն մէկը Հեթումին այսպիսի հարց տուած է.

— Արքայ՛, կ'ըսեն, որ դուն եւ Զապէլ թագուհին երջանիկ ամուսիններ էք, իրա՞ւ է այս խօսակցութիւնը:

— Այո,— պատասխանած է Հեթում թագաւոր:

— Ո՞րն է ձեր երջանկութեան գաղտնիքը,— հարց տուած է իմաստասէրը:

— Փոխադարձ սէրը. երբ կը սիրես անձնուիրաբար, այդ պարագային Աստուած զօրավիգ կը դառնայ քեզի,— պատասխանած է Հեթում թագաւորը:

Կիլիկեան Հայաստանի թագաւոր Հեթում Ա. սովորութիւն ունէր կերպարանափոխուելով պտըտիլ իր երկրին զանազան քաղաքները, իմանալու համար, ինչպէս նաեւ տեսնելու, որ իր սահմաններուն մէջ ժողովուրդը ի՞նչպէս կ'ապրի:

Եւ օր մը Հեթում Ա. ցանկացաւ իմանալ, թէ ճի՞շդ է այն տեղեկութիւնը, որ իր երկրի քաղաքներէն՝ Ատանայի մէջ կայ արդար դատաւոր մը, որ միանգամայն կ'իմանայ ճշմարտութիւնը եւ իրմէ ոչ մէկ խաբեբայ չի կրնար խուսափիլ:

Թագաւորը ծպտուեցաւ վաճառականի հագուստով եւ հեծնելով ձին գնաց Ատանա քաղաքը, ուր կ'ապրէր դատաւորը, հանդարտօրէն մտաւ քաղաքի մեծ դարպասէն եւ հարցաքննելով գտաւ դատարանի շէնքը:

Շէնքին մօտ, ծպտեալ թագաւորին մօտեցաւ հաշմանդամ մարդ մը եւ ողորմութիւն խնդրեց: Թագաւորը կատարեց աղքատին խընդրանքը եւ ուզեց հեռանալ, բայց հաշմանդամը կառչեցաւ անոր հագուստին:

— Մի՞թէ ողորմութիւն չտուի,— հարցուց ծպտեալ թագաւորը,— տակաւին ի՞նչ կ'ուզես:

— Ողորմութիւն տուի՛ր,— ըսաւ հաշմանդամը,— բայց կրկին լաւութիւն ըրէ՛, քո՛ւ ձիով զիս հասցուր հրապարակը:

Հեթում թագաւոր հաշմանդամը նստեցուց ձիու գաւակին եւ տարաւ հրապարակ: Աղքատը ձիէն չէր ուզեր իջնել: Թագաւորը ըսաւ.

— Ինչո՞ւ ձիէն չես իջներ, քեզի ուզած տեղդ հասցուցի, իջի՛ր, տակաւին ի՞նչ կ'ուզես:

— Չեմ իջներ, այս ձիւն իմս է, եթէ չես ուզեր ինձի տալ քու կամքով, երթանք դատաւորին մօտ,— ըսաւ աղքատը:

Այս վիճաբանութիւնները լսելով՝ անոնց շուրջ շատ մարդ հաւաքուեցաւ եւ ամէնքն ալ լսեցին, թէ ինչպէ՛ս կը վիճին: Բոլոր ներկաները միաբերան բացազանչեցին.

— Գացէ՛ք դատաւորին քով, ան արդար վճիռ կը կայացնէ:

Անոնք գացին դատաւորին քով: Այդ ժամուն դատարանի սրահին մէջ շատ մարդ կար եւ դատաւորը հերթով կը կանչէր գանոնք: Մինչեւ հերթը ծպտեալ թագաւորին հասնիլը, դատաւորը լսեց անոնց գանգատները, պահ մը լռեց եւ ապա ըսաւ.

— Կինը ձգեցէք այստեղ, իսկ դուք վաղը առաւօտուն եկէք:

Երբ անոնք գացին, ներս մտան մսավաճառ մը եւ իւղավաճառ մը: Մսավաճառը ամբողջ մարմնով արիւնի մէջ կորսուած էր, իսկ իւղավաճառը՝ իւղի: Մսավաճառի ձեռքին դրամ կար, իսկ իւղավաճառը ամուր բռնած էր անոր ձեռքը: Մսավաճառը ըսաւ.

— Ես այս մարդէն իւղ գնեցի, քսակէս դրամ հանեցի, որ վճարեմ, սակայն ան բռնեց իմ ձեռքս եւ կ'ուզէր դրամս խլել: Այդ պատճառով եկած ենք քու մօտդ, ես ձեռքս պահած եմ դրամս, իսկ ինք բռնած է իմ ձեռքս: Դրամը իմս է, այս մարդը գող է:

Իսկ իւղավաճառը ըսաւ.

— Մսավաճառը կը ստէ: Ան եկաւ իւղ առնելու, երբ լրիւ փարջ մը լեցուցի, ան խնդրեց մանրել իր ոսկեղբամը: Ես դրամս հանեցի եւ դրի վաճառասեղանին, ան արագօրէն դրամները յափշտակեց եւ փորձեց փախչիլ: Բռնեցի իր ձեռքը եւ բերի հոս:

Դատաւորը լսեց պահ մը եւ ըսաւ.

— Դրամները հոս ձգեցէ՛ք, իսկ դուք վաղը եկէ՛ք:

Երբ հերթը ծպտեալ Հեթում թագաւորին եւ հաշմանդամին եկաւ, թագաւորը պատմեց, թէ բանն ինչպէս է եղած: Դատաւորը մտիկ ըրաւ թագաւորին, յետոյ խօսքը տուաւ հաշմանդամին: Հաշմանդամը ըսաւ.

— Ասոր պատմածը սուտ է: Ես ձիս հեծած կ'անցնէի քաղաքէն, իսկ ան նստած էր գետին եւ խնդրեց, որ զինք հետս տանիմ: Զինք նստեցուցի ձիուս վրայ եւ հասցուցի հոն՝ ուր ինք կ'ուզէր, բայց երբ իր ուզած տեղը հասանք, չուզեց իջնել եւ ըսաւ, որ ձին իրն է:

Դատաւորը մտածեց ու մտածեց եւ ըսաւ.

— Զին ձգեցէ՛ք մօտս եւ վաղը եկէ՛ք:

Յաջորդ օրը նոյնպէս շատ մարդ հաւաքուած էր լսելու, թէ ի՞նչ վճիռ պիտի տայ դատաւորը:

Ամէնէն առաջ մօտեցան գիտնականն ու շինականը:

— Տա՛ր քու կինդ,— գիտնականին ըսաւ դատաւորը, իսկ շինակա-  
նին յիսուէն հարուած տուաւ:

Գիտնականը կինը առաւ եւ տուն գնաց, իսկ շինականը տեղն ու  
տեղը պատժեցին:

Յետոյ դատաւորը կանչեց մսավաճառը.

— Դրամը քուկդ է,— ըսաւ, ապա մատնացոյց ընելով իւղավաճա-  
ռը՝ աւելցուց,— իսկ ասոր ալ մտրակի յիսուէն հարուած:

Ապա կանչեցին ծպտեալ Հեթում թագաւորն ու հաշմանդամը:

— Դուն քու ձիդ ուրիշ քսան ձիերու մէջէն կը ճանչնամ<sup>օ</sup>,— հար-  
ցուց դատաւորը Հեթումին:

— Կը ճանչնամ,— պատասխանեց Հեթում արքան:

— Իսկ դո՞ւն,— դատաւորը դիմեց հաշմանդամին:

— Ես ալ կը ճանչնամ,— ըսաւ հաշմանդամը:

— Եկո՛ւր հետս,— Հեթում արքային դիմեց դատաւորը:

Անոնք գացին ձիանոց: Քսան ուրիշ ձիերու մէջ ծպտեալ թագա-  
ւորը ցոյց տուաւ իր ձին:

Յետոյ դատաւորը կանչեց հաշմանդամը եւ անկէ ալ պահանջեց  
ցոյց տալ իր ձին: Ան եւս ճանչցաւ եւ մատնացոյց ըրաւ նոյն ձին:  
Այդ ժամանակ դատաւորը կրկին նստաւ իր տեղը եւ ըսաւ ծպտեալ  
թագաւորին.

— Զին քուկդ է, տա՛ր,— իսկ հրամայեց հաշմանդամին տալ յիսուէն  
հարուած:

Դատէն ետք դատաւորը տուն գնաց, իսկ Հեթում թագաւորը  
գնաց անոր ետեւէն:

— Դուն բաւարարուած չե՞ս իմ որոշումէս, ի՞նչ է,— հարցուց դա-  
տաւորը:

— Չէ, բաւարարուած եմ,— ըսաւ Հեթում արքան,— բայց կ'ուզեմ  
իմանալ, թէ ինչպէ՞ս հասկցար, որ կինը գիտնականին էր եւ ոչ թէ  
շինականին, որ դրամը մսավաճառին էր եւ ոչ թէ իւղավաճառին, որ  
ձին իմս էր եւ ոչ թէ աղքատին:

— Կնոջ հարցը ես իմացայ, ահա թէ ինչպէ՛ս: Առաւօտեան կինը  
քովս կանչեցի եւ անոր ըսի, որ թանաքամանիս մէջ թանաք լեցուր:  
Ան առաւ թանաքամանը, արագօրէն եւ ճարպիկօրէն լուաց եւ թանաք

լեցուց: Պարզ էր, որ ան վարժուած էր այդ գործին: Եթէ շինականին կինը ըլլար, չէր կրնար այդքան վարժ եւ արագ կատարել: Ուրեմն յայտնի եղաւ, որ ճիշդը գիտնականն էր: Իսկ դրամը դրի ջուրով լեցուն բաժակի մէջ եւ այսօր առաւօտեան դիտեցի, որ ջուրին երեսը իւղ նստա՞ծ էր, թէ ոչ: Եթէ դրամը իւղավաճառին ըլլար, ապա հոն իւղոտ ձեռքերու հետքեր պիտի գտնուէին: Ջուրի երեսին իւղ չկար եւ ուրեմն, պարզ էր, որ մտավաճառը ճիշդ էր:

Ամենազօռարը ձեր գործն էր: Հաշմանդամը ճիշդ այնպէս՝ ինչպէս դուն, մատնացոյց ըրաւ միեւնոյն ձին: Բայց ես ձեր երկուքին ձիանոց տարի ոչ թէ անոր համար, որ տեսնեմ դուք կը ճանչնա՞ք ձին թէ չէ, այլ՝ որպէսզի իմանամ, թէ ձեր երկուքէն ո՞վ պիտի ճանչնար ձին: Երբ դուն մօտեցար, ձին թեքեց գլուխը, երկարեց քեզի, իսկ երբ հաշմանդամը մօտեցաւ, ան ականջները ցցեց եւ առջեւի ոտքերը վեր բարձրացուց գայրացած: Ահա այս ձեւով իմացայ, որ ձիուն իսկական տէրը դուն ես:

Այդ ժամանակ Հեթում արքան ըսաւ.

— Ես վաճառական չեմ, այլ՝ Հեթում Ա. թագաւորն եմ: Հոս եկած եմ, որ ստուգեմ, թէ ճի՞շդ են այն տեղեկութիւնները, որ քու մասիդ կը խօսուէր: Այժմ կը տեսնեմ, որ դուն իմաստուն դատաւոր ես: Ուզէ՛ ուզածդ, տամ:

Դատաւորը ըսաւ.

— Ինձի պարգեւ պէտք չէ: Ես արդէն երջանիկ եմ, որ իմ թագաւորին գովասանքին արժանացայ եւ կը ծառայեմ երկրիս եւ ժողովուրդիս:



Չախէն աջ՝ Արժ. Տէր Արմէն Աւագ Քինյ. Իշխանեան, Գրիգոր Հոբոյեան եւ Արժ. Տէր Հրայր Աւագ Քինյ. Նիկոլեան

## ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ՔԵՉ ԿԸ ՍՊԱՍԵՆՔ

Մարդկային արդարութիւնը հազարաւոր տարիներէ ի վեր յաճախ կը կորսուէր, փախչելով անարդարութեան ճիրաններէն եւ խուսափելով զինք ծիւրող, պատէ պատ զարնող, լլկող անձերէն: Յաճախ կը փախչէր լեռները, պահուելով աշխարհիս հեռաւոր անկիւնները: Բայց ամէն անգամ, այսպէս կամ այնպէս, կը յաջողէին գտնել զայն, բռնել, վանդակի կամ սնտուկի մէջ դնել, իրենց ուզածին պէս գործածել եւ անխղճօրէն չարչարել:

Վերջին անգամ սակայն, չես գիտեր ի՞նչ հնարքով, Արդարութիւնը յաջողեցաւ բացառիկ վարպետութեամբ անհետանալ եւ այնքան լաւ պահուելուցաւ, որ մարդիկ աղօթքով, ճարպիկութեամբ, ուժով կամ ոսկիով իսկ անկարող եղան գտնել զայն:

Ակաաւ մեծ իրարանցում: Առանց արդարութեան դժուար էր ապրիլ, մանաւանդ որ անոր անհետանալովը կը բազմանային անմարդկային արարքներ եւ շատ աղտոտութիւններ, ինչպէս՝ կեղծաւորութիւն, անիրաւութիւն, խաբէութիւն, արիւնահեղութիւն, գազանութիւն, մարդասպանութիւն եւ ցեղասպանութիւն, որոնք արդարօրէն կը դիմակագեծէր եւ պատիժի կ'ենթարկէր Արդարութիւնը:

Սոյն կացութեան ի տես, Արդարութիւնը փնտռելու ձեռնարկեց պատերազմիկ ազնուական մը: Շատ զօրք հաւաքեց, գունդ կազմեց եւ երդում ըրաւ, որ Արդարութիւնը ո՛ր ծակը մտած ըլլայ՝ պիտի հանէր, ձեռքն ու ոտքը կապած պիտի ստիպէր, որ իր նախախնամական եւ մարդկային պաշտօնը շարունակէ կատարել:

Այս պատերազմիկ ազնուականը, այդ պատճառով իսկ, ոտնակոխ ըրաւ գիւղ ու քաղաք, արիւն սփռելով դաշտ ու ձոր, ջարդեց, քանդեց եւ աւերեց ամէն ինչ, շարունակելով իր վայրագութիւնները, յուսալով բռնել Արդարութիւնը:

Արդարութիւնը գտնելու համար ճանապարհ ինկաւ շատ հարուստ մեծատուն մը: Ոսկի եւ արծաթ, զարդ ու զարդարանք տեղաւորեց ուղտերու վրայ եւ վստահելով իր հարստութեան՝ տունէն դուրս ելաւ, իր հետ ունենալով նաեւ քանի մը սիրուն կիներ, թիկնապահներ եւ ծառաներ:

— Կը տեսնէ՛ք,— կը պնդէր ան,— Արդարութիւնը ոսկիովս պիտի գնեմ, կիներով պիտի հրապուրեմ եւ սնտուկիս մէջ դրած՝ ժողովուրդիս պիտի ներկայացնեմ:

Ահա այսպէս, գինուորականութիւնը եւ հարստութիւնը գացին Արդարութիւնը որոնելու: Եւ տակաւին կ'երթան...:

Այժմ տեսնենք, թէ ո՞վ էր այն երրորդ անձը, որ խեղճուկրակ, ցնցոտիներ հագած, ճակատը վիշտերով խորախոր ափօսած, մտածեց ելլել Արդարութիւնը փնտռելու:

Ըսենք՝ ազնուականը զէնք ու զրահ ունէր, հարուստը՝ ոսկի եւ արծաթ, իսկ սա երրորդ անձը ի՞նչ ունէր, ինչո՞վ պիտի գտնէր Արդարութիւնը, թշուառ եւ աղքատ անձ մըն էր ան: Որպէս ընծայ ունէր չնչին սրուակ մը, որ ամուր կերպով սեղմած էր կուրծքին եւ յամառութեամբ ճանապարհ ինկած էր: Բանն այն է, որ սրուակը լեցուցած էր չլսուած հեղուկով մը՝ Որբէն՝ արցունք մը, Ինկողէն՝ հառաչ մը, Գործաւորէն՝ դառն քրտինք:

Մէկ խօսքով, վիշտերու եւ ցաւերու արցունքներէն մէկական կաթիլ ժողված եւ լեցուցած էր, շիշը պինդ փակած էր եւ կը կարծէր, որ տարածը անպայման պիտի գրաւէր Արդարութեան ուշադրութիւնը:

Եւ քալելու սկսած էր անցնելով մեծ-մեծ քաղաքներէն, խուլ, հեռաւոր քաղաքներէն, կը քալէր անխոնջ, ձորերէն կ'իջնէր, լեռներէն վեր կ'ելլէր, ամէն քայլափոխին կանգ առնելով՝ բարձր ձայնով կը կանչէր.

— Ո՞ւր ես, Արդարութիւն:

Արդարութիւն չկար: Ո՛չ կ'երեւէր, ո՛չ ալ ձայն կը հանէր:

Անօթի-ծարաւ, յոգնած, տրտում-տխուր թափառեցաւ խեղճ մարդը, սրտին վրայ սեղմած թանկարժէք սրուակը, որուն մէջի հեղուկը սկսած էր եռալ եւ տաքնալ:

Արդարութիւնը սակայն չխղճաց անոր ալ: Ո՛չ երեւաց, ո՛չ ալ իր գոյութիւնը յայտնեց:

Վերջապէս, երբ յուսաբեկ եւ ուժասպառ հասած էր լեռան կատարին, նստաւ ծառի մը վրայ եւ սկսաւ մտածել, թէ ի զուր էր Արդարութիւնը որոնելը, բան մը, որ ան նոյնիսկ թշուառէն կը խուսափէր:

Եւ երբ այդպէս մտածեց, բարկացած հանեց ծոցի սրուակը ու գարկաւ ծառին:

— Գնա՛, ոչնչացի՛ր,— գոչեց ան,— ի զուր են բոլոր վիշտերն ու արցունքները: Արդարութիւնը թշուառը չի սիրեր:

Բայց հագիւ թէ սրուակը փշրուած էր, լսուեցաւ ահեղ որոտում մը: Հոսած արցունքներէն թանձր ծուխ բարձրացաւ, փրփրած ոլորուեցաւ եւ անոր մէջէն ահաբեկ թշուառին առջեւ դուրս ցցուեցաւ ահեղ հսկայ մը:

Թշուառ անձը սարսափահար ինկաւ երեսի վրայ:

— Ելի՛ր,— կանչեց հսկան մեծաձայն,— ելի՛ր եւ մի՛ վախնար:

— Ո՞վ ես դուն, ահեղ ոգի,— հարցուց թշուառը:



— Ե՞ս,— գոչեց հսկան բարձրաձայն,— ես բողոքն եմ, որ ծնայ այն թափած արցունքներէն եւ որ աշխարհ պիտի բերեմ անյայտացած Արդարութիւնը ու տե՛ս...:

Ապա, արշալոյսի կարմրորակ լոյսի մէջ ցցուեցաւ հսկային վեհ հասակը՝ դարձած դէպի բարձրութիւնները, ուր սկսած էր փոթորիկ մը եւ ուր գետինն ամբողջ կը դողար դղրդիւնով:

Եւ հեռուն, հսկային պարզած ձեռքին կողմը, կոյտ մը մաքուր ամպերու բարձունքէն երեւան եկաւ թաքնուած Արդարութիւնը, խորունկ, տխուր հայեացքով, առանց կշիռքի, առանց մեծ սուրի, որոնք նկարուած կ'ըլլային Արդարութիւնը խորհրդանշող դիցուհիով՝ աչքերը կապած, մէկ ձեռքով սուր եւ միւս ձեռքով կշիռք բռնած:

— Ե՛կ, Արդարութիւն,— կանչեց Բողոքը,— ես ծնած եմ եւ իմ ձայնը թող քեզի համար կշիռք եւ սուր դառնայ: Ե՛կ, Արդարութիւն:

Բայց Արդարութիւնը անշարժ ու տխուր նայեցաւ անոր, նայեցաւ թշուառին եւ ըսաւ.

— Դեռ ո՛չ... դեռ դուն փոքր ես, գնա՛, քալէ՛, կուտակէ՛ արցունք, կուտակէ՛ վիշտեր, մեծցի՛ր ովկիանի նման, կատղի՛ր որպէս հեղեղատ, եւ այն ժամանակ միայն ես կու գամ իմ սուրով, իմ կշիռքով:

Ապա ամպը սահեցաւ եւ Արդարութիւնը նորէն անհետացաւ իր անմատչելի բարձրութեան մէջ...:

Այդ օրուրնէ ի վեր, պատերազմիկ զօրեղը արիւնի մէջ կ'որոնէ Արդարութիւնը, հարուստը՝ ոսկիի, եւ թշուառը, անզօրը, նստած իր վիշտերուն մօտ, արցունքներով կը մեծցնէ Բողոքը, որ ան վերակոչէ աշխարհի մէջ կորսուած Արդարութիւնը:

Հայ ժողովուրդը, պատմական օրերէն ի վեր, մանաւանդ Հայոց Ցեղասպանութեան թուականէն ի վեր, փնտռելու ելած է Արդարութիւնը, որպէսզի ան գայ իր կշիռքով եւ սուրով տէր կանգնի հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն, եւ որպէս բողոք՝ հայ ժողովուրդի ձայնը լսելի դարձնէ միջազգային դատարաններուն եւ Արդարութեան ատեաններուն, վերջ դնելով հզօր պետութիւններու ճնշումներուն եւ արինահեղութիւններուն՝ հայ ժողովուրդին եւ տկար ժողովուրդներուն վրայ:

Արդարութի՛ւն, քեզ կը սպասենք՝ մեր բողոքի ցոյցերով եւ պահանջատիրական անխախտ կամքով:



## ՊԱՏՈՒԱԽՆԴԻՐ ԵՒ ԲԱԶ ՍԱՍՈՒՆՑԻՆ

«Օգնութի՛ւն, օգնութի՛ւն, հայ քրիստոնեաներ, օգնութի՛ւն...», – սրտաճմլիկ աղերսանքով եւ լացով կը պոռար երիտասարդ եւ գեղեցկադէմ հայ աղջիկ մը, զոր թուրք ոստիկան մը առեւանգելով, հեծցուցած էր ձիաքարչ կառք մը եւ կը տանէր, կառքին մէջ հանդիպելով հայ աղջկան ընդդիմութեան եւ ինքնապաշտպանութեան, որ իր բոլոր կարողութիւնները ի գործ կը դնէր խոյս տալու համար թուրք գահանի ճիրաններէն:

Դէպքը կը պատահէր Կիլիկիոյ քաղաքներէն Քիլիսի մէջ, 1920-ի Յունիս ամսուան 24-ին, Կիլիկիան ազատագրած հայ լեզէոնականներու եւ Ֆրանսական բանակներու տիրապետութեան շրջանին եւ քեմալական ոստիկանութեան ներկայութեան, որ Ֆրանսական բարձր հրամանատարութեան կողմէ յատուկ արտօնութեամբ կը գտնուէր հոն՝ հսկելու համար ներքին ապահովութեան:

Թուրք կառապանը կարելի արագութեամբ կառքը կը քշէր Քիլիսի գլխաւոր պողոտայէն, առանց ազդուելու հայ աղջկան լացուկոծերէն, ենթարկուելով թուրք ոստիկանին հրամանին եւ իրեն տալիք բացառիկ նուէրին:

Կառքը կ'անցնէր հայ եւ թուրք անցորդներու անտարբեր նայուածքներուն առջեւէն: Թուրք անցորդը ուրախ էր, որ թուրք ոստիկան մը հայ աղջկայ մը տէր կ'ըլլար, իսկ հայը անզօր զգացումներով կը ցաւէր, անիծելով հայու դժբախտ ճակատագիրը, իր պապենական հողին վրայ իր կեանքը եւ պատիւը չկարենալ պաշտպանելուն համար:

Այդ միջոցին, յանդուգն ու պատուախնդիր հայ մը վազելով կառքին ետեւէն՝ կը հասնի կառքին եւ թուրք ոստիկանին հարուած մը տալով կը տապալէ զայն եւ հայ աղջկան կը պատուիրէ, որ արագօրէն հեռանայ եւ ազատի թուրք ճիւղին ձեռքէն:

Կառքին մէջ մենամարտը կը շարունակուի: Մինչ այդ Ֆրանսական բանակի ոստիկանական ջոկատ մը կը հասնի եւ հայ աղջիկը ազատող հայը կը տանի Ֆրանսական ոստիկանատուն:

Ոստիկանատան մէջ Ֆրանսացի սպան հայ թարգմանի միջոցաւ կը կազմէ յատուկ տեղեկագիր պատահած ազգամիջեան դէպքին մասին, անշուշտ արդարացնելով հայ երիտասարդին արարքը, դատապարտելով թուրքին հակամարդկային եւ վայրենի վերաբերմունքը՝

բռնութեամբ տիրանալու հայ աղջկայ մը, այդ ալ կարգապահութեան եւ օրինակութեան պաշտպանութեան կոչուած թուրք ոստիկանի մը կողմէ: Փրանսացի սպան, գնահատելով հայ երիտասարդին քաջութիւնը, իր կազմած տեղեկագրին որպէս յաւելուած՝ կը հետաքրքրուի անոր ինքնութեամբ:

Երիտասարդ հայը իր անուն-մականունը տալէ ետք՝ կ'ըսէ. «Ես ծնած եմ Սասնոյ Տալուորիկ շրջանի Սպաղանք գիւղին մէջ 1892-ին: Մեր գիւղը եղած է թուրք կառավարութեան անարդարութիւններուն դէմ կռուող եւ ըմբոստ ֆետայիներու կեդրոն մը՝ պաշտպանելու համար հայ ժողովուրդի պատիւը եւ ազատ ապրելու աստուածային իրաւունքը: Իմ ազգականներս՝ հայդուկներ Մակար, Գալէ, Ակէ եւ այլ հերոսներ, Սասնոյ անառիկ լեռներուն վրայ ապրելով, յաճախակի կռիւներ ունեցան թուրք եւ քիւրտ թշնամիներուն դէմ եւ երկու անգամ Սասնոյ ժողովուրդը ապստամբեցաւ օսմանեան թուրք բռնակալութեան դէմ՝ յանուն ազատութեան եւ քրիստոնեայ սկզբունքներու պատշպանութեան: Մեր պատմութիւնը հազարաւոր տարիներէ ի վեր արձանագրած է հայու կրօնը, ինչքն ու պատիւը պաշտպանելու համար կատարուած կռիւները:

1915-էն սկսած, հայ ժողովուրդի Յեղասպանութենէն մէկ տարի առաջ՝ 1914-ի գարնան, հայրենի տունս եւ ընտանիքս ձգելով, հազար նեղութիւններէ անցնելով հասայ Կիլիկիա եւ ծանօթացայ Քիլիսի մէջ տունուտեղ եղած սասունցի հայրենակիցներուս, որոնք ջաղացպանութեամբ կը զբաղէին: Իրենց մօտ գործ գտայ եւ խաղաղ կեանք մը ապրեցայ մինչեւ Համաշխարհային Առաջին Պատերազմին սկիզբը եւ թուրքիոյ մասնակցութիւնը պատերազմին՝ Գերմանիոյ կողքին:

Եւ գործադրուեցաւ Թուրքիոյ Երիտասարդ Թուրքերու կողմէ ծրագրուած հայ ժողովուրդի Յեղասպանութիւնը: Արեւմտեան Հայաստանը պարպուեցաւ եւ հայ ժողովուրդը աքսորուեցաւ դէպի անծանօթ երկիրներ, ճամբու ընթացքին ջարդուելով եւ անսուղ, անօթի-ծարաւ մեռնելով, որոնց խլեակները հասան Տէր Զօր, Մասքանէ եւ սուրիական անապատները...:

Այդ շրջանին, շունի հոտառութիւն ունեցող թուրք ոստիկաններ, որպէս զինուորութենէ փախստական, բազմաթիւ անգամներ ձերբակալեցին զիս, սակայն ամէն անգամ քաջութեամբ եւ հնարամտութեամբ փախուստ տուի եւ ապրեցայ սասունցի ջաղացպաններու մօտ, որոնք աքսորէ ազատ կացուցուած էին:

Միշտ միջոցները կը գտնէի վերադառնալ Քիլիսի՝ ջաղացպան հայրենակիցներուս մօտ աշխատելու:

Ամուրի եւ առանձին էի, հայրենակիցներս յանձնարարեցին եւ ստիպեցին, որ անպայման ամուսնանամ եւ տուն-տեղ ըլլամ: 1917-ի սկիզբները, երբ թրքական բանակները արդէն իսկ սկսած էին իրենց նահանջը արաբական երկիրներէն, մանաւանդ Արարայի ճակատա-

մարտին հայ կամաւոր լեգէոնականներու ճնշումին տակ, ամուսնացայ Կիլիկիոյ Պեհեսնի զիւղաքաղաքէն տարագրուած, 18 տարեկանին այրի մնացած, ամուսինը թուրքերու կողմէ զինուորագրուած եւ սպաննուած Մարիամ անունով կնկայ մը հետ: Այժմ ունիմ իմ սեփական տունս եւ հայր եմ հիանալի աղջկայ մը, որուն անունը գրինք Սիրանոյշ»:

Ֆրանսացի սպան զարմանալի հետաքրքրութեամբ եւ համբերութեամբ մտիկ ընելէ ետք, ազատ արձակեց պատուախնդիր եւ ազգասէր սասունցին, որ իր շնորհակալութիւնը յայտնեց Ֆրանսացի սպային՝ մաղթելով, որ Ֆրանսա Կիլիկիոյ հոգատարութիւնը ստանձնէ եւ օգնէ Կիլիկիոյ հայկական պետութեան վերակազմութեան:

Սասունցի երիտասարդը ոստիկանատունէն հագիւ զուրս ելած, թուրք ոստիկանը, որ գրինք կը սպասէր, մօտենալով ըսաւ, թէ թուրք ոստիկանապետը գրինք կ'ուզէր տեսնել:

Ոստիկանատունը կը գտնուէր նոյն շէնքին երկրորդ յարկին վըրայ: Սասունցին միամտաբար հետեւեցաւ թուրք ոստիկանին եւ աստիճաններէն ելլելով՝ ներկայացաւ թուրք ոստիկանապետին:

Կատողած դէմքով թուրք ոստիկանապետը աչքերը խոշոր բանալով՝ հարցուց սասունցի երիտասարդին.

— Դուն ո՞վ ես, որ ձեռք կը բարձրացնես թուրք ոստիկանին եւ անոր ձեռքէն կը խլես իր սիրած աղջիկը: Ֆրանսացիներո՞ն կը վստահիս: Բայց գիտես, որ անոնց ներկայութիւնը այս հողերուն վրայ առժամեայ է եւ թուրք բանակը շուտով Աթաթիւրքի ղեկավարութեամբ կրկին պիտի ազատագրէ այս հողերը արեւմտեան պետութիւններու դաշնակից բանակներէն եւ դուք, ողորմելի հայեր, վերջնականապէս պիտի աքսորուիք նաեւ կիլիկեան այս հողամասերէն: Դուք այս հողամասերուն վրայ ապրելու իրաւունք չունիք:

Ձայրացկոտ այս խօսքերը արտասանելէ ետք, թուրք սպան ոտքի կ'ելլէ եւ զօրաւոր ապտակ մը կ'իջեցնէ յանդուգն սասունցիի երեսին: Ապա, դառնալով թուրք ոստիկանին, կ'ըսէ.

— Ամօթ քեզի պէս թուրքին, որ երբ քու ձեռքէդ աղջիկ կը խլէր այս կեաւուրը, չկրցար հինգ մաթալիք արժող փամփուշտով մը գրինք սպաննել, ոչնչացնել, ինչպէս որ մաքրուեցան իր բոլոր հայրենակիցները թրքական հողերէն:

Դառնալով սասունցիին կ'ըսէ.

— Գնա՛, աղօթէ՛ Ֆրանսացիներուն, որոնց ներկայութիւնը պատճառ դարձաւ, որ այս վայրկեանին քեզ շան սատակ չընես: Շուտ հեռացի՛ր եւ քեզ անգամ մըն ալ չտեսնես: Եթէ այս երկրէն հեռանաս, կեանքդ փրկած կ'ըլլաս:

Այս դէպքէն շատ չանցած, Ֆրանսացիներ, անամօթաբար, իրենց շահերէն մղուած, գաղտագողի հեռացան Կիլիկիայէն եւ հոգատարութեան իրաւունք ստացան Սուրիոյ եւ Լիբանանի վրայ:

Ֆրանսացիներու Կիլիկիոյ պարպումէն ետք, Կիլիկիոյ հայութիւնը կրկին անգամ պանդխտութեան ցուպը ձեռք առաւ: Սասունցի ջաղացպան հերոսը ստիպուած ինքն ալ իր ընտանիքին հետ հեռացաւ Քիլիսէն, եւ շրջան մը սուրիական Ազէզ ականին մէջ ապրելէ ետք հաստատուեցաւ Հալէպ, նորէն տուն շինեց, զաւակներ ունեցաւ եւ որպէս հայրենասէր, պատուախնդիր եւ քաջ սասունցի, այս դէպքը պատմեց իր զաւակներուն, որպէսզի անոնք ոգեւորուին Սասնոյ ազատատենչ ֆետայիներու մղած պայքարներէն եւ քաջագործութիւններէն, եւ ապրին իրենց ազգային ու ցեղային հպարտութեամբ՝ որպէս հայրենասէր, ազգասէր եւ կրօնասէր հայ քրիստոնեաներ:



Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեանի հետ՝ Արցախ այցելութեան ճամբուն վրայ

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ

Իմ մանկուլթեանս շրջանին, Հալէպի Նոր Գիւղ արուարձանին մէջ ապրող հայ ընտանիքները, իրենց տուններուն մէջ բաղնիք չունենալով, լոգնալու յարմարութիւն չունէին: Շատ դժուար էր բազմանդամ ընտանիքի մը բաւարար ջուր տաքցնել խոհանոցին մէջ, նոյնիսկ ձմեռուան ցուրտին, որոշ յարմարութիւն ստեղծելով, ընդհանրապէս տաշտի մը մէջ նստած կամ կեցած լոգնալ, շարքով, նախ փոքրերը, յետոյ՝ մեծերը:

Գլխաւոր լուծումը այս տառապալից կացութեան հանրային բաղնիքներ երթալն էր: Բարեբախտաբար, գործաւոր մարդիկ ժամանակի ընթացքին շինած էին հանրային երկու բաղնիքներ, մէկը՝ առաջինը, Հալէպի «Վերժին Կիւլպէնկեան» մայրանոցի մօտակայ թաղի մը մէջ, երկրորդը, որ «Քէյվանեան» բաղնիք կը կոչուէր, գէյթունցիներու թաղամասին մօտ:

Հալէպի բոլոր հանրային բաղնիքները ցերեկը կիներուն յատկացուած կ'ըլլային, իսկ գիշերը՝ այրերուն, ի բացառեալ, իմ կարծիքով, ներսի շուկայի շրջանին մէջ գտնուող «Ղաուաս» կոչուող բաղնիքը, որ միշտ մաքուր եւ ներկայանալի էր, օրը 24 ժամ այրերուն յատկացուած ըլլալով:

Հալէպի հայութիւնը մեծամասնութեամբ կազմուած էր Յեղասպանութենէն հրաշքով եւ ճարպիկութեամբ ազատած բեկորներէ: Անոնցմէ շատեր արաբական թաղերու մէջ գտնուող ընդարձակ բակով եւ բազմաթիւ սենեակներէ բաղկացած տուններ վարձած էին, որոնք կը բնակուէին հայ քանի մը ընտանիքներու կողմէ, իսկ ժողովուրդին մեծ մասը տախտակաշէն եւ թիթեղածածկ տուններ կառուցած էր Հալէպի Համիտիյէ եւ Սիւլէմանիյէ շրջաններուն մէջ:

Հօրս եւ մօրս վկայութեամբ, ես ծնած եմ 5 Օգոստոս 1927-ին, Համիտիյէ շրջանին մէջ, հօրս շինած խրճիթին մէջ:

Ապագային, երբ քիչ-շատ խելահաս դարձայ, ակնատես եղայ վերոյիշեալ երկու շրջաններուն մէջ ապրող հայութեան տառապանքներուն, մանաւանդ ձմեռուան կծու ցուրտին: Կը յիշեմ Համիտիյէ շրջանին մէջ գոյութիւն ունեցող, մարաշցի հայերուն կողմէ շինուած Ս. Գէորգ հայաստանեայց առաքելական եկեղեցին եւ Մեսրոպեան ազգային վարժարանը:

Իմ ծննդավայրիս տեղը հայրս ցոյց տուաւ, որովհետեւ հայրս եղած էր առաջիններէն, որ քանդելով Համիտիյէի տունը, քանի մը սենեակներով եւ բակով տուն մը շինած էր Նոր Գիւղի մէջ, ընդհան-

րապէս գործածելով հողէ պատրաստուած աղիւսներ, մօրս եւ սասունցի կարգ մը հայրենակիցներու օգնութեամբ:

Պետութեան ստիպումով եւ Ազգային Առաջնորդարանի միջնորդութեամբ, զնուած հողերուն վրայ տուններ շինուեցան Համիտիյէ եւ Սիւլէյմանիյէ շրջաններու մէջ գտնուող թիթեղեայ խրճիթներու բնակչութեան կողմէ:

Տարուէ տարի բազմացող բնակչութեան կարիքներուն ընթացք տալով, շինուեցան եկեղեցիներ՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Գէորգ, ինչպէս նաեւ դպրոցներ՝ Սահակեան, Մեսրոպեան, Զաւարեան, Արմէնեան եւ աւելի ուշ՝ Քարէն Եփփէ ճեմարան: Իսկ քաղաքի շրջանին մէջ արդէն գոյութիւն ունէին Ս. Քառասնից Մանկանց եւ Ս. Աստուածածին եկեղեցիները, ինչպէս նաեւ Հայկազեան, Կրթասիրաց եւ Ուսումնասիրաց վարժարանները:

Նոր Գիւղի շրջանի հայերը, իրենց աշխատասիրութեան շնորհիւ, ժամանակի ընթացքին կազմեցին հայրենակցական, ազգային, կուսակցական, մշակութային եւ բարեսիրական միութիւններ, միշտ յիշելով Եղեռնի տարիներուն զոհուած իրենց հարազատները եւ իրենց կորսնցուցած բնակավայրերը:

Բաղնիք երթալու սովորութիւնը տեղի կ'ունենար ամիսը 1-2 անգամ, երբեմն՝ ամէն շաբաթ, նայած ենթականերուն նիւթական վիճակին:

Մայրեր, մինչեւ որոշ տարիքի մը, իրենց մանչ զաւակները իրենց հետ բաղնիք կը տանէին, թէեւ շատ մը պահպանողական կիներ կը դժգոհէին անոնց ներկայութենէն:

Ես եւ ինձմէ երեք տարի փոքր եղբայրս յաճախ մօրս կ'ընկերանայինք: 1934-ին եօթը տարեկան էի եւ մինչեւ այսօր կը յիշեմ բաղնիքի կիներուն մերկութիւնները եւ շարժումները, մանաւանդ տիգրանակերտցի կիներուն խրախճանքները, չիյ ֆեօֆթա շաղկիով, ուտելով, զանազան աղանդերներու ընկերակցութեամբ օղի ալ կը խմէին եւ երգելով ուրախ մթնոլորտ ստեղծելով, նոյնիսկ պարելով, բաղնիքը կը վերածէին հարսանեկան մթնոլորտի:

Այդպիսի օր մը, երբ շատ մօտէն այդ կիներուն խրախճանքը կը դիտէի, համարձակ կիւն մը մօտեցաւ ինձի եւ ականջս քաշելով հարցուց, թէ ինչո՞ւ գիրենք կը դիտեմ: Իմ աղեխարշ լացս լսելով, մայրս հասաւ եւ սկսաւ վիճաբանիլ ականջս քաշող կնոջ հետ:

Կիներ զայրացկոտ կ'ըսէր.

— Ինչո՞ւ այս հասուն տղան հետդ բաղնիք բերած ես, որ եկած ուշի-ուշով մեզ կը դիտէ:

Մայրս որպէս արդարացում իմ անմեղութեան՝ ըսաւ.

— Սակայն ի՞նչ կ'ըլլայ մատ մը չոճուխի նայելէն, անոր հետաքրքրութիւնը ձեր խրախճանքն է:

Կիներ աւելի զայրացած ըսաւ.

— Պիրէ քոյրիկ, տղադ չոճուխ կը կարծես, եթէ ամուսնացնես, ոչ չ'ըսեր:

Ստեղծուած իրարանցումին հետեւանքով, ուրիշ կիներ միջամուխ եղան տեղի ունեցող վիճաբանութիւններուն եւ աշխատեցան մթնոլորտը հանդարտեցնել:

Այդ թուականէն ետք մայրս դադրեցուց զիս իր հետ բաղնիք տանելէ, այդ պարտականութիւնը հօրս յանձնելով: Որպէս այր մարդ սկսայ հօրս հետ գիշերները բաղնիք երթալ կամ մայրս զիս տունը կը լողցնէր, մանաւանդ ամառուան եղանակին, որպէսզի պաղ չառնեմ եւ չհիւանդանամ:

\* \* \*

Հայրս, Սասնոյ Տալուորիկի շրջանի Սպաղանք գիւղին մէջ ծնած ու մեծցած է, ծանօթ ֆետայիներ Գալէի եւ խմբապետ Ակէի հօրեղբօր զաւակը, Սպաղանաց Մակարի ազգականը եւ սանը, որոնց շունչին տակ մեծնալով ինքն ալ իր կարգին մասնակցած կարգ մը կռիւներու, իսկ լողալը իրեն սորվեցուցած է ֆետայի Անդրանիկ, յետագային՝ Զօրավար Անդրանիկ:

Գիւղացի հայրս Եղեռնի տարիներուն բազմաթիւ անգամներ ձերբակալուած է թուրք զինուորներու կողմէ, սակայն միշտ կրցած է փախչիլ եւ հալածական ապրիլ մինչեւ զինադադար:

Ամուսնացած, հինգ զաւակներու հայր, բազմաթիւ արհեստներ կիրարկելով, կրցած է իր զաւակներուն ապրուստը եւ դպրոցական ծախսերը հոգալ: Սակայն, ինչպէս կ'ըսէ առածը, «Եթէ արհեստէն չես հասկնար, անպայման կը սնանկանաս»: Եւ փորձելով մուշապալաֆ շինել, թան ծախել, մսավաճառութիւն ընել եւայլն, որոնց հետեւանքը կ'ըլլար սնանկութիւն:

Վերջիվերջոյ կը մտածէ առեւտուրով զբաղիլ, մանաւանդ Ամերիկայէն ներածուած պալիւաներու գործածուած եւ նորոգուած ժաֆէթներ, վերարկուներ, տաբատներ եւայլն առնել եւ ծախել: Սակայն բաւական մեծ դրամագլուխի պէտքը կը զգայ: Կարգ մը բարեկամներու կը դիմէ, սակայն անօգուտ:

Հայրս, յուսահատած, կը ծախէ իր եւ մօրս ջանքերով շինուած Նոր Գիւղի առաջին թաղամասին սկիզբը գտնուող իր սեփական տունը, եւ ծախած տունէն երեք թաղ անդին տուն մը կը վարձէ, որպէսզի թէ՛ Սահակեան վարժարանին, ուր կ'աշակերտէինք, թէ՛ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մօտ ըլլայինք:

Հայրս Հալէպի Խան Հաճի Մուսային մէջ իրեն յարմար խանութ մը չգտնելով, կ'որոշէ Հալէպէն 45 քիլոմետր դէպի հիւսիս, թրքական սահմանին մօտ գտնուող Ազէզ գիւղաքաղաքը փոխադրուիլ, ուր կը բնակէին մեր կնքահայրին ընտանիքը, բազմաթիւ սասունցի ընտանիքներ եւ այդ օրերուն շուրջ տասը հազար հայեր, ինչպէս նաեւ մեծ



թիւով արաբներ եւ քիւրտեր, որոնք ունէին իրենց շրջանները: Տուները ընդհանրապէս շինուած էին հողային աղիւսներով, անշուշտ գոյութիւն ունէին քարաշէն տուներ, յատկապէս պետական հաստատութիւնները եւ կառավարական շէնքերը:

Այդ օրերուն Ազգէի մէջ գոյութիւն ունէին Հայկական վարժարան եւ Հայաստանեայց առաքելական եկեղեցի, որուն հոգեւոր հովիւն էր արժանապատիւ Սահակ Աւագ Քահանայ Պալեան:

Հայրս Ազգէի ամէնէն բանուկ շուկային մէջ կրցած էր խանութ մը վարձել եւ Հալէպէն պալիաներ բերելով կը ծախէր տեղւոյն յաճախորդներուն եւ մանաւանդ թուրք ու քիւրտ մաքսանենդներուն, որոնք թուրքիայէն կու գային եւ իրենց նախընտրած ապրանքները գնելով, անօրէն կերպով սահմանը անցընելով՝ թուրքիոյ մէջ կը ծախէին այդ ապրանքները:

Հայրս մեր կնքահայրին մօտ տուն մը վարձած էր: Ամբողջ շաբաթը հոն կը մնար եւ շաբաթավերջին Հալէպ կ'իջնէր՝ թէ՛ ընտանիքը տեսնելու, թէ՛ կարգ մը ապսպրուած ապրանքներ Ազգէ տանելու:

1935-ի ամառը, այսինքն դպրոցական մեր արձակուրդին, Հայրս կ'որոշէ որպէս օգափոխութիւն Ազգէ բերել իր ընտանիքը:

Ազգէի մէջ ալ տուններ բաղնիք չունէին: Ընտանիքի անդամները կարգով խոհանոցին, տունին կամ լուացարանին մէջ կը լողնային, փայտով, ածուխով կամ կաթօճախով տաքցուած ջուրով: Սակայն վերոյիշեալ դժուարութիւններէն խուսափելու համար երբեմն բաղնիք կ'երթային, այր մարդիկ՝ գիշերը, կիները՝ ցերեկը:

Ինչպէս Հալէպի մէջ մօրս ձեռքէն բռնած, երբեմն փոխնորդներ պարունակող պողջան շալկած բաղնիք կ'երթայի, նոյնպէս Ազգէի մէջ ալ մօրս հետ բաղնիք կ'երթայի, որպէսզի տաքցուած պորտաքարերու վրայ նստելով եւ քրտնելով մարմնի ծակտիկները բացուէին, եւ քէսայով շփուելէ ետք, հիմնական մաքրութեան ենթարկուէի: Այնուհետեւ, սենեակներու մէջ հաստատուած գուռերու (նուրուն) շուրջ նստելով՝ տաք ու գաղջ ջուրով կը լողնայինք, մեր գլուխները ծածկուած կաւով եւ դար օճառով, իսկ մարմինը՝ այլազան օճառներով:

Ամառուան շրջանին Ազգէի բաղնիք մեր այցելութիւնները ընդհանրապէս հաճելի կ'ընթանային եւ ամէն անգամ մեր թուշերը կարմրած տուն կու գայինք՝ ուրախացնելով Հայրս:

Բաղնիքի այդ օրերէն մէկուն, բաղնիքը լեցուած էր բացառիկ բազմութեամբ: Ամէն մարդ կ'աշխատէր իր հարազատներուն հետ գուռի մը շուրջ հաւաքուելու եւ իրարօգնութեամբ լողնալ: Սակայն պարապ գուռ չգտնելով՝ անախորժութիւններու կը դիմէին: Զօրաւորը կ'ուզէր իր կամքը պարտադրել տկարին:

Մայրս եւ կնքամայրս զիս լողցուցած էին եւ սկսած էին իրենք ալ լողնալ: Ես լողարանէն դուրս ելայ, որպէսզի դիտեմ մարդկային այլազան դէմքերն ու մերկութիւնները:

Յանկարծ արաբ եւ քիւրտ երկու կիներ, գրեթէ մերկ, կը վիճէին պոռչտուքով եւ աղաղակներով, ապա տեղի ունեցաւ ըմբշամարտ եւ մազ փետտուք: Ներկաները կռուողները բաժնելու համարձակութիւն չէին ունենար: Կռիւր սկսած էր ջուրի գուռը գործածելու առաջնահերթութիւն ապահովելու համար:


Կռիւր թէժ պահուն, կռուող կիներէն մէկը, կատաղութենէն ինքնզինք կորսնցուցած, ջուրէ պարպուած հաստ մետաղեայ դոյլը նետեց հակառակորդին ուղղութեամբ, սակայն հակառակորդը ճարպիկութեամբ մէկ կողմ քաշուեցաւ եւ դոյլը եկաւ եւ հարուածեց աջ ոտքս, բաւական խոր վէրք մը բանալով ծունկէս շուրջ 10-12 սանթիմետր վար, պատճառ դառնալով անտանելի ցաւի եւ արիւնահոսութեան, սարսափի մատնելով մայրս, կնքամայրս եւ ներկայ հայ կիները:

Բաղնիքին մէջ տեղի ունեցող իրարանցումը լսելով, բաղնեպան կիները օգնութեան հասան եւ արաբական տնային բժշկական միջոցներով փորձեցին կեցնել հոսող արիւնը՝ միշտ մխիթարելով զիս եւ մայրս:

Գիտէինք, որ ոստիկանութեան դիմելը ապարդիւն պիտի ըլլար: Մայրս լալով՝ զիս շալկած տուն բերաւ: Յաջորդ օր բժիշկի դիմելով՝ ցաւը մեղմացնող եւ բուժող դեղեր գնեցինք եւ սկսանք գործածել: Ամբողջ ամառը անտանելի ցաւերով անցուցի:

Բարեբախտաբար, ներկայիս հայ ընտանիքները իրենց բնակարաններուն մէջ ունին արդիական բաղնիքներ եւ պարտաւորուած չեն հանրային բաղնիքներ երթալու: Մինչեւ այսօր, եօթնասունէ աւելի տարիներ ետք, երբ կը դիտեմ ոտքիս վրայ տակաւին յամեցող սպին, կը յիշեմ Ազգեի բաղնիքին կիներու կռիւր եւ այդ օրերու իմ տառապանքներս:

Ներկայիս, հակառակ մեր տան մէջ գտնուող արդիական բաղնիքին, մանկութիւնս յիշելով, կարօտով կը յիշեմ եւ կը փնտռեմ Հալէպի՝ իմ ծննդավայրիս բաղնիքները եւ անոնց ախորժեկի բուրմունքը եւ կատարուող սպասարկութիւնները:



## ԱՐԱԲԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ

Ուրֆան եղած է Մերձաւոր Արեւելքի ամենահին քաղաքներէն մէկը: Այս քաղաքը անյիշատակ ժամանակներէ ի վեր կը կոչուէր Ուռհա, որ թուրքերու պետութեան տակ վերածուեցաւ Ուրֆայի: Սկզբնական շրջանին, Մեծն Աղեքսանդրի արշաւանքէն յետոյ (Ն.Ք. 300 թուականին) քաղաքին անունը դարձած է Եդեսէ կամ Եդեսիա:

Ուրֆան դարերու ընթացքին եղած է քաղաքակրթութեան եւ գիտութեան օճախ մը: 1915-ին Ուրֆայի մէջ կը բնակէին շուրջ 30.000 հայեր:

Մերձաւոր Արեւելքի այս պատմական քաղաքը ծանօթ եղած է իր թէ՛ փոթորկայոյց անցեալով եւ թէ՛ հայկականութեամբ: Ուրֆայի շրջանը եղած է քրիստոնէութեան առաջին օրրանը: Աբգար Ե.-ի եւ Ս. Դաստարակի աւանդութեան մէջէն, իբրեւ պատմական իրողութիւն կը ներկայանայ առաքեալներէն Ս. Թադէոսի Ուրֆա այցելութիւնը եւ այնտեղ աշխարհի հնագոյն եկեղեցիին հիմնադրութիւնը՝ անոր իսկ ձեռքերով: Հայ եկեղեցականութեան մեծագոյն դէմքերը, Խորենացիէն մինչեւ Շնորհալի, Ուրֆայէն քաղած են իրենց գործերուն համար անհրաժեշտ ատաղձը: Իսկ հայ գիրերու գիւտին կապակցութիւնը Ուրֆայի հետ՝ արդէն իսկ փաստուած իրողութիւն է:

Արեւելեան եկեղեցիներու առաջին սուրբերը, ճգնաւորները, տեսաբանները եւ ուսուցիչները ապրած են Ուրֆայի մէջ եւ իրենց նահատակութեամբ քրիստոնէական գաղափարախօսութեան ճամբան հարթած են:

Հայոց Մեծն Տիգրան արքայէն մինչեւ Արտաշէս թագաւորը՝ պարբերաբար իշխած են Ուրֆայի վրայ, իսկ միջին դարերէն մինչեւ օսմանցիներու յայտնութեան շրջանը, բազմաթիւ հայ իշխաններ եւ զօրականներ իրենց տիրապետութիւնը հաստատած են անոր ամրակուռ բերդերուն վրայ:

Ուրֆայի նշանաւոր եկեղեցիներէն եւ վանքերէն են Ս. Աստուածածին եկեղեցին, որ շինուած է Թադէոս Առաքեալի կողմէ եւ Ս. Սարգիս վանքը, որ շինուած է լեւան մը ստորոտին:

Ուրֆայի հայ ժողովուրդը դարերով ապրած է ներդաշնակ կեանքով եւ հայկական աւանդութիւններով ու սովորութիւններով: Թէեւ պատմութեան ընթացքին ենթարկուելով թրքական տիրապետութեան, 1637-էն սկսեալ համեմատական եւ ժամանակաւոր խաղաղութիւն տիրեց շարունակական կռիւներէն ու ժասպառ եղած քաղաքին մէջ: Այդ շրջանին է, որ մինչեւ 1850 թուականը, բազմաթիւ հայեր,

մասնաւորաբար Սասնոյ, Վանի եւ Մալաթիոյ կողմերէն եւ փոքրաթիւ հայեր ալ Պարսկաստանէն գալով՝ Ուրֆայի մէջ բնակութիւն հաստատեցին:

1895-ի համիտեան կոտորածներէն ետք, շրջան մը, մինչեւ 1915, Ուրֆայի հայութիւնը ապրեցաւ ազգային զարթօնքի մթնոլորտի մէջ, ուր հասակ կը նետեն Ուրֆայի ապագայ հերոսները: Սերմերը կը նետուին 1915-ի հունձքին համար:

1915-ին կը սկսի թրքական պետութեան կողմէ ծրագրուած Հայոց Յեղասպանութիւնը: Ամբողջ Արեւմտեան Հայաստանը կը պարպուի իր բնիկ բնակիչներէն, որոնք աքսորի ճամբաներուն վրայ անօթի-ծարաւ քայլելով, միշտ ենթարկուելով վայրագ քիւրտերու, թուրքերու եւ չէչէններու կողոպուտներուն եւ սպանութիւններուն, մինչեւ սուրիական անապատները՝ Տէր Զօր, Մասքանէ, Ռագգա, Մարկատէ եւ այլ վայրեր, կ'ենթարկուին ոչնչացման:

Թէեւ արեւմտեան կարգ մը քաղաքներու մէջ տեղի կ'ունենան ինքնապաշտպանական կռիւներ, ինչպէս՝ Վանի, Սասունի, Շապին Գարահիսարի, Ուրֆայի, Այնթապի, Հաճընի եւ այլ վայրերու մէջ, որոնց շնորհիւ կը փրկուին մեծ թիւով հայեր ստոյգ ջարդերէ:

Ուրֆայի հայութիւնը, ղեկավարութեամբ Մկրտիչ Եօթնեղբայրեանի եւ եղբօր՝ Սագոյի, Յարութիւն Ռասկէլէնեանի, Լեւոն Չերչեանի, Գէորգ Ալահայտոյեանի, Օրիորդ Քէթէնճեանի եւ այլ հերոսներու, կը կերտեն Ուրֆայի պատմութեան ամէնէն շքեղ թուականներէն մէկը 1915-ին, երբ մեր հայրենակիցները իրենց դիւցազնական խոյանքներով պիտի փրկէին ցեղին պատիւը ու զբաւէին հայոց պատմութեան գեղեցկագոյն էջերէն մէկը:

1918-ի զինադադարէն ետք, Թուրքիոյ զանազան կողմերէն ցրուած ու հրաշքով ազատած ուրֆացիներ կը շտապեն Հալէպ հասնիլ, ու երբ անգլիացիներն ու ֆրանսացիները Ուրֆա կը մտնեն, մեր հայրենակիցներն ալ կը հետեւի անոնց, ժամ առաջ հասնելու համար իրենց ծննդավայրը:

Սակայն, մեծ պետութիւններու աւանդական հակամարտութիւններէն օգտուելով, թուրքերը կը ձեռնարկեն քեմալական շարժման եւ վերապրողները կը կեցնեն նոր վտանգի մը առջեւ:

1920-ին տեղի կ'ունենան Ուրֆայի փետրուարեան ֆրանք եւ թուրք կռիւները, որոնց ընթացքին մեր հայրենակիցները կրկին ի յայտ կը բերեն առնական կեցուածք, եւ երկու ամիս շարունակ իրենց դիրքերուն մէջ ամրացած՝ կուրծք կու տան թուրքերու բոլոր յարձակումներուն:

Կիլիկիայէն ֆրանսական բանակներու նահանջին հետեւանքով, Ուրֆայի հայութիւնը վերջնական կերպով Ուրֆան լքելով կ'ապաստանի Սուրիա եւ Լիբանան: Կը սկսի գաղութային կեանքը:

Ուրֆայի 30.000 հայութեան մէջ աչք զարնող ընտանիք մըն էր Սարգիսեան ընտանիքը: Սարգիս եւ Լուսիա Սարգիսեանները ունեցած էին ութ զաւակներ, վեց մանչ եւ երկու աղջիկ, որոնք կը կոչուէին Եղիա, Կարպիս, Յովհաննէս, Գրիգոր, Մկրտիչ, Յակոբ, Մարիամ եւ Խանըմ:

Ուրֆայի հերոսամարտին քաջաբար կռուելով կը նահատակուին ընտանիքին հայրը՝ Սարգիս եւ զաւակներէն՝ Կարպիսը, Յովհաննէսը եւ Գրիգորը: Երէջ զաւակը՝ Եղիա, պարտադիր զինուոր ըլլալով, Ուրֆա չէր գտնուեր:

Սարգիսեան եղբայրները ունէին մօրաքոյր մը, որ շատ հարուստ էր: Այնթապի ձեռագործ կ'աշխատցնէր հայ կիներուն եւ կ'արտածէր արտասահման:

Երբ տարագրուիլնը սկսաւ, մօրաքոյր Շամէլ, որ Սարգիսեան ընտանիքին հետ կ'ապրէր, իր ունեցած ոսկիները ջարդէն ազատած Յակոբին հագուստներուն մէջ կը կարէ եւ յատուկ կառք մը վարձելով կը հետեւի աքսորեալներուն: Սարգիսեան քոյրերը չգիմանալով ճամբու տառապանքներուն, կը հիւանդանան եւ կը մեռնին:

Աքսորեալները թուրք զինուորներու եւ սպաներու հսկողութեամբ կը հասնին Ռազգա: Ռազգայի մէջ կը մեռնի մօրաքոյր Շամէլ: Հինգ տարեկան փոքրիկն Յակոբ կը մնայ առանձին: Թուրք սպան լսելով, որ մեռնողը հարուստ կին մը եղած է, կը սկսի խուզարկութեան: Անոր ունեցած ապրանքներուն մէջ ան բան մը չգտնելով, կը քննէ նաեւ Յակոբին հագուստները եւ կը տիրանայ հոն կարուած ոսկիներուն:

Այդ շրջանին, շրջանի արաբ աշիրաթներէն Սուլթան աշիրաթի գլխաւորը կը տեսնէ անօգնական մնացած Յակոբը եւ տէր կ'ըլլայ անոր: Զեռքէն բռնած կը տանի տուն եւ պատիկը իր կնոջ ներկայացրելով կ'ըսէ.

— Խանո՛ւմ, ահաւասիկ քեզի բերի զաւակդ՝ Ահմատ Սուլթանը:

Արդարեւ, Սուլթան ընտանիքի զաւակներէն մէկը պարսատիկով թռչուն մը զարնելու ատեն քարը կը զարնէ իր փոքր եղբօր՝ Ահմատին, որուն մահը կ'ըլլայ վայրկեանական:

Սուլթան ընտանիքը Յակոբին, որ կոչուեցաւ Ահմատ Սուլթան, իրենց հարազատ զաւակին պէս կը նային: Մօտ մէկուկէս տարի յատուկ աննդարար կերակուրներ, մասնաւորաբար թոք կը կերցնեն, որպէսզի առողջուիլնը վերագտնէ:

Ուրֆայի ինքնապաշտպանական կռիւներէն վերջ, ամէնէն ցաւալին մանուկներու վիճակն էր: Նոր ծնած մանուկներէն մինչեւ տասը տարեկանները ձգուած էին իրենց բախտին: Աւելի մեծերը իրենց մայրերուն հետ կը բռնէին աքսորի ճամբան:

Միլէթ խանը եւ Չալոնց խանը լեցուած էին անհամար մանուկ-

ներով: Դահլիճները մտածեցին այդ մանուկները հաւաքել եւ անոնց-  
մէ «եէնիչէրի»-ներու նոր սերունդ պատրաստել:

Այդ օրերուն, Մկրտիչ Սարգիսեան, Յակոբ Սարգիսեանի մեծ եղ-  
բայրը, որ ազատած էր ջարդէն եւ որք մնացած էր, հիւանդ եւ սպա-  
ռած վիճակ մը ունենալով, խանին մէջէն ազգական մը զինք կը տանի  
եւ կը յանձնէ թուրք պաշտօնեայի մը, որ եկած էր անտէր մանուկները  
հաւաքելու:

Մկրտիչը կը տեղաւորուի Քիւլահեանենց տունը, ուր Ռազմիկ  
Պէկ կոչուած արիւնարբու գազանի մը տնօրէնութեան տակ բոլոր մա-  
նուկները ծեծի տակ կը սպաննուէին: Քառասուն տղոցմէ երկու շաբ-  
թուան ընթացքին կը մնան միայն չորս հոգի: Շուտով նոր տնօրէն մը  
կը նշանակուի, որուն գործը կ'ըլլայ հաւաքուած որբերը ամերիկեան  
նախկին հաստատութիւններուն մէջ ու մաս մըն ալ Ս. Սարգիս վանքը  
տեղաւորել:

Թուրք կառավարութիւնը ամէն գնով կը ջանար հաւաքուած որ-  
բերը թրքացնել:

Ժամանակ մը վերջ, որբերէն մաս մը տեղաւորեցին կառքերու  
մէջ եւ զրկեցին Սրուճ եւ անկէ՝ Իսլահիէ: Ապա՝ Շիրիի նախկին ֆրան-  
սական որբանոցը: Հոն հաւաքուած էին հինգ հարիւրէ աւելի թուրք  
եւ քիւրտ որբեր: Եկող հայ որբերը խառնեցին անոնց հետ: Հոն Մկր-  
տիչ ծանր կը հիւանդանայ: Կազդուրուելէ ետք, կը զրկուի Ատանայի  
որբանոցը, որ կը կրէր «Էնվէր Փաշա Տար էլ-Եէթիմ» անունը:

Օր մը, Էնվէր Փաշան Ատանա կու գայ եւ կ'այցելէ որբանոցը:  
Շարքի կեցած որբերուն մէջէն կը մօտենայ Մկրտիչին եւ կը հարցնէ  
անունն ու մականունը: Մկրտիչ կը բարեւէ եւ կ'ըսէ, որ Մոհամմէտ  
Նուրի կը կոչուի: Սակայն թուրք պաշտօնեան փաշային կը յայտնէ,  
որ ենթական թրքացած ուրֆացի որբ մըն է: Փաշան պաշտօնեային  
կ'ըսէ.

— Այս տղան Պոլիս զրկէ՛, պիտի որդեգրեմ:

Երկու օր վերջ, զինուորի մը օգնութեամբ, Մկրտիչ Պոլիս կը զըր-  
կուի եւ սպայի մը միջոցաւ Էնվէր Փաշայի պալատը կը տարուի:

Քանի մը օր վերջ Փաշան տուն կու գայ եւ Մկրտիչին կ'ըսէ.

— Տղա՛ս, որբանոցին մէջէն քեզ միայն գատեցի որպէս հոգեգա-  
լակ, այսօր իսկ քեզ պիտի տանին զինուորական վարժարան, պիտի  
աշխատիս, որ լաւ ուսում ստանաս եւ ապագային ծառայես թուրք  
հայրենիքիդ:

Նոյն օրը թուրք սպան Մկրտիչը կը տանի Հարպիէ դպրոցը: Հոն  
ժամանակ մը կը մնայ: Հայերէնը արդէն մոռցած էր: Որպէս հայ պիտի  
կորսուէր, եթէ զինազաղարը վրայ չհասնէր:

Քանի մը ամիս ետք Պոլիսէն կ'անցնի Հալէպ, յետոյ՝ Այնթապ,  
ապա՝ Ուրֆա: Հոն կը գտնէ իր մեծ եղբայրը՝ Եղիան:

Լսելով, որ փոքր եղբայրը կը գտնուի Ռազգայի գիւղերէն Համ-  
րայի մէջ, կը մեկնի Ռազգա: Հոնկէ՝ Համրա, ուր բաւական ժամանակ  
կը վատնուի փաստելու համար Յակոբին ինքնութիւնը: Ի վերջոյ, Յա-  
կոբին նոր հայրը՝ Շէյխ Հիւսէյն Սուլթան, հաստատելով փաստերուն  
ճշմարտութիւնը, բոլորովին արաբ դարձած Յակոբը կը յօժարի յանձ-  
նել Մկրտիչին:

Մկրտիչին մեծ եղբայրը՝ Եղիա, կը հաստատուի Արաբ Բունար,  
հոն խանութ բանալով իր ապրուստը կը հոգայ:

Մկրտիչ Ռազգայի մէջ խանութ կը բանայ Յակոբին հետ: Գոր-  
ծերը բաւական յաջող կ'ընթանան:

Քանի մը տարի միասին աշխատելէ ետք, Յակոբ կը բանայ իր  
անձնական խանութը: Երիտասարդ տարիքին կ'ամուսնանայ Հալէ-  
պէն Օր. Մարի Զապունեանի հետ եւ կը բախտաւորուին հինգ զաւակ-  
ներով՝ երեք մանչ եւ երկու աղջիկ:

Պրն. Յակոբ Սարգիսեանի առեւտրական գործը մեծ յաջողութիւն  
կ'արձանագրէ: Ան, իր անձնական գործերէն վերջ, հայերէն լեզուի  
դասեր կ'առնէ Օշական Քահանայի որդիէն՝ Կարօ Սայրեանէն եւ  
Ռազգայի դպրոցի ուսուցիչներէն: Ապագային կը ստանձնէ Ռազգա-  
յի ազգային վարժարանին եւ եկեղեցւոյ թաղականութեան ատենա-  
պետի պաշտօնը, գորս կը վարէ մեծ ձեռնհասութեամբ:

Ռազգայի կեանքը սակայն կ'ալեկոծուի սուրիացի ժողովուրդին  
Ֆրանսական հոգատարութեան դէմ սկսած ապստամբութեամբ, որու  
հետեւանքով Ռազգայի եւ Տէր Զօրի մէջ կը սպաննուին բազմաթիւ  
Ֆրանսական բանակի զինուորներ:

Այդ շրջանին, Ռազգայի շուկան թալանի ու կողոպուտի կ'են-  
թարկուի: Սակայն Յակոբ Սարգիսեանի (Ահմատ Սուլթանի) արաբ  
եղբայրները զինուած կը հասնին Ռազգա եւ զէնքով կը պաշտպանեն  
իրենց «եղբօր» խանութն ու տունը, արաբական առաքիչութեան եւ  
ազնուականութեան փատը ցոյց տալով իրենց հայ եղբօր հանդէպ:

Պրն. Յակոբ Սարգիսեան մինչեւ 1972 ապրեցաւ Ռազգայի մէջ:  
Իր առեւտրական գործէն գատ, իր արաբ եղբայրներուն հետ լծուեցաւ  
բամպակ ցանելու գործին, ջրհան մեքենաներ (փոմպեր) հաստատե-  
լով՝ Եփրատ գետի ջուրերով սնուցանելով բամպակի դաշտերը:

1972-ին ստիպուած փոխադրուեցաւ Հալէպ: Զաւակները մեծցած  
էին եւ Ռազգա մնալու եւ աշխատելու ասպարէզ չկար իրենց համար:  
Ապա ընտանեօք կը հաստատուին Թորոնթօ, ուր արդէն իսկ հաս-  
տատուած էին իր զաւակներէն մի քանին:

Իրենց Թորոնթօ հաստատուելէն քանի մը տարի ետք, իր արաբ  
եղբայրներէն երկու հոգի, իրենց «եղբայրը» կարօցած ըլլալով, ե-  
կան Թորոնթօ եւ հարազատի զգացումներով քանի մը օր եղան իրենց  
հայ «եղբօր» ընտանիքին հետ:

*Իսկ քանի մը տարի առաջ, Պրն. Յակոբի փոքր աղջկան Հալէպ այցելութիւնը լսելով՝ Սուլթան եղբայրները զայն կը հրաւիրեն իրենց գիւղը եւ բացառիկ ընդունելութիւն եւ հիւրասիրութիւն կը սարքեն եւ թանկագին նուէրներով կը հասցնեն Հալէպ, ուր իջեւանած էր օր-իօրդը, արաբական ասպնջականութիւն եւ հարազատի անկեղծ վերաբերմունք ցոյց տալով եւ միշտ պահելով իրենց հարազատի զգացումները Սարգիսեան ընտանիքին հանդէպ:*



Զօրավար Սամուէլ Կարապետեան եւ Գրիգոր Հոթոյեան



## «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ»

1948-ին, որպէս գրաշար կ'աշխատէի հայ շնորհալի բանաստեղծ, «Նայիրի» ամսագրի հրատարակիչ-խմբագիր եւ «Արեւելք» օրաթերթի խմբագիրներէն Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի» տպարանին մէջ:

«Նայիրի» տպարանը կը գտնուէր Հալէպի Հոգետուն կալուածին մէջ, որ կը պատկանէր Երուսաղէմի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Պատրիարքութեան, որուն մէջ գտնուող տուներուն եւ խանութներուն վարձքի տալու եւ վարձք գանձելու պաշտօնը յանձնուած էր տեղացի հայ (արման դատիմ) փաստաբանի մը:

«Նայիրի» տպարանը այդ օրերուն կը գործածուէր «Նայիրի» ամսագրի եւ «Արեւելք» օրաթերթի հրատարակութեան, որ ամէնօրեայ հաւաքավայրը եղած էր հայ մտաւորականութեան եւ Դաշակցութեան ղեկավարութեան, մինչեւ Անդրանիկ Ծառուկեանին Լիբանան տեղափոխուիլը 1949-ին:

«Նայիրի» տպարանը Անդրանիկ Ծառուկեանին համար գնած էին Հալէպի հանրաձանօթ գործատէր եւ նշանաւոր ՀՄԸՄ-ական եղբ. Նշան Թիւսիւզեան եւ այլ բարեկամներ:

Նկատի ունենալով, որ եղբ. Նշան Թիւսիւզեան անմահ Կոմիտաս Վարդապետի աշակերտներէն Բարսեղ Կանաչեանի աղջկան հետ ամուսնացած էր, ան ալ երբեմն կու գար «Նայիրի» տպարան եւ կը մասնակցէր այնտեղի հայաշունչ եռուզեռին:

Հոգետան մէջ գոյութիւն ունէր նաեւ հանրային փոռ մը, որուն տէրերն էին սասունցի հայրենակիցներս՝ Խալօ (քեռի) Յակէն ու Սեդրակը, եւ Պրն. Կանաչեանը անոնց ալ կ'այցելէր եւ փոռին մօտ ցած աթոռի մը վրայ նստելով՝ կ'արեւոտէր եւ Քեռի Յակէին հետ կը զրուցէին ժողովուրդի եւ իրենց անցեալի կեանքէն:

«Նայիրի» տպարանի ամէնօրեայ աշխատանքիս մէկ դադարէն օգտուելով՝ մօտեցայ Պրն. Բարսեղ Կանաչեանին, որ արդէն զիս կը ճանչնար եւ ամէն գալուն կը հարցնէր իմ որպիսութիւնս, յաճախ ըսելով.

— Մե՛ր տղայ, ինչպէ՞ս ես այսօր, գրաշարութիւնը հաճելի՞ է քեզի: Գիտցի՛ր, որ գրաշարութիւն ընելով հայ մշակոյթին կը ծառայես: Ես հարցուցի իրեն.

— Պրն. Կանաչեան, ես Գրիգորն եմ (աչքերը շատ տկարացած էին), ինչպէ՞ս ես այսօր:

Պրն. Կանաչեան գլուխը վեր բարձրացուց, ա՛խ քաշելով եւ ինծի նայելով՝ ըսաւ.

— Տղա՛ս, ինչպէ՞ս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ:

Զարմացայ այս պատասխանին վրայ՝ մտածելով, որ մարդ ինչպէ՞ս անցեալի յուշերով կրնայ ապրիլ եւ գոհանալ կեանքէն:

Այդ օրերուն, որպէս 21 տարեկան կրակոտ երիտասարդ, մարզուած ֆրանսական բանակին մէջ, աշխատասէր եւ ապագաս կանաչ տեսնող անձ, անհասկնալի թուեցաւ ինծի Պրն. Կանաչեանի պատասխանը, որուն իմաստը երիտասարդական տարիներուս չկրցայ ըմբռնել, մինչեւ որ ես ալ մտայ անցեալի յուշերով ապրողներուն միութեան մէջ, ըմբռնելով անցեալի յուշերով ապրելու կարեւորութիւնը եւ այդ յուշերէն բխող հոգեկան սնունդն ու կազդոյրը, դիմազրելու համար մարմնական տկարութիւններուն եւ կեանքի դժուարութիւններուն:

Ես ալ, ներկայիս, «ինչպէ՞ս ես» հարցնողներուն իմ կարգին կը պատասխանեմ. «Անցեալի յուշերով կ'ապրիմ»:

\* \* \*

Անցեալի յուշերով ապրողներու մասին գրած է նաեւ Հայրենի տաղանդաւոր արձակագիր Վարդգէս Պետրոսեան, 1980-ին հրատարակած «Հայկական էսքրիզներ» գիրքին 36-րդ բաժնին մէջ, ուր գրուած է.

«Երեւանեան զբօսայգում, կողք-կողքի դրուած քարերի պէս, նստած էին տարեց մի քանի մարդեր: Վաղ գարուն էր, արեւը փափուկ տաքացնում էր նրանց հին ոսկորները եւ նրանք, իրար ընդմիջելով, խօսում էին, պատմում էին, վերլիշում... Յուշերի մէջ բուխերիկ կար, մոխրի տակ՝ կրակ, յուշերը նրանց տանում էին ետ՝ դէպի այն տաք երկիրը, որ «ջահելութիւն» անունն ունի՝ այնտեղ երազները սահման չէին ճանաչում, այնտեղ մարդը սիրում է ինքն իրեն ու հաւատում է աշխարհին: Նրանք վաղուց գիտէին, որ իրենց երազները չեն կատարուել ու չեն կատարուելու, բայց հաճելի էր այդպէս, հաւաքուել բախտակիրացներով եւ նստել յուշերի գնացքը, որ անուշ սուլոցով նրանց տանում էր ետ, դէպի «ջահելութիւն» կոչուող տաք երկիրը»:

\* \* \*

Պրն. Տիգրան Թոգմաքճեանը, որուն կինը սասունցի աղջիկ ըլլալուն համար ինքնաբերաբար կ'ըլլար մեր փեսան, Հալէպի մէջ նշանաւոր արհեստաւոր էր, զոր կը ճանչնայի Հալէպէն եւ իրենց բնակարանը յաճախ այցելելով՝ բարեկամական այցելութիւններ տալու առիթներ կ'ըլլային:

Պրն. Տիգրան Թոգմաքճեան իր զաւակներուն եւ աղջիկներուն Գանատա (Թորոնթօ) մեկնելէն եւ իր սիրեցեալ կիներ կորսնցնելէ ետք, ստիպուած ինքն ալ եկաւ Թորոնթօ՝ միանալու համար իր զաւակներուն:

Տարիներ անցան, յաճախ կը տեսնէի Ամօ Տիգրանը Հայ Կեդրոնի մէջ եւ կ'ուեննայինք հաճելի խօսակցութիւններ անցեալէն ու ներկայէն:

Կիրակի օր մըն էր, Ամօ Տիգրան կրկին եկած էր Հայ Կեդրոն՝ տեսնելու համար իր բարեկամները: Հեռուէն բարեւեցի: Կանչեց զիս: Գացի: Ըսաւ.

— Եկուր միասին սուրճ մը խմենք:

Խմեցինք: Հարցուցի.

— Ինչպէ՞ս ես, Ամօ՛ Տիգրան:

Ամօ Տիգրան ցաւագին զգացումով պատասխանեց.

— Ինչպէ՞ս ըլլամ, տղա՛ս, պառկած ատենս ալ կը յոգնիմ:

Իրեն բան մը չըսի, սակայն չկրցայ ըմբռնել, որ մարդ ինչպէ՞ս պառկած տեղը կրնայ յոգնիլ:

Երիտասարդ էի եւ չկրցայ հաւատալ իր պատասխանին, սակայն ներկայիս ես եւ կինս, մեր կարգին, հասուն տարիքի սահմանէն ներս մտնելով, մենք ալ պառկած ատեն կը յոգնինք, երանի տալով անցեալի կեանքին եւ յուշերուն:

Աստուած հոգիդ լուսաւորէ, Ամօ՛ Տիգրան:



Զախէն աջ՝ Յակոբ Ճանպազեան,  
Արժ. Տէր Արմէն Աւագ Քեհնյ. Իշխանեան եւ Գրիգոր Հոթոյեան

## ԱՆՀԱՒԱՏ ԱՒԱԶԱԿԸ՝ ՔԱՄԱՂԻԷԼ, ՀԱՒԱՏԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ

Երբ Յիսուս Գալիլիայի Տիբերական ծովուն ղիմացի կողմը անցաւ, աշակերտները նշմարեցին, որ անոր ետեւէն ժողովուրդի մեծ բազմութիւն մը կ'երթար, որովհետեւ կը տեսնէին այն նշանները, զորս ան կը կատարէր հիւանդներուն վրայ: Յիսուս լեռ ելաւ եւ այնտեղ նստաւ իր աշակերտներուն հետ:

Յիսուս իր աչքերը վեր բարձրացուց եւ տեսաւ, որ ժողովուրդի մեծ բազմութիւն մը հետեւած է իրեն: Փիլիպոսին ըսաւ.

— Ուրկէ՞ հաց պիտի գնենք, որ հաւաքուած ժողովուրդը ուտէ: Փիլիպոս պատասխանեց.

— Երկու հարիւր դահեկանի հաց չի բաւեր ասոնց, նոյնիսկ եթէ իւրաքանչիւրը փոքրիկ կտոր մը առնէ:

Իր աշակերտներէն մէկը՝ Անդրէաս, Սիմոն Վէմի եղբայրը, ըսաւ.

— Այստեղ պատանի մը կայ, որ հինգ դարիի հաց ունի եւ երկու ձուկ. բայց այդքանը ի՞նչ է այսչափ մարդոց համար:

Յիսուս ըսաւ.

— Նստեցուցէ՛ք այդ մարդերը:

Մարդիկ նստան, թիւով շուրջ հինգ հազար հոգի:

Եւ Յիսուս հացը առաւ ու գոհութիւն յայտնեց եւ բաշխեց նստողներուն: Նոյնպէս եւ ձուկերը: Եւ երբ կշտացան, ըսաւ աշակերտներուն.

— Ժողովեցէ՛ք այդ աւելցածները, որպէսզի բան չլիք:

Ժողովեցին եւ լեցուցին տասներկու սակառներու մէջ, որ աւելցած էր ուտողներէն: Իսկ մարդիկ երբ տեսան եղած հրաշքը, ըսին.

— Ասիկա է ճշմարիտ մարգարէն, որ աշխարհ պիտի գար:

Ներկայ ժողովուրդին մէջ կար Քամաղիէլ անունով հրեայ աւագակ մը, շուրջ 35 տարեկան, որ իր աւագակութեամբ եւ գողութիւններով հռչակաւոր դարձած էր ամբողջ Պաղեստինի մէջ: Ասիկա, հրամայուած հացով եւ ձուկով կշտանալէ ետք, մտածեց տեւաբար հետեւիլ Յիսուսի, որպէսզի միշտ օգտուի ճրիաբար հրամայուած ուտելիքներէն:

Քամաղիէլ Յիսուսի հետեւեցաւ ամէնուրեք՝ Գալիլիա, Դեկապոլիս, Երուսաղէմ, Հրէաստան եւ Յորդանանի անդիի կողմերը, մտիկ ընելով անոր քարոզները: Ան Յիսուսի քարոզները չէր հաւնեւ եւ կը գայրանար:

Յիսուս, տեսնելով իրեն հետեւող ժողովուրդը, լեռ բարձրացաւ եւ հոն խօսեցաւ հետեւեալ քարոզը.

«Երանի՛ հոգիով աղքատներուն, վասնզի երկինքի արքայութիւնը անոնց է:

Երանի՛ սգաւորներուն, վասնզի անոնք պիտի մխիթարուին:

Երանի՛ հեղերուն, վասնզի անոնք պիտի ժառանգեն երկիրը:

Երանի՛ անոնց, որ անօթի եւ ծարաւ են արդարութեան, վասնզի անոնք պիտի կշտանան:

Երանի՛ ողորմածներուն, վասնզի անոնք ողորմութիւն պիտի գտնեն:

Երանի՛ անոնց, որ սրտով մաքուր են, վասնզի անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին:

Երանի՛ անոնց, որ հալածուած են արդարութեան համար, վասնզի երկինքի թագաւորութիւնը անոնց է:

Երանի՛ է՛ ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն եւ սուտ տեղը ամէն կերպ գէշ խօսքեր կը խօսին ձեր վրայ ինծի համար:

Ցնծացէ՛ք եւ ուրախ եղէ՛ք, վասնզի ձեր վարձքը շատ է երկինքը»:

Քամաղիէյ, ուշադրութեամբ մտիկ ընելէ վերջ Յիսուսի խօսած երանիներու շարքը, բան մը չհասկցաւ, աւելի ճիշդ՝ իր կեանքին օգտակարութիւն մը չտեսաւ, ընդհակառակն, իր սկզբունքներուն դէմ խօսքեր նկատելով՝ գլխիկոր հեռացաւ:

Հետեւելով Յիսուսի շրջագայութիւններուն եւ քարոզներուն, Քամաղիէյի ուշադրութիւնը գրաւեցին Յիսուսի հետեւեալ խօսքերը.

«Եկէ՛ք ինծի բոլոր յոգնածներ ու բեռնաւորուածներ եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ: Իմ լուծս ձեր վրայ առէ՛ք եւ ինձմէ սորվեցէ՛ք, որ հեզ եմ ու սրտով խոնարհ եւ ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք, վասնզի իմ լուծս քաղցր է եւ իմ բեռս թեթեւ»:

Այս յայտարարութիւնը որոշ յոյս ներշնչեց Քամաղիէյին, որ ինքզինք յոգնած եւ բեռնաւորուած նկատելով, թերեւս Յիսուս կարենայ զինք հանգչեցնել՝ իր կեանքի ապրուստը ապահովելով:

Սակայն իր յոյսերը ի դերեւ ելան, երբ ականատես եղաւ հետեւեալ դէպքին:

Մարդ մը վազեց Յիսուսի առջեւ եւ ծունկի գալով հարցուց անոր.

— Բարի՛ Վարդապետ, ի՞նչ ընեմ, որ յաւիտենական կեանքը ժառանգեմ:

Յիսուս պատասխանեց անոր.

— Ինչո՞ւ գիտ բարի կ'անուանես: Մէկէն գատ բարի չկայ, որ է Աստուած: Պատուիրանները գիտես, շնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, քու հայրդ ու մայրդ պատուէ՛:

Մարդը պատասխան տուաւ ու ըսաւ.

— Վարդապետ, ատոնք մանկութենէս ի վեր կ'ընեմ:

Յիսուս անոր նայելով սիրեց զայն ու ըսաւ.

— Մէկ բան պակաս է քեզի, գնա՛ ունեցածդ ծախէ՛, տո՛ւր աղքատներուն եւ երկիրնքը դանձ պիտի ունենաս, եւ խաչը վերցո՛ւր ու իմ ետեւէս եկո՛ւր:

Մարդը, որ շատ ստացուածք ունէր, խոժոռեցաւ եւ տրտմութեամբ հեռացաւ:

Քամաղիէլի համար այս խօսքերը երբեք ընդունելի չէին: Թէեւ հարստութիւն չունէր, սակայն ունենալու պարագային ալ երբեք չէր ուզեր ծախել, աղքատներուն բաժնել եւ Յիսուսի ետեւէն երթալ՝ Աստուծոյ թագաւորութեան արժանանալու համար, որուն չէր հաւատար:

Ամիսներ անցան, Քամաղիէլ կը շարունակէր անպաշտպան տուներէն գողնալ թանկագին առարկաներ, գոհարեղէններ եւ պահուած դրամներ: Որպէս աւագակ եւ գող, իր անունը տարածուած էր Պաղեստինի բոլոր շրջանները եւ հռոմէական իշխանութիւնները զօրաշարժի ենթարկուած էին բռնելու, դատելու եւ բանտարկելու այս սարսափելի գողը:

Քամաղիէլ, լսելով Բեթանիոյ հարուստ բնակիչներէն Ղազարոսի մահը, որոշեց անոր տունը կողոպտել: Թէեւ գիտէր, որ Ղազարոսի երկու քոյրերը՝ Մարթա եւ Մարիամ նոյն տունը կը բնակէին, բայց անոնք Ղազարոսի թաղման կարգադրութիւններով զբաղած ըլլալով՝ հաւանաբար տունը մարդ չէր ըլլար:

Այս համոզումով, Քամաղիէլ երիքովէն ճամբայ ելաւ: Հասնելով Բեթանիա, իրեն հանդիպած առաջին մարդուն հարցուց հանգուցեալ Ղազարոսի բնակարանին տեղը: Մարդը ազնուութեամբ մանրամասն բացատրութիւն տուաւ, զայն նկատելով դուրսէն եկած Ղազարոսի ազգակիներէն մէկը:

Քամաղիէլ դիւրութեամբ գտաւ Ղազարոսի տունը: Տան չորսբորը դռնալով մօտեցաւ գլխաւոր դրան, ուր դիմաւորուեցաւ խոշոր գամբուի մը հաջոցներով: Տունը ընդարձակ բակ մը ունէր, շրջապատուած բաւականին բարձր պատերով, որոնց վրայ կոտրած ապակիի սրածայր կտորներ կային, որպէսզի մարդ չհամարձակի դիւրութեամբ պատէն բակ ցատկել:

Վերոյիշեալ քննութիւններէն ետք, Քամաղիէլ Բեթանիոյ շուկային մէջ մտավաճառ մը գտաւ ու կէս քիլօ միս զնեց եւ իր մօտ գըտնուած թոյնով շաղեց: Սպասեց, որ գիշեր ըլլայ եւ Մարիամ ու Մարթա քնանան: Գիշերուան ժամը 12-ի մօտ, պատէն բարձրացաւ եւ թոյնով շաղուած միւր նետեց բակ: Տունին պահապան շունը միսին հոտը առնելով մօտեցաւ եւ հագիւ քանի մը խած առած՝ անշունչ պառկած մնաց:

Մասնագէտ գողը՝ Քամաղիէլ, պատի դուրսի մասէն ծռելով բակ ցատկած միջոցին ոտքը սրածայր ապակիներուն անցաւ եւ ծանրօրէն

վիրաւորուեցաւ: Երբ ինքզինք բակ նետեց, քալելու անկարողութիւն զգաց, սակայն կարելի չէր հոն այդ ձեւով մնալ: Սողալով մօտեցաւ տան: Մտաւ խոհանոցը եւ իր վէրքերը ջուրով մաքրելէ ետք, կապեց եւ հոսող արիւնը կեցուց: Երկու ժամ հանգստանալէ ետք, մտաւ սենեակները եւ տոպրակին մէջ լեցուց թանկարժէք առարկաները, եւ երբ կ'ուզէր այդ կողոպուտով դուրս ելլել, ոտքը դժուարաւ շարժեց, բայց չհամարձակեցաւ դուրս ելլել՝ անտանելի ցաւեր զգալով:

Ղազարոսի քոյրերը շատ կը սիրէին Յիսուսը եւ կը հաւատային, որ ան Աստուծոյ Որդին է: Ղազարոսի մեռնելէն առաջ մարդ զրկեցին Յիսուսի մօտ՝ ըսելով, որ քու շատ սիրած Ղազարոսը հիւանդ է: Յիսուս տեղեկանալով Ղազարոսի հիւանդութեան՝ ըսաւ.

— Այդ հիւանդութիւնը մահաբեր չէ, այլ՝ Աստուծոյ փառքին համար է, որպէսզի անով փառաւորուի Աստուծոյ Որդին:

Յիսուս կը սիրէր Ղազարոսը եւ անոր քոյրերը՝ Մարթան եւ Մարիամը: Ղազարոսի հիւանդութիւնը լսելէ ետք, Յիսուս երկու օր եւս մնաց հոն ուր կը գտնուէր: Երկու օր վերջ ըսաւ աշակերտներուն.

— Եկէք Հրէաստան երթանք:

Աշակերտները ըսին անոր.

— Ռաբբի, հրեաները դեռ նոր կ'ուզէին քարկոծել քեզ եւ նորէ՞ն կ'ուզես հոն երթալ:

— Մեր բարեկամը՝ Ղազարոսը ննջեր է, երթամ արթնցնեմ զայն: Աշակերտները ըսին.

— Տէ՛ր, եթէ ննջեր է, ուրեմն կ'արթննայ:

Բայց Յիսուս անոր մահուան կ'ակնարկէր, մինչդեռ անոնց այնպէս թուեցաւ, թէ ան քունով ննջելու համար կ'ըսէր: Այն ատեն Յիսուս յայտնապէս ըսաւ անոնց.

— Ղազարոս մեռաւ եւ ես ուրախ եմ ձեզի համար, որ հոն չէի, որպէսզի դուք ինծի հաւատաք:

Յիսուս եկաւ եւ չորս օրէ ի վեր գերեզմանի մէջ դրուած գտաւ Ղազարոսը: Երբ Մարթա լսեց, որ Յիսուս կու գայ, անոր ընդառաջ գնաց, բայց Մարիամ տունը մնաց: Մարթա ըսաւ Յիսուսի.

— Տէ՛ր, եթէ դուն հոս ըլլայիր, իմ եղբայրս չէր մեռներ: Բայց հիմա ալ գիտեմ, թէ ինչ որ Աստուծմէ ուզես, Աստուած կու տայ քեզի:

Յիսուս ըսաւ անոր.

— Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ. ես եմ յարութիւնը եւ կեանքը, ով որ կը հաւատայ ինծի, թէպէտ մեռնի ալ, պիտի ապրի: Իսկ ով որ կենդանի է եւ կը հաւատայ ինծի, յաւիտեան պիտի ապրի: Կը հաւատա՞ս ասոր:

Մարթա պատասխանեց.

— Այո, Տէ՛ր, ես հաւատացի, որ դո՛ւն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գայիր:

Այս ըսելէ ետք, Մարթա գնաց եւ կանչեց իր քոյրը՝ Մարիամը՝ ըսելով, որ Յիսուս զինք կ'ուզէ: Մարիամ եւ այն հրեաները, որ Մարիամին տունը ցաւակցութեան եկած էին, երբ տեսան, որ Մարիամ իսկոյն ելաւ գնաց, իրենք ալ գացին անոր ետեւէն:

Քամաղիէլ, որ մուտ սենեակին մէջ պատասպարուած կը լսէր տեղի ունեցող խօսակցութիւնները, լսելով ներկաներուն տունէն մեկնիլը, ինքն ալ կամացուկ մը կաղալով դուրս ելաւ եւ հետեւեցաւ Մարիամին եւ անոր միացող հրեաներուն:

Մարիամ երբ եկաւ այնտեղ, ուր Յիսուս կեցած էր եւ տեսաւ զայն, ինկաւ անոր ոտքերուն եւ ըսաւ.

— Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ:

Երբ Յիսուս տեսաւ, թէ ան կու լայ եւ անոր հետ եղող հրեաներն ալ կու լան, խռովեցաւ իր հոգիին մէջ եւ ըսաւ.

— Ո՞ւր գրիք զայն:

Ըսին.

— Տէ՛ր, եկո՛ւր եւ տե՛ս:

Յիսուս արտասուեց: Հրեաները կ'ըսէին.

— Տեսէ՛ք, ո՛րչափ կը սիրէր զայն:

Անոնցմէ ոմանք կ'ըսէին.

— Ասիկա, որ կոյրին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս ընել, որ Ղազարոս չմեռնէր:

Յիսուս եկաւ գերեզման: Քարայր մըն էր, որուն վրայ քար մը դրուած էր: Եւ Յիսուս ըսաւ.

— Այդ քարը մէկդի ըրէ՛ք:

Ղազարոսին քոյրը՝ Մարթա, ըսաւ անոր.

— Տէ՛ր, հիմա արդէն նեխած կ'ըլլայ, քանի որ չորս օրուան է:

Յիսուս ըսաւ.

— Չըսի՞ քեզի, որ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը պիտի տեսնես:

Եւ երբ վերցուցին քարը, Յիսուս աչքերը վեր բարձրացուց ու ըսաւ.

— Հա՛յր, գոհութիւն կու տամ քեզի, որ լսեցիր, եւ ես գիտէի, որ ամէն ժամ կը լսես զիս. բայց այս բանը կ'ընեմ շուրջս կեցած ժողովուրդին համար, որպէսզի հաւատան, որ դո՛ւն զրկեցիր զիս:

Երբ այս խօսքերը ըսաւ, բարձր ձայնով կանչեց.

— Ղազարո՛ս, ելի՛ր, դո՛ւրս եկուր:

Եւ մեռելը ելաւ կապուած ոտքերով, ձեռքերը երիզներով ամրացած եւ երեսը վարչամակով փաթթուած, եւ Յիսուս ըսաւ անոնց.

— Արձակեցէ՛ք զայն եւ թողէ՛ք որ երթայ:

Հրեաներէն շատեր, որ Մարիամնց եկած էին, երբ տեսան ինչ որ Ան ըրաւ, հաւատացին Անոր: Իսկ անոնցմէ ոմանք գացին փարիսեցիներուն եւ պատմեցին անոնց ինչ որ տեսան:



Քամաղիէլ, որ հետեւած էր Յիսուսի եւ Մարիամի խօսքերուն եւ ներկայ եղած Ղազարոսի յարութեան, լալով մօտեցաւ Յիսուսին եւ ծունկի եկած անոր առջեւ՝ ըսաւ.

— Տէ՛ր, ես նշանաւոր աւագակ Քամաղիէլն եմ. լսելով Ղազարոսի մահը, Երիքովէն Բեթանիա եկայ, որպէսզի անոր տան թանկագին առարկաները գողնամ. ծրագիրս գործադրութեան դնելու պահուստ վերաւորուեցայ եւ ներկայիս հագիւ կրնամ կաղալով քալել: Հետեւելով քու շրջագայութիւններուդ, լսած եմ բոլոր քարոզներդ, որոնց միջոցաւ ցոյց կու տայիր մարդկայնօրէն ապրելու աստուածային ճամբան, արժանանալու համար երկնային արքայութեան: Քեզ մտիկ ընելով՝ չկրցայ ընդունիլ աստուածային ճշմարտութիւնը: Սակայն, այսօր, տեսնելով քու աստուածային հրաշագործութիւնը՝ Ղազարոսի՝ չորս օրուան մեռած մարդուն յարութիւնը, հաւատացի, որ Դուն ես Աստուծոյ Որդին, որուն հաւատացողը միայն կրնայ արքայութեան արժանանալ: Կը զղջամ իմ կատարած անմարդկային արարքներու՝ գողնալով, կողոպտելով եւ երբեմն սպանութիւններով բազմաթիւ ընտանիքներու զգախտութեան պատճառ դառնալուս: Տէ՛ր, ներէ՛ իմ մեղքերս, որուն ծանրութիւնը սկսած է զիս խեղդել:

Յիսուս, լսելէ վերջ Քամաղիէլի անկեղծ զղջումը, ներեց անոր, թելադրելով, որ այսուհետեւ ապրի աստուածահաճոյ կեանք մը, բարիք գործելով ամէն օր եւ կատարելով աստուածային բոլոր պատուիրանները:



Մեծի Տանն Կիլիկիոյ շնորհագարդ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. եւ Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաֆէ Հոթոյեաններ

## ԱՄԷՆ ՉԱՐԻՔԻ ՏԱԿ ԲԱՐԻՔ ՄԸ ԿԱՅ

1941-ին աւարտեցի Հալէպի Սահակեան վարժարանը եւ այդ ամառ, ինչպէս նախորդ ամառները, դպրոցական երեք ամսուան արձակուրդներուն հայրս կրկին զիս տարաւ Հալէպի Խան Հաճի Մուսա կոչուող վայրը, ուր հսկայ բակին չորս կողմերը, երկու յարկերու վրայ գտնուող խանութները վարձուած էին հայ առեւտրականներէ եւ դերձակներէ: Առեւտրականները մեծաքանակ (պալլիաներով) գործածուած ժաֆէթներ, մանթօներ եւ տաբատներ կը ներածէին Ամերիկայէն, եւ որոշ նորոգութիւններէ ետք՝ կը ծախէին, յատկապէս Թուրքիայէն եկող մաքսանենգներուն (ղաշախիներուն), որոնք գնուած ապրանքները կը տանէին Թուրքիա եւ շատ սուղ գինով կը վաճառէին, իսկ դերձակները քիչ-շատ հինգած ժաֆէթները եւ մանթօները կը քակէին եւ ներսը դուրս դարձնելով՝ կը կարէին, գրեթէ նորի տպաւորութիւն ձգելով յաճախորդներուն վրայ:

Ուրեմն, հայրս զիս կրկին տարաւ Խան Հաճի Մուսայի երկրորդ յարկին վրայ գտնուող դերձակ Աճոյեանին խանութը, ուր որպէս վարպետ դերձակ կ'աշխատէր նաեւ իմ հայրենակիցս՝ Սասունցի Մուրատ անունով դերձակ մը, որուն մայրը՝ Խմլօն, Սահակեան վարժարանի մեր մայրիկն էր:

Ամառները աշակերտելով Պրն. Աճոյեանին՝ բաւական սորված էի ձեռքով եւ մեքենայով կարել: Արդէն աջ ձեռքիս միջնամատը եղունգէն ծոռուած մինչեւ վեր կապած էին տարիներ առաջ, որպէսզի կարի մատնոցը հանգչէր մատիս ծայրը եւ օգնէր ասեղով կարելուս, մատս պաշտպանելով ասեղի բութ մասէն վիրաւորուելէ:

Սակայն, տարին ամբողջանալէ ետք, եղբօրս միջոցաւ, որ կ'աշխատէր անգլիական բանակի զինուորական ենթասպաներու ճաշարանի խոհանոցը եւ նախաճաշի, ճաշի, թէյի ժամուն եւ ընթրիքի ընթացքին կը սպասարկէր զինուորներուն, որպէս ամանները լուացող՝ գործ ունեցայ ենթասպաներու ճաշարանին մէջ:

Շրջան մը աշխատելէ ետք, թէեւ ենթասպաներուն ճոխ ուտելիքներէն մեզի ալ արդար բաժին կ'իյնար, աման լուալէ կը պժգայի:

— Հայրի՛կ, ես ուսումս կ'ուզեմ շարունակել:

Խօսքերուս կը պատասխանէր՝ ըսելով.

— Ամերիկեան եւ Ֆրանսական վարժարանները ղրկելու նիւթական միջոցներ չունիմ, քիչ մըն ալ աշխատի՛ր, դրամ խնայենք, որպէսզի դպրոցական ծախսերուդ հասնինք:

Սակայն ո՛վ կը համբերէր, հասնելու համար այդ բարեբաստիկ օրուան: Մտածեցի անգլիական բանակին միանալ: Դիմեցի զինուորազորութեան կեդրոն, ապարդիւն: Դէմքիս եւ կազմիս նայեցան ու անյարմար գտան զինուորագրելու:

Դիմած ատենս իրական տարիքս 16 տարեկան էր, սակայն անձնաթուղթիս մէջ՝ 18: Գրիգոր անունով եղբայրս ծնած էր 1925-ին եւ մեռած ատեն չեն ջնջած անոր անունը, եւ երբ ես ծնած եմ 1927-ին, քաղաքապետութեան մօտ չեն արձանագրած անունս: Ուրեմն, 18 տարեկանի հովեր առած, այս անգամ դիմեցի Փրանսական զինուորազորութեան կեդրոն, ուր ինծի պէս բազմաթիւ երիտասարդներու հանդիպեցայ, որոնք կ'ուզէին արձանագրուիլ:

Դիմողներէն շատեր մերժուեցան զանազան պատճառներով, ընդունուեցան միայն 22 հայ երիտասարդներ, որոնց կարգին ես:

Երբ քննութեան կ'ենթարկուէի սպայ բժիշկի մը եւ արձանագրող սպայի մը կողմէ, բժիշկը միւս սպային ըսաւ, որ ես պատանի մըն եմ եւ անյարմար՝ զինուոր ըլլալու, սակայն երկրորդ սպան ըսաւ, որ պատանի մըն է, բայց Փրանսերէն գիտէ եւ մեզի շատ օգտակար կրնայ դառնալ: Համաձայնեցան:

24 Յունիս 1943-ին, կառախուժքով, Փրանսական բանակի շարքերուն միանալու առաջադրութեամբ, 22 հայ երիտասարդներով իջեւանեցինք Պէյրութի Մար Իլիաս թաղամասին ծովեզերեայ շրջանին մէջ գտնուող զօրանոցը:

Յաջորդ օրերուն, նորագիր հայ զինուորներս ստացանք զինուորական զգեստներ եւ մեր մագերը խուզուեցան զօրանոցի հայ սափրիչին կողմէ, որ նոյնպէս զինուոր էր:

Սկսան զինուորական մարզանքները, որպէս զինուոր քայելու, բարեւելու, աստիճանաւորի հրահանգներուն ենթարկուելու բոլոր օրէնքները: Մէկ խօսքով, մինչեւ երեք ամիս, ամէնօրեայ դաստիարակութեամբ եւ վարժութեամբ դարձանք իրական զինուորներ Ազատ Փրանսայի բանակին:

Որպէս հրետանային շոկատի զինուոր, պարզ հրացաններու եւ արագահարուածներու գործածութենէն ետք, սորվեցանք ամբրիկեան 75 միլիմետր թնդանօթներու գործածութեան բոլոր գիտելիքներն ու պաշտօնները:

Զօրանոցին մէջ ամէն օր կատարուող զինուորական գիտելիքներով զբաղումէն զատ, հերթաբար 24 ժամ պահակութիւն ընելու պարտականութիւն ալ ունէինք. երկու ժամ պահակ կենալ, 4 ժամ հանգիստ ընել, երեք պահակներով, 24 ժամուան ընթացքին 8 ժամ պահակութիւն ընելով:

Թնդանօթային առանց փամփուշտի փորձեր կը կատարէինք զօրանոցին եւ Լիբանանի լեռնային անբնակ շրջաններուն մէջ, սակայն

կը պատահէր, որ յատուկ նշանակէտերը կը հարուածէինք իրական փամփուշտներով:

Կը յիշեմ, հաւանաբար Օգոստոսի կէսերուն, մեր Թնդանօթային ջոկատը (8 Թնդանօթներով) կայք հաստատեց Լիբանանի լեռնային Համման գիւղի բարձունքներուն վրայ եւ Թնդանօթներու անձնակազմերը սկսան Թնդանօթները ամրացնել, փամփուշտները փոխադրակառքերէն իջեցնել, իսկ սպայութիւնը տարուած էր նշանակէտերու հաշիւներով:

Թնդանօթները քաշող կրիայի ձեւին նմանողութեամբ ինքնաշարժներէն իջնող գինուորներն ու ենթասպաները արդէն պատրաստութեան մէջ էին, պատրաստ՝ ընդառաջելու իրենց տրուելիք հրահանգներուն:

Թէեւ իմ մարմնական կազմիս պատճառով՝ 16 տարեկան պատանիի մը տեսքով, Թնդանօթային պարտականութիւններէն զերծ մնացած էի, սակայն միշտ կ'ընկերանայի բարձր սպայութեան, կրելով եւ սարքելով հեռադուրսութիւններու հաշուակալական գործիքները, որոնց շնորհիւ նշանառութեան ճշգրիտ չափերը կը փոխանցուէր Թնդանօթաձիգներուն:

Այդ օր, այդ գործիքները ինքնաշարժէն իջեցնելու միջոցին, բաւական ծանր սեղանը ձեռքէս սահելով վար ինկաւ: Թնդանօթային ջոկատի հրամանատար քոմանտան Միշալէ տեսած ըլլալով պատահածը, Ղայանացած հրամայեց ստորադաս սպային, որպէսզի ես իմ հասակիս չափով գետինը փորեմ եւ 24 ժամ որպէս պատիժ հոն մնամ:

Գիշերը ցրտեց լեռան վրայ եւ ես դողալով լուսցուցի գիշերը, իսկ արեւը ծագելէն ետք, դանդաղօրէն օդը տաքցաւ եւ սկսան այրիլ գլուխս ու երեսս: Այդ տառապանքիս ընթացքին միշտ կ'աղօթէի, որ Աստուած ինծի ուժ եւ համբերութիւն տայ դիմանալու համար մարմնական ցաւերուս՝ անիծելով անաստուած սպան:

Շրջան մը վերջ մեր ջոկատը Հալէպ փոխադրուեցաւ եւ տեղաւորուեցաւ Հալէպի Արդուպ թաղամասին մէջ գտնուող թրքական զօրանոցը, ուր բոլոր բանակայինները ամէն օր կը հետեւէին ռազմական դասընթացներու եւ փորձերու:

Համմանայի լեռներուն վրայ ստացած պատիժս, գիշերները պահակութիւն ընելով անքնութեամբ տառապանքս, մէջս արթնցուցին միջոցներ ստեղծել բանակէն դուրս գալու համար:

Փորձեցի շինծու հիւանդութիւններ ստեղծել, մանաւանդ ծուկի յօդացաւ (ռոմաթիզմ) ունենալով չկարենալ քայել պատճառաբանելով գինուորական հիւանդանոցի յատուկ խնամքի ենթարկուելով:

Շաբաթ մը հիւանդանոց մնացի եւ բժշկական բոլոր դեղերն ու միջոցները որեւէ դրական արդիւնք չտուին: Կը շարունակէի կաղալով եւ ցաւի արտայայտութիւններով քայել:

Եկաւ ընդհանուր բժշկապետին կողմէ քննութեան օրը: Բոլոր հիւ-  
լանդները իրենց մահճակալներուն վրայ պառկած կամ քովը կանգ-  
նած՝ կը պատասխանէին բժշկապետին հարցումներուն: Կարգը եկաւ  
ինծի: Հարցուց, թէ ինչպէ՞ս եմ եւ ի՞նչ ունիմ: Ըսի, թէ ծունկս շատ կը  
ցաւի եւ չեմ կրնար քալել:

— Լա՛ւ,— ըսաւ,— քալէ՛ տեսնեմ:

Փորձեցի կաղալով քալել: Այդ միջոցին բժշկապետը ուժգնօրէն  
հրեց զիս քալելու ուղղութեամբ: Ես, փոխանակ իբր թէ իմ ունեցած  
ցաւին պատճառով գետին իյնալու, սկսայ կաղալով վազել:

Ինկած էի իմ փորած փոսիս մէջ:

Փորձառու բժիշկը զիս մէկ կողմ քաշեց ու ըսաւ.

— Երիտասարդ գինուոր, դուն կը ծրագրես գինուորութենէն հե-  
ռանալ նման հիւանդութիւններ պատճառաբանելով, հիմա կա՛մ բանտ  
կ'երթաս, կա՛մ խելքդ գլուխդ հաւաքելով կը միանաս ջոկատիդ:

Անշուշտ բանտ երթալ չէի ուզեր, ըսի՝ կը միանամ ջոկատիս:

Հիւանդանոցէն տուն գալով, երկար մտածեցի եւ որոշեցի մնալ  
բանակին մէջ, սակայն, հետեւելով գինուորական դասընթացներու,  
դառնալ աստիճանաւոր եւ ազատիլ պահակութենէ եւ այլ չարչա-  
րանքներէ:

Նախ հետեւեցայ մոթոսիֆլէթ քշելու դասընթացներու եւ վկայ-  
ուելով՝ դիմեցի ինքնաշարժ քշելու դասընթացներու, եւ քննութեան  
յաջողելով՝ ստացայ ինքնաշարժ վարելու վկայականը:

Հետեւեցայ թնդանօթի փամփուռներու եւ ֆիլզէներու տեսակ-  
ներուն կարողութիւնները չափելու դասընթացներուն, ապա՝ թըն-  
դանօթի նշանառուի (փուսնթօր) դասընթացներուն:

Ջոկատի սպայութիւնը յարմար տեսաւ զիս ուղարկելու պրի-  
կատիէ աստիճանի դասընթացներուն, ապա՝ մարեշալտոլոնի աս-  
տիճանի դասընթացներուն, որոնք յաջողութեամբ աւարտելով եւ  
պատուաբեր պաշտօն ունենալով, հանգիստ կեանք մը վարեցի մինչեւ  
բանակէն հրաժարելու հօրս աղերսանքներուն տեղի տալս, որպէսզի  
1946-ին Հայաստան ներգաղթէինք: Սակայն այդ բախտին չարժա-  
նացանք՝ մեր դաշնակցական ըլլալուն համար:

Քոմանտան Միշալէի անարդար պատիժը, գինուորական առա-  
ջին շրջանի չարչարանքները եւ անոնց հետեւանքները որպէս չարիք  
նկատելով, աստուածային տնօրինութեամբ մղեցին զիս յառաջանա-  
լու պարզ գինուորի աստիճանէն մինչեւ ենթասպայի աստիճանին,  
ծառայելով ֆրանսական բանակին եւ արժանանալով ֆրանսացի ժո-  
ղովուրդի գնահատանքը արտայայտող Ֆրանսայի նախկին պատե-  
րազմիկներու նախարարութեան պաշտօնական գնահատագրին:

# ԱՂՔԱՏԸ ԱՂՔԱՏԻՆ ՕԳՆԵԼՈՎ ՀԱՐՍԱՑԱԻ

Սալամ ընտանիքը բարեկեցիկ եւ ապահով կեանք մը ունէր ու կ'ապրէր Պաղտատի արուարձաններէն արդիական կառուցուածքով ու պարտէզով տունի մը մէջ, երջանիկ իր եկամուտով, եւ որեւէ դժուարութիւն չունէր իր երկու զաւակներուն՝ Իլիասին եւ Լենային սընունդին եւ դպրոցական ծախսերուն հասնելու համար:

Տէր եւ Տիկին Ճէմիլ եւ Ճորճէթ Սալամ իրենց ամուսնութեան 12-րդ տարեգարձը կը տօնէին ճոխ սեղանի մը շուրջ. հեռատեսիլէն լսեցին ցաւալի եւ ցնցիչ լուր մը: Ամերիկեան բանակները անակնկալօրէն յարձակում սկսած էին գործել Իրաքի մայրաքաղաք Պաղտատի եւ այլ զինուորական կեդրոններու վրայ, վերջ տայու համար Իրաքի միահեծան ղեկավար Սատտամ Հիւսէյնի իշխանութեան:

Ամերիկեան բանակներու յարձակումէն քանի մը օր վերջ, Պրն. Ճէմիլ, որ պետական պաշտօնեայ էր, որոշեց ապահով ուղի մը գտնել եւ իր գործատեղին հասնիլ, բայց ապարդիւն. բոլոր թաղերը գրաւուած էին զինուորներով, հակաօդային թնդանօթներով եւ հրասայլերով: Զինուորական յատուկ ոստիկաններ արգելք կը հանդիսանային քաղաքացիներու երթեկեկութեան: Մահ եւ սարսափ կը տիրապետէր Պաղտատի բոլոր փողոցներուն վրայ եւ մարդիկ իրենց տուններուն մէջ պատսպարուած՝ կը ջանային խուսափիլ օդէն եւ ցամաքէն արձակուող ռումբերէն եւ տեսակաւոր փամփուշտներէն:

Օրերը, շաբաթները կ'անցնէին պատերազմական մթնոլորտի մէջ: Ամերիկեան բանակները մտած էին Պաղտատ, պարտութեան մատնելով Սատտամ Հիւսէյնի բանակները: Երկրին մէջ կը տիրէր անիշխանութիւն: Սատտամ Հիւսէյնը չսիրող մարդիկ հաւաքուած էին բռնակալին արձանին շուրջ եւ կարգ մը գործիքներ օգտագործելով՝ վար առած էին արձանը եւ վայրագօրէն կը կոխկոտէին զայն:

Երկրին մէջ յառաջ եկած էր գործազրկութիւն: Մարդիկ կը վախանային իրենց գործատեղիները բանալ: Սղութիւնը գլուխը առած գացած էր: Թէեւ կարգ մը հարուստներ իրենց կարողութիւններով կրնային դիմանալ ստեղծուած սղութեան եւ իրենց գործերուն, բայց միջին եւ գործաւոր դասակարգին կեանքը շատ դժուարացած էր, հասնելով անօթի մնալու եւ պառկելու աստիճանին:

Պրն. Ճէմիլ իր պաշտօնը կորսնցնելէ եւ իր խնայած գումարները ծախսելէ ետք, ստիպուած կ'ըլլայ գործ փնտռել, որեւէ գործ, որպէսզի

ընտանիքը անօթի չմնայ: Օրերով դիմեց գործատերերուն, ճաշարաններուն, առաջարկելով ընել ամէն տեսակի աշխատանք, միայն կարենար իր ընտանիքին հացը ապահովել, սակայն ապարդիւն: Առաջարկեց ձրի աշխատիլ, առանց դրամական ռոճիկի, միայն իր եւ իր ընտանիքին սնունդի հաշտոյն, բայց ուր որ երթար կ'ըսէին, որ գործաւորի պէտք չունին, քանի որ բաւարար յաճախորդ չունին:

Ճէմիլ յուզուած եւ յոգնած՝ երեկոյեան տուն եկաւ ուտելիքի պարապ պայուսակներով, որոնց յուսահատօրէն կը նայէին զաւակները:

Զաւակները անօթի էին, կը փաթթուէին իրենց ծնողներուն՝ աղաչելով, որ իրենց հաց տան ուտելու, որովհետեւ չեն կրցած անօթի քնանալ:

Պատիկներուն մայրը՝ ձորճէթ, միշտ կը մխիթարէր իր զաւակները, անոնց յոյս ներշնչելով, որ իրենց հայրը շուտով գործ կը գտնէ եւ իրենք ուտելու ճոխ ուտելիքներ կ'ունենան, իսկ դառնալով իր ամուսինին՝ կը խնդրէր, որ քանի որ հոս գործ չի կրնար գտնել, իրենց պապենական գիւղը փոխադրուին, հոն գոնէ ազգականները կրնային նիւթապէս օգնել, միեւնոյն ատեն կրնային օգտուիլ պարտէզներու կանաչեղէններէն:

Ամուսինը միշտ կը մերժէր իր կնոջ առաջարկը՝ պատճառաբանելով, որ Պաղտատի պէս խոշոր քաղաքի մէջ գործ չէր կրնար գտնել, ինչպէ՞ս փոքրիկ գիւղի մէջ կրնայ գործ գտնել կամ ազգականներու օգնութեան վրայ յոյս դնել:

Տունին մէջ իրենց ունեցած ձաւարի, բրինձի եւ տուփեղէններու պաշարները վերջանալու վրայ էին: Օրերը կը թաւալէին եւ անօթութիւնը կը սպառնար իրենց կեանքին:

Գործ գտնելու յոյս չէր մնացած: Որպէս անմիջական լուծում, Տիկին ձորճէթ պատէն կախուած պարսկական գորգը իջեցուց, ծալեց եւ տուլաւ ամուսինին որպէսզի ծախէ, փրկուելու համար անմիջական անօթութեան ճիրաններէն:

Ամուսինը նախ մերժեց տունին զարգը եղող գորգը ծախելու կնոջ առաջարկը, սակայն աղքատութիւնը եւ մանաւանդ անօթութիւնը ու զաւակներուն լացը մտաբերելով, ծալուած գորգը առնելով՝ արցունքոտ աչքերով դուրս ելաւ:

Ճէմիլ գորգը շալկած քայլամուր, հարցնելով գտաւ գորգավաճառի մը խանութը եւ ստիպուած ծախեց իր արժէքին քառորդ գինով՝ ուրախանալով, որ գոյացած գումարով պիտի կարենան շրջան մը ապրիլ, մինչ այդ հաւանաբար գործ մը գտնէ:

Տուն դարձի ճանապարհին մտածեց կարգ մը ուտելիքներ գնել, ուրախացնելու համար իր զաւակները: Իր ճանչցած նպարավաճառին խանութը հասնելով՝ գնումներու կը պատրաստուէր, երբ ծերունի մարդ մը իրեն մօտեցաւ եւ յուզումով ու լալով խնդրեց իրեն ողոր-

մութիւն մը տալ՝ պատճառաբանելով, որ քանի մը օրէ ի վեր ինքը եւ իր ընտանիքին անդամները բան մը չեն կերած, եւ ընտանեօք աշխատելու ալ կարողութիւն չունին:

Ճէմիլ շատ ցաւեցաւ մուրացկանին վիճակէն եւ յուզուեցաւ անոր ու անոր ընտանիքին կացութիւնը լսելով, սակայն նոյն ատեն յիշեց, որ իր ընտանիքին անդամներն ալ անօթի են եւ կարօտ՝ սնունդի, եւ ինք տակաւին գործ չէ կրցած գտնել իր ընտանիքին ապրուստը հոգալու համար: Երկար մտածեց, ուզեց օգնել ձեր մուրացկանին, միեւնոյն ատեն երեւակայեց առանց գորգին դրամին տուն վերադառնալու եւ իր կնոջ տալիք պատճառաբանութեան եւ արդարացումին հետեւանքներուն մասին: Վերջապէս որոշեց ծախուած գորգին դրամը տալ անօթի մարդուն, մտիկ ընելով իր խղճի ձայնին, որ կ'ըսէր.

— Օգնէ՛ այս խեղճ մարդուն:

Եւ ծախուած գորգին դրամը ամբողջութեամբ տուաւ անօգնական եւ անօթի մուրացկանին, այն խոր գիտակցութեամբ, որ այդ դրամով կը փրկէ մահամերձ ընտանիք մը:

Մուրացկանը դրամը առաւ եւ շնորհակալութիւն յայտնելէ ետք՝ աղօթեց ու յուզումնալից խօսքերով ըսաւ.

— Աստուած քեզի ինձի տուածիդ հարիւրապատիկը տայ, կեանքդ ըլլայ բարեյաջող, որովհետեւ դուն խղճամիտ եւ մարդասէր ու հաւատացեալ անձ մըն ես:

Ճէմիլ տխուր էր գորգին դրամը աղքատին նուիրած ըլլալուն համար՝ մոռնալով իր ընտանիքին կացութիւնը, միեւնոյն ատեն հոգեպէս ուրախ իրմէ աւելի աղքատ աղքատի մը նիւթապէս օգնած ըլլալուն համար:

Տուն հասաւ պարապ ձեռքերով: Իր կնոջ եւ զաւակներուն նայեցաւ, որոնք իրենց մօրը մօտակայ պարտէզէն հաւաքած բանջարեղէններով պատրաստուած կերակուր մը կ'ուտէին առանց հացի:

Կինը զարմանքով հարցուց.

— Ի՞նչ եղաւ գորգը, եւ եթէ ծախուեցաւ, ինչո՞ւ ուտելիքներ չես բերած:

Ճէմիլ պատմեց եղելութիւնը եւ լալով պատմեց աղքատին եւ անոր ընտանիքին կացութեան մասին, համոզելով կինը, որ ինք բարեգործութիւն մը ըրած է իր կրօնական հաւատքին եւ խղճին անսալով:

Տիկին ձորճէթ թէեւ նեղուեցաւ, որ իր ամուսինը գորգը ծախելով չէ կրցած իրենց ուտելիք բերել, սակայն մարդկային եւ կրօնական հասկացողութեամբ ներողաբար մօտեցաւ ամուսինին արարքին, եւ տունին պահարանէն իր մետաքսեայ գլխածածկոցը, որ եկեղեցի գացած ատեն կը գործածէր, ամուսինին տուաւ, որպէսզի ծախէ եւ ընտանիքին ուտելիքներ բերէ:



Ճէմիլ մետաքսեայ գլխածածկոցը տարաւ բազմաթիւ վաճառատուներ ներկայացուց, սակայն դժբախտաբար գնող չգտաւ: Վերջապէս, յոգնած՝ խանութ-խանութ պտըտելէ, որոշեց տուն վերադառնալ:

Ճամբան հանդիպեցաւ կառքով ձուկ ծախողի մը, որ յաճախորդ կը փնտռէր կառքին վրայ մնացած երկու ձուկերը ծախելու համար: Ընկերը ուզեց այդ ձուկերը գնել, սակայն դրամ չունէր գնելու համար: Մօտեցաւ ձուկ ծախողին եւ ըսաւ, որ ինք կ'ուզէ երկու ձուկերը ունենալ, սակայն դրամ չունի, եւ առաջարկեց կնոջը տուած մետաքսեայ գլխածածկոցը տալ ձուկերու փոխարէն:

Ձուկ ծախողը նախ չուզեց ձուկերը տալ գլխածածկոցի փոխարէն, սակայն Ճէմիլին գլխածածկոցի արժէքի գնահատումներէն ու ազանքներէն տարուելով ու տեղի տալով՝ համաձայն եղաւ ձուկերը տալ գիշերային բացառիկ յաճախորդին:

Ճէմիլ ձուկերը շաղկած ուրախ-գուարթ տուն հասաւ, ուր իր ընտանիքին անդամները անհամբեր իր գալուն կը սպասէին, եւ տեսնելով ձուկերը՝ ուրախացան, որ այդ օր փառաւոր ճաշ մը պիտի ունենան:

Տիկին շորճէթ ձուկերը առաւ, որպէսզի տապկէ: Երբ ձուկերը սկսաւ մաքրել եւ փորը ճեղքել, դանակը զարնուեցաւ կարծր առարկայի մը: Ձուկը ամուսինին քով բերաւ եւ ձուկին փորին մէջ գտան ապակիի նմանող երկու սանթիմ մեծութեամբ առարկայ մը: Էրիկ-կնիկ ելած առարկան մաքրեցին՝ զարմանալով անոր բացառիկ փայլունութեան: Տիկին շորճէթ ամուսինին ըսաւ, որ ձուկին փորէն գլտնուած առարկան առաւօտուն տանի եւ ոսկերիչի մը ցոյց տայ, հասկընալու համար անոր բաղադրութիւնը:

Ոսկերիչը, որ նաեւ ազամանդագործ էր, խոշորացոյցով քննեց եւ ըսաւ.

— Այո, շատ սուղնոց ազամանդ մըն է: Ես այս գնելու կարողութիւն չունիմ, որովհետեւ միլիոններ կ'արժէ: Ունիմ ազամանդագործ բարեկամ մը, անոր ցուցնենք, թերեւս ան կը գնէ:

Ազամանդը ծախուեցաւ երկու միլիոն իրաքեան տինարի:

Ճէմիլ եւ կինը խոշոր պայուսակ մը լեցուցին այդ գումարով: Տունին կահ-կարասիները նորոգեցին, հեռատեսիլ, նոր հագուստեղէններ, անձնական ինքնաշարժ գնեցին եւ նոր ապրելակերպ ունեցան:

Շրջան մը ետք, գիշեր մը իրենց տան դուռը զարնուեցաւ, բացին, նոյն աղքատ մուրացկանը՝ որուն տուած էր գորգը ծախելով ունեցած դրամը: Ընկերը ճանչցաւ աղքատը եւ ներս մտնելով տրցակ մը դրամ առաւ տալու համար աղքատին, յիսուն հազար իրաքեան ոսկիի գումար մը: Սակայն աղքատը հեռացած էր: Վազեց դէպի փողոց, գտաւ աղքատը, որ այդ պահուն լուսաւորուած անձ մըն էր՝ Քրիստոսի նմանութեամբ:

*Ճէմիլ զգաց կատարուած հրաշքը, ծունկի գալով խոնարհեցաւ  
աղքատի տեսքով զինք հարստացուցած Յիսուսին, որ ձեռքը դնելով  
ճէմիլի գլխուն՝ ըսաւ.*

*– Երբ ինձի տուիր քու բոլոր ունեցածդ, ես քեզի համար աղօթեցի,  
որ Աստուած քեզի տայ ինձի տուածիդ հարիւրապատիկը: Ահա-  
լասիկ ատիկա կատարուեցաւ աւելիով:*



Հայ Կեդրոնի շրջափակին մէջ գտնուող Մեծ Եղեռնի յուշարձանին առջեւ,  
ձախէն աջ՝ ընկեր Յակոբ Ճանպագեան, բանաստեղծ Փագ Յակոբեան  
և Գրիգոր Հոթոյեան՝ Հոկտեմբեր 2006-ին

## ԱՊՈՒ ՍԱՅԻՏ ՊԱՐՐԻ

Հալէպի *Al-Shark* (Արեւելք) գարեջուրի գործարանը կը գտնուէր Հալէպ քաղաքի Նոր Գիւղ հայկական արուարձանէն շուրջ 10 քիլոմետր հեռավորութեան վրայ, Միսլիմիէ չհասած, Աւեհա գիւղին մօտ գտնուող ընդարձակ հողամասի մը վրայ:

Սուրիոյ մէջ իսլամական կրօնքի պատկանող քաղաքացիներուն չէր արտօնուած ոգելից ըմպելիներ շինել կամ ծախել: Այդ պատճառաւ, օղիի եւ գարեջուրի պատրաստութիւնը ստանձնած էին քրիստոնեաները, ինչպէս նաեւ շուկայի վրայ, խանութներու մէջ ծախելու մենաշնորհը:

Եւ նկատի ունենալով, որ Հալէպի մէջ գարեջուրի գործարան գոյութիւն չունէր, Հալէպի քրիստոնեայ գործարար անձնավորութիւններ՝ Պիթլիսի, Ռապպաթ, Անթաքի եւ ուրիշներ կը ծրագրեն ընկերութիւն մը հիմնել՝ բաժնետոմսային դրութեամբ, եւ արեւմտեան գերմանական հաստատութիւններէն կը գնեն գարեջուրի պատրաստութեան յատուկ մեքենաներ:

Գերմանիայէն կը հրաւիրեն նաեւ գարեջուրի պատրաստութեան եւ գործարանի շինութեան մասնագէտներ, որոնք գնուած հողին վրայ շինութեան կը ձեռնարկեն եւ մեքենաներու ու կազմածներու հաստատուելէն ետք՝ գարեջուրի արտադրութիւնը կը սկսի 1958-ի ըսկիզբները:

Գարեջուրի ընկերութիւնը կը ղեկավարուէր բաժնետոմսերու տէր անձերու կողմէ ընտրուած վարչական հինգ հոգիներ խորհուրդի մը կողմէ, զոր կը գլխավորէր պաշտօնի կոչուած ընդհանուր տնօրէն մը:

Գարեջուրի պատրաստութեան պիտանի խարկուած գարիին (*malt*) հետ կը խառնուէր գերմանական յատուկ խոտ մը, արաբերէնով հաշիշ էլտիւնար կոչուող, որ գարեջուրին քիչ մը լեղիութիւն կու տար:

Ներածուած մալթը եւ բրինձը յատուկ մասնագիտութեամբ կ'եփէր խոշոր կաթսաներու մէջ, ապա կը փոխադրուէր թթխմորումի բաժին, ուր եօթը օր մնալով եւ կազ արտադրելէ ետք՝ կը փոխադրուէր սառնարան սենեակներուն մէջ հաստատուած խոշոր կաթսաներուն մէջ, ուր 40 օր մնալէ ետք, գտումի գործիքներէ անցնելէ յետոյ, փոփերու միջոցաւ կը հասնէր շիշերը լեցնող մեքենային, ապա փաթորիլգէ (շիշին օդը որոշ տաքութեամբ քաշող մեքենայ) ըլլալէ ետք, կ'ամբարուէր եւ հոնկէ կ'իջնէր շուկայ:

Քեռայրս՝ Յակոբ Ասատուրեան, որ ելեկտրականութիւն արտադրող ալթերնաթէօրներու, քոմփրէտրներու եւ ընդհանրապէս մեքե-

նական գործիքներու պատասխանատուն էր, լսելով, որ գերմանացի ելեկտրագէտը շուտով Գերմանիա պիտի մեկնի վերջնականօրէն, իմ մասին կը խօսի գործարանի ընդհանուր տնօրէնին՝ որպէս յարմար թեկնածու այդ պաշտօնին, եւ յանձն կ'առնէ զիս ներկայացնել ընդհանուր տնօրէնին:

Տնօրէնին հետ հանդիպումը յաջող անցնելէ ետք, կ'ընդունուիմ որպէս ելեկտրական բաժանմունքին պատասխանատու: Գործի կը սկսիմ 25 Ապրիլ 1961-ին:

Գործաւորներու գործարան փոխադրութիւնը կը կատարուէր մարդատար ինքնաշարժներով (պասերով), իսկ պաշտօնեաներուն փոխադրութիւնը՝ վանով (մինի-պասով): Առօրեայ աշխատանքը կը սկըսէր առաւօտեան ժամը 7-ին եւ վերջ կը գտնէր կէսօրէ ետք ժամը 3-ին: Ամառուան շրջանին, գարեջուրի լայն սպառման հասնելու համար, լեցնելու բաժնի (Էմպոլքէյաժ) գործաւորներ եւ կարգ մը հսկիչ պատասխանատուներ աւելորդ ժամեր կ'աշխատէին եւ ըստ այնմ ժամը ժամուկէս կը վճարուէին:

Մինչեւ իմ աշխատանքի սկսիլս, արդէն իսկ մալթի պատրաստութեան շէնքը շինուած էր եւ հաստատուելիք մեքենաներ հասած էին: Մեքենաներու տեղաւորումի աշխատանքին մղուած գործաւորներու կողքին, ես ալ իմ կարգիս ստանձնեցի մալթերիի ելեկտրական լուսաւորումի, մեքենաներու մոթոռներու, քալլօներու, ելեկտրական թելերու ուղղութիւններու ճշդումի եւ հաստատումի աշխատանքներուն պատասխանատուութիւնը, անշուշտ օգնական գործաւորներով:

Բոլոր մեքենաներու աշխատանքը փորձելէ ետք, շոտիէրը (տաք ջուր կամ շոգի արտադրող գործիք) գերմանացի մասնագէտին հետ հաստատեցինք եւ որոշ շրջան մը ետք տեղական գարիով սկսանք մալթ պատրաստել:

Գարեջուրի «Էլ-Շարք» գործարանի աշխատանքները հիանալիօրէն կը շարունակուէին: Գարեջուրի գործարանի կարեւոր բաժիններու ղեկավարները հայեր էին: Մեքենական բաժին՝ Յակոբ Ասատուրեան, ելեկտրական բաժին՝ Գրիգոր Հոթոյեան, լեցնելու բաժին եւ նորոգող՝ Սարգիս Հինտոյեան, թթիսմորումի բաժին՝ Գրիգոր Ժամկոչեան: Այլ բաժիններու մէջ ալ աշխատող հայեր կային: Ընդհանուր գումար՝ 20 հոգի:

Քանի մը տարի գարեջուրի գործարանը եւ մալթի բաժինը որակաւոր գարեջուր արտադրելով՝ փնտռուած գարեջուր մը դարձած էր, մրցելով գերմանական եւ այլ գարեջուրերուն հետ:

Եւ յանկարծ, մինչ այդ շրջող շուկաները իրականութիւն դարձան եւ Հալէպի գլխաւոր գործարանները ազգայնացուեցան, որոնց կարգին՝ գարեջուրի գործարանը: Ընդհանուր տնօրէնը արձակուեցաւ իր պաշտօնէն: Վարչական խորհուրդը լուծուեցաւ եւ ազգայնացումէն քանի մը օր ետք պետութեան կողմէ նշանակուած նոր տնօրէնը եկաւ

գործարան եւ հաւաքելով բոլոր գործաւորներն ու պաշտօնեաները՝ ազգայնաշունչ եւ ընկերվարական ճառ մը խօսելով՝ հրաւիրեց գործաւորները, որ պատուով աշխատին եւ հոգ տանելով արտադրութեան որակին՝ նպաստեն սպառումի յաւելումին:

Տնօրէնը իր ճառը վերջացուց՝ ներկայացնելէ ետք գործարանի պահակներու պետի պատասխանատուութիւնը ստանձնած Մուհամետ Սալիտ Պարրի կամ Ապու Սալիտ Պարրի անունով անձնաւորութիւն մը:

Գործաւորներուն մէջ իր մասին լսած անձեր գտնուեցան, որոնք կը փսփոսային, որ Ապու Սալիտ, որ եղած է Արաբական Ազգային Կուսակցութեան (Հրգպ Էլ-Ուաթանի) մարտական պատասխանատուն, երեսփոխանական ընտրութիւններու ընթացքին իր կատարած ահաբեկչութիւններուն համար 15 տարի բանտարկութեան դատապարտուած էր:

Ապու Սալիտ իր պաշտօնը խղճով եւ իմաստութեամբ կատարեց: Պահակները աւելի աշալուրջ դարձան՝ վախնալով Ապու Սալիտի նայուածքէն եւ գօտիին վրայ երեւցող մէկ եւ երբեմն երկու ատրճանակներու տեսքէն:

Գործարանի տնօրէններու փոփոխութեան հետ, Ապու Սալիտի ազդեցութիւնը կը զօրանար եւ օր մըն ալ հրահանգներու ընթացքին ցուցափեղկին մէջ կարգացիք, որ Ապու Սալիտ կոչուած է նաեւ ընդհանուր հսկիչի պաշտօնին:

Գարեջուրի գործարանին ազգայնացումէն ետք, Հալէպի Արդուպ թաղամասին մէջ գտնուող ազգայնացուած «Ալ-Շարք» պիսֆուիթ-շոֆուլայի գործարանը փոխադրուեցաւ գարեջուրի գործարանի շրջափակին մէջ գտնուող հողամասին վրայ կառուցուող եւ արդէն մասնազիտականօրէն յղացուած եւ շինուած շէնքը, որուն ելեկտրական բոլոր տեսակի գործերը իմ պատասխանատուութեամբ իրագործուեցան, որպէս գարեջուրի, մալթի, պիսֆուիթի եւ շոֆուլայի գործարաններու ելեկտրական բաժիններու պատասխանատու:

Ապու Սալիտ, որպէս ընդհանուր հսկիչ եւ պահակներու պատասխանատու, իրեն յատուկ գրասենեակները ունեցաւ գարեջուրի եւ պիսֆուիթ-շոֆուլայի գործարաններուն մէջ:

Որպէս ելեկտրական բաժնի պատասխանատու, ի պաշտօնէ կ'այցելէի գարեջուրի, մալթի, պիսֆուիթ-շոֆուլայի բոլոր բաժինները եւ ծանօթութիւն ու գործակցութիւն հաստատած էի բոլոր պաշտօնեաներուն ու գործաւորներուն, ինչպէս նաեւ պետական (մալիա) տուրքի պատասխանատու պաշտօնեաներուն հետ, որոնք, արձանագրելով շուկայ իջնող գարեջուրի քանակները, պետական տուրք կը գանձէին գործարանէն:

Յաճախ կ'այցելէի Ապու Սալիտի գրասենեակները, ուր կ'ընդունուէի սիրով եւ յարգանքով: Անմիջապէս սուրճ կ'ապսպրէր, պիս-

բուխի տուփը (Ալ-Շարք) կը դնէր սեղանին վրայ, մաքսանենգուած ծխախոտով տուփը հրամցնելով՝ կը հրաւիրէր, որ ծխիկ մը փաթթեմ:

Այդ այցելութիւններուն ընթացքին ան կը պատմէր իր սխրագործութիւններէն, երեսփոխանական ընտրութիւններու ընթացքին Արաբական Ազգային Կուսակցութեան եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գործակցութեան, Արաբական Ազգային Կուսակցութեան ղեկավար Տոքթ. Քէյեալիի եւ Հրաչ Փափագեանի գործակցութեան մասին, միշտ ընդգծելով հայ ղեկավարութեան ուղղամտութիւնը, պարկեշտութիւնը եւ հաւատարմութիւնը Արաբական Ազգային Կուսակցութեան հետ իրենց գործակցութիւնը անխախտ պահելու՝ երեսփոխանական ընտրութիւնը կորսնցնելու գնով:

Ան ինծի պատմեց բանտի կեանքէն կարգ մը դէպքեր, պետութենէն բանտարկեալներու կարգ մը իրաւունքներու ստանձման համար իր կազմակերպած զանգուածային հացադուլին մասին՝ մինչեւ պահանջներու գոհացում:

Բայց ինծի համար շատ հետաքրքրական եւ գնահատելի էր իր բանտ մնացած շրջանին բանտարկուած հայերուն հանդէպ իր հոգածութիւնը եւ տիրութիւնը, մանաւանդ բանտի խճողուած սենեակներուն մէջ հայ տղոց սեռային մօտեցում ցոյց տուող բանտարկեալներուն սպառնալով, որ հեռու մնան հայերէն: Եւ այս պատահածը ապագային ինծի պատմեցին ինծի ծանօթ երկու անձեր, որոնք այդ շրջանին բանտ մնացած էին:

Վերոյիշեալ գործարաններու իմ երկարամեայ աշխատանքիս վերջին 5-6 տարիներուն, նոր տնօրէն նշանակուեցաւ երկրագործութեան Էմիլնիէօր երիտասարդ մը, Սուրիոյ նախագահ Հաֆէզ Ասատի Ղրտահա գիւղէն, Արաբական Պաաս Արապի Իշթիրաքի կուսակցութեան ղեկավար անդամներէն՝ Իւսթազ Մահմուտ Հասան:

Նոր տնօրէնին հետ իմ մտերմութիւնս եւ բարեկամութիւնս իրեն առիթ տուաւ, որ ինծի առաջարկէ անդամագրուել Արաբական Պաաս Արապի Իշթիրաքի կուսակցութեան: Իմ պատկանած հայկական կուսակցութեան՝ Հ. Յ. Դաշնակցութեան կարծիքը առնելէ ետք, համաձայնութիւն յայտնեցի իր առաջարկին: Որպէս կուսակցական անդամ եւ գործարաններու մէջ կարեւոր պաշտօն վարող անձնաւորութիւն, զիս նախագահ ընտրեցին գործարանի սենտիքային, ապա, այդ պաշտօնին հետեւանքով, դարձայ գործարաններու վարչական խորհուրդի անդամ, մասնակցելով խորհուրդի ժողովներուն եւ առնուած որոշումներուն իմ կարծիքս եւ քուէս տալով:

Իմ պաշտօնիս բերմամբ, յաճախ կը հանդիպէի գործարաններու ընդհանուր քարտուղար, Լաթաքիոյ շրջաններէն Հալէպ փոխադրուած Աֆիֆ Արնուկին՝ Գերմանիայէն ելեկտրական գործիքներ ապրսպրելու համար, որովհետեւ հաստատութեան բոլոր ապսպրանքները իր միջոցաւ կ'ըլլային:

Աֆիֆ Արնուկի հետ իմ հանդիպումներովս, յաճախ գործով, մը-տերմուլթիւն մը ստեղծուեցաւ մեր միջեւ, եւ սուրճ մը խմելու ընթացքին կը խօսէինք գործարանին, ընտանեկան, անձնական եւ ընկերա-յին հարցերու մասին:

Նոյնը կը պատահէր իմ հերթական այցելութիւններուս ընթացքին Ապու Սայիտին, որուն հետ յաճախ կը խորհրդակցէինք գործա-րանի բանուորական կացութեան եւ ստեղծուած մանր-մունր դժուարութիւններու մասին: Այդ խօսակցութիւններու ընթացքին, ձեռով մը խօսք բացուեցաւ ապրուստի սղութեան եւ իմ ունեցած դրամական նեղութեանս մասին: Ապու Սայիտ առանց տատամսելու ձեռքը դըր-պանը նետեց եւ տրցակ մը հարիւրնոց եւ 50-նոց թղթադրամ դրաւ սեղանին վրայ՝ ըսելով. «Մուսլլէմ Գարգուր, քեզի պէտք եղած գու-մարը ա՛ն եւ երբ ունենաս՝ վերադարձո՛ւր»: Խորապէս զգացուած, Ապու Սայիտին ճակտէն համբուրեցի որպէս եղբայր, մեծապէս շնորհակալութիւն յայտնելով իր անկեղծ եւ անշահախնդիր առաջարկին համար:

Եւ օր մը պատահեցաւ, որ Ապու Սայիտ եւ Աֆիֆ Արնուկ իրարմէ նեղուեցան եւ սկսան իրարու հետ չխօսիլ: Իմ յարաբերութիւններս երկուքին հետ եղած էին եղբայրական: Գէշ կացութեան մատնուեցայ: Երբ Ապու Սայիտին մօտ նստած կ'ըլլայի, անարգանքով կը խօսէր Աֆիֆ Արնուկի մասին, նոյնը կ'ընէր Աֆիֆ Արնուկ Ապու Սայիտին մասին: Սակայն ես, երբ այդ բովանդակութեամբ կ'արտայայտուէին իրարու հանդէպ, իրենց կ'ըսէի. «Բայց ան ձեր մասին ափսոսանքով եւ զղջումով կը խօսի՝ ըսելով, որ չար ժամու մը արդիւնք էր եղածը»:

Եւ օր մըն ալ այս երկու բարեկամներս հաշտուեցան իմ ներկայութեամբ: Ապու Սայիտ ըսաւ, որ ինք միշտ իրեն հանդէպ շատ գէշ արտայայտութիւններ կ'ունենար Մուսլլէմ Գրիգորին առջեւ: Նոյնը ըսաւ Աֆիֆ Արնուկ: Ապու Սայիտ լսելէ վերջ իմ կատարած դերս, դարձաւ ինծի ու ըսաւ. «Հալալ ըլլայ քու կերած կաթը, դուն մարդկային ազնիւ զգացումներով սնած տղայ մըն ես, կ'արժէ քեզի հետ բարեկամութիւն պահել»:

Ապու Սայիտ զիս եւ բոլոր հայերը այնքան կը սիրէր, որ որեւէ գործուած յանցանք տնօրէնին հասնելէ առաջ զիս կը կանչէր եւ կը թելադրէր, որ մեր միջոցներով հարցերը լուծենք:

Յաճախ աշխարհական եւ զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներ կ'այցելէին գործարաններու ընդհանուր տնօրէնին, որոնց ես եւ Ապու Սայիտն ալ ներկայ կ'ըլլայինք: Այցելուները կը հիւրասիրէինք գարեջուրով, պիսիուիթով եւ շոֆուլայով, եւ իրենց մեկնած ատեն իրենց կը նուիրէինք գարեջուրի յատուկ գաւաթներ, որոնց վրայ արաբերէն եւ անգլերէն «Պիրա Էլ-Շարք» գրուած էր:

Այս այցելութիւններու ընթացքին, պետական կարգ մը պաշտօն-  
եաներու եւ զինուորականներու ծանօթութեանս եւ որպէս Պաաս կու-  
սակցութեան անդամ՝ կուսակցական կապերովս մեծապէս օգտակար  
եղայ իմ ազգիս, բարեկամական յարաբերութիւններ ստեղծելով Հա-  
յութեան դեկավարութեան եւ երկրի պետական անձնաւորութիւննե-  
րու միջեւ, որ կը շարունակուի մինչեւ այսօր:

Ապու Սայիտ անկողմնակալ եւ արդարասէր մարդ էր: Իմ հեր-  
թական այցելութիւններուս ընթացքին անոր խօսեցայ մալթերիի մէջ  
աշխատող գործաւորի մը յաւելում տալու մասին, նկատելով, որ լաւ  
եւ խղճամիտ աշխատող մըն է: Յաջորդ այցելութեանս Ապու Սայիտ  
ըսաւ. «Մուալլէմ Գարգուր, դուն անցեալ օր եկար եւ խնդրեցիր, որ  
ասինչին յաւելում տրուի: Քու մեկնելէդ վերջ այդ մարդը քովս եկաւ  
եւ քու վրադ զրպարտութիւններ ըրաւ: Ես դարձայ իրեն ըսի. «Ռուն  
չե՞ս ամչնար նման զրպարտութիւններ ընել մարդու մը մասին, որ  
քիչ առաջ քովս էր եւ քեզի Համար յաւելում կը խնդրէր»: Մարդը  
ամչցաւ եւ հեռացաւ: Կը տեսնե՞ս այս մարդուն անզգամութիւնը եւ  
նախանձը»:

Ամառները եւ ընդհանրապէս գարեջուրի պահանջը զգացուած  
ատեն, կարգ մը բաժիններու գործաւորներ, կարգ մը պատասխանա-  
տուներ եւ Ապու Սայիտ յաւելեալ ժամ կ'աշխատէին:

Վերջընթեր տնօրէնը՝ Թարէք Զայեատ, լսելով, որ կարգ մը գոր-  
ծաւորներ եւ Ապու Սայիտ աւելի ժամեր կ'աշխատին, կը հրահանգէ,  
որ աւելի ժամ աշխատիլ արգելուած է եւ եթէ պէտք ըլլայ աշխատիլ՝  
պէտք էր արտօնուէր տնօրէնին կողմէ:

Ապու Սայիտին այցելութիւնս դիմաւորուեցաւ տնօրէնին Հաս-  
ցէին շարուած Հայհոյութիւններով եւ սպառնալիքներով: Ուզեցի  
զինք յորդորել եւ բարկութիւնը մեղմացնել՝ ըսելով, որ ատիկա ժա-  
մանակաւոր կրնայ ըլլալ: Ան կ'ըսէր, որ այս արգելումը իրեն Համար  
եղած էր եւ թէ տակաւին տնօրէնը չի գիտեր իր ով ըլլալը: Դիտեցի  
Ապու Սայիտը. կողերուն մէկակական ատրճանակ ունէր եւ սեղանին ե-  
տին՝ արագահարուած մը:

Այդ օր կէսօրէ ետք կրկին Հանդիպեցայ Ապու Սայիտին, ան հե-  
տեւեալը պատմեց. «Ինչպէս միշտ, տնօրէնը եկաւ գրասենեակս, ես,  
մասնաւոր արագահարուածը սեղանիս ծայրը դրի, որ տնօրէնը տես-  
նէ: Առօրեայ խօսակցութենէն վերջ մեկնեցաւ: Մեկնելէն կէս ժամ  
ետք վեր ելայ, դուռը գարկի եւ ներս մտայ: Խօսակցութեամբ մը զբա-  
ղած էր: Մօտեցայ իրեն, ատրճանակը քունքին մօտեցուցի եւ ըսի.  
«Ռուն ո՞վ ես, որ կը Համարձակիս իմ աւելի ժամերս (օվըրթայմ)  
կեցնել: Հիմա այս փամփուշտը ուղեղդ կը պայթեցնէ: Նայիմ՝ դո՞ւն,  
թէ՞ ես»: Մարդը մեղմացաւ ու ըսաւ. «Այս արգելքը քեզի Համար չէ:  
Սխալմունք մը եղած է: Ռուն ազատ ես աշխատելու որքան որ ու-  
զես»: Եւ այսպէս հարցը վերջ գտաւ»:



Տարիներու ընթացքին Սուրիոյ մէջ գարեջուրի սպառումի յաւելումով՝ գարեջուրի պահանջը աւելցաւ: Հաստատութեան վարչական խորհուրդը որոշեց Արեւելեան Գերմանիայէն շիշերու մէջ աւելի արագ լեցնող մեքենայ բերել:

Շատ չանցած մեքենաները եկան, ինչպէս նաեւ մեքենաները լարող երկու գերմանացի մասնագէտներ: Իմ հասկացողութեամբս եւ աշխատանքով մոթոռներու եւ աշխատցնող կոճակներու քապլօներու (թելերու) գիծերը վերջացան: Ելեկտրական քապլօն, որուն վրայ կը գտնուին ժամացոյցները, բանալիները, կոճակները եւ այլն, երբ փորձեցի թելերուն կապել, նշմարեցի, որ սխալ քապլօ եկած է եւ այս քապլօն նոր հաստատուող մեքենաներուն է: Ապու Սայիտին յայտնեցի եղածը եւ միասին գացինք ընդհանուր տնօրէնին մօտ: Տնօրէնը շատ նեղուեցաւ, որովհետեւ ամառը կու գայ, գարեջուրի սպառումը կը շատնայ եւ հաստատութիւնը յաճախորդները գոհացնելու գարեջուր չունի:

Ապու Սայիտ ինծի դիմեց՝ ըսելով, որ կրնայի՞ ճար մը գտնել, որովհետեւ մինչեւ Գերմանիայէն նոր քապլօ գայ, երեք ամիս կը տեւէ: Ըսի. «Ես իմ գիտութեամբ կրնամ կացութիւնը փրկել, եթէ ինծի արտօնէք փոփոխութիւններ կատարել»:

Տնօրէնը խանդավառուեցաւ եւ ըսաւ. «Եթէ յաջողիս, քեզի դրամական եւ բարոյական գնահատանք կայ»: Ապու Սայիտ դարձաւ եւ ըսաւ. «Դուն հարցը լուծէ, մնացածը ինծի ձգէ»:

Քանի մը շաբաթէն, նախկինէն 5 անգամ արագութեամբ գիծը աշխատեցաւ եւ պետութենէն 300 սուրիական ոսկիի նուէր եւ գրաւոր գնահատանք ստացայ, ինչպէս նաեւ գրաւոր գնահատանք՝ Գերմանիայէն:

Ապու Սայիտ Պարրի երեք մանչ զաւակ ունէր՝ Սայիտ, Իսմայիլ եւ Ահմատ: Երկու զաւակները՝ Սայիտ եւ Իսմայիլ պաշտօնի կոչուեցան գարեջուրի եւ պիստուիթ-շոֆոլայի հաստատութեան մէջ, որոնք կ'աշխատէին մինչեւ իմ Գանատա հաստատուիլս 1975-ին:

Որպէս ծանօթութիւն յայտնեմ, որ Ապու Սայիտ Պարրի կը պատկանէր Պէթ-Պարրի ընտանիքին, որոնք կը բնակէին Հալէպի Պապ-Էլ-Ներապ շրջանին մէջ: Պէթ-Պարրի ընտանիքը կը բաղկանար շուրջ 500 անդամներէ: Պապ-Էլ-Ներապի արաբ ցեղախումբերը յաճախ իրարու հետ վէճ, վիճաբանութիւն եւ կռիւ կ'ունենային եւ այդ պատճառով Ապու Սայիտ Պարրի, 1970-ին, Հալէպի Պաղտատ կայարանի քրիստոնէական շրջանէն տուն մը գնեց եւ ընտանիքը հոն փոխադրելով հանգիստ կեանք մը ուզեց ապրիլ, իր կեանքին 15 տարիները բանտին մէջ անցընելուն խորապէս ցաւելով:

1975-ին, Ապու Սայիտին, ընդհանուր տնօրէնին եւ այլ բարձրաստիճան սպաներուն միջնորդութեամբ յաջողեցայ բազմիցս մերժուած հրաժարականս ընդունիլ տալ նախարարութենէն, որովհետեւ

այդ շրջանին մասնագետներուն երկրէն հեռանալ եւ գործէն հրաժարիլ արգիլուած էր, մանաւանդ իմ պարագայիս, որուն նկարը, որպէս աշխատանքի հերոս, տարիներով կախուած էր Հալէպի նամակատան դիմացի մայթին վրայ:

Երբեք չեմ մոռնար Ապու Սայիտին հետեւեալ արտայայտութիւնները հետեւեալ խօսքիս. «Ապու Սայիտ, գրպանդ երեք-չորս գրիչ կայ, տեսնողը կը կարծէ, որ դուն գոնէ երկրորդականը աւարտած ես»: Այս խօսքիս պատասխանեց. «Ա՛խ, միայն կարենայի այդչափ ուսում առնել. եթէ առնէի, պիտի տեսնէիր, որ ո՛ւր հասած կ'ըլլայի: Երկրորդ, իմ բնաւորութիւնս տարբեր պէտք էր ըլլար: Ես քեզի իրապէս կը նախանձիմ. հարիւր հազար սուրիական ոսկի պարտք ունենայի, միայն քու բնաւորութիւնդ եւ դիւանագիտութիւնդ ինձի ըլլար: Ես հայ ժողովուրդը սիրած եմ, որովհետեւ աշխատասէր, ազնիւ, հաւատարիմ եւ բարեկամութեան յարգը գիտցող եւ զայն պահող ազգ մըն է»:



Ջախէն աջ՝ գրագետներ Յակոբ Կարապետեան, Վահէ Օշական, Գրիգոր Հոթոյեան, Մինաս Թէօլէօլեան

## ԱՊԵՐԱԽՏ ՁԱԽԱԿԸ

1958-ին, Լիբանանի ամբողջ տարածքին անակնկալօրէն սկսան այդ օրերու Լիբանանի նախագահ Քամիլ Շամունի վարչակարգին դէմ ըմբոստական շարժումները, որոնք վերածուեցան գինեալ ապրստամբուլթեան, իսլամական ծայրայեղ ուժերու կողմէ:

Պատերազմական այդ շրջանին մենք կը բնակէինք Թրիփոլի քաղաքի Ռիատ Սուհ թաղամասին մէջ, իսկ քենեկալիս՝ Սարգիս Կոնճեանի ընտանիքը՝ մեր տունէն շուրջ 200 մեթր դէպի հարաւ, Հ. Յ. Դաշնակցութեան ակումբին մօտ:

Թէեւ ապստամբութեան եւ ուժակոծութիւններուն ֆիզիքական վնասներուն չէինք ենթարկուեր, սակայն երկուստեք արձակուած ուժակոծութիւններու եւ հրաձգութիւններու ձայները ահ ու սարսափ կը տարածէին ամէնուրեք, արգելք դառնալով գիշերները մեր հանգիստ քնանալուն:

Թրիփոլի կռիւները տեղի կ'ունենային քաղաքին հիւսիսը, Պապ Թըպպանէ կոչուող իսլամական շրջանէն դէպի քաղաքի կեդրոն՝ Թէլի շրջան եւ մինչեւ քաղաքի մուտքի Պահասս կեդրոնի հասնող ճամբուն վրայ հաստատուած գինուորական մարտկոցները, պատճառ դառնալով վախի, սարսափի եւ բազմաթիւ քաղաքացիներու մահուան, վիրաւորուելուն եւ շէնքերու քանդումին:

Երբեմն կը պատահէր, որ քանի մը ժամ հանդարտութիւն տիրէ եւ ուժակոծումները դադրին, այդ պարագային քենեկալս մտահոգ կ'ըսէր, թէ խաղաղութիւնը խորհրդաւոր է եւ կը սպասուի, որ շուտով ուժակոծումները աւելի սաստկութեամբ սկսին:

Եւ այս պայմաններուն մէջ, գրկուած բազմաթիւ կենսասնունդներէ, ձեռով մը կ'ապրէինք, միշտ յուսալով, որ այս վիճակը եւ Լիբանանի ժողովուրդին տառապանքը վերջ կը գտնէ օր մը, եւ սպասուած խաղաղութիւնը եւ հասկացողութիւնը կը տիրէ անպայման, վերջ տալով անպատուաբեր կռիւներուն:

Բայց ես ստիպուած էի աշխատիլ՝ ապրելու եւ ապրեցնելու համար ընտանիքս: Ամէն առտու, մութնուլուսուն, անտեսելով պատահելիք վտանգները, առաւօտեան աղօթքս արտասանելով, թէլ հրապարակէն փոքր հանրակառքը առնելով կ'երթայի Թրիփոլիէն շուրջ 20 քիլօմեթր դէպի Պէյրութ գացող ճամբուն վրայ Շեքքա գիւղաքաղաքի կրաղիւսի գործարանը, ուր ստանձնած էի ելեկտրական բաժնի պատասխանատուութիւնը:

Երեկոյեան նոյն ձեւով տուն կու գայի, երբեմն կրակոցներու տարափին տակ, միշտ խաչակնքելով եւ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը արտասանելով:

Այն ատեն միակ գաւազն՝ Անդրանիկը, չորս տարեկան, կարօտով գիրկս կը նետուէր եւ մոռցնել կու տար օրուան յոգնութիւններս:

Թրիփոլիի մեր տան մօտիկ կը բնակէր այրի կին մը, որուն որպէս անուն կը կոչէին Ըմ Իլիաս, բուն անունը չէինք գիտեր:

Ես եւ կինս՝ Շաքէն, Հալէպ ծնած եւ մեծցած ըլլալով, լաւ արաբերէն կը խօսէինք եւ այդ պատճառով տիկին Ըմ Իլիաս իր ազատ ժամերուն մեզի կ'այցելէր, մանչս՝ Անդրանիկը սիրելու եւ կեանքի փոփոխութիւն ունենալու համար:

Մեզի տուած այցելութիւններուն ընթացքին տխրութեամբ ու ցաւով կը պատմէր իր ամուսինին երիտասարդ տարիքին մահուընէ ետք իր ապրած ու անցուցած տառապագիւն օրերուն մասին, իր գաւակին՝ տասը տարեկան էտմոնին հոգ տանելուն, հոգալով մանաւանդ անոր դպրոցական ծախսերը:

Ամուսինէն ժառանգած փոքր գումարը երկու տարիէն սպառած էր եւ ինք ստիպուած հարուստներու տուները ծառայելով, անոնց լըւացքները լուալով՝ ձեւով մը ապրած էր, ծառայած տուններու տանտիրուհիներու կարգ մը տեղի-անտեղի քննադատութիւններուն եւ վիրաւորական խօսքերուն դիմանալով:

Ըմ Իլիաս այս բոլորը լալով կը պատմէր՝ աւելցնելով, որ իր միակ որդիին ապրուստին եւ ուսումին համար որոշած էր ամէն տեսակ դժուարութիւններու դիմադրել, նոյնիսկ մերժելով իր ձեռքը խնդրող բազմաթիւ թեկնածուները, որոնք պատրաստ էին զինք փրկելու այրի կնոջ վիճակէն, հոգալով նաեւ իր գաւակին՝ էտմոնին ուսանողական ծախսերը:

Ըմ Իլիաս հպարտօրէն միշտ մերժած էր նման առաջարկներ, շարունակելով իր ծառայական ծանր գործերը, միշտ յոյս ունենալով, որ իր մանչը կը մեծնայ, համալսարան կ'աւարտէ, կ'ամուսնանայ եւ տէր կը կանգնի իր յոգնաբեկ եւ ծերունի մօրը, գնահատելով մօրը մայրական բացառիկ զոհողութիւնները՝ ծննդեան օրէն սկսեալ մինչեւ իր ուսման աւարտը:

Ըմ Իլիաս «Անդրանիկը կարօտցայ» ըսելով մեզի կու գար: Միասին հայկական սուրճ կը խմէինք եւ այդ միջոցին կը սկսէր պատմել իր հանգուցեալ ամուսինին հետ ապրած շուրջ տասը տարիներու երջանիկ օրերէն, եւ անոր ունեցած քաղցկեղ (ֆաւսէր) հիւանդութեան ճիրաններուն մէջ ունեցած ցաւերուն հետեւանքով անտանելի տառապանքներուն մասին:

Մենք կ'ուզէինք մեր կարողութեան չափով մխիթարել զինք, իրեն պատմելով նման անբախտութիւն ունեցող կարգ մը մարդոց կեանքէն, սակայն անկարելի կ'ըլլար թեթեւեցնել անոր ունեցած խոր

վիշտը, պատճառաբանելով, որ իր տղան վստահաբար ներկայիս մեծ-  
ցած է եւ հաւանաբար յաճախ զինք կ'այցելէ եւ կը հոգայ իր ծախսե-  
րը:

Իր տղուն մասին գրեթէ չէր խօսած: Մեր անդրադարձը տղուն  
մասին՝ նոր յուզումի եւ լացի դուռ բացաւ եւ հետեւեալը պատմեց.—

«Ամուսինիս մեռնելէն վերջ, ինչպէս նախապէս պատմած եմ, մեր  
խնայողական գումարներուն սպառումէն ետք, ստիպուած հարուստ  
ընտանիքներու տուններուն ծառայելով ապրեցանք, մինչեւ զաւակս  
աւարտեց Թրիփոլիի Ֆրանսական երկրորդական վարժարանը: Տղաս  
կ'ուզէր իր ուսումը շարունակել եւ համալսարանական կրթութիւն  
ստանալ: Սակայն համալսարանական ուսումը մեծ ծախսերու ու թո-  
շակի կը նայէր: Զաւակս՝ Էտմոնը, կ'ուզէր իր ուսումը շարունակել  
Ֆրանսա, Փարիզի Ֆրանսական բժշկական համալսարանին մէջ: Ի՞նչ  
կրնայի ընել. չունէինք ոեւէ ազգական կամ բարեկամ՝ նման բարե-  
գործութիւն ընելու յանձնարարութիւն ստանձնող: Զաւակս կը պըն-  
դէր, կը խնդրէր, կ'աղաչէր, որ անպայման միջոցներ գտնեմ զինք  
Ֆրանսա զրկելու եւ համալսարան արձանագրուելու:

Երկար մտածելէ եւ տղուս հետ խորհրդակցելէ ետք, ստիպուած  
մեր սեփական տունը ծախելու որոշում առինք:

Տունս ծախու դնելէս ետք, տուներու եւ կալուածներու առեւտու-  
րով զբաղող Ապու Հապիպը, մի քանի յաճախորդ բերելէ վերջ, յաջո-  
ղեցաւ մեր պահանջած գումարով ծախել մեր տունը, տունը պարպե-  
լու մէկ ամսուան պայմանաժամով: Զաւակս իր բոլոր ծախսերը հո-  
գալու պէտք եղած գումարին տիրանալով՝ մեկնեցաւ Փարիզ եւ ար-  
ձանագրուեցաւ Սորպոն համալսարանի բժշկական ակադեմիան:

Տունս ծախելէ եւ պարպելէ ետք, ներկայ բնակած տունս վարձե-  
ցի, ապրելով առանձին, շարունակելով որպէս սպասուհի ծառայել  
հարուստներու տուները: Բարեբախտաբար ձեզի հետ ծանօթացայ եւ  
դուք եղաք զիս մխիթարողը: Մանաւանդ Անդրանիկը սիրելով զաւ-  
կիս կարօտը կ'առնեմ, միեւնոյն ատեն շատ շնորհակալ եմ ձեր հիւրա-  
սիրութեան եւ յաճախակի անկեղծ ընդունելութեան համար:

Հիմա պիտի հարցնէք ի՞նչ եղաւ զաւակիս՝ Էտմոնին ուսումը:

Ուրեմն, մինչեւ իր համալսարանը աւարտելը եւ բժշկական վկա-  
յական ստանալը, ծախած տունիս փոխարժէքը եղող գումարը սպա-  
ռեցաւ եւ իրեն նիւթապէս օգնելու անկարողութեան մատնուեցայ,  
իսկ իմ աշխատավարձով հագիւ կարող էի տանս վարձքը վճարել ու  
տնային եւ այլ ծախսերուս հասնիլ:

Էտմոն Ֆրանսա մնալով՝ որպէս բժիշկ աշխատեցաւ քանի մը  
տարի: Տարին մէկ-երկու նամակ կը զրկէր ինծի՝ հարցնելով առողջու-  
թեանս մասին: Օր մըն ալ իր զրկած նամակներէն մէկուն մէջ կը տե-  
ղեկացնէր, որ ամուսնացած է Ֆրանսացի օրիորդի մը հետ եւ որոշ

գումար մը խնայելէ ետք, կը ծրագրէ Թրիփոլի վերադառնալ եւ բժըշկական աշխատատեղի մը վարձելով՝ Թրիփոլի մէջ աշխատիլ:

Դժբախտաբար, իր նամակներուն մէջ «Մայրիկ, քեզ շատ կարօտցած եմ» խօսքի եւ զգացումի չեմ հանդիպած, մանաւանդ Փրանսուհիին հետ ամուսնանալէն ետք:

Օր մըն ալ լսեցի, որ Թրիփոլի եկած է, տուն եւ բժշկական աշխատասենեակ վարձած է, առանց ինծի տեսնուելու կամ ինծի այցելելու:

Կարօտցած էի զաւակս, կ'ուզէի անպայման զինք տեսնել: Անհամբեր դառնալով, որոշեցի իր բժշկական աշխատանոցը երթալ:

Հասցէն գտնելով՝ մտայ զբասնենակ: Կարգ մը հիւանդներ նստած կարգի կը սպասէին: Կարգը եկաւ ինծի: Քարտուղարուհիին մօտեցայ եւ ըսի, որ ես բժիշկին մայրն եմ եւ կ'ուզեմ զինք տեսնել: Քարտուղարուհին «վայրկեան մը» ըսելով՝ բժիշկին քննութեան սենեակը մըտաւ եւ վերադարձին ըսաւ.

— Բժիշկը շատ զբաղ է եւ չի կրնար քեզ ընդունիլ, դուն հոս անգամ մըն ալ մի՛ գար, ինք քեզի պիտի հանդիպի:

Այս խօսքին վրայ ուշաթափեցայ եւ երբ արթնցայ, ինքզինքս գտայ պառկած մահճակալիս մէջ: Ներկաներէն մէկը զիս ճանչնալով օգնած էր ինծի որպէսզի տուն հասնիմ»:

Ըմ Իլիաս, իր մէկ հատիկ տղուն, ամուսինին մահէն ետք մինչեւ բժշկական համալսարան աւարտելը, ամէն տեսակ զոհողութիւն յանձն առնելով, աշխատելով, սեփական տունը ծախելով, մայրական անբացատրելի նուիրումով օգնած է՝ հասնելու համար իր նպատակին: Իսկ զաւակը, այդ բոլոր զոհաբերութիւններու փոխարէն, տարիներէ ի վեր չտեսած, անոր բոլոր մայրական անձնագոհութիւնները վայելած, չէ ուզած տեսնել իր մայրը, որ իր երիտասարդ տարիքին այրի մնալով՝ մերժած էր ամուսնական բազմաթիւ առաջարկներ, որպէսզի իր զաւակը խորթ հօր ձեռքին տակ չմեծնայ եւ պատիւ բերէ իր մօր եւ ընտանիքին:

Աշխարհի մէջ մօր մը սէրէն աւելի խոր եւ անկեղծ սէր գոյութիւն չունի, բայց ապերախտ զաւակները կ'ուրանան այդ մաքուր սէրը, արժանի դառնալով աստուածային նզովքին:



## ԱՊՏԻՒԼ ԱՂԱՅԻ ԴՐԱԽՏԸ

«Կարմիր Սար»-ի ստորոտը, պարսկական քաղաքի մը մօտ կը բնակէր Ապտիւլ Աղան: Ան շրջանին տէրն ու տիրականն էր:

Ահրիմանը անոր տուած էր բոլոր չարութիւնները. վերցուցած էր անոր խիղճը եւ չար ոգիները մինչեւ երեկոյ անոր ականջին կը շշըն-ջային այնպիսի չարութիւններ, որոնցմէ նոյնիսկ դեւերը կը սոսկա-յին շատ անգամ:

Ապտիւլ Աղան հարուստ էր թագաւորի պէս: Անոր պալատը աշ-խարհի ամենագեղեցիկ շէնքն էր: Զինք կը գովաբանէին երգիչները: Անոր պալատի գեղեցկութիւններէն յաճախ գիրքերու երեսները կը լեցնէր Մանի նկարիչը: Անոր ճիւղերը արաբական նժոյգներ էին, տա-ւարները հաշուել կարելի չէր: Տունը ու տեղը եւ ամբարները այնքան լեցուն էին, որ շատ անգամ աւելորդ եւ փտած պաշարները դուրս կը թափէին պալատէն:

Եւ օր մը եղաւ, որ հեռու Հնդկաստանէն «Կարմիր Սար»-ին մօտ եկաւ տէրվիշ մը եւ նստաւ Ապտիւլ Աղայի դրան առջեւ՝ սպասելով, որ իր բաժինը տան եւ խնդրեց պալատին տէրը տեսնել:

Ապտիւլ Աղան կը գտնուէր իր հարեմին մէջ եւ ծիծաղեցաւ, երբ իրեն ըսին, որ տէրվիշ մը եկած է եւ կ'ուզէ զինք տեսնել: Հրամայեց, որ տէրվիշը ներս կանչեն, մտածելով անոր երգել-պարել տալ, հարե-մին մէջ գուարճանալ եւ գուարճացնել իր կիները:

Եւ եկաւ տէրվիշը, պատմեց Հնդկաստանի մասին, նկարագրեց արջառներու փառքը, անոնց գուարճութիւնները, երգեց արօթքներ եւ սկսաւ վայրենի պար մը:

Ապտիւլ Աղան շատ խնդաց, շատ ուրախացաւ եւ գուարճացաւ, հրամայեց տէրվիշը կերակրել եւ յետոյ անոր ըսաւ.

— Տէրվիշ պապա, դուն շատ երկիրներ տեսած ես, առածը կ'ըսէ, որ «Շատ ապրողը չի կրնար ամէն բան գիտնալ, այլ՝ շատ երկիրներ տեսնողները»: Եկո՛ւր, քեզի իմ պալատս ցոյց տամ, տեսնենք պիտի հաւնի՞ս:

Եւ տարաւ տէրվիշը իր հետ, ցոյց տուաւ հայելապատ պատերով, գեղեցիկ ծաղիկներով եւ գոյնզգոյն քարերով յատակուած սրահները, ցոյց տուաւ իր թաւշապատ օթոցներով դիվանխանէն, շքեղ պատկեր-ներով զարդարուած բալախանան, առաջնորդեց իր հարեմին ներսը, ցոյց տուաւ իր կիները, տարաւ գոմը՝ հիացնելով իր տաւարներու քա-նակութիւններով եւ գեղեցիկ նժոյգներով: Ցոյց տուաւ ցորենով եւ արմտիքներով լեցուած հսկայական ամբարները, անհամար կարաս-

ներով լեցուն մառանը, յետոյ տարաւ պարտէզը, որ ցոյց տար այդ աւազաններով պերճ այգին, ուր անհամար էին հովանաւորող շոճիներ, պտղատու ծառեր, ձուկերով լեցուն շատրուաններ եւ երփներանգ ծաղիկներով անուշահոտ ծաղկանոցներ:

Տէրվիչը տեսաւ բոլորը, սառնութեամբ նայեցաւ պարտէզին, կանգ առաւ Ապտիւլ Աղային առջեւ, նայեցաւ անոր հեգնական ժպիտով եւ ըսաւ.

— Ապտիւլ, որդի՛ս, այս բոլորը լաւ են, ամբարդ լեցուն է, հուրիփերիններ են կիներդ, շքեղ է պարտէզդ եւ պերճ՝ պալատդ: Այս բոլորին կէսը չունի հնդկական մահարազան, բայց եկուր հետս, քեզի քանի մը հարցում պիտի տամ:

Յետոյ արագութեամբ Ապտիւլը տարաւ պարտէզի ցանկապատին մօտ, ցոյց տուաւ դուրսի ոչ շատ հեռու երեւցող տուներու աւերակները եւ հարցուց.

— Ի՞նչ են ասոնք:

— Ա՛խ, ասոնք...— խնդալով ըսաւ Ապտիւլ,— ասոնք այն տուններն են, որ ես քանդել տուի, որովհետեւ մտադիր եմ պարտէզս այդ կողմէն լայնցնել:

— Ի՞նչ եղան այս տուներուն բնակիչները:

— Վնասեցի,— ըսաւ Աղան,— այդ հողերը իմ սեփականութիւնս են, վնասեցի այդ բնակիչները հեռու:

— Ո՞ւր գացին:

— Չեմ գիտեր:

— Լաւ ուրեմն,— ըսաւ տէրվիչը,— ես գիտեմ: Երէկ կ'անցնէի գետի մը ափէն, տեսայ խումբ մը խեղճ մարդիկ, որոնք մերկ, քաղցած եւ կեղտոտ էին: Անոնցմէ երեք հոգի ցուրտէն մեռած էին, երկուքը՝ անօթութենէն կը մեռնէին, եւ միւսներն ալ խենթացածի պէս վրաս թափուեցան եւ խլեցին իմ մօտս գտնուող հացերը: Քաղցած էին սոված գայլերու պէս:

— Ա՛խ,— ծիծաղելով գոչեց Ապտիւլ,— ի՞նչ գողեր են անոնք գիտե՞ս:

Տէրվիչը տարաւ Աղան պարտէզէն դուրս, ցոյց տուաւ հեռուէն երեւցող գիւղերը եւ հարցուց.

— Քո՞ւկդ են այս գիւղերը:

— Այո՛, իմս են, ինձի կը պատկանին:

— Ես անցայ այդտեղերէն,— ըսաւ տէրվիչը դառնութեամբ,— գիւղերուն մէջ դեռ մի քանի կով եւ 3-4 ոչխար մնացած է:

— Իրա՞ւ,— բացաբանչեց Ապտիւլ Աղան:— Ուրեմն վերակացուս պիտի ուղարկեմ, որ երթայ եւ այդ գիւղացիներէն հարկ ժողովէ:

— Այո՛,— աւելցուց տէրվիչը,— յայտնէ՛ վերակացուիդ, որ կար գիւղերուն մէջ մէկը, որ կտոր մը չոր հաց ունէր կրծելու:



Յետոյ տէրվիչը լռութեամբ գնաց դէպի աւագանը, մտածեց խորապէս եւ ըսաւ.

— Ապտի՛ւլ, պալատդ եւ պարտէզդ լաւ են, պակաս է ամենագըլխաւորը: Այդտեղ (ան ցոյց տուաւ գիւղերը) դրախտ պիտի շինես եւ այն ժամանակ դուն միակ անձը կ'ըլլաս, որ կ'ունենաս պալատ մը, կեանք մը դրախտային այս աշխարհի վրայ, որոնցմէ գուրկ է Հընդ-կաստանի ամենամեծ մահարագանն իսկ:

Ըսաւ, օրհնեց Ապտիւլը, կտոր մը հաց դրաւ կողքի տոպրակին մէջ եւ առանց ետեւ նայելու հեռացաւ պալատէն եւ այդ երկրէն:

Ապտիւլ Ադան երկար մտածեց, թէ ի՞նչ ըսաւ տէրվիչը. մի՞թէ այս երկրին վրայ ալ կարելի է դրախտ շինել:

Հրամայեց կանչել իր ծերունի դաստիարակը, անոր պատմեց տէրվիչին ըսածը, հրամայեց շուտով ձի հեծնել, վազել տէրվիչին ետեւէն եւ հարցնել իր կողմէն, թէ այդ «դրախտ»-ը ինչպէ՞ս պէտք է շինել:

Լալէն (դաստիարակը) ձի հեծաւ, գնաց տէրվիչին ետեւէն, հասաւ անոր եւ յայտնեց Ապտիւլ Ադային ըսածը:

Տէրվիչը ժպտաց, ձեռքն առաւ իր փոշոտ գաւազանը, կեցաւ Լալէին առջեւ եւ երգեց.

— Որդի՛, անհաց սեղան չե՞ս տեսած: Կանանց, մարդկանց եւ մանուկներու արցունք չե՞ս տեսած:

Երգեց, յետոյ խոր ակնարկ մը ձգեց ծերունիին վրայ եւ հեռացաւ:

Ծառան այդ խօսքերը միտքը պահեց, անպարանքով եկաւ տիրոջը մօտ եւ լսածը պատմեց անոր:

Ապտիւլը նախ զարմացաւ, իսկ յետոյ ծիծաղեցաւ:

— Խենթ է այդ տէրվիչը,— ըսաւ ան,— իսկ ես արդէն մտածեցի, թէ «դրախտ»-ը ինչպէ՞ս պէտք է շինել:

Եւ ան ձեռնարկեց «դրախտ»-ը շինելու գործին:

Քանզել տուաւ գիւղացիներու բոլոր տուները, դուրս դրաւ զանոնք իրենց չուլ-փալասին հետ, թողուց թացօթեայ՝ անձրեւի եւ ձիւնի տակ, ուր սկսան մեռնիլ: Խլեց անոնց հողերը, գիրենք ալ մտրակելով բերաւ եւ ձրիաբար աշխատեցնել տուաւ, որպէսզի մեծ եւ շքեղ պարտէզ մը շինել տայ, դրախտի նման գեղեցկացնելով այդ պարտէզը:

Այդ հողերուն վրայ շինել տուաւ պալատներ, շատրուաններ, ծառուղիներ, տնկել տուաւ հագուագիւտ բոյսեր, անմահական անուշահոտ ծաղկանոցներ...: Եւ ժողովուրդը հաւաքուած այդ պարտէզին շուրջը՝ կը մեռնէր գոչելով «հա՛ց, հա՛ց...»:

Անցան ամիսներ, «դրախտ»-ը սկսած էր վերջանալ: Ժողովուրդին կէսը մահացած էր, իսկ կէսին ձայնը կտրուած էր «հաց» պոռալով:

Վերջապէս, գեղեցիկ օր մը, Ապտիւլ Աղան իր բարեկամներուն եւ կիներուն հետ եկաւ մտնելու պարտէզը, ուր պատրաստուած էր խըն-  
ճոյք մը՝ գիւնիներով եւ համեղ կերակուրներով:

Ան եկաւ պարտէզին մօտ, հրամայեց մտրակելով հեռու քշել  
«հաց» պոռացող ամբոխը եւ ոտքը կոխեց իր պարտէզի այն շեմին  
վրայ, որ շաղախուած էր ժողովուրդին արիւնով:

Եւ հագիւ թէ ան կ'ուզէր ներս մտնել, յանկարծ մթնցաւ երկինքը  
եւ սկսան սաստիկ որոտումներ, աղաղակներ եւ թնդիւն...:

Ամէն ինչ իրար խառնուեցաւ:

Եւ երբ մշուշը ցրուեցաւ, ի՛նչ ահուելի տեսարան, հողին հետ հա-  
ւասարած էին Ապտիւլի պալատը, պարտէզն ու «դրախտ» կոչուող  
այգին:

Ոչ մէկ հետք մնացած էր այդ բոլոր արիւնաշաղախ պերճութիւն-  
ներէն:

Քարերով լեցուն ընդարձակ դաշտ մը միայն գոյացած էր անոնց  
տեղը եւ այդ դաշտը շրջապատած էր զարմացած ժողովուրդը:

Անյայտացած էին Ապտիւլ Աղան եւ անոր հարեմը, ծառաները,  
համհարզը եւ իր բոլոր բարեկամները:

Յագդամ (իրենց աստուածը) այդպէս պատժեց Ապտիւլը, իսկ ժո-  
ղովուրդը վարեց այդ հողերը, ցորեն ցանեց, տուններ շինեց եւ սկսաւ  
խաղաղութեամբ բնակել հոն:

Եւ երբ անցան օրեր, նոյն տէրվիշը եկաւ անցնելու այդ կողմե-  
րէն: Ամէն ինչ տեսաւ, ծիծաղեցաւ եւ ըսաւ.

— Ապտիւլը դրախտ շինելու փոխարէն դժոխք մը շինեց, որուն  
կրակին մէջ այրեցաւ ինք, իսկ երբ մեռաւ, այն ժամանակ միայն գո-  
յացաւ դրախտը:

Ժողովուրդը տնկեց սիւն մը, գամեց տախտակ մը սիւնին վրայ,  
ուր գրուած էր.—

Դրախտը ոչ թէ Ապտիւլը շինեց,  
Որ ժողովուրդը կոտորեց,  
Այլ՝ զանիկա Յագդամը շինեց,  
Որ ժողովուրդը Ապտիւլէն ազատեց:



# ՀԱՉԱՐԱՆ ՊԼՊՈՒԼ ՍՈՒԿԱԿԸ ԵՐԳԵԼՈՎ ԿԸ ԲՈՒԺԷ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԱՅՍՐԸ

Կը պատմուի, որ Չինաստանի Սանկ կայսերական տան 13-րդ կայսրն էր Նինկ-Սանկ, որ ծնած է 19 Սեպտեմբեր 1168 թուականին եւ մեռած՝ 17 Սեպտեմբեր 1224-ին, 56 տարեկանին: Ան կայսերական գահին վրայ կը մնայ 1194-էն մինչեւ իր մահը՝ 1224: Իր գերեզմանին վրայ գրուած է «Խաղաղ Տիրապետող»:

Արդարադատ եւ խաղաղասէր կայսրը՝ Նինկ-Սանկ, անակնկալօրէն կը հիւանդանայ: Կայսերական բժիշկները չինական բժշկութեամբ եւ դեղերով կը փորձեն բժշկել կայսրը, սակայն դժբախտաբար չեն յաջողիր, խոր տխրութիւն եւ մտահոգութիւն պատճառելով կայսրին եւ իր ժողովուրդին:

Չինացի տարեց զինուորական մը, մասնագիտութեամբ բժշկագիտութեան դասախօս, լսելով կայսրին հիւանդութեան մասին, կը փութայ կայսերական պալատ եւ ինքզինք ներկայացնելով՝ կ'ուզէ կայսրը տեսնել եւ տեղեկանալ բժիշկներու կատարած բժշկական ճիշդերուն մասին:

Ակադեմիկոս բժիշկ զինուորականը, քննելէ վերջ կայսրը, նախարարները ժողովի կը հրաւիրէ՝ անոնց բացատրելով կայսրին ունեցած հիւանդութեան պատճառը, կայսրին եւ նախարարներուն առաջարկելով կայսրին բուժուելու հազուագիւտ դեղը:

Կայսրը, կայսրին հարազատները եւ նախարարները մասնագէտ բժիշկէն կը խնդրեն իրենց տալ անուէր կայսրը բուժող դեղին, որպէսզի շուտով բերեն եւ կայսրը շուտով բուժուի:

Բժշկապետ Չինկ-Չանկ կ'ըսէ.

— «Հազարան Պլպուլ» սոխակը առասպելական թռչուն մըն է, որ կը գտնուի Փոքր Ասիոյ, հայկական Քէօթահիա (Կուտինա) փոքր գիւղին մէջ, եւ պահուած է անմատչելի տեղ մը: Անոր տիրանալու համար զայն բռնող հերոսը կ'ենթարկուի ծանր փորձութիւններու, յաղթահարելով զանազան դժուարութիւններ: «Հազարան Պլպուլ»-ը բնութեան զարթօնքի հրաշագործ ուժ ունի, գեղեցկութեան, արդարութեան ու ներդաշնակութեան խորհրդանիշ: Անոր երգով կը վերակենդանանան անէծքով եւ կախարդանքով պատուհասուած եւ հիւանդացած նշանաւոր անձնաւորութիւններ: Եթէ ձեր մէջ կը գտնուի կայսրը

եւ հայրենիքը սիրող հերոս մը, որ ամէն տեսակ դժուարութիւններու դիմադրել յանձն առնելով այդ սոխակը հոս բերէ, առիթ տալով, որ ան ապրումով եւ զգացումով երգէ, կայսրը կ'առողջանայ: Ահա՛ դեղատոմար կայսրին:

Կայսրին զօրապետերէն մէկը իր օգնականներով յանձն կ'առնէ բերել «Հագարան Պլպուլ»-ը, առողջացնելու համար իրենց սիրելի կայսրը:

Զօրապետը իր օգնականներով, ուտելիքներու պաշարներով եւ նիւթական միջոցներով ճամբայ կ'իյնայ ու ցամաքային դժուարանցանելի ճամբաներով, յաղթահարելով կլիմայական պայմանները, Կիլիկիոյ հայկական թագաւորութեան իշխաններու օգնութեամբ կը գտնեն «Հագարան Պլպուլ»-ը եւ կրկին մեծ դժուարութիւններով կը բերեն Չինաստան եւ կը տեղաւորեն կայսերական պալատին՝ կայսրին ննջասենեակին մէջ, ոսկեայ վանդակին մէջ դնելով եւ հոգ տանելով անոր առողջութեան, որպէսզի ուրախութեամբ երգէ:

Եւ ի՛նչ հրաշք: Կայսրը «Հագարան Պլպուլ»-ի երգերը ունկընդրելով՝ օրէ-օր կը սկսի առողջանալ եւ վերագտնել իր նախկին առողջութիւնը, նիւթական եւ բարոյական պատիւներով զնահատելով բժշկապետ գինուորականը եւ սոխակը բերող գինուորական հրամանատարը:

Սոխակը իր երգերով կը բուժէ Չինաստանի կայսեր անբուժելի կարծուած հիւանդութիւնը:

\* \* \*

Նոյնպէս կը պատմուի, որ ժամանակին, Արեւմտեան Հայաստանի գիւղերէն մէկուն մէջ կը պատահի հետեւեալը:

Երկու դրացիներու տարեկից ընկերներ, գրեթէ ամէն օր դպրոցէն գալէ ետք, իրարու հետ կը խաղան զանազան խաղեր: Սակայն օր մը, խաղի արգիւնքով յաղթողին իրաւունքը չընդունող ընկերներէն մէկը կը հայհոյէ ընկերով հօրը, պատճառ դառնալով կռիւի եւ ծեծուրուտութի: Մայրերը դուրսի աղմուկը լսելով՝ դուրս կ'ելլեն եւ իրարմէ կը բաժնեն կռուողները, սակայն, ընկերներէն մէկը վիրաւորուած ըլլալով, երեկոյեան հայրերը տուն գալով՝ կը տեղեկանան կռիւի մասին: Վիրաւոր տղուն հայրը դուրս կ'ելլէ եւ կը սկսի հայհոյել դրացի տղուն հօրը, որ չի կրնար կրթել իր գաւազը:

Երկու դրացիներու գիրար ամբաստանելը եւ հայհոյանքները՝ խնդիրը կը մեծցնեն դրացիներուն միջեւ:

Յաջորդ օր, հայրերէն մէկը, որ անտառագործ է, գործի կ'երթայ: Իսկ միւսը՝ վիրաւոր տղուն հայրը, վրէժխնդիր, գործի չ'երթար: Տունէն գաղտնաբար կացինը առնելով կ'ուղղուի անտառ՝ դրացիէն վրէժ լուծելու, նոյնիսկ սպաննելու համար: Երբ անտառ կը հասնի, հեռուէն կը տեսնէ դրացին, որ տխուր երգ մը կ'երգէ եւ կը նուագէ:

Վրէժխնդիր դրացին երգի եւ նուագի ունկնդրութեամբ կը յուզուի, կը զղջայ իր որոշումին համար եւ գալով դրացիին վզին կը փաթթուի, ներողութիւն խնդրելով երէկուան իրենց ամօթալի կռիւին համար: Երկու դրացիներ երգի եւ նուագի ազդեցութեան տակ կը հաշտուին:

Երեկոյեան տուն գալով՝ կը տեսնեն, որ երէկուան կռուող տղաքը կրկին իրարու հետ մտերմաբար կը խաղան:

\*  
\*\*

Մարդկային ամէնէն անհրաժեշտ եւ անփոխարինելի սնունդն է երգը, որուն հիմքը բանաստեղծական խօսքն է եւ որ խտացումն է եւ ճառագայթումը մարդկային ապրումներուն, իմացական լոյսին, ներքին գեղեցկութիւններուն եւ արտաքին աշխարհին հետ ունեցած առընչութիւններուն: Բանաստեղծութեան եւ երաժշտութեան միասնական արժէքը անչափելի է եւ մնայուն, ո՛չ միայն իրենց թելադրութեան համար, այլ՝ որովհետեւ անկողոպտելի են անոնք եւ անառիկ: Մարդէ-մարդ նետուած կամուրջ եւ յարաբերութիւն եւ միութիւն, հետեւաբար, զօրութեամբ ապահով առհաւատչեայ: Եւ ուրախութիւն է հաստատել, որ մենք՝ հայերս, այդ ուժը բնագդաբար զգացող եւ իմացական նժարներուն մէջ կշռուած առաջին ժողովուրդներէն եղած ենք:

Երաժշտութիւնը գեղարուեստի բարձր եւ ազնուագոյն մէկ ճիւղն է, որուն ամբողջ բնոյթը հոգեկան է: Իսկ երգը գերազանցօրէն հոգիի ապրում է եւ իր հմայքը՝ տպաւորիչ:

Երգիչը ձայնի ճամբով ինքզինքին կը փոխանցէ ներքին յուզումը, բաւարարելու համար իր ներսէն եկող ձայնական մրմունջները՝ հոգիին տրամադրութեան համաձայն: Ինչպէս լիճին կամ ծովուն ալիքները կ'ալեկոծին, այնպէս ալ երգիչի ձայնին երանգները իր ապրումները կը փոխանցեն ունկնդիրներուն, որոնք ազդուելով անոր զգայնութենէն, իրենք եւս հոգեպէս կը տարուբերին:

Ներանձնական ապրումներ, զգայնութիւններ, ամբողջովին առանձնացած, չորս կողմի ամէն ինչէ ինքն իր մէջ գոց, միայն զգալով, ապրելով դուն քեզի հետ, առանց դուրսէն որեւէ ինչի, տենչի, կանչի, տեսքի զգացողութեան, էութեանը հետ ամբողջացած ինքզինքդ կազմող ինչ որ ունիս մաքուր, անբիծ աշխարհին մէջ, ուր դուրսէն եկած բան գոյութիւն չունենայ, այլ՝ ըլլայ միայն քու ներաշխարհիդ եւ ըլլաս դուն ինչ որ ես: Խորհիս, զգաս, ապրիս քեզի համար, քեզմէ յառաջանայ ապրում-զգայնութիւն: Մտածես քեզի յատուկ խոհեր, նոյնիսկ ցաւ, հրճուանք, հոգեկան վերացման եւ զգայնութիւններու նուրբ տրցակներ՝ խորհող մարդուն հոգեմտաւոր ամբողջ պաշարը:

Մեր հոգիները զբաղեցնող, յուզող ուրախ կամ տխուր ամէն ազդակ՝ ներքին թէ արտաքին, կարճ կամ երկարատեւ, տեսանելիէն վեր

մեր մէջ ապրումներ կը յառաջացնեն, ինչպէս նաեւ կը ստեղծեն ոգեկան տարբեր աշխարհ փոխանցող վիճակներ, որոնք գեղարուեստի ճամբով մեզի կը բերեն ճաշակ, մարդկային վեհանձնութիւն, խոյանքի յաղթանակը, սարսափի, գոհողութեան, սիրոյ, յաւերժական խորհուրդներու ալլազան երեւոյթներ՝ հոգեվիճակներ ամբողջութեամբ մեզ ցնցող, սովորականէն դուրս պահեր արթնցնող, մեր մէջ հոգեկան ուժ ստեղծող, որոնց ծնունդ տուող ազդակը գեղարուեստն է, որ ուղղակի մարդուս սրտին կը խօսի, կ'ազնուացնէ մեր հոգին, մեզ կը վերացնէ՝ մեզի նոր կեանք տալով, մեր շուրջը նոր փայլք սփռելով, եւ ո՛չ անպարարական իմաստով հմայել, այլ՝ ապրումին ընկալման զգայնութեան գերազոյն վայելքով, ինչպէս հերկուած արտերուն գարնանային անձրեւէն յագեցումը, ինչպէս ծարաւակոծ սրտերուն պապակը անցընող աղբիւրի ջուրը, ինչպէս տապէն խոնջած ճամբորդներուն զովացումը ծառերու խիտ շուքէն:

Մարդուս ճայնաշխարհի հեշտահունչ եւ սրտայոյզ նուրբ երանգներուն՝ զգայնութեան եւ ապրումի ճամբով, սրտերուն եւ հոգիներուն տիրապետող վարպետ երգիչներ իրենց ունկնդիրներուն կուտան գերերջանիկ ապրումի պահեր, յատկապէս մարդկային, հայրենասիրական, պարային, հրճուանքի, ցասումի, անձնազոհութեան ու մանաւանդ սիրոյ խորունկ եւ զգայուն կայծակնային, յորդահոսուն եւ որոտալի պոռթկումներով՝ ջրվիժումի ժայթքերով, բայց գեղարուեստական բարձրորակ, վերացնող եւ նուրբ ճաշակով:

Հայ երգն ու երաժշտութիւնը միշտ մաս կազմած են Հայ ժողովուրդի կեանքին: Հայ երգի եւ երաժշտութեան աշխարհահռչակ անուններ Հայ անունը պանծացուցած են ամէնուրեք, իրենց հեղինակած եւ յօրինած երգերով եւ երաժշտութեամբ:

\* \*

Երգ սիրեցէք կեանքից, գինուց, ամէն բանից աւելի,  
Երգն է միակ բալասանը անդնդախոր ցաւերի,  
Երգ հիւսեցէք, առանց երգի վիշտն աշխարհ է ցաւերի:

ՍԱՐՄԷՆ

\* \*

Երգագուրկ մարդն է գագան,  
Լոկ չար մարդը երգ չունի.  
Քանի որ երգն էլ կեանք է,  
Ու կեանքն էլ երգ է յաւէտ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

\*  
\*  
\*

Հայ երգը՝ գուլալ աղբիւր կենսայորդ,  
Ձայներանգներով յաւերժահնչիւն,  
Յեղային զարթօնք, ազգահաւաքում,  
Հայրենական հող, հայրենի կարօտ:

ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

*Առանց երգի եւ երաժշտութեան՝ կեանքը անհամ է եւ ունայն:*



Երաժիշտ-խմբավար Յովհաննէս Զէֆինեան եւ Գրիգոր Հոթոյեան

## «ՄԱՐԴՈՒՄ ԿԵԱՆՔԸ ԿԱԽՈՒԱԾ ՉԷ ԻՐ ԻՆՉՔԵՐՈՒ ԿՈՒՏԱԿՈՒՄԷՆ»

(Ղկ. ԺԲ. 15-16)

Կրտսեր եղբորս՝ Յովհաննէսին 1985-ին Լիբանանէն Լոս Անճե-  
լըս փոխադրուեցէն ի վեր, քանի մը անգամ իրեն այցելելու առիթ-  
ներ ստեղծուեցան՝ տեսնելու եւ վայելելու զինք, իր ընտանիքին ան-  
դամները եւ թոռները, մինչեւ իր անժամանակ եւ ցաւալի մահը 71  
տարեկանին, որ խոր վիշտ պատճառեց իր ընտանիքին անդամներուն  
եւ իր եղբորը, քոյրերուն եւ անոնց ընտանիքներուն ու Հարազատնե-  
րուն, որոնք ցրուած են Սուրիոյ, Լիբանանի, Ֆրանսայի, Ամերիկայի  
Միացեալ Նահանգներու, Գանատայի եւ Հայաստանի զանազան քա-  
ղաքներուն մէջ:

Այդ այցելութիւններէն վերջինը պատահեցաւ 13 Յուլիս 1996-էն  
սկսեալ, ընդառաջելով իր հրաւերին, որպէսզի իր եւ երկու քոյրերուս  
եւ իրենց զաւակներուն հետ հանդիպելով՝ մեր կարօտներուն յագե-  
ցում տանք:

Air Canada-ի օդանաւը չորսուկէս ժամ Գանատայի եւ Միացեալ  
Նահանգներու օդային տարածքները ընդհանրապէս ամպերու վրա-  
յէն սաւառնելով, վայելջք կատարեց Լոս Անճելըսի միջազգային օ-  
դակայանը, ուր զիս զիմաւորելու եկած էր եղբորս կրտսեր մանչը՝  
Վահէն, որուն «Մերսէտէս սփոր» ինքնաշարժով ճամբայ ելանք: Ես,  
ընտանեկան հետաքրքրական խօսակցութեամբ տարուած, օդակայա-  
նէն մինչեւ 2624 Arma St. Pico-Rivera տարածութիւնը, որ կէս ժամէն  
աւելի տեւած էր, զարմանալիօրէն չզգացի այդ հեռավորութիւնը:

Եղբորս տունը հասանք Տիրոջ օրհնութեամբ եւ ընդունուեցալ  
եղբորս եւ իր ընտանիքի անդամներուն կողմէ կարօտալի համբոյրնե-  
րով: «Բարի եկար»-ի հայկական սուրճը անմիջապէս պատրաստուե-  
ցաւ եւ մատուցուեցաւ եղբորս շնորհալի կնոջ՝ Մատլէնին կողմէ:  
Սուրճը խմելով՝ երկուստեք սկսանք հարցումներ ուղղել Թորոնթոյի  
եւ Լոս Անճելըսի մեր հարազատներուն մասին, մինչ այդ ընթրիքը  
պատրաստուեցաւ: Ճոխ եւ համեղ ուտելիքները եւ պտուղները վայե-  
լեցինք, անշուշտ արտօժաբեր խմիչքներով եւ երաժշտութեամբ:

Յաջորդ առաւօտ, նախաճաշին ներկայ եղան նաեւ եղբորս ա-  
մուսնացած երէց մանչը եւ երկու աղջիկները՝ իրենց ամուսիններով  
եւ զաւակներով: Խանդավառ եւ զգացական միջնորոտ, յատկապէս  
անոնց մանկական չարութիւններուն ի տես:



Յաջորդ երկու օրերու ընթացքին այցելեցինք քոյրերուս եւ անոնց ամուսնացած զաւակներուն տուները, որոնք թախանձագին խնդրեցին, որ իրենց տուներն ալ անպայման այցելեմ, միասնաբար ճաշելու եւ երկար տարիներու բաժանումին ցաւը թեթեցնելու համար:

Առիթէն օգտուելով, պարտականութիւն զգացի այցելելու «Ասպարէզ»-ի եւ «Նոր Կեանք»-ի խմբագրատուները: «Ասպարէզ»-ի խմբագիրը՝ ընկեր Վահէ Բրուտեան, ընդունեց զիս եւ եղբայրս, ապա այցելեցինք «Նոր Կեանք» շաբաթաթերթի խմբագրատուն, ուր մեզ ընդունեց թերթի հրատարակիչ-խմբագիրը՝ Պրն. Գրիգոր Շէնեան, եւ նկատելով, որ «Նոր Կեանք» շաբաթաթերթին կ'աշխատակցէի յօդուածներով եւ թղթակցութիւններով, Պրն. Շէնեան երկար պահեց մեզ իր մօտ՝ առաջարկելով, որ իրեն ճաշի հիւրը ըլլանք: Շնորհակալութիւն յայտնելով մեկնեցանք, հասնելու համար մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան ընկերօջս՝ բանաստեղծ Նշան Շահէնին (Թէքքէլեան) տունը՝ ճաշի:

Բանաստեղծ, թատերագիր եւ հրապարակագիր Նշան Շահէն նոր ամուսնացած, յառաջդիմական գաղափարով անած՝ Հայաստան մեկնեցաւ: Հոն ուսանեցաւ, աւարտեց Երեւանի համալսարանի բանասիրական բաժինը, ապա նուիրուեցաւ ուսուցչական ասպարէզի: Սակայն Հայաստանի մէջ հրատարակած բանաստեղծութիւններով եւ գրութիւններով յայտնեց իր յուսախաբուութիւնը եւ իր մէջ շիջեցաւ յառաջդիմական գաղափարաբանութիւնը, եւ մեծ դժուարութիւններով դուրս ելաւ խորհրդային սահմաններէն եւ հաստատուեցաւ Լոս Անճելըս:

Իր ընտանիքը կը բաղկանար երկու դեղեցիկ աղջիկներէ եւ անոնց նուիրուած մօրմէն՝ Զարուհիէն, որ գրաշար եղած էր Հալէպ, տպարան «Նայիրի»-ի մէջ, ինծի որպէս գործակից:

Ես եւ եղբայրս Նշանենց տունը ախորժակով վայելեցինք հայկական տղաման (լիցք) պուպարով (պղպեղ), սմբուկով եւ լոլիկով: Սուրճով հիւրասիրութեանէն ետք, եղբայրս անհանգիստ զգաց: Բարեբախտաբար, Նշանին կրտսեր աղջիկը, որ բժշկուհի էր, տունէն դեղահատ մը բերաւ եւ խոշոր ամանի մը մէջ տաք ջուր բերաւ՝ խնդրելով, որ եղբայրս ոտքերը մէջը պահէ շրջան մը, վստահեցնելով, որ շուտով արեան ճնշումը կ'իջնէ:

Նշան Շահէնի եւ իր ընտանիքին հետ զգացական, ուրախ եւ գուարթ երեք ժամեր անցուցինք՝ յիշելով Հալէպի «Աճուր Թարլա» թաղամասի բակով մեր տուններուն դրացիական եւ ընկերական յարաբերութիւնները, մինչեւ իր Հայաստան մեկնիլը եւ հոն իր եւ իր ընտանիքին ապրած տառապագին կեանքը եւ մահուանէ հրաշքով փրկուութիւնը իբր թէ արկածով մեռցնելու կատարուած ոճրային արարքէն, զինք ենթարկելու համար Պարոյր Սեւակի ճակատագրին:

Տուև վերադարձանք յոգնած եւ քրտնած: Համով-հոտով հայկական սուրճ մը խմեցինք, հանգստացանք եւ հեռատեսիլը բանալով հետեւեցանք օրուան քաղաքական լուրերուն:

Գրող, հեղինակ, հրապարակագիր, Հայ Դատի զինուորագրեալ Հրանդ Սիմոնեանի հետ ծանօթացած եւ մտերմացած էի Թորոնթոյի մէջ, ուր, որպէս Գալիֆորնիայի Հայ Կրթական Հիմնարկութեան անդամ եւ ներկայացուցիչ, եկած էր հիմնարկութեան կողմէ նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնելու Հայ Օգնութեան Միութեան ամէնօրեայ վարժարանին, վարժարանի բացման հանդիսութիւններուն՝ 1979-ին:

Օգտուելով Լոս Անճելըս գտնուելէս, հեռաձայնային կապով յայտնեցի իմ Լոս Անճելըս գտնուելիս եւ ուզեցի զինք անպայման տեսնել: Պրն. Հրանդ Սիմոնեան շատ ուրախացաւ ձայնս լսելով եւ խոստացաւ Չորեքշաբթի կէսօրին ինծի հանդիպիլ եւ իր ճաշի հիւրը ըլլամ:

Երեքշաբթի օր եղբօրս տիկինը փառաւոր ճաշ մը պատրաստած էր ու ընտանեօք, հակառակ գործի օր ըլլալուն, ճաշակեցինք: Օղը շատ տաք ըլլալով, լողաւազանի գովութիւնը եւ գրաւչութիւնը ստիպեց, որ լողալով գովանանք:

Անշուշտ հաճելի էր եղբօրս տունին շրջափակին մէջ գտնուող աւազանին մէջ լողալու որոշումը, սակայն անհանգստութիւն մը զգալով՝ ստիպուեցայ աւազանէն ելլել եւ ներսը՝ մահճակալին վրայ երկըննալ: Կէս քուն, կէս արթուն մինչեւ երեկոյ եւ գիշեր դիմադրեցի կուրծքի եւ ստամոքսային անհանգստութեանս: Եղբայրս առաջարկեց, որ շտապ օգնութեան (emergency) բժշկական կեդրոնը տանի զիս, սակայն մերժեցի: Գիշերուան անքնութեան պատճառով, առաւօտեան քունի անցնելով՝ արթնցայ կէսօրուայ մօտ: Մինչ այդ բարեկամս՝ Հրանդ Սիմոնեանը եկած էր զիս ճաշի տանելու: Եղբօրս տուած անհանգիստ ըլլալուս լուրը ցաւով լսելէ ետք՝ մեկնած էր:

Տնային միջոցներով թէեւ ցաւերս թեթեւցած էին, սակայն ես եղբօրմէս խնդրեցի, որ իմ բանաստեղծ ընկերոջս բժիշկ աղջկան՝ Ծովինար Թէքքէլեանի բժշկական կեդրոնը երթանք, որպէսզի հարազատի աչքով քննէ զիս:

Կէսօրէ ետք ժամը երկուքը անցած հասանք Կլէնտէյլ գտնուող իր բժշկական կեդրոնը եւ քարտուղարին ծանօթացնելով ինքզինքս, նըստեցանք սպասման սրահին մէջ՝ սպասելով, որ բժիշկը ընդունի զիս: Աջ կողմս նստած էր շուրջ յիսուն տարեկան, արդիական արդու-զարդով տիկին մը: Լսելով եղբօրս հետ հայերէն մեր խօսակցութիւնը, համարձակութիւնը ունեցաւ ինծի հարցնելու առողջական վիճակիս մասին, տալով իր անունը մականունը՝ Տիգրանուհի Սարգիսեան, բընիկ պարսկաստանցի, Թեհրանէն:

Ես ալ իմ անունս մականունս յայտնեցի՝ ըսելով, որ Գանատայէն՝ Թորոնթօ քաղաքէն կու գամ, եղբօրս, քոյրերուս եւ անոնց զաւակներուն այցելութեան: Մէկ օր առաջ ծանր ճաշ մը ուտելէ ետք, ստամոքսային անհանգստութիւն զգացած էի եւ եղբօրս հետ եկած էի ընկերոջս աղջկան՝ բժշկուհի Ծովինարին, որպէսզի զիս քննէ եւ պէտք եղած դարմանումը կամ դեղը առաջարկէ:

Տիկին Տիգրանուհի Սարգիսեան իմ պատմութիւնս լսելէ ետք՝ ըսաւ, թէ իմ ունեցածս ոչինչ է եւ շուտով կ'անցնի, իսկ իր մասին ըսաւ.

— Եղբայրս, ես եւ ամուսինս Թեհրանէն եկանք նիւթական լայն միջոցներով: Ես դժբախտաբար զաւակ չունեցայ: Ամուսինս երբեք չէր դժգոհեր եւ միշտ կ'աշխատէր զիս երջանիկ պահել: Շինարարական եւ տուներու առուծախով կը զբաղէր եւ իր գործերը մեծ յաջողութիւն եւ անուն ձգած էին շուկային մէջ: Սակայն մեր ուրախութիւնը երկար չտեւեց: Ամուսինս արկածով մահացաւ: Իր ժառանգորդը ես եմ: Դրամատան մէջ ունեցած գումարները եւ կեանքի ապահովագրութեան (insurance) առնուած դրամներուն գումարը չորս միլիոն տոլարի կը հասնի: Հիմա եկած եմ բժիշկին: Իր բժշկական դարմանումներուն ենթարկուելէ ետք, անցեալ ամիս քննութենէն ետք ինծի ըսաւ, որ առաւելագոյնը վեց ամսուայ կեանք ունիմ: Սիրելի եղբայր, դրամատունը իմ ունեցած չորս միլիոն տոլարը շատ սիրով քեզի տալու պատրաստ եմ, եթէ Աստուած քու առողջութիւնդ ինծի տայ: Ի՞նչ պիտի ընեմ այդ գումարները, եթէ երբեք վեց ամիսէն պիտի մեռնիմ:

Տիկին Տիգրանուհի արցունքը չկրցաւ զսպել այս յայտարարութենէն ետք, ներողութիւն խնդրելով, որ անձնական առողջութեան մասին խօսելով ինծի տխրութիւն պատճառեց:

Անշուշտ ես ալ յուզուեցայ այս տիկնոջ անցեալ եւ ներկայ կեանքին մասին տեղեկութիւններ ունենալով եւ ուզեցի իրեն կարգ մը մխիթարական խօսքեր ըսել:

— Յարգելի տիկին,— ըսի,— շատ կը ցաւիմ, որ մահացու հիւանդութեամբ մը վարակուած էք եւ բժիշկները ձեզի վեց ամիս միայն ապրելու կեանք սահմանած են: Սակայն, տիկին, բժիշկներուն բժիշկը գոյութիւն ունի եւ կը փափաքիմ, որ անոր ալ դիմես: Այդ բժիշկը Աստուծոյ Որդին՝ Յիսուս Քրիստոսն է: Իր աստուածութեան հաւատացողներուն կեանք եւ բժշկութիւն կու տայ: Դիմէ՛ Անոր ամէնօրեայ հաւատքով եւ աղօթքով, եւ մանաւանդ ամէն օր կարգա՛ Աստուածաշունչ Մատեանը, Նոր Կտակարանը, ուր պիտի հանդիպիս Քրիստոսի հրաշագործութիւններուն, բուժելով իրեն հաւատացողներուն եւ իրեն դիմողներուն հիւանդութիւնները: Ես քեզի կը թելադրեմ, որ կարգաս Պօղոս Առաքեալի առաջին թուղթը ուղղուած Տիմոթէոսին՝ Յորդոր Հարուստներուն, Գլուխ 2. 17-19, ուր կ'ըսուի. «Այս աշխարհի մեծատուներուն պատուիրէ՛, որ չհպարտանան եւ յոյս չդը-

նեն անտի հարստութեան վրայ, այլ՝ Աստուծոյ վրայ, որ առաւօտէն ամէն ինչ կու տայ մեզի՝ վայելելու համար, պատուիրէ՝ որ բարիք գործեն, բարի գործերով հարստանան, ըլլան առատաձեռն, հաճոյական, իրենց ունեցածէն ուրիշին ալ բաժին հանեն՝ իրենց համար բարի հիմ դնելով հանդերձեալին մէջ, որպէսզի ձեռք բերեն ճշմարիտ կեանքը»։ Հիմա, յարգելի՛ տիկին, եթէ դուն կը հաւատաս Յիսուսի հրաշագործութիւններուն, հաւատքով աղօթելով խնդրէ՛, որ քեզի բժշկութիւն պարգեւէ, միեւնոյն ատեն քու ունեցած միլիոնաւոր տոլարներէն բաժին հանէ ազգային հաստատութիւններուն, եկեղեցական կառոյցներուն, որբերուն եւ աղքատներուն, որպէսզի բարի հիմ դնես հանդերձեալին մէջ, որովհետեւ մեռնելու պարագային այդ գումարները հետդ չես կրնար տանիլ։ Քու բարեգործութիւններդ քեզ պիտի անմահացնեն եւ երկնային արքայութեան արժանացնեն։

Խօսքս վերջացուցի կրկին ըսելով.

— Խնդրէ՛ մեր բոլորին Փրկիչ Յիսուս Քրիստոսէն, որ քու հիւանդութիւնդ բժշկէ։ Աղօթէ՛ ամբողջ հաւատքով եւ ամէն օր։

Այս ծանօթացումէն ետք, մեր հասցէներուն փոխանակումը կատարեցինք, խոստանալով արդիական միջոցներով կապուել իրարու հետ։

Բժիշկին հանդիպելու կարգս եկած ըլլալով՝ ներկայացայ բժըշկուհի Մովինարին, որուն հետ ծանօթանալու առիթը ունեցած էի իրենց տան մէջ։ Ան հարազատի հոգատարութեամբ քննեց զիս, ապա ըսաւ.

— Ասկից վերջ ծանր (ճոխ) ճաշ ուտելով լողաւազան մի՛ իջներ։

Իմ հարազատներու այցելութեան թուականէն շուրջ ութ ամիս ետք, իմ հասցէին նամակ մը ստացայ։ Պահարանին վրայ ուղարկողին անունն ու հասցէն կար։ Զարմացայ. այս տիկինը երկու ամիս առաջ մեռած պէտք է ըլլար։ Անձկանօք բացի նամակը, ուր Տիկին Տիգրանուհին կ'անդրադառնար մեր հանդիպումին եւ իմ տուած թելադրութիւններուն, ապա կ'ըսէր.

«Սիրելի բարեկամ, Պօղոս Առաքեալին խօսքը սրտիս շատ խօսեցաւ։ Հարստութեանս մեծամասնութիւնը բաժնեցի եւ նուիրեցի ազգային հաստատութիւններուն, եկեղեցիներուն, դպրոցներուն, որբերուն եւ աղքատներուն։ Ամէն օր հաւատքով աղօթեցի, որ մեր Փրկիչը իր հրաշագործ գործութեամբ կեանքս երկարէ՝ բուժելով հիւանդութիւնս։ Վեց ամիս անցած էր։ Զէի մեռած։ Բժիշկին գացի։ Բժիշկը զիս քննելէ ետք, քաղցկեղի (cancer) հետք չգտաւ մարմնիս մէջ։ Զարմանքով հարցուց, թէ ինչպէ՞ս բուժուեցար, ըսի.— հաւատքով աղօթեցի մեր Փրկչին եւ բոլոր սուրբերուն»։

Աստուածային հրաշքը կատարուած էր եւ Սատանան պարտուած...։

## ՄԿՐՏԻՉ ԵՒ ՍԱՐԳԻՍ

Մկրտիչ եւ Սարգիս ընկերներ էին: Կ'ապրէին Պոլսոյ Բերա թաղամասի իրենց տախտակաշէն տուներուն մէջ: Աղքատ եւ բազմանդամ ընտանիքի զաւակներ, որոնց հայրերը չարաչար աշխատանքով հագիւ իրենց ընտանիքներուն ապրուստը կրնային հոգալ:

Անոնք տարեկիցներ էին, ծնած մեծ դէպքին՝ 1896 թուականին եւ կը յաճախէին իրենց թաղի Թարգմանչաց վարժարանը եւ հինգերորդ կարգի աշակերտներ էին:

Մկրտիչ աշխատասէր էր: Միշտ դասարանին առաջնութիւնը կը շահէր: Աշխատասիրութեան հետ, նաեւ իր վարք ու բարքով եզակի էր ամբողջ դպրոցին մէջ: Տնօրէնէն սկսեալ, բոլոր ուսուցիչները կը սիրէին զինք եւ որպէս հնազանդ, խոնարհ եւ ընկերասէր աշակերտ, օրինակ կը հանդիսանար դպրոցի ամբողջ աշակերտութեան:

Դպրոցէն վերադարձին, ընդհանրապէս իր դասընկերոջ՝ Սարգիսին հետ մինչեւ յաջորդ օրուան դասերն ու պարտականութիւնները չվերջացուցած՝ տունէն դուրս չէր ելլեր: Եւ երբ ազատ ըլլար, կա՛մ կ'այցելէր հիւանդ ընկերոջ մը եւ կամ բարեգործութիւն մը կ'ընէր: Իր ձգտումն էր օգտակար ըլլալ իր ընտանիքին եւ շրջապատին: Մայրը միշտ գոհունակութեամբ կը գովէր զայն եւ կ'աւելցնէր.

— Աստուած պահէ Մկրտիչ զաւակս, մենք շատ գոհ ենք իրմէ եւ կը հաւատանք, որ ան ապագային անպայմանօրէն նշանաւոր անձնաւորութիւն մը պիտի ըլլայ:

Մկրտիչ նաեւ եկեղեցասէր էր եւ որպէս դպիր կը ծառայէր թաղի եկեղեցիին: Իր հետեւողականութեան եւ ջանասիրութեան համար եկեղեցւոյ դպրապետը յաճախ գնահատական նամակներ կը ղրկէր անոր ծնողքին:

Իսկ Սարգիս, Մկրտիչին դասընկերը, ընդհակառակն, դասարանի ամէնէն ծոյլ եւ անհոգ աշակերտներէն էր եւ գրեթէ ամէն օր կը պատժուէր իր ուսուցիչներէն: Յաճախ դպրոցէն կը բացակայէր եւ կարգ մը չարագործ ընկերներու հետ կ'երթար ծովեզերք լողալու կամ պարտէզներէն պտուղ գողնալու:

Սարգիսին ծնողքը, լսելով անոր կատարած չարութիւնները եւ անկարգութիւնները, ծնողական խրատներով կը ջանային զայն հեռու պահել իր չար ընկերներէն եւ որպէս պարկեշտ աշակերտ հետեւիլ դպրոցական դասերուն, սակայն՝ ապարդիւն: Ներողութիւն կը խընդրէր, կը խոստանար կանոնաւորաբար դպրոց յաճախել, սակայն երկու օր ետք կրկին կը դառնար իր նախկին կեանքին:

Սարգիս այնքան անկարգ էր դասարանին մէջ, որ շատ անգամ դասարանի դասաւանդութիւնները կը խանգարէր, զանազան միմոսութիւններ կ'ընէր: Եւ երբ ուսուցիչը պատժէր զինք, ռիս կը պահէր եւ յարմար առիթներով՝ պահուելով կը քարկոծէր զինք պատժող ուսուցիչը: Ուսուցչական կազմը եւ տնօրէնը զգուած էին իրմէ եւ յաճախ ուսուցչական ժողովներու ընթացքին իր պարագան խնդրոյ առարկայ կը դառնար: Բազմաթիւ անգամներ դիտողութիւն եղաւ ծրնողքին Սարգիսին անկարգութեան եւ ծուլութեան համար՝ ազդարարելով, որ եթէ ան իր ընթացքը չփոխէ, պիտի չկրնան դպրոց ընդունիլ զայն:

Մկրտիչ, տեսնելով իր դասընկերոջ յոռի բնաւորութիւններն ու ընթացքը, յաճախ կը խրատէր: Վերջին անգամ, երբ դպրոցէն արձակուած տուն կը վերադառնային, Մկրտիչ ըսաւ.

— Սա՛րգիս, ինչպէս կը տեսնես՝ ծնողքդ աղքատ են: Անոնց յոյսը դուռն ես: Հայրդ մինչեւ իրիկուն արիւն-քրտինք թափելով կ'աշխատի ապահովել ընտանիքին ապրուստը: Գիտե՞ս, թէ ի՛նչ ձեւով կը հոգայ քու դպրոցական ծախսերդ: Բազմաթիւ զրկանքներու արդիւնք է այդ: Անոնց միակ մտահոգութիւնը քեզ բարի եւ պարկեշտ մարդ մը դարձած տեսնելն է, օգտակար դառնալու համար ծնողքիդ, ազգիդ եւ եկեղեցիին: Ահա հինգերորդ դասարանն ես, սակայն նիշերդ ցոյց կու տան, որ պիտի կրկնես դասարանդ: Առաջ այսպէս չէիր. ըսէ՛, ո՞վ կը խաբէ քեզ, ո՞ր սատանան: Հրաժարիր վատ ունակութիւններէդ եւ հետեւի՛ր ինձի. եթէ դասերուդ մէջ դժուարութիւն ունիս, ե՛ս կ'օգնեմ քեզի: Եկո՛ւր, ես եկեղեցին դպիր եմ, քեզ ալ արձանագրել տամ: Միասին դպրոց կ'երթանք, միասին՝ եկեղեցի: Ծառայես մեր եկեղեցիին, որ մեզ՝ հայ ազգը, դարերէ ի վեր փրկած է այլասերումէ: Մեր պատմութեան ամէնէն ճգնաժամային վայրկեաններուն անոր յուսացած ենք եւ ան մեզ հասցուցած է «իր նաւահանգիստն բարութեան»:

Մեզի ժամանակակից բազմաթիւ ազգեր ի սպառ կորսուած են եւ անցած պատմութեան, իսկ մենք, շնորհիւ մեր լեզուին եւ մեր կրօնին, կ'ապրինք որպէս ազգ եւ պիտի ապրինք յաւիտեան, քանի կանգուն կը մնայ հայ եկեղեցին եւ հայ դպրոցը: Մանաւանդ կարգա՛ Աստուածաշունչ Մատեանը եւ պիտի տեսնես թէ ի՛նչ թանկագին գանձեր կան հոն: Աշխատի՛ր ըմբռնել Յիսուսի պատգամները, որ մեռաւ մեր փրկութեան համար, եւ դուռն հոն պիտի գտնես ճշմարիտ եւ լուսաւոր ուղին, որ քեզ պիտի առաջնորդէ պարկեշտ, բարի եւ օրինապահ հայ քրիստոնեայ մը դառնալու, պատիւ բերելով ազգիդ, հայրենիքիդ, եկեղեցիիդ եւ ընտանիքիդ: Ես անձնապէս հոգեկան այն վերացումը եւ գոհունակութիւնը գորս կը զգամ եկեղեցւոյ մէջ պատարագի ընթացքին, ուրիշ որեւէ տեղ չեմ գտներ, մանաւանդ երբ կ'ունկնդրեմ մեր հոգեզմայլ շարականները, որոնք թանկագին գոհարներ են միջազգային գրականութեան մէջ, թէ՛ յօրինուածքով եւ թէ՛ երաժշտու-

Թեամբ: Անոնք յղացուած են մեր սրբազան Հայրապետերուն եւ եկեղեցականներուն կողմէ, ինչպէս՝ Ներսէս Շնորհալի, Գրիգոր Նարեկացի եւ այլք, որոնք մինչեւ հիմա հիացում կը պատճառեն օտար գրագէտներուն եւ երաժիշտներուն: Իսկ դուն Հայու զաւակ ըլլալով, չե՞ս խանդավառուիր եւ Հպարտանար այս գոհարներով: Հետեւի՛ր խորհուրդներու քանի ուչ չէ, հակառակ պարագային՝ օր մը անպայման պիտի չզղջաս:

Այս բոլորը մտիկ ընելէ ետք, Սարգիս ջղայնացած գոռաց.

— Հոս նայէ՛, Մկրտիչ, ի՞նչ գլուխս գայլի աւետարան կը կարդաս: Այդ խրատներն ու զգացումները քեզի պահէ եւ աշխատիր հետեւիլ անոնց, թերեւս կը հարստանաս: Ես չեմ ուզեր այլեւս քու ընկերութիւնդ: Քու ճամբադ ուրիշ է, իմս՝ ուրիշ:

— Սարգիս, — ըսաւ Մկրտիչ, — մի՛ յամառիր տեսակէտներուդ վըրայ. կրկին կը կրկնեմ, օր մը պիտի զղջաս եւ պիտի յիշես իմ խօսքերս: Եւ երկու դասընկերներ վերջնականօրէն բաժնուեցան իրարմէ:

Շատ չանցած, Սարգիսը վռնտեցին դպրոցէն: Ծնողքին եւ ուրիշներու միջնորդութիւնները ի դերեւ ելան փոխելու դպրոցի տնօրէնին որոշումը: Եւ ծնողքը յուսահատ՝ որոշեցին զինք արհեստի դրկել՝ ըսելով, որ թերեւս լաւ արհեստաւոր մը կ'ըլլայ: Առաջին արհեստը ոսկերչութիւն էր: Սակայն հագիւ շաբաթ մը անցած՝ դուրս դրուեցաւ: Ոսկիէ օղ մը գողցած էր...:

Այսպէս, տասնեակ մը արհեստներու հետեւելէ ետք, ամէն տեղէ վռնտուեցաւ, զանազան յանցանքներու հետեւանքով: Ա՛լ գործի չգընաց:

Հայրը, յուսահատած եւ զզուած, զինք դուրս դրաւ տունէն: Իրեն տրուած բոլոր խրատները ո՛չ մէկ ազդեցութիւն գործած էին: Խեղճ մարդը կու լար եւ կ'անիծէր իր չար բախտը՝ այսպիսի անառակ զաւակ մը ունեցած ըլլալուն համար: Սրտանց կը նախանձէր՝ տեսնելով դպրոցի Մկրտիչին խելացուութիւնն ու ուշիմութիւնը:

Սարգիս տունէն վռնտուելէ ետք գնաց եւ միացաւ յայտնի աւագակախումբի մը, որուն բնակավայրը կը գտնուէր լեռներու անտառներուն մէջ: Գողերը ցերեկները կը քնանային եւ գիշերները կը ձեռնարկէին աւագակուլութիւններ եւ գողութիւններ: Կը կողոպտէին ճամբորդները, տուները, խանութները:

Գալով Մկրտիչին, ան Թարգմանչաց վարժարանը աւարտեց բացառիկ նիշերով: Վկայականներու բաշխման հանդէսին, դպրոցի տնօրէնը մասնաւոր յիշատակութիւն ըրաւ անոր մասին, գովելով անոր աշխատասիրութիւնն ու պարկեշտութիւնը:

Մկրտիչ կ'ուզէր իր ուսումը շարունակել՝ հետեւելու համար համալսարանական դասընթացքներու: Սակայն ծնողքը ի վիճակի չէին հոգալու անոր դպրոցական ծախսերը: Դպրոցի տնօրէնը ամէն տեղ դիմեց, վերջապէս կրցաւ հոգատար մը գտնել, որ տեղեկանալէ ետք

Մկրտիչի ուսման մակարդակին եւ բարի վարք ու բարքին, յանձն առաւ հոգալ անոր դպրոցական ծախսերը, մինչեւ համալսարանի աւարտը:

Այս լուրը Մկրտիչին եւ անոր ծնողքին անհուն ուրախութեան եւ երանութեան պահեր պարգեւեց: Երախտապարտութեան զգացումը անոր սրտին մէջ այնքան ալեկոծուեցաւ, որ գնաց եւ մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց դպրոցի տնօրէնին եւ հոգատարին:

Մկրտիչ համալսարանը աւարտեց բարձր նիշերով եւ յատուկ գնահատանքով, ստանալով փաստաբանի վկայականը:

Ան քանի մը տարի փաստաբանական ընկերութեան մը մէջ աշխատելէ ետք, բացաւ իր անձնական գրասենեակը եւ մեծ յաջողութիւն գտաւ իր ասպարէզին մէջ, շահելով բաւականին դժուարին դատեր եւ այդ ձեւով նշանաւոր փաստաբան մը դարձաւ Պոլսոյ մէջ:

Մկրտիչի փաստաբանական հոչակը դատական իշխանութիւններուն կողմէ նկատի առնուելով, ոճրադատ ատեանի դատաւոր դարձաւ:

Իսկ Սարգիս, որ աւագակախումբին մը միացաւ, տարիներու ընթացքին դարձած էր անոր ղեկավարը եւ հարստացած: Ոստիկանութիւնը ամէն միջոցի կը դիմէր ձերբակալելու համար այս անօրէնները, որոնք միշտ կը փոխէին իրենց բնակավայրերը: Եւ ոստիկաններու բոլոր արշաւանքները դրական արդիւնքի մը չէին հասներ:

Աւագակախումբը կը բաղկանար ամէն ազգի աւագակներէ: Պոլսոյ թերթերը անոնց կատարած գողութիւններուն եւ ոճիրներուն յաճախ կ'անդրադառնային, միշտ յիշատակելով Սարգիսին անունը, արատաւորելով հայութեան անունը: Հայրը շատոնց մեռած էր անառակ զաւակին ցաւէն, իսկ մայրը՝ հարուստներուն տունները կը ծառայէր, որպէսզի կարողանար իր միւս զաւակները ապրեցնել:

— Ես,— կ'ըսէր Սարգիս,— հարուստ եմ եւ ուզածս կրնամ ընել, նոյնիսկ ոստիկանութիւնը կը սարսափի իմ անունէս:

Ան իրաւունք ունէր այդպէս խօսելու, որովհետեւ յանդուգն ու վայրենի էր: Խիղճը մեռած էր եւ իր կատարած ոճիրներուն եւ աւագակութիւններուն համար չէր զղջար երբեք:

Սակայն օր մը, երբ աւագակախումբը քարայրին մէջ հանգիստ կ'ընէր, նշմարուեցաւ փայտազործի մը կողմէ, որ շուտով ոստիկանութեան իմաց տուաւ, որոնք, զինուած ամէն տեսակի զէնքերով, պաշարեցին թաքստոցը, ձերբակալեցին աւագակախումբի բոլոր անդամները եւ մանաւանդ անոնց պետը՝ Սարգիսը:

Աւագակախումբին ձերբակալութիւնը մեծ հրճուանք պատճառեց Պոլսոյ բնակչութեան: Յաջորդ օրուան թերթերը մանրամասնօրէն նկարագրած էին եղելութիւնը եւ դրած Սարգիսին նկարը՝ շղթայուած ձեռքերով: Ժողովուրդը միշտ վախի եւ դողի մէջ ապրած ըլ-



լալով՝ ապահովութիւն զգաց այս ձերբակալութեամբ: Ամէն մարդ կը սպասէր դատավարութեան օրուան:

Դատավարութիւնը տեղի ունեցաւ Պոլսոյ ոճրադատ ատեանին մէջ: Դատարանը լեցուած էր ամէն ազգէ հանդիսականներով: Եկած էր նաեւ Սարգիսին մայրը: Երբ դատական կազմը ներս մտաւ, Սարգիս, որ բանտարկուած էր երկաթեայ ձողերով վանդակի մը մէջ, տեսաւ դատաւորը, եւ ճանչցաւ...: Ան իր դասընկեր Մկրտիչն էր: Յետոյ անոր տուած խրատները յիշելով՝ աչքերը արցունքոտեցան: Դատարանը կախաղանով մահուան դատապարտեց Սարգիսը: Մայրը, դատավճիռը լսելով, տեղւոյն վրայ յանկարծամահ եղաւ:

Երեք օր ետք գործադրուեցաւ դատարանի վճիռը: Սարգիս, կեցած չուանին տակ, տեսաւ Մկրտիչը, որ կեցած էր կառավարական պաշտօնատարներուն հետ:

Որպէս օրէնք մահապատիժի գործադրութեան, Սարգիսին առիթ տրուեցաւ իր վերջին խօսքը ըսելու: Սարգիս լացակումած ձայնով ըսաւ, խօսքը ուղղելով իր մանկութեան ընկերոջ.

— Միրելի՛ դասընկերս Մկրտիչ, հիմա, այս պահուս կ'ըմբռնեմ քու խրատներուդ իմաստը եւ արժէքը, եւ կը զղջամ...: Ներողութիւն կը խնդրեմ քեզմէ, որ ժամանակին քեզ վիրաւորեցի անկրթօրէն: Ներկայիս ես օրինակ եմ ամէն անոնց, որոնք չեն սիրեր իրենց ծնողքը, ազգը, հայրենիքը, եկեղեցին, դպրոցը, եւ չեն հետեւիր իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ ընկերներուն խրատներուն: Ես հարստանալու անպարկեշտ ձեւին հետեւեցայ եւ հիմա կը քաւեմ մեղքերս: Ներեցէ՛ք ինձի: Մնա՛ք բարով:

Քանի մը վայրկեան վերջ, առաւօտեան հովին դէմ կ'օրորուէր Սարգիսին անշունչ մարմինը՝ վիզը չուանով օղակուած:

Անդին, բազմութեան մէջէն դանդաղօրէն հեռանալով, Մկրտիչ դառնօրէն կու լար...:



Տաբեւի վանքը

## ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

Հին դարերէն ի վեր, աշխարհի բոլոր երկիրներու մէջ գոյութիւն ունեցած են մուրացկաններ, որոնք կը բաժնուին զանազան խումբերու: Գոյութիւն ունին եւ ունեցած են մուրացկաններ, որոնք արդարացուցիչ պատճառներով, աշխատելու ուժ եւ կարողութիւն չունենալով, եկամտով որեւէ աղբիւր չունենալով, իրենց եւ իրենց ընտանիքին ապրուստը ապահովելու համար՝ ստիպուած են դիմելու մուրացկանութեան, քաղաքի եւ գիւղերու մարդաշատ կեդրոններու մէջ գտնուող անձերու եւ անցորդներու դիմելով, տրամադին աղաչանքով, նիւթական օգնութիւն խնդրելով եւ աղօթելով ու շնորհակալութիւն յայտնելով նուիրատու անձերուն, բայց երբեմն անցորդներէն կարգ մը անխիղճներ, որեւէ ողորմութիւն չընելէ զատ, կը յանդգնէին խայտառակել այդ խեղճ եւ իրական մուրացկանները՝ ըսելով, որ փոխանակ մուրացկանութիւն ընելու, երթան պարկեշտօրէն աշխատին եւ իրենց ապրուստը ճարեն, առանց գիտնալու անոնց մուրացիկ ըլլալու արդարացուցիչ եւ իրական պատճառները:

Իսկ կան մուրացիկներ, որոնք անզամակցելով մուրացկանութիւն ընող ընկերակցութեան մը՝ մասնագէտ մուրացկաններ կը դառնան, իրենք զիրենք կոյր, ոտքէ եւ թեւէ զուրկ ներկայացնելով, քաղաքի կարեւոր կեդրոնները շրջելով կը դիմէին մարդոց, խնդրելով խղճալ իրենց խղճալի վիճակին եւ օգնել իրենց: Այս մարդիկը՝ այր, կին եւ երեխայ, միշտ հազուած կ'ըլլային հնամաշ հագուստներ եւ կօշիկներ, որպէսզի մարդիկ կօշիկներ եւ հագուստներ նուիրէին իրենց:

Այսպիսի մուրացկաններ, արհեստավարժ մուրացկաններ, երեկոյեան իրենց հաւաքած դրամները կը փոխանցէին խումբը կազմակերպող արհեստապետին, անկէ ստանալով իրենց հաւաքած դրամին հարիւրէ 10-ը:

Շատ դժուար էր ճանչնալ իրական, աղքատ, աշխատելու անկարող մուրացկանները եւ արհեստավարժ մուրացկանները, եւ բարի մարդիկ, առանց գիտնալու մուրացիկին կեանքին եւ անցեալին իրականութիւնը, բարիք գործելու գիտակցութեամբ կ'օգնէին այս տեսակաւոր մուրացկաններուն, հետեւելով աւետարանական «Լաւ է տալը, քան՝ առնելը» խօսքին:

Սակայն, գոյութիւն ունին կարգ մը մուրացկան-աղքատներ, որոնք սովորութիւն ըրած են ամէն շարաթ օր մը այցելելու բարեսէր եւ հաւատացեալ քրիստոնեայ տուն մը կամ խանութ մը, ուր, կարծելով

իրենց իրաւունքն ըլլար, կը ստանային իրենց յատկացուած ողորմութիւն մը՝ ընդհանրապէս նիւթական գումար մը:

Հակառակ տարիներու ընթացքին նման մուրացկաններու ստացած ողորմութիւններուն, եթէ պատահէր, որ մէկ անգամ ինչ-ինչ արդարացի պատճառներով չառնէին իրենց «իրաւունքը», բարեսէր ընտանիքին եւ խանութպանին հասցէին հայհոյելով՝ կը հեռանային հերթական ողորմութիւնը ստացած չըլլալուն համար:

Իսկ կարգ մը իսկական աղքատ մուրացիկներ, ոեւէ անձէ ողորմութիւն ստանալով՝ երախտագիտութիւն եւ շնորհակալութիւն կը յայտնէին եւ կ'աղօթէին ողորմութիւն տուողներուն առողջութեան եւ երջանկութեան համար:

Իմ ծննդավայրը, Սուրբոյ Հալէպ քաղաքի հայահոծ Նոր Գիւղ շրջանին մէջ, իմ մանկութեան տարիներուն ակնատես կը դառնայի Նոր Գիւղի թաղերուն մէջ վիտացող մուրացկաններու, որոնք ցնցոտիներ հագած թրքախօս թիւրքմանական ցեղին պատկանող գնչուներ էին: Այդ տարիներուն, Նոր Գիւղի հայութեան մեծամասնութիւնը Կիլիկիայէն աքսորուած կամ գաղթած թրքախօս հայերէ կը բաղկանար, եւ որպէս հաւատաւոր քրիստոնեաներ, առանց նկատի առնելու իրենց դուռը զարնող մուրացկաններու ազգային պատկանելիութիւնը, սիրալոյսով կ'օգնէին անոնց նիւթականներով եւ ուտեստեղէններով, արժանանալով անոնց սրտագին շնորհակալութեան:

Հոս պէտք է ընդգծել, որ այդ օրերուն, Հալէպի հայ ժողովուրդը, տարագրուելով իր հազարամեայ բնակավայրերէն, տառապանքով, չարչարանքով, անօթի-ծարաւ ապաստանած էր սուրիական զանազան քաղաքներուն մէջ, գրկաբաց ընդունուելով սուրիացի արաբ ժողովուրդէն, եւ իր ապրելու ու գոյատեւելու կրանիթեայ կամքով տուն-տեղ եղած էր եւ բնածին աշխատասիրութեամբ կազմած ընտանիքն ու աշխատանքը, ապահովելով ընտանիքին ապրուստը եւ զաւակներուն կրթութիւնը:

Այս կացութեան մէջ, հակառակ իրենց տնտեսական դժուարին վիճակին, հայոց Մեծ Եղեռնէն հրաշքով ազատուած հայ ժողովուրդի այս խրեակները, պահած ըլլալով հայկական տոհմային սովորութիւնները, կ'օգնէին իրենց դուռը բաղխող մուրացկաններուն:

Ամէնօրեայ մուրացկաններէն մէկը, որ իր դիմագիծով եւ հագուստով կը զատորոշուէր թիւրքմէն գնչու մուրացկաններէն, Նոր Գիւղի չորրորդ թաղամասին ծայրը գտնուող մենաւոր տան մը դուռը գարկաւ:

Տիկին Ալիս դուռը բացաւ: Մուրացկանը ներս մտաւ, բարեւ տրուաւ կնոջ եւ աթոռին վրայ նստաւ ուժասպառ:

— Բանի մը պէտք ունի՞ս,— հարցուց բարեսիրտ կինը:

— Ծարաւ եմ,— մեղմաձայն պատասխանեց մուրացկանը:

Կինը սոթտեց թեւերը, պաղ ջուր քաշեց բակին մէջ գտնուող ջրը-  
հորէն եւ մուրացկանին տուաւ սափորը:

Մուրացկանը սափորը մօտեցուց շրթունքներուն ու խմեց երկար  
ու առատ: Յուզուած մնաց աթոռին վրայ նստած:

Երբ խմեց վերջացուց, կնոջ յանձնեց սափորը եւ շնորհակալ ե-  
ղաւ:

— Ուրիշ բանի մը պէտք ունի՞ս,— հարցուց տիկին Ալիս:

— Անօթի եմ,— պատասխանեց մուրացկանը:

Բարեսէր կինը խոհանոց մտաւ եւ հաց, պանիր եւ սեխ բերաւ:

Մուրացկանը ախորժակով կերաւ եւ շնորհակալութիւն յայտնեց,  
սակայն դուրս չելաւ տունէն:

Տանտիկինը օրուան պատշաճ թուղ, խաղող եւ ձմերուկ ալ բե-  
րաւ: Մուրացկանը կրցած չափով անոնցմէ ալ կերաւ, կշտացաւ:  
Կրկին շնորհակալութիւն յայտնեց հրամցուած բացառիկ եւ ախորժե-  
լի կերակուրներուն համար:

— Ուրիշ բանի պէտք ունի՞ս,— հարցուց բարեսէր կինը:

— Կեանքիս մէջ կին չեմ համբուրած, համբոյր մը ողորմէ ինծի,—  
ամհնալով ըսաւ մուրացկանը:

Բարեսէր կինը առանձին էր: Ամուսինը գործի գացած էր: Ան  
միշտ հաւատարիմ եղած էր ամուսինին եւ ոչ մէկ օտարի չէր արտօ-  
նած իր անձին մօտենալու: Երկար մտածեց, նայեցաւ մուրացկանին  
լուսաճաճանչ դէմքին, գթաց եւ անոր երկնցուց իր այտը՝ ամօթխա-  
ծութենէն կարմրելով:

Մուրացկանը, շրթունքներուն ծայրովն իսկ չդպչելով անոր,  
զգուշութեամբ մօտեցաւ տանտիրուհին ականջին եւ փսփսաց մեղ-  
մաձայն.

— Կի՛ն, դուն այս գթութեան գործերովդ երկինքի արքայութեան  
դուռները կը բանաս քու առջեւ,— ըսաւ եւ լուսապայծառ ամպի մը  
պէս աներեւութացաւ:

Տանտիկինը շատ գարմացաւ՝ փնտռելով մուրացկանը, որ անե-  
րեւութացած էր: Եւ այն եզրակացութեան եկաւ, որ աներեւութացող  
մուրացկանը սուրբ անձ մըն էր:

Սակայն ան Քրիստոսն էր: Աստուծոյ խաչեալ Որդին, որ խաչե-  
լութենէն երեք օր վերջ յարութիւն առաւ:

Սակայն միշտ, այսպէս՝ մուրացիկի կերպարանքով, ողորմելի  
ցնցոտիներով ծածկուած, աշխարհի վրայ շրջելու կ'ելլէր, տեսնելու եւ  
հանդիպելու համար ճշմարիտ քրիստոնեաներուն, շարունակելով իր  
լոյսով լուսաւորելու խաւարեալ կեանքով ապրող մարդկութիւնը:

## ՄԻՒՌՆԱԲՈՅՐ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԵԱՆՔ ՄԸ

Գուրգէն Մակարեան այն հայերէն է, որ մինչեւ մրուր քամած է որբութեան տառապանքները եւ հայ ըլլալու ճակատագրին բոլոր արհաւիրքներն ու դառնութիւնները:

Ծնած էր Արեւմտեան Հայաստանի պատմական Կիւրին քաղաքին մէջ, 24 Դեկտեմբեր 1913-ին, զաւակը՝ Տիգրան եւ Շուշանիկ Մակարեաններուն: Հայրը շրջանաւարտ եղած է Սեբաստիոյ Արամ վարժարանէն, իսկ Գուրգէն մանկապարտէզ դացած է Գոնիա: Սակայն իր դպրոցական կեանքը կ'ընդմիջուի թուրք կառավարութեան կողմէ սկսուած հայ ժողովուրդի ցեղասպանութեան արարքով, որուն հետեւանքով Արեւմտեան Հայաստանի հայ բնակչութիւնը աքսորուեցաւ իր պապենական տուններէն եւ կալուածներէն եւ աքսորի ճամբաներուն վրայ վայրագօրէն ջարդուեցաւ թուրք, քիւրտ եւ չէչէն մարդասպաններուն կողմէ:

Գուրգէն, Գոնիա ուսանող եղած շրջանին, փողոցը խաղցած ատեն կը տեսնէ թուրք մունետիկ մը, որ կը կարգայ պետութեան որոշումը, ուր կ'ըսուէր, թէ Գոնիայի հայերը հինգ օրէն պատրաստ պէտք է ըլլան հեռանալու քաղաքէն՝ երթալու համար աւելի ապահով վայրեր:

Գուրգէնին մեծ մայրը, որ թուրք սպայի մը կիներ կը խնամէր երբ ան հիւանդանար, իր ընտանիքին հետ սպային տան նկուղին մէջ շուրջ ամիս մը կը պատսպարուին: Երբ Գուրգէն հրաշքով կը ճողոպրի աքսորէն, մեծ մօր եւ երկու քոյրերուն հետ կ'անցնի Մերսին եւ այնտեղէն 1922-ին՝ Յունաստան, Գորֆուի մէկ գաղթայականը:

1923-ին ան մաս կը կազմէ այն առաջին 50 հայ որբերուն, որոնք ընտրուած էին հազարաւորներու մէջէն ու բերուած Թորոնթոյի արեւմուտքը ծուարած փոքր աւանը՝ Ճորճթաուն (Georgetown), ուր իրենց համար յատուկ ագարակ մը գնուած է: Քանի մը տարի մարդուելէ ետք, անոնք զրկուած են շրջակայ ագարակները՝ որպէս օգնական ձեռքեր:

Ագարակը պատկանած է Գանատայի Հայկական Օգնութեան Ընկերակցութեան, որ, զանազան պատճառներով, շատ չանցած ցրուած է բոլոր որբերը եւ կալուածն ալ յանձնած Գանատայի Եռնայթըտ Ջորջին:

Ագարակներու մէջ աշխատելով հանդերձ, Գուրգէն կրցած է ուսանիլ մինչեւ 8-րդ դասարան: Մայրը՝ Շուշանիկ, մահացած է Կրէտէի

(ՅուՆեսկոյի) մէջ, եւ քանի մը տարի ետք ալ՝ Մեյլինէ քոյրը, ծննդաբերութենէ մը ետք:

Գուրգէն, 1929-ին, յաջողած է Գանատա բերել միւս քոյրը՝ Արաքսին, իսկ 1939-ին՝ մեծ մայրը: Քոյրը հարս կ'երթայ Պոսթըն: Ինք ալ պահ մը առանց գիտնալու ապօրինի կերպով Պոսթըն կը մնայ, ուր կօշկակարի խանութ մը բացած էր: Մատնուելով՝ ստիպուած վերադարձած է Թորոնթօ 1937-ին եւ ամուսնացած գանատացի Մարճի կոչուող ազգկայ մը հետ:

Գուրգէն Թորոնթօ գալով՝ մտած է հագուստ մաքրող հաստատութեան մը մէջ եւ 40 տարի աշխատած է, վերջին 18 տարիներուն 52 հոգիի վրայ վերակացուի պաշտօն վարելով:

Ան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը մտած է 1933-ին, Զօրավար Նժդեհի Յեղակրօն շարժումին անդամակցելով: 1937-ին Թորոնթօ հաստատուելով, կը սկսի կուսակցական գործունէութեան՝ 12 ընկերներու գործակցութեամբ: Հայ Դատի աշխատանք տարած եւ հայ ժողովուրդը եւ Դաշնակցութիւնը ներկայացուցած է Թորոնթոյի մէջ տասնեակ տարիներ: Եւ այս աշխատանքը տարած է այն ատեն, երբ Թորոնթօ հազիւ բուռ մը հայութիւն կը հաշուէր եւ դաշնակցական կազմի անդամները մատի վրայ կը համրուէին: Այն ժամանակ «Հայ Դատ» տարազը տակաւին չէր ստեղծուած կամ չուէր իր այսօրուան ծրագրուած, կազմակերպուած քաղաքական աշխատանքի իմաստը:

1956-ին կոմիտէի ատենապետ կ'ընտրուի: Իր անձնական հմայքը եւ ծանօթութիւնները ի գործ դնելով, ընկերներու համագործակցութեամբ \$34.000 տոլարի գնելով եւ \$30.000 տոլար ծախսելով, կարելի կ'ըլլայ 18 Տիւփոն փողոցի Հայ Կեդրոնը գնել:

Այնուհետեւ, Պրն. Մակարեան, իր անձնական ծանօթութիւններով ազատական երեսփոխան Տիկին Քէմպլըին եւ Գանատայի վարչապետ Պրն. Տիֆընպէյքըրի եւ այլ բարձրաստիճան անձնաւորութիւններու հետ, մեծապէս օգտակար եղած է Գանատայի Հայ ժողովուրդին:

Իր կեանքի վերջին տարիներուն թէեւ կը բնակէր Թորոնթոյէն շուրջ 160 քմ. հեռու Քամպլէյֆորտ գիւղաքաղաքը, սակայն յաճախ Թորոնթօ կու գար՝ ներկայ ըլլալու համար կազմակերպուած այլազան ձեռնարկներու, եւ եթէ բանաւոր պատճառով մը չկարենար գալ, իր յաջորդ այցելութեան իր սրտագին նուիրատուութիւնը կ'ընէր հայ եկեղեցիին, դպրոցին եւ միութիւններուն:

Ան հագուստներ մաքրող-արդուկող հաստատութենէն հանգըստեան կոչուելէ ետք, քանի մը տարի ստանձնեց Հայ Կեդրոնի տրնօրէնութեան պաշտօնը՝ գոհացնելով բոլոր միութիւններու եւ կազմակերպութիւններու պահանջները:

Այդ օրերուն, Թորոնթոյի մէջ կազմակերպուող բազմամշակութային ազգութիւններու եւ կազմակերպութիւններու կողմէ «Կարաւան» ձեռնարկի տարեկան տօնախմբութիւններուն, Հայ Կեդրոնի «Երեւան» անունով տաղաւարին քաղաքապետի պաշտօն վարած է տարիներով, հագնելով քաղաքապետական տպաւորիչ հագուստը:

Պրն. Գուրգէն Մակարեան նկատելով, որ ինք ամուսնական կեանքի ընթացքին հայր ըլլալու բախտին չէր արժանացած, Հ. Յ. Դանակցութեան «Թէ՛հլիրեան» կոմիտէին հետ խորհրդակցաբար որոշած էր իր բնական տունը կտակել Հայ Կեդրոնին եւ հայ դպրոցին, դպրոցի բոլոր աշակերտները նկատելով իր զաւակները:

Թորոնթոյի գաղութին մէջ լսուած ըլլալով Գուրգէնի կատարած կտակին մասին, 1985 Յունուարին «Հորիզոն Շաբաթաթերթ»-ի թրդ-թակիցը հարցազրոյց մը ունեցած է անոր հետ, որպէսզի իր ողջութեան խօսուի իր կտակին մասին: Ան այս կտակը կատարած է օրինակ հանդիսանալու համար, որպէսզի ուրիշներ մտածեն պատրաստել իրենց կտակները, որպէսզի հայու տքնաջան աշխատանքով եւ քրքրտինքով շահուած վաստակը չմնայ անժառանգ եւ անանուն, այլ երթայ ծառայելու սեփական ժողովուրդին ծով կարիքներուն:

Հարցում.— Պրն. Մակարեան, լսեցինք կտակիդ մասին եւ շատ ուրախացանք: Կ'ուզենք գիտնալ, թէ ի՞նչ բանէ մղուած կտակդ հիմակուրնէ պատրաստեցիր, հակառակ առողջական լաւ վիճակիդ:

Պատասխան.— Կտակիս հարցը սրտիս մէջ եղած է տարիներէ ի վեր: Մեր կազմակերպութեան կեդրոնէն եկած շրջաբերականներուն մէջ միշտ յիշեցում կ'ըլլար՝ ըսելով, որ «ձեր կտակները այժմէն պատրաստեցէք եւ յատկացուցէք ազգային կազմակերպութիւններուն»: Նաեւ, երբ «Հայրենիք» օրաթերթը կը կարդայի, որ շատերուն կտակներուն արձագանգը կ'ըլլար, կը մտածէի իմ կտակիս մասին. կը մըտածէի, թէ քանի ես զաւակ չունիմ, աւելի լաւ է ունեցածս ազգիս մնայ, քան թէ կառավարուածս:

Հարցում.— Կտակդ պատրաստելու որոշումը ե՞րբ առիր:

Պատասխան.— Երկու տարի առաջ որոշեցի կտակս պատրաստել եւ ամբողջ ունեցածս կտակել իմ սիրելի հաստատութիւններուն, մանաւանդ երբ հայկական վարժարանը հիմնուեցաւ եւ իր բարերար դիրքը փաստեց գաղութիս մէջ՝ որոշումիս գործադրումը զգալիօրէն արագացուց:

Ինչպէս գիտէք, ես 18 ամիս վարեցի Հայ Կեդրոնի տնօրէնութիւնը, այն շրջանին դպրոցը իր առանձին շէնքը չունէր. Հայ Կեդրոնի ժողովասրահները կը գործածուէին իբրեւ դասարան: Յաճախ կը դիտէի եւ կը յուզուէի նայելով դպրոցի աշակերտութեան: Կը զգայի, կը կարծէի, որ առանց հայ դպրոցի անոնք «որբ» պիտի մեծնան, զրկուած՝ հայեցի դաստիարակութենէն, ապագային ձուլուելու համար տեղական կեանքի ձուլարանին մէջ:

Մեր ապագան, հայութեան ապագան մեր մատղաշ սերունդներն են: Եթէ հայեցի դաստիարակութիւն տրուի, վստահ եղէ՛ք, որ անոնք կեանքով եւ հոգիով հայ պիտի մնան եւ ծառայեն Հայ Դատին:

Այսօր, երբ ես այցելեցի Հ.Օ.Մ.-ի Գոլուեան նախակրթարանը եւ Պապայեան մանկապարտէզը եւ լսեցի մանուկներուն այնքան դեղեցիկ հայերէն երգեցողութիւնը, հիացումս եւ զարմանքս չկրցայ զսպել: Փաստեցի Հայ Դպրոցին կենսարար դերը եւ հայաշունչ առաքելութիւնը:

Հարցում.— Ի՞նչ կարգադրութիւն ըրած ես կտակիդ կիրարկումին առնչութեամբ:

Պատասխան.— Ինչպէս գիտէք, ես ամբողջ կեանքիս ընթացքին փորձած եմ ծառայել ազգիս՝ կուսակցութեան միջոցաւ: Իմ սիրելի կազմակերպութիւններս եղած են Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, Հայ Դպրոցը եւ Հայ Կեդրոնը՝ իր միութիւններով եւ կազմակերպութիւններով:

Կտակիս յարմարագոյն կատարումը մատակարարներուս ձգած եմ, որպէսզի ուր որ անմիջական եւ կենսական պէտք զգացուի՝ հոն գործածուի:

Ես մեծ հաւատք եւ վստահութիւն ունիմ իրենց վրայ, քաջ գիտնալով, որ անոնք դպրոցին աւելի կարեւորութիւն պիտի ընծայեն:

Հարցում.— Պրն. Գուրգէն, կը կարծե՞ս, որ քու օրինակդ վարակիչ պիտի դառնայ եւ ուրիշներ ալ իրենց կտակներուն մէջ պիտի յիշեն մեր ազգային հաստատութիւնները եւ մանաւանդ՝ հայ դպրոցը:

Պատասխան.— Կը կարծեմ, թէ միայն «որք տղաք»-ը չեն, որ պէտք է մտածեն իրենց կտակին մասին, ամէն մարդ կրնայ գրել իր կտակը եւ մտածել իր ազգին մասին՝ քանի կեանք ունի, ողջ է: Այնպէս պէտք է ընենք, որ առաջնահերթութիւնը երթայ հայ դպրոցին, որովհետեւ հայ մնալու ամէնէն կարեւոր ազդակը հայ դպրոցն է:

Հարցում.— Պրն. Մակարեան, ինչպէս գիտես, այս տարուան ընթացքին Թորոնթոյի մէջ կազմուեցաւ Հ.Օ.Մ.-ի Գոլուեան նախակրթարանի եւ Պապայեան մանկապարտէզի հիմնադրամի մարմինը. նպատակն է կէս միլիոն տոլարի անձեռնմխելի գումար մը գոյացնել, որուն հասոյթը տարուէ տարի պիտի գործածուի վարժարանի ելեւմուտքը հաւասարակշռելու: Այս մարմնի գործերէն մէկը պիտի ըլլայ կտակներ հաւաքել՝ հիմնադրամին գոյացումին համար: Կը կարծե՞ս, թէ հիմնադրամին համար ուրիշ կտակարարներ պիտի կարենանք գտնել:

Պատասխան.— Վստահ եմ, որ կարելի պիտի ըլլայ նոր կտակարարներ գտնել՝ եթէ շիտակ ձեւով շարժիք:

Միայն «Ճորճթառունի Տղաք»-ը չեն, որ կրնան հայ դպրոցով հետաքրքրուիլ, Թորոնթոյի, ինչպէս նաեւ Համիլթընի, Սէնթ Գաթրին-գի, Պրանթֆորտի եւ այլ քաղաքներու մէջ կան բազմաթիւ հայ ըն-



տանիքներ, որոնք կրնան մեծ օգտակարութիւն ունենալ եւ որոնք դժբախտաբար չեն մտածած իրենց կտակները գրելու մասին: Մեզմէ ո՞վ կրնայ երաշխաւորել իր կեանքը, ո՞վ գիտէ վստահօրէն, թէ վաղը առաւօտեան պիտի արթննայ: Պէտք է ամէն ընտանիք հիմակուրնէ խորհի եւ պատրաստէ իր կտակը, որպէսզի հայ դպրոցը եւ այլ հաստատութիւնները նիւթապէս զօրանալով՝ կարենան իրենց առաքելութիւնը լիովին յաջողցնել:

Պէտք է բոլորս տալ գիտնանք, տալ սորվինք, քիչ կամ շատ, տարբերութիւն չ'ըներ: Դրամը անուշ է, սակայն դրամին անուշութիւնը կրնայ դառնանալ՝ եթէ հոգիով չտաս:

Պէտք է տանք եւ ժամանակին տանք, որովհետեւ մարդ արարածը հետը բան մը չի կրնար տանիլ:

Կ'ուզէի, որ այս մասին լաւ մտածեն բոլոր հայ ունեւորները, քանի որ չէ: Եկած է այդ մասին մտածելու ժամանակը, քանի ազգը ծով կարիք ունի:

Վերջին զղջումը անօգուտ է:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Հայ Դատի անխոնջ սպասարկուն՝ Գուրգէն Մակարեան, իր մահկանացուն կնքեց Ուրբաթ, 25 Սեպտեմբեր 2003-ին, Քամպէլֆորտի իր բնակարանին մէջ:

Անոր տան կարգը տեղի ունեցաւ Երկուշաբթի, 29 Սեպտեմբեր, երեկոյեան ժամը 7-9, Թորոնթոյի Ս. Աստուածածին հայց. առաքելա-



Զօրավար Դրոյի անիւնները փոխադրող օդանաւին մէջ՝ հանգուցեալ Գուրգէն (Գրրգ) Մակարեան եւ Գրիգոր Հոթոյեան

կան եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Գանատայի ազգային առաջնորդութեան կաթողիկոսական փոխանորդ գերաշնորհ Տէր Խաթակ Սրբ. Արք. Յակոբեանի եւ մասնակցութեամբ կիպրահայ թեմի կաթողիկոսական փոխանորդ գերաշնորհ Տէր Վարուժան Սրբ. Արք. Հերկելեանի, Ս. Ասուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ հոգեշնորհ Տէր Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի եւ Քէմպրիճի Ս. Նշան հայց. առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Կոմիտաս Քհնյ. Փանոսեանի:

Եկեղեցական արարողութիւններու ընթացքին անգլերէն լեզուով խօսք առաւ Ռաֆֆի Սարգիսեան եւ հայերէնով՝ Յակոբ Ճանպազեան, որոնք թուեցին հանգուցեալին կեանքին կարեւոր հանգրուանները եւ ազգային գործունէութիւնները:

Պրն. Մակարեանի ազգային թաղման կարգը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 30 Սեպտեմբեր 2003, կէսօրէ առաջ ժամը 11-ին, որուն մասնակցեցան նաեւ Ս. Երրորդութեան հայց. առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Զարեհ Քհնյ. Զարգարեան եւ հայ կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ գերյարգելի Հայր Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան: Դագաղը ծածկուած էր Հ. Յ. Դաշնակցութեան դրօշով:

Թաղման կարգի ընթացքին խօսք առաւ կաթողիկոսական փոխանորդ գերաշնորհ Տէր Խաթակ Սրբ. Արք. Յակոբեան: Թաղման դամբանական խօսեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի հերթապահ՝ Վարուժան Պասթաճեան:

Այսպէսով վերջ կը գտնէր ճորճթառնի որբերու վերջին մոհիկաններէն Գուրգէն (Գըրք) Մակարեանի տառապալից կեանքը, Հայոց Մեծ Եղեռնի սարսափները տեսած եւ ապրած, որբութեան անհաշուելի զրկանքներով մեծցած, սակայն միշտ ազգին ցաւերը իր ցաւերէն առաջնահերթ նկատած միւռոնաբոյր եւ օրինակելի հայու մը կեանքը՝ լեզի եւ անուշ հանգրուաններով:



## ՆԻՒԹԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Հալէպի Հոգետուներ՝ ընդարձակ բակ մը, բակին մէջտեղը ջրհոր մը, որմէ կ'օգտուէին Հոգետան բնակիչները: Բակին չորս կողմը գրասենեակներ, տպարան «Արաքս», տպարան «Նայիրի», հայկական փուռ: Բակի երկրորդ յարկին վրայ կը գտնուէին բնակելի տուներ, տանըմարքացի Քաչիկի հաստատութիւնը, ուր հայ կիներ ձեռագործներ կը բերէին եւ վճարուելով՝ կը յանձնէին հաստատութեան պատասխանատու Պրն. Յարութիւն Չազըրեանին, իսկ այդ ձեռագործները կը ղրկուէին Տանըմարքա եւ հոն կը ծախուէին: Երկրորդ յարկին վրայ կը գտնուէր նաեւ «Տիգրիս» գրադարանը:

Հոգետուներ ունէր մուտք մը Թիլէլ պողոտայէն, որ գիշերները կը գոցուէր եւ մուտք մը՝ Սալիպէ թաղամասէն: Շրջանը ամբողջապէս հայերէ կը բաղկանար, ուր կը գտնուէին Ազգային Առաջնորդարանը, Ս. Քառասնից Մանկանց եւ Ս. Աստուածածին եկեղեցիները:

Հոգետուներ կը պատկանէր Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Պատրիարքութեան: Հայաստանէն եւ Կիլիկիայէն դէպի Երուսաղէմ ուխտի գացողները Հալէպ հասնելով՝ կ'իջնէին Հոգետուն, ապա կը շարունակէին իրենց ճամբան:

Սակայն, 1946-ին, Հոգետուն իջեւանողներ այլեւս չկային, եւ Հոգետուներ բնակուած էր Հայոց Մեծ Եղեռնէն վերապրած ընտանիքներով եւ կարգ մը գործարարներով:

Ինծի համար Հոգետան ամէնէն հետաքրքրական վայրը փուռն էր, որ կը պատկանէր սասունցի հայրենակիցներու՝ Յակէ եւ Սեդրակ Կիրակոսեաններուն, որոնց հետ ամէն օր ժլլելու առիթ կ'ունենայի՝ լսելով դրուագներ իրենց կեանքէն եւ Սասնոյ յեղափոխականներու՝ Արաբոյի, Սերոբ Աղբիւրի, Գէորգ Չաւուշի, Սպաղանաց Մակարի, Գալէի, Անդրանիկի եւ այլ ֆետայիներու մարտնչումներէն:

Տարինրու ընթացքին Հոգետան բնակիչներէն շատեր փոխուեցան, փոխուեցան նաեւ խանութպաններէն շատեր:

Հոգետան մնայուն բնակիչներէն էր նաեւ խենթ Գրիգորը, որ չես գիտեր որո՞ւ միջոցաւ եւ առաջնորդութեամբ՝ փառաւորապէս տեղաւորուած էր առաջին յարկէն երկրորդ յարկ բարձրացող աստիճաններուն տակ, գրաւելով խենթ Միխայէլի մահէն հտք թափուր մնացած տեղը:

Մարդ է՛ր գիտեր, թէ ո՞վ էր ան, ուրկի՞ց եկած էր եւ ինչո՞ւ խենթացած: Սակայն մաշած համազգեստը եւ գունաթափուած փողկապը կու գային վկայելու, որ խելքին ջերմութեան աստիճանին բարձրասալը հին պատմութիւն է՛ր կրնար ըլլալ:

Խենթ Գրիգոր քառասուն տարեկան ըլլալ կը թուէր: Միջահասակ, թիկնեղ, հայու քիթով, որուն վրայ գոյգ մը սրճագոյն աչքեր՝ զինք տեսնողէն բարեսրտութիւն կը հայցէին միշտ: Իսկ խենթութեան շրջանի իր կրած հոգեկան եւ մարմնական տառապանքը խոր աղօսներ ձգած էր ճակտին վրայ:

Ամէն առաւօտ, իր գրաւած անկիւնէն արթննալով, Հոգետունէն անցնողները կը դիտէր եւ բակի ջրհորէն ջուր քաշելով կը լուացուէր, եւ վերադառնալով իր «տունը», իր գեղեցիկ ձայնով կ'երգէր «Առաւօտ Լուսոյ» շարականը: Ուտելիքի մասին հոգ չունէր, սասունցի փռապանը եւ բարեսիրտ հոգետունցիներ եւ անցորդներ կը հոգային՝ իրենց աւելցած կերակուրներէն բաժին հանելով անոր: Շատեր որպէս ողորմութիւն՝ հին կօշիկ մը եւ ճերմակեղէններ կու տային, նոյնիսկ՝ մանր դրամներ:

Խենթ Գրիգոր աշխատասէր խենթ էր: Ջրհորէն օրը քանի մը անգամ ջուր կը քաշէր եւ դոյլերով կը փոխադրէր իր բարերարներուն:

Հոգետան երկրորդ յարկին վրայ գտնուող «Արեւելք» օրաթերթի գրաշարներուն յաճախ պաղ ջուր կը բերէր եւ առաստաղէն կախուած խաւաքարտէ հովահարով կը զովացնէր գրաշարանոցը, որ պատուհանէ գուրկ ըլլալով՝ չափազանց տաք կ'ընէր: Ի՞նչ կրնար ընել աւելին. արդէն եթէ արհեստի մը հետեւելու չափ խելք մնացած ըլլար իր վրայ, ի՞նչ գործ ունէր Հալէպի տաքին-պաղին ապրելու Հոգետան աստիճաններուն տակ:

Ըսողներ կային, որ խենթ Գրիգոր արհեստով ինքնաշարժի վարիչ եղած էր, իր բեռնատար ինքնաշարժով Հալէպ-Մուսուլ կ'երթեւեկէր: Բարեկեցիկ ընտանիքի մը մէկ անդամն էր, որ կը բնակէր Մուսուլ քաղաքը, սակայն ինք այս վիճակին հասած էր՝ չկարենալով միանալ իր սիրած աղջկան:

Յետագային, Մուսուլէն եկած հայրենակից մը Հոգետունէն անցած ատենը հանդիպելով խեղճ Գրիգորին՝ «Արեւելք»-ի գրաշարանոց եկաւ եւ ցաւով պատմեց հետեւեալը.

«Մեղք եղաւ այս երիտասարդին, ո՞վ կրնայ երեւակայել, թէ այս սքանչելի երիտասարդը՝ զարգացած, պարկեշտ, եկեղեցասէր, ծնողասէր, ազգասէր, կրնայ այս վիճակին հասնիլ եւ այս պայմաններու մէջ ապրիլ: Անէ՛ծք այդ աղջկան ծնողքին: Նշանուած էին, խենթի պէս զիրար կը սիրէին, ամուսնութիւնը հեռու չէր, սակայն նիւթամուլ գոքանչը աւելի հարուստ երիտասարդ մը գտած ըլլալով՝ ետ զրկեց նըշանտուքի մատանին, եւ հակառակ աղջկան կամքին՝ բռնութեամբ ամուսնացուց աղջիկը հարուստ երիտասարդին հետ:

«Գրիգոր չկրցաւ դիմանալ այս զօրաւոր հարուածին, կորսնցուց իր գիտակցութիւնը, խենթացաւ, եւ օր մըն ալ քաղաքէն կորսուեցաւ: Իր ծնողքը եւ ազգականները երկար փնտոտութենքէ հտք յուսահատեցան: Իսկ աղջիկը, որ բռնութեամբ ամուսնացաւ ուրիշին հետ, լսելով իր սիրած երիտասարդին տառապանքը, թոյն խմելով անձնասպան եղաւ:

«Երանի խեղճը տեսած չըլլայի այս վիճակին մէջ: Եթէ եղբայրները տեղեակ ըլլան որ հոս է, թուչունի թեւերով կը հասնէին իրեն, թերեւս կարենային գինք փրկել...»

«Գիտե՞ս որքան եկեղեցասէր էր: Մանուկ տարիքէն մինչեւ սարկաւազութիւն կը ծառայէր եկեղեցիին, ի՛նչ գեղեցիկ ձայն ունէր, մանաւանդ Աւագ Շաբթու խաւարումի գիշերը իր երգած «Ուր ես Մայր Իմ»-ը կը լացնէր եկեղեցւոյ հաւատացեալները»:

Իրապէս գեղեցիկ թենոր ձայն ունէր Գրիգոր, եւ երբեմն, յիշելով իր անցեալը, խոր յուզումով կ'երգէր: Շատ կը սիրէի իր երգած մեղեդիները: Անցորդները կը կենային ունկնդրելու համար իր ապրումով երգած շարականները եւ երգերը, որոնց կարգին՝ Վարդանանց տօնակատարութեան շրջանին «Իմ Հայրենեաց Հոգի Վարդան», «Թէ Հայրենեաց Պսակադիր» ազգային երգերը, ծնունդի շրջանին՝ «Խորհուրդ Մեծ» եւ «Այսօր Տօն է» շարականները, ինչպէս նաեւ սիրային բազմաթիւ երգեր, որոնցմէ կը յիշեմ հետեւեալ երգը, որ միշտ կ'երգէր.

Գեղեցիկ, հոտաւէտ,  
Դու ծաղիկ լեռնային,  
Ո՞ւմ համար դու բուսար,  
Ո՞ւմ համար ծաղկեցար:

Յըրտերում մեծացար  
Անխրնամ, մէն-մինակ,  
Մի լաւ օր չըտեսար՝  
Որբի պէս վշտակիր:

Ու անցաւ քո կեանքը  
Սըգաւոր, տըխրագին,  
Գեղեցիկ, հոտաւէտ,  
Դու ծաղիկ լեռնային:

Կամ՝

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,  
Երբ միտքս էֆ գալիս՝ ասում եմ ես ա՛խ:  
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ,  
Ա՛խ սիրտըս խորում, ցաւիս վերջ չկայ:

Խեղճ Գրիգոր, ամէն առաւօտ քունէն արթննալէն վերջ, կը սկսէր անօրինակ որսորդութեան մը: Կը հանէր հագուստները, համբերութեամբ կը փնտռէր աղտոտութեան հետեւանքով կեանք առած եւ բազմացած ոջիւնները եւ երկու բթամատերուն միջեւ առնելով՝ վրէժ-խնդրութեամբ կը ճզմէր զանոնք, որոնք արգելք եղած էին գիշերը հանգիստ քնանալուն:

Գրիգորին աշխարհը Հոգետունն էր: Աւելի ճիշդը՝ նոր աշխարհը: Անցեալը զինք մոռցած էր, իսկ ինք Մուսուլէն ե՞րբ հասած էր Հալէպ, ատիկա մնաց անլուծելի: Իսկ որո՞ւ ցուցմունքով եւ առաջնորդութեամբ հասած էր Հոգետուն եւ գրաւած նշանաւոր խենթ Միխայէլի անկիւնը՝ այդ ալ ուրիշ գաղտնիք...:

Արգարեւ, Հոգետունը, իր մնայուն բնակիչներուն առընթեր, միշտ ունեցած էր իր աստիճանի տակի բնակիչը՝ այսպէս.— Միխայէլ, Գրիգոր եւ երկու ոտքերէ զուրկ հայ-ասորի մը, որոնցմէ ամէն մէկը՝ տեսակ մը խենթ եւ տեսակ մը խեղճ: Միխայէլը՝ վայրագ, Գրիգորը՝ խեղճ եւ անվնաս, իսկ հայ-ասորին՝ երկու սրունքներէն կտրուած, կարօտ՝ ամէն տեսակ հոգատարութեան:

\*  
\*  
\*

— Գողցողին մայրը..., քո՛յրը..., սինսիլէ՛ն...: Ծօ՛ մեղք եմ, մե՛ղք...: Ի՞նչ կ'ուզէք ինձմէ, փաստորթս, անձնաթուղթս, նամակներ, նկարներ, չկան...: Վա՛յ իմ գլխուս...: Առնողին Աստուած հոգին առնէ:

1947-ի օգոստոսեան առաւօտ մը այս բառերով մեզ դիմաւորեց խենթ Գրիգոր՝ դէպի տպարան «Նայիրի» մուտքին:

Իրապէս շատ գայրացած էր: Աչքերէն արիւն կը ժայթքէր, բարկութենէն կու լար...:

Ի՞նչ պատահած էր...:

Փողոցային դատարկապորտեր, առտու կանուխ, խեղճ Գրիգորը քնացած տեսնելով՝ գողցած էին անոր դրամապանակը, որուն մէջ կը գտնուէր իր անձնաթուղթը, անցաթուղթը (փաստորթը), թուղթէ յիշատակներ...: Զինք կեանքին կապող յիշատակներ...:

Ոջիւններով ողողուած անկողինը տակնուվրայ կ'ընէր, ծակ ու ծոկ կը փնտռէր, «չկա՛յ, չկա՛յ, վա՛յ իմ գլխուս» կը յայտարարէր:

Վախով մօտեցանք իրեն, ուղեցինք հանդարտեցնել, սակայն անօգուտ: Այդ օր, մինչեւ իրիկուն, Հոգետան բնակիչները կարեկցութեամբ մտիկ ըրին Գրիգորին հայհոյանքները եւ լացն ու կոծը: Որեւէ միխթարական խօսք թշնամութեամբ կը դիմաւորուէր: Նոյնիսկ մերժեց կերակուր ընդունիլ: Կարծես առ ի բողոք՝ հացադուլ հոչակած ըլլար, սակայն որո՞ւ դէմ, ի՞նքն ալ չէր գիտեր:

Յաջորդ օր, բարեկամաբար մօտեցայ իրեն եւ հարց տուի, թէ ի՞նչ կար լալու չափ թանկագին այդ դրամապանակին մէջ, որ զինք երէկուական սարսափելի վիճակին մատնած էր:

Ան վայրկեան մը մտածեց, նորէն լացաւ, կրկին հայհոյեց գողերուն հասցէին եւ շնջաց.

— Անգինէին նկարը եւ նամակները կային...:

Հասկցուեցաւ: Ես ալ կը մտածէի, որ անձնաթուղթը, անցաթուղթը եւ այլ պաշտօնական թուղթեր պատճառներ չէին կրնար ըլլալ զինք երէկուական ահարկու վիճակին հասցնելու: Արդէն անոնց պէտք չունէր այլեւս: Ուրիշ պատճառ մը կար, սրտին շատ մօտ, որ արդէն խելագարած մարդուն ուղեղը աւելի ուժգին խախտելու... իսկ դրամապանակին մէջ արդէն դրամ գոյութիւն չէր կրնար ունենալ...:

Հեռանալով խեղճացած Գրիգորէն, ընկերներու ըսի.

— Մարդը արդէն կորսնցուցած է իր սիրածը: Կորսնցուցած է իր խելքը, իր անցեալը, հիմա ալ անխիղճ մարդիկ շատ կը տեսնեն այն քանի մը նամակները, զորս կը մնային Անգինէին իբրեւ յիշատակ...: Եւ այդ յիշատակներն էին, որոնք զինք կեանքին կը կապէին: Այլեւս դժուար թէ ապրի այս խեղճը:

Այնուհետեւ, խեղճ Գրիգորը օրէ օր աւելի մեղամաղձոտ դարձաւ: Շատ քիչ կ'երգէր, շատ քիչ կ'ուտէր...:

Սկիզբները կը յուսար, որ փողոցային դատարկապորտները այդ դրամապանակին մէջ դրամ չգտնելով կը վերադարձնեն զայն, սակայն օրերը կ'անցնէին եւ կորսուած դրամապանակէն լուր չկար:

Նախապէս երբեմն կ'ածիլուէր, ինքզինքը կը շտկէր, մարդու երեւոյթ կ'առնէր: Այդ սեւ օրէն ետք մօրուքը ածիլի չտեսաւ, իսկ երեսը՝ շուր: Օրըստօրէ կը հիւծէր, աստիճանին տակէն դուրս ելլել չէր ուզեր:

Ձմրան ցուրտ օր մը, բոթը հասաւ Հոգետան բնակիչներուն: Գրիգոր մեռած գտնուած էր հայոց գերեզմանատան ճամբուն վրայ: Պաշտօնական որեւէ ստուգում կարելի չեղաւ կատարել, քանի որ պաշտօնական որեւէ թուղթ չունէր իր վրայ: Միայն կարելի եղաւ թաղելու արտօնութիւն ստանալ քաղաքապետութենէն՝ որպէս օտար, անտէր եւ անհաւասարակչիւր անձ:

Խեղճ Գրիգորին տառապած դիակը դրուեցաւ եկեղեցապատկան դագաղին մէջ, յուղարկաւ որովհետեւ արարողութիւնը կատարուեցաւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ՝ Տէր Մկրտիչ Աւագ Քահանայ Մուրատեանի կողմէ եւ Հոգետունի բնակիչներէն քանի մը սգաւորներու ներկայութեան: Թաղուեցաւ հայոց գերեզմանատան մէջ, հեռու՝ իր սիրելիներէն եւ ազգականներէն:

Արդեօք անդեանկանին մէջ միացա՞ւ իր պաշտած Անգինէին...:

## ՈՒԺԻ ՆԵՐՇՆՉՍԱՆ ԱՂԲԻՒՐԸ

Կը պատմուի, որ ժամանակին Հնդկաստանի մէջ Թագաւոր մը կար, որ շատ կը սիրէր մեծ շէնքեր ունենալ եւ այդ նպատակով բարձր վճարումով ճարտարապետներ կը հրաւիրէր, անոնց Թելադրելով իր փափաքը՝ շինել այնպիսի ոճով եւ գեղեցկութեամբ շէնքեր, որ պատիւ բերէին իր Թագաւորութեան եւ հիացում՝ քաղաքը այցելող զբօսաչրջիկներուն:

Թագաւորը շատ կը սիրէր շինել տալ նաեւ պալատներ, մզկիթներ, կրօնական «մատրասա»-ներ, աշտարակներ, բուրգեր եւ պարտէզներ, եւ ընդհանրապէս կ'երթար դիտելու գործաւորներուն աշխատանքը, քաջալերել, նուէրներ տալ անոնց, ժամերով կենալ եւ անոնց գործը զննել:

Օր մըն ալ, երբ վեզիրներուն հետ մէկ կողմ կեցած կը դիտէր, Թէ ինչպէ՛ս գործաւորները խոշոր քարերը շալկած ու կքած, քրտնաթոր կը բարձրանային շէնքի աստիճաններէն վեր, նկատեց, որ գործաւորներէն մէկը առանց օգնութեան խոշոր քարերը առանձին շալկած, ուրախ ու զուարթ, երգելով ու եռանդով շէնք կը բարձրանար, առանց յոգնութեան նշաններ ցոյց տալու:

Հուժկու եւ հսկայ մը չէր այդ աշխատաւորը, սակայն անդին ուրիշ աշխատաւորներ կը տնքային ծանր բեռան տակ: Իսկ հուժկու գործաւորներ հազիւ կը շարժէին, տխուր ու մռայլ եւ դանդաղ քայլերով շէնք կը բարձրանային:

Իսկ միւս աշխատաւորը, արագութեամբ ու դիւրութեամբ քարը շալկելով, զուարթ երգ մը հնչեցնելով ու ժպիտը դէմքին՝ դէպի վեր կ'ելլէր:

Թագաւորը այս բոլորը տեսնելով շատ զարմացաւ: Ո՞վ էր այդ մարդը, որ կը կատարէր բացառիկ աշխատանք, ամենամեծ քարերը կը շալկէր, երգը միշտ լսելի, առանց գանգատի եւ հառաչի կ'աշխատէր անընդհատ:

Թագաւորը կը բաղդատէր այս բացառիկ գործաւորին մարմինը միւս գործաւորներու մարմիններուն եւ անոնց աշխատանքներուն հետ, չէր կրնար այս գաղտնիքը լուծել: Թագաւորը կը մտածէր, Թէ այս ծանր գործը աշխատողին ուժը ուրկէ՞ կրնայ գալ, երբ իրմէ շատ հսկայ եւ հուժկու գործաւորները անոր գործը չեն կրնար կատարել, իսկ հասարակ մարմնով եւ կարողութեամբ միւս գործաւորը առանց յոգնութեան, զուարթութեամբ եւ ուրախութեամբ իր գործը կը կատարէր: Ուրկէ՞ կու գար իրեն այս բացառիկ ուժը, զուարթութիւնը եւ



դիմացկունութիւնը: Ուրկէ՞ կու գար անոր տկար մարմնին ուժ տուող եւ տոկուն դարձնող եւ շատ քաջերէն, լայնալանջերէն աւելի գործունեայ, աւելի աշխոյժ ու կտրիճ դարձնողը:

— Խօսի՛ր, ո՛վ վեզիր,— դարձաւ թագաւորը իր վեզիրին:— Բացատրէ տեսնենք, ի՞նչն է պատճառը այս գործաւորին ուժին, գուարթութեան եւ տոկունութեան իսկութիւնն ու գաղտնիքը: Ի՞նչն է, որ միւս, այդ բոլոր հուժկու մարդիկը կը տնքան, կը հառաչեն աւելի թեթեւ, մանր գործերէն, աւելի փոքր քարեր շալկելէն, իսկ այս գործաւորը՝ երեւոյթով այնքա՛ն թուլակազմ, այնքա՛ն ողորմելի, սակայն միշտ զօրաւոր, տոկուն, միշտ ուրախ-գուարթ եւ միշտ արագաշարժ:

Վեզիրը լռեց, շատ խորունկ մտածեց եւ չկրցաւ ճշգրիտ պատասխան մը տալ:

— Խօսեցէ՛ք եւ դուք, իմ խորհրդականնե՛ր,— հարցուց թագաւորը իր միւս վեզիրներուն,— ձեզմէ ով որ լուծէ այս գաղտնիքը, կ'ըլլայ իմ սիրելին եւ իմ մտերիմը:

Բայց ո՞վ կրնայ ըսել այն՝ ինչ որ միայն Աստուած գիտէր եւ ինքը՝ գործաւորը:

— Տէր իմ,— խօսեցաւ վեզիր մը,— հրամայէ այդ գործաւորին աւելի ծանր գործ տալ, տեսնենք ան նոյնպէս կ'երգէ՞ աշխատելու ատեն եւ այդպէս ուրախ՝ քարեր կը կրէ՞: Թերեւս ան աւելի շատ ուժեղ է, քան ինչպէս որ կ'երեւայ:

Ու թագաւորը հրամայեց, որ քարեղէն սիւնի մը պատուանդանը զօրաւոր գործաւորը կանգնեցնէ:

Գործաւորը մօտեցաւ, նայեցաւ խոշոր քարին եւ հզօր ու մեծ Աստուծոյ անունը կանչեց, ժպտաց, կուացաւ եւ շարժումով մը պատուանդանը գլորեց սիւնին ստորոտը, յետոյ սրբեց քրտնաթոր դէմքը եւ ինչպէս միշտ, երգելով բարձրացուց եւ դրաւ սիւնին տակ:

Բոլորը ապշած էին: Թագաւորը եւ վեզիրները խորհրդակցեցան եւ եկան այն եզրակացութեան, որ բան մը գոյութիւն ունէր, որով օժտուած էր հասարակ գործաւորը, այդպիսի ծանր պատուանդան մը առանց դժուարութեան դնելու սիւնին տակ:

Ապշած թագաւորը իր մօտ կանչեց քաջ եւ զօրաւոր գործաւորը, դրամ տուաւ, գովեց եւ ապա հարցուց.

— Ուժդ ուրկէ՞ է, կտրի՛ճ գործաւոր:

— Չեմ գիտեր, տէր արքայ,— ժպտալով պատասխանեց կտրիճ գործաւորը:— Ես այնքանը գիտեմ, որ երջանիկ եմ, որեւէ վիշտ չունիմ, կը գործեմ ուրախութեամբ եւ կ'ապրիմ ուրախ...:

Արքան այս խօսքերէն բան մը չհասկցաւ ու հրամայեց իր վեզիրներու խորհուրդին ժողովել, մտածել, փնտռել եւ գտնել գործաւորին ուժին գաղտնիքը, եւ անոնց հինգ օր պայմանաժամ տուաւ գաղտնիքը բացայայտելու:

Մինչ կը խորհէին պետութեան վեզիրները, անոնցմէ ալեւոր վե-

գիր մը, որ լսած էր գործաւորին տուած պատասխանները, հրաման խնդրեց հեռանալ: Մինչեւ երեկոյ Հասանի (այդ էր գործաւորին անունը) գործը դիտելէն ետք՝ մօտեցաւ անոր, ապա ընկերացաւ եւ ուզեց ըլլալ անոր տունը:

— Տէր իմ,— ըսաւ Հասան,— ես աղքատ մարդ մըն եմ, խրճիթ մը ունիմ: Կը վայելէ՞, որ դուն այդ խրճիթը մտնես եւ իմ խեղճուկ եւ չոր ընթրիքիս մասնակցիս:

— Հոգ չէ, իմ որդի, ես կ'ուզեմ տեսնել խրճիթդ ու կինդ, գաւակդ եւ կենցաղդ, կ'ուզեմ տեսնել թէ իրա՞նք վիշտ չունիս եւ երջանիկ ես, իրա՞նք միշտ զուարթ ես եւ ուրախութեամբ կ'երգես:

Հասան, ստիպուած, ծերունի վեզիրը իր տունը տարաւ: Երբ ներս կը մտնէին, դրան առջեւ երեւաց չքնաղ, երիտասարդ կին մը, որ սիրալիր ժպտը դէմքին, հրեշտականման մանուկ մը գիրկին՝ ընդառաջ եկաւ, գրկեց ամուսինը, անկեղծ սիրով համբուրեց, գիրկը տուաւ մանուկը, յետոյ, միշտ զուարթ, ներս հրամցուց ամուսինը եւ հիւր վեզիրը, ընթրիքը պատրաստեց, եւ սքանչելի խնամքով ու սիրով կերակրեց, գգուեց իր ամուսինը, որ ծերունի վեզիրը իր ամբողջ կեանքին ընթացքին այդպիսի յարգանք եւ սէր չէր տեսած եւ շատ յուզուեցաւ:

Երբ մեծ զուարճութեամբ եւ գոհունակութեամբ ընթրեցին, Հասան գրկեց մանուկը, անոր հետ խաղեր սարքեց, գինք զուարճացուց, իսկ մանուկը, իր անմեղ եւ զուարթ ծիծաղով խրճիթը լեցուց, վեզիրին դիւթեց: Հասանին կինը այդ սիրող, պաշտող, չքնաղ, յոգնած ամուսինին այնքան գորովով, այնքան ջերմ սիրով կը զբաղեցնէր, որ ալեւոր վեզիրը զմայլած գոչեց.

— Վկայ է Աստուած, վկայ՝ Մարգարէն, որ այսքան պատուական ու սիրող կին ես երբե՛ք չեմ տեսած:

— Եւ այնքան իր կինը սիրող եւ պաշտող ամուսին ալ,— աւելցուց կինը՝ դուրսը ամուսինին կրծքին վրայ դրած:— Ամուսինս զիս շատ կը սիրէ, մենք երջանիկ ենք, գոհ ենք մեր կեանքէն եւ որեւէ դժգոհութիւն չունինք: Աշխարհի անիրաւութիւնները մեր դունէն ներս չեն մտներ՝ վախալով սիրոյ էութենէն, համերաշխութենէն: Յաւերը կը խուսափին, վիշտերը կը հալածուին: Մեր բժիշկը սէրն է, մեր փրկիչը սէրն է...:

— Ո՛վ կին, վկայ է Աստուած,— ըսաւ վեզիրը,— վկայ Անոր Մարգարէն, որ դուն իրաւունք ունիս. չկայ աւելի մեծ բժիշկ, չկայ մեծ քաջալերիչ՝ քան սէրը, անկեղծ ու վառ, մշտատեւ սէրը, որ իր ժպտով հերոս կը շինէ, քարեր կը փշրէ, արգելքները կը ջարդէ եւ անոր առջեւ աշխարհը անգոր է, ցաւը՝ թզուկ մը...: Իրաւունք ունիս, յարգելի կին: Ես այժմ հասկցայ թէ մարդուդ ուժը ուրկէ՛ էր: Ուժը սիրոյ ծրնունդ է եւ սէրն է միակ այն մեծ ուժը, որ կրնայ լեռներ շարժել, աշխարհը փոխել, բոլոր անիրաւութիւնները անգոր դարձնել եւ ամէն մէկ փուշ վարդի փոխել...:

Ալեւոր վեզիրը իր տպաւորութիւնները հաղորդելէ ետք, ելաւ, գնաց եւ ամէն բան պատմեց հօր արքային:

Արքան զարմացաւ եւ չհաւատաց: Չէր տեսած երբեք անկեղծ սէր, որովհետեւ երբեք չէր սիրուած, այլ միշտ վախ ազդած էր: Չէր հասկնար եւ ըմբռներ նման ուժի մը գոյութիւնը, որովհետեւ զինք երբեք չէին սիրեր, այլ՝ միշտ շողոքորթած են:

— Խելքդ կորսնցուցած ես, տխմա՛ր ծերունի,— գոչեց արքան,— մի՞թէ կը կարծես, որ Հասանին ուժը այդ փոխադարձ սիրոյ հետեւանքով է: Ո՞վ է աւելի սիրուած քան ես, չէ՞ որ այս ժողովուրդը կը խոնարհի ականարկիս առջեւ, չէ՞ որ ես ալ կանայք ունիմ եւ շատ որդիներ: Մի՞թէ պիտի ըսես, որ անոնցմէ ոեւէ մէկը զիս չի սիրեր:

Ծերունի վեզիրը խոնարհեցաւ, իր կեանքէն վախնալով եւ խոնարհութեամբ լուռ կեցաւ:

— Գնա՛, գնա՛,— արհամարհանքով արքան հեռացուց ծեր վեզիրը,— դուն երազող ես, դուն ծերացած ես... եւ կը տեսնես, որ սխալած ես: Ահա ես կը հրամայեմ, որ այդ կիներ եւ անոր որդին հարէմս քաշես. կիներ եթէ ըսածիդ պէս գեղեցիկ է, ինձի կը պահեմ եւ պիտի տեսնես, որ այդպիսով ոչինչ պիտի պակսի Հասանի ուժէն: Ու հրամայեց:

Հինգ ձիաւորներ իսկոյն Հասանի տունը շրջապատեցին, դուռը կոտրեցին, ներս մտան գիշերով, ամէն բան տակնուվրայ ըրին եւ Հասանի կինն ու զաւակը հարէմ տարին:

Միւս օրը, առաւօտեան, արքան կանգնած էր նոյն շէնքին մօտ, երբ Հասանը տխուր եւ արտասուլթոր աշխատանքի եկաւ:

Արքան եւ վեզիրները ժողովուած անոր կը սպասէին: Հասան գործի սկսաւ: Կուացաւ՝ մեծ քար մը շարժելու տեղէն, չկրցաւ, փորձեց աւելի փոքրը, բայց թեւերը կարկամած էին, ծունկերը ծալուեցան, փոքր քարն իսկ տեղէն չարժել չկրցաւ:

Ու ան բարձրացաւ, յուսահատ՝ ձեռքերը դէպի վար իջեցուց, յետոյ գետնին կծկուեցաւ եւ ազիոդորմ ու սրտապատառ հառաչեց ու ըսաւ.

— Ա՛հ, ալ ուժ չմնաց...:



## ԲԱՐԵԳՈՐԾ ՊԱՅՏԱՐԸ

Յիսուս էջի վրայ նստած Երուսաղէմ կ'երթար:

Ճամբորդութիւնը փառաւոր էր, բայց էջը կը կաղար, որովհետեւ խեղճ անասունը քարոտ տեղերէն անցնելու ժամանակ մէկ ոտքին պայտը կորսնցուցած էր:

Կացութեան տեղեակ ըլլալով, Յիսուս շատ շփոթած էր՝ տեսնելով, որ գրաստը կաղալով կը քայլէր եւ տեղ-տեղ կը սպառնար զինք վար նետել:

Բայց յանկարծ, ժողովուրդին մէջէն պայտար մը դուրս գալով մօտեցաւ Յիսուսին եւ արագութեամբ կռացաւ, բարձրացուց գրաստին ցաւող, անպայտ ոտքը եւ մի քանի վայրկեանի մէջ մեծ վարպետութեամբ պայտեց զայն: Քրիստոս ուրախացաւ ու ժպտաց ուրախութեամբ եւ ըսաւ պայտարին.

— Յարգելի՛ պայտար, այս բարութեանդ համար խնդրէ՛ ինչ որ կամենաս եւ ցանկութիւնդ կը կատարուի:

Կ'ըսուի, որ Յիսուսին անբեւութեամբ ընկերակցող հրեշտակներէն մէկը պայտարի ականջին մօտենալով կը փսփսայ՝ ըսելով, որ երկնային արքայութիւն խնդրէ: Սակայն մարդը իտէալիստ մէկը չէր. բացասական կերպով գլուխը շարժեց եւ Քրիստոսին ըսաւ.

— Տէ՛ր, ես պայտար մըն եմ, տոպրակ մը եւ աթոռ մը ունիմ եւ տանս կողքին ընկուզենի մը: Կը ցանկամ, որ աթոռիս վրայ նստողը, տոպրակիս մէջ մտնողը եւ ընկուզենիին վրայ ելլողը չկարողանան ելլել, դուրս գալ եւ իջնել, մինչեւ որ անունովդ չհրամայեմ անոնց:

Յիսուս ժպտաց, օրհնեց պայտարը եւ ըսաւ.

— Թող կատարուի քու ցանկութիւնդ:

\*  
\*  
\*

Բարեգործ պայտարը երկար տարիներ ապրեցաւ իր խրճիթին մէջ՝ ընկուզենիի ստուերին տակ, հանգիստ ու ապահով. թէեւ մինակ էր, ունեցածն ալ աթոռ մը եւ տոպրակ մը ու գործիքներ, բայց եկամուտը լաւ էր եւ կ'ապրէր երջանիկ կեանք մը:

Այդպիսի ուրախ օրերէն մէկը, երբ ան իր խրճիթին դրան մօտ նստած երեկոյեան զեփիւռը կը վայելէր, տեսաւ հեռուէն իրեն մօտեցող հոգէառ հրեշտակը. սիրտը թունդ ելաւ, սկսաւ դողալ եւ կը մտածէր, թէ ինչպէ՞ս կրնայ ազատուիլ եկող անկոչ հիւրէն:

Բայց անկոչ հրեշտակը մօտեցաւ, ողջունեց, ժպտաց եւ ըսաւ.

— Դէ՛հ, պայտա՛ր, բաւական ապրեցար, ելի՛ր, վերջին աղօթքդ կատարէ՛, որովհետեւ հոգիդ տանելու եկած եմ:

— Օ՛հ, իմ հրեշտա՛կ,— հառաչեց պայտարը,— միթէ՞ այդպէս շուտով հարկ է, որ կեանքս թողում: Ես դեռ ապրելու ցանկութիւն ունիմ: Նայի՛ր չորս կողմը, ինչքան լաւ է այս բոլորը՝ բնութիւնն ու հովը, լեռներն ու դաշտերը...:

— Այո՛, խօսք չունիմ,— ըսաւ հրեշտակը,— բայց ի՞նչ կրնամ ընել, պայտար, ճակատագիրդ այդ է, պէտք է հոգիդ տաս:

Պայտարը տեսաւ, որ ո՛չ խնդրանքը, ո՛չ ալ սրտաբուխ բանաստեղծական խօսքերը որեւէ ազդեցութիւն գործեցին հրեշտակին վըրայ, պահ մը տխուր մտածեց, յետոյ մէկէն մտաբերեց օգտուել Յիսուսի տուած շնորհներէն:

— Լաւ ուրեմն, հրեշտա՛կ,— ըսաւ պայտարը քաղաքավարութեամբ,— հրամմէ՛, նստի՛ր այս աթոռին վրայ՝ մինչեւ ես աղօթքս կատարեմ:

Հրեշտակը յոգնած էր, նստաւ աթոռին վրայ:

Հրեշտակը նստածին պէս զգաց, որ բռնուած էր: Ծիւղ գործեց ելելու, զօրաւոր շարժումներ ըրաւ, բայց զարմանքով տեսաւ, որ ջանքերն ի գուր էին եւ ինք լաւապէս բռնուած էր:

— Այս ի՞նչ է, պա՛յտար, ի սէր Աստուծոյ,— գոչեց սարսափած հրեշտակը,— ես գամուած եմ կարծես, ազատէ՛ զիս...:

— Է՛հէ՛, պարո՛ն հրեշտակ, ազատե՞մ քեզ,— ծիծաղեցաւ պայտարը,— ի՞նչ ընեմ, որ այդպէս եղաւ, ճակատագիրդ այդ էր...:

Հրեշտակը աղաչեց, խնդրեց, պաղատեցաւ եւ վերջիվերջոյ հոգին պայտարին ձգելու գնով ազատուեցաւ ու սոսկումով շտապեց երկինք:

Պայտարը ազատուած էր: Ազատ շունչ քաշեց եւ օրհնեց այն վայրկեանը, երբ մտածած էր Յիսուսի էջին ոտքը պայտել:

\* \* \*

Մինչ այդ, հոգէառ հրեշտակը ճանապարհին խնդիրը մեծցնելով ամէնուն պատմեց պայտարին ըրածը եւ երկինք հասած՝ գունաթափ կեցաւ Աստուծոյ առջեւ:

Աստուած խնդաց, շատ զարմացաւ, բայց իրաւունք չտուաւ ուժ գործադրելու:

— Եթէ կրնաք,— ըսաւ Աստուած,— խորամանկութեամբ հոգին առէք, գործի դնելով հնարքներ, բայց երբե՛ք՝ ուժ:

Եւ այն ժամանակ դժոխքի չար ոգիներու խումբ մը, խորամանկ խումբ մը, հրաման խնդրեց երթալ պայտարին հոգին առնելու, պայմանաւ, որ այդ հոգին դժոխք տարուէր:

— Շա՛տ լաւ,— հրամայեց Աստուած,— եթէ կրցաք առանց ուժի աւոր հոգին հանել, թող ձեր բաժինը ըլլայ:

Հոգէառ Հրեշտակին մեկնելէն շրջան մը ետք, պայտարը տեսաւ, որ խումբ մը սեւ, այլանդակ ոգիներ, իրարու գլուխներուն վրայէն ցատքելով դէպի իր կողմը կու գային:

— Հօ՛, հօ՛...,— մտածեց ան,— այժմ դեւերը կու գան, Յիսուսի պայտարը թող ես չըլլամ, եթէ Հրեշտակին խաբելէն յետոյ ասոնց գլխուն ալ խաղ մը չխաղամ:

Եւ պայտարը կեղծաւոր, խոնարհ, աղերսական կերպարանք ստանալով շտապեց դիմաւորել սեւ ոգիները:

— Ա՛յ դուն անամօթ, աներե՛ս պայտար,— հեռուէն խօսեցաւ խրմբապետը,— ինչպէ՞ս կը համարձակիս հոգիդ ամուր բռնել եւ հոգէառ Հրեշտակը խաբել... դէ՛հ, այժմ Աստուծմէ հրաման է, որ այդ խորամանկ հոգիդ մեր ձեռքը յանձնես...: Տղանե՛ր,— դարձաւ ան իր հետեւորդներուն,— հեռո՛ւ կեցէք այդ աթոռէն եւ տեսնենք ինչպէ՛ս իր հոգին չի տար:

Այդ ճառէն յետոյ, սեւ ոգիները խրճիթ լեցուեցան, պայտարը շրջապատեցին, ճիչ ու աղմուկով պայտարին հոգին պահանջեցին:

Պայտարը թէեւ սկիզբը շատ վախցաւ, բայց երբ դեւերու ճիչը երկար տեւեց, սրտապնդուեցաւ ու գոչեց.

— Քիչ մը ցա՛ծ խօսեցէք, պարո՛ն դժոխք, ականջս խլացաւ...: Ի՞նչ է ձեր ըսածը, հոգի՞ս կ'ուզէք: Շատ լաւ, խօսք չունիմ, սակայն դուք ինչո՞վ կրնաք հաստատել, որ Աստուծոյ կողմէ ղրկուած եւ ոչ թէ ինքնազլուխ եկողներ էք:

— Ասոր նայեցէք,— աղաղակեց մէկը,— կը համարձակի կասկածիլ, կ'ուզէ մեզ ալ խաբել:

— Բոլորովին ո՛չ,— ըսաւ պայտարը,— եթէ դուք հաստատէք, որ Աստուած է ձեզ ղրկած, հրամմեցէ՛ք՝ հոգիս ձեզի տամ:

— Ինչպէ՞ս հաստատենք, անմի՛տ,— հարցուց խմբապետը,— երթանք քեզի վկայակա՞ն բերենք:

— Բայց ո՛չ, շատ հեշտութեամբ կրնաք հաստատել. ես տոպրակ մը ունիմ, ահա տեսէ՛ք, եթէ բոլորդ կարենաք փոքրանալ, առանց ձեռք, ոտք, կամ գլուխ դուրս ձգելու տեղաւորուիք տոպրակին մէջ, ատիկա ինձի համար ապացոյց կ'ըլլայ, որ Աստուած ձեզ ղրկած է, ապա թէ ոչ՝ կորսուեցէ՛ք գացէք եւ Աստուծոյ անունը թող ոչնչացնէ ձեզ,— ըսաւ պայտարը, ձեռքերը մէջքին դրաւ եւ հպարտօրէն սպասեց:

— Տղա՛ք, այս մարդը տխմար մըն է,— ճչաց խմբապետը,— ի՞նչ կայ աւելի դիւրին մեզի համար, քան փոքրանալը: Մենք չե՞նք միթէ, որ տասնեակներով կը տեղաւորուինք մարդոց սրտերուն մէջ եւ կ'ապրինք այնտեղ...: Դէ՛հ, եկէք այս տխմարին ցոյց տանք մեր ուժը:

Ու մտաւ տոպրակը: Միւսներն ալ հետեւեցան անոր: Այլեւս ո՛չ մէկ ձեռք, ոտք կամ գլուխ դուրս մնաց:

— Հը՞, տեսա՞ր, ձայնեց խմբապետը տոպրակին մէջէն:

— Տեսայ,— քրքջաց պայտարը:

Յետոյ մեծ մուրճ մը առաւ եւ փառաւոր կերպով սկսաւ ջարդել անոնց կողերը:

Դեւերը ճչացին, ճիգ թափեցին դուրս ելլելու տոպրակէն, բայց ի գուր, բռնուած էին եւ լաւ բռնուած:

Աղաչեցին, լացին, հառաչեցին եւ խնդրեցին, բայց պայտարը այնքան ծեծեց զանոնք, մինչեւ որ դեւերը յոգնեցան:

— Զգէ՛ մեզ,— կը գոչէին դեւերը,— ձգէ՛ որ երթանք, հոգիդ քեզի թող մնայ, չենք ուզեր այդ անիծած հոգիդ, տանինք որ դժոխքը տակնուվրա՞յ ընէ...:

Այն ժամանակ, պայտարը յանուն Յիսուսի արձակեց զանոնք եւ դեւերը լեղապատառ, ճիչով եւ աղմուկով, այնպէ՛ս շուտով կծիկը դրին, որ պայտարի քրքիջն անգամ չլսեցին:

Պայտարը ազատուած էր այս երկրորդ փորձանքէն ալ: Ազատ շունչ քաշեց եւ նորէն օրհնեց այն վայրկեանը, երբ մտածած էր Յիսուսի էջը պայտել:

Եւ երկար ատեն ո՛չ երկինքի եւ ո՛չ ալ դժոխքի պատգամաւորներէն մէկը սիրտ առաւ երրորդ փորձ կատարելու եւ պայտարին հոգին առնելու գալ:

Սակայն, օր մը, դժոխքի ամենախորամանկ դեւը, լաւ խորհելէ յետոյ, հրաման խնդրեց Աստուծոյ փորձ մը եւս ընել եւ պայտարին հոգին առնելու երթալ:

Հրամանը ստացաւ: Կեղծութեան դիմեց, հրեշտակի կերպարանք առաւ եւ իջաւ պայտարին մօտ:

Պայտարը հասկցաւ, որ այս անգամ շատ խորամանկ եւ յանդուգն դեւի մը հետ գործ ունի, որովհետեւ եկուորը ո՛չ աթոռին կը մօտենար, ո՛չ ալ տոպրակին եւ ո՛չ ալ խրճիթէն ներս կ'ուզէր մտնել:

— Հոգիդ տուր,— կը կրկնէր ան յամառութեամբ եւ դուրսը կեցած կը մնար:

Պայտարը հրաւիրեց հոգէաւոր նստելու, խրճիթ մտնելու, բայց դեւը ժպտալով գլուխը թօթուեց.

— Ո՛չ,— ըսաւ դեւը,— գիտ չես կրնար խաբել. հոգիդ տուր եւ վերջակէտ դնենք բոլոր խորամանկութիւններուդ:

Պայտարը քիչ մը մտածեց, յետոյ ցոյց տալով, որ այլեւս ճար չունի, ճանճրացածի եւ յուսահատածի նման ըսաւ.

— Ալ ի՞նչ ընեմ, պարո՛ն հրեշտակ, քեզ խաբել կարելի չէ, հոգիս ա՛ն տար: Բայց թոյլ տուր ինձի վերջին անգամ մը աղօթել. յետոյ, դիտե՞ս, ես շատ վախկոտ եմ, թոյլ տուր ինձի ծունկի գալ այս ընկուզենիին տակ եւ երբ ես վերջին խօսքս ալ ըսեմ, ելի՛ր ծառին վրայ եւ այնտեղէն հոգիս առ ու տար:

Ու սկսաւ այնպէս լալ ու հեկեկալ, որ խորամանկ դեւը ուրախացաւ, թէ յաղթած է: Ելաւ ընկուզենիին վրան, նստեցաւ եւ սպասեց:

*Բայց հագիւ թէ նստած էր, զգաց, որ խաբուած էր: Որքան աշխատեցաւ ծառէն վար իջնել, անկարելի եղաւ:*

*Չաղահեց այլեւս, ծոեցաւ ղէպի պայտարը եւ ըսաւ.*

*— Զիս խաբեցիր, պայտա՛ր, հոգիդ քեզի թող մնայ, միեւնոյնն է, դուն զիս ընդմիշտ ոչնչացուցիր, որովհետեւ իմ կեանքիս ամբողջ տեսողութեան երբեք չէի խաբուեր այսպէս: Թող տուր, որ երթամ:*

*Ահա այդպէս... Հպարտացաւ պայտարը: Յանուն Քրիստոսի գնա՛ եւ պատմէ՛ ընկերներուդ, որ հեշտ բան չէ Քրիստոսի պայտարին հոգին հանելը...:*

*Եւ ոգին յուսահատ ելաւ եւ կաղնիկաղ հեռացաւ:*

*Իսկ պայտարը հպարտ, այլեւս ապահով՝ կեանքը սկսաւ վայելել եւ բոլոր հոգէառներու վրայ ծիծաղել...:*



Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայ կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ  
Գեբյարգելի Հայր Եղիա Մ. Վրդ. Գիրէջեան եւ  
Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Շաֆէ Հոթոյեաններ



## ԲԱՐԵԳՈՐԾ ՀԱՅՐԱՍ

Հայրս՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեան, Հօրը անունը՝ Գրիգոր, ծնած է Սասուն, Տալուորիկի Սպաղանք գիւղը՝ 1892-ին:

Սպաղանք գիւղը կը բաղկանար իրարու ազգական 26 ընտանիքներէ, որոնք Հայ ազատագրական շարժման գլխաւոր գործիչները եղած են, որոնց շարքին յայտնի ֆետայիներ՝ Սպաղանաց Մակարը, Սպաղանաց Գալէն, Սպաղանաց խմբապետ Ակէն եւ ուրիշներ, որոնք իրենց մասնակցութիւնը բերած են թուրք կանոնաւոր զօրքերուն եւ քիւրտ կողոպտիչ աշիրէթներու դէմ մղուած կռիւներուն, պաշտպանելու համար ժողովուրդին տնտեսութիւնը, պատիւը, արժանապատուութիւնը եւ ազատ ապրելու իրաւունքը:

Սասնոյ Սպաղանք գիւղը եղած է ֆետայիներու հաւաքավայրը եւ ամրոցը, ուր նշանաւոր եւ ղեկավար ֆետայիներ հաւաքուելով ժողով կը գումարէին՝ ծրագրելու համար իրենց ապագայ գործունէութիւնը: Ֆետայիներ Անդրանիկ, Գէորգ Չաւուշ, Ռուբէն, յաճախ կը գտնուէին Սպաղանք գիւղը՝ ղեկավարելով ֆետայական շարժումը:

Հայրս, թէեւ այդ տարիներուն դեռ պատանի, հետաքրքրութեամբ ներկայ կ'ըլլայ ֆետայիներու ժողովներուն եւ Անդրանիկին միջոցաւ լողալ կը սորվի եւ ֆետայիներուն կը ծառայէ:

Ուսումնատենչ ըլլալով՝ կ'ուսանի Մշոյ Կարապետ Վանքին մէջ, ուսուցչական պաշտօնով կը ծառայէ գիւղի դպրոցին, միեւնոյն ատեն որպէս դպիր եւ սարկաւազ կը ծառայէ գիւղի Ս. Մարութէ ձգնաւոր եկեղեցիին, որ ապագային պաշարուեցաւ Հայ ժողովուրդի ոխերիմ թշնամի աշիրաթապետ Պշարա Խալիլի կողմէ, որ կրակի տալով՝ խեղդամահ ըրաւ եկեղեցի ապաստանած ժողովուրդը, որոնց մէջ էր նաեւ վաստակաւոր ֆետայի՝ ծերունի Մակարին ընտանիքը:

Ապագային, Անդրանիկի, Մակարի, Գալէի եւ այլ ֆետայիներու կողմէ Պշարա Խալիլ բռնուեցաւ եւ գլխատուեցաւ իր գործած աններելի յանցանքներուն համար:

Հայրս, տէր դառնալով քիւրտերու յարձակումներուն սպաննուած քիւրտի մը չախմախլու գէնքին, պատանի տարիքին կը մասնակցի Սասնոյ ապստամբութիւններուն, իր ազգական ֆետայիներուն կողքին: Տօնօ Մակարը Հօրս ազգականն ու կնքահայրն էր: Գալէն եւ Ակէն՝ Հօրեղբօրը զաւակները, որոնց շուքին տակ կը մեծնայ, պատրաստ՝ զոհուելու Հայրենի ժողովուրդին պաշտպանութեան համար տեղի ունեցող կռիւներուն:

1914-ին, թուրք ոստիկաններու հետապնդումէն ազատուելով, կը հեռանայ Սասունէն եւ երկար եւ տառապալից ճամբաներէ անցնելով կը հասնի Կիլիկիա եւ ծանօթանալով Քիլիս քաղաքի իր հայրենակիցներուն, որոնք ջաղացպաններ էին, կ'ապաստանի անոնց մօտ եւ կը դառնայ անոնց պէս ջաղացպան:

Հօրս Քիլիս հասնելէն տարի մը ետք, թուրքիա Գերմանիոյ հետ դաշնակցելով պատերազմի կը մտնէ Ֆրանսայի, Անգլիոյ եւ Ռուսիոյ դէմ, եւ երկրին մէջ կը սկսի պարտադիր զինուորագրութիւն՝ բոլոր զինուորական տարիքի քաղաքացիներուն համար: Այդ օրերուն կը սկսի նաեւ թուրքիոյ մէջ ապրող բոլոր հայերուն աքսորն ու սպանութիւնը: Հայաբնակ բոլոր քաղաքներն ու գիւղերը յատուկ հրահանգով կը պարպուին հայ բնակչութիւններէն, որոնք անօթի-ծարաւ, անտանելի պայմաններու ներքեւ կը տարագրուին դէպի արաբական անապատները, ճամբաներուն վրայ ենթարկուելով կողոպուտի, բռնաբարումներու եւ խոշտանգումներու:

Թուրքիոյ արեւելեան նահանգներուն մէջ, յատկապէս Սասունի, Վանի, Շապին Գարահիսարի, Էրզրումի եւ այլ քաղաքներու ու շրջաններու մէջ տեղի կ'ունենան ինքնապաշտպանական կռիւներ, որոնք կը վերջանան պարտութեամբ՝ զէնքերու եւ ռազմամթերքի անբաւարարութեան պատճառով:

Ինքնապաշտպանական կռիւներ տեղի կ'ունենան նաեւ Կիլիկիոյ քաղաքներէն Այնթապի, Ուրֆայի, Մարաշի, Հաճընի, Զէյթունի եւ այլ քաղաքներու մէջ, որոնք կ'ենթարկուին պարտութեան եւ աքսորի:

Պարտադիր զինուորագրութիւնը կը հասնի Կիլիկիա. Քիլիսի շրջանի ջաղացպանները եւ զինուորական փախստականները կը հետապնդուին: Ուրիշներու կարգին՝ հայրս ալ կը ձերբակալուի, սակայն միջոցները կը գտնէ փախչելու եւ թաքնուելու տարեց սասունցիներու ջաղացքներուն մէջ: Ձերբակալութիւնները կ'ըլլան յաճախակի, սակայն հայրս միշտ միջոցը կը գտնէ փախչելու: 12-րդ ձերբակալութեանէն չի կրնար ազատիլ: Զինք կը փոխադրեն Հալէպ: Պապ-էլ-Ճընէնի շրջանին մէջ գտնուող ընդարձակ, երկյարկանի շէնքի մը մէջ կը բանտարկեն, ուր կը հանդիպի բազմաթիւ հայ եւ արաբ փախստական զինուորացուներու:

Բանտարկուած հայերուն մէջ կը հանդիպի Սասունցի Մկրտանունով հայրենակիցի մը: Կը մտերմանան եւ կ'որոշեն փախուստ տալ զիրենք բանակ տանելէ առաջ, քաջ գիտնալով, որ բանակ երթալ՝ կը նշանակէ դէպի մահ երթալ:

Երկար մտածելէ եւ շէնքին բոլոր մասերը քննելէ ետք, կը տեսնէ, որ պէտքարանները կը գտնուին երկրորդ յարկին վրայ: Երեկոյեան, մթննալէ ետք, երկու սասունցի երիտասարդներ պէտքարան երթալու հրաման կ'առնեն եւ պէտքարանին դրան իրենց գօտիները կը դնեն, որպէսզի պատասխանատու զինուորները վստահ ըլլան, որ հրաման

առնողները հոն են: Սակայն երկու սասունցիները պէտքարանին տանիքը ելլելով՝ հերթաբար կը ցատկեն քովի փողոցը: Բարեբախտաբար, ցատկելով՝ իրենց ոտքին տակ կը հանդիպին կակուղ աղբերու եւ ողջ առողջ փախուստ կու տան:

Հայրս, ինչպէս ըսի, պատերազմի երեք տարիներու ընթացքին 12 անգամ կը ձերբակալուի եւ, ըմբոստ սասունցի, միշտ փախուստ կու տայ: Հայրս, իմ հետաքրքրութիւնս գոհացնելու համար, զիս տարաւ եւ ցոյց տուաւ Հալէպի Պապ-էլ-Ճընէն թաղի այն շէնքը, որուն երկրորդ յարկէն ցատկելով ազատած էր 12-րդ իր ձերբակալութենէն:

Հայրս 12-րդ ձերբակալութենէն փախչելով կը վերադառնայ Քիլիս եւ կը շարունակէ ջաղացպանութիւնը: Քիլիսի մէջ կ'ամուսնանայ մօրս հետ, Կիլիկիոյ Պեհեսնի քաղաքէն Մարիամին հետ: Մեծ քոյրս՝ Սիրանուշը, կը ծնի Քիլիսի մէջ՝ 1918-ին:

Զինադադարէն եւ Թուրքիոյ պարտութենէն ետք, Հայրս կը փոխադրուի Սուրիոյ Ազէզ գիւղաքաղաքը: Ազէզի մէջ կը ծնի Յարութիւն եղբայրս՝ 1922-ին: Սուրիա ֆրանսական հովանաւորութեան կ'ենթարկուի: Հայրս եւ ընտանիքը կը փոխադրուին Հալէպ: Համիտիյ թաղին մէջ կը շինէ թիթեղեայ եւ փայտեայ տուն մը, ուր կը ծնիմ ես՝ 1927-ին: Տարիներ ետք, պետական հրահանգով, տարագիր հայերու թիթեղեայ տունները կը քանդուին, իսկ բնակիչներուն առիթ կը տրուի տուն շինելու Հալէպի Նոր Գիւղ թաղամասին մէջ: Հայրս եւ մայրս աղիւս թափելով, գիշեր-ցերեկ աշխատելով, երեք սենեակնոց եւ բակով տուն մը կը շինեն, ուր կը ծնին եղբայրս՝ Յովհաննէսը՝ 1929-ին եւ քոյրս՝ Արշալոյսը՝ 1932-ին:

Նոր շինուած տունին մէկ սենեակը խանութի վերածելով՝ Հայրս քանի մը արհեստներ կը փորձէ ընտանիքը պահելու համար: Մսավաճառութիւն, նպարավաճառութիւն, թան շինելով կը ծախէ Հալէպի կեդրոնական շուկային մէջ եւ վերջիվերջոյ տունը ծախելով՝ կոկիկ գումարի մը տէր կ'ըլլայ եւ Ազէզ գիւղաքաղաքին մէջ Ամերիկայէն բերուած գործածուած հագուստներու խանութ մը կը բանայ, զանոնք Թուրքիայէն եկող թուրք մաքսանենգերուն ծախելով՝ բաւական բարեկեցիկ կեանք մը կ'ապահովէ իր ընտանիքին, վարձքով բնակութիւն հաստատելով Նոր Գիւղի առաջին թաղամասին վրայ գտնուող քարաշէն երկյարկանի շէնքի մը մէջ:

Հայրս, որպէս նախկին ուսուցիչ եւ սարկաւազ, ուսումնատենչ հայ, իր հինգ զաւակներուն (երեք մանչ, երկու աղջիկ) նիւթական մեծ դժուարութեամբ կը հոգայ դպրոցական ծախսերը, որոնք կը յաճախեն Նոր Գիւղի Սահակեան վարժարանը:

Ազէզի իր խանութը միամտաբար կորսնցնելէ ետք, Հալէպի մէջ կը ձեռնարկէ ամերիկեան գործածուած ժաֆէթներու եւ վերարկուններու վաճառքի՝ Կիրակի եւ Ուրբաթ օրերը տեղի ունեցող պազարներուն մէջ յատուկ տեղ վարձելով: Յետագային ժաֆէթները ուսին վրայ՝ կը

չըջէր Հալէպի շուկաները, երբեմն ալ մեծ եղբայրս կամ զիս իր հետ առնելով:

Իր գործադրած բազմաթիւ արհեստներու կարգին, քեռայրիս հետ ընկերանալով՝ եղած է փռապան, սակայն իր գլխաւոր գործը եղած է փոքր եւ մեծ քանակութեամբ ժաֆէթ ծախելը:

Ինչպէս ծանօթ է, սասունցիներ Հալէպ կու գային, որպէս փռապան կ'աշխատէին եւ բաւարար գումար մը խնայելով՝ կը վերադառնային Սասուն, ինչպէս յայտնի հայդուկապետ Գէորգ Չաւուշը, որ Հալէպի մէջ փռապանութեամբ դրամ խնայելով՝ զէնք մը կը գնէ եւ կը վերադառնայ Սասուն:

Մեծ թիւով սասունցիներ 1300 թուականէն սկսեալ հաստատուած են Հալէպ եւ շինած են Ս. Քառասնից Մանկանց եկեղեցին Սալիպէ թաղամասին մէջ:

Այդ թուականներուն, Հալէպի փուռերուն հարիւրէն ինիսունը կը պատկանէր սասունցիներուն եւ այդ պատճառաւ տեղացի արաբները «փուռ կ'երթամ» ըսելու փոխարէն «սուսանի»-ի կ'երթամ կ'ըսէին:

Հալէպի սասունցիները կազմած էին Սասնոյ Հայրենակցական Միութիւնը, որ մեծապէս օգտակար կը դառնար սասունցի ընտանիքներու բարեխաւման, կազմակերպելով նաեւ մշակութային ձեռնարկներ:

Հայրս, ծանօթ ուսուցիչ-մտաւորական Սիմոն Սիմոնեանէն ետք, միակ Սասուն ծնած եւ գրել-կարդալ գիտցող սասունցին, մաս կը կազմէր Սասնոյ Հայրենակցական Միութեան վարչութեան: Միութիւնը եթէ ոեւէ հայրենակիցի նիւթական եւ բժշկական օգնութիւն պիտի ընէր, միութեան վարչութիւնը պէտք է որոշում առնէր:

Սակայն վարչութիւնը համաձայն չ'ըլլար սասունցի կնոջ մը Ալ-թունեան հիւանդանոցին մէջ կատարուելիք գործողութեան օգնելու, նկատի ունենալով, որ հինգ օսմանեան ոսկի կը պահանջուէր հիւանդանոցէն:

Կինը լալով կու գայ մեր տունը եւ կ'աղաչէ հօրս, որպէսզի միջոց մը գտնէ այդ գումարը հայթայթելու համար, այլապէս կեանքը վրտանգի տակ է եւ երեխաները որբ պիտի մնան:

Հայրս ցաւելով եւ մեղքնալով սասունցի կնոջ, միութեան պաշտօնական թուղթը կը կնքէ որպէս համաձայնութեան վաւերաթուղթ, խնդրելով կնոջմէ, որ գործողութենէն ետք ոեւէ մէկուն չըսէ, թէ ինք տուաւ կնքուած պաշտօնաթուղթը:

Սասունցի կինը գործողութիւնը կ'ըլլայ, տուն կու գայ իր շնորհակալութիւնները յայտնելով հօրս, որ համարձակեցաւ անօրէն ձեւով իրեն օգնելու եւ իր կեանքը փրկելու:

Ալթունեան հիւանդանոցէն հաշուեցոյց մը կու գայ հայրենակցական միութեան վարչութեան: Հինգ օսմանեան ոսկի կը պահանջուէր: Վարչութիւնը անակնկալի եկած՝ իր անդամներուն կը հարցնէ,

թէ ինչպէ՞ս, որո՞ւ արտօնութեամբ կատարուած է այս գործողութիւնը: Հայրս համարձակօրէն կը խոստովանի՝ ըսելով.

— Հինգ օսմանեան ոսկիով սասունցի մօր մը կեանքը փրկեցինք, որպէս սասունցի մեր պարտքը տուինք, որուն համար հիմնուած է միութիւնը:

Սասունցի այդ կինը մինչեւ մահ երախտագիտութեամբ կը պատմէր հօրս ըրած բարիքը:

Հօրս ըրած բարիքները բազմաթիւ են: Հոս կ'ուզեմ անդրադառնալ գլխաւորներուն:

Բանտէն փախած էր քեռայրիս ազգականներէն Եօթնան Յակոբ կոչեցեալ աւագակը, որ իր գործած բազմաթիւ գողութիւններուն համար երկարամեայ բանտարկութեան դատապարտուած էր:

Այդ օրերուն հրեշտակային մայրս նոր մեռած էր: Քեռայրս հօրս կ'առաջարկէ, որ Յակոբ մեր տունը մնայ քանի մը օր եւ մենք մնանք քրոջս տունը:

Հայրս բարեկամներէն դրամ կը հաւաքէ, որպէսզի կաշառքով Յակոբը Պաղատա փախցնէ: Մինչ այդ, մատնութեան մը հետեւանքով ոստիկանութիւնը կը պաշարէ մեր եւ քրոջս տունները եւ Յակոբը հոն չգտնելով՝ Հայրս եւ մեծ եղբայրս ոստիկանատուն կը տանին, ուր ծեծի ազդեցութեան տակ եղբայրս կ'ըսէ, թէ հայրը Յակոբը ուրիշ տեղ տարաւ:

Ծեծի եւ այլազան պատժամիջոցներու գործադրութեան չդիմանալով, Հայրս կը խոստովանի իր տարած տեղը, ուրկէ յաջորդ օր մաքսանենգութեամբ զբաղող մարդիկ Յակոբը Իրաքի սահմանէն պիտի անցընէին: Ոստիկանութիւնը Յակոբը կը ձերբակալէ քնացած վիճակին մէջ, այլապէս արիւնահեղութիւն կրնար պատահիլ:

Յաջորդ օր ոստիկանութիւնը կու գայ եւ կը ձերբակալէ Հայրս ու քեռայրս, որոնք դրամական երաշխաւորութեամբ բանտէն դուրս կ'ելլեն: Երկարատեւ դատաւարութեան ընթացքին, փաստաբաններու վճարումներուն հասնելու համար կը ծախուին հօրս ամերիկեան գործածուած հագուստներու մթերքները, սակայն այդ բոլորը հօրս եւ քեռայրիս անպարտութիւն չեն բերեր: Կը դատապարտուին վեցական ամիս բանտարկութեան՝ փախստականի մը պառկելու տուն տրամադրած ըլլալու յանցանքով:

Քեռայրս կը յանձնուի, իսկ հայրս, ըմբոստ սասունցին, փախուստ կու տայ եւ կ'ապաստանի Գամիշլիի սասունցիներուն մօտ: Մենք ալ ընտանեօք շրջան մը կը փոխադրուինք Գամիշլի, ապա կը վերադառնանք Հալէպ, իսկ հայրս կը ձերբակալուի Գամիշլիի մէջ եւ վեց ամիս կը բանտարկուի հոն:

Ինչպէս յիշեցի, հայրս, Ազէզի խանութը գոցելէ ետք, Հալէպի մէջ Կիրակի եւ Ուրբաթ օրերուն կատարուող պազարներուն պասքա կը բանար եւ ամերիկեան գործածուած բայց նորոգուած ժաֆէթներ եւ

վերարկուններ կը ծախէր: Հոն նկատի կ'առնէ հօրս եւ իր հայրենակից-ներուն հետ խօսուած հայերէն մտիկ ընող երիտասարդ քիւրտի մը հետաքրքրութիւնը, եւ, քանի որ ինքն ալ քրտերէն գիտէր, կը մօտենայ քիւրտին եւ հարցնելով կը հաստատէ, որ ան հայ է եւ Հայոց Մեծ Եղեռնին քիւրտերուն կողմէ որդեգրուելով ապրած է անոնց մօտ:

Հայրս, պաւստան գոցելով, քիւրտը, որ Արէֆ կը կոչուէր, կը տանի Ազգային Առաջնորդարան եւ այնուհետեւ Արէֆ իր վրայէն կը նետէ քրտական տարազը եւ հայանալով՝ կ'ապրի եւ կ'ամուսնանայ Հալէպի մէջ:

Ամառնային օր մըն էր: Հայրս արաբական թաթուներով արաբ երիտասարդ մը բերաւ մեր տունը: Խօսակցութենէն յայտնի եղաւ, որ արաբ երիտասարդը, Հայոց Մեծ Եղեռնին 6-7 տարեկան մանուկ մը, կ'որդեգրուի Անազա ցեղախումբէն ընտանիքի մը կողմէ, հոն կը մնայ եւ կը մեծնայ արաբական սովորութիւններով, բայց երբեք չի մոռնար իր հայ արմատները եւ օր մըն ալ կ'որոշէ փախչիլ դէպի Հալէպ՝ լսելով, որ հոն շատ հայեր կ'ապրին: Հալէպ գալով, հարցնելով հայերու մասին, Նոր Գիւղի մէջ կը հանդիպի հօրս:

Արաբացած հայը մեր տունը կը մնայ քանի մը օր եւ կ'արժանանայ հայկական հիւրասիրութեան: Այդ միջոցին, ենթական կը յիշէ իր հայկական անունը՝ Սարգիս եւ Թուրքիոյ մէջ իրենց տունն ու շրջանը:

Հայրս Սարգիսը Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կը տանի եւ հոն գտնուողները, լսելով Սարգիսին բացատրութիւնները, կ'եզրակացնեն, որ Սարգիս այնթապցի ծնողներու զաւակ է:

Շարունակուող հարցափորձերէն ետք, Սարգիս կը գտնէ իր ազգականները, որոնք տէր կ'ըլլան իրեն, կ'ամուսնացնեն եւ արհեստի տէր կ'ըլլայ, ապրելով որպէս պատուաւոր հայ, որ երբեմն կը հանդիպէր մեզի՝ իր երախտագիտութիւնը յայտնելով հօրս եւ մեր ընտանիքին:

Ես երբեք չեմ մոռնար Սարգիսը արաբական տարազով ու թաթուներով եւ յետոյ՝ եւրոպական համազգեստով, սակայն միշտ թաթուներով, չմոռնալու համար իր անցեալի տառապանքները:

Չեմ գիտեր բախտով, թէ՞ հետաքրքրութեամբ հայ կարօտեալներ եւ փախստականներ հօրս կը հանդիպէին:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տարիներ էին: Օր մըն ալ Հայրս հայ երիտասարդի մը հետ տուն եկաւ: Մենք ընտանեօք, 15 տարեկանէն վար երեք եղբայր եւ մէկ քոյր, կը բնակէինք մէկ սենեակնոց տունի մը մէջ: Հայրս ներկայացուց անձանօթ երիտասարդը՝ Յակոբ Գարակէօզ, փախստական թրքական բանակէն:

Յաջորդ քանի մը օրերուն ընթացքին, հայրս, իր բարեկամներէն որոշ գումար մը ապահովելով, որոշ գումարի մը փոխարէն Յակոբը Լիբանան անցընելու անձը գտաւ: Յակոբ Պէյրութ հասնելով՝ շնոր-

Հակալական նամակով մը իր երախտիքը յայտնեց հօրս ըրած բարիքին համար, գնահատելով հօրս ազգասիրական զգացումները:

Մեր կնքահայրը՝ Մելէ Գասպարեան, որ երկար տարիներ ջաղացպանութիւն ըրած է հիւսիսային Սուրիոյ քրտաբնակ լեռնաշխարհին մէջ, տարիքի բերմամբ անկարող ըլլալով՝ կը ստիպուի մտածել իր ընտանիքին ապրուստին մասին եւ հօրս կարծիքը կ'ուզէ այդ ուղղութեամբ:

Հայրս, նկատի առնելով կնքահօրս մեծցած գաւակները, կը թելադրէ Հալէպ փոխադրուիլ, որպէսզի գաւակները գործ գտնելով եւ աշխատելով իրենց ապրուստը ապահովեն: Կնքահայրս ճիշդ գտնելով հօրս թելադրութիւնը, իր համաձայնութիւնը կը յայտնէ Հալէպ փոխադրուելու:

Կնքահայրս Ազէզի իր տունը աժան գինով քիւրտի մը կը ծախէ եւ իր կնոջ ու երկու աղջիկ եւ երկու մանչ գաւակներով Հալէպ կը փոխադրուի եւ կ'իջեւանի մեր տունը: Կնքահօրս գաւակները գործ կը գտնեն եւ կը սկսին աշխատիլ: Մեզի կը մնան երկու շաբաթ եւ յարմար վարձքով տուն մը գտնելով՝ կը փոխադրուին հոն:

Կնքահայրս մինչեւ իր մահը երախտագիտութեամբ կը յիշեր հօրս ըրած մարդկային եւ ազգականական բարիքը:

Երկրորդ Աշխարհամարտի տարիներուն, ինչպէս աշխարհի ամէն կողմ, նոյնպէս Սուրիոյ մէջ կը տիրէր տնտեսական ծանր վիճակ: Ուտելիքի, մանաւանդ հացի տագնապը անտանելի էր: Մէկ-երկու քիւօ հաց առնելու համար կէս գիշերին փուռին առջեւ շարքի կենալով՝ հազիւ մինչեւ առաւօտ կարգը կու գար: Եւ երբեմն մինչեւ կարգը գալը՝ հացը կը վերջանար: Օրուան հաց ունենալը մեծ բախտաւորութիւն էր: Գիշերուընէ փուռին առջեւ կենալու մարդ չունեցող ընտանիքներ յաճախ առանց հացի մնալու դատապարտուած էին: Այդ օրերուն դժուար էր գտնել հակիթ, կարագ, շաքար, բրինձ եւայլն: Անտանելի եւ տաժանելի օրեր էին:

Այդ օրերուն, երէց եղբայրս Յարութիւնը, բաւականաչափ անգլերէն գիտնալով, կ'աշխատէր անգլիական բանակի խոհանոցին մէջ, որ հաստատուած էր Հալէպի կարմիր զօրանոցին մէջ, եւ խոհանոցին կից ճաշարանին յաճախորդ ենթասպաններուն կերակուր մատուցելու պարտականութեան ընթացքին կը ծանօթանայ որպէս թարգմանիչ անգլիական բանակին ծառայող Սարճըն Չարլիին՝ աւստրալիացի հայ երիտասարդ մը, որուն կ'առաջարկէ օգնել իրեն, որպէսզի խոհանոցի եւ ճաշարանի աւելցուքները թափելու պարտականութիւնը առնէ, որոչ գումարի մը փոխարէն:

Սարճըն Չարլին կը յաջողցնէ ծրագիրը եւ համաձայնագիրը (ֆոթօքաթ) կը յանձնէ եղբօրս: Հայրս, որ այդ օրերուն գործ չունէր, կառք մը կը վարձէ եւ շաբաթը քանի մը անգամ զօրանոց երթալով՝ կառքը կը լեցնէ խոհանոցէն եւ ճաշարանէն աւելցած հացերով, միսե-

րով, կերակուրներով, անուշեղէններով եւ զանազան ուտելիքներով ու խմելիքներով, եւ այս բոլորը կ'իջեցնէ մեր տունը: Բարեկամներու միջոցաւ լուր կը զրկէ Ձէյթուն Խանի, չորրորդ թաղամասի, Աճուր Թարլայի հայ բնակիչներուն, որոնք արդէն կը տառապէին հացի, միսի եւ ուտելիքներու պակասէն, որ գան եւ աժան գինով գնեն իրենց ուզածները:

Հայրս կշիռք մըն ալ կը գնէ եւ մէկ օրուան ընթացքին կը ծախէ կառքի բովանդակութիւնը: Եւ այդպէս, քանի մը տարի, մինչեւ անգլիացիներու Սուրիայէն մեկնումը, հացով, միսով եւ այլ ուտելիքներով կը կշտացնէ մեր ընտանիքը եւ մեր տան շրջակայ հայութիւնը:

Պատերազմի այդ տառապալի օրերը յիշողները գնահատանքով եւ երախտագիտութեամբ երկար տարիներ օրհնութիւն նկատեցին սասունցի Խարզոյին կողմէ հացի եւ ուտեստեղէններու հայթայթումը, առիթ ստեղծելով, որ անօթի չմնան բազմաթիւ աղքատ ընտանիքներ, որոնք խաղաղ օրերուն նման սննդարար ուտելիքներ ուտելու առիթ չէին կրնար ունենալ:

Հալէպ մեր բնակութեան ընթացքին, հօրս կողմէ մեր սեփական տունը ծախելէ ետք, զանազան շրջաններ որպէս վարձակալ ապրեցանք: Բանակէն վերադարձիս, ծնողքս կ'ապրէր Արզուպ թաղամասը: Շրջան մը ետք փոխադրուեցանք Պոսթան-Փաշա, ապա՝ Համիտիյէ:

Հալէպի «Արեւելք» օրաթերթի գրաշարութիւնը թէեւ յոգնեցուցիչ, սակայն նախասիրած աշխատանքս էր, ճամբայ բանալով իմ մրտաւորական եւ գրական երազներուս:

Արդէն սկսած էի յօդուածներ, թղթակցութիւններ եւ բանաստեղծութիւններ գրել «Արեւելք»-ի մէջ, մաս կը կազմէի Հ. Յ. Դաշնակցութեան եւ այլ միութիւններու շարքերուն, նաեւ որպէս ուսուցիչ ծառայելով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներուն մէջ, որոշ անուն եւ ծանօթութիւն ձգելով միութենական շրջանակներու մէջ:

Երբեմն, մինչեւ իրիկուն գրաշարութենէն յոգնած, երբ տուն կը հասնէի, տունին մէջ անծանօթ կնոջ մը կամ այր մարդու մը կը հանդիպէի: Հայրս, տեսնելով իմ հետաքրքրութիւնս, կ'ըսէր.

— Տիկինը (կամ պարոնը) բազմանդամ ընտանիքի մայր է (կամ հայր), երեք զաւակ ունի դպրոցական, սակայն թոշակը վճարելու կարողութիւն չունի. իմ հոգին, բարիք մը ըրէ այս կնկան (կամ այս հայրենակիցին), նամակ մը գրէ Սուրիահայ Օգնութեան Խնային կամ հայրենակցական միութեան, որպէսզի օգնեն իրենց զաւակներուն դպրոցի թոշակին:

Եւ այսպէս՝ յաճախ: Օր մը նեղուած՝ ըսի.

— Հա՛յրիկ, ի՞նչ է, դուն բարեգործակա՞ն ես, ես ալ քու քարտուղա՞րն եմ:



*Խնդաց եւ ըսաւ.*

*— Տղա՛ս, տկար, անկար եւ աղքատ մարդոց օգնելը մարդկային ամենամեծ առաքինութիւնն է. ամբողջ կեանքիդ ընթացքին բարիք ընելէ մի՛ դադրիր, բարիք ըրէ՛, ծովը թափէ՛:*

*Հայրս նման բարիքներ չդադրեցաւ ընելէ մինչեւ մահ: Հարըստութիւն չսիրեց, որովհետեւ մեծցած էր Սասնոյ Սպաղանք գիւղը՝ ֆետայիներու շունչին տակ, որոնք միայն ազգն ու Հայրենիքը սիրեցին եւ պայքարեցան ազատ, անկախ Հայաստանի երազին իրականացման համար: Հայրս անոնցմէ էր եւ մեզի փոխանցեց այդ աւանդական զգացումները:*



Ձախէն աջ՝ Գրիգոր Հոթոյեան, Գեներալ Մայրո բանաստեղծ Սամուէլ Սաֆարեան եւ բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր, հրատարակիչ, Միջազգային Ռազմածովագիրներու փոխնախագահ Սասուն Գրիգորեան

## ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՍԷՐ

Պրն. Ճէք Ադամեան շատ կծծի եւ ապագայնացած հայ մըն էր: Կ'ապրէր Միացեալ Նահանգներու Տիթրոյթ քաղաքին մէջ: Ունէր մեծ գործարան մը եւ հարիւրաւոր գործաւորներ: Մէկ խօսքով, Պրն. Ճէք մեծահարուստ մըն էր, բայց իր ազգին որեւէ օգտակարութիւն չունէր: Իր կեանքին միակ իտէպլը հարստանալն էր, որուն նուիրած էր ինքզինքը: Կ'աշխատէր, գիշերը ցերեկին կը խառնէր, շատ մը ապօրինի միջոցներու կը դիմէր, որպէսզի իր անարդար շահէն զատ նաեւ իր գործաւորներուն իրաւունքները իւրացնէր:

Օր մը, նստած իր գործատան գրասենեակին մէջ, երբ իր գործաւորներէն մէկուն գնած «Հայրենիք» օրաթերթը կը կարդար, հանդիպեցաւ նուիրատուութեան մը: Պրն. Հայկ Երէցեան անունով հայ մը, Տիթրոյթէն, ահագին գումարներ կը նուիրէր հայ բարեգործական գանազան միութիւններու: Հոն կը յայտարարուէր նաեւ, թէ երկրորդական վարժարաններ յաջողութեամբ աւարտած երեք սաներ կ'ուզէր՝ անոնց համալսարանական կրթութիւն տալու համար, որոնց դպրոցական ծախսերը ինք պիտի հոգար: Պրն. Ճէք, զարմացած, կրկին անգամ կարդաց, զայրացաւ, ցաւեցաւ: Ինք կը ճանչնար Պրն. Հայկ Երէցեանը, որուն հետ քանի մը անգամ, գործի բերումով, հանդիպումներ ունեցած էր: Կրկին անգամ կարդաց եւ ափսոսանքով գոչեց:

— Ապո՛ւշ, անխելք...

Հետեւեալ քանի մը օրերու ընթացքին, իրեն համար մղձաւանջ մը դարձած էր այդ մեծագումար նուիրատուութիւնը: Կը ցաւէր Պրն. Հայկ Երէցեանին, որ այդքան մեծ գումարներ յումպէտս կը վատնէր եւ տակաւին պատրաստ էր աւելիին: Պրն. Երէցեան ելեկտրական սարքաւորումներ պատրաստելու գործարան մը ունէր Տիթրոյթի մէջ: Պէտք էր միջոց մը գտնէր խօսելու հետը եւ խրատելու, որպէսզի հրաժարէր այդ գաղափարէն:

Հեռաձայնով ժամադրուելէ վերջ, յաջորդ օր ներկայացաւ Պրն. Հայկ Երէցեանին: Քաղաքավարական արարողութիւնները վերջացրնելէ ետք, Պրն. Ճէք Ադամեան երկար նախաբանէ մը վերջ սկսաւ խօսիլ իր գալու շարժառիթին մասին: Ան անգլերէն կը խօսէր, սակայն Պրն. Հայկ հայերէն կը պատասխանէր, դիտողութիւն ընելով, որ քանի որ երկուքն ալ հայերէն գիտէին, եւ մանաւանդ որ հայ են, պարտաւոր են հայերէն խօսիլ:

Պրն. Ճէք իբր թէ որպէս բարեկամ երկարօրէն խօսեցաւ դրամ շահելու եւ զայն պահելու մասին, եւ ծանրացաւ մասնաւորաբար Պրն. Հայկի կատարած նուիրատուութիւններուն եւ սաներու խնդրին, ապա զայրացած՝ ըսաւ.

— Միրելի՛ բարեկամս, ես քեզի աւելի ճարպիկ մէկը կը կարծէի, ինչն<sup>ու</sup> զրամդ կը վատնես այսպիսի պարապ նպատակներու: Ինծի կը դիմեն, սակայն ես մէկ սենթ իսկ չեմ տար: Ինծի ի՛նչ ուրիշը: Քեզի ի՛նչ սան պահել, կամ ասոր անոր դրամ նուիրել: Ամէն մարդ գլխուն ճարին թող նայի: Ազգ ի՛նչ, եկեղեցի ի՛նչ, դպրոց ի՛նչ: Կարեւորը դրամն է, բարեկամս: Եթէ դրամ ունիս՝ քեզ կը յարգեն, եթէ չունիս՝ անարժէք մարդ ես: Եղբայր, դուն քու մասիդ խորհիր, ընտանիքի տէր ես, մեղք է զաւակներուդ:

Պրն. Հայկ, փոխանակ հակաճառելու, երկարօրէն վիճաբանելու ազգի, եկեղեցիի եւ մշակոյթի իմաստին եւ կարեւորութեան մասին, հետեւեալը պատմեց.

«Մեր ամէնուս ծանօթ տարագրութեան օրերն էին: Մենք կը բռնակէինք Սեւ Ծովի եզերքը, Սամսոն քաղաքին մէջ: Հայրս մեծահարուստ էր, սիրուած՝ բոլոր հայրենակիցներէն: Ես այն ատեն հազիւ 6-7 տարեկան էի եւ դպրոց կ'երթայի: Քաղաքի հայ ժողովուրդին հետ տարագրուեցանք: Նախ զինուորագրեցին հայրս եւ տարին: Տարագրուեցանք՝ ձգելով թէ՛ տուն, թէ՛ տեղ, թէ՛ հարստութիւն եւ խառնուեցանք տարագիր բազմութիւններուն: Յետագային լսեցինք, որ հայրս զնդակահարած են: Մնացինք մայրս, ես եւ փոքր քոյրս: Ծամբան քոյրս մեռաւ անօթութենէն: Ամէն տեսակի չարչարանքներով եւ վայրագութիւններով վերջապէս հասանք Հալէպ: Զիս որբանոց դրին, իսկ մայրս սպասուհի դարձաւ հարուստ հայ ընտանիքի մը բնակարանին մէջ: Օրերը կ'անցնէին: Եկաւ 1918 թուականը, զինադադար եղած էր: Մայրս բաւական դրամ կը շահէր: Հանեց զիս որբանոցէն, որովհետեւ որբանոցը Պէյրութ պիտի փոխադրուէր: Սենեակ մը վարձեցինք եւ տեղաւորուեցանք: Մայրս, խեղճ կին, որուն ձեռքին տակ սպասուհիներ կային մեր հայրենիքին մէջ, հիմա սպասուհի դարձած՝ կ'աշխատէր առանց տրտնջալու, միշտ ջանալով զիս երջանիկ ձգել: Կը շարունակէի ուսումս տեղւոյն հայ նախակրթարանին մէջ: Հաշտուած էինք մեր ճակատագրին եւ կացութեան հետ եւ կ'ապրէինք միօրինակ: Ես երբեմն կ'երթայի մօրս աշխատած տունը եւ տանտէրը պէտք է խոստովանիլ, որ շատ ազնիւ եւ պարկեշտ հայ մըն էր: Տարիները կը սահէին: Ես դասարանիս ամենաշառազէմ աշակերտն էի: Կ'աշխատէի՝ միշտ նկատի ունենալով, որ մայրս ի՛նչ տառապանքով կը հոգար իմ դպրոցական ծախսերս:

«Եւ օր մը կատարուեցաւ անխուսափելին...: Մայրս ծանրօրէն հիւանդացաւ եւ քանի մը շաբաթէն մեռաւ...: Հազիւ 13-14 տարեկան

տղայ մըն էի: Ի՞նչ կրնայի ընել առանձին: Ինչպէ՞օ պիտի կարենայի ուսումնաւորը շարունակել եւ մանաւանդ՝ ապրիլ:

«Հոն ուր մայրս կ'աշխատէր, ունէին մանչ մը՝ Յակոբ անունով, որուն հետ միեւնոյն դասարանն էի եւ միշտ կ'օգնէի իրեն դասերը պատրաստելու համար: Տարիներու ընթացքին դարձած էինք մտերիմ ընկերներ: Ան ամէն օր իրենց տունէն կերակուր կը բերէր ինծի:


«Երկար կը նստէր եւ կը խօսէինք մեր անցեալին եւ ապագային մասին: Ան շատ կը տանջուէր ինծի համար: Յակոբ ամէն օր հօրը խօսելով իմ մասին՝ համոզած էր զայն, որպէսզի զիս իր պաշտպանութեան տակ առնէր: Բարի մարդը սիրով ընդունած էր իր զաւկին առաջարկը, գնահատելով միեւնոյն ատեն Յակոբին ընկերական անկեղծ սէրը:

«Պաշտելի հոգատարս ինծի միշտ կը կրկնէր. «Տղա՛ս, մեր թշնամիները ուզեցին բնաջնջել մեզ, սակայն չյաջողեցան իրենց դժոխսիւն նպատակը իրագործել: Հայուն ապրելու կամքին այսքան զօրաւոր ըլլալը չէին գիտեր: Ես կը թելադրեմ քեզի, որ սիրես ազգդ, եկեղեցիդ, հայ մշակոյթը, որովհետեւ անոնք են, որ մեզ մինչեւ այսօր հայ պահած են եւ ես վստահ եմ՝ եթէ շարունակենք սիրել, պիտի պահեն նաեւ ապագային: Երբ մեծնաս, դիրք ունենաս, մի՛ մոռնար, որ ազգիդ մէջ կան քու ներկայ վիճակիդ մէջ գտնուող հայ որբեր, որոնք կարօտն ունին պաշտպաններու: Եւ, մանաւանդ, կը թելադրեմ քեզի, որ մայրենի լեզուդ երբեք չմոռնաս»:

«Այո, ես տարիներ վերջ աւարտեցի երկրորդական ուսումնաւորութիւնը եւ եկայ Ամբրիկա՝ համալսարանական կրթութիւն ստանալու համար: Իմ բարերարիս օգնութեամբ ստացայ ելեկտրական ճարտարագէտի վկայականս, եւ, տարիներու ընթացքին, իմ տքնաջան աշխատանքովս ունեցայ իմ սեփական գործարանս եւ ներկայի նախանձելի դիրքս»:

Պրն. Ճէք Ադամեան, որ տասնեակ տարիներով հայ շրջանակներէ հեռու ապրելով օր մը օրանց այսքան մանրամասնութիւններ չէր լսած հայ ժողովուրդին ու անոր տանջանքներուն մասին, շատ յուզուեցաւ եւ պատասխանեց.

— Սիրելի՛ Հայկ, դուն շատ բարի եւ ազնիւ հայ մըն ես, կը գնահատեմ քու ընթացքդ եւ ներողութիւն կը խնդրեմ քեզ այսպանած ըլլալու համար, եւ կը խոստանամ քեզմէ օրինակուելով՝ օգնել իմ ազգիս բոլոր կարօտեալներուն եւ հաստատութիւններուն:



## ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Պրն. Սարգիս ախորժակով կը ճաշէր Պէրութի Համրա թաղին մէջ գտնուող «Քրէյզի Հորս» կոչուող քաղինօ-ճաշարանին մէջ, երբ լսեց աղմուկ մը քովի սեղանին շուրջը: Թուխ եւ Համակրելի պարոն մըն էր, որ հագիւ ճաշը վերջացուցած՝ կը ջանար Համոզել կարսոնը, թէ ինք պարկեշտ մարդ մըն է եւ իրեն պատահածը կրնար պատահիլ ոեւէ անձի:

— Մտի՛կ ըրէ, խնդրե՛մ, եւ Աստուծոյ սիրոյն, մի՛ պոռար,— կ'ըսէր ցած ձայնով:— Ըսի՛ քեզի, թէ խաբեբայ մը չեմ: Պարզապէս կորսընցուցի դրամապանակս:

Կարսոնը սակայն բնաւ տրամադիր չէր ազդուելու յաճախորդին աղաչական ու Համեստ կեցուածքէն:

— Գիտենք այդ խաղերը, պարո՛ն, ասանկ բաներ շատ տեսած ենք,— եւ պոռաց,— Պարոն Եուսէ՛ֆ...

Պարոն Եուսէ՛ֆ պիտաւոր, հսկայ մարմնով անձ մը, նստած էր Հաշուեսեղանին առջեւ եւ կարծէք չլսեց իր անունը:

Այս անգամ կարսոնը աւելի բարձր ձայնով պոռաց.

— Պարոն Եուսէ՛ֆ, այստեղ թիւ չորս սեղանի յաճախորդը չի վըճարեր:

Այս խօսքին վրայ Պրն. Եուսէ՛ֆ ոտքի ելաւ, հեռացաւ Հաշուեսեղանէն, ոլորեց պեխերը եւ մօտեցաւ թշնամական կեցուածքով մը:

— Ի՞նչ կայ,— հարցուց եւ աչքովը չափեց յաճախորդը:

— Չի՛ վճարեր:

— Կը ներէ՛ք,— ըսաւ խռովքի մատնուած յաճախորդը,— փոքր դժբախտութիւն մը պատահած է ինձի: Դրամապանակս մոռցած եմ տունը կամ ճամբան կորսնցուցած եմ: Անունս Իլիաս Ճամուս է եւ ծանօթ եմ շատերուն:

— Իմ ի՛նչ հոգս է,— պատասխանեց ճաշարանապետը:— Սամի՛ր, ոստիկան մը կանչէ:

Ճաշարանապետին ընթացքը կատրեցուց Պրն. Սարգիսը: Ինչպէ՞ս կարելի է նուաստացնել այսպիսի պարոն մը դրամապանակը տունը մոռցած կամ կորսնցուցած ըլլալու դժբախտութեան համար: Եւ ոտքի ելաւ ու որոշեց վճարել անծանօթ մարդուն հաշիւը:

— Կը խնդրե՛մ, պարո՛ն ճաշարանապետ,— ըսաւ ան,— այսքան աղմուկ մի՛ հանէք ոչինչ բանի համար: Եթէ պարոնը թոյլ կու տայ, ե՛ս կը վճարեմ իր հաշիւը եւ ապա կը վերադարձնէ ինձի:

Յաճախորդին աչքերը երախտագիտութեամբ լեցուն՝ դարձան դէպի իր անծանօթ փրկիչը:

— Օ՛, պարոն,— ըսաւ ան,— շատ ազնիւ էք: Անարդար ու յիմարական նուաստացումէ մը կը փրկէք զիս:

— Խնդրե՛մ, պարո՛ն, մեծ բան մը չէ,— պատասխանեց Պրն. Սարգիս եւ ապա դարձաւ կարսոնին,— պարոնին հաշիւը կը բերե՞ս հաճիս:

Ամօթահար ճաշարանապետը պարտք սեպեց բացատրել:

— Կը ներէք վերաբերմունքիս համար,— ըսաւ,— բայց այսպիսի բաներ յաճախ կը պատահին, ատոր համար ալ կորսնցուցած ենք մեր վստահութիւնը:

— Բայց չէ՞ք տեսներ,— պատասխանեց Պրն. Սարգիս ջղայնացած,— արտաքին կերպարանքէն չէ՞ք կրնար հասկնալ, որ պատուաւոր անձ մըն է ան:

— Ճիշդ ու ճիշդ այսպիսի պարոններ փորձանք կը դառնան մեր գլխուն,— ըսաւ ճաշարանապետը:— Չեմ գիտեր, թէ ո՞վ է պարոնը, խաբեբաները ընդհանրապէս լաւ հագուած կ'ըլլան:

Երբ ճաշարանապետը գնաց եւ հեռացաւ կարսոնը, անծանօթ յաճախորդը չէր գիտեր, թէ ինչպէ՞ս երախտագիտութիւն պիտի յայտնէր իր փրկիչին:

— Ի՞նչ ըսեմ ձեզի,— ըսաւ,— ասանկ բան բնաւ չէր եկած գլխուս: Քիչ մնաց, որ խայտառակ ըլլայի: Շատ երախտապարտ եմ ձեզի:

— Խնդրե՛մ, պարո՛ն, չ'արժեր այլեւս խօսիլ:

— Ի՞նչ կ'ըսէք, պարո՛ն, գիտէ՞ք թէ ի՞նչ ըսել է կեցած տեղը խայտառակուիլ:

— Շատ ազնիւ մէկը կ'երեւիք,— ըսաւ Պրն. Սարգիս:— Եթէ ես ձեր տեղը ըլլայի, այդ իշուն քիթը-բերանը կը ջարդէի: Յետոյ կը կանչէի ոստիկան մը, հետո տուն կը տանէի եւ կը վճարէի դրամը: Հապա նրման դժբախտութեան մը համար թոյլ կու տայի՞ որ խայտառակուիմ: Պրն. Սարգիս քանի կը խօսէր, այնքան կը փրփրէր:

— Պատուոյս վրայ կ'ըսեմ քեզի, կը ջարդէի անոր քիթն ու բերանը, ինչպէս շատ ճիշդ կ'ըսէք՝ պիտի ձգէի, որ զիս խայտառակե՞ր այդ սրիկան:

Մարդը խոստացաւ, որ կէսօրէ ետք պիտի անցնի եւ վճարէ իր պարտքը:

Մարդը մեկնեցաւ եւ Պրն. Սարգիս շարունակեց իր ճաշը: Գարեջուր մըն ալ խմեց, եւ այն ըոպէին, երբ ձեռքը տարաւ դրամապանակը գտնուող գրպանին, անմիջապէս նկատեց, որ տեղը պարապ է:

— Ամա՛ն,— բացազանչեց սարսափով:— Ո՛վ երկնաւոր Աստուած, այս ի՛նչ գուգագիպութիւն է, ի՛նչ դժբախտութիւն:

Անձկութեամբ սկսաւ խուզարկել աջը, ձախը, առջեւը, ետեւը, բայց դրամապանակը չկար ու չկար: Պաղ քրտինք մը պատեց ճակատը եւ քայքայուեցաւ բարոյական կորովը:

«Հիմա ի՞նչ պիտի ընեմ», մտածեց անմիջապէս: Եթէ տունը հեռաձայնէ՝ դժբախտաբար կիւնը ճամբորդութեան մէջ է եւ ճաշարանը ճաշելու պատճառն ալ այդ է: Բարեկամներէն մէկո՞ւն հեռաձայնէ: Այո, այս մէկը պիտի ըլլար լաւագոյն լուծումը: Ոտքի ելաւ եւ կարսոնը կանչեց:

— Ո՞ւր է ձեր հեռաձայնը,— հարցուց:

— Դժբախտաբար ակրուած է, պարո՛ն,— ըսաւ կարսոնը:

— Այստեղ մօտերը ուրիշ հեռաձայն մը չկա՞յ:

— Ինչպէ՞ս թէ չէ: Դուրսը, քիչ անդին կը գտնէք... Կ'ուզէի՞ք ձեր

հաշիւը:

Պրն. Սարգիս սարսուաց:

— Ո՛չ, գարեջուր մը եւս բեր ինձի:

— Անմիջապէս, պարո՛ն...

Կարսոնը հեռացաւ եւ Պրն. Սարգիս օգտուեցաւ մինչեւ գարեջուր խմելիք ժամանակամիջոցին մտածելու համար, թէ ի՞նչ լուծում կրնայ գտնել այս հարցին: Գարեջուրը եկաւ, խմեց, բայց որեւէ լուծում չկրցաւ գտնել: Կարսոնը միշտ շուրջը կը դառնար:

— Պատրատե՞մ ձեր հաշիւը, պարո՛ն...

— Ո՛չ, գարեջուր մը եւս բեր:

— Անմիջապէս, պարո՛ն...

Կարսոնը հեռացաւ, իսկ Պրն. Սարգիս մնացած էր անելի մէջ: Ա՛յ, կրողը տանի, ո՞ւր կորսնցուցած էր դրամապանակը եւ ինչպէ՞ս կը պատահէր, որ այդ միւսին կորսնցուցած պահուն՝ կը կորսնցնէր ինքն ալ: Հապա ի՞նչ պիտի ըսեր պեխաւոր Պրն. Եոսէֆին: Արժանապատուութիւնը գէշ կերպով պիտի թաթխուէր ցեխերու մէջ, եւ ոչ միայն պիտի չկարենար կռուիլ ու ջարդուփշուր ընել ճաշարանապետին քիթն ու բերանը, ինչպէս գայրագին կը սպառնար քիչ առաջ, այլ քաջութիւնն իսկ պիտի պակսէր իրեն՝ յարմար խօսքեր գտնելու եւ ինքզինք արդարացնելու համար:

«Ամա՛ն, այս ի՛նչ փորձանք եկաւ գլխուս,— կը մտածէր:— Այս ի՛նչ սարսափելի բան է եղեր դրամ չունենալը: Փոշի կը դառնաս առանց դրամի: Ինչպէ՞ս կրնաս արժանապատուութիւնդ պաշտպանել, երբ դրամ չունիս: Վա՛յ, վա՛յ, այդ ի՞նչ ուժ ունի դրամը»:

Կարսոնը նորէն եկաւ:

— Կ'ուզէ՞ք ձեր հաշիւը...

— Ո՛չ, գարեջուր մը եւս բեր...

— Այո՛, պարո՛ն...

Այս անգամ սակայն կարսոնը շեղ ու կասկածոտ նայուածք մը նետեց վրան եւ Պրն. Սարգիս սարսուաց: Հիմա այլեւս երբ խմած գարեջուրներէն գլուխն ալ սկսած էր դառնալ, բան մը չէր կրնար մտածել եւ ինկած էր յուսահատական վիճակի մը մէջ:

— Կ'ուզէի՞ք ձեր հաշիւը, պարո՛ն...

— Ո՛հ, բե՛ր գարեջուր մը եւս...

Կարսոնը սակայն այս անգամ «անմիջապէս» չըսաւ:

— Գործս ուրիշին կը փոխանցեմ, պարո՛ն,— ըսաւ:— Վճարեցէ՛ք ձեր հաշիւը եւ ապա շարունակեցէ՛ք:— Միաժամանակ նայեցաւ անոր վերէն մինչեւ վար: Ու այսպէս, նայուածքը հասաւ մինչեւ սեղանին ոտքերը:

— Վար ինկած է ձեր դրամապանակը, պարո՛ն,— ըսաւ ու ծռեցաւ՝ դայն սեղանին տակէն վերցնելու համար:

Եթէ դրախտն ալ պարզեւէին Պրն. Սարգիսին, այդքան պիտի չուրախանար: Վերցուց դրամապանակը, որ յայտնօրէն գրպանէն սահած-ինկած էր, վճարեց, առատ նուէր մը տուաւ կարսոնին եւ մըմընջեց ինքնիրեն. «Չկայ արժանապատուութիւն առանց դրամի... կրո՛ղը տանի անիծեալ...»:

Եւ յաղթական, այլ՝ օրօրուելով դուրս եկաւ այդ ճակատագրական ճաշարանէն:

Պրն. Սարգիս իր գլխուն եկած այս դժբախտութիւնը յաճախ կը պատմէր իր բարեկամներուն, միշտ աւելցնելով, որ մարդիկ բարիք ընելէ պէտք չէ դադրին, որովհետեւ բարեգործութիւնը աստուածային պատգամ մըն է:



Բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան եւ Գրիգոր Հոթոյեան



## ԲԱՐԻՔ ԳՈՐԾԵԼ ԱՄԷՆ ՕՐ

Սեդրակ Մեսրոպեան շատ ուշիմ եւ խելացի աշակերտ մըն էր: Կը յաճախէր Սուրբոյ Հալէպ քաղաքի ամբողջութեամբ հայութեամբ բերնակուած Նոր Գիւղի ազգային Սահակեան երկսեռ վարժարանը, եւ, որպէս աշխատասէր աշակերտ, սիրուած էր վարժարանի տնօրէնութենէն եւ ուսուցչական կազմէն: Ընկերները, երբ դասերու պատրաստութեան ատեն դժուարութեան կը հանդիպէին, կը դիմէին իրեն: Ան սիրալոյսով կ'օգնէր անոնց, արժանանալով իր ընկերներուն գնահատանքին:

Սեդրակ, մանկութենէն, որպէս դպիր կը ծառայէր Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայաստանեայց առաքելական եկեղեցիին՝ մոմ բռնելով եւ մասնակցելով դպրաց դասի երգեցողութիւններուն: Երբեք չէր բացակայեր ամէն Երկուշաբթի երեկոյեան տեղի ունեցող դպրաց դասի փորձերէն, ուր դպրապետը իրենց կը սորվեցնէր եկեղեցւոյ շարականներու երգեցողութիւնները:

Ան ամէն Կիրակի, կէսօրէ ետք ժամը 2:00-ին, կը յաճախէր Հայաստանեայց եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու Նոր Գիւղի բաժինը, որ տեղի կ'ունենար Սահակեան վարժարանին մէջ, ուր հայ մանուկներուն կը դասաւանդուէր ազգային եւ կրօնաբարոյական դաստիարակութիւն:

Կիրակնօրեայ դպրոց եւ հայաստանեայց եկեղեցի յաճախելով, Սեդրակ որոշ գաղափար մը ունեցած էր մեր եկեղեցական պատմութենէն, միեւնոյն ատեն սորված հայ եկեղեցւոյ հոգեգմայլ շարականները, աղօթքներն ու սաղմոսները: «Հաւատով Խոստովանիմ» աղօթքի 24 համարները անգիր արտասանելու կիրակնօրեայ դպրոցի կազմակերպած մրցումին մասնացելով՝ արժանացած էր առաջին մրցանակին: Հոն ալ սիրուած էր ուսուցչական կազմէն: Ան յատուկ գնահատանքի եւ նուէրի արժանացած էր նաեւ՝ ամէն Կիրակի կանոնաւորաբար կիրակնօրեայ դպրոց յաճախելուն եւ հետը Սուրբ Գիրք բերելուն համար: Մէկ խօսքով, ան օրինակելի աշակերտ մըն էր՝ իր կենցաղով եւ վարք ու բարքով:

Սեդրակենք կը բնակէին Նոր Գիւղի Պոսթան Փաշա թաղամասին մէջ, ծառերով շրջապատուած բակով տունի մը մէջ:

Օր մը, դպրոցէն տուն վերադարձին, Սեդրակ առօրեայ դասերն ու պարտականութիւնները պատրաստեց եւ ինքզինք բաւական յոգնած զգալով, երկնցաւ դէպի բակ նայող պատուհանին մօտ գտնուող

մահճակալին վրայ՝ դիտելով ծառերը, որոնք գարնանային զգեստներ հագած՝ բնութիւնը կը գեղեցկացնէին:

Սեղրան անակնկալի եկաւ՝ տեսնելով մայր ծիծեռնակներու երթեւեկը, որոնք ծառին վրայ գտնուող բոյնին մէջ գտնուող նորածին ձագուկներուն ուտելիք կը բերէին, ուրախ ճռուողիւններ պատճառելով անօթի ձագուկներուն:

Հետաքրքրական այս տեսարանը խոր տպաւորութիւն թողուց Սեղրակին վրայ, մանաւանդ ծնողք ծիծեռնակներուն իրենց ձագերուն հանդէպ ունեցած պարտականութեան գիտակցութիւնը աստուածային շնորհք մը նկատելով՝ կը սքանչանար եւ բնական կը գրտնէր իր տեսածները:

Հիանալի այս տեսարանը սակայն երկար չտեւեց: Ծնողք ծիծեռնակները սկսան անբնական ձայներ հանել: Անոնք զգացած էին եկող աղէտը, որ չուշացաւ: Սաստիկ հով մը փչեց, որուն հետեւանքով ծառին ճիւղերը սկսան երբեք: Սեղրակ ուշադիր կը դիտէր՝ մտահոգուելով ծառին բոյնին ապահովութեամբ, որովհետեւ բոյնը հաստատուած էր երկու ճիւղերու վրայ, որոնք սկսած էին օրօրուիլ: Նորածին ձագուկները սարսափած՝ օգնութիւն կը հայցէին իրենց ծնողներէն: Բայց անօգուտ: Երբ հովը դադրեցաւ, ծնողք ծիծեռնակները դալով՝ տխրութեամբ ստուգեցին, որ իրենց բոյնը թեքած էր եւ ձագուկները վար իյնալու եւ կատուններուն կեր դառնալու վտանգին ենթակա էին:

Սեղրակ սրտցաւօրէն կը դիտէր տեղի ունեցած ողբերգութիւնը եւ ծիծեռնակներուն պատահելիք վերահաս վտանգը. որոշեց օգտակար դառնալ հէգ ձագուկներուն: Կիրակնօրեայ վարժարանին մէջ սորված պատգամը՝ «բարիք գործել ամէն օր» մտաբերելով, որոշեց օգտակար դառնալ վտանգուած ծիծեռնակներուն: Անմիջապէս բարակ ճիւղերով բոյնի նմանող շրջանակ մը շինեց, տակը տերեւներով ծածկեց եւ մագլցելով ծառին վրայ՝ նոր բոյնը տեղաւորեց աւելի ապահով տեղ մը եւ ձագուկները փոխադրեց անոր մէջ: Սեղրակ երբ այս աշխատանքները կը կատարէր, ծնողք ծիծեռնակները երեւցան եւ կարծելով, որ իրենց ձագերուն վտանգ կը սպառնայ, կայծակի արագութեամբ սկսան յարձակումներ կատարել Սեղրակին վրայ՝ փրկելու համար իրենց ձագուկներուն կեանքը:

Սեղրակ, բարի գործ մը կատարած ըլլալու գոհունակութեամբ, իջաւ ծառէն եւ շարունակեց դիտել ծառը եւ իր տեղաւորած բոյնը, որուն վրայ ծնողք ծիծեռնակները տեւաբար կ'երթեւեկէին: Ասիկա շարունակուեցաւ մինչեւ գիշեր:

Սեղրակ առաւօտեան երբ արթնցաւ, իր առաջին ակնարկը ուղղեց ծառին եւ իր հաստատած բոյնին, որ ամայացած էր բնակիչներէն: Ան լաւ կը յիշէր, որ մինչեւ ուշ գիշեր, մինչեւ իր քնանալը, ծնողք ծիծեռնակները ահ ու դողի մէջ կը ճռուողէին: Անոնք այլեւս վստա-

Հուլիսին չունենալով նորոգուած բոյնին վրայ, ուրիշ ծառի մը վրայ նոր բոյն շինած էին եւ իրենց ձագերը հոն փոխադրած:

Յաջորդ օրը, պետական տօն ըլլալով, հայկական դպրոցները փակ էին: Մէկ օր առաջ կայացած համաձայնութեամբ եւ ծրագրով, Սեդրակ գտաւ իր դասընկերները, եւ, ինչպէս որոշած էին, արկածախնդրական արշաւանք մը կազմակերպեցին Պոսթան Փաշայի պարտէզները եւ դիտեցին Քուէյք գետի յորդառատ ջուրերը, կազմուած տեղացած անձրեւներու հեղեղներէն:

Գարուն էր: Սեդրակ կը սիրէր այդ եղանակը, որովհետեւ բնութիւնը իր չնաշխարհիկ գեղեցկութիւնները հրապարակ կը հանէր: Չորս ընկերներ հետաքրքրութեամբ պտըտեցան պարտէզներուն մէջ: Դիտեցին նախնական ջրհորը, գոր կը դարձնէին երկու կովեր, իսկ ելած ջուրը կը լեցուէր հսկայ աւազանին մէջ եւ անկից՝ յատուկ խողովակներով կը ջրուէին պարտէզի գանազան ցանքերը: Ուշադրութեամբ դիտեցին կարգ մը բանջարեղէններու աճը, որոնց մասին կարդացած էին գիտութեան գիրքին մէջ: Պարտէզներէն դուրս գալով, յոգնասպառ հասան Քուէյք գետին վրայ գոյութիւն ունեցող կիսաքանդ ջաղացքին մօտ:

Չորս ընկերներ զարմանքով կը դիտէին Քուէքի պղտոր ջուրերուն արագընթաց հոսքը, երբ ընկերներէն՝ Ջօհրայ, գլխապտոյտ ունենալով ինկաւ գետին մէջ: Դժբախտաբար գետի այդ մասը բաւական խորունկ էր եւ Ջօհրայ կը գտնուէր խեղդուելու վտանգին տակ:

Սեդրակ եւ ընկերները սարսափահար կը պոռային եւ օգնութիւն կ'աղերսէին: Սակայն պարտէզի այդ մասին մէջ մարդ չկար: Ընկերներէն՝ Գէորգ, չկրցաւ համբերել եւ նետուեցաւ գետին մէջ, որպէսզի իր մտերիմ ընկերը ազատէ ստոյգ մահէ: Գէորգ բաւական լողալ գիտէր: Մօտեցաւ Ջօհրային, որպէսզի գայն գետափ տանի: Այդ պահուն, Ջօհրայ Գէորգին վզին փաթթուեցաւ, իր ծանրութեամբ արգելք հանդիսանալով Գէորգի ազատ լողալուն: Ջօհրայ եւ Գէորգ, երկուքն ալ խեղդուելու վտանգին տակ կը պայքարէին ջուրին երեսը մնալ, սակայն անօգուտ: Ջուրի հոսանքը սկսած էր տանիլ գիրենք հոսանքն ի վար:

Սեդրակ, իր ընկերներուն սպառնացող վտանգը տեսնելով, շուտով մատնուած էր: Ի՞նչ ընել: Ինչպէ՞ս ազատել իր երկու մտերիմ ընկերները: Յիշեց ամէն օր եւ միշտ բարիք գործելու աստուածաշնչական պատգամը եւ մանաւանդ Յիսուսի պատգամը՝ «Միբէ՛ր ընկերդ անձիդ պէս», եւ առանց տնտնալու եւ ժամանակ կորսնցնելու, հաւաքեց իր ցրուած ուժերը եւ դէմքին խաչ հանելով նետուեցաւ ջուրը: Մանկութենէն սորված լողալը մեծապէս օգտակար եղաւ իրեն: Հասաւ ընկերներուն, անցաւ անոնց ձախ կողմը եւ ոտքի զօրաւոր հարուածներով գանոնք դէպի ամի քշեց:

Սեդրակի ընկերներէն՝ Յակոբ, որ սարսափահար հետեւած էր իր ընկերներուն սպառնացող մահուան մաքառումներուն, Սեդրակին օգնութեան հասաւ եւ դժուարութեամբ զանոնք դուրս հանեցին գետէն: Երկու ընկերներ գործի լծուեցան խեղդուելէ ազատուած իրենց ընկերները ուշքի բերելու համար: Նախ գլխիվայր բռնեցին, որպէսզի իրենց կլլած ջուրը դուրս գար: Ապա, կարգ մը մարզանքներով, Գէորգ եւ Զօհրապ արթնցան:

Վտանգը անցած էր: Չորս ընկերները, բաւական հանգստանալէ եւ կազդուուելէ ետք, կէսօրուան մօտ տուն վերադարձան:

Սեդրակ, որ մանկութենէն ճշմարտախօս էր, թրջուած հագուստները փոխելէ եւ լոզանք առնելէ ետք, մօրը մանրամասնօրէն պատմեց բակի ծիծեռնակներու բոյնին պատահարը եւ իր եւ ընկերներուն արկածախնդրական շրջագայութիւնը մօտակայ պարտէզները եւ Քուէյք գետի ափերը, ծանրանալով Զօհրապին գետ իյնալուն հետեւանքով Գէորգին ջուրը նետուելու եւ երկուքին խեղդուելէ ազատելու իր յանդուգն արարքին մասին, փառք տալով Աստուծոյ, որ կրցաւ ազատել իր ընկերները ստոյգ մահէ, ապա երդուեցաւ առանց ծնողքին հրամանին այդպիսի տեղեր չերթալ:

Մայրը յուզումով լսեց Սեդրակին խոստովանութիւնը եւ ըսաւ.

— Տղա՛ս, ծիծեռնակներուն երէկուան գործած բարիքդ այսօր քու եւ ընկերներուդ կեանքը փրկեց: Աշխատի՛ր միշտ բարիք ընել, եւ ինչպէս առածը կ'ըսէ՝ «Բարիք ըրէ՛, ծովը թափէ՛, օր մը դիմացդ կ'ելլէ»:



«Նոր Դար» գրական ամսագրի խմբագիր, գրականագէտ Արգաթ Ափինեանի հետ 2002 թուականին՝ Երեւան

## ԲԱՐԻՔ ՑԱՆՈՂԸ ԲԱՐԻՔ ԿԸ ՀՆՁԷ

Որպէս «Հորիզոն» շաբաթաթերթի թղթակից, տաղանդաւոր եւ արուեստագէտ երգիչ Գրիգոր Ճանկէօգեանէն հրաւէր ստացանք՝ գտնուելու Կիրակի, 9 Մայիս 2004, երեկոյեան ժամը 7:00-ին, Մարքամ թատերասրահին մէջ տեղի ունենալիք երաժշտական երեկոյին, որ այդ տարին կը զուգադիպէր «Մայրերու Օր»-ուան տօնին:

Կնոջս հետ ժամանակէն առաջ, սրահին դռները չբացուած, արդէն հասած էինք հանդիսավայր, եւ դռներու բացումով մուտք գործեցինք թատերասրահ եւ նստանք մեզի յատկացուած աթոռներուն վրայ:

Համերգը հեզասահ անցաւ: Հայ երգի ակունքներէն մեր ծարաւը յագեցուցինք: Հայաշունչ մթնոլորտով խանդավառուեցանք՝ ունկընդրելով Գրիգոր Ճանկէօգեանի եւ Լոս Անճելըսէն հրաւիրուած երգչուհի Շողիկ Գուշաքճեանի սքանչելի երգերը եւ նշանաւոր դաշնակահար եւ յօրինող Արմէն Ահարոնեանի դաշնամուրով նուագուած եղանակները:

Ձեռնարկի սկսելէն կէս ժամ յետոյ, թափուր մնացած աջ կողմի աթոռս գրաւեց մեզի ծանօթ օրիորդ մը, որ կը ներկայացնէր հայկական կազմակերպութիւն մը: Յայտագրի առաջին մասի դադարին, կրինս հարցուց օրիորդին ուշ գալուն պատճառը: Օրիորդը պատասխանեց, որ ինք շատոնց ճամբայ ելած է հանրային փոխադրակառքով: Կէս ժամէն աւելի սպասած է երկրորդ փոխադրակառքին գալուն: Օդը ցուրտ ըլլալուն՝ շատ մսած է:

Դադարի վերջաւորութեան, երբ սրահ վերադառնալով տեղս գրաւեցի, կրինս պատմեց օրիորդին ունեցած դժուարութիւնները սրահ հասնելու համար եւ ինձմէ խնդրեց, որ համերգի վերջաւորութեան զինք տուն հասցնենք: Կրինս շատ բարեսէր ըլլալով՝ կարելի էր մերժել իր խնդրանքը, քանի որ իմ ալ սրտիս կը խօսէր բարեգործութիւն ընելը:

Համերգը վերջացաւ: Կրինս օրիորդին յայտնեց, որ մենք սիրով զինք տուն պիտի հասցնենք: Դժկամութեամբ ընդունեց: Վեհանճնութիւնը թոյլ չէր տար, որ ուրիշներ իրեն համար զոհողութիւն ընեն: Բայց երեւակայելով տուն վերադառնալու տառապանքը, ուշ գիշերին, հանրային փոխադրակառքով, ընդունեց:

Գիշերուան շուրջ ժամը 11:00-ին արդէն իր բնակած տան դրան մօտ էինք: Շնորհակալութիւն յայտնեց եւ շէնք բարձրացաւ: Ես եւ կրինս մեր ճամբան շարունակեցինք Շէփերտի վրայ: Ուարտըն փողոցը

անցանք եւ չեմ գիտեր ինչպէ՞ս եւ ինչո՞ւ, գօրաւոր հարուածով զարնուեցայ մայթի պատնէշին: Ինքնաշարժս կաղաց՝ դէպի աջ քսուելով: Անճոռնի ձայներ լսուեցան աջ կողմի անիւէն: Բարեբախտաբար, աջիս ինքնաշարժ ծախող հաստատութեան լուսաւոր մուտքը բաց ըլլալով՝ կրցայ նստ մտնել:

Աջ կողմի անիւը իջած էր: Ուշ գիշեր: Հեռաձայնս քովս չէր, որպէսզի CAA հեռաձայնեմ: Կը մտածեմ, ես ինչպէ՞ս պիտի կարողանամ պայթած անիւը քակել եւ զայն պահեստի անիւով փոխարինել: Փորձառութիւն չունիմ նման գործ մը կատարելու եւ միեւնոյն ատեն պէտք եղած ուժն ալ չունիմ: Բայց փախուստ չկայ, մինչեւ առաւօտ ալ հոն մնանք, անիւը պիտի փոխուի, որպէսզի տուն երթանք:

Ստիպուած, ուժերս հաւաքելով, գործի սկսայ: Դժուարութեամբ իր տեղէն հանեցի պահեստի անիւը եւ սկսայ պայթած անիւնին պտուտակները քակել: Վեր բարձրացնող գործիքը նախ սխալ տեղ դրի, որպէսզի անիւը վեր բարձրացնելով կարենամ անիւը դուրս հանել եւ պահեստի անիւը դնել, յետոյ տրամաբանութիւնս աշխատցրնելով՝ ճիշդ տեղը գտայ եւ սկսայ բարձրացնել, սակայն մարմինս սկսած էր գալարուել յոգնութեան ցաւերով:

Կինս քովէս հեռացած էր եւ Շէփըրտի վրայ օգնութիւն կը փրնտուէր: Թաքսի մը կեցուցած է, սակայն ան օգտակար չէ եղած: Անցորդէ մը օգնութիւն խնդրած է, ան պատասխանած է, որ ինք անիւ փոխել չի գիտեր: Նոյն վերաբերումը նաեւ ուրիշներ ունեցած են:

Յուսահատ, կինս կը պատմէ, որ «ձեռքերս բացի, ազօթեցի Աստուծոյ եւ Յիսուսի, որպէսզի իր հրեշտակներուն միջոցաւ մեզի օգնութեան հասնին եւ մեզ փրկեն կէս գիշերուան այս փորձանքէն»:

Կինս քովս եկաւ արտասուալից աչքերով եւ ցաւով դիտեց իմ մարմնական եւ հոգեկան տառապանքս: Եւ, ո՛վ աստուածային հրաշք, երկու երիտասարդներ մօտեցան մեզի եւ առաջարկեցին իրենց օգնութիւնը՝ յայտնելով, որ իրենք դիմացի շէնքը կը բնակին եւ տեսած են իմ ունեցած դժուարութիւններս:

Երկու աստուածառաք երիտասարդները անմիջապէս գործի սկըսելով՝ պահեստի անիւը տեղաւորեցին հանուած անիւին տեղ եւ նոյնիսկ ինծի չձգեցին, որ օթոյին մէջ դնեմ պայթած անիւը:

Հարցումիս, թէ իրենք արդեօ՞ք իրանցի են, պատասխանեցին, որ իրենք փաքիստանցի են: Մեր ազգութիւնը հարցուցին իրենք ալ իրենց կարգին, պատասխանեցի.

— Մենք Հայ ենք:

Տղաքը իրենց գործը վերջացած սեպելով՝ մեզի գիշեր բարի մաղթելով ուզեցին հեռանալ:

— Վայրկեան մը,— ըսի, եւ սրտագին շնորհակալութիւն յայտնելէ ետք, որոշ գումար մը առաջարկեցի՝ ըսելով,— սուրճի գումար մը սեպեցէք:

— Անկարելի է, որ մենք նիւթական հատուցում ստանանք մեր կատարած բարիքին համար: Աստուած կը տեսնէ եւ Ինք մեզի կը հատուցանէ բարիքներով,— ըսին եւ հեռացան:

Այս պատահարը հայ ընթերցողներուն ուզեցի տեղեկացնել, ընդգծելով այն իրողութիւնը, որ «բարիք ցանողը, բարիք կը հնձէ», եւ հաւատալով, որ տակաւին այս կեանքին մէջ գոյութիւն ունին իրաւ մարդիկ, բարեգործ մարդիկ, Աստուծոյ պատգամին հետեւող մարդիկ, առանց մորթային, ցեղային եւ կրօնական խտրութեան:



Զախէն աջ՝ Արցախի Հանրապետութեան նախագահ Արկաղի Ղուկասեան,  
Գրիգոր Հոթոյեան եւ վարչապետ Լէոնարտ Պետրոսեան

## ՄԵՆՔ ԱԼ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑԱՆՔ

Թուրքիոյ հայաշինջ քաղաքականութեան հետեւանքով, 1915-ին գործադրուած Հայոց Մեծ Եղեռնէն ետք ծնած առաջին սերունդը եւս մանկութիւն չունեցաւ, ինչպէս մանկութիւն չունեցան Հայոց Մեծ Եղեռնէն իրենց ծնողները կորսնցուցած եւ արաբացած մանուկները:

Մանկութիւն չունեցան, որովհետեւ իրենց ծնողները բռնաբաղ-թի, տարագրութեան եւ աքսորի ճամբաներուն վրայ ցմրուր խմեցին չտեսնուած չարչարանքներ եւ տառապանքներ, իրենց բնականայրերէն մինչեւ սուրիական անապատները, ենթարկուելով ջարդի, թալանի, բռնութիւններու, բռնաբարումներու եւ սպանութիւններու: Տարագրուածներէն բեկորներ, հրաշքով եւ անձնական նախաձեռնութիւններով մահուան ճիրաններէն փրկուելով, Սուրիոյ, Լիբանանի եւ արաբական այլ երկիրներու մէջ ապաստան գտնելով կազմեցին ընտանիք եւ ունեցան զաւակներ, որոնք իրենց ծնողներու նիւթական անբաւարար պայմաններուն հետեւանքով ապրեցան թշուառութեան եւ նիւթական ծանր մթնոլորտի մէջ, որոնց զաւակները մանկութիւն չունեցան՝ զրկուած ըլլալով մանկական բոլոր տեսակի ապրելակերպէ եւ հոգածութենէ:

Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն աքսորուած եւ վերապրած մեր ծնողները, որոնք մեծամասնութեամբ արհեստ չունեցող եւ արաբական երկիրներու լեզուին՝ արաբերէնի անծանօթ, մեծ դժուարութեամբ կրնային իրենց ընտանիքներուն ապրուստը հոգալ եւ իրենց զաւակները վճարովի հայկական դպրոց ղրկել:

Ճիշդ է, Եղեռնէն առաջ հայրենիքի մէջ ծնած սերունդներէն բախտաւորներ, որոնք իրենց ծնողներուն, հարազատներուն եւ ազգականներուն սպանութենէն ետք կարգ մը թուրքերու, քիւրտերու եւ արաբներու կողմէ մահանալէ փրկուելով կրցան ողջ մնալ, եւ ապագային, պատերազմի աւարտին, հայկական կազմակերպութիւններու կողմէ ամէն մէկ որբի ազատագրումին մէկ ոսկի տալով՝ գանոնք տեղաւորեցին որբանոցներու մէջ, որոնք իսկապէս մանկութիւն չունեցան, առանց հօր-մօր հոգածութեան ապրելով եւ մեծնալով:

Սակայն, ինչպէս ըսի, դիւրին չեղաւ Հայոց Յեղասպանութեան նախճիրներէն ազատած եւ իրենց ապաստանած երկիրներուն մէջ ամուսնացած բազմաթիւ ընտանիքներու զաւակներուն մանկութիւնը, որոնք մանկութիւն չունեցան, որովհետեւ իրենց ծնողները կարողու-



Թիւն չունէին իրենց գաւազներուն բարօր եւ մանուկի մը համար էական մանկութիւն մը չնորհել:

Հայր-մայր ունեցող եւ մանկութիւն չունեցող հազարաւոր մանուկներու կարգին, իմ գիտակցական կեանքիս ընթացքին միշտ անիծած եմ մեր ծնողները իրենց հայրենիքէն աքսորած եւ մեծ մասով բնաջնջած օսմանեան թուրք կառավարութիւնը եւ անոր քաջալերութեամբ շուրջ երկու միլիոն հայ ջարդած թուրք, քիւրտ եւ չէչէն գազաններու վայրագութիւնները, որոնք պատճառ դարձան Եղեռնէն ճողոպրած հայ սերունդներուն եւ անոնց գաւազներուն մանկութիւն չունեցած մեծնալու:

Եւ այդ պատճառով, ամուսնական կեանքիս ընթացքին միշտ աշխատած եմ իմ գաւազներուս, կարելիութեանս սահմաններուն մէջ, մեծցնել մանկական գուրգուրանքով եւ մանուկներու համար անհրաժեշտ մթնոլորտի մէջ:

Հայոց Մեծ Եղեռնէն հրաշքով ազատած հայրս՝ Ղազար (Խարզօ) Հոթոյեան, Սասնոյ Տալւորիկ գաւառի Սպաղանք գիւղէն, Սասունէն Կիլիկիա գալով, որպէս ջաղացպան աշխատած է սասունցիներու մօտ Քիլիսի շրջանին մէջ՝ 22 տարեկանին, Առաջին Աշխարհամարտէն առաջ՝ 1914-ին:

Եղեռնի շրջանին՝ 1917-ին, Քիլիսի մէջ կ'ամուսնանայ Մալաթիոյ շրջանի Պեհեսնի քաղաքէն Մարիամ Գուլումճեանին հետ, որուն հայրը, մայրը, եղբայրները եւ հարազատները սպաննուած էին թուրքերու կողմէ:

1918-ին Քիլիսի մէջ կը ծնի քոյրս՝ Սիրանուշը, 1920-ին՝ Քիլիսի մէջ կը ծնի եղբայրս՝ Զաքարը, որ կանուխ կը մեռնի, 1922-ին՝ Ազէզի մէջ (Սուրիա) կը ծնի եղբայրս՝ Յարութիւնը, 1925-ին՝ կը ծնի եղբայրս՝ Գրիգորը, որ կանուխ կը մեռնի, 1927-ին՝ Հալէպի մէջ կը ծնի Գրիգորը (ես), 1929-ին՝ Հալէպի մէջ կը ծնի եղբայրս՝ Յովհաննէսը եւ 1932-ին՝ Հալէպի մէջ կը ծնի կրտսեր քոյրս՝ Արշալոյսը:

Ահա այսպիսի ընտանիքի մը հոգը կախուած կը մնայ Սասնոյ Սպաղանք գիւղէն գիւղացի հօր վիզէն, որ տասնեակ մը արհեստներ եւ գործեր կը փորձէ՝ ընտանիքին ապրուստը ապահովելու եւ գաւազներուն տանելի մանկութիւն ստեղծելու համար:

1938-ին մեր մայրը կը մահանայ, 22 տարուայ ամուսնական շրջանէ մը ետք, 38 տարեկանին, մեզ ձգելով որբ եւ անխնամ, բժիշկներու եւ դեղերու ծախսերուն հասնելու նիւթական միջոցներ չունենալու պատճառով:

Այդ շրջանին մենք կը բնակէինք Հալէպ, Նոր Գիւղ հայկական շրջանի չորրորդ թաղամասին մէջ, արաբ քրիստոնեայ ընտանիքի մը պատկանող բակով տունի մը մէկ սենեակնոց տունին մէջ: Տանտէրին կիներ կուզ էր, սակայն շատ լաւ հոգ կը տանէր իր ընտանիքին եւ քիչ մըն ալ մեզի, մինչեւ հօրս մեզի հոգատար խորթ մայր մը բերելը:

1940-ին, հայրս եւ քեռայրս բանտէն փախած Եօթնան Յակոբին մեր տան մէջ ապաստան-անկողին տրամադրած ըլլալուն համար՝ վեցական ամիս բանտարկութեան դատապարտուեցան: Եւ որպէսզի չբանտարկուին, ոստիկանութեան հետապնդումներէն փախան եւ Սուրբոյ Գամիշլի գիւղաքաղաքը ապաստանեցան, ուր բաւական մեծ թիւով սասունցիներ կ'ապրէին:

Քեռայրս՝ Արշակը, փռապան (հացթուխ) ըլլալով, որպէս եփող գործ կը գտնէ սասունցի Արուշին փուռին մէջ, եւ անմիջապէս լուր կը դրկէ Հալէպ՝ քրոջս, որպէսզի Գամիշլի գայ իր առջինեկ մանչուն հետ:

1940 Յունիս 24-ին ես եւ քոյրս՝ Սիրանուշը, մարդատար ինքնաշարժով ճամբայ ելանք դէպի Գամիշլի, անցնելով ժողովուրդի հաւաքական գերեզմանը հանդիսացող Ռագգայէն, Ռաս-էլ-Այնէն, Տէր Զօրէն եւ սուրիական անապատներէն, ուր մեր մեքենան կը յառաջանար անապատային փոշիներու ընդմէջէն մինչեւ Գամիշլի, ուր մեզ դիմաւորեցին քեռայրս ու հայրս, զիս ազատելով գրկիս մէջ երբեմն արթուն, երբեմն քնացած փոքրիկ Արշակէն:

Մեր Գամիշլի հասնելէն երկու շաբաթ ետք, Գամիշլի եկան նաեւ խորթ մայրս, մեծ եղբայրս՝ Յարութիւնը, կրտսեր եղբայրս՝ Յովհաննէսը եւ կրտսեր քոյրս՝ Արշալոյսը:

Մեծ եղբայրս Հալէպի մէջ քանի մը տարի դերձակութիւն ըրած ըլլալով, սորված էր ժաֆէթ ու տաբատ կարել: Հայրս Ամերիկայէն ներածուած գործածուած ժաֆէթներ գնելով տուն բերաւ, ես եւ փոքր եղբայրս քակելով զբաղեցանք, իսկ մեծ եղբայրս ներսը դուրս դարձնելով՝ կարելու սկսաւ: Իսկ հայրս պազարի օրերուն պաւթա բացած՝ գանոնք կը ծախէր:

Սակայն այդ գործը մեր ընտանիքին ծախսերուն չէր բաւեր: Ստիպուած՝ ես եւ կրտսեր եղբայրս սկսանք քահֆա (կարկանդակ) ծախել, շրջագայելով Գամիշլիի փողոցները, գլուխնիս վրայ կրելով քահֆայով լեցուն տախտակէ խոշոր ափսէներ, թաղ-թաղ պոռալով՝ քահֆէա՛թ...: Օր մը մեծ եղբօրս ոտքը կարիճը խայթեց դուրսը բացօթեայ քնացած ատեն, պատճառ դառնալով, որ երկար ատեն չկարենար աշխատիլ՝ հօրս կողմէ կարիճի խայթած տեղը այրելուն հետեւանքով:

Ահա քեզի մանկութիւն: Գամիշլիի մէջ ձերբակալուելէ եւ բանտարկուելէ ետք Հալէպ վերադարձանք, եւ հաց ու այլ ուտելիքներ գնելու դրամ չունենալով, Գամիշլիէն մեր հետ բերած ձաւարը խորթ մայրս առանց իւղի կ'եփէր ամէն օր, մինչեւ լրանայ 100 քիլօնոց պարկը: Պատերազմի տարիներ էին, եւ հաց ունենալը դիւրին չէր:

Հայրս մոլի սիկառէթ ծխող էր: Կը պատահէր, որ սիկառէթ գնելու դրամ չէր ունենար, անգործութեան եւ գործի ձախողութեան շրջաններուն: Իրեն համար շատ դժուար էր առանց ծխախոտի մնալ, ստիպուած՝ եղբայրներուս հետ կը շրջագայէինք Նոր Գիւղի փողոցները եւ գետնէն կը հաւաքէինք սիկառէթներու ակելցուքները: Հայրս այդ ա-

ւելցուքներուն թուղթերը կը պատուէր եւ ծխախոտները իր ծխախոտի տուփին մէջ կը լեցնէր եւ ծխախոտ փաթթելու յատուկ թուղթերով կը փաթթէր ու կը ծխէր...:

Մանկապարտէզէն սկսեալ դպրոցական պայուսակ չեմ ունեցած: Դպրոց կ'երթայի մօրս կողմէ կարուած պայուսակով, շապիկով եւ տաբատով: Մատիտ, գրիչ, մեկան գնելու կարողութիւն չունէի եւ յաճախ կ'օգտուէի ունեւոր ընկերներու ակելցուքներէն:

Մանկութեանս երբեք կօշիկ չեմ հագած: Ամառ-ձմեռ սանտալով ստիպուած կը գոհանայի: Այդ նշանաւոր սանտալը եւ մօրս կարած շապիկը եւ տաբատը յիշեցնող ջուրի նկար մը ունիմ, որպէս յիշատակ երիտասարդ տարիքին մահացած ընկերոջս՝ Երուանդ Յովհաննէսեանին հետ, նկարուած Հալէպի էֆէնտի պաղպաղակի խանութին դիմացի թաղի մուտքին, դէպի Սալիպէ գացող ճամբուն սկիզբը, ուր հայ նկարիչներ իրենց ջուրով նկարող գործիքները հոն կը հաստատէին եւ ջրանկար քաշելով իրենց օրապահիկը կ'ապահովէին:

Խաղալիկ երբեք չեմ ունեցած: Մեր խաղերը կ'ըլլային փողոցներուն եւ դաշտերուն մէջ: Փողոցներուն մէջ կը խաղայինք չալիք, պագտանպան, փիթ, գլխարկ փախցնել եւայլն: Իսկ դաշտերուն վրայ լաթով շինուած գնդակով հագիւ կրնայինք կողին հասնիլ: Իսկ նոր տարուան նուէր՝ երբեք չեմ ստացած: Միայն կը յիշեմ Սահակեան վարժարանի կիրակնօրեայ դպրոցի ամանօրեայ հանդէսին աշակերտներուն բաժնուած նարինջէն հատ մը ունենալս:

Երբեք չեմ մոռցած մանկութեանս շրջանին դրամ շահելու եւ ընտանիքիս ապրուստին օգնելու հետեւեալ միջոցառումը:

Հալէպի մէջ եկեղեցական տաղաւարներուն յաջորդ օրուան մեռելոցի օրուան առթիւ, մեծ թիւով ժողովուրդ, շարան-շարան, Քուէյք գետի տախտակէ կամուրջին վրայէն անցնելով կ'այցելէր հայկական գերեզմանատուները, հոն գտնուող եկեղեցականներուն կողմէ օրհնել տալու իր սիրելիներուն գերեզմանները: Գերեզմանները օրհնել տալու բոլոր փափաքողներուն գոհացում կը տրուէր, եւ յաճախ տեղի կ'ունենար քաջքշուք՝ երկու, երեք կողմէ, որոնք քահանան ձեռքէն կամ վերարկուէն դէպի իրենց կողմը կը քաշէին, մէկը միւսէն առաջ օրհնել տալու համար իր սիրելիին գերեզմանը:

Քահանաներու կողմէ գերեզմաններու օրհնութեան կը մասնակցէր խնկարկող մը՝ մանուկ կամ պատանի, այդ նպատակով պատրաստուած խնկամաններով, գերեզմանի օրհնութեան ընթացքին խնկարկելով՝ հոգեհանգստեան միջոցով կը ստեղծէր: Այդ խնկամանները շինուած էին մետաղէ ամանները երկաթէ թելերով ամրացնելով եւ որպէս բռնիչ գործածելով երեք թելերու վերնամասը, իսկ ամանին մէջի ածուխով կրակը միշտ նորոգուած կ'ըլլար, պատրաստ՝ խնկարկելու: Գերեզմանի օրհնութենէն ետք, քահանային տրուած նուէրին հետ նաեւ խնկարկող տղուն կը տրուէր առաւելագոյն 25 դրուշ:

Մենք ալ, տեսնելով շահաբեր այս գործը, մեր հանգուցեալ մօր գերեզմանը օրհնել տալէ վերջ, որոշեցինք այդպիսի խնկամաններ չինել եւ յաջորդ մեռելոցին գործի սկսիլ: Մեծ եղբայրս ածուխի եւ խոունկի պաշարներով կը հետեւէր ինծի եւ Յովհաննէս եղբօրս: Ամէն մէկս քահանայի մը հետ կը մասնակցէինք գերեզմաններու օրհնութեան:

Գերեզմանօրհնէքը կը տեւէր մինչեւ կէսօրէ ետք ժամը 2-3 եւ ժողովուրդը կամաց-կամաց տուն կը վերադառնար, իսկ մենք՝ երեք եղբայր, տուն գալով կը հաշուէինք օրուան հասոյթը, թեթեւցնելով հօրս ուսերուն ծանրացող ապրուստի բեռը:

Երբ քիչ մը մեծցանք, մեր ուսանողական շրջանին, արձակուրդի օրերուն, հերթով ես եւ եղբայրներս հօրս հետ ամերիկեան գործածուած եւ իման Հաճի Մուսայի հայ պալիւանի գործատէրերուն կողմէ նորոգուած ժաֆէթներ կը ծախէինք Հալէպի Պապ-էլ-Ֆարաճի եւ ներսի շուկային մէջ: Ժաֆէթները մեր ձախ ուսերուն վրայ հանգչեցընելով՝ մեր կարողութեան համաձայն, թաղ-թաղ կը պտըտէինք եւ կը փորձէինք ժաֆէթները ծախել որոշ շահով:

Երբ յաջող օր մը բոլորէինք՝ քանի մը ժաֆէթ ծախած ըլլալով, հայրս խորոված կը կերցնէր ինծի, ներսի շուկային մէջ գտնուող խորովածագործներուն ոչխարի համեղ միսերէն:

Հօրս հետ ժաֆէթ ծախելու համար ձախ ուսիս վրայ 5-6 ժաֆէթներ ժամերով կրելով, ժամանակի ընթացքին ձախ ուսս աջէն աւելի քիչ մը ցած մնաց եւ այդ կը զգամ մինչեւ այսօր:

Մանկութիւն չունեցած ըլլալս կը զգայի նաեւ ուսանողութեան շրջանին, երբ դպրոցէն զիս տուն կը ղրկէին տարեթոշակս բերելու համար: Բարեբախտաբար, այդ հարցը լուծուեցաւ տանըմարքացի (դանիացի) հայասէր Միս Բարէն Եփփէ հաստատութեան սան ընդունուելով, ինչպէս նաեւ յետագային՝ Սասնոյ Հայրենակցական Միութեան:

Հայոց Մեծ Եղեռնին հետեւանքով՝ ծնողազուրկ մանուկները մանկութիւն չունեցան, իսկ մենք՝ Եղեռնէն ետք առաջին սերունդի մանուկներս, մենք ալ դժբախտաբար մեր կարգին մանկութիւն չունեցանք:



## ՓՐԿԱՐԱՐ ԽԱՉՐ

Տիկ. Սալուա Թազան կը բնակէր Հալէպի Ազիզիէ Թաղամասի հրաշալի եւ ընդարձակ տան մը մէջ, շրջապատուած յատուկ խոհարարով եւ սպասուհիով, սակայն ինքզինք միշտ մինակ եւ տխուր կը զգար, ինքնաշարժի արկածի մը հետեւանքով կորսնցուցած ըլլալով ամուսինը եւ մանչ զաւակը:

Թազան ընտանիքը դար մը առաջ եկած էր Սասունէն եւ հաստատուած պատմական Հալէպ քաղաքը, ուր արդէն իսկ գոյութիւն ունէր հայկական դաղութ մը:

Պարոն Թոֆիք Թազան, շնորհիւ իր առեւտրական ձեռներէցութեան, շօշափելի հարստութեան տիրացած էր: Բարեսէր եւ կրօնասէր ընտանիք մը ըլլալով, մեծ գումարներ նուիրած էին ազգային հաստատութիւններուն եւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ բարեգործութեան:

Տեղացի արաբները՝ քրիստոնեայ եւ իսլամ, հայոց Մեծ Եղենէն առաջ Հալէպ հաստատուած հայերը կը կոչէին «էրմէն դատիմ», այսինքն՝ «հին հայեր», որոնցմէ շատեր, որոնք 1915-էն շատ առաջ եկած էին, ընդհանրապէս արաբ-քրիստոնէական անուն կը կրէին եւ դարձած էին արաբախօս:

Տիկին Սալուա, «էրմէն դատիմ» ըլլալով հանդերձ, բաւական լաւ հայերէն կը խօսէր՝ հայախօս բարեկամուհիներուն հետ յարաբերելով եւ միշտ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ պատարագներուն ներկայ գտնուելով:

Մահացած ամուսնոյն ձգած հարստութիւնը եւ ճոխութիւնը իրեն ուրախութիւն չէին բերած: Ան միշտ կ'ողբար իր սիրելիներուն կորուստը եւ իր մխիթարութիւնը կը փորձէր գտնել Աստուածաշունչի ընթերցումով եւ եկեղեցի յաճախելով, գրեթէ ամէն օր ներկայ գլուխուկով երեկոներու ժամերգութիւններուն եւ տօնական ու Կիրակի օրերու պատարագներուն:

Շաբաթ երեկոյ մը, ժամերգութեան աւարտին, Տիկին Սալուա շարունակեց մնալ եկեղեցոյ խորհրդաւոր մթնոլորտին մէջ, արցունքոտ աչքերով եւ լուեկայն աղօթքով ուժ եւ կարողութիւն հայցեց Աստուծոմէ՝ դիմանալու համար իր ընտանիքին դժբախտութեան հետեւանքներուն:

Թէեւ Ս. Քառասնից Մանկանց եկեղեցոյ բոլոր սրբանկարները քանիցս դիտած էր, սակայն կրկին հաւատացեալի մօտեցումով սկսաւ դիտել սրբանկարները, եւ երկար մնաց նկարչական արուեստի գո-

Հարներէն՝ դժոխքի տեսարանին առջեւ, ուր մեղաւորները կը տառապէին դժոխքի կրակներէն:

Դժոխքի տեսարանէն տարուած, ականջին Հասաւ լացի ձայն մը: Քալեց ձայնին ուղղութեամբ եւ տեսաւ շուրջ տասը տարեկան աղջընակ մը, որ, ծուկի եկած Մարիամ Աստուածածնի նկարին առջեւ, սրտայոյզ լացով կ'աղօթէր:

Տիկին Սալուա կը մօտենայ աղջնակին եւ յուզումով կը հարցնէ անոր լացին պատճառը եւ անոր ով ըլլալը:

— Անունս Սօսի նշանեան է, եւ Մկրտիչ Աւագ Քհնյ. Մուրատեանի թելադրանքով եկած եմ աղօթելու, որպէսզի Աստուած կարգադրութիւն մը ընէ ապրուստս հոգալու համար, որովհետեւ հայրս եւ մայրս մեռած են եւ այն տունը, որ կը բնակէինք, ստիպուած եմ ձգել, անկարող ըլլալով անոր վարձքը վճարելու: Տէր Մկրտիչը, որ մեր տան երէցն է, տեղեակ է իմ կացութենէս եւ խոստացաւ զիս Սուրիահայ Օգնութեան Խաչի պատասպարանը դնելու համար կարգադրութիւններ ընել: Եկած եմ աղօթելու, որպէսզի պատասպարան ընդունուիմ եւ կարենամ ուսումս շարունակել:

Տիկին Սալուա խորապէս զգացուած ըսաւ.

— Նայէ՛ աղուորս, Տէր Հայրը իրաւունք ունի: Աստուած կը լսէ որբ մանուկներուն աղօթքը եւ անպայման օգնութիւն կը հասցնէ: Ես վաղը կը հանդիպիմ Տէր Մկրտիչին եւ կը խօսիմ քու ապագայիդ մասին: Վաղը առաւօտ դուն ալ եկեղեցի եկուր, որպէսզի կարգադրութիւն մը ընենք:

Տէր Մկրտիչ, որ սասունցիներուն երէցն էր եւ ծանօթ Թահան ընտանիքին, սիրով եւ ազնուութեամբ ընդունեց Տիկին Սալուան ու բացատրեց, թէ աղջնակը շնորհքով եւ պատուաւոր ընտանիքի զաւակ է եւ այժմ՝ ամբողջովին լքուած ու անտէր:

— Ուրեմն,— ըսաւ Տիկին Սալուա,— քանի որ այս աղջնակը ազգականներ, բարեկամներ եւ ապրելու միջոցներ չունի, կ'որդեգրեմ զինք եւ հետս կ'ապրի այսուհետեւ: Զինք դպրոց կը ղրկեմ, պէտք է սորվի ամէն ինչ, որ աղջիկ մը սորվելու է ապագային լաւ տանտիկին մը եւ լաւ մայր մը կարենալ ըլլալու կամ հացը դիւրաւ ճարելու համար:

Բարեսիրտ Տիկին Սալուան որբ աղջնակը հետը տարաւ ու յարգեց իր խոստումը: Աղջնակը սկսաւ յաճախել ազգային Հայկազեան վարժարանի աղջկանց բաժինը եւ որպէս երրորդ դասարանի աշակերտ՝ միշտ դասարանի լաւագոյն աշարկերտներու շարքին կ'ըլլար:

Նախակրթարանը աւարտելէ ետք, Սօսի իր ուսումը շարունակեց Հալէպի Քարէն Եփփէ ճեմարանին մէջ:

Տարիներ կ'անցնին, Սօսին կ'աւարտէ ճեմարանը: Սակայն, իր չար բախտէն, բարերարուհին կը հիւանդանայ եւ անկողին կ'իյնայ:

Սօսին զոհաբերութեամբ եւ նուիրումով կը խնամէ տիկինը մինչեւ անոր վերջին շունչը:

Տիկին Սալուա մեռնելէ առաջ Սօսին իր մօտ կը կանչէ եւ կ'ըսէ.

— Սիրելի՛ աղջիկս, քեզ որդեգրելէս ի վեր տասը տարիներ անցած են: Դուն հաւատարիմ եւ պարկեշտ աղջիկ մը եղար եւ շատ ուրախ եմ, որ շուտով պիտի ամուսնանաս երիտասարդ հայորդիի մը՝ Հրաչին հետ, որ ազնիւ եւ աշխատասէր արհեստաւոր մըն է, եւ ինքնաշարժներ նորոգող իր վարպետին վկայութեամբ՝ նաեւ լաւ արհեստաւոր մըն է:

Երբ Տիկին Սալուա մեռաւ, ձեռքին մէջ բռնած էր խաչ մը, գոր իր կենդանութեան միշտ սնարին վրայ կը կախէր եւ շատ կը սիրէր: Թաղումը աւարտելէ ետք, բոլոր ժառանգորդները հաւաքուեցան եւ փաստաբանի ներկայութեան բացին կտակը: Տիկինը իր որբուկին կը թողուր 15.000 սուրիական ոսկի եւ անկէ զատ կտակին մէջ կը կարգացուէր.

«Սօսին հարազատ աղջկայ մը չափ սիրելի է ինծի, հետեւաբար կ'ուզեմ, որ այդ գումարէն զատ իրաւասութիւնը ունենայ թանկարժէք առարկաներէս իրեն հաճոյ թուող որեւէ մէկը ընտրելու եւ պահելու որպէս յիշատակ»:

Ժառանգորդները այս կտակը լսելով շատ կը նեղուին: Արդէն 15.000 սուրիական ոսկի գումարը շատ մեծ բան կ'երեւէր, հիմա կը վախնային, որ որբուհին առիթէն օգտուելով՝ շատ թանկարժէք գոհարեղէն մը կ'առնէ: Բայց, մինչ խոհարարուհին եւ միւս ծառաները խորհուրդ կու տային մարգարտեայ վզնոցը առնել, Սօսին պատասխանեց.

— Ո՛չ, անոնք չեմ ուզեր: Արդէն տիկինը պէտք եղածէն աւելի կտակած է ինծի: Չեմ ուզեր ժառանգորդները իրաւագրկել: Բարերարութիւն սիրած ամենափոքր առարկան իբր յիշատակ աւելի անգին է ինծի համար, քան ուրիշ որեւէ թանկարժէք առարկայ: Տեսէ՛ք, շարունակեց ան,— այդ պղինձէ խաչը ամէն բանէ աւելի կը սիրեմ, քանի որ տիկինը մեռած ատեն զայն ձեռքին մէջ բռնած էր եւ միշտ կը կախէր իր սնարին պատին:

Ժառանգորդները ուրախացան այս ընտրութենէն, եւ վախնալով, որ թերեւս աղջիկը իր ընտրութենէն հրաժարի, թուղթ մը բերին ու վրան գրեցին.

«Բարերարութիւն որպէս յիշատակ ըլլալով ընտրած եմ խաչ մը, ատիկա կը պատկանի ինծի, հետեւաբար երբե՛ք ուրիշ բանի պահանջ պիտի չներկայացնեմ»:

Այս համաձայնութիւնը ստորագրել տուին Սօսին:

Շատ չանցած, Սօսին ամուսնացաւ մեքենագէտ Հրաչին հետ: Լաւ կ'ապրէին, մինչեւ որ օր մը ամուսինը գործին մէջ ծանրօրէն վիրաւորուեցաւ: Նրկար ատեն հիւանդութիւն քաշելէ ետք երբ ոտքի ե-

լաւ, արդէն իսկ աջ թեւը անգործածելի դարձած էր եւ չէր կրնար իր արհեստը շարունակել: Երկարատեւ հիւանդութեան հետեւանքով, Սօսին ստիպուեցաւ իրենց խնայողութիւնները սպառել եւ կը մտածէին իրենց օրապահիկին համար միջոցներ որոնել:

Օր մը, այլեւս յուսահատած, Սօսին ամուսինը՝ Հրաչը ըսաւ.

— Կը տեսնես, հաւատարիմ կինս, թէ այլեւս պիտի չկարենամ արհեստս շարունակել, բայց կրնամ թեթեւ գործով մը զբաղիլ: Նոր Գիւղին մէջ նպարավաճառի խանութ մը բանանք, եթէ հանգուցեալ տիկնոջ կտակով քեզի թողուած դրամը ձեռք անցընենք:

Այս առաջարկը հաւանական թուեցաւ Սօսին: Բայց փաստաբանը յայտնեց, որ տիկինը իր կտակին մէջ չեղտած էր, թէ դրամը պիտի վճարուէր երբ Սօսին քսանհինգ տարեկան ըլլար:

Այս լսելով, տէր եւ տիկին շատ նեղուեցան: Հրաչ երկար մտածելէ վերջ ըսաւ.

— Մինչ այդ սովամահ ըլլալու չենք, թերեւս մեզի հարկ եղած գումարը կրնանք փոխ առնել եւ յաջորդ տարի, երբ 25 տարեկան դառնաս, դրամդ կ'առնես եւ մեր պարտքը կը գոցենք:

Սօսի գաղափարը նպատակայարմար գտնելով, տոկոսով պարտքի դրամ տուող մը գտան եւ անկէ առին իրենց պէտք եղած գումարը:

Արդէն ամէն ինչ լաւ կ'ընթանար, երբ լսուեցաւ, թէ նօտարը անսպասելիօրէն աներեւութացած էր, իրենց վստահուած բոլոր գումարները հետը տանելով: Շատ չանցած պարզուեցաւ, որ թշուառականը խաբեբայ մը ըլլալով՝ շատերուն դրամը շորթած է:

Փաստաբանին անյայտանալու լուրը երբ փոխ դրամ տուող Երեմեանին հասաւ, անմիջապէս Սօսինց խանութը շունչը առաւ եւ սպառնաց՝ ըսելով.

— Եթէ փոխ առնուած գումարը անմիջապէս չվճարէք, իբր հատուցում՝ ձեր տունն ու խանութը բռնի աճուրդով պիտի ծախեմ եւ դրամս ազատեմ:

Երբ դրամատէր Երեմեանը մեկնեցաւ, այր ու կին անճրկած մնացին:

— Սիրելի՛ կինս, ի՞նչ պիտի ընենք հիմա, — գոչեց Հրաչ, — փոխ առած դրամնիս չենք կրնար այդքան շուտով վերադարձնել, իսկ դրամատէրս սպասելու տրամադիր չէ: Մենք, երեք փոքրիկներով, այս տունէն դուրս ելլելու հարց կը ծագի: Բոլորս ալ անսուղ պիտի մընանք, քանի որ ուրիշ գործ չեմ կրնար աշխատիլ: Պէտք եղածին չափ զօրաւոր չեմ ու մէկ ձեռքով գերթէ բանի մը չեմ ծառայեր: Կ'երեւի Աստուած մեզ աչքաթող ըրած է:

— Սիրելի՛ ամուսինս, — ըսաւ Սօսի, — այդպէս մի՛ ըսեր, Ան իր գաւազները երբեք չի մոռնար, ինչպէս մենք չենք մոռնար մեր գաւազները: Աղօթենք իրեն, թերեւս մեզի ելք մը կը գտնէ:



Սօսին քաշուեցաւ իր սենեակը եւ իր բարերարուհիին խաչը ձեռքը առնելով՝ աղօթեց եւ ըսաւ.

— Ա՛խ, բարեսէր տիկինս, սիրտդ որքան պիտի ճմլուէր երբ տեսնէիր, թէ այս օրերուն ողորմելի դժբախտ մըն եմ:

Երեկոյեան իրենց այցելութեան եկաւ Հրաչին մանկութեան ընկերներէն Պետրոսը՝ լսած ըլլալով իր ընկերոջ ցաւալի վիճակի մէջ գտնուիլը:

Պետրոս իր ընկերոջ օգտակար ըլլալու կարողութիւնն չունէր, միմիայն մխիթարական խօսքերով կ'ուզէր անոր յոյս ներշնչել: Հարցուց Սօսին, որ որեւէ ոսկեղէն կամ գոհարեղէն չունի՞: Սօսին պատասխանեց.

— Ոսկեղէն ապարանջանս եւ մատանիս ծախեցինք եւ ծախսեցինք, ուրիշ ոսկեղէն չունինք: Բարերարուհիէս մնացած պղինձէ խաչ մը ունինք, որ որոշ գումար չի բերեր, այլեւս չենք դիտեր, թէ ինչպէ՞ս պիտի ապրինք:

Պետրոս կ'ուզէ տեսնել խաչը, զոր Սօսի իր սնարին վրայ կախած էր, ինչպէս իր բարերարուհին ողջութեան կը կախէր իր սնարին վրայ: Պետրոս, որ արհեստով ոսկերիչ էր, խաչը ձեռքը առնելով՝ կը քննէ եւ ուրախութեամբ կը բացագանչէ.

— Աչքերնիդ լոյս, այս խաչը դուք պղինձ կը կարծէք, սակայն, բարեբախտաբար, խաչը գուտ ոսկի է: Այս ծախելով, մեծ գումարի մը կրնաք տիրանալ:

Սօսի յաջորդ օր, Պրն. Պետրոսին ընկերակցութեամբ, ծախեց ոսկիէ խաչը ու իր բոլոր պարտքերը վճարելու չափ դրամ ձեռք անցուց: Գործերնին տարուէ տարի բարգաւաճեցաւ եւ ընտանիքը այլեւս կարօտութիւն չտեսաւ:

Սօսի իր ամբողջ կեանքին ընթացքին իր տղոց եւ թոռներուն պատմեց պղինձէ խաչին պատմութիւնը եւ աւելցուց.

— Եթէ մարդ իր պարտականութիւնը կատարէ միայն եւ վստահի Աստուծոյ, ոչ մէկ բանէ կը վախնայ, թէեւ երբեմն ամէն ինչ մութ ու չարագուշակ կը թուի, սակայն Ան ամէն ինչ կը փոխակերպէ բարիքի:



## ՇՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Համաշխարհային Առաջին Պատերազմի ընթացքին, օսմանեան թուրք պետութեան կողմէ գործադրուած Հայոց Ցեղասպանութեան հետեւանքով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Խաչատրեան կ'աքսորուի Երուսաղէմ, ապա, պատերազմի վերջաւորութեան, թրքական բանակներու պարտութեամբ երբ անգլիական ու Ֆրանսական բանակներու կողմէ տեղի կ'ունենայ Սուրիոյ եւ Լիբանանի ազատագրումը թրքական տիրապետութենէն, տառապեալ վեհափառը կու գայ Սուրիա՝ տարագրուած եւ ջարդերէն ազատուած իր ժողովուրդին մօտ եւ կը ծրագրէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռը հաստատել Սուրիոյ Հալէպ քաղաքի Նոր Գիւղ հայկական շրջանին մէջ: Սահակ Հայրապետ, իր ծրագիրը իրագործելու համար, յարմար հողամաս մը գտնելով, ներկայի Սահակեան վարժարանի եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հողամասին վրայ կը ձեռնարկէ շինել կաթողիկոսարանի յարմար շէնքեր:

Այդ շէնքերէն մէկը հայերէն «ա» պարզ տառի ձեւով՝ շուրջ 24 սենեակներէ կը բաղկանար, իսկ յաջորդ շինութիւնը՝ «խաչի» բաժանումներով, 8 սենեակներով շէնք մը:

Ապագային, կաթողիկոսարանը Անթիլիաս (Լիբանան) հաստատուելու առիթ ներկայանալով, Հալէպի մէջ կաթողիկոսարանի համար շինուած շէնքերը կը տրամադրուին 1929-ին հիմնադրուած ազգային Սահակեան երկսեռ վարժարանին:

Որպէս Նոր Գիւղի բնակիչ, 5 տարեկանիս բախտը ունեցայ յաճախելու ազգային Սահակեան վարժարանի մանկապարտէզի բաժինը, որպէս ծիւ դասարանի աշակերտ: Մանկապարտէզի աշակերտներուն յատկացուած խաչածեւ շէնքին մէջ մէկ սենեակը այդ օրերուն վերածուած էր եկեղեցիի՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի անունով:

Ապագային, 1934-ին, Հալէպի (Բերիոյ) Թեմի Առաջնորդ ընտրուած Արտաւազդ Արքեպիսկոպոս Սուրմէլեանի նախաձեռնութեամբ եւ ջանքերով, Սահակեան վարժարանի երկու բաժիններուն միջեւ գտնուող հողամասին վրայ շինուեցաւ քարաշէն հոյակապ եկեղեցի մը՝ անուանակոչուելով Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի, որուն մէջի քարաշէն հաստ սիւները խիստ քննադատութեան ենթարկուեցան կարգ մը ճարտարապետերու, շինարարներու եւ մասնաւանդ Պոլսոյ Տոլմա Պաղչէ սուլթանական պալատի շինութեան մասնակցած բալուցի Տատային կողմէ, որուն աչքերը ձերութեան հետեւանքով մեծապէս տկարացած էին այդ օրերուն:

Սահակեան մանկապարտեզի չորս կարգերը ակարտելէ ետք, 9 տարեկանին, որպէս առաջին կարգի աշակերտ, «ա» ձեւով շինուած շէնքը փոխադրուեցայ:

Տարիները սահեցան եւ 12 տարեկանին փոխադրուեցայ «ա» շէնքի երրորդ դասարանը, որ կը գտնուէր «ա» գիրի առաջին քառակուսին անկիւնը:

Մանկապարտեզէն սկսեալ յաջողութեամբ կը փոխէի կարգերս: Շատ աշխատասէր չէի, յառաջագէտ եւ առաջնակարգ աշակերտի համբաւ չահելու եւ յոխորտալու մտադրութիւն չունէի, սակայն ուսուցիչները կ'ըսէին. «Գրիգոր, եթէ դուն ուզես աշխատիլ, շատ դիւրութեամբ դասարանին լաւագոյն աշակերտը կ'ըլլաս»: Բայց ես չէի ուզեր աշխատասէր ըլլալ, ինչո՞ւ, քանի իմ նիշերս ընդհանրապէս 8-էն վեր կ'ըլլային առանց տքնաջան աշխատանքի, եւ դասարան փոխելու դժուարութիւն չէի ունենար, որպէսզի ժամանակ ունենամ ընկերական չարութիւններ եւ արկածախնդրութիւններ ընելու:

Որպէս 4-րդ դասարանի աշակերտ, 1938-ին, վարժարանի դասաւանդութիւններուն սկսած էի կանոնաւորաբար հետեւիլ: Բոլոր ուսուցիչները գոհ էին ինձմէ, որովհետեւ առիթ չէի փախցնէր ծառայելու իրենց՝ արտադպրոցական պէտքերուն հասնելով, անշուշտ կատարեալ գաղտնապահութեամբ:

Աշնանային ցուրտն ու անձրեւները սկսած էին: Ծառերը կը դողային՝ մերկանալով իրենց գեղեցիկ տերեւներէն: Պարտեզները ասպատակելու եւ արկածախնդրական միջոցներով պտուղները քաղելու եւ պարտիզպաններու հետ կռիւներ սարքելու ամառնային հաճոյքները անցած էին՝ Պոսթան Փաշայի եւ Այնթէլ Կէօզի պարտիզպաններուն առիթ ընծայելով իսաղաղ ապրելու:

Դպրոցի կէսօրուան արձակուրդին տուն կ'երթայի ճաշելու համար, որովհետեւ մեր տունը կը գտնուէր Նոր Գիւղի 4-րդ թաղամասին մէջ, դպրոցէն շուրջ 300 մետր հեռակրութեան վրայ: Երբ կէսօրուան արձակուրդի զանգը հնչեց, աճապարեցի տուն հասնիլ, որովհետեւ այդ առաւօտ նախաճաշ ըրած չըլլալով՝ շատ անօթի էի:

Հազիւ դասարանէն դուրս ելած, նկատեցի շնիկ մը, որ կը հետեւէր իմ քայլերուս: Քանի մը անգամ փորձեցի անկէ ազատիլ, սակայն կարելի չեղաւ: Ան յամառութեամբ կը շարունակէր հետեւէս գալ:

Մանկութենէս շատ կը սիրէի շունները, մանաւանդ փոքրամարմին շունները, եւ կ'ատէի կատուները, որոնք, ինչպէս լսած էի, ապերախտ էին գիրենք խնամող ընտանիքներուն:

Նկատելով, որ օդը բաւական ցուրտ էր եւ հաւանաբար ինծի հետեւող շնիկը կը մսէր, ես, չկարենալով գայն հեռացնել ինձմէ, որոշեցի անոր հետ կոշտ չվարուիլ եւ ձգել որ հետեւի ինծի:

Իմ ցոյց տուած վերաբերմունքէս քաջալերուած, ուրախութեան շնական արտայայտութիւններով զիս հետապնդելէ ետք երբ հասանք

մեր տան դարպասը, սկսաւ պոչը շարժել եւ քսուել ինծի, ջանալով իր լեզուով բաներ մը հասկցնել: Հաւանաբար անօթի էր:

Մեղքցայ, ներս առի գինք: Կերակրեցի, լոգցուցի եւ վիզէն անցուցի կապոյտ ժապաւէն մը: Կէսօրուան ճաշի արձակուրդս գրեթէ անցուցի անծանօթ, բայց հաւատարիմ այս շնիկին հետ եւ որոշեցի անուն մը դնել անոր: Շարք մը անուններ գրեցի թղթիկներու վրայ եւ գաւաթի մը մէջ դնելով խառնեցի: Վիճակահանութեամբ թուղթ մը քաշեցի, որուն վրայ գրուած էր «Բոթօ»: Զինք «Բոթօ» անուանելով, սկսայ իր հետ խօսիլ եւ գինք կանչել «Բոթօ» անունով: Կէս ժամուան ընթացքին ընտելացաւ իր անունին հետ եւ երբ իր անունը տայի, վազելով կը նետուէր գիրկս:

Հակառակ մօրս ընդդիմութեան, որոշեցի Բոթոյին տէր ըլլալ եւ մեր տունին մէջ պահել գայն, Աստուծոյ առաքուած նուէր մը ընդունելով իր գոյութիւնը, որպէսզի շանասիրութեան փափաքս գոհացնեմ:

Կէսօրուան ճաշս վերջացնելէ ետք, դէպի դպրոց ճամբայ ելայ, մօրս ապսպրելով, որ ուշադրութիւն ընէ, որպէսզի Բոթօն դուրս չելլէ: Սակայն տունէն հազիւ յիսուն քայլ հեռացած՝ նկատեցի, որ Բոթօն ետեւէս կու գայ: Բարկացայ, սպառնացի, որ տուն վերադառնայ, անօգուտ: Յամառօրէն շարունակեց ետեւէս գալ, ճանչցած ըլլալով իմ բարի տրամադրութիւններս:

Դասարան հասայ, կէսօրուան դադարը չէր վերջացած: Կը մտածէի ձեռով մը ձերբազատուել Բոթոյին ներկայութենէն: Ան կը շարունակէր ինծի հետեւիլ եւ տպաւորիչ շարժումներով հաճելի երեւիլ, որպէսզի բարեկամաբար վարուիմ հետը:

Ճակատագրական վայրկեանները կը մօտենային: Ամէն վայրկեան դասարան մուտքի գանգը կրնար հնչել եւ ես այս փորձանք շնիկէն ազատուելու ուղի մը չէի կրցած գտնել:

Գրասեղանի երկու ընկերներս՝ Գրիգոր Փաշայեան եւ Պետրոս Գահուէճեան, կանուխէն եկած ըլլալով, անոնց դիմեցի, որպէսզի գաղափար մը տալով օգնեն ինծի՝ ստեղծուած վտանգաւոր կացութենէն դուրս գալու համար:

Երկար խորհրդակցելէ ետք, ընկերս՝ Փաշայեան, լուծում մը գրտաւ: Առաջարկեց շունը տեղաւորել գրասեղանի դարակին մէջ՝ կտոր մը հաց դնելով անոր առջեւը, որպէսզի հանդարտ կենայ մինչեւ արձակուրդ:

Համաձայնեցանք: Այդպէս ալ ըրինք: Բոթօն դարակին մէջ խելօք-խելօք տեղաւորուեցաւ առանց ձայն հանելու, ուրախութիւն պատճառելով մեզի:

Կէսօրէ ետքի առաջին պահը յատկացուած ըլլալով աշխարհագրութեան դասին, ծանր քայլերով դասարան մտաւ Պրն. Սարգիս Զուլճեանը եւ ըստ իր ընկալեալ սովորութեան՝ զիս դասի հանեց, քաջ

գիտնալով, որ ես միշտ դասս պատրաստած կու գամ եւ օրինակելի աշակերտ եմ:

Հագիւ սկսած էի դասը պատմել, յանկարծ լսուեցաւ շունի հաջոց մը: Ուսուցիչս ակնոցը քիթին վրայ շտկելով, աչքերը պտըտցուց դասարանի աշակերտներուն վրայ՝ հաջոցին հեղինակը գտնելու յոյսով: Սակայն անօգուտ, ոեւէ մէկուն վրայ չկասկածելով՝ հարցուց.

— Ո՞վ իր շունի հաջոցով խանգարեց մեր դասը:

Պատասխանը չգտնուեցաւ:

Պրն. Չուլճեան թէեւ ջղայնացած, սակայն դիւանագիտական մեղմութեամբ ըսաւ.

— Ան որ հաջոցի ձայն հանեց, թող ոտքի ելլէ եւ նոյն հաջոցին ձայնը հանէ, վստահ ըլլալով, որ ես պիտի ներեմ իրեն, պայմանաւ որ անգամ մըն ալ նման չարութիւն չփորձէ եւ դասը չխանգարէ:

Գրասեղանի ընկերներէս Պետրոս Գահուէճեանը ոտքի ելլելով ըսաւ, թէ Փաշայեանն է յանցաւորը:

Պրն. Չուլճեան խօսքը Փաշայեանին ուղղելով հրամայեց, որ կրկին հաջէ, ինչպէս որ նախապէս հաջած էր:

Փաշայեան ոտքի ելաւ եւ լալով ըսաւ.

— Պարո՛ն, հաջոց հանողը ես չեմ, այլ՝ շունն է:

— Ի՞նչ շուն,— գարմացաւ Պրն. Չուլճեան:

— Պարո՛ն, հաջողը Գրիգորին շունն է: Դարակին մէջն է:

Արդարեւ, դասընկերս՝ Գրիգոր Փաշայեան, երբ ես դասը կը պատմէի, փորձած է շունը իմ դարակէս փոխադրել իր դարակը: Եւ երբ ձեռքը երկարած է շունը տեղափոխելու, ան զայրացած սկսած է հաջել, չուզելով իր տիրոջ դարակէն ուրիշ դարակ փոխադրուիլ:

Պրն. Չուլճեան դարակին մօտեցաւ եւ Փաշայեանին ըսաւ, որ շունը դուռէն դուրս հանէ: Գալով ինծի, Պրն. Չուլճեան ըսաւ.

— Այս շունը քեզմէ շատ խելացի է: Նայէ՛, Փաշայեանը զայն դուրս դրաւ, սակայն դուրսը պաղ ըլլալով՝ կրկին ներս մտաւ եւ աղաչական նայուածքով խնդրեց, որ դասարանին մէջ պատսպարուի:

Եւ իր գանակի ձեւով գաւազանով մօտեցաւ ինծի, եւ տուր որ կու տաս՝ ձեռքերուս, սրունքներուս եւ ոտքերուս, որոնց ցաւին տակ կ'անիծէի այն ժամը, որ հանդիպեցայ հաւատարիմ, բայց անչափահաս Բոթոյին, որ պատճառ եղաւ ստացած գաւազանի հարուածներու ցաւերուն:

Երեկոյեան, երբ տուն մեկնելու զանգը հնչեց, քննեցի սրունքներս, ուր գաւազանի հարուածները իրեն չափով կարմրագոյն նշաններ ձգած էին սրունքներուս վրայ:

Այնուհետեւ ոխ պահեցի անխիղճ ուսուցիչ Պրն. Սարգիս Չուլճեանի հանդէպ: Ինչպէս միշտ, երեկոյեան, դպրոցի աւարտին, իր ձեռքի առօրեայ գաւազանը, որուն օգնութեամբ կը քալէր, ինծի կու տար, որ իրենց տունը տանիմ եւ միւս գաւազանը բերեմ: Սատանան

մտաւ մէջ: Ուզեցի գաւազանի փոփոխութեան գաղտնիքը լուծել: Եւ երբ հետաքրքրութեամբ կ'ուսումնասիրէի գաւազանը՝ նկատեցի, որ բռնիչէն 15 սանթիմեթր վար պղնձեայ օղակ մը գոյութիւն ունի: Վերէն եւ վարէն բռնելով, վերի մասը քակելու փորձ ըրի: Եւ ինչ տեսնեմ, սուին մը գոյութիւն ունի գաւազանին մէջ:

Օրեր անցան, տարիներ անցան եւ ես այդ գաղտնիքը պահեցի սրտիս մէջ, մինչեւ Պրն. Չուլճեանին եւ իր ընտանիքին Հայաստան ներգաղթելը:

Ապագային լսեցի, որ Պրն. Սարգիս Չուլճեան եւ իր անդրանիկ զաւակը՝ արաբագէտ Սուին Չուլճեան, որ նոյնպէս Սահակեան վարժարանին մէջ կը պաշտօնավարէր, ընտանեօք Սիպերիա աքսորուած են եւ հոն դժուարին պայմաններու չկարենալով դիմանալ՝ Պրն. Սարգիս մեռած է եւ թաղուած Սիպերիոյ մէջ:

Շատ ցաւեցայ էջմիածնի ձեմարանէն շրջանաւարտ Պրն. Սարգիս Չուլճեանի Հայաստանի եւ Սիպերիոյ մէջ ունեցած տառապանքներուն համար, սակայն երբեք չմոռցայ այն ծեծը, որուն ենթարկուեցայ շնասիրութեանս հետեւանքով, 1938-ին, 12 տարեկանիս, Սահակեան վարժարանի 4-րդ դասարանի աշակերտութեանս ընթացքին:

Դասընկերներս՝ Գրիգոր Փաշայեանը 1947-ին Հայաստան ներգաղթեց, իսկ Պետրոս Գահուէճեանին, որուն մականունը փոխուած էր Պետրոսեանի, քանի մը տարիներ առաջ հանդիպեցայ Թորոնթոյի մէջ, ուր հաստատուած էր ընտանեօք, սակայն հազիւ տեղաւորուած՝ անակնկալօրէն մեկնեցաւ երկրաւոր կեանքէն, ժամանակ չտալով, որ վերարձարձէինք շունի պատմութիւնը:



Չախէն աջ՝ քանաստեղծուի Ռուզան Ասատրեանի, քանաստեղծ Սասուն Գրիգորեանի, քանաստեղծուի Լիլիթի եւ արձակագիր Շնորհիկ Շահինեանի հետ՝ 2004-ին

## «ԴՈՒՔ ՀՐԱՇԱԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԷՔ»

Հալէպի «Էլ-Շարք» գարեջուրի, պիսիքի, շոքոլադի եւ մածուկի պետականացուած գործարաններու ընդհանուր տնօրէն Իւսթազ Թարէք Զայեաթ, 1968-ին պաշտօնի բարձրացումով ստանձնեց Սուրիոյ սննդական արտադրութիւններու ընդհանուր տնօրէնի պաշտօնը, որուն կեդրոնը կը գտնուէր Սուրիոյ մայրաքաղաք Դամասկոսի մէջ:

Իւսթազ Թարէք Զայեաթի տնօրէնութեան ընթացքին, աշխատանքային մեր ամէնօրեայ հանդիպումներուն յաճախ խօսակցութեան նիւթ կը դառնային գործարաններու արտադրութիւններու որակի բարձրացման եւ մասնագիտանալու հարցերը, ինչպէս նաեւ գործաւորներու կացութիւնը: Նկատի ունենալով իմ գործաւորներու միութեան (սենտիքայի) նախագահի հանգամանքս, այդ պատճառով որոշ մօտիկութիւն մը ստեղծուած էր մեր միջեւ, որուն հետեւանքով համարձակութիւն կ'ունենար իր տնային ելեկտրական գործիքներու եւ սարքերու նորոգութիւններ կատարելու առաջարկ ներկայացնել ինծի, որոնք սիրով կը կատարէի: Մեր անձնական բարեկամութիւնը շարունակուեցաւ նաեւ իր Սուրիոյ սննդական արտադրութիւններու գործարաններու ընդհանուր տնօրէնութիւնը ստանձնելէն ետք ալ:

Իւսթազ Թարէք Զայեաթի ընդհանուր տնօրէնութեան ընթացքին, որոշում առնուած էր ձեւել Տրուզի շրջանի Սուէյտա քաղաքին մէջ գործող եւ ազգայնացուած «Ռայեան» օդիի գործարանը ընդլայնել, եւ պուլկարական հաստատութեան մը հետ համաձայնութիւն կնքելով եւ ընդարձակումի սարքերը հասած ըլլալով՝ աշխատանքները արդէն իսկ սկսած էին պուլկարացի մասնագէտներու կողմէ:

Իւսթազ Թարէք Զայեաթ, որպէս երկրագործութեան Էնթէնիէօր (ճարտարագէտ), գաղափար չունէր գործարանաշինութեան մեքենական, ելեկտրական եւ շինարարական գործերէն: Այդ պատճառով, Հալէպի սննդական արտադրութիւններու ընդհանուր տնօրէն Իւսթազ Մահմուտ Հասանէն կը խնդրէ, որպէսզի իրեն ծանօթ մասնագէտներ՝ ելեկտրանագէտ Գրիգոր Հոթոյեանը, մեքենագէտ Յակոբ Ասատուրեանը եւ խողովակային սարքաւորումներու մասնագէտ Սարգիս Հինտոյեանը յատուկ առաքելութեամբ ղրկուին Սուէյտա քաղաքը եւ քննեն հոն տեղի ունեցող աշխատանքներուն որակին:

Իւսթազ Մահմուտ Հասան վերոյիշեալ երեք մասնագէտները իր գրասենեակը հրաւիրելով՝ յայտնեց Իւսթազ Թարէք Զայեաթի կողմէ

եղած կարգադրութիւնը, նաեւ բացատրելով մեր կատարելիք գործողման մանրամասնութիւնները:

Հալէպի սննդական գործարաններու երեք հայ վարպետներս, ընդառաջելով ընդհանուր տնօրէնի հրահանգին, յաջորդ առաւօտ հաստատութեան ինքնաշարժով ճամբայ ելանք դէպի Դամասկոս, ինքնաշարժին մէջ արտասանելով «Տէրունական Աղօթք»-ը, ապա երգելով «Առաւօտ Լուսոյ»-ի վեց համարները:

Ճամբան՝ Սարգիս Հինտոյեան առաջարկեց նախ Մէզզէի զինուորական օդակայանը հանդիպիլ, ուր պարտադիր զինուորութեամբ սուրիական բանակին կը ծառայէր իր աւագ որդին՝ Խաչիկը, յոյս ունենալով, որ թերեւս կարելիութիւն կը ստեղծուի զաւակը տեսնելու:

Երբ օդակայան հասանք, հանդիպեցանք զինուորական կառքերու եռուզեռի եւ խճողումի, անկարելի դարձնելով մեր մօտեցումը մուտքի դրան: Որոշեցինք մեր ճամբան շարունակել դէպի Դամասկոս եւ վերադարձին կրկին այցելել Մէզզէի օդակայանը:

Դամասկոս հասնելով՝ այցելեցինք Սուրիոյ սննդական արտադրութեան գործարաններու ընդհանուր տնօրէնութեան գրասենեակը, ուր ընդհանուր տնօրէն Իւսթազ Թարէք Զայեաթ մեզ հիւրասիրելէ ետք՝ պէտք եղած ուղղութիւնները տուաւ, յանձնելով մեզի մեր առաքելութիւնը բացատրող հրահանգ-փաստաթուղթ մը՝ յանձնելի «Ռայեան» օդի ընկերութեան տնօրէնին:

Ճէպէլ Տրուզի կանաչապատ լեռնալանջերէն եւ խաղողի եւ այգիներու մէջէն բարձրանալով, կէսօրէ ետք ժամը 3-ին հասանք Սուէյ-տա քաղաքը, որուն ծայրամասին կը գտնուէր օդի գործարանը:

Երեքս ամէն օր իր մասնագիտական քննութիւնները կատարելէ ետք, ներկայացանք տնօրէնին, որ շատ ուրախացաւ մեր հայ ըլլալը գիտնալով, մանաւանդ մեր արաբ չըլլալը փաստող արաբերէն խօսակցութեան առողջանութեանէն:

Տիրուղի տնօրէնը մեզ իր տունը հրաւիրեց եւ մեզ պատուեց արդէն իսկ պատրաստուած համազամ ճաշերով եւ պտուղներով: Ապա, մեզ ճամբու դնելու ընթացքին, ամէն մէկուս նուիրեց ամենածանր, 90 աստիճանի ալքոլ պարունակող երկուքական «Ռայեան» օդի, որոնք խմելու համար հարկ եղաւ նոյն չափով ջուր խառնել, որպէսզի 40 աստիճանի իջնէ ալքոլը:

Շնորհակալութիւն յայտնելէ եւ ողջագուրուելէ ետք տնօրէնին եւ իր ընտանիքին հետ, վերադարձանք Դամասկոս: Մեր քննութիւններու արդիւնքները պարունակող տեղեկագիրը Իւսթազ Թարէք Զայեաթին ներկայացնելէ ետք, շրջեցանք Դամասկոսի շուկաները, երեկոյեան խորժակով ճաշեցինք խորոված պատրաստող նշանաւոր ճաշարանի մը մէջ, ապա, կրկին շուկաները շրջելէ եւ կարգ մը յիշատակի գնումներ ընելէ ետք, գտանք աժաննոց, երկրորդ կարգի պանդոկ մը եւ գիշերեցինք խաղաղութեամբ:



Առաւօտուն, կանուխէն արթննալով, շիտակ դէպի Մէզզէի զին-  
ուորական օդակայան դացինք:

Օդակայանի մուտքի գլխաւոր դուռէն շուրջ հարիւր մեթր հեռու  
մեր ինքնաշարժը տեղաւորելէ ետք, սպասեցինք, որ գիշերը իրենց  
տուները պառկող զինուորները, ենթասպաները եւ սպաները փոխա-  
դրող մարդատար ինքնաշարժները (պասերը) անցնին եւ կարելի ըլլայ  
մուտքի դրան մօտենալ:

Ինչպէս ըսի, մուտքի դուռէն հարիւր մեթր հեռաւորութեան կե-  
ցած, հետաքրքրութեամբ կը դիտէինք զինուորներուն ինքնաշարժ-  
ներէն իջնելը եւ պահակապետին բարեւ տալէ ետք զօրանոց մտնելը:

Ֆրանսական բանակին մէջ իմ ստացած զինուորական կրթու-  
թեամբ, ճիշդ չէի գտներ՝ տեսնելով, թէ ինչպէ՞ս պահակապետ են-  
թասպայ մը կրնայ սպայի մը դիտողութիւն ընել, որ իր երկար մագերը  
կտրել տայ, երկար մագերը անպատշաճ գտնելով զինուորական օ-  
րէնքներուն:

Շուրջ կէս ժամ մուտքի դուռէն հեռու սպասելէ ետք, նկատե-  
ցինք, որ երթեւեկը դադրեցաւ եւ պահակապետը իր զինուորական  
շապիկը հանելով՝ սկսաւ երթեւեկել մուտքի դրան լայնքին, մարզա-  
կան շարժումներ ընելով, հակառակ 38 աստիճան տաք ըլլալուն:

— Սարգի՛ս, — ըսի, — երթեւեկը դադրեցաւ, գնա՛ պահակապետին  
յայտնէ քու փափաքներդ, թերեւս քեզ կը դոհացնէ: Փորձէ՛:

Սարգիս մօտեցաւ պահակապետին, բարեւեց եւ իր գիտցած արա-  
բերէնով խնդրեց, որ իր զաւակը տեսնել կ'ուզէ:

Սարգիսը պատմեց՝ ըսելով.

— Պահակապետը երբ հարցուց զաւակիս անունը եւ իմ արաբե-  
րէնս լսելով՝ ըսաւ, «դուն հա՞յ ես»: Ըսի, «այո»: «Դուրսի երկու ըն-  
կերնե՞րդ ալ հայ են»: Ըսի՝ «այո»: Ըսաւ, «կանչէ՛ հոս թող գան»:

Երեքս եկանք եւ մօտեցանք գլխաւոր դրան մուտքին: Պահակա-  
պետ ենթասպան մեզ առաջնորդեց պահականոց եւ մեր միջեւ տեղի  
ունեցաւ ընթացիկ եւ Սուրիոյ քաղաքական կեանքը հետաքրքրող  
հարցերու քննարկում:

Այդ միջոցին համարձակութիւն ունեցայ պահակապետին ըսե-  
լու.

— Ես զարմանքով դիտեցի, որ դուն նոյնիսկ սպաներուն դիտո-  
ղութիւններ կ'ընէիր: Ես զինուորական կանոններէն կը հասկնամ՝  
ծառայած ըլլալով Ֆրանսական բանակին մէջ: Ինձի կրնա՞ս արդա-  
րացնել այս պարագան:

— Լա՛ւ, — ըսաւ պահակապետը, — ես այս զօրանոցի Պասս Արապի  
կուսակցութեան ընդհանուր քարտուղարն եմ եւ այդ հանգամանքով  
զինուորականները կը յարգեն իմ պաշտօնս:

Այս խօսքերը լսելով՝ Սարգիս ըսաւ.

— Գրիգոր՝, ժամանակն է քեզ ներկայացնելու որպէս կուսակցական անձ:

Սարգիսին առաջարկը տրամաբանական գտնելով, գրպանէս հանեցի կուսակցականի փաստաթուղթս եւ ցոյց տուի պահակապետին:

Պահակապետը երբ փաստաթուղթս տեսաւ, անմիջապէս վիզիս փաթթուեցաւ եւ կարգ մը հարցումներէ վերջ՝ ըսաւ.

— Ես այս գորանոցի Պասա Արապի կուսակցութեան ընդհանուր քարտուղարն եմ: Նախապէս գաղտնի պահած էի եւ անդամակցելով Ախուան Մուսլիմին կուսակցութեան, կրցայ քօղագերծել իրենց գաղտնի գործունէութիւնը եւ այդ կուսակցութեան մաս կազմող ըսպաներուն անունները փոխանցեցի պետական յատուկ կազմակերպութեան: Բոլորը ձերբակալուեցան եւ բանակէն աքսորուեցան: Նման քօղագերծումները կատարեցի նաեւ այլ կուսակցութիւններուն կատմամբ, թափանցելով անոնց կուսակցութեան մէջ, ներկայիս, գորանոցի բոլոր սպաները տեղեակ են իմ կուսակցական պաշտօնէն եւ ըստ այնմ կը սարսափին ինձմէ:

Ապա պահակապետը ինքզինք ներկայացուց՝ ըսելով.

— Ռազիպ Աուալ Ապու Մուսա, կրօնքով ալաուի, շուրջ 10 տարիէ ի վեր կը ծառայեմ սուրիական բանակին: Հիմա որ մենք ազգային-կուսակցական եւ եղբայրական յարաբերութիւն ունեցանք, ինծի տուէք Սարգիսին տղուն անունը:

Սարգիսին տղուն անունը տուինք, խնդրելով որ մեզի առիթ տրուի զայն տեսնելու:

Պահակապետը՝ Ռաֆիգ (ընկեր) Ապու Մուսան գինուոր մը կանչեց եւ ըսաւ.

— Գնա՛ գինուոր ինչիկը կանչէ՛ եւ իմ անունով իր պատասխանատու սպային ըսէ՛, որ բոլորովին նոր հագուստներ տրուին իրեն:

Իսկ երկրորդ գինուորի մը հրամայեց, որ իրենց ցանած լուրկներէն եւ վարունգներէն քաղէ եւ լուալէ ետք բերէ ու հրամցնէ յարգելի հիւրերուն: Մենք ալ մեր կարգին շիշ մը օղի, որ մեզի տրուած էր «Ռայեան» գործարանի տնօրէնին կողմէ, եւ Դամասկոսէն գնուած տուփ մը պարազէ տուինք պահակապետին:

Զինուոր ինչիկը հինտոյեան եկաւ բոլորովին նորոգուած հագուստով եւ կօշիկով: Բարեկեց Ապու Մուսային եւ ներկաներուն, ապա ողջագուրուեցաւ հօրը հետ, որուն չէր տեսած բանակ կանչուելէն ի վեր:

Զինուոր ինչիկին երթալէն ետք, Ապու Մուսա յայտարարեց,

— Դուք՝ հայերդ, հրաշալի ժողովուրդ էք, կը հիանամ ձեր ունեցած բազմակողմանի տաղանդներուն եւ իմաստութեան վրայ: Եղբայր, գորանոցիս մէջ գտնուող հայ գինուորներուն բազմաշնորհ ըլլալը զիս կը զարմացնէ: Որպէս արհեստաւոր՝ թէ՛ մեքենիսիսան են, թէ՛ դերձակ են, թէ՛ ատաղձագործ են, ամէն տեսակ արհեստէ գաղափար

ունին: Անոնք նաեւ մարզիկ են, Ֆուլթպոլ, պասքէթպոլ եւ մարզական այլ ճիւղերու մէջ առաջնութիւն կը շահին: Ես պատիւ կը զգամ նման գինուորներ ունենալուս, ինչպէս նաեւ ձեզի պէս բարեկամներու ծանօթանալով: Որեւէ ատեն երբ Դամասկոս կու գաք, անպայման հանդիպեցէք ինծի, ես ուրախութեամբ կ'ընդունիմ ձեզ:

Ապու Մուսա, արդէն նախապէս տեղեկացած ըլլալով մեր պաշտօններուն եւ առաքելութեան, հասցէս ուզեց, որպէսզի որպէս կուսակցական ընկերներ մեր եղբայրական կապը պահենք:

Մեր կատարած առաքելութենէն ամիս մը ետք, գաղափարական, կուսակցական եւ եղբայրական բովանդակութեամբ նամակ մը ստացայ Ապու Մուսայէն, որուն պատասխանեցի պատշաճօրէն:

Ապու Մուսային հետ իմ եղբայրական յարաբերութիւններս շարունակուեցան մինչեւ իմ Գանատա հաստատուիլս: Ան միշտ պատրաստակամութիւն յայտնած էր ինծի օգտակար դառնալու: Ինծի օգտակար դարձաւ, երբ Հալէպի գարեջուրի, պլիսթիկ-շոֆոլայի եւ մածոնի գործարաններու իմ պաշտօնէս հրաժարականները բազմաթիւ անգամներ մերժուեցան պատկան նախարարութեան կողմէ եւ ես ըստիպուեցայ իմ սիրելի ընկեր-բարեկամիս՝ Ապու Մուսային դիմել, որ մինչ այդ հասած էր բարձրագոյն սպայի աստիճանին եւ ստանձնած սուրիական բանակի յատուկ զօրագունդերու (Ուահտաթ Խասսա) հրամանատարութիւնը եւ իր միջամտութեամբ ընդունուեցաւ հրաժարականս:

Կարօտով եւ երախտագիտութեամբ միշտ կը յիշեմ բարեկամս՝ Ապու Մուսան եւ երբեք չեմ մոռնար ինծի հանդէպ ցոյց տուած սէրը եւ կատարած բարիքները:



Սահմանային ուժերու գնդապետ,  
ասսոււնցի Յովիկ Գէորգեանի հետ՝ 2004-ին

# ԴՐԱՍԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶՆԻԻ ԶԳԱՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Տէր եւ Տիկին Աֆիֆ եւ Մատլէն Իպրահիմ կը բնակէին Հալէպի Ազիզիէ թաղամասի արդիական շէնքի մը երրորդ յարկին վրայ գըտնուող ընդարձակ, ամէն յարմարութիւններով օժտուած տունի մը մէջ:

Պր. Աֆիֆ Իպրահիմ կերպասեղէնի խանութ մը ունէր Հալէպի ներսի գոց շուկային մէջ եւ գործը յաջող կ'ընթանար, որովհետեւ անկեղծութիւն եւ յարգանք ցոյց կու տար իր յաճախորդներուն ու սիրուած էր անոնց կողմէ:

Տէր եւ Տիկին Աֆիֆ եւ Մատլէն Իպրահիմ ուշ ամուսնացած ըլլալով՝ ունեցած էին մանչ զաւակ մը եւ կոչած Անթուան, որ իրենց աչքի լոյսն էր եւ բացառիկ ուշադրութեամբ եւ հոգածութեամբ կը հետեւէին անոր կեանքին ու ուսումին, ամէն ջանք եւ գոհողութիւն ի գործ կը դնէին, որպէսզի ան լաւագոյն նիշերով աւարտէ դպրոցական շրջանը, ապա՝ համալսարանը, արժանանալու համար շինարարական ճարտարապետի վկայականին:

Տարիները թաւալեցան, Անթուան բարձր նիշերով աւարտեց Հալէպի համալսարանը եւ շինարարական մեծ ընկերութեան մը մէջ գործ գտաւ ի մեծ ուրախութիւն իր ծնողքին եւ հարազատներուն:

Անթուանին ծնողքը ժամանակը եկած համարելով, կը փափաքէին իրենց զաւակը կանուխէն ամուսնացնել եւ թոռնիկներու տէր ըլլալ, այդ պատճառով, երբ առիթը ներկայանար, կը խնդրէին իրենց տղայէն, որպէսզի ամուսնութեան մասին մտածէ՝ իրեն յարմար աղջիկ մը գտնելով:

Անոնք իրենց փափաքը եւ մտահոգութիւնը յայտնեցին Դամասկոս ապրող Աֆիֆի եղբօր եւ ընտանիքին, ունենալու համար անոնց կարծիքը եւ գաղափարը այս առաջարկին մասին, անոնցմէ խնդրելով նաեւ, որ եթէ յարմար, պատուաւոր եւ յայտնի ընտանիքի մը աղջիկը կը ճանչնան իրենց շրջապատին մէջ, զիրենք տեղեակ պահեն:

Անթուանին Դամասկոսի հօրեղբայրը՝ Սելիմ եւ նանուկը՝ Ժանէթ, ուրախութեամբ ընդունեցին իրենց եղած խնդրանքը եւ ուշի-ուշով սկսան փնտռել իրենց շրջապատին մէջ գտնուող աղջիկներուն մէջ գեղեցիկ եւ իրենց յարմար աղջիկ մը, որ նաեւ համաձայնի ապրիլ Հալէպ՝ իր եղբօր ընտանիքին հետ:

Շրջան մը հտք, Պր. Աֆիֆ եւ տիկինը՝ Մատլէն, Դամասկոսէն

դրական պատասխան ստանալով՝ շատ ուրախացան: Գտնուած էր Դամասկոսի անուանի ընտանիքներէն Պր. Ճորճ Հաննայի աղջիկը՝ Ճորճէթը, որ շատ ազնիւ ու զարգացած աղջիկ մըն էր եւ շատ յարմար՝ իրենց ընտանիքին, զրկելով նաեւ հարսնցուին գունաւոր նկարը:

Անթուան եւ իր ծնողքը հաւնած ըլլալով աղջիկը՝ Դամասկոս մեկնեցան եւ Աֆիֆին եղբօր ընտանիքին հետ աղջիկտեսի գացին:

Պատշաճ խօսակցութիւններէն եւ հիւրասիրութեանէն ետք, Պր. Աֆիֆ պաշտօնապէս Պր. Սելիմին աղջկան՝ Ճորճէթին ձեռքը խնդրեց իր գաւկիին՝ Անթուանին համար:

Խնամիները երկուստեք զիրար ճանչնալու պատեհութիւն ունեցած էին, եւ, երկար խորհրդակցութիւններէ ետք, համաձայնած նըշանտուքի եւ պսակի արարողութիւններու մասին:

Անթուանին եւ Ճորճէթին ամուսնութիւնը տեղի ունեցաւ Դամասկոսի յոյն-օրթոտոքսներու մայր եկեղեցիին մէջ, ներկայութեամբ մեծ թիւով երկուստեք ազգականներու եւ բարեկամներու:

Նորապսակ ամուրը՝ Անթուան եւ Ճորճէթ, շրջան մը փոխադարձ սիրով եւ հասկացողութեամբ ուրախ օրեր ապրեցան: Ուրախ էին նաեւ Անթուանին ծնողները՝ տեսնելով, որ նորապսակ ամուրը կը սիրեն զիրար եւ երջանիկ են, մանաւանդ ապրելով իրենց հետ՝ անհուն ուրախութիւն կը պատճառէին իրենց, կարօտով սպասելով թոռնիկի մը ծնունդը:

Սակայն պատահեցաւ անսպասելին. Անթուանին աշխատած ճարտարապետական ընկերութիւնը գործերու տկարութեան հետեւանքով սնանկացաւ եւ շատերու կարգին Անթուանն ալ կորսնցուց իր պաշտօնը, ստանալով իր աշխատած տարիներուն հատուցումը:

Շրջան մը անգործ մնալէ ետք, որպէս օգնական աշխատեցաւ հօրը վաճառատան մէջ, սակայն, իր ուսումին եւ նկարագրին անյարմար գտնելով այս գործը, ստիպուած երկրաչափական կարգ մը ընկերութիւններու դիմումներ ներկայացուց, բայց՝ ապարդիւն:

Հալէպի շրջանին մէջ իրեն յարմար գործ չգտնելով՝ Անթուան դիմեց իր աներոջ, Դամասկոս, խնդրելով, որ իրեն յարմար գործ մը գտնէ Դամասկոսի մէջ, այն յոյսով, որ մայրաքաղաքին մէջ միշտ շինարարութիւններ գոյութիւն կրնան ունենալ:

Անթուանին դամասկոսցի կնոջ բախտէն, որ միշտ կ'ուզէր իր ծընողքին մօտ ըլլալ, Անթուանին աները հեռաձայնեց, որ շնորհիւ իր բարեկամներուն՝ կրցած է իրեն յարմար գործ մը գտնել եւ յանձնարարեց, որ կարելի արագութեամբ Դամասկոս գալ եւ ստանձնէ իր նոր պաշտօնը, քանի որ նախկին պաշտօնեան իր գործէն հրաժարած է եւ ընկերութիւնը ղեկարարութեան մէջ է:

Անթուան ուրախութեամբ ընդունեց Դամասկոսէն եկած առաջարկը եւ շուտով մեկնեցաւ Դամասկոս՝ ստանձնելու իր պաշտօնը, շնորհակալութիւն յայտնելով իր աներոջ եւ զոքանչին:

Անթուան իր գործէն եւ նոր աշխատանքի միջավայրէն գոհ մնացած ըլլալով, իր կիներն ու զաւակները՝ մանչ մը եւ աղջիկ մը, Դամասկոս բերել տուաւ, բակով տուն մը վարձեց եւ տեղաւորուեցաւ Դամասկոսի Պապ Թումա թաղամասին մէջ, որ շատ մօտ էր իր հօրեղբօր եւ աներոջ ընտանիքներուն տուններուն:

Տարիներ անցան: Զաւակները բաւական մեծցան եւ դպրոցին մէջ գնահատելի ընթացքով բարձր նիշերով տուն կու գային: Իր գործն ալ լաւ էր: Ամէն տարի մասականի յաւելում կ'ունենար եւ ընտանեօք երջանիկ կեանք մը կ'ապրէին: Սակայն, դժբախտ օր մը, Անթուան մօրը ըրած հեռաձայնէն լսեց, որ Հալէպ ապրող իր հայրը ինքնաշարժի արկածով շատ ծանր վիրաւորուելով եւ շուրջ ամիս մը հիւանդանոցին մէջ բուժուելէ ետք, կարելի չէ եղած անոր կեանքը փրկել, առանձին ձգելով իր մայրը՝ Տիկին Մատլէնը:

Անթուան, առ ի պարտականութիւն, Դամասկոսէն Հալէպ մեկնող առաջին հանրակառքով Հալէպ հասած է եւ ներկայ եղած իր հօր՝ Աֆիֆի թաղման արարողութիւններուն: Հալէպի մէջ երկու օր մնաց եւ կարգ մը բարեկամներու եւ ծանօթներու ցաւակցութիւնները ընդունելէ ետք, վերադարձաւ Դամասկոս եւ շարունակեց իր բնական կեանքը:

Անթուան ու Պր. Աֆիֆին եղբայրը՝ Սելիմ, Դամասկոսի մէջ շրջան մը սգաւորի կերպարանք ցոյց տուին ծանօթներուն, քանի մը անգամ ալ հեռաձայնով հետաքրքրուած են իրենց հօր եւ եղբօր մահուունէ ետք իրենց մօր եւ եղբօր կնոջ ապրուստով եւ կեանքով:

Անոնց հեռաձայնային խօսակցութեան գլխաւոր նպատակը Տիկին Մատլէնին առողջութիւնը չէր. կ'ուզէին իմանալ, որ Տիկին Մատլէն Պր. Աֆիֆին խանութը եւ իրենց բնակած տունը քանի՞ ոսկիի ծախած է, Պր. Աֆիֆ մեռնելէ առաջ կտակ ըրած է, իրենց հաշիւը եղած է կտակին մէջ, սպասելով, որ կտակէն իրենց բաժինը նօտարին միջոցով շուտով կը հասնի իրենց, որուն պարտականութիւն տրուած էր կտակին գործադրութեան հսկել արդարօրէն:

Տիկին Մատլէն Հալէպի մէջ կ'ապրէր բարուք վիճակով, նիւթական որեւէ դժուարութիւն չունէր, ամուսինը իր կտակով բաւական մեծ գումար մը յատկացուցած էր իր անունին, որով մինչեւ իր մահը ոչ մէկ բանի կարօտ կրնար ըլլալ:

Սակայն կարօտը իր զաւակին եւ իր թոռնիկներուն՝ օրէ-օր կը մաշեցնէր գինք: Վերջապէս այս կարօտալի կացութեան վերջ դնելու համար՝ դիմեց իր տղուն եւ տագրող ընտանիքներուն, որ ինք կ'ուզէ Դամասկոս գալ եւ ապրիլ իրենց հետ:

Տիկին Մատլէն անհամբերութեամբ կը սպասէ իր դիմումին դրական պատասխանին, իր թոռները տեսնելու, անոնց հետ ապրելու կարօտին վերջ դնելու համար: Հալէպի մէջ առանձին ապրելով, իր թոռներուն նկարները դիտելով՝ չէր կշտանար, միակ լուծումը այս կեանք-

քին եւ կարօտին՝ Դամասկոս փոխադրուելն էր: Եւ, հակառակ իր դժբախտական սպասումներուն ու յոյսին, իր տղայէն եւ տագրէն նամակ մը ստացաւ, ուր կը յայտնուէր, որ իրենք չէին կրնար ընդունիլ զինք, իրենց տուններուն անյարմարութեան պատճառաւ: Իրենց ունեցած երկու ննջասենեակներով տունները հազիւ իրենց կը բաւէին, ներողութիւն խնդրելով այս պատճառաբանութեան համար:

Տիկին Մատլէն Դամասկոսէն ստացած անհրապոյր եւ անվայել վերոյիշեալ պատճառաբանեալ պատասխանը ստանալով՝ շատ յուզուեցաւ եւ հիւանդացաւ:

Շատ յանդուգն որոշում մը կ'առնէ: Իր փաստաբանին միջոցաւ Դամասկոսի հոչակաւոր եւ լաւագոյն հիւանդանոցին մէջ մնալու եւ բուժուելու կարգադրութիւն կ'ընէ եւ Հալէպի իր բոլոր գործերը եւ կալուածները փաստաբանին միջոցաւ իր անունին դարձնելէ ետք, փաստաբանին միջոցաւ կը մեկնի Դամասկոս եւ իր ապահոված սենեակին մէջ կը տեղաւորուի, լուր տալով իր տղուն եւ տագրոջ, որ գան եւ զինք տեսնեն, տալով անոնց հիւանդանոցին անունն ու սենեակին թիւը:

Այս անակնկալ եւ անախորժ լուրը առնելով, Տիկին Մատլէնին տղան, կինը, զաւակները, ինչպէս նաեւ իր տագրը, կինը եւ զաւակները հիւանդանոց կու գան հիւանդը տեսնելու: Ծամբան մտահոգութեամբ կը մտածեն, որ այս սուղնոց հիւանդանոցի ծախսերը ո՞վ պիտի վճարէ: Հիւանդանոցէն ելլելէ ետք ո՞ր պիտի պառկի:

Տիկին Մատլէն իր թոռները կը կանչէ, գանոնք կարօտով կը համբուրէ եւ անոնց կը նուիրէ իրենց յարմար խաղալիկներ եւ հագուստեղէններ:

Անթուան եւ Սելիմ նաեւ կը ստանան նուէրներ, ինչպէս նաեւ՝ իրենց կիները եւ զաւակները:

Տիկին Մատլէն անոնց մտահոգութիւններուն կ'անդրադառնայ, թէ հիւանդանոցին ծախսերը ո՞վ պիտի վճարէ, կ'ըսէ.

— Երբեք մի՛ մտահոգուիք, մահճակալիս քով նստողը իմ նօտարս է եւ ան արդէն իսկ վճարած է հիւանդանոցի ծախսերը:

Անթուան եւ Սելիմ, տեսնելով եղած կարգադրութիւնները, կը կարծեն, որ իրենք ալ բաժին կրնան ունենալ Պր. Աֆիֆին ձգած կտակին մէջ:

Տիկին Մատլէն, ապա, նօտարին ներկայութեան պաշտօնապէս կը յայտարարէ.

— Հո՛ս նայեցէք, ես եւ ամուսինս տարիներով չարչարուեցանք, գիշեր-ցերեկ աշխատեցանք եւ պատկառելի հարստութեան տէր եղանք: Դուք օր մը մեզմով, ապա ամուսինիս արկածով մեռնելէն ետք իմ կեանքով չհետաքրքրուեցաք, գիտնալու համար, որ մենք ինչպէ՞ս կ'ապրինք, բանի մը պէտք ունի՞նք: Ձեզի հետ ապրելու ղիմումիս ժխտական պատասխան տուիք, որպէս մայր եւ եղբօր կին, հարազատի

վերաբերմունք եւ հոգածութիւն ցոյց չտուիք, իմ ամուսինս այս բոլորը գիտնալով՝ իր կտակը ըրած էր իմ անունիս՝ խանութը, տունը եւ կանխիկ 40 միլիոն սուրիական ոսկի: Թոռնիկներուս ուսումնական ծախսերը մինչեւ համալսարանէն մասնագիտական ուսում ստանալուն՝ պիտի վճարեմ, որովհետեւ անոնք անմեղ մանուկներ են եւ պէտք ունին սիրոյ եւ հոգածութեան:

Մինչ այդ, Անթուան եւ Սելիմ իրենց կիներով կ'առաջարկեն, որ հիւանդանոցէն ելլելէն ետք իրենց տունը մնայ եւ իրենց հետ ապրի՝ յուսալով, որ Տիկին Մատլէն իրենց ալ բաժին մը կը վերապահէ եղած կտակի գումարներէն:

Սակայն Տիկին Մատլէն կ'ըսէ.

— Դուք արժանի չէք նման վերաբերմունքի, որովհետեւ դուք մոռցաք մեր բարութիւնները եւ օգնութիւնները ձեզի: Մանաւանդ դուն, Անթուան, մենք՝ ես եւ հայրդ, որպէս ծնողք, մինչեւ քու համալսարանէն վկայուիլդ եւ ամուսնանալդ հոգ տարինք քեզի, վճարելով բոլոր ծախսերդ: Դուք ապերախտ եղաք եւ արժանի չէք մեր հարազատի վերաբերմունքին: Ինծի վստահուած հարստութիւնը պիտի յատկացնեմ որբերուն, անոնց ուսումին, բարեգործական հաստատութիւններուն, առաջնորդարանին եւ Սուրբոյ մեր եկեղեցիներուն, որպէսզի ապագայ սերունդները ըլլան բարեխիղճ, երախտագէտ եւ հաւատացեալ քրիստոնեաներ:



Գրիգոր Հոբոյեան, հանրածանօթ գրող Թորոս Թորանեանի հետ՝ Արցախի համբուն վրայ — 2004, Հայաստան



## ՑԱԽԱԼԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՄԸ

Բերիոյ Թեմի (Սուրիա) Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի հրահանգով եւ Առաջնորդ Զարեհ Սրբազանի վաւերացումով, 1950-1951 տարեշրջանին համար տնօրէնութեան պաշտօն ստանձնեցի Սուրիոյ հիւսիս-արեւելքը գտնուող, Եփրատ գետի գրեթէ ափին, Ռազգա գիւղաքաղաքի ազգային Նուպարեան վարժարանին:

Հալէպի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Արեւելք» օրաթերթի գրաշարութենէն հրատարելով, որուն կը ծառայէի 1947-էն ի վեր, մարդատար ինքնաշարժով Ռազգա հասայ 1950-ի Հոկտեմբերի սկիզբը, ուր դիմաւորուեցայ թաղականութեան ատենապետ Պրն. Յակոբ Սարգիսեանի, ատենադպիր Խաչատուր Գրիգորեանի, հաշուապահ Յովհաննէս Տէրտէրեանի, գանձապահ Ստեփան Մկրտիչեանի եւ խորհրդականներ Խորէն Պասմաճեանի եւ Կարոճ Ուզունեանի կողմէ, որոնք շաբաթներ առաջ Հայկական թաղի մը մէջ բնակող Հայ ընտանիքի մը քանի մը սենեակինոց տունէն սենեակ մը վարձած էին ինծի համար, ապահոված ըլլալով մահճակալ, սեղան, աթոռներ եւ կարեւոր սպասներ, որպէսզի կարենամ հանգստանալ եւ սնունդիս հոգ տանիլ:

Ինծի տրամադրուած բնակարանէն մինչեւ դպրոց, որ կը գտնուէր Եփրատ գետի եզերքը, Ռազգայի կեդրոնական պողոտայէն շուրջ տասը վայրկեան քալելով հեռաւորութիւն մը կար: Թաղականութեան ատենապետը՝ Պրն. Յակոբ Սարգիսեան, Ռազգա ժամանումիս յաջորդ օրը եկաւ բնակարանս, ուր առաւօտ կանուխ արթննալով՝ կազմ ու պատրաստ իրեն կը սպասէի եւ միասին գացինք դպրոց, ուր մեզ կը սպասէին թաղականութեան միւս անդամները: Դպրոցին բաժիններն ու դասարանները ուսումնասիրելէ ետք վերադարձայ տուն, յատուկ ուշադրութեամբ դիտելու Ռազգայի գլխաւոր պողոտայի խանութները:

Տուն գալով՝ բացառիկ ուրախութիւն մը կը գգայի: Վերջապէս իրականացած էր ուսուցիչ ըլլալու ցանկութիւնս, թէեւ Հայ մամուլն ու գրաշարութիւնը սրտիս շատ մօտ արհեստ եւ աշխատանք եղած էին, մանաւանդ երբ բանաստեղծ եւ «Նայիրի» գրական ամսագրի եւ տրպարանի սեփականատէր Անդրանիկ Ծառուկեանը զիս «Արեւելք»-ի գրաշարութենէն գատելով՝ իր տպարանի գործաւորը դարձուց, ուր մինչեւ 1949՝ «Նայիրի»-ին Պէյրութ փոխադրուելը, ապրեցայ ազգային եւ գրական մթնոլորտի մէջ, զարգանալով հայ գրական անդաս-

տանին մէջ, առիթ ունենալով բանաստեղծութիւններով եւ յօդուածներով աշխատակցելու «Արեւելք» օրաթերթին:

Իմ սիրելի եւ գաղափարակից ընկերս՝ բանաստեղծ Մանուկ Նաճարեան, որ կը պաշտօնավարէր Այն Արուս գիւղի ազգային Խորէնեան եկսեռ վարժարանին մէջ, իր նամակներով կը պատմէր որպէս ուսուցիչ իր կեանքին եւ Հայ աշարկերտին Հայերէն լեզուն, կրօնը եւ ազգային ոգին սիրցնելու եւ փոխանցելու հպարտութեան եւ հաճոյքին մասին, միշտ թելադրելով, որ ես ալ ուսուցչական պաշտօնին նուիրուիմ, անբաւարար գտնելով կիրակնօրեայ դպրոցներու մէջ որպէս ուսուցիչ իմ պաշտօնավարութիւնս:

Ես սենեակիս մէջ առանձնացած, Ռազգա հասնելու յաջորդ օրը, կ'երեւակայէի Մանուկին ուրախութիւնը, եթէ իրեն իմացնէի ուսուցիչ ըլլալս: Ես սենեակիս սեղանը առաջին անգամ գործածելով՝ զգացական նամակով մը ուրախացուցի սիրելի ընկերս, որուն հետ, կարգ մը գրասէր ընկերներով, նոյնիսկ փողոցներուն մէջ ման գալով կը խորհրդածէինք եւ վերլուծէինք Հայ գրողներու գործերը՝ մոռնալով, որ մեր ծնողները անհամբեր կը սպասէին, որ տուն վերադառնանք, նկատի ունենալով, որ կէս գիշերը շատո՞նց անցած է:

Երբ սկսայ աշակերտներու արձանագրութեան՝ նկատեցի, որ ծրնողները դանդաղ կը շարժին իրենց գաւակները արձանագրել տալու: Այդ իմաստով ծնողներուն պատշաճ նամակներ զրկելով՝ երկու օրուան ընթացքին արձանագրուող աշակերտութեան թիւը հասաւ 90-ի:

Դպրոցի մանկապարտէզի բաժինը կը բաղկանար բողբոջ, կոկոն եւ ծաղիկ դասարաններէ, իսկ նախակրթարանի բաժինը՝ առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ դասարաններէ: Հայերէնով դասաւանդուող Հայերէն լեզուի, կրօնի, հայոց պատմութեան եւ աշխարհագրութեան դասերէն զատ կը դասաւանդուէին արաբերէն եւ ֆրանսերէն լեզուները: Արաբերէն լեզուի դասաւանդման համար պետութիւնը տրամադրած էր ուսուցիչ մը, շատ ընկերային, համեստ եւ հայասէր երիտասարդ մը, որուն հետ դպրոցական տարեշրջանը բոլորեցինք եղբայրական գործակցութեամբ:

Տարեշրջանի ուսումնական ծրագիրը յաջողութեամբ կը գործադրէինք: Պաշտօնական եւ բարեկամական յարաբերութիւններ ստեղծած էի աշակերտներու ծնողներու եւ ընդհանրապէս Ռազգայի հայութեան բոլոր հատուածներուն հետ, որ կը բաղկանար Հ. Յ. Դաշնակցութեան համակիր շրջանակէն՝ Հայ Օգնութեան Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ի անդամներով, եւ Հ.Բ.Ը.Մ.-ի շրջանակէն՝ Հ.Ե.Ը.-ի անդամներով: Բոլոր հատուածներուն համակրութիւնը եւ գործակցութիւնը ապահոված էի, որոնք միշտ պատրաստ էին օգնելու Հայ դպրոցի կարիքներուն:

Ռազգայի ժողովուրդին ինծի հանդէպ համակրութիւնը աւելցաւ մանաւանդ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ

դպրոցի իմ հաստատումով, կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէն Պրն. Լեւոն Զէնեանի վաւերացումը ստանալէ ետք, եւ ի մեծ ուրախութիւն թաղականութեան անդամներուն, կրցայ կամաւոր ուսուցիչ-ուսուցչուհիներ ապահովել տեղացի ժողովուրդի զարգացած դասակարգէն, որոնք վարիչ տնօրէնութենէն ստացուած կրօնական դասագիրքերու օգնութեամբ եւ իմ կողմէս եղած թելադրութիւններով՝ կրցան սիրաշահել աշակերտները, որոնք անհամբերութեամբ կը սպասէին Կիրակի օրուան, որպէսզի հետեւին կիրակնօրեայ դպրոցի դասընթացներուն:

Ռազգայի ժողովուրդին եւ Նուպարեան վարժարանի ուսուցչական կազմին եւ աշակերտութեան համար մեծ ուրախութիւն եւ խանդավառութիւն ստեղծեց Բերիոյ Թեմի Առաջնորդ՝ Գերաշնորհ Տէր Զարեհ Սրբազան Եպիսկոպոսի Ռազգայի Հայութեան տուած պաշտօնական այցելութիւնը, ընկերակցութեամբ Ազգային Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդի անդամ՝ ծանօթ ղեղապործ Պրն. Սարգիս Սելեանի, որոնք ժողովրդային փառաշուք ընդունելութեան արժանացան ժողովուրդին եւ Նուպարեան վարժարանի աշակերտութեան կողմէ:

Զարեհ Սրբազան եւ Պրն. Սարգիս Սելեան, ընկերակցութեամբ թաղականութեան անդամներուն, այցելեցին Նուպարեան վարժարան, ներկայ գտնուեցան դասապահներուն: Սրբազան Հայրը կարգ մը



Հալէպի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Զարեհ Ս. Արք. Փայասեան Ռազգա այցելութեան առթիւ՝ նկարուած դպրոցական աշակերտներուն հետ 14 Հոկտեմբեր 1950

հարցումներ տուլա աշակերտութեան՝ կապուած իրենց սորված նիւթերուն, եւ գոհ մնալով՝ տուլա իր հայրական պատգամը աշակերտութեան:

Առաջնորդ Զարեհ Սրբազան, թաղականութեան ատենապետ Պրն. Յակոբ Սարգիսեանի տան մէջ ի պատիւ իրեն տրուած ճաշկերոյթին, իր գոհունակութիւնը յայտնեց վարժարանի աշակերտութեան ուսումնական մակարդակին համար, գնահատելով վարժարանի տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը:

Թէեւ ամիսը անգամ մը շաբաթավերջի արձակուրդին կ'երթայի տուն՝ Հալէպ, ընտանիքիս հետ ըլլալու եւ իմ սիրած ճաշերս, որոնք կարօտցած էի, մօրս պատրաստութեամբ ճաշակելու, սակայն պէտք է խոստովանիմ, որ Ռազգայի ժողովուրդը, թաղականութեան անդամները, աշակերտներու ծնողները, ինչպէս նաեւ արաբ հայրերու ու հայ մայրերու զաւակները, որոնք շուկայի վրայ առեւտրական խանութներ ունէին, խալի (քեռի) ըսելով կը յարգէին զիս եւ ճաշի կը հրաւիրէին: Երբեք չեմ կրնար մոռնալ Սարգիսեան, Մկրտիչեան, Տէրտէրեան, Ուզունեան, Պասմաճեան, Պէքմէղեան, Դանիէլեան եւ այլ յարգելի ընտանիքներու հոգածութիւնն ու գուրգուրանքը հայ ուսուցիչի մը հանդէպ, որ հայ աշակերտին հայեցի դաստիարակութիւն տալու համար աննշան ռոճիկով եկած է, յօժարելով առանձին ապրիլ, հեռու իր ծնողներէն, ազգականներէն, բարեկամներէն եւ ընկերներէն:

Շաբաթավերջի արձակուրդներուն իմ նախասիրած վայրը եղած էր Եփրատ գետի վրայ անգլիացիներու կողմէ շինուած կամուրջը Երկրորդ Աշխարհամարտին, որպէսզի կարենան դիմադրել թրքական յարձակումի մը դէպի Սուրիա, եթէ երբեք Թուրքիա դաշնակցի Գերմանիոյ եւ պատերազմի մասնակցի Սովետ Միութեան, Անգլիոյ, Յորանսայի եւ Միացեալ Նահանգներու դէմ:

Արդիական ճարտարարուեստով շինուած կամուրջին վրայէն տխրութեամբ եւ արցունքոտ աչքերով կը դիտէի Եփրատի ջուրերուն սահանքը Հայաստանի լեռներէն բխած, որ թրջելով բռնագրաւուած հայկական հողերը՝ կը հասնի Սուրիա եւ Իրաք: Կ'երեւակայէի 1915-ին Թուրքիոյ կողմէ կազմակերպուած Հայոց Ցեղասպանութիւնը եւ հայոց բնական քաղաքներուն եւ գիւղերուն քանդումը եւ աւելի քան մէկուկէս միլիոն հայերու սպանութիւնը թուրք, քիւրտ, չէքքէզ եւ այլ հրոսակներու կողմէ, որոնք քշուեցան՝ անցնելով Եփրատի հին կամուրջին տակէն, ինչպէս նաեւ երեւակայելով Հարիւր հազարաւոր հայերու անցքը Մեսքէնէի, Մակարտէի, Ռազգայի անապատներէն, որոնք իրենց անշիրիմ գերեզմանները գտան Տէր Զօրի անապատներուն մէջ:

Ռազգայի Նուպարեան վարժարանի 1950-51 տարեշրջանի ուսումնական տարեշրջանը ուրախ-տխուր շարունակուեցաւ, մէջս ըս-

տեղծելով բարեկամական եւ ընկերական զգացումներ բազմաթիւ երիտասարդ եւ տարեց անձերու հետ, որոնց յիշատակը միշտ անթառամ մնացած է յիշողութեանս մէջ, յատկապէս թաղականութեան անդամ Պրն. Ստեփան Մկրտիչեանի զաւկին՝ Նշանի հետ, որ երբեք զիս առանձին չէր ձգեր, շաբաթավերջերը հաճելի դարձնելու միջոցներ կը գտնէր:

1951-ի Ապրիլին, Ս. Յարութեան տօնը կը մօտենար եւ դպրոցը ութ օրուան արձակուրդ պիտի ունենար: Թաղականութիւնը, որպէս գնահատանք դպրոցի ուսուցչական կազմին, որոշեց Ս. Յարութեան օրը, Ս. Պատարագէն յետոյ, դաշտագնացութիւն մը կազմակերպել դէպի Հարուն Ռաշիտի աւերակուած պալատէն դէպի հիւսիս գտնուող հիանալի դաշտի մը մէջ, ուր բնութիւնը կեանք տուած էր ցանուած տեսակաւոր կանաչեղէններու:

Որոշուած օրը հոն էինք ուսուցչական կազմով եւ թաղականներով: Օրուան պատշաճ ուտելիքներու ճոխ տեսակներ, պտուղներ, մանաւանդ լաւաշ հաց, Ռագգայի ոչխարի պանիր, ամբարուած գիւղացիի մը կողմէ՛ հշու մը վրայ բերուած էին դաշտագետին եւ թաղականութեան բոլոր անդամները գործի վրայ էին տեսակաւոր աղանդերներ եւ ճաշեր պատրաստելու եւ ուրախ օր մը անցընելու:

Կէսօրուան մօտ սեղանը (գետին փռուած ծածկոցներ) պատրաստ էր, թաղականութեան անդամ՝ այնթէպցի Պրն. Կարուճ Ուզունեան իր խոշոր ափով շաղած էր չիլ-ֆէօֆթան եւ պատրաստած 70 աստիճանի օղին: Սեղանի օրհնութեանէն եւ սրտի խօսքերէ ետք, ճաշկերոյթը սկըսաւ եւ շարունակուեցաւ խանդավառութեամբ եւ հայերէն երգերով:

Ճաշի վերջաւորութեան, օղիի ազդեցութեան տակ, թաղականութեան անդամները սկսան հերոսանալ: Կատակաբանութիւններ եւ բացազանչութիւններ հաճելի կը դարձնէին մթնոլորտը: Ես չեմ յիշեր, թէ ինչպէ՞ս տեղի ունեցան մանկական խաղեր, այս պարագային՝ գլխարկ փախցնել:

Երկու խումբերու բաժնուածներ կը մրցէին եւ յաղթուողը ճաշով մը պարտական էր յաղթողին: Ես եւ թաղականութեան հսկան՝ Պրն. Կարուճը գլխարկին շուրջ էինք: Ես գլխարկը առի եւ վազեցի: Հազիւ 20 մեթր վազած էի, յանկարծ աջ ոտքս փոսի մը մէջ կոխած ըլլալով, ոտքս կոճէն (ankle) դարձաւ եւ ահռելի ցաւ մը սկսաւ պատճառել, քիթէս բերնէս բերելով արձակուրդս:

Թաղականութեան անդամները իրար անցան: Բարեբախտաբար էջը հոն էր եւ զիս էջին վրայ հեծցնելով հասցուցին տուն եւ լուր դրկեցին սափրիչ Դանիէլեանին, որ այդ օրերու բոլոր սափրիչներուն պէս ծանօթ էր բժշկական գիտելիքներու, որ այժի մագով եւ ոչխարի դմակով կապեց եւ բարի ապաքինում ըսելով մեկնեցաւ:

Դէպքէն ետք, առնուազն երեք օր տունէն դուրս չկրցայ ելլել, գաւազանով կը քայլէի, սաստիկ ցաւերու ազդեցութեան տակ:

Երբ ցաւերս մեղմացան, շարունակեցի ուսուցչական պարտականութիւններս, միշտ յիշելով ցաւերս եւ ոտքիս կոճը դառնալու դէպքը:

Դպրոցական տարեշրջանը վերջացաւ յաջողութեամբ եւ պատշաճ ամսվերջի հանդէսով, գոհ ձգելով թաղականութիւնը եւ աշակերտութեան ծնողները:

Յաջորդ տարեշրջանին, թաղականութեան անդամները մինչեւ տունս եկան՝ խնդրելով կրկին ստանձնել Նուպարեան վարժարանի տնօրէնութիւնը: Ես չկրցայ ընդառաջել իրենց խնդրանքներուն, միշտ նկատի ունենալով, որ 150 սուրիական ոսկի ամսականով ես ինչպէ՞ս պիտի ամուսնանամ եւ տուն-տեղ ըլլամ:

Այնուհետեւ, կրկին գրաշարութեան վերադարձայ: Սակայն ամէն անգամ, որ փոսի մը վրայ կոխէի, ոտքիս կոճը կը դառնար եւ ահուելի կը ցաւէր կրկին: Դիմեցինք Հալէպի ոսկրաբոյժ Ապու Ալիին, Ղազարի տղոց եւ ուրիշներուն, որոնք իրենց գիտութիւնը ի գործ դրին, սակայն միշտ երբ անգիտակցաբար փոսի մը վրայ կոխէի, նոյն ճակատագիրը ինծի կը սպասէր, մինչեւ որ փորձառու բարեկամ մը ինծի յանձնարարեց. «Կոճին երկու երեսներուն լաւիսա փակցո՛ւր եւ ձգէ՛, որ ինքնիրեն ելլէ»:

Ուրեմն, փակցուած լաւիսան զօրացուց թուլցած մկանները եւ մինչեւ այսօր՝ շուրջ 57 տարիներէ ի վեր հեռու եմ այդ փորձանքէն եւ ցաւէն:

Հարցո՛ւր փորձառուին, որ քեզի օգտակար կրնայ դառնալ բժիշկէն աւելի:



Երեւան, խումբ մը գրագէտներ...

Ձախէն աջ՝ Մարգար Շարապիսանեան, բանաստեղծ, գրագէտ, հրապարակագիր Թորոս Թորանեան, բանաստեղծ Մանուէլ Քեօսէեան, հայրենի արձակագիր Արշակ եւ Գրիգոր Հոթոյեան

## ՉՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մանկութենէս շատ կը սիրէի ձուկ ուտել, սակայն, դժբախտաբար, տարին մէկ անգամ, Աստուածայայտնութեան՝ Սուրբ Ծննդեան տօնին առիթով մեր տօնական սեղանը կը ճոխանար Սեւ Ձուկով, որուն մորթը կեղուելէն ետք կը տապկուէր եւ կ'ուտուէր բացառիկ ախորժակով: Հալէպի մէջ զանազան կանաչեղէններ, պտուղներ, մածուն եւ պանրեղէններ, մսեղէններ, համեմներ եւ մանաւանդ ձկնեղէններ կը ծախուէին ձիտէյտէ կոչուող շուկային մէջ: Հայրս, ինչպէս նաեւ բազմաթիւ հայ ընտանիքներ, անպայման իրենց Ս. Ծննդեան սեղանները կը զարդարէին Սեւ Ձուկով: Սակայն, ճիւղը Շուղուրի մօտ գտնուող լիճը, պետական այլ ծրագիրներու գործածուելու նպատակով, չորցուեցաւ եւ մենք զրկուեցանք այդ համեղ ձուկը ուտելէն, որովհետեւ Սեւ Ձուկը կը բուծանուէր այդ լիճին մէջ:

1952-ին, երբ նշանուեցայ Օրդ. Շաքէ Տէրտէրեանի հետ, անոր հայրը, որ կը կոչուէր Շօֆէր Վարդան, բեռնակառք ինքնաշարժով կ'աշխատէր Հալէպ-Լաթաքիա գիծին վրայ եւ առնուազն շաբաթը մէկ անգամ Լաթաքիայէն կը բերէր զանազան տեսակի ձուկեր՝ գլխաւորութեամբ Սուլթան Իպրահիմ տեսակի, եւ այդ ձուկերը մաքրելու գործը կը ստանձնէին նշանածս, ապագային՝ կինս եւ իր քոյրը՝ Նըւարդը, ու տապկուելէ ետք փառաւորապէս կ'ուտէինք:

Տարիներ ետք, համով-հոտով ձուկ ուտելու բախտը ինծի ժրպտեցաւ, այս անգամ երբ իմ եւ Շաքէին ամուսնութեան կնքամայրը՝ Մարգրիտ Զօրիկեանը ամուսնացաւ Արշակ Տանակէօզեանի հետ:

Արշակ ամէն շաբաթ ձկնորսութեան կ'երթար եւ կը վերադառնար տեսակաւոր ձուկերով: Մեր պսակի կնքամայրը՝ Մարգրիտ, այդ ձուկերը կը մաքրէր, մէկ մասը փուռին մէջ կ'եփէր, մնացեալը կը տապկէր եւ ես, բախտաւորս, ամէն շաբաթ այդ համով-հոտով ձուկերը, չիյ ֆեօֆթայով եւ գաւաթ մը օղիով ուտելով՝ հաճելի ընթրիք մը կ'անցընէիք, եւ այս՝ մինչեւ 1975 Գանատա հաստատուելիս:

\*  
\*  
\*

Հալէպի «Էլ Շարք» («Արեւելք») գարեջուրի գործարանին գարեջուրը շիշերու մէջ լեցնելու բաժնին մեքենական պատասխանատուն էր արմատներով հռոմկլացի Սարգիս Հինտոյեանը, բարձրահասակ (իրեն հետ քալելու կը զգուշանայի), ամրակազմ, քաջ, յանդուգն, ընկերասէր եւ ազնիւ հայորդի մը, որ շատ կը սիրէր որսորդութիւնը, մանաւանդ՝ ձկնորսութիւնը:



Գարեջուրի գործարանի մալթերի (խաշուած, չորցած գարի) բաժնին չորրորդ յարկին մէջ թակարդ մը լարած էր եւ օրական 50-60 եւ աւելի ճնճողուկներ կու գային գարի ուտելու եւ հոն, թակարդին մէջի գարիները ուտելու համար թակարդ մտնելով, կը բանտարկու-ւէին: Մեր ընկեր Սարգիսը այդ բանտարկեալ ճնճողուկները հաւաքե-լով, գործարանի իրեն յատուկ գրասենեակ-ճաշարանին մէջ կը փե-տէր, կը մաքրէր եւ կը տապկէր, ապա մեզ հրաւիրելով՝ կը ճաշակէինք այդ համեղ ճնճողուկները:

Ինչպէս ըսի, մեր գործընկեր Սարգիսը միշտ ձկնորսութեան կ'եր-թար եւ բերած ձուկերէն մեզի ալ բաժին կը հանէր:

Օր մը, գործարանի մեքենական բաժնի պատասխանատու Յակոբ Ասատուրեան, խմորումի բաժնի պատասխանատու Գրիգոր Փամկոչ-եան, ելեկտրական բաժնի պատասխանատու Գրիգոր Հոթոյեան եւ գարեջուրի շիշերու լեցուելու բաժնի պատասխանատու Սարգիս Հին-տոյեան, Սարգիսին սենեակին մէջ համեղ ճնճողուկներ ուտելէ ետք, երբ խօսակցութեան նիւթ դարձաւ ձուկ ուտելու եւ ձուկ որսալու մա-սին, Սարգիս առաջարկեց օթօ մը վարձել եւ միասին ձկնորսութեան երթալ Հալէպի հիւսիս-արեւելքը, Պապ գիւղաքաղաքէն անցնելով եւ Մոսմպուճ գիւղաքաղաքին մօտ գտնուող Սաճուր գետը, ուր առատ եւ համեղ ձուկեր ազատօրէն կը լողան այդ գետին մէջ:

Դէպի Սաճուր երթալու թուական որոշուեցաւ Յունիս 1965-ը:

Երբ երթալու օրը որոշուեցաւ, օթօ մը վարձեցինք, ապահովե-ցինք բարձր մը, ձուկերը տապկելու սան մը, սալաթացուներ (լեմոն, լոլիկ, վարունգ, ազատքեղ, համեմներ), անշուշտ լողալու լողագգեստ եւ շիշ մը օղի:

Արեւը ծագելուն հետ ճամբայ ելանք՝ երգելով, խնդալով եւ աղօ-թելով, վայելելով բնութեան գեղեցկութիւնները:

Հասանք Պապ գիւղաքաղաքը: Անօթեցած էինք: Խանութէ մը գնեցինք խմորեղէն, քահֆէ եւ սահլապ: Թեթեւ եւ հաճելի նախաճաշ մը ետք, երեսնիս խաչակնքելով ճամբայ ելանք, շարունակելով հաճե-լի խօսակցութիւնները եւ մեզ սպասող ձուկերու տեսակները երագե-լով:

Փոքր գիւղի մը քովէն երբ կ'անցնէինք, մեր օթոյին մօտեցաւ ա-րաբ պատանի մը՝ մեզի հրամցնելով փառարիկով (տհաս եւ թթու սա-լոր) լեցուն զամբիւղ մը: Պահանջուած փոխարժէքը վճարելէ ետք, շարունակեցինք մեր ճամբան:

Ճանարիկ ուտել կը սիրէի: Անհամբերութեամբ սկսայ ուտել կէս թթու, բայց համեղ սալորները, չղիմանալով անոնց հաճելի տեսքին եւ գեղեցկութեան:

Վերջապէս հասանք գետեզերք եւ մեր առարկաները գետեզելէ եւ լողագգեստները հագուելէ ետք, պատրաստուեցանք գետ իջնելու, սպասելով Սարգիսին ձեռքին գտնուող տիւնամիթին (վառօղ), որուն



կրակ տալով գետը պիտի նետէր Սարգիսը: Սարգիս թէեւ գիտէր, որ ձուկ բռնելու համար տիւնամիթ գործածելը պետականօրէն արգելուած է եւ հրամանին չենթարկուողները ենթակայ են պատիժի, սակայն Սարգիս վախ չունէր եւ կը պատրաստուէր տիւնամիթը նետելու:

Գետեզերքը, մեր գտնուած տեղէն ջուրի հոսանքին հակառակ ուղղութեամբ քալելով՝ ձեռքի տիւնամիթին կրակ տուաւ եւ գետը նետեց: Զօրաւոր պայթումին յաջորդեց հարիւրաւոր ձուկերու կոնակի վրայ պռուկած դէպի ջուրին երեսը գալը: Տղաքը սկսան հաւաքել անշունչ դէպի իրենց եկող ձուկերը:

Գետին մէջ, մինչեւ մէջքս ջուրով ծածկուած, կը փորձէի գետի հոսանքն ի վար եկող ձուկերը բռնել, երբ ստամոքսի ահռելի սրտխառնուք զգացի եւ գլխու պտոյտ: Կը փորձէի հաւասարակշռութիւնս պահել, սակայն՝ ապարդիւն: Ուժերս հաւաքելով յառաջացայ դէպի գետեզերք եւ գետին ինկայ: Ընկերներս մեծ քանակութեամբ տեսակաւոր ձուկեր բռնած ըլլալով՝ գետէն դուրս ելան, մտահոգուելով իմ առողջութեամբ:

Ճամբան խմած սախլապս եւ կերած սալորները ստամոքսիս մէջ իրարու հակառակ գալով, գետի ջուրին պաղուժեան հանդիպելով, ինծի սրտխառնուք եւ գլխապտոյտ պատճառած էին:

Որոշ ատեն պռուկած մնացի, պայքարելով զիս անհանգստացնող ցաւերուն դէմ: Տղաքը բարորը վառեցին եւ սկսան ձուկերը տապկել: Սալաքան պատրաստուելէ ետք, օղիի շիշը բացին եւ սկսան ուտել-խմել:

Ընկերներուս ստիպումով փորձեցի մասնակցիլ կերուխումին, սակայն անկարելի եղաւ պատառ մը բերանս դնել՝ վախնալով, որ կրնամ կրկին փսխել եւ աւելի անհանգստանալ:

Ուրախութեամբ ծրագրուած ընկերական ձկնորսութիւնը ինծի համար ցաւալի վերջաւորութիւն ունեցաւ եւ ընկերներուս ալ տխրութիւն պատճառեց:

\* \* \*

Գետեզերքին թարմ ձուկ ուտելու եւ բնութեան գեղեցկութիւնը վայելելու երազը խանգարուելէ ետք, մեր առարկաները հաւաքեցինք եւ ինքնաշարժին մէջ դնելէ ետք վերադարձի ճամբան բռնեցինք:

Մեր վերադարձը մինչեւ Պապ շատ լաւ անցաւ: Տղաքը իջան եւ Պապի շուկայէն ծխախոտ գնեցին եւ ինքնաշարժի վարիչին քառորդ ժամ հանգստութիւն տալէ ետք, շարունակեցինք մեր ճամբորդութիւնը:

Մեր բոլորին տրամադրութիւնը սկսած էր բարելաւուիլ իմ հանգրստութեանս պատճառով եւ յանկարծ մեր ինքնաշարժը անհաճոյ ձայներ հանելով կեցաւ: Զորի մը մէջ էինք, ինքնաշարժը կը մերժէր բարձրանալ զառիվերէն եւ հազիւ երկու քայլ բարձրացած՝ կը մարէր:

ինքնաշարժին վարիչը ամէն անգամ կը բանար մոթորին կափարիչը, բաներ մը կը խառնէր եւ կափարիչը գոցելով կը փորձէր ինքնաշարժը աշխատցնել, սակայն մոթորը կը մերժէր աշխատիլ:

Սկսած էինք մտահոգուիլ: Գրեթէ երթեւեկութիւն չունեցող ձորին մէջ ի՞նչ պիտի ըլլար մեր վիճակը, եթէ մեր ինքնաշարժը չաշխատի եւ Հոն գիշերելու անապահով վայր մը ըլլալը երեւակայելով՝ վախը մտած էր մեր սիրտերուն մէջ:

Ինքնաշարժը 1950-ի «Շեվրօլէ» մակնիշով բաւական յոգնած ինքնաշարժ մըն էր, վարձուած էր գարեջուրի մեր ընկերութեան գործաւորներէն Իլիաս անունով անձի մը կողմէ, որ ձկնորսութիւնը շատ կը սիրէր եւ համաձայնած էր ինքնաշարժ մը վարձել եւ մեզի ընկերակցիլ, մեզ տանիլ-բերելու համար Սաճուրի որսորդութեան:

Մեր ինքնաշարժի վարիչ Իլիասի աշխատանքները ինքնաշարժը աշխատցնելու համար՝ որեւէ յաջողութիւն չունեցան: Իլիաս ջղային նոպաներ կ'անցընէր, մանաւանդ մեր կատարած դիտողութիւններուն չդիմանալով, կատաղի եւ անհանդուրժող երեւոյթ մը կը ներկայացնէր՝ անյուսութեան տագնապներ ապրելով:

Իլիաս իր միջոցներով արդիւնքի մը չհասնելով՝ սկսաւ հայհոյել: Նախ իր բախտին, ինքնաշարժի տիրոջ եւ, մեղայ-մեղայ Աստուծոյ, Քրիստոսին:

Մեր դիտողութիւնները եւ բարկութիւնը փոխանցելով Իլիասին, ըսինք իրեն.

— Ամօթ չէ՞ քեզի, որպէս քրիստոնեայ անձ, Աստուծոյ եւ Քրիստոսի կը հայհոյես, որոնք ի՞նչ կապ ունին ինքնաշարժին չաշխատելուն հետ: Զե՞ս կարծեր, որ Աստուած եւ Յիսուս լսելով այս հայհոյանքներդ կրնան քեզ պատժել եւ պատճառ դառնալ, որ քու հայհոյանքներուդ հետեւանքով այս անապատային ձորին մէջ վայրի կենդանիներու կեր դառնանք: Շո՛ւտ, զղջում ներկայացուր եւ ծունկի գալով աղօթէ, որ քեզի օգնութեան հասնին եւ ինքնաշարժը աշխատցընելու քու ջանքերդ արդիւնաւորուին:

Իլիաս ազդուելով մեր խօսքերէն եւ վախնալով աստուածային պատիժէն, ծունկի եկաւ եւ լալագին աղօթեց, զղջալով իր կատարած հայհոյանքներուն համար:

Եւ աստուածային հրաշքով ինքնաշարժը աշխատեցաւ՝ երբ Իլիաս վերջին փորձ մը կը կատարէր, քարպիւրաթէօրը մաքրելէ ետք:

Ընկերներուս այնքան սիրած ձկնորսութիւնը արկածախնդրական ելք մը ունենալէ ետք, ապահով վերադարձով վերջ գտաւ, ես ալ առողջապահական դաս մը սորվեցայ, որպէսզի այսուհետեւ սահլէպ խմելէ ետք չհամարձակիմ թթու սալոր ուտել եւ մանաւանդ՝ ուտելով գետի պաղ ջուրերուն մէջ ձկնորսութեամբ չգբաղիմ, լեզի եւ ցաւալի հետեւանքներու չհանդիպելու համար:

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԵՐՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ

Փռապան Դաւիթի բազմամյա ընտանիքը մինչեւ 1965 թուականը կը բնակէր Հալէպի Սոքաթ Արպըին թաղամասի՝ մեծամասնութեամբ մահմետական բնակչութիւն ունեցող թաղին մէջ: Իրենք միակ հայ ընտանիքն էին, որ այդ թաղը կը բնակէին շուրջ տասը տարիէ ի վեր, նկատի ունենալով, որ ուրիշ շրջաններու տուներուն հետ բաղդատած՝ տուներն վարձքը բաւական աժան էր:

Տէր եւ Տիկին Դաւիթ եւ Ազնիւ Արշակեաններ, որոնք ամուսնացած էին 1939-ին, տարիներու թաւալումով ունեցած էին 6 մանչ եւ 2 աղջիկ զաւակներ, որոնց ապրուստը մեծ դժուարութեամբ կը հայթայթէր Պրն. Դաւիթ, որ որպէս փռապան եւ եփող, օրական 12 ժամ աշխատելով, հազիւ անօթի չմնալու չափ կեանք մը կ'ապահովէր, ան ալ՝ յաճախորդներուն կողմէ նուիրուած մասաջօթ (լահմաճուն) եւ այլ ուտելիքները տուն բերելով եւ ութը զաւակները կշտացնել փորձելով:

Պրն. Արշակեան թէեւ ծոյլ չէր, սակայն օդի խմելու մոլութիւն ունէր: Որպէս հացթուխ՝ իր ստացած ռոճիկին մէկ մասը կը ծախսէր իր թոքերը այրող օդիին վրայ, նկատի ունենալով, որ ան օդին կը խմէր առանց օգնական ուտելիքի: Եւ այսպէս՝ ամբողջ կեանքին ընթացքին:

Տիկին Ազնիւ շատ աստուածավախ, կրօնասէր եւ զաւակներուն համար ամէն տեսակ զոհողութիւններ յանձն առնող մայր մըն էր, եւ երբ իր ամուսնոյն գինովութեան աստիճան խմած տուն դալուն դիտողութիւն ընէր, կ'արժանանար անոր անխիղճ հարուածներուն եւ հայհոյութիւններուն:

Արշակեաններու զաւակները կը յաճախէին իրենց տան մօտիկ Ուսումնասիրաց վարժարանը, սակայն իրենց ընտանեկան կացութիւնը պատճառ կ'ըլլար, որ անոնք իրենց դասերուն մէջ կադան եւ կըրկենն իրենց դասարանները:

Մեծ տղան՝ Աբրահամը, ինքնաբերաբար դպրոցէն հեռացաւ եւ իր բախտը փորձեց աշակերտելով կարգ մը արհեստներու: Անոր յաջորդեց երկրորդ մանչը՝ Սահակը, որ հազիւ գործ գտած՝ ամուսնացաւ եւ իր ընտանեկան բոյնը կազմեց: Խաչիկը, երրորդ մանչը, յաջորդեց Սահակին՝ արհեստի երթալով: Մանչերէն Զօհրապը, Զաւէնը եւ Սարգիսը, ինչպէս նաեւ աղջիկները՝ Վեհանոյշը եւ Մաքրուհին, շարունակեցին դպրոց յաճախել:

Պրն. Դաւիթի շահը, ինչպէս ըսինք, անբաւարար էր ընտանիքին հագուստներուն, ուտելիքներուն եւ դպրոցական ծախսերուն, իսկ աշ-

խատող տղաքը չէին մտածեր ընտանիքին օգնել, եւ տանտէրը սպառնաց զիրենք դատարանի միջոցաւ տունէն դուրս դնել:

Այսպիսի դժնդակ կացութիւն մէջ գտնուելով, Արշակեան ընտանիքը կ'ապրէր անստուգութեան եւ թշուառութեան մէջ, բայց Պրն. Դաւիթ չէր կրնար բաժնուիլ օղիի շիշէն, կարծես մօրը կաթը ըլլար:

Տիկին Ազնիւ անճրկած դիմեց եղբայրներուն, որպէսզի օգնութեան հասնին իրեն, վճարելով տունի վարձքէն պարտք մնացած չորս ամսականները եւ նկատելով, որ Կաղանդն ու Ս. Ծնունդը կը մօտենան, որոշ գումար մըն ալ պարտքի տան իրեն, Ամանորը եւ Ս. Ծնունդը ըստ հայկական սովորութիւններու տօնելու համար:

Տիկին Ազնիւին եղբայրները, որոնք թէեւ ունեւորներ չէին, սակայն իրենց քրոջ եւ զաւակներուն օժանդակելը իրենց աւագ պարտականութիւնը նկատելով, հրեշտակային արագութեամբ հասան իրենց քրոջ կարիքներուն եւ յատուկ նուիրատուութիւնով ուրախացուցին քրոջ զաւակները:

Արշակեաններու կեանքը այս ձեւով չէր կրնար շարունակուիլ: Տիկին Ազնիւին եղբայրները չէին կրնար միշտ օգնութեան հասնիլ իրենց:

Պէտք էր մտածել լուծում մը գտնել՝ պատուաւոր կեանք մը ապրելու համար:

Այդ լուծումը կարծես հրաշքով իրականացաւ: 1965-ին, Հալէպի շուրջ հարիւր ընտանիքներ բախտը ունեցան Հայաստան ներգաղթելու: Այդ խումբին մաս կազմեց Արշակեան ընտանիքը:

Արշակեաններու Հայաստան հասնելով, նախ տեղաւորուեցան Հրազդան քաղաքը, ապա՝ Չարենցաւան քաղաքը, ուր իրենց տրուեցաւ սեփական տուն եւ գործ:

Պրն. Դաւիթ ստանձնեց հացթուխի պաշտօն Չարենցաւանի մէջ: Շատ նշանաւոր դարձաւ որպէս վարպետ հացթուխ: Թերթերը գնահատանքով անդրադարձան անոր աշխատասիրութեան: Տիկին Ազնիւ տնտեսի պաշտօն ստանձնեց քաղաքի վարժարանին մէջ: Մեծ տղաքը սկսան աշխատիլ գործարաններու մէջ, իսկ 16-էն վար եղողները դըպրոց սկսան յաճախել:

Ուրախ էին եւ երջանիկ ապրելով հայրենիքի մէջ, ուր իրենց համար միշտ գործ կար, մանաւանդ իրենք քաղաքական հարցերով չէին զբաղէր եւ կուսակցական ըլլալու պարտաւորութեան տակ չէին:

Դժբախտաբար, բոլորին աշխատավարձերը չէին բաւեր իրենց ապրուստին: Ստիպուած, ինչպէս շատեր կ'ընէին, իրենք ալ դիմեցին փափախի (գողութիւն եւ անարդար վաստակի միջոցներ):

Հացթուխ Դաւիթ, Հայաստան ներգաղթելով, իրեն հետ տարաւ նաեւ օղի խմելու մոլութիւնը, օրինակ դառնալով իր անչափահաս զաւակներուն, որոնք իրենց հօրը նման սկսան ծխախոտ եւ օղի գոր-

ծածել, իրենց եկամուտին կարեւոր մէկ մասը մսխելով այդ մոլու-  
թիւններուն վրայ:

Տարիներ անցան նոյնանման սովորութիւններով: Ընտանիքը  
չատ հեռու էր բարեկեցութենէն: Ծախսերը՝ շատ, եկամուտը՝ քիչ: Եւ  
պատահեցաւ անխուսափելին: Պրն. Դաւիթ ծանրօրէն հիւանդացաւ:  
Անոր լեարդը, ոգելից ըմպելիներու ազդեցութեան հետեւանքով, սկը-  
սած էր իր պաշտօնը չկատարել, եւ բժշկական զանազան տեսակի  
դարմանումները չկրցան զինք փրկել: Պրն. Դաւիթ մեռաւ՝ որբ ձգե-  
լով իր զաւակները:

Արշակեան ընտանիքի տնտեսական վիճակը աւելի վատթարա-  
ցաւ, ստիպելով Տիկին Ազնիւրը դիմելու իր եղբայրներուն, որոնք կը  
գտնուէին Գանատա եւ Միացեալ Նահանգներ, որպէսզի նիւթապէս  
օգնութեան հասնին իրենց:

Տիկին Ազնիւրին եղբայրներէն երէցը, Հայաստանի վերանկախա-  
ցումէն երկու տարի վերջ, Հայաստան մեկնեցաւ: Ականատես դառ-  
նալով իր քրոջ եւ զաւակներուն թշուառութեան, որոշեց Գանատա  
վերադարձին Գանատա եւ Միացեալ Նահանգներ ապրող իր եղբայր-  
ներուն հետ դիմել առ որ անկ է՝ իրենց քրոջ ընտանիքը Լոս Անճելըս  
բերելու համար:

Տիկին Ազնիւրին եղբայրներուն եւ անոնց զաւակներուն նիւթա-  
կան ծախսերով, կարելի եղաւ իրենց քոյրը, երեք մանչ զաւակները՝  
իրենց ընտանիքներով եւ երէց աղջիկը՝ Վեհանոյշը իր ընտանիքով,  
կրցան Լոս Անճելըս բերել տալ:

Տիկին Ազնիւրին Լոս Անճելըսի եղբայրը անոնց համար տուն  
վարձեց, կահաւորեց եւ նիւթական որոշ օգնութիւն ընելով՝ ապահո-  
վեց անոնց տան վարձքը եւ ապրուստը, մինչեւ որ երեք տղաքը՝ Սա-  
հակ, Խաչիկ եւ Աբրահամ կարենան գործի սկսիլ եւ ապրեցնել իրենց  
ընտանիքները:

Լոս Անճելըս հաստատուած հայաստանցի չորս ընտանիքներէն  
Վեհանոյշն ու իր ամուսինը շատ չանցած գործ գտան եւ իր եղբայր-  
ներէն անկախ կեանք սկսան:

Իսկ տղաքը, անգլերէն չգիտնալնին պատճառաբանելով, քանի  
մը ամիս անգործ թափառեցան Լոս Անճելըսի փողոցները: Բարեբախ-  
տաբար իրենց կիները գործ գտան հայ գործարարներու մօտ, եւ այդ  
ձեւով կրցան գոնէ հացի դրամ վաստակիլ եւ իրենց ամուսիններուն  
ծխախոտի եւ օդիի դրամ հայթայթել: Հակառակ պարագային՝ կին ծե-  
ծելը շատ լաւ սորված էին իրենց հօրմէն:

Տիկին Ազնիւրը կը մնար իր փոքր տղուն՝ Խաչիկին ընտանիքին  
հետ, մնացեալները ունէին իրենց բնակարանները:

Տղոց այս տարօրինակ ընթացքը իրենց հետ բերած էին Հայաս-  
տանէն՝ ծովուծիւն, փափախ, խմիչքի մոլուծիւն, անկարգութիւն եւ

իրենց կրիներուն եւ զաւակներուն հանդէպ անխղճութիւն եւ նոյնիսկ վայրագութիւն:

Տիկին Ազնիւի խրատները, թելադրութիւնները եւ դիտողութիւնները որեւէ բարերար արդիւնք չէին տար: Աստուածամախ եւ կրօնասէր կին մը ըլլալով՝ միշտ կ'աղօթէր, որ Աստուած իր զաւակներուն շնորհք տայ, որպէսզի որպէս իրական, խղճամիտ եւ պատուախնդիր զաւակ եւ հայր, անոնք ձերբազատուէին իրենց գարշելի մոլութիւններէն եւ դառնային պարկեշտ ընտանիքի հայրեր:

Ան իր զաւակները կանչելով անոնց կ'ըսէր.— «Զաւակներս, ձեր հօր մոլութիւններուն եւ արկածալից կեանքին հետեւանքով ես եւ դուք թշուառութեան մէջ ապրեցանք: Հայաստան ներգաղթեցինք, սակայն հոն ալ կեանքերնիս մնաց անմխիթար վիճակի մէջ: Ձեր հօր օրինակին մի՛ հետեւէք, զօրաւոր կամքով հրաժարեցէ՛ք ձեր հօրմէն ժառանգած մոլութիւններէն եւ իմ կեանքիս վերջալոյսին՝ աշխատեցէք զիս երջանկացնել»:

Բայց ի՞նչ օգուտ: Գործի կը սկսէին իրենց մասնագիտութեան համեմատ, սակայն յաճախակի բացակայութիւններու պատճառով գործէ կը հեռացուէին:

Ինքնաշարժ քշելու արտօնագիր առնելէ ետք, Խաչիկ գինով վիճակով ինքնաշարժ քշելուն եւ արկած ունենալուն պատճառով՝ արտօնագիրը առկախուեցաւ պետութեան կողմէ: Բայց Խաչիկ երբ գինովնար, կը կարծէր, որ արտօնագիրի պէտք չունի: Կնոջ խօսքը մտիկ չընելով, եղբայրներուն տունը այցելութեան կ'երթար եւ հոն ալ եղբայրներուն հետ կը շարունակէր խմել իր լեարդը կըծող օղին: Վերադարձին, անօրէն քշելով, ոստիկանութեան ուշադրութեան կ'արժանանար եւ առանց արտօնագրի քշելու յանցանքով բանտ կը տարուէր:

Խաչիկ բանտէն ելլելէ ետք, շրջան մը կը խելօքնար: Երդում կ'ընէր այլեւս չիմել: Սակայն, քանի մը ամիս ետք, կրկին առանց արտօնութեան եւ գինով քշելով՝ ճամբան մոլորելով ու ճամբու եզրին տունի մը զարնուելով, կրկին բանտ կը տարուի, աւելի ծանր պատիժով:

Անգգամբ բանտէն լուր կը ղրկէր իր կնոջ եւ ծխախոտի դրամ կը պահանջէր երեք զաւակներու տէր կնոջմէն, որ գիշերը ցերեկին խառնելով եւ կար կարելով՝ հագիւ կը հասնէր տունի վարձքին եւ իրենց ապրուստին:

Խաչիկին երկու երէց եղբայրները իրմէ լաւ չէին: Սահակ երբեմն կ'աշխատէր, հագիւ ապրուստը ապահոված՝ կը ծուլանար, եւ երբ կինը իրեն դիտողութիւն կ'ընէր, ծեծի կ'արժանանար: Այդ ծեծերուն ընթացքին կնոջ լացուկոծին ձայնը դրացիներուն կը հասնէր եւ անոնք մեղքնալով խեղճ կնոջ՝ ոստիկանութեան լուր կու տային, որոնք Սահակը ձերբակալելով բանտ կը տանէին:

Նոյն բնաւորութեան տէր էր նաեւ Աբրահամ: Երբ եղբայրները իրենց յատուկ տեղերը ունեցան Լոս Անճելըսի բանտին մէջ, դժբախտաբար նոյնպէս հոն բանտարկուած կը մնային 14.000 հայ երիտասարդներ, մեծամասնութեամբ Հայաստանէն արտագաղթած:

Արշակեան ընտանիքի վեց մանչերէն՝ Զօհրայ, տակաւին կ'ապրի Հայաստանի մէջ, Սարգիս Հալէպ ամուսնացած ըլլալով՝ Հայաստան չներգաղթեց, իսկ Զաւէն ներկայիս կ'ապրի Ռուսիա՝ եղբայրներուն օրինակով:

Պրն. Դաւիթ Արշակեանի զաւակները, փոխանակ իրենց մօրը, քեռիներուն եւ հօրեղբայրներուն օրինակին հետեւելով պատուաւոր կեանք մը ապրելու, հետեւեցան իրենց անխիղճ հօրը օրինակին՝ իրենց կեանքը փճացնելով բանտերուն մէջ:

Տիկին Ազնիւ, ի տես իր մանչ զաւակներէն Աբրահամին, Սահակին եւ Խաչիկին դժխեմ ու անպատուաբեր, հայ անունին եւ ազգականներուն արատ բերող կեանքին, տարիներու ընթացքին տկարացաւ իր մայրական սիրտը եւ կաթուածահար հոգին աւանդեց, անիծելով իր դժբախտ եւ տառապալից կեանքը:



Զախէն աջ՝ տնտեսագիտութեան դոկտ. փրոֆեսոր Թաթուլ Մանասէրեան, Գերաշնորհ Տէր Տաթեւ Ս. Արք. Սարգիսեան եւ Գրիգոր Հոթոյեան, Ս. էջմիածին՝ 1997-ին:

## ԵՐԱԽՏԱԳԷՏ ՀԱՅՐ

Հալէպ, 9 Մայիս 1945, ամէնուրեք զարնանային բազմերանգ եւ հրաշագեղ գեղեցկութիւն: Համաշխարհային Երկրորդ Պատերազմը վերջ գտած է՝ անպարտելի կարծուած գերմանական եւ ճաբոնական բանակներու պարտութեամբ:

Պատերազմի մղձաւանջը եւ սարսափները ցմրուր քամած երկիրները աշխարհի չորս ծագերուն կը տօնախմբէին պատերազմի աւարտը եւ դաշնակից երկիրներու յաղթանակը:

Այդ օր, հայ ժողովուրդը, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, որ իր հարիւր հազարաւոր երիտասարդ որդիներու պատերազմի մասնակցութեամբ իր արդար բաժինը բերած էր պատերազմի յաղթական աւարտին, ամէնուրեք կը տօնախմբէր յաղթութեան օրը:

Բարեգէպ գուզադիպութեամբ, յաղթանակի օրը կը գուզադիպէր Համբարձման տօնին եւ Հալէպի Նոր Գիւղ թաղամասի հայութիւնը, ինչպէս ամէն տարի, Համբարձումը կը տօնէր «Պոսթան Փաշա» կոչուող պարտէզին պտղատու ծառերու շուքին տակ:

Հալէպ ծնած ու հայաբոյր շրջանակներու մէջ մեծցած, հայեցի դաստիարակութիւն ստացած Արմէն, այդ օրերուն կը ծառայէր Ֆրանսական բանակին: Արդէն երկու տարի անցած էր իր զինուորագրութենէն եւ այդ շրջանին, հետեւելով բանակի թնդանօթածգային բաժնի զանազան դասընթացքներուն, ստացած էր ենթասպայի աստիճան եւ պատասխանատուն էր ամերիկեան 75 մմ. թնդանօթի անձնակազմին:

Արմէն ուրախ է այդ օր: Պատերազմը վերջացած էր եւ այդ ուրախութիւնը իր ծնողքին եւ բարեկամներուն հետ բաժնելու համար զինուորական «ճիփ»-ով, որուն վրայ կը ծածանէր ֆրանսական դրօշը, հասաւ Համբարձման տօնախմբութեան վայրը: Գտաւ իր ընտանիքը, բարեկամները եւ ընկերները ու մանաւանդ Մարին, որուն կը համակրէր: Ամբողջ օրը անցաւ հաճելի եւ հայաշունչ մթնոլորտի մէջ:

Ներկաները, պարտէզի զանազան բաժիններուն մէջ, նուազով, պարելով եւ երգելով կը գուլարձանային, իսկ կարգ մը չարածճի փոքրիկներ ծիրանի ծառերուն վնաս կը պատճառէին:

Համբարձման տօնին աւանդութիւն դարձած էր վիճակ սարքելը: 40 տուներէ եւ դաշտերէ հաւաքուած ծաղիկները, ջուրով լեցուն կաթնայի մէջ գիշեր մը պահելով, ամէն անձի համար բանաստեղծական քառեակ մը արտասանելով, ենթակային համար կաթսայէն դուրս կը հանէին ձգուած առարկան, որ անձի մը կը պատկանէր:



Շատեր ուրախացան իրենց բախտին կարգացուած կամ ըսուած քառեակի բովանդակութենէն, որ ընդհանրապէս սիրային բովանդակութիւն կ'ունենար: Սակայն Արմէնին համակրած աղջկան՝ Մարիին նուիրուած քառեակը շատ հաճելի չթուեցաւ իրեն: Կրկին կարգալտուաւ.—

Բաղիս դուռը բաց ա,  
Ոտներս շաղով թաց ա,  
Եարիցս հեռացել եմ,  
Աչքերս լիքը լաց ա:

Արմէն այդ օր իր հայրենակիցներուն եւ ընտանիքին հետ վայելեց Համբարձման տօնը, եւ երեկոյեան մեկնեցաւ իր գօրակայանը՝ Հալէպի Արղուպ թաղամասին մօտ գտնուող թրքական գօրանոցը:

Համաշխարհային Երկրորդ Պատերազմի դադրեցման առթիւ ըստեղծուած ուրախութիւնը շուտով խանգարուեցաւ՝ Սուրիոյ վրայ Ֆրանսական հոգատարութեան դէմ սկսած սուրիական յեղափոխութեամբ:

Մայիսի կէսերուն, Արմէն, երբ քաղաքացիական զգեստով քաղաքը կը շրջագայէր, ականատես եղաւ քաղաքային պատերազմական վիճակին: Սուրիացի յեղափոխականներ կրակ կը բանային Ֆրանսական հաստատութիւններու եւ զինուորներու վրայ:

Ձանազան ազգութիւններու պատկանող եւ Ֆրանսական բանակին ծառայող զինուորներ, որոնք Արմէնին պէս արձակուրդով քաղաք իջած էին՝ սակայն զինուորական զգեստով, իրենց կեանքը փրկելու համար սպաստան կը փնտռէին, հասնելու համար իրենց գօրանոցները:

Արմէն քաղաքի փողոցներէն հետիոտն անցնելով, տրամութեամբ ականատես կ'ըլլար Ֆրանսական բանակին ծառայող Ֆրանսացի, սենեկալցի, մարտքցի, ալճերիացի եւ այլ ազգութիւններու պատկանող սպաննուած զինուորներու, որոնց դիակները արիւնլուալ ձգուած էին ճամբաներու վրայ:

Սպասելու եւ տնտնալու ժամանակը չէր: Արմէն անմիջապէս անձապարանքով հասաւ տուն, որ կը գտնուէր Արղուպ թաղամասին մէջ, եւ զինուորական տարագը հագուելով, ուշադրութեամբ, արագ քայլերով շունչը առաւ զինուորական իր գօրամասը՝ թրքական գօրանոց:

Ֆրանսական ուժերը ինքնապաշտպանութեան դիմելով՝ փորձեցին ճգմել սկսուած անկախութեան շարժումը, սակայն չյաջողեցան: Ֆրանսական բանակի թնդանօթաձգային գօրագունդը կը բաղկանար 8 թնդանօթներէ, 4-ական թնդանօթներէ բաղկացած 4-րդ եւ 11-րդ գունդերէ, որոնք կը գտնուէին թրքական գօրանոցին մէջ, որ քաղա-

քին շատ մօտ ըլլալով՝ ենթակայ էր սուրիացիներու յարձակումներուն:

Յրանսական բանակի հրամանատարութիւնը, բանակի ապահովութեան եւ այլ ծրագրով, յարմար տեսաւ թնդանօթները փոխադրել Կարմիր զօրանոց, որ կը գտնուէր քաղաքի ծայրամասի բարձունքներուն վրայ: Եւ որպէսզի ճշմուի սկսած ըմբոստութիւնը, թնդանօթածիգներու հրամանատարութիւնը հրաման ստացաւ 8 թնդանօթներով ռմբակոծել թրքական զօրանոցէն մինչեւ նոր քաղաքապետարան գտնուող տարածութիւնը, ուր կը բնակէր ընդհանրապէս մահմետական բնակչութիւնը:

Ութը թնդանօթները զետեղուեցան գլխաւոր բարձունքին վրայ եւ քրօմանտան (հրամանատար) Միշալէ հրամայեց թնդանօթները ռմբակոծումի պատրաստ վիճակով պահել, սպասելով կրակելու հրահանգին:

Ութը թնդանօթներու եօթին հրամանատարները գործադրեցին ընդհանուր հրամանատարին հրահանգը: Ութերորդ թնդանօթի անձնակազմը լուռ կը մնար՝ հրամանատարին հրահանգը անտեսելով: Այդ թնդանօթին պատասխանատուն ենթասպայ Արմէն Յարութիւնեանն էր:

Բարձրագոյն հրամանատարութեան հրահանգին չենթարկուող ենթասպայ Արմէնին ընթացքը հասնելով ընդհանուր հրամանատարին, Արմէն կոչուեցաւ հրամանատարին մօտ՝ բացատրութիւն տալու իր աններելի կեցուածքին համար:

Արմէն իր արարքը արդարացնելու համար նախ հրամանատարին ներողամտութիւնը խնդրեց եւ ըսաւ.

— Մոն քրօմանտան, ես ծնած եւ մեծցած եմ Հալէպ քաղաքին մէջ: Այս երկիրը իմ ծննդավայրս, իմ երկրորդ հայրենիքս է եւ ես իմ ծննդավայրս, տունս չեմ կրնար ռմբակոծել: Չեմ կրնար սպաննել արաբ ազնիւ ժողովուրդը, որ 1915-ին թուրքիոյ կողմէ հայ ժողովուրդին գործադրուած ցեղասպանութենէն հրաշքով ազատած հայ խլիւսակներուն, հայ որբերուն ապաստան տուաւ, տէր կանգնեցաւ եւ որպէս սուրիացի՝ եղբայրական զգացումներով ապրեցաւ հայ ժողովուրդին հետ, թոյլ տալով որ ունենան իրենց եկեղեցիները, վարժարանները եւ ազգային այլազան հաստատութիւնները: Ես ինչպէ՞ս ապերախտ կրնամ գտնուիլ այսպիսի ազնուական եւ մարդասիրական զգացումներ ունեցող ազգի մը հանդէպ, որ այսօր կը մարտնչի իր երկրի անկախութեան եւ ազատութեան համար:

Յրանսական բանակի հրամանատարութեան կողմէ կատարուող հարցաքննութիւնները երկար տեւեցին, մինչ այդ անգլիական բանակները հրասայլերով շրջապատեցին Փրանսական բանակի հրետանիները եւ թոյլ չտուին, որ ռմբակոծումներ տեղի ունենան: Որովհետեւ, Համաշխարհային Պատերազմի սկզբնաւորութեան, Փրանսական

եւ սուրիական իշխանութիւնները համաձայնած էին, որ պատերազմի յաղթական աւարտին՝ ամբողջական անկախութիւն պիտի շնորհուի Սուրիոյ, եւ այդ համաձայնութիւնը երաշխաւորուած էր անգլիական կառավարութեան կողմէ:

Եւ քանի որ պատերազմի աւարտին ֆրանսական իշխանութիւնները իրենց խոստումը չէին յարգած եւ պատճառ դարձած արիւնահեղութեան, անգլիական բանակը պարտաւորուած միջամտեց, առաջքն առնելով նորանոր արիւնահեղութիւններու:

Ֆրանսական բանակի Սուրիայէն մեկնումէն ետք, ենթասպայ Արմէնին յանդուգն կեցուածքը մեծապէս գնահատուեցաւ սուրիական կառավարութեան եւ Ազգային Առաջնորդարանին կողմէ, եւ յատկապէս այդ օրերու Բերիոյ Թեմի Առաջնորդ Ջարեհ Եպիսկոպոսի (յետագային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս) կողմէ:

Հալէպի Առաջնորդ Ջարեհ Եպիսկոպոս, ֆրանսական բանակի հայ զինուորներուն այցելելով, յորդորեց եւ խնդրեց Հայ զինուորներէն, որ լքեն ֆրանսական բանակը եւ ծառայեն սուրիական բանակին:



Չախէն աջ՝ Գրիգոր Հոթոյեան, բանաստեղծ Մանուէլ Քեօսեան, բանաստեղծ Արտեմ Յարութիւնեան, Ֆրանսայէն բանաստեղծ Ռուբէն Մելիք, գրող, հրապարակագիր, դաստիարակ Մարգար Շարապիսանեան եւ գրագէտ Յակոբ Խաչիկեան՝ 2004-ին

## ԵՐԱՆԻ՝ ՉՏԵՍԱԾ ՀԱՒԱՏԱՅՈՂՆԵՐՈՒՆ

Արա Ապրիլեան, Հալէպի Քարէն Եփփէ ճեմարանը աւարտելէ ետք, չուզեց շարունակել իր ուսումը եւ հազիւ սկսած արհեստ մը սորվիլ՝ աշակերտելով Պոսթան-Քիւլլալ թաղամասին մէջ գտնուող վարպետ Տիրանին մեքենիստ արհեստանոցը, կանչուեցաւ պարտադիր զինուորութեան՝ սուրիական բանակին ծառայելու:

Արա, որպէս արաբական պաքալորիա ունեցող, դպրոցական շըրջանին մասնագիտացած էր արաբերէն լեզուին մէջ եւ երբեք դժուարութիւն չունեցաւ հետեւելու զինուորական դասընթացներու եւ տարին չլրացած՝ արդէն իսկ տիրացած էր «Նազիպ» (քսանապետ) աստիճանին, նախանձը շարժելով կարգ մը ձախողածներու, որոնք էջին կրցած յաջողիլ քննութիւններու ընթացքին:

Արա, որպէս ենթասպայ, իր կարելին կ'ընէր իր պաշտօնը արդարացնելու եւ որպէս հայ՝ լաւ անուն ձգելու բարձրաստիճան սպաներուն մօտ: Իր ստանձնած պարտականութիւններէն էին մարզել նորակոչ զինուորները զինուորական գիտելիքներով, զանազան զէնքերու գործածութիւնը ուսուցանել, զինուորական կարգապահութիւնը՝ սպաներուն բարեւելու զինուորական բարեւով եւ զէնքով բարեւելու արարողութիւն, ներգաշնակ քալելու վարժութիւն եւայլն:

Ամիսները կ'անցնէին զինուորական օրինաւոր կանոններով եւ ներգաշնակութեամբ, մինչեւ այն օրը, երբ պատահեցաւ անակնկալ յարձակում մը իր վրայ քանի մը ըմբոստ եւ հայատեաց զինուորներու կողմէ, որոնք մահակներով ծանրօրէն վիրաւորեցին զինք: Թէեւ անարգ այս յարձակումը գործադրողները իրենց արժանի պատիժը ըստացան, սակայն Արայի սրտին մէջ բան մը կոտորուեցաւ:

Իր ստացած վէրքերէն բուժուելէն ետք, Արա նոյն ենթասպան չէր այլեւս: Կը խուսափէր իր պարտականութիւններէն, սկսած էր պժգալ զինուորական կեանքէն եւ շրջապատէն, արժանանալով իր գերադաս աստիճանաւորներու դիտողութիւններուն:

Արային հայրը եւ մայրը, Տէր եւ Տիկին Գեղամ եւ Գեղուհի Ապրիլեանները, նկատելով իրենց զաւկին հոգեկան վիճակը, միխթարական խօսքերով կ'աշխատէին թեթեւցնել անոր տառապանքը, թէ չուտով կը վերջանայ պարտադիր զինուորութեան երկու տարուան շըրջանը եւ այլեւս ազատ կ'ըլլայ իր ապագան կերտելու իր ուզած ճեւղով: Սակայն ան համբերութիւն չունէր շրջանը վերջացնելու եւ առ այդ համարձակեցաւ իր ծնողքը տեղեակ պահելու իր որոշումէն:

— Սիրելի՛ հայր, մայր, զիս ատողներու ճիրաններէն հագիւ ազատեցայ՝ բախտի բերմամբ, կարգ մը խղճի տէր զինուորներու օգնութեամբ: Մէկ խօսքով, մահուընէ ազատեցայ: Որպէս հաւատարիմ եւ պարկեշտ սուրիացի զինուորական, եթէ պիտի շարունակեմ ծառայել սուրիական բանակին, աչքի առջեւ միշտ պէտք է ունենամ այդ սրիկայ-նախանձոտ զինուորներէն ինծի գալիք փորձանքը, որ կրնայ վերջանալ մահուամբ: Եթէ կ'ուզէք, որ ձեր գաւակը ապրի, հաշտուեցէք իմ Սուրիայէն հեռանալու գաղափարին հետ: Ուրիշ միջոց չեմ գտներ կեանքս ապահով դարձնելու համար:

Արային հայրն ու մայրը դժուարութեամբ համաձայնութիւն տուին Արայի վտանգաւոր գաղափարին: Որովհետեւ որեւէ կասկած կամ սահմանին վրայ ձեռքակալութիւն՝ ունէր ծանր պատիժներ, միեւնոյն ատեն պատիւ չէր բերեր հայութեան:

Արան հօրը եւ մօրը համաձայնութիւնը առնելէ ետք, գաղտնի միջոցներով անցագիր ունեցաւ՝ որոշ գումար վճարելով նման գործով զբաղող անձնաւորութեան, ապա իր տարեկան արձակուրդը առնելով, քաղաքացիական հագուստը հագած, Լիբանանի ճամբով, կրկին կաշառքով, կրցաւ օգանաւային տոմսակ մը գտնել դէպի Ամսթերտամ՝ Հոլանտա:

Հոլանտա հասնելով՝ հարցնելով կրցաւ հայկական կեդրոնը գտնել եւ տեղացի հայ կազմակերպութիւններու եւ անձնաւորութիւններու օգնութեամբ կրցաւ բնակելի սենեակ մը ապահովել եւ ապագային հայ արհեստաւորի մը մեքանիքի խանութին մէջ աշխատիլ, միեւնոյն ատեն բարեկամներու միջոցաւ որպէս փախստական (*refugee*) Հոլանտա ապրելու եւ աշխատելու իրաւունք խնդրեց:

Արա կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով իր ծննդավայրէն, իր ընտանիքէն եւ հարազատներէն հեռու կ'ապրէր եւ ամէն օր արցունքով եւ կարօտով կը յիշէր իր հայրն ու մայրը, եղբայրներն ու քոյրերը, իր ազգականները, իր դասընկերները՝ ամէնօրեայ եւ կիրակնօրեայ դպրոցներէն:

Արդարեւ, ան իր նախնական ուսումը ստացած էր Հալէպի ազգային Սահակեան երկսեռ վարժարանէն, ապա երկրորդականը՝ Քարէն Եփփէ ճեմարանէն, եւ կիրակնօրեայ դպրոցներու կեդրոն բաժինը, հինգ տարեկանէն մինչեւ 17 տարեկան, 12 տարի յաճախելով՝ շրջանաւարտ եղած էր եւ ստացած Մեծի Տանն Կիլիկիոյ վեհափառ կաթողիկոսին ստորագրութեամբ շրջանաւարտի վկայականը:

Գիշերները, մանաւանդ առանձնութեան մէջ, ժապաւէնի նման իր աչքին առջեւէն կը տողանցէին դէպքերն ու տեսարանները: Ծընողքին եւ հարազատներուն պատկերները իր տրտմաթախիժ աչքերուն թացութիւն կը բերէին, կը զղջար իր առած քայլին համար, թէեւ իր կեանքը փրկելու գնով, սակայն իր անհեռատես որոշումին համար, զգալով իր ծնողքին կրած նեղութիւնները սուրիական բանակի ոստիկանութեան կողմէ:

Ծնողքին նամակ ղրկելու յանդգնութիւնը չէր ունենար՝ վախնալով, որ սուրբիական ոստիկանութիւնը հաւանաբար հսկողութեան տակ առած է իրենց տունը եւ նամակները քննութեան կրնան ենթակայ ըլլալ:

Արա կամաց-կամաց բարեկամական յարաբերութիւններ կնքեց Հոլանտա ապաստանած կարգ մը հայախօս, սասունական բարբառով խօսող Թուրքիայէն գաղթած սասունցի ընտանիքներու հետ, որոնց մեծամասնութիւնը քրտերէն միայն կրնար խօսիլ:

Որպէս հայերէն լաւ գիտցող հայ, Արան Հայ Կեդրոնի մէջ ըստանձնեց քարտուղարական պաշտօն, յարգուելով հայկական գաղութի անդամներէն. ցերեկին մեքանիսիէն ծանր գործ կատարելէ ետք, երեկոյեան սիրով օգտակար կը դառնար իրեն դիմող անուս հայրենակիցներուն եւ միութիւններուն:

Ան, որպէս կիրակնօրեայ դպրոցէն շրջանաւարտ աշակերտ եւ դպիր Ս. Քառասնից Մանկանց հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ, սորված էր մեր հոգեգմայլ շարականները, աղօթքներն ու արարողութիւնները, եւ երբ այցելու վարդապետը Ամսթերտամ կու գար Սուրբ Պատարագ մատուցանելու, սիրալոյսով կը կատարէր դրպարակետի պաշտօնը, խոր գոհունակութիւն պատճառելով հայ հաւատացեալներուն եւ պատարագիչ եկեղեցականին:

Օրերը աշպէս կը շարունակուէին եւ Արա որեւէ ձեւով չէր կըրցած կապ հաստատել իր ծնողքին հետ, որոնք յուժարտ կը ջանային խապրիկներ ստանալ իրենց պանդուխտ եւ փախստական զաւակէն, բայց ի զուր, մինչեւ այն օրը, երբ Հալէպէն Հոլանտա գաղթած Յովհաննէս Քէլէշեան Արայէն նամակ մը եւ քիչ մը դրամ բերած էր, որոնք յանձնեց Արային մօրը, տալով նաեւ ականատեսի իր վկայութիւններն ու կարծիքները:

Որպէս եւրոպական քաղաք, Ամսթերտամը կարելի չէր բաղդատել Հալէպ քաղաքին հետ: Ամսթերտամ արդիական քաղաք էր, արդիական կենցաղով բնակչութեամբ, ուր ինչ որ Հալէպի մէջ ամօթ կը նկատուէր, հոս նորոյթ եւ բնական էր: Այս բոլորը խորթ կը թուէին Արային, որ Հալէպի մէջ ապրած էր հայահոծ շրջապատի մէջ, հայկական տոհմիկ սովորութիւններով եւ ամօթխածութեամբ: Սակայն ձեռքէն բան չէր դար, ստիպուած էր հաշտուիլ նման ապրելակերպի եւ հասկացողութիւններու հետ, աշխատելով պահել իր ընտանեկան սովորութիւններն ու աւանդութիւնները:

Արային կեանքը Ամսթերտամի մէջ երկու տարի շարունակուեցաւ՝ առանց յատուկ եւ զօրաւոր ցնցումի եւ դժուարութեան: Եւ պատահեցաւ անսպասելին: Հայ ազատութեան մարտիկները մահափորձ կատարեցին Թուրքիոյ Ամսթերտամի դեսպանին դէմ եւ այդ պատճառով հոլանտական կառավարութիւնը հրահանգեց օրինաւոր կեցութեան արտօնութիւն չունեցող հայերուն մէկ շաբթուան ընթացքին Հոլանտայի սահմաններէն դուրս գալ:

Լուրը լախտի հարուածի մը նման իջաւ Արայի գլխուն: Ի՞նչ ընէր, ո՞ւր երթար: Սուրիա չէր կրնար վերադառնալ, ուրիշ երկիրներ երթալու վիզա՝ արտօնութիւն չունէր: Ամբողջ գիշերը չկրցաւ քնանալ: Հայ գաղութը չկրցաւ օգնել նման կացութեան մէջ գտնուող հայերուն, որոնց թիւը 100-ը կ'անցնէր:

Արա ամերիկեան դեսպանատուն դիմեց, սակայն մերժուեցաւ: Յարմար տեսաւ դիմել նաեւ գանատական դեսպանատուն, անձամբ ներկայացնելով Գանատա գաղթելու իր դիմումնագիրը:

Դեսպանը, կարդալով Արայի դիմումնագիրը, հետաքրքրական գտաւ եւ ուզեց անձամբ տեսակցիլ հետը: Յաջորդ օր, Արա սափրուած, հագուած-չքուած ներկայացաւ Գանատայի դեսպանին: Դեսպանը զմայլեցաւ Արայի երիտասարդութեան, զարգացումին, լեզուագիտութեան եւ անկեղծութեան, եւ հարցուց.

— Պրն. Արա, դուն կը փափաքիս Գանատա գաղթել եւ հաստատուիլ, ինչո՞ւ կ'ուզես յատկապէս Գանատա գաղթել:

— Որովհետեւ,— պատասխանեց Արա,— Գանատան ազատ, անկախ, զարգացած, բարձր որակով բնակչութիւն ունեցող երկիր մըն է:

— Սակայն,— պատասխանեց դեսպանը,— դուն ո՞ւր կ'է գիտես այս բոլորը, նկատի ունենալով, որ դուն Գանատա չես եղած երբեք:

— Այո,— պատասխանեց Արա,— ես Գանատա երբեք չեմ եղած, սակայն, ինչպէս կ'ըսէ Յիսուս, «երանի՛ անոր որ չտեսած կը հաւատայ»:

Դեսպանը քրիստոնէական դաստիարակութիւն եւ հաւատք ու-



Հալէպի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ  
կիրակնօրեայ դպրոցներու կեդրոն բաժնի ուսուցչական կազմը:  
Նստած մէջտեղը՝ տեսուչ Գրիգոր Հոթոյեան



նեցող դիւանագէտ մը ըլլալով, կը սիրէ եւ կը հաւնի Արային պատասխանը եւ անմիջապէս բժշկական թուղթերը կու տայ, որպէսզի որպէս օրինաւոր գաղթական (immigrant) ընդունուի եւ հաստատուի Գանատա:

Արա քանի մը օրերու ընթացքին Գանատա գաղթելու թուղթերը եւ արտօնութիւնը առնելով օդանաւ կ'առնէ եւ կ'իջնէ Մոնթրէալ, ուր Ս. Յակոբ հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հովիւ Արժանապատիւ Տէր Արմէն Աւագ Քահանայ Իշխանեանի միջոցաւ կը տեղաւորուի վարձուած փոքրիկ յարկաբաժնի մը մէջ:

Մոնթրէալ հասնելէն երկու շաբաթ ետք, լսելով, որ Հալէպի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու կեդրոն բաժնի իր շրջանի տեսուչը եւ դաստիարակը Թորոնթօ կը բնակի, հեռաձայնի թիւը գտնելով հեռաձայնային տետրակէն, կը հեռաձայնէ Թորոնթօ եւ իր ինքնութիւնը յայտնելէ ետք՝ կը յայտնէ, որ Թորոնթօ կ'ուզէ գալ իր տեսուչը տեսնելու:

Արա տեսուչին բնակարանը կը մնայ երկու օր, կը յիշեն անցեալի քաղցր օրերը եւ յիշատակները: Արա կը պատմէ իր ունեցած ողիսականը՝ Հալէպէն Ամսթերտամ եւ Ամսթերտամէն՝ Մոնթրէալ, եւ կ'ըսէ.

— Պարո՛ն, իմ Գանատա գալս եւ որպէս օրինաւոր գաղթական ընդունուիլս քեզի կը պարտիմ: Դուն մեզի սորվեցուցիր քրիստոնէական սկզբունքները, ապրելակերպը եւ Քրիստոսի խօսքերը եւ այդ խօսքերէն մէկ նախադասութիւն՝ «երանի՛ չտեսած հաւատացողներուն», իմ առջեւ բացաւ Գանատայի դռները, որուն համար այնքա՛ն շնորհակալ եմ եւ ես եկայ անձամբ շնորհակալութիւն յայտնելու քեզի:



Ռագգայի նորաբաց կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմը, Հոկտ. 1950



## ԶՕՐԵՂ՝ ԱԻԵԼԻ ՔԱՆ ԿՐԱԿԸ

Հայաստան արաբական արշալանքներու եւ տիրապետութեան ենթարկուած է 7-րդ դարէն մինչեւ 10-րդ դար, կռուախնձոր դառնալով բիւզանդական եւ արաբական կայսրութիւններու միջեւ:

Արաբ նշանաւոր էմիր Աղպուղան մեծաթիւ զօրքով մտած էր Կորդուաց աշխարհը եւ հսկայ բանակի վրանները գետեղած լեռնային գետի ափին:

Իր բանակներուն յարձակումները գրաւելու համար Կորդուած աշխարհը, որուն իշխանը՝ Արգաւան, Անգղ բերդի պարիսպներով պատսպարուած, իրեն հաւատարիմ քաջերով կը դիմադրէր էմիր Աղպուղանի զօրքին յարձակումներուն, որոնք բազմաթիւ զոհեր տալէ ետք՝ կը նահանջէին ռազմաճակատէն:

Ռազմաճակատէն հասնող լուրերու լոյսին տակ, գիշերային անդորրի մէջ ընկողմանած էմիրի վրանին մէջ փոթորիկ բարձրացաւ: Էմիր Աղպուղան կը գոռար անգուսպ: Աչքերէն կայծեր կը ցայտէին: Աջ ալտը կիսող սպին կը խաղար անհանգիստ, անձողնի գալարումներով:

Էմիր Աղպուղա, երեսուն տարի բազմաթիւ տէրութիւններու քաղաքներն ու գիւղերը, բերդերը եւ ամրոցները պաշարելով, հանդիպած էր օրհասական դիմադրութեան, շատ զոհեր տուած էր, բայց միշտ յաղթանակներ ապահոված էր: Եւ ահա, այնքան յաղթանակներէ ետք, եկած հասած էր հայկական Կորդուաց աշխարհը, սակայն՝ անէծք շէյթանին, այժմ այդ յաղթական թուրը անճրկած էր՝ հանդիպելով հայոց լեռներու ապառաժներուն, եւ չնայած բազմաթիւ զոհերու, անկարելի դարձած էր ընկճել հայոց դիմադրութիւնը, շարժուելու համար դէպի Այրարատ:

— Արաբական խալիֆայի պանծալի թուրին առջեւ պէտք է նահանջեն լեռներն ու ծովերը, պէտք է ծնկաչոք ըլլան հայերը, — խելայեղ ջղայնութեամբ կը գոռար էմիր Աղպուղան:

Սակայն անսասան ու աննուաճ կը մնար հայոց Անգղ բերդը, շրնորհիւ հաւատարիմ հայ զինուորներու քաջութեան եւ հայրենասիրութեան:

Ձախողած գրոհներէն ետք, գիշերը Աղպուղան խորհուրդի հրաւիրեց իր օգնականներ՝ Օմար Եռսուֆ եւ Նասիպ զօրավարները:

Պապանձած էին հռչակաւոր զօրավարները: Գիշերային խաղաղութեան մէջ կը լսուէր լեռնային գետի շառաչը:

— Ինչո՞ւ ոգնիի նման կուզ կեցած՝ լուած ես, շէյթանի ծնունդ,—  
գորավար Նասիպի երեսին գոռաց համբերութենէն դուրս եկած Աղ-  
պուղան:

Զօրավար Նասիպ վայրկեանական ցնցումներով ոտքի ելաւ, խո-  
նարհուլութեամբ ձեռքերը պարզեց երկինք, կապտագոյն, հաստ շըր-  
թունքներու արանքէն օգնութիւն աղերսեց Ալլահէն, ապա դիմեց է-  
միր Աղպուղային:

— Արեգակ հաւատոյ, կ'երդնում Մոհամմէտի անունով, արեւա-  
ծագին հնազանդեցնել Անգղ բերդը եւ անհաւատ բերդապահին գլու-  
խը դնել ոտքերուդ առջեւ...:

Օմարը եւ Եուսուֆը լուռ եւ մտածկոտ էին: Աղպուղան կրակոտ  
աչքերը անոնց վրայ ուղղելով, պոռթկաց:

— Իսկ դուք, ինչո՞ւ լուած էք, վախկոտ կատուներ:

Օմարը եւ Եուսուֆը քծնելով էմիրին առջեւ ըսին:

— Հաւատոյ արեգակ, մարգարէին անունով երդում, որ պիտի կա-  
տարենք քու բոլոր հրամանները,— իրենց ձեռքերը կուրծքերնուն դը-  
նելով, երկիւղածութեամբ խոնարհութիւն ըրին:

Լուսադէմին գրոհը վերսկսաւ: Բարձունքէն հայ շինականները  
ժայռեր կը գլորէին արաբներու վրայ, խուճապի մատնելով զանոնք:  
Սակայն գօրավար Նասիպ կասեցուց խուճապը, եւ թուրը մերկացնե-  
լով առաջ անցաւ՝ մարտի խրախուսելով գինուորները:

— Եա՛ Ալլա՛հ, եա՛ Ալլա՛հ,— բացազանչելով կ'առաջնորդէր վե-  
րէն եկող նետերու տարափին տակ:

Բայց ահա, ժայռերու ետեւէն յովազի պէս դուրս եկաւ կտրիճ մը,  
խոյսացաւ Նասիպի վրայ ու լախտով տեղնուտեղը ջախջախեց Նասի-  
պի գլուխը, ապա տեսիլքի նման անյայտացաւ, ահ ու սարսափի մատ-  
նելով յարձակողները:

Կորդուաց աշխարհի իշխան Արգաւանի որդին՝ Արծուինն էր քա-  
ջը:

Մինչեւ մթննալը, վերսկսաւ գրոհը: Արաբներու արիւնը առա-  
տօրէն կը հոսէր եւ կը խառնուէր գետի ջուրերուն, որ հայոց լեռնային  
ցասումնալի շառագով կը տանէր բռնակալներու արիւնը, որպէսզի  
մաքուր մնայ շինականին տուրք հողը:

էմիր Աղպուղան, գօրավար Նասիպի մահով ընկճուած, Օմարն ու  
Եուսուֆը իր վրանը կանչեց գիշերային խորհուրդի:

— Եթէ մեզի չմիանայ Արգաւան իշխանը եւ մեր գօրքերը չա-  
ռաջնորդէ,— ըսաւ խեղճացած գօրավար Օմարը,— մենք պիտի չյաջո-  
ղինք անցնիլ լեռներու եւ կիրճերու մէջ ոլորուող անյայտ կածաննե-  
րով: Այնտեղ, ամէն քարի տակ դարանակալ թշնամի մը նստած է:

— Բայց ինչպէ՞ս իսլամի եւ խալիֆայի կամքին ենթարկել Կոր-  
դուաց աշխարհը,— յուսադրուելով հարց տուաւ Աղպուղան:

— Պէտք է կաշառել, պէտք է երկիրներ խոստանալ, խաբել ծերունին,— խորամանկութեամբ ոգեւորուած խօսեցաւ զօրավար Օմարը:— Իսկ եթէ չհամաձայնի, պէտք է սպառնալ: Իշխանը ունի որդի մը, զոր խելագարի նման կը սիրէ: Ան մեր գերին է ներկայիս. կա՛մ հայրը կը միանայ մեզի եւ մեր զօրքերը կ'առաջնորդէ, կա՛մ անոր որդին կը սպաննենք:

Կորդուաց աշխարհի իշխան Արգաւան երբ լսեց, որ արաբները նենգօրէն գերած են իր քաջ ժառանգորդը, երկինք եւ երկիր փուլ եկան իշխանին գլխուն:

Կորդուաց նահապետը բարձրացուց հողին խոնարհած իր գլուխը, սրբեց աչքերու արցունքը եւ քայլ առ քայլ գնաց դէպի Էմիրին վրանը:

Աղպուղան շողոքորթութեամբ դիմաւորեց իր ոտքով եկած իշխանը, գովեց Արծուինի գեղեցկութիւնն ու քաջութիւնը, խոստացաւ Կորդուաց աշխարհին միացնել նոր հողեր, վերականգնել Արգաւանի իշխանական իրաւունքները, եթէ ան իր որդիին հետ արաբական զօրքը առաջնորդէ դէպի Այրարատեան աշխարհ:

Ծերունի Արգաւանը սաստիկ մոռայեցաւ եւ յօնքերը կիտուեցան մշուշոտ աղբերու վրայ:

— Թո՛ղ յայտնի ըլլայ արաբ զօրագլուխին,— պոռթկաց ան,— որ Կորդուաց իշխաններու տոհմը կը սերի Արշակունիներէն: Մեր կիները երբե՛ք դաւաճան չեն ծնած ու մատնիչ չեն սնած...: Եւ թող յայտնի ըլլայ Աղպուղային, որ իմ բազուկներն այսօր ալ զօրեղ են թշնամին հայրենի երկրէն դուրս շարտելու, սակայն խիստ անզօր են թշնամիին իմ հայրենի ճանապարհը ցոյց տալու...:

— Բայց այդ տոհմը ես կ'ոչնչացնեմ: Այդ տոհմի վերջին տղամարդը ես տանջամահ կ'ընեմ,— յոխորտաց Աղպուղան՝ ձեռքը տանելով կեռ սուրին:

Արգաւան լուռ էր. անոր հայեացքը սուրի նման էր դահիճի անողոք աչքերուն մէջ:

— Մտածէ՛, ծերո՛ւկ, մտածէ՛,— ըսաւ Աղբուղան՝ ձայնը մեղմացընելով:— Կա՛մ քու միակ որդին կը կորսնցնես, կա՛մ կը կատարես խալիֆային կամքը, ուրիշ ելք չունիս:

Արհամարհանքի ժպիտ մը անցաւ Արգաւանի խորշոմած դէմքէն:

— Դուն գիշերային գողի նման մտար իմ երկիրս, եւ մենք չկըրցանք չափել մեր բազուկներուն եւ թուրերուն ուժը,— պատասխանեց ծերունի նահապետը Աղպուղայի երեսին,— հիմա ալ կը ստիպես, որ դաւաճանեմ հայրենիքիս: Մի՛ վախցներ զիս մահով: Մեր նախնիները մեզի սորվեցուցած են, որ իմացեալ մահը անմահութիւն է:

— Բերէ՛ք կրակարանը թէժացած կրակով,— խելագար մոլուցքով պոռթկաց Աղպուղան,— ես հիմա կրակէ լեզուով կը խօսիմ քեզի հետ:

Ապաստաւորները անմիջապէս կատարեցին Աղպուղայի հրամանը: Բերին կրակարանը, որուն մէջ կը բոցկլտար թէժ կրակը:

Ծերունի նահապետը նայեցաւ թէժ կրակին, նայեցաւ իր մէկ հատիկ որդիին, հասկցաւ, թէ ի՛նչ կը սպասէ իրեն: Սիրտը կծկուեցաւ, սակայն բարձր պահեց ալեհեր գլուխը եւ դառնալով որդիին՝ ըսաւ.

— Զաւա՛կս, ցոյց տուր դահիճներուն, որ դուն չես վախնար մահէն, եւ ոչ ալ ես կը վախնամ քեզ զոհելու յանուն հայրենիքիս:

— Կրակին մօտ բերէք զայն,— հրամայեց Աղպուղան:

Արծուին չթողուց, որ իրեն մօտենան, մէկ կողմ հեց դահիճները, անվրդով մօտեցաւ կրակարանին եւ... ձեռքերը մխրճեց թէժացած կրակին մէջ...:

Նոյնը կ'ուզէր ընել ծերունի Արգաւանը՝ բախտակից ըլլալու համար իր որդիին, բայց որդին վճռաբար արգելք հանդիսացաւ:

— Դեռ պէտք կու գան այդ ձեռքերը, հա՛յր:

Ակսած էին այրիլ Արծուինի ձեռքերը, կրած ցաւէն սկսած էին մեծնալ բիբերը, բայց, զարմանալիօրէն, ժպիտը չէր պակսեր դէմքէն:

Այս բոլորը տեսաւ էմիրը, տեսաւ, սարսուաց ու վայրկեան մը անշարժացաւ: Յետոյ, ուժասպառ վեր ելաւ մետաքսէ բազմոցէն եւ դառնալով դէպի զօրականները, տազնապահար գոչեց.

— Եա՛ Ալլա՛հ, եա՛ Ալլա՛հ, փրկէ՛ մեզ...: Ահա՛ ժողովուրդ մը, զոր կարելի է բնաջնջել, բայց ծունկի բերել՝ անկարելի է,— եւ ընկճուած՝ թափ տուաւ ձեռքը,— տարէ՛ք զանոնք...:

Ապա հրաման արձակեց.

— Բանակատեղիէն հանե՛լ բոլոր վրանները...:

Իր առաքելութեան մէջ ձախողած էմիր Աղպուղան, բազմաթիւ զինուորներ զոհելէ ետք, ընկճուած սրտով կը վերադառնար իր երկիրը: Եւ լեռնային գետի կողքով հայոց լեռնաշխարհէն նահանջող վերջին արաբ զինուորը երկիրը զոհող հայեացք նետեց իր ուսին վրայէն ետ նայելով, եւ տեսաւ որ Կորդուաց աշխարհի իշխան Արգաւան գրկած էր իր քաջ որդին՝ Արծուինը, եւ արտասուքով կը թրջէր անոր այրած ձեռքերը:

Այս պատմութեան հետեւանքով, երկար ատեն արաբ կայսերապաշտները համարձակութիւն չունեցան ասպատակելու հայոց սրբազան հայրենիքի հողերուն վրայ:



## ԳՈՂ ԻՍԱՀԱԿԻՆ ՎԱԽՃԱՆԸ

— Դրամապանա՛կս, դրամակապանա՛կս, դրամապանա՛կս գող-  
ցան,— կը պոռար մարդ մը, կեցած Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի  
կեդրոնական փողոցի մայթին վրայ:

Ի՞նչ էր պատահած:

Երկու ճարպիկ մանուկներ, տեսնելով հարուստ երեւոյթով մարդ  
մը, որ կ'անցնէր փողոցէն, իրարու հետ կռուիլ ձեւացուցած էին, իսկ  
անցորդը եկած էր բաժնելու կռուողները՝ յորդորելով, որ չկռուին եւ  
փորձած էր հաշտեցնել զանոնք: Սկայն, հագիւ կռուող մանուկները  
հեռացած էին, պարոնը ձեռքը գրպանը մտցնելով տեսած էր, որ դրա-  
մապանակը չկար: Ան հասկցած էր ամբողջ եղելութիւնը:

Պարոնին բացազանչութիւնները եւ օգնութեան աղաղակները  
միայն կարգ մը անցորդներու ուշադրութիւնը գրաւած էին: Անոնք  
մօտեցան կողոպտուող պարոնին եւ եղելութիւնը իմանալով, մխիթա-  
րական շարք մը խօսքերէ ետք, թելադրեցին տեղեկացնել ոստիկա-  
նութեան:

Իսահակ եւ ընկերը առանց ետեւ նայելու, աներեւութացան քա-  
ղաքի ժխորէն եւ կարելի արագութեամբ հասան իրենց թաքստոցը,  
ուր իրեն պէս բազմաթիւ լաճեր կը զբաղէին գողութեամբ: Իսահակ  
միակ հայն էր, որ ինկած էր արաբական կազմակերպուած որջին մէջ,  
ղեկավարութեամբ աւազակապետ Հասանին, շուրջ 50 տարեկան ան-  
խիղճ մարդ մը, որ անտէր մանուկները գողութիւն ընելու վարժեցնե-  
լով՝ անոնց բերած աւարներով եւ դրամով հարստութիւն կը դիզէր,  
իսկ մանուկներուն փոքր դրամներ տալով՝ տուն կը դրկէր:

Իսահակ, դրամապանակը պինդ բռնած, ներկայացաւ աւազակա-  
պետ Հասանին, որ Իսահակին ձեռքէն դրամապանակը խլեց եւ քանի  
մը գնահատական խօսքեր արտասանելով՝ բացաւ դրամապանակը եւ  
քննեց պարունակութիւնը: Կարգ մը վաւերաթուղթերու կողքին ու-  
րախութեամբ համրեց հարիւր եգիպտական կիւնէ (եգիպտական դը-  
րամ): Իսահակին եւ ընկերոջ 5-ական կիւնէ տուաւ, շնորհակալութիւն  
յայտնելով անոնց հասութեամբ աշխատանքին համար:

Իսահակ առաւ 5 կիւնէն եւ խնդրեց, որ պետը 5 կիւնէ եւս տայ, քա-  
նի որ մայրը ծանր հիւանդ է եւ դեղ գնելու դրամ չունի: Իսահակին  
խնդրանքն ու պաղատանքը պետին գութը չկրցան շարժել, ընդհա-  
կառակն, երբ Իսահակ աւելի պնդեց, ջղայնութեամբ եւ հայհոյելով  
ապտակեց եւ դուրս վռնտեց զինք:

Իսահակ լալով-ողբալով հասաւ տուն: Մայրը մահուան քրտինք-

ներուն մէջ կը լողար: Իր միակ որդիին ձայնը լսելով՝ աչքերը բացաւ, գրկեց զայն եւ ըսաւ.

— Տղա՛ս, ես կը մեռնիմ, սակայն որպէս մայրական վերջին խօսք եւ պատգամ՝ կը խնդրեմ քեզմէ, որ քրիստոնէավայել կեանք մը ապրիս: Գիտցի՛ր եւ յիշէ՛ միշտ, որ մենք հայ ենք եւ քրիստոնեայ: Կ'ուզեմ, որ հօրդ արժանի գաւազնը դառնաս, որ մարդիկ հպարտանան քեզմով ու քու պարկեշտ կեանքով, իսկ ես մահուընէ վերջ՝ Հանդերձեալ կեանքիս մէջ լսեմ քու մաքուր եւ պատուաբեր համբաւդ եւ հըրճուիմ: Հակառակ պարագային, իմ ոսկորներս պիտի մսին գերեզմանիս մէջ եւ պիտի անիծեն քեզ:

Անբախտ մայրը վերջին անգամ նայեցաւ իր զաւակին եւ աչքերը գոցեց յաւիտեան:

Շատ խեղճ թաղում մը ունեցաւ Տիկին Լուսին: Քահանայ մը եւ քանի մը դրացիներ ներկայ եղան թաղմանական արարողութիւններուն եւ յուղարկաւորութեան: Իսահակ լացաւ, շատ լացաւ: Խելակորոյս ինկաւ մօրը հողակոյտին վրայ, պինդ գրկեց հողը կրծքին եւ նուաղեցաւ:

Ան լաւ կը յիշէր հանգուցեալ հայրը, երբ ինք տակաւին եօթ տարեկան էր: Որքա՛ն կը սիրէր զինք: Երբ գործէն յոգնասպառ տուն կու գար, լուացուելէ վերջ զինք գիրկը կ'առնէր եւ բերած անուշեղէններէն կու տար, պայման դնելով, որ հայերէն արտասանութիւն մը ըսէ կամ ալ ազգային երգ մը երգէ: Սակայն, օրին մէկը, ինքնաշարժի արկածի զոհ գնաց երիտասարդ տարիքին, անօդական ձգելով իր մայրը՝ ապրեցնելու համար իր միակ զաւակը:

Իսահակ եւ մայրը կրցան տարի մը ապրիլ մահացած հօրը խնայած դրամով եւ երկաթագործի խանութի գործիքները ծախելով: Նիւթական միջոցները սպառելէ ետք, Տիկին Լուսին ստիպուեցաւ սպասուհի դառնալ քաղաքի պանդոկներէն մէկուն մէջ, ուր չափազանց կը յոգնէր շատ չնչին աշխատավարձով, որ իրենց ապրուստին չէր բաւեր: Այդ բոլորէն զատ, կարգ մը անկիրթ մարդիկ զինք կը հետապնդէին աղտոտ նպատակներով:

Որբացած Իսահակ տարին հազիւ բոլորեց եւ ստիպուած վերջնականապէս դադրեցաւ դպրոց յաճախելէ եւ սափրիչի մը մօտ աշկերտ դարձաւ: Սակայն արաբ սափրիչը շատ քիչ կը վճարէր: Քանի մը ամիս աշխատեցաւ, յուսալով թէ յաւելում կրնայ ստանալ, սակայն անօգուտ:

Իսահակ, օրին մէկը, երբ խանութը մաքրութիւն կ'ընէր, մագկտրող մեքենան գետին ինկաւ եւ կոտրեցաւ: Երբ վարպետը խանութ եկաւ, Իսահակ խոստովանեցաւ եղած արկածը: Վարպետը փոխանակ ներելու, ջղայնացաւ եւ «ինչո՞ւ ուշադրութիւն չբերիր» ըսելով՝ լաւ մը ծեծեց զինք եւ խանութէն դուրս դրաւ:

Հիմա ի՞նչ պիտի ընէր Իսահակ: Շրջեցաւ քաղաքի լայն պողոտաները եւ քայլամուր քաղաքէն դուրս ելաւ: Այսպէս մտածկոտ կը

քալէր, երբ քանի մը պզտիկներ վազելով անցան քովէն: Ինք ալ հետաքրքրութենէ մղուած հետեւեցաւ անոնց եւ մտաւ գողերու թաքստոցը, որ պատմական հնութեան մը աւերակներուն մէջ էր: Զարմաքնով նկատեց, որ 25 պզտիկներ կային հոն եւ ահարկու մարդ մը:

Մարդը գինք տեսաւ, կանչեց: Հարցուփորձեց, թէ ինչպէ՞ս եւ ինչո՞ւ եկած էր իրենց կեդրոնը: Իսահակ պատմեց իր կեանքի պատմութիւնը:

— Լա՛ւ,— ըսաւ մարդը,— ա՛ն այս հինգ կիւնէն եւ վաղը հոս եկուր, քեզի յարմար գործ ունինք: Մի՛ վախնար, շուտով շատ լաւ կ'ապրիս:

Երբ Իսահակ յաջորդ օր ներկայացաւ պետին, ան իրեն սորվեցուց գողութեան բոլոր նրբութիւնները եւ քանի մը տղոց հետ «գործի» զրկեց:

Իսահակ օրերու ընթացքին կատարելագործեց իր «արհեստը» առանց մօրը բան մը ըսելու եւ սկսաւ գողութեան նախաձեռնակ ըլլալ: Քանի մը անգամ ոստիկանութեան կողմէ պիտի բռնուէր, սակայն հազիւ կրցաւ իր օձիքը ազատել:

Արդէն իսկ հինգ տարիներ անցած էին վարպետ Հասանին հաշուոյն իր աշխատանքէն, սակայն անխիղճ Հասան գինք կը կեղեքէր: Հազիւ ապրուստ մը կրնար ապահովել իր այս «աշխատանքով»: Երկար մտածելէ վերջ, սկսաւ հետաքրքրուիլ աւելի շահաւէտ «գործի» մը մասին: Վերջապէս, իր մէկ ընկերոջ միջոցաւ ծանօթացաւ մարդու մը, որ թմրեցուցիչի գործով կը զբաղէր: Մարդը Եգիպտոսի թմրեցուցիչ հայթայթող խմբակցութեան մը պետն էր: Համաձայնեցաւ մարդուն հետ թմրեցուցիչի ասպարէզին մէջ մտնելու՝ լաւ վճարումով եւ շահաբաժինով:

Իսահակ, գինուած քանի մը ընկերներով, Նեղոսի վրայ նաւերով եւ ինքնաշարժներով թմրեցուցիչներու տեսակներ կը մտցնէր Գահիրէ, որ յատուկ մարդոց միջոցաւ կը ծախուէր շուկայի վրայ:

Իսահակ հարստացած էր: Թէեւ երբեմն առանձնութեան պահերուն կամ հօրը եւ մօրը գերեզմաններուն այցելութեան ընթացքին կը վերլիչէր մօրը վերջին խօսքերը՝ պատուաւոր կեանք մը ապրելու, եւ որպէս հայ քրիստոնեայ հայ ազգին, իր հարազատներուն պատիւ բերելու մասին, սակայն ինքնիրեն կ'ըսէր. «Ինչպէ՞ս ապրիլ աղքատի կեանքով, խաղալիկ դարձած հարուստներու քմահաճոյքին, որոնք կը կողոպտեն ինծիպէսները եւ կը հարստանան: Ազգութիւնը եւ քրիստոնեայ կեանքը ինծիպէսները անօթի պահելու կը ծառայեն: Աղքատին երեսը ո՞վ կը նայի: Եւ գրեթէ բոլոր հարուստները իրենց հարուստութիւնը դիզած են անպարկեշտ ճանապարհներով, ես ալ անոնցմէ մէկն եմ եւ յարգուած թէ՛ հայերէն եւ թէ՛ արաբներէն: Եթէ մօրս ըսած ճանապարհով ընթանայի, չբաւորութեան եւ անօթութեան ճիրաններուն մէջ պիտի տուայտէի եւ թերեւս շատո՞նց միացած ըլլայի հօրս եւ մօրս՝ անդի աշխարհի մէջ»:

Իսահակ այս մտածումներով ինքզինք կը սփոփէր եւ կը համոզէր եւ օրերը կ'անցնէին նորանոր հարստութիւն դիզելով: Սակայն, իր չար բախտէն, իր վերջին արշաւին ոստիկանութիւնը տեղեակ եղած է իր խումբի մէկ անդամին կողմէ, որ գաղտնի ոստիկան ըլլալով՝ մատնած է ծրագրուած թմրեցուցիչներու մուտքը Գահիրէ:

Ոստիկանութիւնը կը պաշարէ մաքսանենդները: Երկուստեք հրացանաձգութիւն տեղի կ'ունենայ: Փախուստի ճամբայ չկայ: Յուսահատ՝ Իսահակ եւ ընկերները կը յանձնուին ոստիկանութեան եւ մեծ քանակութեամբ թմրեցուցիչները կը բռնագրաւուին, որոնք Եգիպտոսի բազմաթիւ մարդոց եւ ընտանիքներու կեանքին եւ կենցաղին քանդուելու պատճառ կը դառնային:

Դատ-դատավարութիւն կատարուեցաւ: Խումբի բոլոր անդամները բանտարկութեան դատապարտուեցան, իսկ Իսահակ, որպէս խումբի պատասխանատուներէն մէկը, 15 տարուան չարաչար աշխատանքով՝ տաժանակիր բանտարկութեան դատապարտուեցաւ:

Թէեւ իր հարստութեան մեծ մասը պահած էր ապահով վայրերու մէջ, սակայն այդ գումարները չէին կրնար զինք փրկել, հակառակ կաշառակերութեան համար եղած փորձերուն:

Յուսահատութիւն եկած էր վրան: Արդեօ՞ք իր երիտասարդութիւնը բանտին մէջ անցընելու դատապարտուած պիտի ըլլայ, մանաւանդ տաժանակիր աշխատանքով, ամբողջ 15 տարի:

Այսպէս, կը գտնուէր բանտային անողոք եւ սարսափելի մթնոլորտի մէջ, շրջափակուած տեսակաւոր աւազակներով եւ անբարոյական մարդոցմով: Զղջացած էր իր կեանքի ընթացքէն: «Երանի,— կ'ըսէր,— մօրս խօսքը մտիկ ընէի եւ ապրէի պարկեշտ կեանք մը, գոհանալով արդար քրտինքով շահած գումարով, խղճի հանդարտութեամբ եւ կեանքի ապահովութեամբ»:

Բայց 15 տարի ինչպէ՞ս անցընել...:

Օր մը ծանօթացաւ բանտարկեալի մը, որ չորս անգամ փորձած էր փախուստ տալ բանտէն, սակայն բանտէն դուրս չելած՝ բռնուած էր եւ իր բանտարկութիւնը վերածուած էր ցմահ բանտարկութեան: Անոր հետ համաձայնեցաւ փախչիլ: Օրերով ծրագիր մշակեցին եւ յարմար օր մը գործադրեցին: Դժուարանցանելի տեղերէ անցան, հասան բանտի տանիքը, պահակը չտեսաւ զիրենք: Սակայն երբ դուրսի ելեկտրագօծ պատէն դուրս ելլել կը փորձէին, նշմարուեցան պահակներէ, որոնք ահագանգ հնչեցուցին: Զինուորները սկսան հետապնդել փախչողները՝ հրամայելով, որ կենան եւ յանձնուին: Սակայն Իսահակ եւ ընկերը չէին կենար եւ կ'ուզէին ամէն գնով ազատիլ պաշարումէ եւ բանտէն դուրս ելլել: Զինուորները յուսահատած եւ ստիպուած, գէնքի դիմեցին եւ արձակուած փամփուշտներէն երկուքն ալ ինքան անշնչացած:

Իսահակին մօրը անէծքը կատարուած էր...:



## ԻՆՉՊԷ՞Ս ՀԻՄՆՈՒԵՑԱԻ ՌԱԳԳԱՅԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ

1950-ի ամառը, Բերոյի Թեմի Առաջնորդ Բարեչնորհ Տ. Զարեհ Ս. Արք. Փայասլեան (Ապագայի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս), դառուսա Յակոբին միջոցաւ զիս Առաջնորդարան կանչեց, ըստ դառուսա Յակոբին՝ կարեւոր խօսակցութեան մը համար:

«Առաջնորդ սրբազանը ինծի ի՞նչ կարեւոր ըսելիք կրնայ ունենալ» մտածելով եւ մտահոգուելով, անհամբեր սպասեցի ժամադրութեան եւ ժամանակէն առաջ արդէն Առաջնորդարան էի եւ կը սպասէի, որ դառուսա Յակոբի թոյլատրութեամբ վեր բարձրանայի՝ առաջնորդ սրբազանին գրասենեակը, որ կը գտնուէր երկրորդ յարկի աջին՝ առաջին սենեակը:

— Աստուած օգնական, սրբազան,— ըսի եւ աջը համբուրելէ ետք, ոտքի սպասեցի իր ըսելիքին:

Հրաւիրեց, որ նստիմ, ապա, որպիսութիւնս հարցնելէ ետք, ըսաւ.

— Գրիգոր, ես տարիներէ ի վեր կը հետեւիմ քու կեանքիդ, եւ որոշ գաղափար ունիմ քու եկեղեցական, ուսուցչական եւ գրական կարողութիւններուդ մասին: Գիտեմ, որ մանկութենէդ ի վեր կը ծառայես Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին որպէս դպիր, աշակերտած ես կիրականօրեայ վարժարան եւ ներկայիս որպէս ուսուցիչ կը պաշտօնավարես Նոր Գիւղի Ս. Գէորգ եկեղեցւոյ կիրականօրեայ դըպրոցին մէջ: Բու բանաստեղծութիւնները, յօդուածները եւ թղթակցութիւնները կարդացած եմ «Արեւելք» օրաթերթին մէջ, գնահատելով քու գրելու կարողութիւնը եւ բանաստեղծական շնորհը: Այս բոլորը գիտնալով, քեզ արժանի կը նկատեմ 1950-1951 տարեշրջանին համար ստանձնելու Ռագգա գիւղաքաղաքի ազգային Նուպարեան վարժարանի տնօրէնութիւնը:

Հոգեպէս ուրախացայ այս առաջարկին եւ վստահութեան համար, եւ որովհետեւ երազս եղած է ուսուցիչ դառնալ եւ ծառայել Հայ մանուկներու հայեցի դաստիարակութեան, սրբազան հօրմէն խնդրեցի երեք օրուան պայմանաժամ՝ վերջնական պատասխան մը տալու համար, նկատի ունենալով գրաշարական եւ տպարանային աշխատանքս «Նայիրի» տպարանին մէջ:

Ամէն պարագայի, երեք օրերը շուտ անցան եւ ես դրական պատասխան տուի Առաջնորդ Զարեհ Սրբազանին:

Վարժարանի պաշտօնական վերաբացումէն շաբաթ մը առաջ արդէն Ռագգա կը գտնուէի, եւ թաղականութեան ատենապետ Պրն. Յա-

կոր Սարգիսեանի ընկերակցութեամբ առաջնորդուեցայ ինծի համար վարձուած մէկ սենեակնոց բնակարանը, մահճակալով եւ կարգ մը տնային պիտոյքներով (ամաններ, դգալ, պատառաքաղ եւայլն), սեղանով եւ աթոռով:

Ռազգա հասնելուս երկրորդ օրը, թաղականութեան ատենապետին հետ շրջապտոյտ մը կատարեցի գիւղաքաղաքին մէջ, այցելութիւն տալով թաղականութեան անդամներուն գործատեղիները (վաճառատուները) եւ ծանօթանալով անոնց հետ:

Երրորդ օրը սկսան աշակերտական արձանագրութիւնները, որոնց թիւը մինչեւ շաբթուան վերջը հասաւ 90-ի:

Վարժարանի պաշտօնական վերաբացումին ներկայ եղան թաղականութեան անդամները եւ հոծ թիւով ծնողներ: Բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ վարժարանի բակին մէջ, ուր խօսք առաւ թաղականութեան ատենապետը՝ Պրն. Յակոբ Սարգիսեանը եւ աշակերտութեան ներկայացուց նոր տնօրէնը, ապա հրաւիրեց զիս աշակերտութեան խօսելու:

Ռազգայի Նուպարեան վարժարանը կը բաղկանար մանկապարտէզի բողբոջ, կոկոն եւ ծաղիկ դասարաններէ եւ նախակրթարանի առաջին, երկրորդ, երրորդ, չորրորդ եւ հինգերորդ դասարաններէ: Ուսուցչական կազմը կը բաղկանար տնօրէն-ուսուցիչէ, ուսուցիչ Պրն. Յակոբ Տողրամաճեանէ, մանկապարտիզպանուհի Օր. Տողրամաճեանէ եւ արաբերէն լեզուի արաբ ուսուցիչէ մը:

Վարժարանի պաշտօնական բացումէն առաջ արդէն իսկ կազմած էր բոլոր դասարաններու յատուկ դասացուցակները եւ բաժնած ուսուցչական կազմին եւ դասաւանդութիւնները սկսան պաշտօնական բացումէն ետք՝ աշակերտներու իրենց դասարանները մուտքով:

Դպրոցական տարեշրջանը սկսանք ներդաշնակ աշխատանքով, նուիրումով գործադրելով վարժարանի կրթական ծրագիրը: Սակայն, հակառակ մեր կրօնագիտական դաստիարակութեան, մեր աշակերտներուն կը պակսէր ազգային-եկեղեցական ուսում, որպէսզի մեր աշակերտները սորվին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ աղօթքները, սաղմոսները եւ շարականները:

Մանկական տարիքիս աշակերտած ըլլալով Հալէպի կիրակնօրեայ դպրոցները եւ ապագային որպէս ուսուցիչ ծառայելով կիրակնօրեայ դպրոցներու աշակերտութեան, որոշեցի աշխատանք տանիլ Ռազգայի մէջ կիրակնօրեայ դպրոց հիմնելու:

Այդ նպատակով դիմեցի Բերիոյ Թեմի Բարձրաշնորհ Տէր Զարեհ Ս. Արք. Փայասլեանին, որպէսզի իր արտօնութեամբ կիրակնօրեայ դպրոց բացուի Ռազգայի մէջ:

Առաջնորդ սրբազանը գնահատանքով եւ խանդավառութեամբ ընդառաջեց իմ դիմումիս եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէն Պրն. Լեւոն Զէնեանին եւ

Բերիոյ Թեմի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդին Համամը-տութիւնը առնելէ ետք, ինծի իմացուց, որ իրեն տեղեկացնեմ կիրակ-նօրեայ դպրոցի պաշտօնական բացման թուականը:

Ռազգայի նորաբաց կիրակնօրեայ վարժարանի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ 1950 Դեկտեմբերի սկիզբը, ներկայութեամբ Սուրբ շրջանի կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-քարտուղար Պրն. Գէորգ Ներսոյեանի, Տէր Զօրի եւ Ռազգայի Հայաստանեայց առաքե-լական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Եղիշէ Քհնյ. Տողրամաճեա-նի, թաղականութեան անդամներուն եւ հոծ թիւով ազգայիններու եւ շուրջ 90 աշակերտներու:

Բացման հանդիսութեան խօսք առաւ Պրն. Գէորգ Ներսոյեան եւ խօսեցաւ կիրակնօրեայ դպրոցներու առաքելութեան եւ օգտակարու-թեան մասին: Խօսք առաւ նաեւ Տէր Հայրը եւ ողջունելէ ետք կիրակ-նօրեայ դպրոցի հիմնարկութիւնը, օրհնեց առնուած աստուածահա-ճոյ քայլը եւ յաջողութիւն մաղթեց:

Իմ կարգիս խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեցի Բերիոյ Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր, կիրակնօրեայ դպրոցներու վարիչ-տնօրէն Պրն. Լեւոն Ն. Զէնեանին, Բերիոյ Թեմի Կրօնական Դաստիա-րակութեան Խորհուրդին, հոգեւոր հովիւին, թաղականութեան ան-դամներուն եւ աշակերտութեան ծնողներուն, որոնց ջանքերով կա-րելի եղաւ հիմնել Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակ-նօրեայ դպրոցը, որպէսզի կրօնական եւ ազգային դաստիարակու-թիւն փոխանցուի աշակերտութեան:

Այնուհետեւ, ընդառաջելով իմ հրաւերին, շաբաթէ-շաբաթ տասէ աւելի ուսուցիչ-ուսուցչուհիներ եկան միանալու մեր քրիստոնէա-վայել աշխատանքին:

Ռազգայի կիրակնօրեայ դպրոցի բացումէն ետք, Մեծի Տանն Կի-լիկիոյ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրակնօրեայ դըպ-րոցներու վարիչ-տնօրէնէն ստացայ նամակներ, որոնցմէ երկուքը ի-րենց կարեւորութեան համար կ'արձանագրեմ հոս.

Թիւ 3871

12 Յունուար 1951, Անթիլիաս-Լիբանան

Մեծայարգ  
Պրն. Գրիգոր Հոթոյեան  
Տեսուչ Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի  
Ռազգա, Սուրիա

Սիրելի պաշտօնակից,

Ուրախութեամբ տեղեկացած էիմք մեր պաշտօնակից Պրն. Գէորգ Ներսոյեանէն, թէ հակառակ Ձեր բազմազբաղ վիճակին բա-

րեհաներ էիք ստանձնել գաղութիդ մէջ նոր հիմնուած կիրակնօրեայ դպրոցի տեսչական պաշտօնը:

Անշուշտ ի մօտոյ պաշտօնապէս պիտի հաստատենք Ձեր տեսչական պաշտօնը, Հալէպի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդի առ այդ տրուած որոշումը յետ Պրն. Ներսոյեանի յանձնարարութեան: Սակայն, մինչ այդ, կը փութանք շնորհաւորել Ձեզ Նոր Տարուայ սեմին վրայ, որ լաւագոյն կազանդչէք տուած եղաք Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներուն, յանձն առնելով Ռազգայի մասնաճիւղի տեսչական պաշտօնը: Կը մաղթենք, որ Տէրը պարգեւէ Ձեզ ուժ, կարողութիւն եւ երկնային իմաստութիւն՝ վարելու նաեւ այս եկեղեցանուէր գործը, որուն յետ այսու կամաւորներէն մին պիտի նկատենք Ձեզ այդ հեռաւոր գաղութին մէջ:

Շնորհակալութեամբ ստացանք Ձեր դրկած թղթակցութիւնը, որ լոյս կը տեսնէ Յունուարի մէջ: «Մեր Կեանքը» թերթիկէն օրինակներ դրկեցինք Ձեր հասցէին: Եթէ նկարափարտեր չեն հայթայթուած Հալէպէն, գրեցէք մեզ աշակերտութեան թիւը եւ ուղղակի փոստով դըրկենք Ձեր հասցէին:

Յուսանք օրին մէկը կ'ունենանք բախտը ողջունելու Ձեզ եւ դպրոցի սիրասուն սաները, սակայն մինչ այդ հանեցէք ընդունիլ մեր սիրալիր բարեւներն ու լաւագոյն մաղթանքները:

Մնամ յարգանօ՛ք  
Լեւոն Ն. Զէնեան  
Վարիչ-Տնօրէն

\* \* \*

Թիւ 4187

5 Ապրիլ 1951, Անթիլիաս-Լիբանան

Մեծայարգ  
Պրն. Գրիգոր Հոթոյեան  
Տեսուչ Հայց. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցի  
Ռազգա, Սուրիա

Սիրելի պաշտօնակից,

Ուրախութեամբ տեղեկացանք Բերիոյ եւ վիճակաց պատուարժան Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդէն թէ՛ ըստ կիրակնօրեայ դպրոցներու հիմնական կանոնագրի յօդուած ԼԱ.ի տրամադրութեան, միաձայնութեամբ նշանակուած էք Ռազգայի կիրակնօրեայ դպրոցին տեսուչ՝ 1951 տարուան համար:

Ուստի, հանդիմանումով և անհամաձայնությամբ պաշտօնապես հաղորդելու Ձեզ սոյն որոշումը, որուն յապաղման համար կը խնդրենք Ձեր ներողամտութիւնը:

Պատուարժան խորհուրդը եւ մենք սրտանց կը գնահատենք անցեալի մէջ կիրակնօրեայ դպրոցին Ձեր մատուցած անձնուէր ծառայութիւնները եւ այժմ կը մաղթենք, որ Տէրը պարգեւէ Ձեզ ուժ եւ կարողութիւն, խղճմտօրէն շարունակելու համար այս դժուարին եւ պատասխանատու պաշտօնը:

Մեր տեսուչներէն կ'ակնկալուի ա) հսկել հիմնական եւ ներքին կանոնադիրներու տրամադրութեանց գործադրութիւնը: Բ) խնամքով պահել յայտագրի տեսարակ մը՝ իւրաքանչիւր տարուան համար: Գ) գործածել միայն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն վաւերացուած դասագիրքեր, պատկերներ եւ այլ հրատարակութիւններ: Դ) հաւատարիմ մնալ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ դաւանանքին, վարդապետութեան եւ աւանդութեանց: Տեսուչներէն կ'ակնկալուի ոչ միայն ամէն Կիրակի ներկայ ըլլալ Ս. Պատարագի, այլ նաեւ հոգ տանիլ, որ ուսուցիչները եւ աշակերտները եւս երթան եկեղեցի, մանաւանդ Կիրակի եւ տօնական օրերուն:

Շնորհաւորելով Ձեզ նոր շրջանի մը սկիզբը, կը հայցենք Աստուծմէ արդիւնաշատ տարի մը Ձեր դպրոցին համար:



Բերիոյ Թեմի Կրօնա-Բարոյական Դաստիարակութեան խորհուրդը՝  
16 Յուլիս 1968

Սպասելով Ձեր դրական պատասխանին, որուն համար հանեցե՛ք ընդունիլ մեր կանխայայտ շնորհաւորութիւնները:

Մնամ եղբայրական սիրով եւ յարգանօք՝  
Լեւոն Ն. Զէնեան  
Վարիչ-Տնօրէն

*Այնուհետեւ, նորաբաց կիրակնօրեայ դպրոցը բացառիկ յաջողութեամբ ընթացաւ շնորհիւ ուսուցիչներու նուիրումին եւ ծնողներու քաջալերութեան, միշտ գնահատուելով վարիչ-տնօրէնութենէն:*

*Գոհունակութեամբ հոս կ'ուզեմ արձանագրել, որ 1950-ին իմ նախաձեռնութեամբ հիմնուած Ռազգայի կիրակնօրեայ դպրոցը մինչեւ թուականս կը շարունակէ իր իւրայատուկ առաքելութիւնը, Ռազգայի գաղութի զաւակներուն ջամբելով կրօնաբարոյական դաստիարակութիւն եւ ազգային ոգի:*

*Ռազգայի Նուպարեան նախակրթարանի տնօրէնութիւնը ըստանձնելու առիթով, թաղականութեան անդամներուն խոստացած էի իմ կարելիս ընել, որպէսզի մեր վարժարանի հինգերորդ կարգը աւարտած աշակերտը, քննութիւն տալով ընդունուի Հալէպի Սահակեան եւ Հայկազեան վարժարանի վեցերորդ դասարանը:*

*1950-1951 տարեշրջանը բոլորեցինք յաջողութեամբ եւ 1951-1952 տարեշրջանին Հայկազեան վարժարան ընդունուեցան Նուպարեան վարժարանի հինգերորդ դասարանէն շրջանաւարտ երկու աշակերտներ, մեծ գոհունակութիւն պատճառելով Ռազգայի հայութեան:*



«Մարմարա»-ի խմբագիր Ռոպեր Հատտէնեանի հետ

## ԵՕԹՆԱՆ ՅԱԿՈՒՐ

Եօթնան՝ սպայական աստիճան ֆրասական բանակին մէջ, հայկական հարիւրապետի հաւասար, որուն ապօրինաբար տիրացած էր քանի մը ժամուան համար՝ բնիկ քիլիսցի Յակոբ Թաթոյեան, Հալէպի մէջ, յատուկ պարագաներու ընթացքին:

1922-ին, ֆրանսական բանակներու Կիլիկիայէն հեռանալէ ետք, Քիլիսէն հայութիւնը կրկին անգամ հեռացաւ իր հայրենի հողերէն եւ ապաստան գտաւ Սուրիոյ Հալէպ քաղաքին մէջ, արաբ ազնիւ ժողովուրդին գուրգուրանքին արժանանալով:

Դաւիթ եւ Վարդուհի Թաթոյեաններ իրենց զաւակներուն՝ Յակոբին, Համբարձումին եւ Կարպիսին հետ հասան Հալէպ եւ իրենց ունեցած նիւթական միջոցներով տուն մը կրցան վարձել Թրապէլ-Ղուրապէ թաղին մէջ:

Դաւիթ փռապանի մը մօտ գործ գտաւ եւ ապահովեց իր ընտանիքին ապրուստը: Կը մնար զաւակները հայկական դպրոց ուղարկելու հարցը: Այդ հարցն ալ կարգադրուեցաւ շնորհիւ Քառասուն Մանկանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Մկրտիչ Ա. Քհնյ. Մուրատեանի միջնորդութեան: Երեք զաւակները՝ 5, 7 եւ 10 տարեկան, սկսան յաճախել Հայկազեան վարժարան, խոր գոհունակութիւն պատճառելով իրենց ծնողներուն:

Դպրոցական քանի մը տարիներու թաւալումով յայտնի դարձաւ, որ երէց տղան՝ Յակոբը, իր դասերուն սկսած էր չհետեւիլ եւ դպրոցէն յատուկ դիտողութիւններու նամակներով՝ դպրոցի տնօրէնութիւնը դժգոհութիւն կը յայտնէր Յակոբի ծուլութեան եւ անկարգապահութիւններու մասին: Հօրը դիտողութիւնները, սպառնալիքները, ձեռքերը որեւէ արդիւնք չտուին: Յակոբ կը շարունակէր իր չարութիւնները եւ ըմբոստութիւնները:

Վարժարանի տնօրէնը, Յակոբը ճամբու բերելու համար գործադրած բոլոր միջոցները գործածելէ ձանձրացած, Յակոբը կ'արտաքսէ դպրոցէն, մեծ ցաւ պատճառելով Թաթոյեան ընտանիքին:

Յակոբին հայրը, ճարահատ, երկաթագործ բարեկամի մը կը դիմէ, որպէսզի Յակոբը քովը աշխատցնէ եւ արհեստ սորվեցնէ: Սակայն, դժբախտաբար, հոն ալ հանգիստ չի կենար եւ 18 տարեկանին տունէն փախչելով՝ կը զինուորագրուի ֆրանսական բանակին, երեք տարի ծառայելու ստորագրութեամբ:

Երեք տարի ֆրանսական բանակին ծառայելով, բաւական ֆրանսերէն եւ գէնք գործածել կը սորվի: Բանակէն դուրս գալով, իրեն հետ

Ֆրանսական բանակին ծառայող Իսթէնտէր եւ Մովսէս անունով ընկերներուն հետ աւագակախումը մը կը կազմեն եւ կը սկսին կողոպտել տուներ ու խանութներ, տիրանալով մեծ քանակութեամբ գումարներու եւ հարստութեան: Դժբախտաբար, իրենց աւագակախին արշաւանքներու ընթացքին անխղճօրէն սպանութիւններ ալ կը կատարէին, ձերբակալուելու վտանգին առաջքը առնելու համար:

Ոստիկանութեան ջանքերը եւ հետապնդումները դրական արդիւնքի չեն հասնիր: Միշտ, անհաւատալի ճարպիկութեամբ, զինուորական կրթութիւն առած այս գողերը ոստիկանութեան պաշարումները կը ճեղքէին եւ իրենց հետքը կը կորսնցնէին:

Օր մըն ալ Յակոբ կը մտածէ օր ցերեկով մեծ գողութիւն մը կազմակերպել: Կը հազնի Ֆրանսական բանակի սպայական եօթնանի համազգեստը, ատիճաններն ու պատուանշանները, եւ «Պուլըվար տը Ֆրանս» պողոտայի ոսկերչական մեծ վաճառատուն ուղղուելու ճամբուն վրայ կը հանդիպի ճիշդ իր համազգեստը, աստիճանը եւ պատուանշանները ունեցող Ֆրանսացի սպայի մը:

Ֆրանսացի սպան կը բարեւէ եւ կ'ուզէ ծանօթանալ իր մասնագիտութիւնը ցոյց տուող եւ տարազը ունեցող սպային, այն գիտակցութեամբ, որ իր կայագօրին մէջ այդպիսի սպայ մը գոյութիւն չունի: Կը մօտենայ Յակոբին եւ կ'ուզէ գիտնալ իր անունը եւ ո՛ր կայագօրին պատկանելութիւնը: Յակոբ զգալով, որ կրնայ խարդախութիւնը երեւան ելլել եւ այդ պատճառով ձերբակալուիլ, կը հանէ ատրճանակը եւ կը հրամայէ Ֆրանսացի սպային հանել սպայական տարազը եւ իր առջեւէն վազել, առանց ետեւը դառնալու, «Պաղտատ» կայարանի ուղղութեամբ:

Ֆրանսացի սպան, իր կեանքը փրկելու գնով, կը հնազանդի Յակոբի հրամանին եւ զրեթէ մերկացած, առանց նաեւ ետեւը նայելու, կը վազէ «Պաղտատ» կայարանի ուղղութեամբ:

Այս պատահարի ազդեցութեան տակ, ժողովուրդը Յակոբ անունին կը կցէ «Եօթնան» տիտղոսը, զինք կոչելով Եօթնան Յակոբ:

Տարիներ կ'անցնին, աւագակախումբի անդամները կը շարունակեն իրենց աւագակութիւնները եւ իրենց համար դժբախտ օր մը պաշարուելով՝ կը ձերբակալուին, եւ դատ-դատաստանէ ետք, կը դատապարտուին 15 տարուան բանտարկութեան:

Բանտին մէջ Յակոբ եւ ընկերները տրտում-տխուր օրեր կ'անցընեն, եւ կը մտածեն ձեւով մը փախչիլ բանտէն եւ կրկին ապրիլ ազատ՝ շարունակելու իրենց տնաքանդ արկածախնդրութիւնները եւ հեռանալ Սուրիոյ սահմաններէն:

Եօթնան Յակոբ արդէն իսկ թեւակոխած ըլլալով 32 տարիքը, սկսած էր յոռետես դառնալ՝ իր մազերուն մէջ նշմարելով կարգ մը ճերմակ մազեր: Իրենց այցելութեան եկող կարգ մը բարեկամներէն կը



խնդրեն բերել հողը փորող կարգ մը գործիքներ եւ յանձնել զինուորական պահակին, որուն կաշառք տուած էին, որպէսզի այդ գործիքները դադտնորէն իրենց յանձնէ:

Քանի մը շաբաթ ետք, ապսպրանքը կատարուած էր եւ գործիքները սկսած էին փորել երեք ընկերներու բանտարկուած սենեակին պատը:

Ամէն օր, գիշերուան հանգիստ պահուեն, երբ ամէն մարդ քնացած կ'ըլլար, հայ բանտարկեալները կը փորէին պատը եւ իրենց բարեկամ զինուորին օգնութեամբ հանուած հողերը կը թափէին բակի հորին մէջ:

Մէկ տարուան դանդաղ աշխատանքով կարելի կ'ըլլայ մարդու լայնքով անցք մը բանալ բանտասենեակէն, ուրկէ Յակոբ կը սողոսկի եւ գարմանալի անցքի մը հանդիպելով՝ կը շարունակէ իր յառաջխաղացքը ու կը հասնի ջրհորի մը: Ջրհորէն դուրս կ'ելլէ եւ ինքզինք կը գտնէ բանտէն բաւական հեռու տունի մը բակին մէջ: Ձեւով մը, առանց աղմուկի, բակի դուրսի դուռը կը բանայ եւ կ'աներեւութանայ: Բայց ո՞ւր պիտի երթայ եւ պահուըտի երբ առաւօտ ըլլայ եւ քօղարկուի իր փախուստը:

Կը մտածէ իր հօրը տունը հանդիպիլ, սակայն իր ծերունի հօր անգութ նայուածքէն եւ անէծքէն խոսսափելով՝ կը մտածէ երթալ իր մօրաքրոջ տղուն տունը, որ կը գտնուէր Նոր Գիւղի 4-րդ թաղամասին մէջ:

Մօրաքրոջ տղան՝ Յովհաննէս, իր ազգականը սիրով կ'ընդունի, սակայն իր երեք զաւակներով խճողուած տունը պատշաճ չգտնելով՝ կը թելադրէ, որ պատսպարուի իր զոքանչը նոր մեռած աներոջ տունը:

Ամիսներ կ'անցնին, ոստիկանութեան փնտռողքը եւ հարցաքննութիւնները Յակոբը ձերբակալելու՝ արդիւնքի չեն հասնիր:

Ոստիկանութիւնը Յակոբին հետքը գտնելու համար բանտէն կ'արձակէ Յակոբին երկու ընկերները՝ Իսքէնտէրը եւ Մովսէսը, որոնք բացուած խոռոչէն փախչելու յանդգնութիւնը չէին ունեցած եւ մնացած էին բանտին մէջ:

Անոնք իրենց յայտնի միջոցներով կը գտնեն Եօթնան Յակոբին պատսպարանը եւ կ'առաջարկեն հեռանալ Հալէպէն եւ ապաստանիլ «Քրտական Լեռ» (Ճէպէլ Քրատ) քիւրտերու աշիրաթապետին շրջանը:

Եօթնան Յակոբ եւ իր երկու ընկերները, զինուած «Քոլթ» տասնոցներով եւ դաշոյններով, կը հեռանան Յակոբի մօրաքրոջ տղուն աներոջ տունէն: Որոշ ատեն մը կը մնան «Քրտական Լեռ», ապրելով ազատ պայմաններու մէջ, որուն կարօտը ունէին երկար ատենէ ի վեր:

Քիւրտերու աշիրաթապետէն, որուն հովանիին տակ կ'ապրէին մեր երեք փախստականները, հրահանգ կը ստանան որոշ գումարի մը փոխարէն ահաբեկել քրտական «Միւրիւտ» համայնքի շէյխը:

Այս առաջարկը թէեւ դժուար եւ վտանգաւոր էր, սակայն չէին կրնար մերժել, նկատի ունենալով իրենց փախստական կացութիւնը: Կը զինուին աւելի արդիական գէնքերով եւ միւրիւտներու շրջանը հասնելով՝ կը հետապնդեն շէյխին շրջագայութիւնները: Սակայն շաբաթներ տեւող հարցաքննութիւններէ ետք, չեն կրնար շէյխը գտնել եւ իրենց առաքելութիւնը իրականացնել, ստիպուած, առանց քիւրտ աշիրաթապետին հանդիպելու, կը հեռանան «Քրտական Լեռ»-էն եւ կրկին կ'իջեւանին իրենց նախկին թաքստոցը:

Դէպքերու այս կացութենէն ետք, հայկական գերեզման տանող կամուրջին տակ մեռած կը գտնեն բանտէն արձակուած Եօթնան Յակոբի ընկեր Իսքէնտէրի սպաննուած դիակը:

Լուրը Եօթնան Յակոբին կը հասնի: Ան իրեն սպառնացող վտանգին հոտը առնելով՝ կ'առաջարկէ իր մօրաքրոջ տղուն, որպէսզի միջոցներ գտնէ՝ կարենալ երկրէն հեռանալու:

Յակոբին մօրաքրոջ տղուն աները, որուն տունը կը մնար Յակոբ, կը մտածէ Յակոբը Պաղտատ փախցնել: Սակայն ինչպէ՞ս: Նախ Յակոբը իր տունէն հեռացնելով կը տանի «Պաղտատ» կայարանի մօտ գտնուող սասունցի Հայրապետին փոռը, խոստանալով յաջորդ առաւօտ գալ եւ զայն ձեւով մը մասնագէտ անձերու միջոցաւ Պաղտատ փախցնել:

Սակայն Շաբաթը Ուրբաթէն առաջ կու գայ: Փախստական Մովսէս, Իսքէնտէրի հետ նիւթական հարցերով տարակարծութիւն ունենալով, Իսքէնտէրը սպաննելէ ետք, ոստիկանութեան կը մատնէ Յակոբին թաքստոցին տեղը:

Ոստիկանութիւնը այդ գիշեր, առաւօտեան արշալոյսին կը պաշարէ Յակոբին մօրաքրոջ տունը, ինչպէս նաեւ անոր աներոջ տունը, սակայն Յակոբը չգտնելով՝ կը ձերբակալէ Յակոբին մօրաքրոջ տղուն աները եւ աներորդին: Ոստիկանատան մէջ կը սկսին ծեծել ձերբակալները: Աներոջ կերած ծեծը ոտքերուն տակ, յատուկ ուտինէ շինուած գաւազաններով, ոչ մէկ արդիւնք կու տայ, սակայն որդին, 15 տարեկան դպրոցական աշակերտը, երբ կը սկսի ծեծուիլ, չգիմանալով՝ ոստիկանութեան կ'ըսէ, որ իր հայրը Եօթնան Յակոբը «Կառտը Պաղտատ» գտնուող սասունցիին փոռը տարաւ:

Ոստիկանութիւնը շուտով կը պաշարէ սասունցի Հայրապետին փոռը, եւ, բարեբախտաբար Յակոբը քնացած ըլլալով, դիւրութեամբ կը ձերբակալէ զայն, ի մեծ պարծանք Հալէպի ոստիկանութեան:

Այս դէպքը մեծ տառերով եւ առաջին էջերու վրայ լոյս կը տեսնէ Հալէպի արաբական թերթերուն մէջ, 1939-ի Յունիսին:

Հալէպի բարձրագոյն դատարանը ցկեանս բանտարկութեան դատապարտեց Եօթնան Յակոբը, որ իր կեանքով պատիւ չէր բերեր հայ ժողովուրդին, որ կ'անիծէր Յակոբին եւ անոր նման հայ երիտասարդներուն արարքները:

*Իսկ եկեղեցիներու մէջ Հայ եկեղեցականները իրենց քարոզներով Հայ պատանիներուն կը թելադրէին ըլլալ պարկեշտ, կարգապահ, ծնողասէր, ազգասէր եւ մաքուր քրիստոնեաներ, պատիւ բերելով իրենց ազգին եւ ծնողքին:*



14 Յուլիս 2004-ին, Հայաստանի Գրողներու Միութեան կլոր սեղանի սրահին մէջ տեղի ունեցող Գրիգոր Հոթոյեանի գրական-ստեղծագործական եւ հասարակական գործունէութեան 60-ամեակը: Չեռնարկի վերջաւորութեան Գրիգոր Հոթոյեան խօսք առաջնորհակալական խօսք արտասանելու կազմակերպողներուն: Չախէն աջ՝ Թատերագիր, բանաստեղծ Հրանդ Մարգարեան, գեներալ-մայոր Սամուէլ Սաֆարեան, Գրիոր Հոթոյեան, բանաստեղծ, պատմաբան եւ «Ուխտատուն» հիմնարկութեան տնօրէն Սասուն Գրիգորեան, Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան:

## ԹՈՐՈՆԹՈՅԷՆ ԵՐԵՒԱՆ, ԳՈՐԻՍ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

1991-ին Հայաստանի վերանկախացումը եւ Համայնավար վարչաձեւի փլուզումը առիթ ընծայեցին, որ անհուն կարօտով Հայրենիքս եւ Հոն ապրող Սասունէն Մեծ Եղեռնին ապաստանած եւ Հաստատուած Հօրս կողմէ մեր Հարազատները տեսնելու ու անոնց ծանօթանալու փափաքս իրականացնեմ, ուստի որոշեցի Հայաստան մեկնիլ եւ տասնեակ տարիներ առաջ կատարած ուխտս իրագործել:

KLM օդանաւով Թորոնթոյէն մեկնեցայ 5 Սեպտեմբեր 1997-ին: Ամսթերտամ Հասայ տեղական ժամով 7:45-ին: 9 ժամ Ամսթերտամի օդակայանին մէջ թափառելէ ետք, երեկոյեան ժամը 5:30-ին, Հայկական TU154-BU օդանաւով Երեւան Հասանք գիշերը ժամը 12-ին: Այդ գիշեր ինծի դիմաւորութեան եկած Անդրանիկ Մելքոնեանի տունը պառկեցայ, որուն Թորոնթօ գտնուող աներորդիին զրկած դեղերը եւ նուէրները յանձնեցի:

6 Սեպտեմբերի առաւօտ իմ Հարազատներու տունները փնտռեցի, որոնց Հասցէները ունէի: Հօրս Հօրեղբօրորդիին՝ Մերուժանին տունը գտանք, սակայն ինք Հոն չէր: Հեռաձայնով գտանք Հօրս միւս Հօրեղբօրորդիին՝ Ժորայեանց տունը եւ Հոն մնացի այդ գիշեր, եւ յաջորդ օր Անդրանիկ Մելքոնեանին տունէն պայուսակներս բերինք եւ ես Հոն մնացի մէկ ամիս: Իր եղբօր՝ Դաւիթին եւ միւս ազգականներուս կողմէ Հնարաւորութիւն ունեցայ տեսնելու Երեւանի տեսարժան վայրերը, այցելեցի Գրողներու Միութեան կեդրոնը, տեսակցեցայ այդ օրերու վարչութեան նախագահ մեծանուն արձակագիր Հրանդ Մաթեւոսեանի եւ այլ գրողներու Հետ:

Մէկ ամսուան Երեւանի եւ այլ քաղաքներու եւ գիւղերու մէջ իմ ազգականներուս Հետ տեսակցութիւններս, կարօտակէզ Հանդիպումներս, մեր ծնողներու Սասունի կեանքին եւ յիշատակներուն մասին գրելը՝ ընդարձակ տպաւորութիւններ եւ զգացումներ արձանագրել կը պահանջէ: Նպատակս այս գրութեամբ իմ Հօրս Հօրեղբօրորդիին երկու գաւակներուն՝ Դաւիթին եւ Ժորային Հետ Երեւանէն Գորիս եւ Արցախ մեր ուղեւորութեան մասին յիշատակելը պիտի ըլլայ:

27 Սեպտեմբեր 1997. Ըստ մեր Համաձայնութեան, առաւօտեան ժամը 10-ին Դաւիթը եկաւ, իսկ Ժորան եկաւ ժամը 11-ին: Նախաձաշէն ետք ճամբայ ելանք դէպի Արցախ-Ղարաբաղ, որ 1988-էն ի վեր ազրպէյճանական յարձակումներուն դէմ պաշտպանուելէ եւ յաղթելէ

ետք՝ իր անկախուժիւնը յայտարարած էր, որպէս Լեոնային Ղարաբաղի Հանրապետութիւն:

Հաճելի ճամբորդութիւնը սկսաւ աղօթքով, հայկական երգերով եւ երաժշտութեամբ: Հերթականօրէն անցանք Արտաշատի շրջանի Երասխ եւ Արմաշ գիւղերէն: Ծամբան կեցանք եւ մեր յարգանքը մատուցանեցինք հանճարեղ բանաստեղծ Պարոյր Սեւակի գերեզմանին, որ 17 Յունիս 1971-ին, համայնավար վարչաձեւի ոճրագործներ ինքնաշարժի արկած կազմակերպելով սպաննեցին տաղանդաւոր բանաստեղծը: «Եղիցի լոյս եւ եղաւ խաւար» արձանագրուած է անոր գերեզմանին վրայ:

Ապա մուտք գործեցինք Վայոց Ձորի մարզը, անցնելով Եղէզնաձոր, Սեւակաւան, Ելփին, Նորավանք, Աղաւնաձոր, Արփի, Գետափ, Մալիշքա, Վայք, Զառիթափ, Կարմրաշէն, Հեր-Հեր գիւղերէն:

Սիւնիքի մարզը, Սիւնեաց լեռներով, թէեւ լերկ, սակայն այնքան գեղեցիկ եւ տպաւորիչ է: Սիւնիքի մուտքի յուշակոթողին մօտ նկարուեցանք: Հոն՝ Որոտան գետի լայնածաւալ մասը հիանալի էր: Շարունակեցինք մեր երթը Սառնականք, Սպանդարեան, Վաղոտնի, Հարժիս, Հալիձոր, եւ ապա շարունակեցինք մեր ճամբան դժուարանցանելի լեռնային ճամբաներով, սքանչելի տեսարանները վայելելով, բարձրացանք Տաթեւի վանքը: Ինչպէս չսքանչանալ հայ ժողովուրդի հաւատքի զօրութեան, որ յանդգնած է բարձրաբերձ լեռներու բարձունքին վրայ բարձրացնել այս հրաշալի վանքը: Հինաւուրց մենաստանը Սիւնեաց աշխարհի՝ իր պատմական յիշատակարաններով, իր



Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ,  
արձակագիր Հրանդ Մաթեւոսեանի հետ՝ 2000 թուականին

չարժական սիւնով, իր բնական աննման տեսարաններով: Տաթևի ձորը, ուր մի քանի գետերու միացումով Որոտան գետի աւազանին հետ կը կազմուի ընդարձակ ու վիթխարի ձոր, կանաչ անտառներով պատած:

Կը պատմուի, որ մոնկոլական ծնունդով Լենկթիմուր, ասիական բազմաթիւ երկիրներ գրաւելէ ետք, կը հասնի Հայաստան՝ Արաքսի ափը: Դեռ գետը չանցած, անոր կը ներկայանայ Միհրի անունով հայ իշխան մը, եւ փոխան մեծ գումարի կը ներկայանայ Լենկթիմուրին եւ կ'առաջարկէ իր ծառայութիւնը անոր: Թիմուրի հարցին, թէ ինչո՞վ կ'ուզէ ան ծառայել իրեն, իշխանը կը պատասխանէ.

— Քանի գիւղի բարձունքին գտնուող զանգը կայ, դուն չես կրնար այս երկիրը գրաւել: Գիւղացիները թշնամին երբ հեռուէն կը տեսնեն, այդ զանգը կը զարնեն եւ ժողովուրդը լսելով զանգի ղողանջները՝ կը համախմբուի եւ կը պատերազմի թշնամիին դէմ:

Լենկթիմուր քիչ մը մտածելէ ետք՝ կ'ըսէ.

— Գնա՛, այդ զանգը վառէ՛, փճացո՛ւր: Այդ բարութեանդ դիմաց ես քեզի ոսկի եւ իշխանութիւն կու տամ:

Դաւաճանը իրեն նման քանի մը համախոհներու հետ կ'երթայ եւ խարոյկ վառելով զանգակին տակ, կը կտրէ զանգակին ձայնը:

Լենկթիմուր զօրքով կ'անցնի Արաքս գետը: Վանահայրը իմանալով Լենկթիմուրի զօրքին յարձակման լուրը, կը կանչէ զանգակահարը եւ կը կարգադրէ շտապ զանգահարել: Զանգահարը որքան կը փորձէ, զանգէն ձայն չ'ելլեր: Զանգահարը կը վազէ վանահօր մօտ եւ կ'ըսէ.

— Լենկթիմուրը գիշերով եկած է եւ գրաւած է ամբողջ երկիրը:

Գիւղացիները զարմանքով իրարու կը հարցնեն.

— Բայց ինչո՞ւ չզանգահարեցին:

Ոմանք կը պատասխանեն.

— Զանգը գո՛ւր է, զանգը գո՛ւր է...:

Այդ դէպքէն վերջ գաւառին անունը կը մնայ «Զանգեղուր»:

Լենկթիմուր որոշած է հիմնադրուի կործանել Տաթևի վանքը եւ արմատախիլ ընել անոր մօտ գտնուող շարժական գաւազան սիւնը: Անոր համար, ան կը հրամայէ իր հրոսակներուն լծել 10 զոյգ գոմէշ, գութանի շղթայով կապել սիւնին եւ քաշել: Երբ գոմէշները կը սկսին քաշել, շղթան կը կտրուի եւ գոմէշները կ'իյնան ձորը: Լենկթիմուր եղածը տեսնելով՝ կը հեռանայ Տաթևէն:

Զանգեղուրի լեռները ունին 120 քիլօմետր երկարութիւն եւ մինչեւ 3000 մետր եւ աւելի բարձրութիւն: Զանգեղուրի լեռներէն սկիզբ կ'առնեն բազմաթիւ գետեր, որոնք տեղ-տեղ յառաջացուցած են խոր ձորակներ եւ կիրճեր: Հոսող ջուրերը, քայքայելով ապառաժները, որոշ տեղերու մէջ գոյացուցած են սահանքներ եւ գեղեցիկ ջրվէժներ, ինչպիսին է օրինակ Շաքէի ջրվէժը: Զանգեղուրի լեռներու բնորոշ ա-

ուանձնայատկութիւններէն են հողմնահարութենէն խիստ ալլափոխ-  
ուած բարձունքներու ձեւեր, որոնց գագաթային մասը ունի անառիկ,  
վայրի տեսք:

Դժուարանցանելի կատարներով աչքառու է լեռնաշղթային յատ-  
կապէս հարաւային մասը: Այստեղ կը գտնուին անոր ամէնէն բարձր  
գագաթները՝ Սալվարդ, Շահապանք, Երնջակ, Նահապետ, Կապուտ-  
ջուղ եւայլն: Կապուտջուղը ունի 3906 մետր բարձրութիւն: Մեղրիի  
մօտերը Զանգեզուրի լեռնաշղթան դէպի Արաքսի կիրճը կ'իջնէ գա-  
ռիթափ լանջերով, որոնք կ'ապշեցնեն իրենց տարօրինակ ձեւերով եւ  
խայտաբղէտ գոյներով: Հարաւի Զանգեզուրի լեռները մասամբ ծած-  
կուած են լայնատերեւ անտառներով, ուր կ'աճին վայրի պտղատու  
ծառեր:

Մէկ ժամ տեւեց Տաթեւէն էջքը դէպի Որոտանի եզերքը՝ խիտ  
մշուշի ներքեւ, մէկ ժամ ալ վերելք՝ քարքարոտ արահետներով Գորի-  
սի ճանապարհին հասնելու համար:

Գորիս մտնելով՝ կանգ առինք բաւական ընդարձակ պանդոկի մը  
առջեւ եւ առաջարկեցինք Դաւիթին, որ պանդոկ բարձրանայ: Դաւիթ  
կը պատրաստուէր ինքնաշարժը ապահով տեղ մը դնել, երբ այդ պա-  
հուն շուրջ 70 տարեկան անձ մը մեզի մօտեցաւ եւ առաջարկեց իր մօ-  
տակայ տունը գիշերել յարմար վարձքով: Մարդը ազնուօրէն ըսաւ.

— Եթէ հաւնիք՝ կը մնաք, ալլապէս պանդոկը հոն է:

Գացինք: Իսկապէս մաքուր տուն էր: Երեք մահճակալներով, մա-  
քուր սաւաններով: Երկուքը առանձին սենեակի մը մէջ, երրորդը՝ ա-  
ռանձին: Դաւիթն ու ժորան սակարկեցին: Մարդը անձ գլուխ 1000  
դրամ ուզեց: Մերինները երեքիս 2500 դրամ առաջարկեցին: Համա-  
ձայնեցան: Մեր պայուսակները բերինք եւ տեղաւորուեցանք:

Մարդուն անունը Անուշաւան Հայրապետեան էր, կնկան անու-  
նը՝ Փնջիկ: Տունին հասցէն՝ Մովսէս Խորենացի փողոց, համար 57, հե-  
ռաձայն՝ 2-06-37:

Ամէն պարագայի, Դաւիթը գնաց եւ պանդոկի գիներուն ծանօ-  
թացաւ: Իրենց՝ որպէս հայաստանցի՝ օրը 4500 դրամ, իսկ ինձի՝ որպէս  
արտասահմանցի՝ 12.500 դրամ: Ուրեմն, Պր. Հայրապետեանի տան  
պայմանները աւելի գոհացուցիչ էին:

Պր. Հայրապետեանին տունը երկու յարկէ կը բաղկանար: Առա-  
ջին յարկին վրայ գոյութիւն ունէին երկու սենեակ, խոհանոց եւ  
լուացարան, իսկ երկրորդ յարկին վրայ՝ մեզի տրամադրուած երկու  
ննջասենեակները եւ փոքրիկ սենեակ մը: Երբ մենք եկանք, տիկին  
Փնջիկ վառարանին վրայ գետնախնձորով կերակուր կ'եփէր: Մեզի  
հետ շուտ մը մտերմացան եւ ստիպեցին, որ միասին ընթրենք: Որ-  
պէսզի մեր մասնակցութիւնը արդարացնենք, ժորան պանդոկէն խո-  
րոված բերաւ եւ բոլորս միասին հաճոյքով ընթրեցինք, ապա խմիչ-  
քով, թէյով եւ սուրճով հիւրասիրուեցանք:

Պր. Հայրապետեան եւ տիկին Փնջիկ գորիսեան բարբառով խօսեցան Հայաստանի քաղաքական եւ տնտեսական կացութեան մասին եւ իրենց կեանքի դժուարութիւններուն մասին: Անոնք ունեցած են չորս աղջիկներ, որոնք հարս գացած են շրջանի գիւղերը: Պր. Հայրապետեան կենդանիներու (անասուններու) բժիշկ եղած է խորհրդային տարիներուն, սակայն տարիքի բերմամբ հանգստեան կոչուած էր եւ ստիպուած՝ իր տան ննջասենեակները վարձու տալով իրենց ապրուստը ապահովել:

Այդ գիշեր, 27 Սեպտեմբեր 1997, զարմանալիօրէն օդը ցուրտ էր: Անկողին մտայ, սկսայ դողալ: Կամաց-կամաց անկողինը տաքցուցի եւ քնացայ:

Կիրակի, 28 Սեպտեմբերի առաւօտեան ժամը 8-ին արթնցանք, Հայրապետեանները մեզի համար նախաճաշ պատրաստած էին: Պատրաստուեցանք մեկնելու: Ես, Դաւիթին եւ Ժորային բացակայութենէն օգտուելով, մեզի օգնող Հայրապետեաններուն մօտեցայ եւ իրենց տուի երեք հազար դրամ, թելադրելով, որ աւելի վճարածս մերիններուն չըսեն:

Մենք շատ գոհ մնացինք այս բացառիկ պանդոկէն եւ տիրոջ հարազատի սպասարկութիւններէն: Իրենք ալ գոհ էին մեզմէ:

— Այդ պատճառով, որեւէ ատեն եթէ Գորիս գաք,— ըսաւ Պր. Անուշաւանը,— մեր տունը պատրաստ է ձեզ ընդունելու եւ որպէս հարազատ հիւրասիրելու:

Բաժնուեցանք հիւրասէր եւ ազնիւ այս հայ տունէն եւ ճամբայ ելանք դէպի Արցախ-Ղարաբաղ, անցնելով Հարթաղէն, Խնձորեսկ եւ այլ գիւղերու մօտէն եւ լեռնային դժուարանցանելի եւ նորոգուող ճամբաներէն ետք, անցանք Քարաշէն գիւղէն, Աղաւնոց գետէն եւ հասանք Բերդաձոր գիւղը, ուր ազատագրական ծանր կռիւներ տեղի ունեցած են: Անցնելով Քաշաթաղ-Լաչին շրջանէն, շարունակեցինք մեր ճամբան: Նկատեցինք, որ Բերդաձորն ու Քաշաթաղը ազատագրուելէ ետք հայերով բնակուած են, թէեւ տուներուն մեծ մասը կիսաքանդ եւ անմարդաբնակ էր:

Մինչեւ Քարինտակ եւ Շուշի՝ անցանք լեռնային ճամբաներով: «Հայաստան Հիմնադրամ»-ի կողմէ կառուցուող Գորիս-Ստեփանակերտ ճամբան կը շինուէր բլուրներու եւ լեռներու կողերը քանդելով, արդիական մեքենաներով լայնցնելով նախկին արահետները եւ արդէն իսկ կարգ մը հատուածներ ասֆալթապատուած եւ արդիական օրէնքներով գործածուիլ սկսած էին: Ըմբբան, ստիպուած, բլուրները քանդող թրաքթօրներու աշխատանքին պատճառով, սպասեցինք որ բացուի, որպէսզի շարունակենք մեր ճամբորդութիւնը:

Հասնելով Շուշի, հանդիպեցանք կիսաքանդ եւ հրդեհուած տուներու, որոնց ազրպէյճանցի տէրերը անբնակելի ըլլալով՝ հեռացած էին քաղաքէն:



Հայերը գրավելով պատմական Շուշին՝ սկսած են վերանորոգութեան աշխատանքները, առաջին հերթին Ղազանճոց եկեղեցին, որ որպէս զինամթերանոց գործածուած էր ազրպէյճանցիներու կողմէ, ինչպէս նաեւ թաղային ճամբաներ եւ տուններ, ուր հայերը սկսած էին բնակութիւն հաստատել, դպրոց բանալով հայ աշակերտութեան համար:

Շուշիէն ետք շարունակեցինք մեր ճամբան: Հասանք Ստեփանակերտ, ապա շարունակեցինք մեր ճամբան դէպի Աղղամ՝ ազրպէյճանական քանդուած քաղաքը, ուր քանդուած տուններու բակերուն մէջ գտնուող նուռի թուփերէն քանի մը տհաս նուռեր փրցուցի եւ հետո թորոնթօ բերի որպէս յիշատակ:

Ինչպէ՞ս չզնահատել ղարաբաղեան ազատամարտիկներու հերոսութիւնն ու քաջութիւնը, որոնք ամբողջ քաղաք մը քանի մը ժամուան ընթացքին գրաւած են:

Երբ Աղղամէն կը վերադառնայինք, ակնատես եղանք Աղղամի քանդուած տուներէն յատուկ ինքնաշարժներով բեռցուած տնային քարերու, որպէսզի գործածուին Ստեփանակերտի պատերազմէն քանդուած տուններու վերաշինման: Ճամբան հայ ոստիկաններու հանդիպեցանք, որոնց հետ նկարուեցանք:

Աղղամէն ետք մեր ճամբան շարունակեցինք դէպի Գանձասարի Ս. Յովհաննէս եկեղեցին, անցնելով փոսերով եւ կիսաքանդ ճամբաներով, շնորհիւ հօրեղբօրորդի Դաւիթին վարպետութեան եւ համբերութեան:

Ճամբան երբ ես կը սքանչանայի Ղարաբաղի հրաշալի գեղեցկութեան, բլուրներու եւ լեռներու կանաչապատ տեսքին՝ հայրենակարօտ բացազանչութիւններով, Դաւիթ այս անգամ չկրցաւ համբերել եւ ըսաւ.

— Աղբա՛ր Գրիգոր, դուն այս բոլոր գեղեցկութիւնները տեսնելով, վայելելով, «օխ՛շ» կ'ըսես, առանց բան մը ուտելու, բայց մեր փորը կը մռմռայ, անօթեցանք:

Դէպի Գանձասար ճամբուն վրայ ակնատես եղանք պատերազմէն մնացած քանդուած հրասայլերու, զինուորական փոխադրամիջոցներու եւ այլ զինուորական պիտոյքներու: Անցանք Յովսէփաւան, Դաշդուլաղ, Այբիգէն, Կիջան, Վանք գիւղերէն: Վերջապէս հասանք լեռնագագաթին վրայ գտնուող Ս. Յովհաննէս եկեղեցին:

Եկեղեցին մտանք, աղօթեցինք, մոմ վառեցինք, ապա ծանօթացանք եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Յովհաննէս Քհնյ. Յովհաննէսեանի հետ, որ աւարտած է Ս. Էջմիածնի դպրեվանքը: Երիտասարդ քահանայ մը, որ ուզեց հիւրասիրել մեզ, բայց մենք մերժեցինք:

Ս. Յովհաննէս եկեղեցին շինուած է 1216 թուին: 1992-ին ազերիները ումբակոծած են վանքը, պատճառ դառնալով քանդումներու:

Մէկ հոգի սպաննուած է եւ երկու հոգի վիրաւորուած: Վերաշինութեան աշխատանքները կը շարունակուին: Հոն գերեզմաններ կային: Յուշակոթող մը տեսանք, որուն տակը գրուած էր «Աստ հանգչի Ներսէս Հասանճալեանց» անունով մարդու մը անունը:

Ս. Յովհաննէս եկեղեցին աշխատունակ է եւ Վանք գիւղի ժողովուրդը միշտ ներկայ կ'ըլլայ պատարագներուն եւ ժամերգութիւններուն: Իրապէս գնահատելի է Վանք գիւղի ժողովուրդին կրօնասիրութիւնը:

Երեկոյեան ժամը 5:30-ին Ստեփանակերտ վերադարձանք:

Ստեփանակերտի կեդրոնական հրապարակին վրայ գտնուող գեղեցկատեսիլ, խորհրդային տարիներուն շինուած պանդոկէն մէկ սենեակ երկու մահճակալով վարձեցինք՝ օրը 2600 դրամով, ես եւ ժորան գիշերեցինք այդ պանդոկին մէջ, իսկ Դաւիթը մեկնեցաւ իր բարեկամին տունը, որուն հետ ցորեն եւ ալիւր հայթայթելու առեւտրական կապ ունէր:

Պանդոկին ներքնայարկը գտնուող ճաշարանին մէջ խորոված ապսպրեցինք: Մեր դրամով շատ աժան ընթրիք մը ճաշակեցինք եւ ժամը 9-ին ելանք մեզի տրամադրուած սենեակը, ճայնաւոր մահճակալով: Իսկ լուսցարանը, հինցած եւ ժանգոտած խողովակներով եւ ծորակներով, ձեւով մը մեր պէտքերը գոհացուց:

Առաւօտեան ժամը 7-ին արթնցանք: Պատշգամ ելլելով՝ Ստեփանակերտի առաւօտը դիմաւորեցինք, դիտելով գործի գացող ստեփա-



Ղարաբաղի նամբուն վրայ

նակերտցիները: Ժորան սուրճ պատրաստեց: Դաւիթն ալ եկաւ: Ես եւ ժորան արտաքին նախարարութիւն դացինք, որպէսզի թոյլտուութիւն ստանամ կարգ մը տեսարժան վայրեր նկարելու: Պաշտօնեան մեր ինքնութիւնը ճշդելէ ետք, արտօնութիւն տուաւ: Դուրսը կեցած էինք, եկաւ Դաւիթին բարեկամը՝ Արկադի Հայրապետեան: Դաւիթ զիս ներկայացուց Արկադիին, ընդգծելով մեր ազգականական կապը:

Պանդուկին հետ մեր հաշուետուութենէն եւ վճարումէն ետք, ճամբայ ելանք դէպի Շուշի: Այցելեցինք «Արամ Մանուկեան» վարժարանը եւ հանդիպում ունեցանք տնօրէն Պր. Յովիկ Մուսայէլեանին եւ ուսուցչական կազմին հետ: Յովիկ Մուսայէլեան բանաստեղծ է եւ տարիներ առաջ, Շուշի այցելող թորոնթոցի մը հետ, մակագրուած իր բանաստեղծութիւններու գիրքը ինծի նուիրած էր: Խոմբով նկարուեցանք, հիւրասիրուեցանք քոնեակով եւ տուրմով (շոքոլա): Այն ատեն Շուշիի «Արամ Մանուկեան» դպրոցը ունէր 190 աշակերտ: Նկարուեցանք աշակերտներուն հետ:

Այս այցելութեամբ Յովիկ Մուսայէլեանի հետ մեր բարեկամութիւնը աւելի սերտացաւ: Ան մեզ ճաշի հրաւիրեց, սակայն ժամանակի սղութեան պատճառով չկրցանք գոհացում տալ իր փափաքին: Իմ բանաստեղծութիւններուս առաջին գիրքը՝ «Սիրտը Ափին Մէջ», մակագրելով իրեն նուիրեցի, ինչպէս նաեւ Ղարաբաղի մասին գրած բանաստեղծութիւններուս երգի վերածուած ֆաւէթը: Շատ շնորհակալ եղաւ:

Շուշիէն լեռնային ճամբաներով ճամբայ ելանք՝ վերադառնալու համար անկախ Հայաստանի մայրաքաղաք Երեւան:

Ճամբան անօթութիւն զգալով՝ կեցանք «Արմէն Խոհանոց» ճաշարանին առջեւ: Խորովածի ապսպրանքէ ետք, տեղ գրաւեցինք մեզի յատկացուած սեղանին շուրջ: Դաւիթ ապսպրած էր նաեւ օդի: Սկըսանք ուտել եւ կենացներ արտասանել: Ճաշարանին տէրը մեզի մօտեցաւ եւ հարցուց, թէ ուրիշ բանի պէտք ունի՞նք: Դաւիթ ըսաւ.

— Մենք Ղարաբաղ այցելութեան եկանք Ղարաբաղը ծանօթացրնելու համար մեր հօրեղբորորդիին, որ Գանատայէն որպէս ուխտաւոր եկած է Հայաստան եւ Ղարաբաղ:

Մարդը ինծի դարձաւ եւ բարի գալուստ մաղթեց եւ մեկնեցաւ: Վերադարձաւ իր հետ բերելով շիշ մը Ղարաբաղեան թուրքի օդի՝ ի պատիւ գանատացի ուխտաւորին:

Բացինք շիշը: Գաւաթները լեցուցինք: Հօրեղբորորդիներս օդին ջուրի պէս խմեցին բարի գալուստի եւ առողջութեան կենացներով, իսկ ես, իմ կարգին բարեմաղթութիւններս արտայայտելէ ետք, հագիւ ումպ մը առի թուրքի օդիէն, կոկորդս կարծես կրակ ինկաւ, չկրցայ շարունակել եւ գաւաթը տեղը դրի: Դաւիթն ու ժորան շարունակեցին խմել: Վարժութեան հարց...:

*Երեկոյեան տունն հասանք յոգնած եւ ցնցուած՝ յատկապէս ճամբաներու փոսերէն, բայց, գոնէ ես, ամբողջ սրտով եւ միտքով գոհացած, ականատես ըլլալով հազարաւոր հայրենասէր հերոսներու նահատակութեամբ ազատագրուած Արցախ-Ղարաբաղի ազերիներու կողմէ բռնագրաւուած հողերուն, ուրախութեամբ կարգալով Ղարաբաղի կառավարական շէնքին ճակտին արձանագրուած անմահ բանաստեղծ Եղիշէ Չարենցի հետեւեալ պատգամը.—*

«Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:



Խումբ մը գրողներ Ղարաբաղէն վերադարձի ճամբուն վրայ

## ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ, ՄՏԱԻՈՐԱԿԱՆ, ԳՐՈՂ, ՊԱՏՄԱԲԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ

*Ուրբաթ, 4 Յունուար 1946, լիբանանեան հաճելի ձմեռնային օր: Մեր գինուորական պարտականութիւնները վերջացնելէ ետք, գիշերային մեր արձակուրդի արտօնագիրները գրպանած, ես եւ մտերիմ ընկերս՝ Անդրանիկ Աբանեան, որուն հետ միեւնոյն օրը՝ 24 Յունիս 1943-ին Հալէպի մէջ արձանագրուեցանք ծառայելու Ֆրանսական բանակին եւ փոխադրուեցանք Պէյրութ, Մար Իլիաս ծովեզերեայ թաղամասին մէջ գտնուող «Քազերն Տէկրէ տը Լու» գօրանոցը, ապա՝ Սուրիոյ եւ Լիբանանի զանազան շրջաններ, շուրջ երեք տարի ծառայեցինք Ֆրանսական բանակի թնդանօթածգային գօրազուեղին եւ միշտ միասնաբար հետեւելով գինուորական մասնագիտական ու աստիճանաւորման դասընթացներու, ենթասպայի աստիճանով 1 Մարտ 1946-ին հրաժարելով՝ արձակուեցանք բանակէն, տեղի տալով մեր ծնողներուն խնդրանքին, որպէսզի Հայաստան ներգաղթենք, արձանագրուելու համար ներգաղթողներու ցանկերը պատրաստողներուն մօտ:*

*Ուրեմն, ընկերոջս՝ Անդրանիկին հետ քաղաք իջանք: Նախ հանդիպեցանք Անդրանիկին ծնողքին տունը, որ կը գտնուէր Նոր Սիս շրջանին մէջ: Հոն Անդրանիկի ծնողքէն իմացանք, որ Նոր Սիսի «Ագիրեան» ակումբի սրահին մէջ ժամը 7:30-ին տեղի պիտի ունենայ դասախօսական ձեռնարկ մը: Պիտի դասախօսէ Կարօ Սասունի, նիւթ ունենալով Հայ Դատի աշխատանքները:*

*Ընթրիքէն ետք, երեկոյեան ժամը 7:30-էն առաջ, ճամբայ ելանք դէպի «Ագիրեան» սրահ: Երբ հասանք սրահ, սրահը արդէն իսկ լեցուած կարելի էր համարել: Սրահի վերջին աթոռներուն վրայ տեղաւորուեցանք՝ սպասելով հանդիսավարի երեւումին: Եւ որովհետեւ Ազատ Ֆրանսիոյ բանակի մեր զգեստներով ու նշաններով եկած էինք, կազմակերպիչ յանձնախումբի անդամներուն եւ ներկաներէն շատերուն ուշադրութիւնը մեր վրայ կեդրոնացած էր: Հաւանաբար մեզ Ֆրանսացի կարծելով՝ կը զարմանային մեզ տեսնելով հայկական սրահի մը մէջ, ուր դասախօսական ձեռնարկ մը տեղի կ'ունենար:*

*Եղելութիւնը պարզուեցաւ, երբ կազմակերպիչ յանձնախումբէն Ֆրանսերէն գիտցող երիտասարդ մը մեզի մօտեցաւ եւ Ֆրանսերէնով*

Հարցուց մեր այդ սրահին մէջ գտնուելուն պատճառը, որուն հարցումին ես հայերէնով պատասխանեցի: Ապա նոյն անձը բեմ գալով ներկաներուն ուրախութեամբ յայտարարեց, որ Քրանսացի կարծուող գինուորները հայեր էին, եկած էին ունկնդրելու ընկեր Կարօ Սասունիի դասախօսութիւնը: Յայտարարութիւնը ընդունուեցաւ ներկաներու ծափահարութիւններով:

Օրուան հանդիսավարը նախ ներկայացուց դասախօս Կարօ Սասունին՝ տալով անոր կենսագրութեան համառօտ գիծերը, ապա հրաւիրեց զայն խօսելու Հայ Դատի մասին:

Դասախօսը նախ խօսեցաւ 1878-ի թուրք-ռուսական պատերազմէն առաջ եւ վերջ Հայաստանի մէջ թրքական իշխանութիւններու վարած հակահայ քաղաքականութեան հետեւանքով ստեղծուած կացութեան եւ այդ կացութիւնը բարելաւելու համար կատարուած աշխատանքներուն եւ ապստամբական շարժումներուն մասին, որոնց հետեւանքով եւրոպական պետութիւնները սկսան միջամտել թուրքիոյ ներքին գործերուն, որպէսզի Սուլթանը վերջ տայ հայերուն հանդէպ կիրարկուող քաղաքականութեան եւ ջարդերուն, ապա պարտադրեցին, որ երկու եւրոպացի ներկայացուցիչներ հսկէին գոյացած համաձայնութեան գործադրութեան:

Սակայն այդ համաձայնութիւնը չգործադրուեցաւ Առաջին Համաշխարհայի Պատերազմին պատճառով, որ առիթ ընծայեց իթթիհատական թուրքիոյ ղեկավարութեան վերջ տալու հայութեան գոյութեան թուրքիոյ սահմաններուն մէջ:

Ապա Պրն. Սասունի անդրադարձաւ Ապրիլեան Եղեռնի մասին, հետեւեալ բացատրութիւններով.

«Հայոց պատմութիւնը շատ յաճախ արձանագրած է մեծ աղէտներ, որոնք ջլատած են հայութեան ամբողջութիւնը եւ քամած անոր կորովը: Սակայն 1915 Ապրիլ 11/24-ը կը գերազանցէ հին ժամանակներու բոլոր դժբախտութիւնները թէ՛ իր ծաւալով, թէ՛ աննկարագրելի սարսափներով եւ թէ՛ մանաւանդ իր արագ ու յանկարծական գործադրութեամբ: Ազգի մը ամբողջական բնաջնջման աներեւակայելի ու դաժան ծրագիրն էր, որ գործադրութեան կը դրուէր, իսկ հալածանքն ու կողոպուտը ծրագրի բնական հետեւանքը կը դառնային:

Հայ ազգի ողնայարին իջաւ տապարը. մահացու եւ աշխարհաւեր: Ամէն տարի հայութիւնը կ'անդրադառնայ այդ համազգային սուգին: Ու տակաւին շատ երկար տարիներ պիտի ապրի այդ մորմոքը, մինչեւ որ հայ ժողովուրդի վերածնունդը գայ, օր մը, շատ հեռաւոր օր մը, սպիացնելու մէկուկէս միլիոնէ աւելի մեր հարազատներու կորուստը:

Արիւնլուայ ու ճղակտոր հայութիւնը այսուհանդերձ կը շնչէ, գերագոյն ճիգեր կը թափէ ոտքի կանգնելու, եւ կը յամառի գոյութեան կռուին մէջ՝ ազգային հաւաքական կեանք մը ապրելու համար:

Կեանքի եւ վերածնունդի տենչանքէն բռնուած հայ ժողովուրդը, հրաւիրուած, անհաւատ՝ դէպի իր շրջապատը, խիստ զգուշութեամբ քայլերն առաջ կը նետէ, որովհետեւ իր աչքը միշտ ստիպուած է սեւեռել իր անցած պատմութեան վրայ: Այս բնազդական նախազգուշութիւնը անհրաժեշտ է, որ գիտակցական դառնայ:

Ու սուգին հետ, վերապրող հայ ժողովուրդը քննական անդրադարձ մը պիտի ընէ, լիովին ըմբռնելու այն ահռելի փոթորիկը, որմէ զգետնեցաւ եւ անմոռանալի դասեր պիտի հանէ այդ դժոխային կեանքէն, որ մեր ժողովուրդի պատմութեան կարմիր ու սեւ էջերը կը կազմէ, Ապրիլեան Եղեռն անունով:

Հայոց Մեծ Եղեռնը չկրցաւ ոչնչացնել հայ ժողովուրդը: Վերապրող հայութեան ընտիր զաւակները, հայկական վրէժխնդրութիւնը շառաչիւն պատասխանը եղաւ Ապրիլեան Եղեռնին:

1921 Մարտ 15-էն մինչեւ 1922 Յուլիս 25, հերոս հայ ահաբեկիչներ Պերլինի մայթերուն վրայ Թալէաթով ցոյց կու տային հայ վրէժխնդրութեան ուժգնութիւնը եւ Թիֆլիսի մայթերուն վրայ ձեւալով կը փակէին դայն:

Մէկ առ մէկ ինկան ճիւղերը հայու բազուկէն: Թալէաթ՝ Պերլին, Զիւլանչիք՝ Պոլիս, Սայիտ Հալիմ՝ Հոռոմ, Պէհաէտտին Շաքիր եւ ձեմալ Ազմի՝ Պերլին, ձեմալ՝ Թիֆլիս, եւայլն: Այդ հերոսներն էին Սողոմոն Թեհլիրեան, Արամ Երկանեան, Միսաք Թորլաքեան, Արշալիր Շիրակեան եւ ուրիշ հայորդիներ:

Մենք պիտի մնանք հայ՝ եւ պիտի շարունակենք գոյատեւել, պայքարելով, որ վերադառնանք մեր պատմական հայրենիքը»:

\* \* \*

Յովհաննէս եղբայրս, որ Հալէպի կրողիւսի գործարաններու (Հալէպ եւ Լաթաքիա) ելեկտրական բաժնի պատասխանատուն էր, գործարանի ընդհանուր տնօրէնին հետ վիճաբանութիւն մը ունենալով՝ իր հրաժարականը ներկայացուց իր պաշտօնէն եւ նոյն պաշտօնով գործի հրաւիրուեցաւ Լիբանան, Թրիփոլիէն շուրջ 30 քիլոմետր հեռաւորութեան վրայ գտնուող Շեքքա գիւղին կից կրողիւսի «Միմենթերի Նասիոնալ» գործարանին մէջ:

Իր այդ պաշտօնը ստանալէն տարի մը վերջ՝ զիս աշխատանքի հրաւիրեց, նկատի ունենալով, որ ես ալ իմ կարգիս Ֆրանսայէն վկայուած էի որպէս ելեկտրագէտ:

Եւ քանի որ Թրիփոլի կը բնակէին քեներս՝ Մելինէն, ամուսինը՝ Սարգիս Կոնճեանը եւ զաւակները, սիրով ընդունեցի եղբօրս հրաւերը եւ 28 Յունուար 1958-ին մեկնեցայ Թրիփոլի եւ ստանձնեցի պաշտօնս: Ապա, երկու ամիս յետոյ, տիկինս՝ Շաքէն եւ անդրանիկ զաւակս՝ Անդրանիկը հասան Թրիփոլի, ուր արդէն իսկ տուն վարձած էի:



Գործէս գոհ էի: Մանչս՝ Անդրանիկը, սկսաւ յաճախել Թրիփոլիի ազգային Նուպարեան վարժարանը: Տիկինս մաս կազմեց Լիբանանահայ Օգնութեան Խաչին, իսկ ես անցայ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան տեղական կոմիտէութեան, իմ հետս բերած ըլլալով փոխանցման գիրս Հալէպէն:

Թրիփոլիի մէջ մեր կեանքը հեզասահ կը շարունակուէր: Արդէն իսկ ծանօթացած էի գաղութի անդամներուն, ինչպէս նաեւ կոմիտէութեան ընկերներուն, որոնք տեղի ունեցող կոմիտէութեան ընտրութեան զիս ընտրեցին կոմիտէի անդամ եւ ատենադպիր:

Թրիփոլիի կոմիտէութիւնը, 1959-ին, Հայաստանի Հանրապետութեան անկախացման 41-րդ տարեդարձին որպէս բանախօս հրահրեց ընկեր Կարօ Սասունին:

Ձեռնարկը կազմակերպող յանձնախումբին մաս կազմած ըլլալով, ընկերներու առաջարկեցի, որ Հանդիսութեան ընթացքին արտասանեմ «Մայիսի Օր Մը Չքնաղ» իմ հեղինակութիւնը եղող քերթուածը: Բոլորն ալ համաձայն եղան:

Սակայն նկատի ունենալով, որ ես արտասանելու տաղանդ չունիմ, բաւական դժուարութեամբ կարողացայ սորվիլ իմ գրածս, որպէսզի կարողանամ անսխալ արտասանել:

Մայիս 28-ի անկախութեան Հանդիսութիւնը տեղի ունեցաւ Դաշնակցութեան ակումբի սրահին մէջ:

Օրուան Հանդիսավարը հրահրեց զիս արտասանելու «Մայիսի Օր Մը Չքնաղ» քերթուածս, միեւնոյն ատեն յայտարարելով, որ քերթուածին հեղինակը ես եմ եւ արմատներով սասունցի:

Արտասանեցի, փառք Աստուծոյ, անսխալ եւ սահուն, արժանանալով բոլոր ծափահարութիւններու:

Հանդիսավար ընկերը ընկեր Կարօ Սասունիի կենսագրութիւնը տալէ ետք, հրահրեց զինք բանախօսելու:

Ընկեր Կարօ Սասունի Հայաստանի անկախութեան մասին ականատեսի եւ մասնակիցի տպաւորութեամբ հոյակապ ճառ մը խօսեցաւ եւ ի միջի այլոց ըսաւ.

«Այն պայմանները, որ ապրեցաւ հայ ժողովուրդը 1918-ի Յունուարէն սկսեալ, հրաշքի համազօր նկատուեցաւ դուրսէն դիտողի համար: Նոյնիսկ մեր ազգականները, որոնք արիւնալի գուպարներու մէջ չէին, կամ արտասահման կը գտնուէին, հրաշք նկատեցին եղածը:

Մինչդեռ, երկարատեւ եւ տառապազին երկունքի մը, ազատութիւն կամ մահ խելայեղ վազքերուն փոթորկալի գուպարներու արդիւնք էր Մայիս 28-ի մեծագործութիւնը: Երկունքներուն ամէնէն արիւնալի փուլերէն անցնելէ ետք է, որ պիտի ծնէր մանուկ Հայաստանը:

Թերեւս ոմանց համար անիմաստ, ոմանց համար նոյնիսկ ծիծաղելի, բայց միջազգային ամբողջ պատմութիւնը եթէ աչքէ անցընէք,



պիտի չգտնէք ազգ մը, որ իր ազատագրական արիւնոտ պատմութեան ընթացքին երկաթէ մարդ եւ քարէ հոգի դառնար:

Հայը երկաթի եւ քարի պէս ամուր եղաւ:

Այս գերագոյն խորհուրդին ծնունդն է ներկայ Հայաստանը, տառապած հայու Հայաստանը:

Ո՛վ որ կ'ուզէ ստուգել այս ճշմարտութիւնը, թող առանձին խօսի Հայաստանի քարերուն եւ բարձրաբերձ ժայռերուն հետ:

Այս օրուան հայ ժողովուրդի գոյութիւնը, նեղ հայրենիքի մը իրողութիւնը հայրենիքէն դուրս սփռուած հայութեան հաւաքական կամ մասնակի ճիգերը հայութեան տեւականութեան համար՝ խարըսխուած են հայ ազատագրական շարժման վրայ՝ մեր գոյութեան, մեր ազգային շէնքի հիմերը ամրացուած են ազատամարտիկներու արեան շողախներով»:

Ձեռնարկի վերջաւորութեան ընկեր Կարօ Սասունի զիս կանչեց եւ ըսաւ.

— Սասունցի՛ տղայ, քերթուածը ի՛նչ աղուոր գրած էիր եւ շատ աղուոր ու ապրումով արտասանեցիր: Կը շնորհաւորեմ, շա՛տ ապրիս...:

Այնուհետեւ, տարիներ ետք Հալէպ այցելեց եւ խումբ մը ընկերներով հետը նկարուեցանք: Յիշատակելի նկար մըն է:

Կարօ Սասունիի իմ հայրենակիցս ըլլալը պատճառ դարձաւ, որ հետաքրքրուեմ իր կեանքով, տարիներու ընթացքին հետեւելով իր կենսագրութեան: Ան ինծի համար դարձաւ օրինակելի անձ մը՝ որպէս մտաւորական, պատմաբան, գրականագէտ, յեղափոխական, հեղինակ, ուսուցիչ, դաստիարակ եւ կուսակցական ղեկավար:

Ան ծնած էր պատմական Հայաստանի սիրտը հանդիսացող Սասուն գաւառի Ահրոնք գիւղը, հայրենի տան աւանդապահ յարկին ներքեւ:

Կարօ Սասունի իր ընտանիքին մասին գրած է հետեւեալը.

«Մանկոյի տան անուններուն մէջ յաճախ կրկնուած է Մանկօ, Մամբօ, Մամիկոն անունները, որպէս տեւականացում մը ամէնէն մեծ հօր, տան հիմնադիրին անունն: Գիւղի քահանաները ընդհանրապէս մեր տունը կը կոչէին Մամիկոնեան տուն, իրենց ուսումնասիրութիւնը շեշտելու համար, իսկ գիւղացիները կը կոչէին Մամկոյի տուն:

Ես ծնած եմ 1888-ին: Ըստ մէկ ուրիշ արձանագրութեան՝ ես ծնած եմ 1889-ի Յուլիս 15-ին: 7-13 տարեկանիս ուսանեցայ մեր գիւղին մէջ, միայն մէկ տարի, երբ 9-10 տարեկան էի գացի Մուշ եւ յաճախեցի Ս. Մարինէի նախակարթարանը:

1901-ին, ոտքս ջախջախուելուն պատճառով գացի Մուշ ու հոն մնացի, մտայ Մշոյ Մխիթարեան վարժարանը եւ 1906-ին աւարտեցի: 1906-ի ամրան վերագարձայ մեր գիւղը՝ վկայականը գրպանս:

Այդ ամրան մեր տունը այցելութեան եկած էր Տիգրանակերտի շրջանի Ֆարդին քաղաքի դպրոցի տնօրէնը՝ Մանուկ Լուսինեան (Դանիէլեան): Իր ժամանակի մտաւորական յեղափոխական մը: Ծանօթացանք: Ան պնդեց, որ իր հետ պայմանաւորուիմ եւ մեկնիմ Տիգրանակերտ, ուսուցչական պաշտօնով: Ես հագիւ վերջացուցած էի 17 տարին եւ 18-ի մէջ էի: Ընդունեցի անոր առաջարկը»:

Ապա, իրաւաբանութեան ուսանող է Կարօ Սասունին եւ գործօն՝ Հ. Յ. Դաշնակցութեան ուսանողական շարքերուն մէջ: Կը սկսի 1914-1918-ի մարտնչումներու շրջանը: Հանրապետութեան ժամանակ՝ խորհրդարանի անդամ է Կարօ Սասունին եւ Շիրակի նահանգապետ, յետոյ կուսակցական գործիչ է ու ղեկավար, գրագէտ է ու ուսուցիչ, յուշագրող է ու հրապարակագիր, խմբագիր ու պատմագիր:

Արտասահմանի մէջ սկսաւ Կարօ Սասունիի կեանքին մէկ այլ հանգրուանը: Ան ուսմամբ եւ հանրանուէր կեանքի փորձառութեամբ զինուած՝ անհատական յատկութիւններով եւ զաղափարական տեսիլքով օժտուած երիտասարդ մըն էր:

Անսալով ժողովուրդին ծառայելու իր կոչումին եւ գիտակից իր ազգային ու կուսակցական պատասխանատուութիւններուն, ճամբորդեց Միջին Արեւելքի եւ Եւրոպայի գանազան երկիրներ, Ամերիկա, այլ խօսքով՝ այն տեղերը, ուր գաղութային կազմակերպչական աշխատանք կար ստանձնելիք, ուր կուսակցական պատասխանատու պաշտօններ կային յանձն առնելիք, ու ազգային պարտականութիւններ կային կատարելիք: Ան իմաստութեամբ, նախաձեռնութեամբ եւ խղճմտօրէն վարեց իրեն վստահուած գործերը:

1917-ին Կարօ Սասունի ընտրուեցաւ Հ. Յ. Դ. Հայաստանի Բիւրոյի անդամ, իսկ 1923-ին, Վիեննայի խորհրդաժողովին, Հ. Յ. Դ. Պատասխանատու Մարմինի անդամ, ապա վեց շրջան, մինչեւ 1967 թրականը, ընտրուեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի անդամ:

1933-էն ետք, երբ Լիբանան հաստատուեցաւ, Կարօ Սասունի թափ տուաւ նաեւ իր մտաւորական, հրապարակագրական, գրական ու կրթական գործունէութեան: Ասոնց կարգին՝ ան կուսակցութեան կողմէ մասնակցեցաւ Տերսիմի քրտական ապստամբութեան:

Ան տարիներով մաս կազմեց Համազգայինի Կեդրոնական Վարչութեան: Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանին մէջ պաշտօնավարեց իբրեւ հայ գրականութեան եւ հայ ազատագրական շարժման պատմութեան դասախօս:

Կարօ Սասունի իր վերլուծական, քննական, քաղաքական, պատմական, գրական բովանդակալից յօդուածներով աշխատակցեցաւ դաշնակցական մամուլին, ինչպէս՝ «Դրօշակ»-ին, «Վէմ»-ին, «Հայրենիք»-ին, «Յուսաբեր»-ին, «Ազդակ»-ին եւ այլն, եւ խմբագրական պատասխանատուութիւններ ստանձնեց, ինչպէս՝ «Ազդակ Շաբաթօրեակ» շաբաթաթերթին եւ «Բագին» ամսագրին:

Ան ուսումնասիրեց եւ ստեղծագործեց կարեւոր թիւով պատգամազրական, պատմաքննական, պատմաքաղաքական, յուշագրական եւ գրական երկեր, որոնք իբրեւ արգասիքը իր իմացականութեան, հմտութեան եւ բնատուր տաղանդին, հարուստ ժառանգութիւն են ներկայ եւ գալիք սերունդներուն համար:

Կարօ Սասունի իր հրապարակագրական առաջին քայլերը առաւ 1912-ին, Կ. Պոլսոյ Հ. Յ. Դ. Ուսանողական Միութեան «Երկունք» պարբերաթերթին մէջ, Ռիվարեց ծածկանունով: Իր գրական, յուշագրական գլխաւոր գործերն են՝ «Լեռներու խորհուրդը» (1934, Վիգէն Գլակ գրչանունով), «Սասունցի Դաւիթ»-ը (ամբողջական ղիւցազնավէպ), «Տարօնի Պատերազմը» (աշխարհաբար), «Դիւցազնավէպ Յ. Մամիկոնեանի՝ 7-րդ Դար», «Արեւմտահայ Արզի Գրականութեան Պատմութիւնը...», «Գրական Գոհարներ» (միջնադարեան գրականութեան), «Կեանքի Յորձանուտին Մէջ» (1962), «Սարերու Ասլանը» (1966), «Յուշեր եւ Վկայութիւններ» (1972):

Պատմաքաղաքական գործերէն պէտք է յիշել՝ «Տաճկահայաստանը Ռուսական Տիրապետութեան Տակ 1914-1918» (1927), «Թրքահայաստանը Առաջին Աշխարհամարտի Ընթացքին» (1966), «Մայիսեան Խռովութիւններ եւ Թաթարական Ապստամբ Շրջանները» (1968), «Հայ Թրքական Պատերազմ 1920-ին» (1969), «Ապրիլեան Եղեռնը Քննական Ակնոցով» (1931), «Հրայրի Դերը Հայ Ազատագրական Շարժման Մէջ» (1964), «Տարօնի Աշխարհը» (1966), «Փետրուարեան Ապստամբութիւնը» (1970):

Նշելի է, որ Կարօ Սասունի քաջածանօթ էր քիւրտերու ազգային շարժումներուն եւ համոզուած էր հայ-քրտական գործակցութեան կարեւորութեան:

Պատմագրական կոթողային գործ մըն է Կարօ Սասունի «Պատմութիւն Տարօնի Աշխարհի» մեծածաւալ հատորը (1957): Ան ունի նաեւ թարգմանական գործեր:

Կարօ Սասունիի գրաւոր ստեղծագործութեանց ու բանաւոր ելոյթներուն ընդմէջէն եւ տեւաբար յառաջընթացող իր քայլերուն կը շնորհակցէ լսելի է տրոփիւն իր սրտին, որ բաբախեց միայն ազնուական հայ ժողովուրդին եւ իր յաւերժական հայրենիքին համար:

Փոթորկալից իր կեանքին վերջին հանգրուանին, 1974-ի ամրան, Կարօ Սասունի կաթուածի հետեւանքով մասնակի անդամալուծութիւն ունեցաւ: Լիբանանի քաղաքացիական պատերազմին ապրեցաւ այդ վիճակով իր կեանքի ընկերուհին՝ Տիկին Լէօլա Սասունին յաւատ կորսնցուցած էր արդէն եւ ակամայ հեռու՝ իր երեք զաւակներէն, որոնք կը գտնուէին երկրէն դուրս: Ան իր ազգակիցներուն հետ բաժնեց այդ պատերազմին դառնութիւնը, բնատուր լաւատեսութեամբ լուսաւորեց շրջապատն ու կեանքի ճանապարհը եւ մտքին, սրտին ու

հոգիին լուսարձակով ապահովեց իր երթը դէպի յաւերժութիւն, 11 Օգոստոս 1977-ին, Պէյրութ, Լիբանան:

Ահա մարդ մը, հայ մը, Ծուռ սասունցի մը, որուն կեանքով ու գործով ներշնչուած պիտի գան տքնիլ հայ կեանքին մէջ նոր օրերու Ծուեր, պիտի գան գործելու Հայ Դատի ճամբով եւ յառաջանալ պատասխանատուութեան գիտակցութեամբ, որպէսզի բախտաւոր օր մը, Մեծաքանչն իրենց շրթներուն՝ հայու անվթար հոգիով մտնեն պատմական Հայաստանի պապենական ՏԱՆ սեմէն ներս, բարձրանան հայրենի սարերը, հասնին Արարատին, Նեմրուծին, Ծովասարին, Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի նարօտը անքակտելիօրէն կապելու համար անոնց զագաթներէն մինչեւ քառագագաթ Արագածը Հայաստանի Հանրապետութեան ու մինչեւ Արցախի երկնամերձ բարձունքները:

Յաւերժ յարգանք իր քաղցր ու անմոռանալի յիշատակին:



Գրական գործունէութեան 60-ամեակի Երեւանի ձեռնարկէն ետք՝ 2004-ին

## ՀԱՅԱՑԱԾ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ ՄԻՍ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ

Դանիացի մեծ բարերարուհի Միս Քարէն Եփփէի կեանքը եղած է համակ նուիրում հանդէպ հայ ժողովուրդին: Ամբողջ 32 տարի ան բաժնած է հայու ցաւերը, խորապէս զգալով անոր վիշտն ու տառապանքը: Ան եղած է հազարաւոր որբերու մայր, այրիներու պաշտպան, տկարներու օգնական՝ բարոյական եւ նիւթական իրեն մատչելի բոլոր միջոցներով:

Միս Քարէն Եփփէ ծնած է 1876-ին Դանիայի Լիւմպերկ քաղաքը, պետական ուսուցիչի բարեկեցիկ ընտանիքի մէջ: Ընտանիքը դաւանանքով կը պատկանէր Աւետարանական Եկեղեցիին: Փոքրիկն Քարէն իր նախնական ուսումը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, կը հետեւի Քոփենհագենի համալսարանի դասընթացքներուն:

19-րդ դարու վերջերը միսիոնարական կազմակերպութիւններ գործունէութեան անցած էին Օսմանեան Կայսրութեան տարածքին, որոնք Ուրֆայի մէջ միասնաբար հիմնած էին հիւանդանոց, որբանոց եւ աշխատանոց: Երիտասարդ Քարէն կը թղթակցէր անոնց հետ, ցանկութիւն յայտնելով բաժին բերել մարդասիրական իրենց առաքելութեան: Ծնողքը, տեսնելով որ հաստատակամ է իրենց դուստրը իր որոշումին մէջ, ազատ կացուցին զինք, իրենց շրջապատի հարուստ բարեկամներէն ալ կոկիկ գումար մը ապահովելով՝ ուղարկեցին զինք Ուրֆա:

Քարէն Եփփէ Ուրֆա կը հասնի 1903-ին, երբ 27 տարեկան էր, աշխատակցելու միւս միսիոնարներուն հետ: Որպէս խելացի եւ հեռատես գործիչ, առաջին հերթին կը լծուի լեզուն սերտելու ու սորվելու այն ժողովուրդին, որուն ցանկութիւնը ունէր նուիրելու իր կեանքը:

Ուրֆայի մէջ քոյր Քարէնին կը սպասէին 300 որբեր: Ի տես ողբալի այդ վիճակին, քոյր Քարէն գործի կ'անցնի, թղթակցութիւններ կատարելով Եւրոպայի զանազան կեդրոններուն հետ՝ օժանդակութիւն խնդրելու: Այդ ալ բաւարար չնկատելով, արհեստանոցներ կը բանայ իր պաշտպանեալներուն՝ դերձակատուն, կաշեգործութիւն, ատաղձագործութիւն եւ այլ արհեստներ, որպէսզի իրենց աշխատանքով որբեր եւ այրիներ կարենան ապրուստ ճարել եւ բարելաւել իրենց գոյավիճակը:

Քոյր Քարէն Ուրֆայի մէջ աշխոյժ քաջալերողը եղաւ, որ իր որբերը ընտանիք կազմեն իրարու հետ ամուսնանալով, որպէսզի հայ

մնան: Թէեւ ան մայր չեղաւ իր կեանքին մէջ, սակայն ունեցաւ մէկէ աւելի որդեգիրներ: Անոնցմէ մէկն էր Միսաք Մելքոնեանը: Ազնիւ այդ երիտասարդը ապագային դարձաւ իր մտերիմ գործակիցը: Հերոս տղայ, քոյր Քարէնին թելադրանքով կը պտըտէր գիւղէ-գիւղ, փնտռելով առեւանգուած երեխաներ՝ աղջիկ եւ տղայ, իւրաքանչիւրին համար վճարելով մէկ հնչիւն ոսկի փրկագին: Անոնցմէ շատեր հասակ առնելով՝ կ'ամուսնանային իրենց նմաններուն հետ: Անոնց շարքին էր մայրիկի որդեգիրը՝ Միսաք Մելքոնեանը, որ ամուսնացաւ որբուհի Լուսիային հետ, կազմելով երջանիկ բոյն մը:

1915-ին գէյթուները առաջին կարաւանը կը հասնի Ուրֆա: Քոյր Քարէն ապաստան կու տայ եւ կը կերակրէ զանոնք ի գին մեծ զոհողութիւններու: Կարաւանները կը յաջորդեն իրարու Էրզրումէն, Սեբաստիայէն, Տիգրանակերտէն, Սեւերեկէն եւ հայկական այլ շըրջաններէն:

1920-ին Քարէն Եփփէ կը հաստատուի Հայէպ՝ միանալով իր որդեգիր զաւակներուն, եւ անմիջապէս անհատական ճիգերով կը լծուի տարագիր իր սիրելի հայ ժողովուրդին օգտակար ըլլալու:

Քոյր Քարէնին առաքելութիւնը անմիջական օգնութիւն եւ գործ հայթայթեց մեր 1800 գաղթականներուն, որոնք այլապէս կրնային կորուստի մատնուիլ թշուառութեան մէջ: Ան մեծ գործ կատարեց որպէս որբահաւաք՝ իր որդեգիր օգնականներուն միջոցաւ:

Նոյն այդ շրջանին, քոյր Քարէն դիմած էր Հայէպ գտնուող անձի մը՝ գործակցութեան առաջարկով: Լեհական ծագումով այդ անձը կը կոչուէր Լէոփոլտ Կասչիկ, արհեստով ինքնաշարժի վարիչ: Քոյր Քարէն ինքնաշարժ մը կը գնէ եւ Կասչիկը կը դառնայ իր վարորդը:

Քոյր Քարէն Լէոփոլտը կ'ամուսնացնէ իր աշխատանոցէն այրի տիկին Հոռոմին հետ, որ հմուտ մասնագէտ էր հայկական ժանեակի: Աշխատանոցը ժամանակի ընթացքին կ'ընդլայնի՝ բարեյոյս շարժում մը ստեղծելով, որմէ կ'օգտուին հարիւրաւոր ընտանիքներ:

Գաղթական հայուն հաստատութեան աշխատանք հայթայթելը տընտեսական առողջ քայլ մըն էր: Քոյր Քարէն ջանք չխնայեց շուկայ գտնելու ժանեակի արդիւնաբերութիւնը սպառելու արտասահման՝ Գերմանիա եւ Հիւսիսային եւրոպական երկիրներ: Լէոփոլտ, որ կը տիրապետէր գերմաներէն լեզուին, օգտակար կ'ըլլայ Քարէնի թրջթակցութիւններուն, այդ կերպով նեցուկ կանգնելով Քարէնի յանձնառութիւններուն:

Մինչ այդ կ'սճէր արտասահմանէն ստացուող պատուէրներու քանակը: Կասչիկ եւ քոյր Քարէն որբերէն ուրիշ մէկ որդեգիր Յարութիւն Չագրեանի հետ գործակցաբար, վաճառատուն հաստատեցին Հայէպի Հոգետունի բակի արեւմտեան կողմը, մուտքի վրայի երրորդ յարկը, որ շարունակեց գործել մինչեւ Հայաստան ներգաղթի օրերը:

1924-ին, Նոր Գիւղի (Մէյտան) մէջ (Հալէպ), տասը հազար կանգուն հողաչերտ մը գնեց քոյր Քարէն եւ շինել տուաւ 9 խոշոր տաղաւարներ՝ 80 սենեակներով, ուր փոխադրուեցան 200 ընտանիքներ, մեծամասնութեամբ այրի կիներ՝ որք զաւակներով: Մօտ հազար երեխաներ դպրոց կը յաճախէին: Լէոփոլտ Կասչիկի որպէս գործակից նշանակուեցան ուրֆացիներ Միհրան Հերարդեան եւ Գէորգ Մոնոֆարեան՝ որբանոցին հոգը եւ պատասխանատուութիւնը ստանձնելու համար:

1927-ին, քոյր Քարէն գաղափարը ունեցաւ իր հողին վրայ դըպրոց հիմնելու եւ իր մտադրութիւնը հաղորդեց օրուան առաջնորդ Արտաւազգ Սրբազանին: Ուստի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Խապայեանի համամտութեամբ հիմնուեցաւ մանկապարտէզ:

Քոյր Քարէն որբերու եւ որբուհիներու համար Եւրոպայէն բարերարներ (հոգատարներ) կ'ապահովէր, իւրաքանչիւր որբին կենսագրութիւնը, նկարը եւ իր կողմէ շնորհակալական գիր մը կը ղրկուէր բարերարին, զոր թարգմանաբար կը կցուէր բարերարին ուղարկուած տեղեկագրին:

Քարէն Եփփէ 1927-ին հիմնեց գիւղ մը չափահաս որբերու համար, Ռագգայի շրջան, Թել-Ապիատի կողմերը, որ կը կոչուէր Խըրպէթ Ռըզ:

Հալէպի մէջ քոյր Քարէն երբեք չփորձուեցաւ իր պաշտպանեալներուն ստիպել դաւանափոխութիւն: Ընդհակառակը՝ ան ամէն ինչ ըրաւ, որ հայ երեխան չհեռանայ Առաքելական Մայր Եկեղեցոյ աւանդութիւններէն եւ առաւել եւս հիմնաւորուի որպէս Ազգային Մայր Եկեղեցիի հաւատացեալ: Իսկ ինք իր մասին կտակ ըրաւ, որ իր մահուան պարագային զինք թաղեն հայ առաքելական եկեղեցոյ գերեզմանոցը:

Քոյր Քարէն Եփփէ աւանդեց իր հոգին 7 Յուլիս 1934-ին: Ունեցաւ ազգային թաղում՝ ներկայութեամբ հազարաւոր նախկին որբերու եւ երախտապարտ հայ ժողովուրդի զաւակներու:

Միս Քարէն Եփփէ Տանիմարքայի մէջ մեծ ժողովրդականութիւն կը վայելէր ու կը մնար տեսակ մը ազգային պարծանք՝ Ուրֆայի եւ Հալէպի մէջ հայ որբերուն տարած խնամքին համար: Քոյր Քարէնի մահէն տարիներ ետք, երբ իր շինել տուած որբանոցին մէջի որբերը հասակ կ'առնեն եւ կը փոխադրուին իրենց սեփական տուները, որբանոցը կը դառնայ անմարդաբնակ:

Ստեղծուած այս կացութեան հետեւանքով, Դանիայէն Քարէն Եփփէի հոգատար ընկերութիւնը կ'որոշէ ծախել որբանոցի հողամասը եւ երկու օրիորդներ կը ղրկէ Հալէպ՝ ծախելու գործողութիւնը կատարելու համար: Սակայն օրուան առաջնորդ Զարեհ Սրբազանի եւ ազգային ղեկավարներու ջանքերով կարելի կ'ըլլայ Տանիմարքայի մէջ գտնուող ընկերութեան ղեկավարները համոզել, որ Միս Քարէն Եփ-

փէի անունը եւ յիշատակը անմահացնելու համար հայկական ճեմարան մը հիմնեն ծախու դրուած հողամասին վրայ:

Քարէն Եփփէ ճեմարանը 15 Հոկտեմբեր 1947-ին բացուեցաւ մէկ դասարանով եւ 22 երկսեռ աշակերտներով:

Ճեմարանի պաշտօնական բացումը կատարուեցաւ Կիրակի, 26 Հոկտեմբեր 1947-ին: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ կը պատարագէ եւ կը քարոզէ առաջնորդ Զարեհ Սրբազան, որ անդրադառնալով Օր. Քարէն Եփփէի կեանքին՝ կ'ըսէ.

«Եկաւ հեռաւոր Դանիայէն մեր պատմութեան մութ օրերուն, երբ կը հալածէին մեզ բախտն ու ջարդարար թուրքը: Երբ մեր բեկորները, աստանդական ու անտէր, ափ կ'առնէին ասպնջական այս երկրի դուռները, իրենց Ֆիզիքական գոյութիւնը, իրենց սրսփուն գոյութիւնը պատսպարելու համար: Ամբողջ երեսուն տարի, Օրիորդ Քարէն Եփփէ խառնուեցաւ մեր կեանքին, միսէն միս ու ոսկորէն ոսկոր հա՛յ դարձաւ, շաղախուեցաւ մեր հանրային գործունէութեան եւ օրէ օր աւելի խոր ու իրաւ ընտանութիւն մը զգաց իր եւ մեր միջեւ: Կըրնամ ըսել, թէ զոհաբերեց ան իր կեանքը հայ ժողովուրդին համար, զոր կը նկատէր գերիվեր բոլոր ազգերէն՝ «քաղաքակրթութեան» դիմակի տակ մահ եւ սպանութիւն սփռող բոլոր ժողովուրդներէն»:

Ճեմարանի բացման արարողութիւններէն ետք, սրբազան հայրը, ազգային իշխանութեանց ներկայացուցիչներ, աշակերտութիւն եւ ուսուցչական կազմ կ'այցելեն ազգային գերեզմանատուն ու ծաղկեպսակներ կը զետեղեն Օրիորդ Քարէն Եփփէի շիրիմին վրայ:

Այս առթիւ, Զարեհ Սրբազան Օրիորդ Քարէն Եփփէի պարագաներուն կը յղէ հեռագիր՝ «Քարէն Եփփէ գոլէճի բացումը տեղի ունեցաւ այսօր, յետ հոգեհանգստեան մասնաւոր պատարագի՝ ի հանգիստ Օրիորդ Քարէն Եփփէի: Հայ ժողովուրդը բերաւ իր մասնակցութիւնը կրօնական թէ աշխարհիկ հանդիսութիւններով: Դասաւանդութիւնները սկսան 15 Հոկտեմբերին: Կը յայտնեմ հայ ժողովուրդի շնորհատ զգացումները: Զարեհ Սրբազան»:

\* \* \*

Վերջերս, երբ հնամեայ նկարներ կը դիտէի, գտայ մոռցուած նկար մը, ուր կ'արտացոլար իմ հեռաւոր անցեալս:

Մինչեւ պատանեկան տարիքս, յատկանշական որեւէ նկար չեմ ունեցած: Ինծի հասած են մեծ եղբօրս հետ նկարուած բոլորովին մերկ, հազիւ մէկ տարեկանիս քաշուած ջուրի նկար մը, 12-13 տարեկանիս դասընկերոջ մը հետ նկարուած ջրանկար մը եւ այս նկարը՝ հազիւ 11 տարեկանիս:

Օրին, երբ առաջին անգամ տեսայ այս նկարը, երկար մտածելէ ետք յիշեցի նկարին պատմութիւնը:



Հայրս՝ սասունցի Ղազար (Խարզօ) եւ մայրս՝ պեհեսնիցի Մար-  
իամ, ամուսնացած են Հայոց Մեծ Եղեռնի սարսափելի օրերուն, Կի-  
լիկիոյ Քիլիս քաղաքին մէջ եւ 22 տարի իրարու հետ ապրելով (մայրս  
մեռած է 2 Նոյեմբեր 1938-ին) ունեցած են եօթը զաւակներ՝ 5 մանչ եւ  
երկու աղջիկ: Երկու մանչերը՝ Զաքար եւ Գրիգոր, կը մահանան իրենց  
մանուկ տարիքին: Ապրող զաւակները՝ Սիրանուշ, Յարութիւն, Գրի-  
գոր, Յովհաննէս եւ Արշալոյս, իրենց դպրոցական տարիքը հասնելով՝  
կը յաճախեն Հալէպի Հայկազեան եւ Սահակեան վարժարանները:

Գիւղացի հայրս (Սասնոյ Տալոորիկի Սպաղանք գիւղէն) իր կարե-  
լիութեան սահմաններուն մէջ կը փորձէ զանազան գործեր՝ ջաղաց-  
պան, փռապան, մուշապալաֆ եւ թան ծախող, ամերիկեան գործած-  
ուած ժաֆէքներու վաճառական, որպէսզի կարենայ կերակրել իր ըն-  
տանիքին անդամները եւ հասնիլ անոնց դպրոցական եւ ուսանողա-  
կան ծախսերուն:

Սակայն, որոշ ժամանակ մը, հիւանդութեանց եւ դժբախտ պա-  
րագաներու բերումով, չէ կրցած ժամանակին վճարել դպրոցական  
տարեթոշակները, մանաւանդ իմ, փոքր եղբօրս եւ փոքր քրոջս թո-  
շակները:

Հայրս, որպէսզի իր զաւակները հայկական դպրոց երթալէ չզըր-  
կուին, կը դիմէ Միս Քարէն Եփփէ հիմնարկութեան՝ խնդրելով, որ իր  
երեք զաւակներուն դպրոցական ծախսերուն հոգատարութիւն կա-  
տարեն:

Հիմնարկութեան պատասխանատուներ Պրն. Միհրան Հերարդ-  
եան եւ Գէորգ Մոնոֆարեան կ'ընդունին հօրս առաջարկը եւ մենք կը  
դառնանք Միս Քարէն Եփփէ հիմնարկութեան սաներ:

Ներկայիս շատ լաւ կը յիշեմ, որ տարին անգամ մը մեզ կը տա-  
նէին որբանոցի իրենց գրասենեակը եւ նամակ կը գրէինք Եւրոպայի  
մեր հոգատարներուն, մեր նկարներն ալ ղրկելով անոնց:

Ուրեմն, հնամեայ նկարներէն զատուած այդ նկարը իմ հոգատա-  
րիս ղրկուելու համար քաշուած նկար մըն էր, որ լաւ չեմ յիշեր թէ  
ինչպէ՛ս ձեռքս անցած է: Հաւանաբար հիմնարկութեան փակումէն  
ետք արխիւներու մէջէն Պրն. Մոնոֆարեանի զաւակներէն մէկը գը-  
տած ըլլայ եւ տուած ինծի:

Քարէն Եփփէ հիմնարկութեան սան եղած շրջանիս հոգատարս ոչ  
միայն կը հոգար իմ ուսումնական ծախսերս, այլ նաեւ երբեմն հա-  
գուստեղէն կը ղրկէր, եւ նկարին մէջ իմ հագած բուրդէ քաղալիս հո-  
գատարիս ղրկած նուէրն էր:

Կը յիշեմ, որ տարին անգամ մը կ'ենթարկուէինք բժշկական քըն-  
նութիւններու որբանոցի գրասենեակին մէջ: Բժիշկ Յարութիւն Տէր  
Ղազարեան մեզ կը քննէր եւ անպայման որդի դեղ կու տար, նկատի  
ունենալով, որ մեր ուտելիքներուն անմաքուր ըլլալուն պատճառով  
որդ կը վիստար մեր աղիքներուն մէջ:

Կը յիշեմ նաեւ Քարէն Եփփէի, զանազան բարեսիրութիւններու կարգին, աղքատ ժողովուրդին բաժնուելիք զանազան կերակուրները յատուկ խոհանոցի մը մէջ, որմէ կ'օգտուէին Նոր Գիւղի աղքատները:

Միս Քարէն Եփփէ իր կեանքին 30 տարիները յատկացուց Հայ ժողովուրդի ծառայութեան՝ Ուրֆայի եւ Հալէպի մէջ, որպէս իրական մայր խնամելով Հազարաւոր որբեր, այրիներ եւ աղքատ ազգայիններ: Եւ իր մահէն ետք դանիացի իր բարեկամները եւ ծնողները որբանոցի հողամասը նուիրեցին Հայ ժողովուրդին, ուր այսօր կը բարձրանայ Քարէն Եփփէ ազգային ճեմարանը, 1947-էն ի վեր Սուրիոյ Հայ նոր սերունդին տալով Հայեցի դաստիարակութիւն եւ հայկական ոգի:

Հնամեայ նկարս դիտելով, դպրոցական անցեալս եւ կեանքս կը տողանցեն միտքիս պաստառին վրայէն, թելադրելով կրկին անգամ երախտագիտական զգացումներով յիշել ու մօտենալ ազնուազարմ Միս Քարէն Եփփէին, հայացած դանիացի այս առաքինատիպ Հայուհիին եւ անոր ազգին:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:



Ճեմարանի հիմնադրութեան առթիւ ոչխարի զեկումը:  
Հալէպի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Զարեհ Եպիսկ. Փայապեան (կեդրոնը),  
իր աջ կողմի քահանան՝ Տէր Աստուածատուր Քեհյ. Գասապեան,  
Տէր Հայրին աջ կողմը միայն գլուխս կ'երեւի,  
աւելի աջ՝ եկեղեցւոյ դպիր Խորէն Յակոբեան (ապագային Թորգոմ Քեհյ.  
Յակոբեան), անոր ղեկավար՝ Գեորգ Սէրայտարեան (ապագային Քառասուն  
Մանկանց Եկեղեցւոյ դպրապետ): Առաջնորդ Սրբազանին ձախ կողմը՝ Տոբ.  
Յ. Գասապեան, անոր ետեւը՝ Տէր Կորիւն Քեհյ. Աղանանեան,  
Սրբազանին ձախ կողմը 4-րդ անձը՝ Պր. Կարշիկ (տանիմարեացի):

**ԱՆՁՆՁԵԼԻ ՅՈՒՇԵՐ**  
**ԵՐԱՆԱՇՆՈՐՀ**  
**Տ. Տ. ԶԱՐԵՀ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ**

1940 թուականին, Համաշխարհային Երկրորդ Պատերազմի տանջալից օրերուն, Հալէպի Նոր Գիւղ թաղամասի ազգային Սահակեան երկսեռ վարժարանի աւարտական դասարանի աշակերտ էի, միեւնոյն ատեն կ'աշակերտէի Սահակեան վարժարանի սրահներուն մէջ տեղի ունեցող Հայց. առաք. եկեղեցւոյ կիրականօրեայ դպրոցը, ինչպէս նաեւ որպէս դպիր կը ծառայէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. առաք. եկեղեցիին, դպրապետութեամբ Պրն. Արմէն Պետրոսեանի, շրջանաւարտ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ դպրեմանքէն:

Այդ օրերուն, Բերիոյ Թեմի առաջնորդն էր բարձրաշնորհ Տ. Արտաւազդ Սրբ. Արք. Սիւրմէլեան: Կիրակի մը, 1940-ին, պատարագի ընթացքին խօսք առաւ առաջնորդ սրբազանը եւ իր տպաւորիչ քարոզի աւարտին յուզումով յայտարարեց, թէ 16 տարի Բերիոյ Թեմին որպէս առաջնորդ ծառայելէ ետք, կը փոխադրուի Մայրավանք՝ նոր պաշտօն ստանձնելու համար:

Առաջնորդ սրբազանին մեկնումէն ետք, Բերիոյ Թեմին առաջնորդական փոխանորդ կ'ընտրուի հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Փայասլեան, եւ 1940-1943 տարեշրջաններու իր ձեռնհասութեան եւ կարողութեան շնորհիւ կ'ընտրուի Բերիոյ Թեմի առաջնորդ:

Զարեհ Վարդապետի առաջնորդութեան շրջանին, 1945-ին, Սուրիոյ մէջ սկսան ֆրանսական տիրակալութեան դէմ ապստամբական շարժումները: Առաջնորդ Զարեհ Սրբազան այդ օրերու առաջնորդարանի քաղաքական ժողովի անդամներուն հետ գործակցեցաւ սուրիացի ղեկավարներուն հետ, միեւնոյն ատեն կոչ ուղղելով ֆրանսական բանակին մէջ ծառայող Հայ զինուորներուն՝ միանալու սուրիական բանակին: Սուրիական հայրենիքին իր մատուցած ծառայութիւններուն համար առաջնորդ Զարեհ Սրբազան արժանացաւ սուրիական Արժանեաց Ա. կարգի շքանշանին եւ գնահատանքին:

Զարեհ Սրբազան, Բերիոյ Թեմի առաջնորդութեան շրջանին, կարեւոր եւ պատմական հեռատեսութիւնը ունեցաւ հիմնելու Քարէն Եփփէ ազգային ճեմարանը, ուր ազգային կրթութիւն եւ դաստիարակութիւն ստացան եւ կը ստանան հազարաւոր հայորդիներ:

Այդ օրերուն, 1946-ին, իմ կարգիս ֆրանսական բանակէն հրաժարելով Հալէպ վերադարձայ, եւ նախ Հալէպահայ Ուսուցչական

Միութեան տպարանին մէջ (որուն ղեկավարն էր իմ հարեհակիցս՝ ուսուցիչ Պրն. Սիմոն Սիմոնեան) գրաշարութիւն սորվեցայ, իսկ երբ «ԱՐԵԻԵԼ-Ք» օրաթերթը հրատարակուեցաւ, ընդունուեցայ օրաթերթի տպարանը որպէս գրաշար, որուն խմբագիրներն էին բանաստեղծ Անդրանիկ Ծառուկեան եւ Մինաս Թէօլէօլեան:

Շրջան մը վերջ, «ԱՐԵԻԵԼ-Ք» օրաթերթի խմբագրութիւնն ու տպարանը փոխադրուեցան այլուր, իսկ ես մնացի «ՆԱՅԻՐԻ» տպարանին մէջ, որ կը գտնուէր Հոգետան մէջ, որուն տէրն ու տիրականն էր Անդրանիկ Ծառուկեան: Տպարանը առեւտրական գործերէն զատ կը զբաղէր նաեւ «ՆԱՅԻՐԻ» ամսագրի եւ Ծառուկեանի հեղինակած գործերու հրատարակութեամբ:

Հալէպի առաջնորդ Զարեհ Սրբազան Հոգետունէն իր անցքին յաճախ կը հանդիպէր «ՆԱՅԻՐԻ» տպարան՝ Անդրանիկ Ծառուկեանին: Անշուշտ զիս կը տեսնէր հոն եւ տեղեակ էր, որ ես կ'աշխատակցիմ «ԱՐԵԻԵԼ-Ք» օրաթերթին՝ յօդուածներով, թղթակցութիւններով եւ բանաստեղծութիւններով: Տեղեակ էր նաեւ Հայց. Առաք. Եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու Նոր Գիւղի բաժնին մէջ իմ ունեցած ուսուցչական պաշտօնէն, ուր կը պաշտօնավարէին նաեւ իր եղբայրը՝ Յակոբը եւ իր ապագայ քեռայրը՝ Կարապետ Նազգաշեանը:

Երբ տպարան «ՆԱՅԻՐԻ»-ի սեփականատէր Անդրանիկ Ծառուկեան 1949-ին Պէյրութ փոխադրուեցաւ, տպարանին հետ՝ տպագրական գործի վարպետ Պրն. Զործ Մակարեանը եւ զիս փոխանցեց նոր տպարանատիրոջ:

Տպարանի նոր սեփականատէրը պետական պաշտօնեայ էր եւ օրական քանի մը ժամ կ'այցելէր եւ կը հսկէր տպարանի գործունէութեան: Շուրջ տարի մը «ՆԱՅԻՐԻ» տպարանի նոր տիրոջ հովանաւորութեան տակ աշխատելէ ետք, 1950-ի ամբան, առաջնորդարանի ղավվաւը՝ Պրն. Յակոբը տպարան եկաւ եւ ըսաւ, որ առաջնորդ սրբազանը կ'ուզէ զիս տեսնել:

Հեռաձայնով ժամադրուելէ ետք, հանդիպեցայ սրբազանին: Ան նախ հետաքրքրուեցաւ իմ աշխատանքովս, ապա ինծի համար սրտիս մեծ գոհունակութիւն պատճառող անակնկալ առաջարկ մը ներկայացուց: Առաջարկեց ստանձնել Ռազգայի ազգային վարժարանի տնօրէնի պաշտօնը 1950-1951 տարեշրջանին համար:

Ուրախութեամբ ընդունեցի եւ վերաբացումին արդէն Ռազգա էի եւ ստանձնած՝ պատասխանատու պաշտօնը: Վարժարանը այդ տարի ունէր շուրջ 100 աշակերտ, բաժնուած մանկապարտէզի եւ նախակրթարանի, մինչեւ 5-րդ դասարան, չորս հոգիներոց ուսուցչական կազմով:

Մանկութենէս կիրակնօրեայ դպրոցը սրտիս շատ մօտ ըլլալով, աշակերտած էի ազգային Սահակեան վարժարանի կիրակնօրեայ դպրոց:

րոցը, ապա, 1946-ի Մարտին, գինուորութենէ վերադարձիս, պաշտօնի կոչուած՝ Նոր Գիւղ, Ս. Գէորգ եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցը:

Նկատի ունենալով, որ Ռազգայի մէջ կիրակնօրեայ դպրոց գոյութիւն չէ ունեցած, որոշեցի ձեռնարկել կիրակնօրեայ դպրոց բանալու աշխատանքին: Գրեցի Բերիոյ Թեմի առաջնորդ Զարեհ Սրբազանին, որ իմ առաջարկը ներկայացնելէ ետք պատասխանատուներուն, մեծապէս գնահատեց իմ դադափարը:

Գնահատական նամակ ստացայ նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցներու վարիչ տնօրէն բարեշնորհ Լեւոն Ա. Սրկ. Զէնեանէն եւ քարտուղար Պրն. Գէորգ Ներսոյեանէն:

Ռազգայի կիրակնօրեայ դպրոցի պաշտօնական բացումը տեղի ունեցաւ ներկայութեամբ, յատկապէս Հալէպէն ժամանած, կիրակնօրեայ դպրոցներու ընդհանուր քարտուղար Պրն. Գէորգ Ներսոյեանի, որ այս առթիւ խօսք առնելով՝ ներկաներուն մանրամասն բացատրութիւններ տուաւ կիրակնօրեայ դպրոցներու առաքելութեան եւ կարեւորութեան մասին:

Ռազգայի թաղականութիւնը, մեծապէս տպաւորուած բացման հանդիսութենէն, յատուկ շնորհակալութիւն յայտնեց տեսուչ Գրիգոր Հոթոյեանին եւ դպրոցի կամաւոր ուսուցիչ-ուսուցչուհիներուն, որոնք Կիրակի օրերը, իրենց հանգիստը զոհելով, կու գային օգտակար ըլլալու հայ աշակերտներու կրօնաբարոյական դաստիարակութեան:

Հոս կ'ուզեմ ընդգծել այն իրականութիւնը, որ 1950-ին, Ռազգայի մէջ իմ պաշտօնավարութեանս շրջանին սկսուած կիրակնօրեայ դպրոցը մինչեւ թուականս կը գործէ, ազգային եւ կրօնաբարոյական դաստիարակութիւն ջամբելով աշակերտութեան:

Այդ տարին, Հալէպի առաջնորդ Զարեհ Սրբազան, Թեմի Ազգային Վարչութեան ժողովի անդամներէն դեղագործ Պրն. Սարգիս Սելեանի ընկերակցութեամբ, պաշտօնական այցելութիւն տուաւ Ռազգա, այցելելով ազգային վարժարան եւ Ռազգայի պատմական վայրերը, հանդիպում ունենալով հայ աշակերտներու եւ ժողովուրդին, ինչպէս նաեւ պետական դէմքերու հետ:

Երբեք չեմ կրնար մոռնալ պատմական ճաշկերոյթը թաղականութեան ատենապետ Պրն. Յակոբ Սարգիսեանի բնակարանին մէջ, ուր առաջնորդ սրբազանը իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց Ռազգայի ազգային վարժարանի յառաջդիմութեան իմ օժանդակութեանս եւ կիրակնօրեայ վարժարանի բացման իմ նախաձեռնութեանս համար:

Յաջորդ տարի, թաղականութիւնը մեծ դժուարութեան հանդիպեցաւ: Ինձմէ շատ գոհ էին, որովհետեւ խոստացած էի՝ ըսելով, որ մեր դպրոցի 5-րդ դասարան աւարտող աշակերտները պիտի կարենան ընդունուիլ Հայկազեան վարժարանի 6-րդ դասարանը, եւ իրապէս,

մեր դպրոցէն երկու աշակերտներ, յետ քննութեան, ընդունուեցան Հայկազեան վարժարանի Ծ-րդ դասարանը: Ես որոշած էի հրաժարիլ ազգային վարժարանի մէջ պաշտօնավարելէ՝ նիւթական պատճառներով: Վերադարձայ գրաշարական ասպարէզիս «ԱՐՆԻՆԵԼՔ» օրաթերթի տպարանին մէջ, ձեւով մը հայ լրագրութեան եւ գրականութեան ծառայելու նպատակով եւ ստանալով աւելի վճարում:

Այդ օրերուն, սրբագրական փորձ մը առած, գացած էի առաջնորդարան, ուր ժողովի նստած էին Հրաչ Փափազեան, Օննիկ Մելիքսէթեան, Միհրան Հերարդեան եւ ուրիշներ:

Պրն. Միհրան Հերարդեանի գրած մէկ յօդուածին փորձը սրբագրութեան համար իրեն ներկայացնելէ ետք, կը փորձէի տպարան վերադառնալ: Զարեհ Սրբազան անունս կանչեց: Վերադարձայ: Ըսաւ.

— Գրիգոր, ի՞նչ կ'ըսես, կ'ուզեմ քեզ քահանայ ձեռնադրել Ամերիկայի համար:

Անահիկալ այս առաջարկէն տատամեցայ: Ի՞նչ ըսել սրբազան Տօր ճակատագրական նման առաջարկին:

— Սրբազա՛ն,— ըսի,— այս մասին պէտք է մտածեմ, ընտանիքիս եւ կնոջս զաղափարները առնեմ:— Ապա աւելցուցի.— Ես քահանայ մը կ'երեւակայեմ, որ ըլլայ պարթեւահասակ եւ գեղեցիկ ձայնով: Ես այդ երկու տպաւորիչ հանգամանքները չունիմ եւ ժողովուրդին աչքին յաջող քահանայ մը պիտի չերեւիմ:



Բերիոյ Թեմի Առաջնորդ Գեր. Զարեհ Արք. (ապագային կաթողիկոս) Ռագգայի Մէջ

Սրբազանը ըսաւ.

— Դուն ալ ուրիշ կարեւոր առաւելութիւններ ունիս, որոնցմէ շատեր զրկուած են այդ պարթեւահասակ քահանաներէն: Մի՛ մոռնար, որ Գարեգին Ա. Կիլիկիոյ Կաթողիկոսը քեզի հասակակից էր, սակայն արժանաւոր հոգեւորական եղաւ Հայաստանէն՝ Ամերիկա եւ Ամերիկայէն մինչեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն:

Այնուհետեւ Ջարեհ Սրբազանին հետ մեր յարաբերութիւնները շարունակուեցան կիրակնօրեայ դպրոցներու հարցերով, ես՝ որպէս կեդրոն բաժնի ուսուցիչ, ապա՝ տեսուչ եւ թեմի կրօնաբարոյական խորհուրդի անդամ, իսկ ինք՝ թեմի արժանաւոր առաջնորդ՝ սիրուած ազգէն եւ պետութենէն:

Տարիներ անցան, Ջարեհ Սրբազան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուեցաւ 20 Փետրուար 1956-ին: Ցաւով կ'ուզեմ արձանագրել այդ տարիներուն Կիլիկեան դարաւոր Աթոռին եւ անոր ազգընտիր կաթողիկոսին դէմ տարիներ շարունակ կատարուած թրքաբարոյ պայմաններն ու ուրացումները, որոնք կը մղուէին ազգուրաց, համայնավար վարդապետութեան ծախուած շրջանակներուն կողմէ, մինչեւ որ 18 Փետրուար 1963-ին բաբախելէ դադրեցաւ սրբակեաց մեծ եկեղեցականին սիրտը, քրիստոնէական ներողամտութեամբ սընած անոր փափուկ սիրտը, չզիմանալով տեղի ունեցող վայրագ եւ բարբարոս, համայնավարութիւն բուրող յարձակումներուն:

Արդարեւ, պարզ գուգադիպութեամբ, թէ Աստուածային տնօրինութեամբ, երանաշնորհ Տ. Տ. Ջարեհ Կաթողիկոս Փայասլեան ծնաւ 14 Փետրուար 1915-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ընտրուեցաւ 20 Փետրուար 1956-ին եւ վախճանեցաւ 18 Փետրուար 1963-ին, իր ծննդեան 48-րդ եւ քահանայագործութեան 28-րդ տարեդարձներուն, անջնջելի յիշատակներ ձգելով իմ եւ հայ ժողովուրդի սրտերուն մէջ:

Լոյս մշտնջենի տառապեալ հայրապետի կրօնաբոյր եւ ազգայնաշունչ հոգիին:



# ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՉԱՐ ԵՂՈՂԸ ԵՐԲ ՄԵԾՆԱՅ՝ ԽԵԼՕՔ ԵՒ ԱԶՆԻՒ ԿԸ ԴԱՌՆԱՅ

«Ըբմըչու, հարամի, աքրուտ» (բռնեցէք անզգամ գողը) կը պոռար եւ կը վազէր հազիւ տասը տարեկան մանուկի մը ետեւէն էչի վրայ բեռցուած խնձոր ծախող արաբ շրջուն վաճառորդը, սակայն հովի արագութեամբ սլացող մանուկին չկարենալով հասնիլ, յիսունէն վեր տարիք ունեցող արաբը շնչահեղձ՝ վազելով կը շարունակէր իր ճամբան, խնձոր ծախելով Հալէպի Նոր Գիւղ շրջանի հայկական թաղերուն մէջ:

Արաբ վաճառորդը, էչին սանձը բռնած, առանց ետեւ նայելու երբ կ'անցնէր Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հանդիպակաց թաղէն, այդ թաղին մէջ ապրող Գրիգորեան ընտանիքի երեք մանչ գաւակներէն միջնեկը, թաղին մէջ որպէս արկածախնդիր եւ իշապաններու ռիսերիմ թշնամի ճանչցուած Մհերը, որուն թաղակիցները «չաթա» կը կոչէին իր ըմբոստ բնաւորութեամբ եւ վրէժխնդրական արարքներուն համար, իշապանին ետեւէն քալելով՝ երկու խոշոր խրնձոր խլելով կ'աներեւութանայ, ուրախացնելով իր խեղճացած ընկերները, որոնք ախորժակով կ'ուտեն գողցուած խնձորները:

Եւ այսպէս, Նոր Գիւղի առաջին թաղամասէն անցնող արաբ բոլոր իշապանները իրենց վաճառած պտուղներէն իրենց տուրքը պէտք է տային թաղի մանուկ իշխանին:

Մհեր, հակառակ իր «չաթա»-յական արարքներուն, դպիր էր Նոր Գիւղի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, այդ օրերու դպրապետեր Պրն. Արմէն Պետրոսեանի եւ Պրն. Վարդան Սէրայտարեանի դըպրապետութեան շրջաններուն: Եկեղեցւոյ ժամկոչը՝ Պրն. Վարդերեսը, շատ կը սիրէր Մհերը, որովհետեւ երբ յուղարկաւորները մեռելի սընտուկը շալկած կը մօտենային եկեղեցւոյ, Մհեր մեռելային գանգը կը հնչեցնէր:

Իսկ դպրոցը ան կը յաճախէր շատ կանոնաւորութեամբ, ուշադրութեամբ քալելով մինչեւ Սահակեան վարժարան տարածուող ցեխոտ ճամբաներէն: Ան իր դպրոցական դասերուն հետեւելու եւ գանոնք պատրաստելու միշտ ժամանակ կը գտնէր ու յաջողութեամբ եւ լաւագոյն նիշերով կ'աւարտէր տարեշրջանը, մեծ գոհունակութիւն պատճառելով իր ուսուցիչներուն եւ ծնողներուն, որոնք երբեմն աչք կը գոցէին անոր ըրած չարութիւններուն:

Որպէս Հայոց Մեծ Եղեռնէն ճողոպրած եւ հրաշքով ազատած ծը-



նողներու զաւակ, մեծնալով թշուառութեան եւ աղքատութեան մականին ներքեւ, Մհեր յատուկ թշնամութիւն եւ վրէժխնդրութիւն կը սնուցանէր թուրքերուն դէմ, զանոնք պատասխանատու գտնելով իրենց թշուառութեան:

Գիշեր մը, երկար ծրագրումէ ետք, Մհեր համոզեց իրմէ երկու տարի մեծ Սարգիսը, եւ խոշոր տոպրակ մը ապահովելով՝ մտան «Պոսթան Փաշա» պարտէզը եւ սկսան սմբուկներ քաղելով լեցնել տոպրակին մէջ: Այդ միջոցին իրենց մօտեցող քայլերու ձայն մը առնելով՝ մեռելայի լուսթեամբ սպասեցին, որ պարտիզպանը անցնի: Մհեր աղօթեց, որ պարտիզպանին ձեռքը չանցնին: Պարտիզպանը արագութեամբ անցաւ, կոխելով Մհերին աջ ձեռքին վրայ, սակայն պարտէզի հողը փխրուն ըլլալով՝ աւելորդ ցաւ չպատճառեց իրեն:

Պարտիզպանին մեկնելէն հինգ վայրկեան ետք, Մհեր եւ Սարգիս, շալկած սմբուկով լեցուն իրենց բեռները, վախը իրենց սրտին մէջ, դողդալով հասան տուն: Մհերին ծնողները խստօրէն բարկացան, այպանելով իրենց ըրածը, զայն գողութիւն նկատելով, զգուշացնելով Մհերը, որ եթէ նման արարքներ Միս Քարէն եփփէ հաստատութեան վարիչներուն ականջը հասնի, կրնային զինք հոգատարութենէն զրկել: Այդ պարագային, որպէս անուս մեծնալով, կա՛մ որպէս գող-աւագակ պիտի ապրի, կա՛մ ալ բեռնակրութիւն պիտի ընէ:

Պարտէզներու ոտնձգութիւնները հօրը սպառնալիքներուն հետեւանքով դադրեցան: Արդէն 12 տարեկան էր, ունէր ընկերներու խմբակ մը, որոնք անզուսպ էին եւ դպրոցական իրենց ուսուցիչներուն դէմ ոխ կը պահէին, պատճառաբանելով ուսուցիչներուն կատարած զատողութիւնները աշակերտներուն ուսումնական նիշերը արդարութեամբ չդնելու համար:

Մհեր եւ ընկերները, պայթուցիկ խցաններով ատրճանակներ ապահովելով, արշաւեցին Օր. Մարի Օրջանեանի բնակարանը եւ պայթուցիկ ատրճանակները գործածելով՝ ահռելի աղմուկ եւ իրարարանցում ստեղծեցին թաղին մէջ: Օր. Օրջանեանի միջոցաւ դէպքը տնօրէնին հասնելով՝ տնօրէնը զիրենք հարցաքննութեան կանչեց: Տղաքը իրենց արարքը արդարացուցին՝ ըսելով, որ Օր. Օրջանեան, ձեռնուան ցուրտին, կրակարանը իր սեղանին տակ կը գետեղէր, իրենք կը պաղէին, իսկ օրիորդին սրունքները կը կարմրէին: Անշուշտ տնօրէնը պատժեց անկարգ աշակերտները՝ սպառնալով, որ կրկնուելու պարագային զիրենք այլեւս դպրոց պիտի չընդունի:

Նոր Գիւղի շրջանին մէջ կը բնակէին քանի մը խենթեր եւ անբնական երիտասարդներ, որոնց ամէնէն զգուելին էր Ակոշը, որ բերնին լորձունքները տարածելով, անճոռնի ձայներ հանելով փողոցներէն կ'անցնէր, Մհերի նման տղոց ատելութեան նոխազ դառնալով:

Սակայն, ամէնէն ցաւալի դէպքը պատահեցաւ աչագուրկ Խոսրովին հետ:

Խոսարով գաւազանի օգնութեամբ երբ կը քայլէր Նոր Գիւղի Միս Քարէն Եփփէ այրիանոցի վերջաւորութեան գտնուող սասունցի Գրիգորի փոռոն քովէն, Նոր Գիւղի չարածճի տղաքը սկսան խեղճ աչազուրկ Խոսարովը խաղցնել, անոր վրայ նետելով ձմերուկի եւ սեխի կեղեւներ ու այլ աղտոտութիւններ, միեւնոյն ժամանակ հարուածելով մանր քարերով:

Աչազուրկ Խոսարով անյուսօրէն հոլի պէս կը դառնար գաւազանով օդը հարուածելով՝ ինքզինք պաշտպանելու համար տեղացող հարուածներէն: Կը հայհոյէր, կ'անիծէր, կ'աղերսէր, բայց անօգուտ: Անխիղճ տղաքը խնդուքով, քրքիջով եւ ուրախութեամբ կը շարունակէին իրենց ցաւալի խաղը:

Անշուշտ Մհեր գլխաւոր հարուածողներէն մէկն էր եւ միշտ աւելի կը մօտենար Խոսարովին, աւելի կատղեցնելով զինք: Այդ միջոցին, Խոսարովի գաւազանը զօրաւոր ուժգնութեամբ հանդիպեցաւ Մհերին: Մհեր ինկաւ Խոսարովի ոտքին մօտ: Աչազուրկ Խոսարով ծռեցաւ, բռնեց Մհերին թեւէն եւ գարկ ու գարկ, մինչեւ որ անցնողներ խղճալով ազատեցին զինք կատղած Խոսարովի ձեռքէն:

Մհեր իր անխիղճ շարութեան պատիժը կրած էր: Իր այլազան չարագործութիւնները եւ արկածախնդրութիւնները շրջան մըն ալ շարունակուեցան: Իր հօրը եւ եղբօրը թիւադրանքով Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտ դարձաւ: Ամէն Կիրակի եւ շաբթուան Չորեքշաբթի օրերը կը հետեւէր Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական դաստիարակութեան եւ կարգապահութեան:

Հ.Մ.Ը.Մ.-ի սկաուտական գիտելիքները եւ հայ ազգային գիտակցական դաստիարակութիւնը կամաց-կամաց զինք սկսան հեռացնել անիշխանական արարքներէն եւ արկածախնդրութիւններէն:

Մհեր, Սահակեան վարժարանի հինգերորդ դասարանի աշակերտ եղած շրջանին, կատաղութեամբ կը տեսնէ, որ ուղտի վրայ սոխ բեռցուցած արաբ մը կայք հաստատած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջապատի բաց բակին մէջ՝ անցնող դարձող հայերուն իր սոխի տեսակը գովելով:

Ահա առիթ մը նոր արկածախնդրութեան: Կէսօրուան դադարին, իր չարածճի երկու ընկերները համոզելով եւ սոխի վաճառորդին էջը առնելով՝ ամբողջ Նոր Գիւղը կը պտըտէին, իրենք զիրենք հերոս կարծելով կը խայտային:

Էջը անբնական պտոյտներէն կը ձանձրանայ, իրենք ալ էջին վըրայ նստելով կը հասնին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ բակը, ուր սոխի վաճառականը իր էջը փնտռելէ յուսահատած, կը տեսնէ իր էջին վրայ հեծած երեք պատանիները, կը կատղի եւ հայհոյելով կը մօտենայ անոնց:

Տղաքը, որպէսզի չբռնուին, անտրամաբանական շարժումներ ընելով պատճառ կը դառնան, որ էջին փալանը դառնայ եւ տղաքը

կ'իյնան գետին: Նկատի ունենալով, որ էշը քշողը Մհերն էր, Մհերը առաջին ինկողը կ'ըլլայ բակին մէջ գտնուող միջակ մեծութեամբ քարերուն վրայ, իսկ տղաքը կ'իյնան Մհերին վրայ: Մհերին ձախ թեւը արմուկէն տեղէն կ'ելլէ, ահռելի ցաւեր պատճառելով իրեն:

Մհեր ցաւերու մէջ դէպի տուն վագելով կը բացատրէ եղելութիւնը ծնողքին: Ծնողքը զինք կը տանին Նոր Գիւղի գլխաւոր պողոտային վրայ գտնուող փռապան Սարգիսին, որ անուն հանած էր որպէս բեկաբոյժ:

Սարգիս հակիթով, օճառով, ալիւրով շաղախ մը կը շինէ եւ ձեռքը անոնցմով շփելէ եւ արմուկը տեղը հանգչեցնելէ ետք, կը կապէ եւ իր աշխատավարձքը առնելէ ետք, բարի ապաքինում կը մաղթէ:

Սակայն մէկ ամիս ետք, երբ Մհերին թեւը կը քակեն, ձեռքը արմուկէն չի ծալուիր, ինչպէս փայտէ շիտակ կտոր: Սարգիսին արդարացուցիչ պատասխանները Մհերի ձեռքը բուժելու՝ տրամաբանական չէին: Ստիպուած Մհերին հայրը զինք կը տանի բեկաբոյժ սասունցի Աբրէիին մօտ: Սասունցին կը յանձնարարէ Հալէպի Ճիտէյտիէ թաղամասին մէջ ծախուող պզտիկ (մանր) ձուկեր գտնել եւ զանոնք ծեծելով արմուկին կապել մինչեւ որ հոտի, վերջը իրեն բերել:

Ձուկերու հոտով Մհեր կը ներկայանանայ սասունցի Աբրէիին: Աբրէ կը քակէ կապերը, տաք ջուրով եւ օճառով աղուոր մը կը լուսայ արմուկը եւ ձեռքի արագ շարժումով մը արմուկը կը ծալէ: Այնուհետեւ, Մհեր ամէն օր մարզանքով եւ տաք ջուրով ու օճառով շփելով՝ թեւը կը վերագտնէ իր բնական դիրքը:

Վերոյիշեալ արկածներէն եւ արկածախնդրութիւններէն ետք, Մհեր կ'անդամագրուի Նոր Գիւղի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Վարանդեան Պատանեկան Միութեան շարքերուն, ուր կը ստանայ ազգային եւ գաղափարական կրթութիւն, ուխտելով ծառայել իր ազգին, հայրենիքին եւ եկեղեցիին:

Յատուկ յիշատակութեամբ կ'աւարտէ ազգային Սահակեան վարժարանը, սակայն, ի ցաւ իրեն եւ ծնողքին, հայրենակիցի մը տղուն համագգեստով բեմ ելլելով եւ խմբանկար նկարուելով, որովհետեւ իր հայրը իրեն նոր գգեստ առնելու դրամ չունէր:

Այդ չարաճճի տղան, արկածախնդիր եւ անզուսպ տղան, տարիներու ընթացքին կը դառնայ պարկեշտ, աշխատասէր, խղճամիտ, ազգասէր, հայրենասէր եւ եկեղեցասէր երիտասարդ մը, որ պատիւ կը բերէր իր ծնողներուն եւ ազգին:

Հայրը իր ծանօթներուն, իրենց չար գաւակներով մտահոգներուն կ'ըսէր.

— Մանկութեան չար եղող ձեր գաւակներուն համար մի՛ մտահոգուիք. մանկութեան չար եղողը երբ մեծնայ, ճիշդ հակառակը՝ շատ խելօք եւ ազնիւ կը դառնայ:

ԼԻԲԱՆԱՆԻ ՔՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԵՆ  
ՀՕՐՍ ՀԵՏ ՀԱՍԱՆՔ ՍԱՄՆՈՅ ԼԻՃԵՐԸ  
ԵՒ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԵՐ՝  
ՍԱԿԱՐԻ, ԳԱԼԵԻ, ԳԵՈՐԳԻ  
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՍԱՐՏՆՉՈՒՄՆԵՐՈՒՆ  
ԵՒ ԿԵԱՆՔԻՆ

«Սիմանթերի Նասիոնալ»-ը (Կրաղիւսի Ազգային Հաստատութիւն) կը գտնուի Լիբանանի Թրիփոլի քաղաքէն շուրջ 20-25 քիլոմետր հեռավորութեան, Շէքքա գիւղաքաղաքին մօտ, Պէյրութ տանող ճամբուն աջին, որուն ելեկտրական բաժնի պատասխանատուութիւնը ստանձնած էր կրտսեր եղբայրս՝ Յովհաննէսը՝ 1957-ին, եւ ընտանեօք Հաստատուած Թրիփոլի քաղաքին մէջ:

Ես, «Արեւելք» թերթին հրատարակութեան թուականէն ի վեր՝ 1947-էն սկսեալ, գրաշարական պաշտօն ստանձնած էի, ապա աշխատանքի անցած էի բանաստեղծ Անդրանիկ Ծառուկեանի Նայիրի տրպարանը, ուր կը հրատարակուէր «Նայիրի» ամսագիրը, կը տպուէին դասագիրքեր, գանազան հրատարակութիւններ եւ առեւտրական գործեր:

1949-ին, Անդրանիկ Ծառուկեանը եւ «Նայիրի»-ն Պէյրութ փոխադրուելէ ետք, Նայիրի տպարանը ծախուեցաւ եւ նոր տէրը զիս պահեց, շարունակելու համար գրաշարական գործս նոյն տպարանէն հրատարակուող Յովհաննէս Եազըճեանի «Սուրիա» օրաթերթին մէջ: Ապա, Նայիրի տպարանէն դժգոհ մնալով, ստանձնեցի բանաստեղծ Անդրանիկ Նաճարեանի «Շիրազ» տպարանի գրաշարական պատասխանատուութիւնը:

1950-51 տարեշրջանին, Հալէպի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Զարեհ Արք. Փայասլեանի կարգադրութեամբ՝ տնօրէնութեան պաշտօնը ստանձնեցի Ռազգայի ազգային վարժարանին:

Իմ ունեցած պաշտօնները թէեւ որպէս ուսուցիչ, գրագէտ եւ գրող ինծի հոգեկան խոր գոհունակութիւն կ'ընծայէին, որոնք պատանեկան տարիքէս սկսեալ միշտ երազս եղած են, բայց ապագային ամուսնանալու եւ ընտանիք կազմելու համար, անբաւարար նիւթական եկամուտ ունենալով, կը մտածէի ուրիշ ասպարէզի մը հետեւիլ, որպէսզի կարողանամ ընտանիքս լաւ պայմաններով ապրեցնել:

Այդ ծրագիրը յաջողցնելու համար Ֆրանսային նամակագրութեամբ հետեւեցայ ելեկտրագէտի դասընթացքներու եւ ստացայ «էլեքթրո-թեքնիսիէն»-ի վկայական:

Յովհաննէս եղբայրս, որ ստանձնած էր Լիբանանի «Սիւմանթերի Նափոնայ» կրողիւսի հաստատութեան ելեկտրական բաժնի պատասխանատուութիւնը, ինծի հրաւէր դրկեց, որպէսզի Թրիփոլի գամ եւ ստանձնեմ ելեկտրականութեան բաժնի պատասխանատուի օգնականի պաշտօնը:

Համոզուեցայ, եւ 28 Յունուար 1958-ին Թրիփոլի հասայ ու ըստանձնեցի նրկական մեծ առաւելութիւններով եւ յարգալից պաշտօնով գործը:

Թրիփոլի հաստատուելով՝ միշտ նամակներով եւ հեռաձայնային հաղորդակցութեամբ կապ կը պահէի Հալէպի կիրակնօրեայ դպրոցներու կեդրոն բաժնի վարչութեան հետ, եւ, որպէս տեսուչ, թելադրութիւններս չէի զլանար անոնց: Կիրակնօրեայ դպրոցը կը գտնուէր Սալիպէ, Հայկազեան վարժարանի մանկապարտէզի երկու սրահներուն մէջ, մօտ 400 աշակերտներով եւ 60 ուսուցչական կազմով: Իսկ Նոր Տարուան եւ Ս. Մննդեան շրջանին, աշակերտութեան թիւը կը հասնէր մօտաւորապէս 600-ի, որոնք կու գային Նոր Տարուան առթիւ աշակերտներուն բաշխուող նուէրներէն օգտուելու համար: Այդ նրպատակով եկող աշակերտներուն մենք սիրով տեղ կու տայինք՝ այն յոյսով, որ այդպիսի աշակերտներ իրենց ստացած նուէրներու կարգին իրենց հետ կը տանէին հոն սորվեցուած բարոյալից պատմութիւններ, աղօթքներ, շարականներ եւ քրիստոնէական գիտելիքներ ու հայոց պատմութեան զրուագներ:

Սկիզբը շատ ուրախ էի: Մինչեւ Հալէպէն ընտանիքիս Թրիփոլի գալը, կը բնակէի եղբօրս տունը եւ միասին գործի կ'երթայինք եւ կու գայինք: Ընտանիքս՝ կինս եւ մանչս՝ Անդրանիկը, Թրիփոլի հասան 1958-ի Մարտին: Մինչ այդ տուն վարձած էի քենեկալիս տան մօտէն, որպէսզի կինս առանձնութիւն չզգայ:

Օրերու ընթացքին ես մաս կազմեցի Թրիփոլիի Հ. Յ. Դաշնակցութեան կոմիտէութեան (Հալէպէն փոխանցագիրս բերած էի), իսկ կինս՝ Լիբանանահայ Օգնութեան Խնայի Թրիփոլիի մասնաճիւղին, ստանձնելով արծուիկներու խումբին պատասխանատուութիւնը:

Ուրախ էինք: Անդրանիկը եւ քենիիս աղջիկը հայկական դպրոց կը յաճախէին, մենք ալ կամաց-կամաց վարժուեցանք եւ ծանօթացանք Թրիփոլիի կեանքին ու գաղութի անդամներուն:

Կուսակցութեան տարեկան ընդհանուր ժողովին ընտրուեցայ կոմիտէի անդամ, ապա՝ քարտուղար եւ երիտասարդականի պատասխանատու: Այդ բոլորը սիրով կ'ընէի, որովհետեւ կը հաւատայի Դաշնակցութեան գաղափարաբանութեան եւ մեծցած էի այդ մթնոլորտին մէջ, աշակերտած ըլլալով Սահակեան վարժարան, մաս կազմած Վա-

րանդեան Պատանեկան Միութեան եւ միշտ ունկնդրած հօրս Սասնոյ Տալւորիկի շրջանի Սպաղանք գիւղը ծնած-մեծցած նշանաւոր ֆե-տայիններ Մակարի, Գալէի, Ակէի ազգականը եւ օգնականը եղող Ղա-զար (Խարգօ) Հոթոյեանի պատմութիւնները Սասնոյ յեղափոխական շարժումներու մասին՝ աւելցնելով, որ ազգային հերոս Անդրանիկ ի-րեն լողալ սորվեցուցած է Մեղրագետին մէջ:

Թրիփոլիի մէջ մեր կեանքը խաղաղութեամբ եւ համերաշխու-թեամբ կը շարունակուէր, որ խանգարուեցաւ 1958-ին՝ Լիբանանի նախագահ Շամունի դէմ սկսուած ցոյցերով եւ ապստամբութիւննե-րով՝ Պէյրութի եւ Թրիփոլիի մէջ, դժուարացնելով հայ ժողովուրդի խաղաղ կեանքը:

Թրիփոլիի մէջ, բանակը եւ յեղափոխականները գիշեր-ցերեկ գի-րար ռմբակոծելով՝ խանգարած էին բնակչութեան խաղաղ կեանքը, եւ այդ վայրագութիւններուն զոհ կ'երթային բազմաթիւ անմեղ քա-ղաքացիներ: Իսկ ես ամէն օր առաւօտեան Շէքքա գացող մինի-պա-սով գործի կ'երթայի եւ երեկոյեան կու գայի արձակուած փամփուշտ-ներու տարափին տակ՝ աղօթելով, որ ապահով տուն հասնիմ:

Ուտելիքի չգոյութենէն (հաց, միս, կանաչեղէն եւայլն) տառա-պելով՝ վերջապէս հասանք տարեվերջին, եւ կռուողները բազմաթիւ զոհեր տալէ վերջ՝ հասան խաղաղութեան, եւ Լիբանան գտաւ իր բը-նական կեանքը:

1959-ին, նախ աներս՝ կնոջս հայրը, շապին-գարահիսարցի վարդան Տէրտէրեան եկաւ Թրիփոլի՝ կարօտցած իր աղջիկները եւ թողնելով: Աներոջս հետ պտոյտներ եւ ուրախ օրեր անցուցինք մեր եւ քենեկալիս տունը, անշուշտ սրտամօտ հիւրերու ներկայութեամբ:

Աներս՝ վարդանը, ապահովուած մեր կեանքէն եւ երկրին մէջ տիրող ապահովութենէն, վերադարձաւ Հալէպ:

Մեր կարօտին չգիմանալով՝ 1959-ի ամառը Թրիփոլի եկաւ այս անգամ հայրս. ան ալ կարօտցած էր իմ եւ եղբորս՝ Յովհաննէսին գա-ւակները, եւ, երկար ատեն տառապելով Լիբանանի մէջ տեղի ունեցող քաղաքացիական կռիւններու արձագանգներէն, եկած էր աչքովը տես-նելու մեզ:

Իմ եւ եղբորս գործատեղին՝ «Սիմենթերի Նասիոնալ» ընկերու-թիւնը, 24 ժամ կ'աշխատէր, ուր երեք հերթերով, ամէն մէկ հերթ ութը ժամ, կրաղիւս կ'արտադրուէր, գործ հայթայթելով հարիւրաւոր գոր-ծաւորներու եւ պաշտօնեաներու:

Մեր բաժանմունքին մէջ կ'աշխատէին քսանէ աւելի գործաւոր-ներ, որոնցմէ մէկ մասը ելեկտրական հարցերով կը զբաղուէր եւ միւս մասը ելեկտրական ֆիուզներու (ելեկտրական գիծը ապահովող, որ որոշուած ամփոփէն աւելի ֆուրան գալուն՝ կը կտրէր եկող հոսանքը) տուփեր շինողներ, որոնք կը գործածուէին նոր սարքաւորումներ (թապլօներ) հաստատելու համար:

Մեր գործաւորներուն մեծ մասը կու գար Լիբանանի Քուրա կոչ-  
ուող շրջանէն, որուն ձիթենիի ծառերը աշխարհի ամէնէն տարածուն  
շրջաններէն կը համարուի: Քուրայի բնակչութիւնը դարերէ ի վեր  
այլ արտադրութիւններու կարգին կ'ապրի ձիթաիւղի արտադրու-  
թեամբ: Շրջանը կը բաղկանայ 52 գիւղերէ: Քուրայի մայրաքաղաքն  
է Ամիուն գիւղաքաղաքը՝ 15.000 բնակչութեամբ: Տէտտէհ գիւղը  
Քուրայի ամէնէն գեղեցիկ գիւղերէն մէկն է եւ կը կոչուի աշխարհի  
դրախտը: Քուրայի շրջանը 173 քառ. քլմ. է, ընդհանուր 70 հազար  
բնակչութեամբ՝ սիւննի իսլամներ եւ մարոնիթներ:

Քուրայէն եկող գործաւորները, որպէսզի իրենց լաւ աչքով նա-  
յինք, նիւթական յաւելումներ ապահովենք իրենց, եղբօրս եւ ինծի  
տարեկան 2-3 թիթեղ մաքուր ձիթաիւղ կը բերէին իբր նուէր եւ փո-  
խարժէքը չէին առներ՝ հակառակ մեր պնդումներուն:

Նոյնպէս մեր գործաւորներէն՝ ծովեզերեայ Անֆէի բնակիչ մը, օր  
մը իրենց տունը հրաւիրեց՝ ձուկ ուտելու: Երբեք չեմ մոռնար 70-75  
սմ. մեծութեամբ փուռի մէջ եփուած ձուկը, զարդարուած տեսակաւոր  
համեմներով, բացառիկ համով մեր ձկնկերութիւնը, որուն համը ան-  
մոռանալի կը մնայ կեանքիս ընթացքին, որուն հետ կրնան մրցիլ Հա-  
լէպ մեր կեցութեան ընթացքին ընկեր Արշակ Տանակէօզեանի տունը  
ամէն Շաբաթ իրիկուն ընկեր Արշակին ձկնորսութեամբ բերուած եւ  
մեր ամուսնութեան կնքամայր Արշակին կնոջ՝ Մարգրիտ Զօրիկեան-  
Տանակէօզեանի կողմէ պատրաստուած ձուկերը:

Մեր գործաւորներէն Իլիաս Եուսէֆ, որ կը բնակէր Հիւսիսային  
Լիբանանի Քուրա շրջանի մայրաքաղաք Ամիուն գիւղաքաղաքին  
մէջ, Յուլիս 1959-ի Կիրակի մը մեզ հրաւիրեց իրենց տունը ճաշի եւ ե-  
րախտագիտական ընդունելութեան:

Այդ օրերուն հայրս Հալէպէն եկած էր Թրիփոլի, կարօտցած ըլ-  
լալով իմ եւ եղբօրս ընտանիքները եւ թոռները:

Հօրս գոյութիւնը մեծ հարց եղաւ. գործաւոր Իլիասին հրաւէրը  
ընդունի՞լ, թէ՞ ոչ: Ծաշի հրաւէրին դրական պատասխան տալով,  
ստիպուած հայրս Թրիփոլի՝ մեր տուները պիտի ձգէինք, որ յարմար  
չէինք գտներ, իսկ հետերնիս տանիլը՝ նոյնպէս անյարմար: Վերջա-  
պէս որոշեցինք մեզի հետ տանիլ, մեր որոշումէն տեղեակ պահելով  
հիւրընկալը, որ շատ ուրախացաւ մեր որոշումին համար:

Իլիաս Եուսէֆենց ընտանիքը բացառիկ ընդունելութիւն մը կազ-  
մակերպած էր մեզի համար, պատրաստած ըլլալով լիբանանեան որա-  
կաւոր ճաշատեսակներ, տեսակաւոր խմիչքներ եւ պտուղներու տե-  
սակներ:

Ծաշէն ետք, Իլիաս Եուսէֆ փափաքեցաւ Քուրայի շրջանը ծա-  
նօթացման համար օթոյով եւ քալելով պտոյտի ելլել: Մենք սիրով ըն-  
դունեցինք առաջարկը, անոր մէջ մեր կերածները ձեւով մը մարսելու  
գաղափարը գտնելով:

Քուրայի շրջանը մեծամասնութեամբ բնակուած էր յոյն-օրթոտոքս բնակչութեամբ, գոյութիւն ունէին նաեւ կաթոլիկ մարոնիթներ, սիւննի, շիա եւ ալաուի համայնքներ:

Իլիաս մեզ պտըտցուց Քֆար Հագիր, Պշմըզզին, Պսարմա, Քուսպա, Քֆար Աաքքա, Քֆար Սարուն, Այն Աաքրին, Ռաշտիպպին, Պզիզա եւ այլ գիւղեր, սքանչելի տեսարաններ, կանաչութիւններով եւ բնական գուլալ աղբիւրներով շրջապատուած եւ մանաւանդ հիւրասէր բնակչութեամբ:

Կարգ մը գիւղերու միջեւ քալելով կը հանդիպէինք գուլալ եւ սառնորակ աղբիւրներու եւ անոնց ջուրերը խմելով՝ արագ մարսողութիւն կ'ունենայինք եւ ուտելու արտոժակ:

Սասունցի հայրս մեր հիացումը եւ զարմացումը լսելով՝ ըսաւ.

— Լիբանանի այս գեղեցկութիւնը եւ աղբիւրներու գոյութիւնը լեռնային այս շրջաններուն մէջ տեսնելով, արդեօք ի՞նչ պիտի զգայիք տեսնելով Սասունի լեռներուն գեղեցկութիւնը եւ ամէն քայլափոխի հանդիպելով սառնային աղբիւրներու, որոնց նմանը չէք կրնար գտնել աշխարհի որեւէ երկրի մէջ: Սակայն, դժբախտաբար, այդ դժբախտային երկրին գեղեցկութիւնները, կլիման, անմահական աղբիւրներու ջուրերը այսօր կը վայելեն քոչուոր եւ վայրենի քիւրտերը, վայելելով թուրք ցեղասպան կառավարութեան հովանաւորութիւնը,— լալու աստիճան յուզմունքով արտասանեց հայրս, թելադրելով եւ մաղթելով, որ մեր նոր սերունդները միշտ յիշեն իրենց արմատները եւ հայրենասիրական անջնջելի զգացումներով ազատագրեն հայ ժողովուրդի 7000 տարուան հայրենիքը մարդ-գազաններու տիրապետութենէն, ժառանգած ըլլալով Սասունցի Դաւիթի յեղափոխական եւ անձնուէր ոգին:— Սիրելի՛ զաւակներս, մենք Սասուն ծնած ու մեծցած, թուրքին եւ քիւրտին վայրագութենէն եւ օսմանեան պետութեան կազմած ծրագրով՝ հայ ժողովուրդը ոչնչացնելու ցեղասպանութեամբ, օգտուելով Առաջին Համաշխարհային Պատերազմի պատեհութենէն, կրցանք ինքնապաշտպանութեան կռիւներով մեր հողին վրայ նահատակուել մեծ մասամբ, մնացեալ ժողովուրդը հայ ֆետայիներու առաջնորդութեամբ ցրուեցաւ արեւելեան Հայաստան, Ռուսիա, արաբական եւ եւրոպական երկիրներ, մեր սրտին մէջ վառ պահելով Սասնոյ մեր տունները, գիւղերը, քաղաքները եւ սրբութիւնները, որպէսզի ձեր Մայր Հայրենիքը ճանչնաք եւ տէր ըլլաք անոր հայկականութեան: Այս անբաղձալի երկրին եւ անոր բնակչութեան եւ ֆետայական շարժումներուն մասին ձեզի կը պատմեմ տուն հասնելէ ետք:

Ամիռունին եւ շրջակայքի գիւղերուն շուրջ ինքնաշարժով եւ քալելով պտըտելէ ետք, յոգնած վերադարձանք Իլիասեց բնակարանը, եւ թիթեւ ընթրիքէ մը ետք, շնորհակալութիւն յայտնելով՝ վերադարձանք Թրիփոլիի մեր տունները:



Հայրս այս այցելութենէն եւ պտոյտէն խանդավառուած, սուրճ մը խմելէ ետք սկսաւ պատմել իր գիտցածները, լրսածները եւ տեսածները Սասունի մասին, անշուշտ միշտ շեշտը դնելով իրենց գիւղին՝ Սպաղանքին, իր ազգականներուն եւ անոնց ազգասիրական եւ հերոսական շարժումներուն եւ կռիւններուն վրայ:

Սասունը կը գտնուի Թուրքիոյ հարաւ-արեւելքը, Պիթլիսի վիլայէթի Մուշի գաւառը, Մուշ քաղաքէն դէպի հարաւ, Տաւրոսեան լեռնաշղթային վրայ: Սասունը բաժնուած էր եօթը հիմնական շրջանի՝ Խուլթ-Բոնաչէն, Մոտկան, Փսանք, Խուլթ-Խիանք, Տալուրիկ, Շատախ, Սասուն:

ԽՈՒԹ.— Խուլթի շրջանին մէջ կային 50 գիւղեր, որոնցմէ ամենամեծը 100 տունէն աւելի չէր: Այդ գիւղերէն հայաբնակներն էին Բլսկանք, Դաշտամիր, Զօրավա, Դաշտադէմ, Կեանք, Ընկուզիկ, Կոստ, Շենխաս, Ագրակ, Փիջոնք, Լոռնաձոր, Թադվու, Թաղավանք, Գիլոնք, Ռաբաթ, Սալաբոստ, Բաբնթաղ, Հաւարք, Գործվարք, Պարծղենք եւ Շէն: Մնացածները քրտաբնակ գիւղեր էին, որոնց մէջ խառն կ'ապրէին նաեւ հատուկենտ հայ ընտանիքներ:

ՄՈՏԿԱՆ.— Մոտկանի շրջանը իր աշխարհագրական դիրքով շատ նման է Խուլթին, միայն քիչ մը լեռնոտ է: Մոտկանի կլիման բարեխառն է, ունի բաւականաչափ վարելահողեր, ինչպէս նաեւ բազմաթիւ պտղատու ծառեր: Ծառապտուղը շօշափելի արդիւնք կու տար մոտկանցիներուն, մասնաւորապէս ընկոյզը: Մոտկանի 60-70 գիւղերէն հայաբնակ էին Մրճի, Քաշաղ, Մզուկ, Հայթաղ, Աշրպներ, Կրբբ, Սըլնդ, Պոկնուտ, Մրցանք, Շէն, Կրխու, Ալնցոփ, Մեծ-Զոր, Տանձի, Վերին Գեղ, Սարինք, Աղտէք, Մարմանտ, Կնձօ եւ Նիջ, իսկ մնացածները քիւրտն ու հայր խառն կ'ապրէին:

ՓՍԱՆՔ.— Հարաւէն Մոտկանին սահմանակից է Փսանք գաւառը: Փսանքի մէկ մասը նոյնպէս բնակուած էր քիւրտերով, իսկ միւս մասը գուտ հայաբնակ էր, բաղկացած 140 գիւղերէ՝ Փսանք, Թաթունք, Կոռէնկէս, Քաղոնք, Մկթենք, Զանդուս, Քիսթաղ, Զրնտիկ, Խնձորիկ, Թալնոր, Բալոյինք, Կոմք, Փշուտ եւ Միջգեղ:

ԽԻԱՆՔ.— Խիանքի ազգաբնակչութեան գիւղերն էին՝ Հեղին, Իշխանաձոր, Արսիկ, Արտրկուսք, Սեւիթ, Սաղտուն, Ընկուզնակ, Փարգա, Ահարոնք, Գեղրվան, Բերմ, Ընձքար եւ Բացի:

ՏԱԼԻՌԻԿ.— Տալուրիկը անառիկ լեռներու աշխարհ մըն է, որուն 11 գիւղերը՝ կամ ինչպէս իրենք կ'անուանէին՝ «11 թաղամասեր»-ը կը կոչուէին՝ Փուրխ, Դվալենք, Հոսնուտ, Հոսներ, Հարթք, Սպաղանք, Եղկարտ, Հլողինք, Արթխու, Խլհովիտ եւ Արգիկ:

Այս գիւղերու բնակիչները բացառապէս հայեր էին, Սասունի «երկաթէ մարդիկ»-ը՝ յամառ, խրոխտ եւ տաքարիւն: Ժամանակին տալուրիկցիները իրենց լեռներուն մէջ գտած էին երկաթի հանքեր:



ՇԱՏԱԽ.— Շատախի անառիկ լեռներուն եւ խրոխտ հովիտներուն մէջ կը գտնուէին 10 հայկական գիւղեր՝ Քոփ, Գարմաւ, Իրիցանք, Տապիկ, Շուշնամերկ, Գեղաշէն, Շենիկ, Սեմալ, Ալեանցիք եւ Գելեգուզան:

Շատախն ու Տալւորիկը, գտնուելով քրտական միջավայրէն դուրս, չէին հանդուրժեր հպատակութիւն եւ ստրկութիւն: Այս հանգամանքը առանձին մոլուցք յառաջ կը բերէր քիւրտ ցեղապետերու մօտ, ուստի եւ զինուած ընդհարումներն անպակաս էին Շատախ-Տալւորիկի հայ լեռնականներու եւ քիւրտերու միջեւ:

ՍԱՍՈՒՆ.— Վերոյիշեալ գաւառակներու կեդրոնը՝ Ծովասար, Մարաթուկ լեռներու միջեւ կը գտնուէր Սասունը, անոր քաղաքն ու «Դաւթի Բերդ»-ը: Բերդի պարիսպները եւ սենեակներու կիսակործան պատերը կանգուն էին մինչեւ մեր ժամանակները: Կանգուն էին դարպասներէն ներս մտնող դրան կողքերը եւ ճակատի սրբատաշ մեծ քարերը: Բերդին մէջտեղը կար աղբիւր մը, որ դիմացի սարէն խողովակներով բերուած էր:

Սասունը ունի կանաչազարդ եւ մէկը միւսին զուգահեռ խոյացած լեռներ ու լեռնաթեւեր: Անոնց կատարներէն մինչեւ ստորոտները ամէն քայլափոխին կը հոսէին առատ ջուրեր: Ամառուայ քոչուորութեան համար կան բազմաթիւ արօտավայրեր, լեռներու որոշ մասերը ծածկուած են անտառներով ու մացառուտներով: Սասունը ծածկուած է կաղնիի, կաղամախիի, ուռեհիի, հողեհիի, թխկիի, կէչիի, նորգեհիի, ալուճի, քարծինի, եղւիթի, դառինջի, շլորի, մասրենիի, բղնջի, մրկիթի, փշատենիի, ընկուզենիի եւ այլ տեսակի պտղատու եւ անպտուղ ծառերով ու թուփերով: Սասունի սարերը հարուստ են նաեւ բանջարով, ինչպէս օրինակ՝ խանեն, կանձառ, խաւրձիլ, քեղ, բեժոկ եւայլն: Իսկ թարմ եփելու եւ ձմեռուայ պաշար պատրաստելու համար՝ օղի (չրէշ), սպիտկուկ, փնկայ, մանդակ, սունկ, ժախ, կմուկ, խաշմ, գզու եւայլն: Վայրի պտուղներն էին՝ արուճ, քարձին, դառինջ, մասուր, բղինջ, շլոր, մորեմուկ եւայլն:

Կայ նաեւ կաղպին (մանանայ): Կաղպին կ'իջնէր 4-5 տարին անգամ մը՝ Յուլիսին, երբ կ'իջնէր մուլթը, անձրեւոտ ցօղի նման երկինքէն կը թափուէր կաղպինը: Լուսաբացին հողը, քարը, կանաչը, ամէն ինչ ծածկուած կ'ըլլար մեղրանման թանձր հիւլթով: Կաղպին կ'իջնէր բացառապէս կաղնիի տերեւներու եւ գագի փշերուն վրայ: Ուրիշ կանաչութենէ ստացուած կաղպինը խիստ դառն կ'ըլլար, ուստի՝ անգործածելի:

Սասունի անառիկ լեռներու դիրքը կը նպաստէր սասունցիներու ինքնապաշտպանութեան: Սասունը հեշտութեամբ չէր պարտուեր: Սասունցին պէտք եղած ատեն կրնար երկար ժամանակ պատսպարուիլ քարայրներու մէջ ու թշնամին չէր կրնար մօտենալ: Իսկ կռուի միջոցին՝ թշնամին կը դիմաւորէին քարերու տարափներով: Այս մի-

Ղոցը սասունցիները կը գործածէին նոյնիսկ թրքական թնդանօթներու դէմ:

Սասունի 207 գիւղերուն մէջ հայ գիւղացի ժողովուրդը թրքական եւ քրտական տիրապետութեան տակ կ'ապրէր անտանելի կեանք մը: Գիւղացիներուն ստացած բերքին կէսը կառավարական հարկահաւաքները կը տանէին, մէկ քառորդը՝ գիւղի աղան եւ մնացածը կը մնար գիւղացիներուն:

Քիւրտերն ու չէրքէզները ոչ միայն կը յափշտակէին հայերու հողերը, այլեւ անոնց կը պարտադրէին այդ հողերուն համար հարկ վճարել:

1890 թուականի Սեպտեմբեր 12-ին, Քարաբերդ հասաւ Պոլիսէն զրկուած հետեւեալ հեռագիրը. — «Այդտեղի լրտեսներուն տրուող աշխատավարձը անմիջապէս քեմերէթէ տուրքերուն վրայ թող աւելցուի, չըլլայ թէ կառավարական դրամարկդէն վճարուի. քանի որ լրտեսները հայերու համար են, հարկ է, որ անոնց աշխատավարձն ալ հայերը վճարեն»:

Երբ գիւղացիները չկարողանային վճարել իրենց պարտադրուած հարկերը, հարկահաւաքները չէին վարաներ գործադրել այն բոլոր պատիժները, տանջանքները՝ գազանային եւ անմարդկային ձեւերով եւ միջոցներով:

1890-էն ետք սահմուկեցուցիչ դարձան քաղաքական հայածանքները, բռնութիւններն ու ցեղասպանութեան կիրքերը: Սուլթանը իր հայաջինջ քաղաքականութեան հարուածային ուժ դարձուց նաեւ վաչկատուն քիւրտները...

Թրքական եւ քրտական անհանդուրժելի քաղաքականութեան եւ հայ ժողովուրդի ապրելակերպին, պատիւին եւ տնտեսական կացութեան դէմ կիրարկուող դաժանութիւններուն ու ստրկային կեանքին դէմ պայքարեքու համար ստեղծուեցան հայկական պաշտպանողական եւ զինեալ խումբեր:

Այդ ֆետայական խումբերու ղեկավարներն էին Արաբօ, Սերոբ Փաշա, Գէորգ Չաւուշ եւ ուրիշներ:

Արաբօն Սասունի հայդուկային շարժման ռահվիրան էր, ժողովրդական վրիժառուներու անդրանիկ խումբի կազմակերպիչն ու ղեկավարը: Անոր իսկական անունն էր Առաքել: Ծնած էր Բոնաշէնի Կուռթեր գիւղը 1863 թուականին: Ուսանած էր Առաքելոց վանք ուսումնարանը: Փայլուն ընդունակութիւններու տէր էր: Անոր կը սպասէր կրօնական ծառայութիւնը, բայց Առաքելը ընտրեց կեանքի այլ ուղի՝ ժողովուրդի պատուի, իրաւունքներու ու ազատութեան համար պայքարի ծանր, փշոտ ու վտանգներով լեցուն ուղին: Ան հրաժարեցաւ կրօնական կոչումներէն, հեռացաւ վանքէն ու վերցուց պանդուխտի ցուպը: Գնաց Հալէպ, մշակ դարձաւ, վաստակած դրամներով հրացան գնեց եւ վերադառնալով կազմակերպեց խումբ մը, որ կը

կռուէր քրտական աշիրաթներու ու թուրք ճնշողներու դէմ: Սկիզբը երեք հոգի էին: Իր հետ էին Դերգեվանքցի Մխօն եւ Ալիզըռոնանցի Լեւոնը: Յետագային խումբը նոր անդամներ ընդունեց՝ Գէորգ Չալուշ, Գալչոյի Մանուկ, Գոմերցի Յովիկ, Բերդակի Ներսօ, Ահրոնքցի Ադամ, Ղարսեցի Հագէ:

Արաբոյի հայդուկային խումբի գործողութիւններու ձեւն էր՝ արագ, յանկարծակի ու աներեւոյթ: Ան անընդհատ կռիւներու մէջ էր: Ժամանակակիցներէն մէկուն արտայայտութեամբ՝ «Առաւօտեան գինք կարելի է տեսնել Մուշ քաղաքի մօտակայքը, իսկ երեկոյեան ան արդէն Մարաթուկի դագաթն էր»:

Արաբօն բոլոր խեղճերու, հարստահարուածներու, թշուառներու պաշտպանն էր, անկախ անոնց ազգութիւններէն: 1885-1889-ին «Արաբօն որպէս աւագակապետ կը գործէր», այսինքն անոր գործունէութեան ձեւերը վերցուած էին այդ տարիներուն Օսմանեան Կայսրութեան տարածքին գործող բազմաթիւ հրոսակախումբերու ձեւերէն: 1889-1890-ին ան վճռականապէս ձերբազատուեցաւ այդ մեթոտներէն ու որդեգրեց պայքարի յեղափոխական միջոցներ:

Արաբոյի անունը շուտով կը տարածուի ամբողջ Սասունի մէջ: Ո՛չ միայն հայերը, այլ մասամբ նաեւ քիւրտերը կը միանան անոր: Սկիզբը, ան հայերու եւ քիւրտերու հետ կը վարուէր այնպէս, ինչպէս քիւրտ թոռներուն, որ իր հպատակները կը պաշտպանէր ուրիշներու յարձակումներէն: Արաբօն եւ իր խումբի անդամները, քրտական հագուստներով ծափուած, կը շրջէին Սասունի եւ Տարօնի գիւղերը, թուրքերէն գէնքեր բռնագրաւելով՝ կը զինուէին: Անոր ստեղծած այս աւանդոյթը որդեգրեցին յետագայ բոլոր հայդուկային խումբերն ու հայդուկները:

Ֆետայի Գալէն հօրս հօրեղբօրորդին էր, իսկ Մակարը՝ հօրս ազգականը եւ կնքահայրը: Սպաղանցի բոլոր ֆետայիները իրարու ազգական էին, որոնցմէ նշանաւոր էին Ակէն, Կարօն, Աղէն ու Աղօն:

Սասունի ինքնապաշտպանական կռիւներուն մասնակցած են հարիւրաւոր անձնագոհ ֆետայիներ: Այդ օրերուն հօրս հետ մեր խօսակցութեան եւ խորհրդակցութեան նիւթը հօրս ծննդավայր Սպաղանք գիւղի ֆետայիներուն՝ Գալէի եւ Մակարի մասին էր, որոնց որպէս ազգական՝ մօտ եղած էր հայրս եւ պատանի տարիքին մասնակցած ինքնապաշտպանական կռիւներուն: Անոնց անձին, նկարագրին եւ յեղափոխական կռիւներուն մասին հայրս բազմաթիւ առիթներով հպարտութեամբ պատմած է, սակայն ես հայդուկապետ Ռուբէն Տէր Մինասեանի գրած յուշերէն կ'արտագրեմ անոնց մասին իր յուշերը:

Գալէն հասարակ մահկանացու չէր: Ան Գէորգի եւ Մակարի անմիջական աջակիցն ու անբաժան գիւնակիցը եղած էր ամբողջ 25 տարի:

Գալէն Տալուրիկի Սպաղանաց գիւղէն էր, խոր անդունդներու մէջ ինկած, աշխարհէն կտրուած այդ փոքրիկ գիւղը 24 տունէ կը բաղկանար: Փոքրիկ Սպաղանքը իր երկաթէ լեռներու նման ստեղծած է շարք մը պողպատէ մարդիկ, մոայլ ու անվեհեր, սառն ու արի, ֆարսիրտ, բայց արդարամիտ: Ամբողջ գիւղը կարելի էր մէկ սեբունդ, մէկ գերդաստան համարել:

Գալէն ազգակից էր հռչակաւոր Մակարին, Ակոյիցն եւ նման ֆաշերու: Դեռ մանուկ հասակէն սովորած էր խենչալ կապել եւ Տէրսիմի շէշխանա հրացանը գործածել: Ան 1893-ին աչքի զարնոդ կոուռը է: 1893-1905-ի Սասնոյ ապստամբութեան եւ խմբական կոիւններուն Գալէն կը դառնայ անբաժան զինակիցը իր ֆեռի Մակարին, որ Տալուրիկի եւ Գեալու կոիւններու սիւնն էր: 1896-1900 թուականներուն Գալէն կը դառնայ Գէորգի ամենամօտիկ գործակիցը: 1900-էն մինչեւ 1907, մինչեւ իր մահը, Գալէն եղաւ բոլոր կոիւններու հոգին: Ան մասնակցեցաւ Սասնոյ բոլոր կոիւններուն եւ Սասունը ճնշուելէն ետքն ալ բնաւ դուրս չեկաւ Սասունէն, եւ Մակարի դեկավարութեան տակ մնաց այնտեղ, դիմադրելով անասելի դժուարութիւններու եւ վտանգներու:

Գալէն հետաքրքիր էր ոչ միայն իբր հին զինուոր, հին աշխատող եւ արկածներ ունեցող, այլ իբր բնաւորութիւն, իբր տիպար ֆաշութեան: Ան դէմքով ու մարմնով ալ աչքառու էր, միջահասակէն փոքր, թիկնեղ, ամուր, թուխ դէմքով, սեւ աչքերով: Մոայլ էր առհասարակ եւ բնաւ չէր մտածեր, որ մսէ եւ ոսկորէ շինուած մարդ է ան, աւելի շատ երկաթէ արձանի կը նմանէր, ահարկու եւ տարօրինակ: Անոր դիմագիծը փչ կը շարուէր, կննիո չկար երեսին վրայ, բայց աչքերն ու ծնօտը այնպիսի կենդանութիւն կու տային դէմքին, որ այդ արձանը վնիո ու կամք կ'արտայայտէր, անբեկանելի, անխորտակելի:

Մեքն Գալէն կ'անուանէինք «Դանդաղ Գալէ»։ ան բնաւ չէր վիրաւորուեր այս մակդիրէն, այլ կը պատասխանէր, «Դանդաղ շարժուի, երկար շարժուի, ով շուտ ֆալէ ուէիսին կու գայ»: Ան ունէր միատեսակ, յամբաբայլ շարժումներ, դանդաղ եւ յարատեւ: Անոր հաստատ, ուղիղ եւ յամբ շարժումները չէր կարելի փոխել ոչ իսկ թնդանօթի գոռոցով: Եթէ ումբ մը կամ գնդակ մը իյնար իր առջեւ կամ իր ամենասիրելի ընկերը զարնուէր կողքին, այդ սառն արձանային մարդը ոչ դէմքը կը փոխէր, ոչ շարժումները, այլ՝ ֆթի մէջէն «ըիը» մը կ'ընէր եւ իր գործը կը շարունակէր: Երբ իր շուրջ ոգեւորութիւն կամ խունայ ստեղծուէր, ան աւելի անտարբեր կը դառնար եւ դանդաղօրէն ծխախոտը հանելով գլանիկ մը կը փաթթէր, յետոյ հանգիստ կ'ըսէր.— «Շատ միք թրովըտա, հանգիստ մնացէք»: Այսօր էր իր յուզումը:

Այս բնաւորութեան համար Մակար գիւն կ'անուանէր «խոգ Գալէ», իսկ մեքն յանախ կը կոչէինք «գումէշ», իսկապէս ալ գումէշի նը-

ման էր. Գալէի նստած դիրքը յանախ կը հերկուէր ոռւմբի եւ գնդակի ակօսներով, իր մարմնի վրայէն արիւնը կը հոսէր, ընկերները վիրաւոր կամ սպաննուած, իր շուրջ կը թաւալին, բայց ան անվրդով է ու հանգիստ, կարծես ոչինչ կայ, միայն քի մէջէն կը մրթմրթայ, գլանիկ կը քաշէ եւ իր մահաբեր հրացանով ուղղակի կը հնձէ, ինկածով չի հետաքրքրուիր, նոր գոհ կը փնտռէ:

Ես իմ կեանքը Գալէին եմ պարտական, — կը պատմէ Ռուբէն, — անոր հնարամտութեան: Ես եւ Գալէն միմակ Շէյխլան գեղն ենք. ցերեկ է, տանիքի ծայրը նստած ենք: Գիւղացիք, մեծ ու փոքր, մեր շուրջն են: Գալէն լուռ կը ծխէ, ես ալ գիւղական գործերը կը կարգադրեմ:

Ան հեռադիտակով կը նայի հանդարտ եւ յետոյ դիտակը ինծի տալով կ'ըսէ, որ նայիմ հեռուն. երկու քիլօմէթր անդին գօրքն է, որ կու գայ դէպի Շէյխլան: Գիւղացիք կը նկատեն եւ կը սարսափին: Ժամանակ չկայ, որովհետեւ ձիաւոր գօրքը շատ մօտ է: Ես շուարած եմ ու քարացած կը մնամ: Գալէն ծխախոտը բերանը, ինծի կը նայի, որ կարգադրութիւն ընեմ: Գիւղացիք մէկիկ-մէկիկ կը հեռանան եւ կը պահուին իրենց տունները, միայն Շէյխլանի Պետրոսը կը մնայ, որ կ'առաջարկէ ինծի «պահուիլ գիւղի մէջ»: Գալէն կը պատասխանէ.— «Ձէ, այդ չի լինի, ամնիաք (վստահութիւն) չկայ, որ ձեզի ծեծեն, մեզի մատնէք»: Գալէն իրաւունք ունէր: Գիւղը ամբողջ, կին ու երախայ, մեզ տեսած էին, կրնային չարչարանքի տակ մեր տեղը ըսել: Ես կ'ըսեմ Գալէին.— «Մեզի ճամբայ մը կայ, միայն կոուիմք»: «Ձէ,— կը պատասխանէ Գալէն,— կը սպաննուինք, գեղն ալ ձեռքիցը կու տանք, մենք պիտի դեռ ապրինք»: Այսպէս հաւատով ըսաւ «պիտի ապրինք»-ը, որ դարձայ իրեն եւ յարեցի.— «Դէ, կարգադրէ դուն ինծի խըմբապետ, ես քեզի զինուոր»:

Գալէն լուռ ելաւ ոտքի, հանեց գէնքերը, ինծի ալ պատուիրեց զինաթափուիլ, գէնքերը տուաւ Շէյխլանի Պետրոսին եւ պատուիրեց տանիլ պահել Մուրախ գետի ափին, նիշդ գետի կղզիին դիմաց: Երկու կուլար առինք վրանիս, արդէն ծակ արախչիները ծածկեցինք մեր գլուխները եւ հանգիստ, Գալէի քայլերով ուղղուեցանք դէպի դաշտը արածուող նախիրը: Աչքերս ուղղած եմ գոմէշներուն, կարծես անոնք պիտի փրկեն մեզ: Ջօրքը արդէն հասած էր գիւղը: Մենք ալ արդէն հասած ենք փրկարար նախիրին: Հովիւը աչքերը չռած մեզի կը մօտենայ, Գալէն կը նստի եւ կը պատուիրէ անոր շորերը հանել, ինք կը հագուի եւ կ'ըսէ.— «Հովիւը ես եմ, դուն ալ Գալէն ես: Հաշ մնա', լեզուն ծոծրակէդ կը հանեմ»:

Հովիւը գնաց: Ձիաւորները կու գան դէպի նախիրը: Շատուոր չեն, միայն 10 հոգի: Կը կենան մեզմէ քիչ մը հեռու եւ երեսները կը դարձնեն դէպի գիւղ: Շէյխլանի ճամբաները գոցուեցին: «Հէյ, շա-

նորդի, հոս եկե՛ք», կը կանչէ ենթասպան: «Դուն մնա՛», կ'ըսէ Գալէն ինծի եւ ինք կը յառաջանայ դէպի ձիաւորները: Կը մօտենայ ենթասպային, կը բռնէ անոր ձիուն սանձը եւ լեզուանի մարդ դարձած կը պատմէ՛:

«Հէ՛յ, հայվան», կը կանչէ Գալէն ինծի: Իմ բախտէս ցուլ մը ինկաւ կովու մը հետեւէն: Ես օգտուեցայ առիթէն եւ ինկայ ցուլի հետեւէն, որպէսզի խանգարեմ անոր հանոյ՛քը: Նպատակս էր չլսելու տալ ենթասպայի հրամանը երթալու իրեն մօտ: «Հայվան», կրկնեց Գալէն, «չե՞ս լսեր, բուղան (ցուլ) թող, գնա՛ գիւղն աղ բեր»: Երբ երրորդ անգամ «հայվան» լսեցի, ուղղուեցայ դէպի գիւղ: Գալէն մօտեցաւ ինծի, բարձր հայիոյեց եւ կամաց մը ըսաւ.— «Էջ, չդառնաս»:

Եւ ի՞նչպէս պիտի մտնէի գիւղ աղ բերելու համար, անհնար էր, զօրքը պաշարած էր ու կը խուզարկէր: Կը մտնեմ առու մը եւ կը նըստիմ: Մինչ մէկ կողմէ գիւղը կը խուզարկեն, միւս կողմէ Գալէն երինջ մը կը մորթէ եւ ձիաւորներու խուրջինները կը լեցնէ մսի կտորներ: Գալէն համոզեր է մորթել երինջ, որպէսզի ինք ալ միս կարենայ ուտել եւ կը զբաղեցնէ զանոնք խորովածի գայթակղութեամբ:

Փողը հնչեց, զօրքը հաւաքուած էր գիւղին մէջ, ձիաւորներն ալ գացին: Գալէն ցուպը ձեռքը բարձր կը կանչէ.— «Մօսօ, Մօսօ»: Ես գլուխս հանեցի փոսէն: «Նախիրը քէ գետի ափ», հրամայեց: Նախիրը կը քէմ դէպի գետափ: Կ'որոնենք մեր պահուած հրացանները եւ տիկերը: «Գետը պիտի անցնիս եւ կղզին երթաս», կը դառնայ ինծի Գալէն: Սարսափելի է այս պատուէրը: Լողալ չէի գիտեր, ի՞նչպէս պիտի անցնիմ: Տիկ մը կ'ուռեցնեմ եւ թելիս տակ կ'առնեմ, գոմէջ մըն ալ առջեւս կը խառնեմ եւ կը մտնեմ ջուրը, կը պլլուիմ գոմէջի պոչին եւ անհնարին նեղութիւններէ ետք կը հասնիմ կղզի:

Քիչ վերջ Գալէն կու գայ հրացաններով: Ան թէեւ ծիծաղիլ չէր գիտեր, բայց դէմքէն կ'երեւայ որ ուրախ է.— «Մէկպետ էի, երկպետ եղայ», կ'ըսէ: Կ'ուզէ ըսել, որ այդ օրը ինքն էր հրամանատարը: Եւ իրաւունք ունէր: Ան ազատած էր թէ զինքը, թէ զիս, եւ թէ՛ գիւղը, իր երկպետութեամբ: Գալէն չէր մոռցած երինջի միսէն բերել իրեն հետ, անօթի էինք, ուստի հում-հում կերանք, աղ չունէինք, Գալէն նկատեց.— «Մաշքը քուկդ է, աղը բերողը պիտի ըլլայիր»: Ծիծաղեցանք եւ ախորժակով թարմ միսը գագանի նման լափեցինք:

Գալէն քնացաւ երեկոյեան, երբ մութը իջաւ, անցանք Խէպեանի կողը: Շէյխլանի գիւղացիները չէին գիտեր, թէ մենք ո՞ւր էինք կորսուած: Զկարծէ՛ք թէ Գալէն նման պատահարները բանի մը տեղ կը դնէր: Ան անցածը անցած կը համարէր եւ կը լռէր, իսկ գալիքի մասին կը մտածէր ու կը սպասէր: Այսպէս օրինակ՝ այս դէպքի մասին ոչ ոք չէր գիտեր: Գալէն ոչինչ կը պատմէր: Երբ շաբաթներ յետոյ առասպելներ հիւսուեցան եւ ընկերներ ու գիւղացիներ ինծի հարց կու տա-



յին պատահածի մասին, ես ըսի, որ Գալէին հարցնեն, քանի որ «ան խմբապետ է եղած այդ օրը»: «Բան չունի՞ս, Գալէն խօսք մենք իմա՞ր քաղցնք, դուն պիտի պատմես»: Երբ ես պնդեցի «Գալէ, պատմէ՛ երկապետութիւնը», «Վազ մնա՛ ինձմէ, եկաւ ու անցաւ» պատասխանեց ու սկսաւ ծխել:

Եւ իսկապէս ալ Գալէն «մէկապետ» էր, ինչպէս ինք կը սիրէր ըսել: Մեծ էր բոլորէն իր հոգու, կամֆի կարողութեամբ, բայց ամբողջ մեծութիւնը իր մէջ էր ամփոփուած: Եւ թէ ան ըլլար քիչ մը անհամեստ, քիչ մը փառասէր, կը դառնար առաջինը Մշոյ աշխարհին մէջ: Ի գուր չէ, որ Գեորգ Չաւուշ կ'ըսէր յաճախ.— «Եթէ ես ունենայի Գալէի քաղցրութիւնը եւ մտածողութիւնը, առանց կատակի, Սուլթան Համիտին թախտից վար բերելը քանի մը շաբթուան գործ պիտի դառնար»:

\*  
\*  
\*

*Սուլթանի կռիւը կը հանդիսանայ հայ յեղափոխական շարժումի մէջնէն նշանակալից դէպքերէն մէկը: Սուլթանի կռիւին զոհ գացին մեր նորագոյն պատմութեան ժողովրդական մեծագոյն հերոսներէն Գեորգ Չաւուշն ու Գալէն, 27 Մայիս 1907-ին:*

## ՄԱԿԱՐ ՍՊԱՂԱՆՑԻ

*Թուրքերը Մուշ քաղաքին մէջ իրենց յաղթանակը կը տօնէին, իսկ հայերը իրենց մեծ կորուստը կը սգային: Սերոբի սպանութիւնը յուսալքութեան դողով պատած էր Սասունի եւ Տարօնի ժողովուրդը: Թուրք հրամանատարները եւ քիւրտ ցեղապետները կ'աճապարէին օգտուել ստեղծուած կացութենէն:*

*1899 թուականի Նոյեմբերին, թրքական զօրամաս մը եւ քիւրտ Պշարա Խալիլի աշիրէթութիւնը յարձակում կը գործեն Սպաղանք գիւղին վրայ: Անոնց դէմ դիրք կը գրաւէ Մակարը իր խումբով, դիրքեր գրաւելով ժայռերու ձերպերուն վրայ, կրակի տակ առնելով յարձակող թշնամին, տալով անոնց 10 սպաննուած: Խալիլը հարկադրուած կը նահանջէ եւ կ'անցնի Սասնոյ գետի միւս ափը: Խալիլը օգնական ուժեր ստանալով՝ կը վերսկսի իր յարձակումը, բայց չի յաջողիր գետը անցնիլ: Խալիլը հարկադրուած՝ կը հեռանայ շրջանէն:*

*Մակարը Սպաղանք գիւղի իշխանն էր, միաժամանակ գիւղի գինուած ջուկատի ղեկավարը, Սասունի հայդուկային շարժման հիմնադիրներէն մէկը: Աժդահայ արտաքինով, բարձրահասակ, թիկնեղ, խոշոր գլուխով ու մեծ աչքերով, դանդաղ, բայց հաստատուն ու վճռական շարժումներով: Տորք Անգեղի կերպարանքով այս առնական սա-*

սուկնցին օժտուած էր լեռնցիի բնորոշ բնաւորութեան գիծերով: Ան նրբակերտ էր եւ փխրուն սիրտ ունէր, բայց առանձին դէպքերու ժամանակ անոր դաժանութիւնը սահման չէր ճանչնար: Անվախ ու քաջ մարդ էր, չէր յապաղեր մեն-մենակ թշնամիի վաշտերուն դիմադրելու: Խիստ բարձրու ու բարձր պահանջկոտութեան տէր էր, իշխանական կեցուածք ունէր, եւ վա՛յ անոր, ով Մակարի զայրոյթին արժանանար: Պարզամիտ էր եւ անյիշաչար, «չէ»-ն երեսին ըսող էր եւ զուրկ՝ խորամանկութենէ եւ երեսպաշտութենէ:

Ըմբոստ հայդուկ էր, ամէն մէկուն չէր ենթարկուեր: Բոլոր հարցերու ընթացքին ան ունէր իր սեփական կարծիքը եւ հայդուկային շարժման մէջ ինքնավար եւ անկախ կեցուածք ունէր: Մարտական գործողութիւններու ժամանակ բացառիկ կարգապահ ու պարտաճանաչ էր:

Հայդուկային տեւական անցեալն ու մեծ վաստակը, շիտակութիւնն ու քաջութիւնը, բարութիւնն ու նուիրուածութիւնը Մակարը դարձուցած էին հայդուկային շարժման ամենահեղինակաւոր ղեկավարներէն ու երիտասարդներէն մէկը:

Ահա թէ ինչո՛ւ թրքական իշխանութիւնները ամէն կերպ կ'աշխատէին Մակարը ձեռք բերել եւ ոչնչացնել անոր մարտական ամբողջ՝ Սպաղանք գիւղը:

Պշարա Խալիլ Մակարը եւ Գալէն ոչնչացնելու համար թրքական զօրքով կը պաշարէ Սպաղանք գիւղը: Գիւղացիները կը պատսպարուին Ս. Մարուգէ ձգնաւոր եկեղեցւոյ մէջ: Սակայն չկարենալով քանդել եկեղեցին, քարիւղ թափելով կ'այրէ եկեղեցին, որուն մէջ գտնուողները ամբողջութեամբ կը մեռնին:

Մեռնողներուն մէջ կը գտնուէր նաեւ Մակարի ընտանիքը, որուն համար Մակար կ'ուզէ վրէժ լուծել Պշարա Խալիլէն:

Շուտով Անդրանիկին ու Գէորգին լուր կը բերեն, որ Խալիլը Մուշ քաղաքը կը գտնուի, որպէսզի կառավարութենէն ստանայ իր ծառայութեան վարձքը եւ յաջորդ օրը, վաղ առաւօտեան, բարձրանալու էր Շեկօ ցեղի նստավայրը: Սերբը սպաննելուն համար՝ Խալիլին Սուլթանը կոչում շնորհած էր եւ պարգեւատրած պատուոյ նշանով: Ան նուէր ստացած էր նաեւ Ալվառինջ գիւղէն առնուող տասնորդ հարկը:

Խալիլի ճանապարհը կ'անցնէր Մառիկի կիրճով: 25 հայդուկներ Անդրանիկի, Գէորգի, Մակարի ու Գալէի հետ կը շարժին դէպի կիրճը ու դարան կը մտնեն: 1900 թուականի Նոյեմբեր ամիսն էր, կը պատմէ Անդրանիկը.— «Ըսի, որչափ կարելի է, պէտք է աշխատիլ Խալիլը ողջ բռնել, որպէսզի հարցաքննենք զինք, թէ մինչեւ այժմ հայերէն ու՛քե՞ր եղած են իր լրտեսները»:

Միջօրէին առաջինը կը մտնէ թալանուած գոյքի եւ ապրանքներու քարաւանը, ապա՝ կ'երեւայ ինքը՝ Խալիլը, շրջապատուած 40

գինեալ հեծեալներու խումբով: Դարան մտնողները թոյլ կու տան, որ քարաւանը անցնի, ապա կրակ կը բանան այն ժամանակ, երբ հեծեալ խումբը կը հաւասարի իրեն: Առաջին համազարկին հեծեալներու մեծ մասը գետին կը տապալուի: Կը սպաննուի նաեւ խալիլի ձին: Խալիլը վար կ'իյնայ, բայց ոտքը կը մնայ ասպանդակին մէջ: Հայդուկները վրայ կը հասնին, խալիլը ստքի կեցնելով կը խուզարկեն: Կը գտնեն 13 հայ լրտեսներու անունները պարունակող փաստաթուղթը եւ ապա խալիլի գլուխը կը կտրեն եւ կը դնեն պարկի մը մէջ եւ կը շարժին դէպի Գելի:

Այսպէս կը լուծուի Սպաղանքի Ս. Մարուգէ Ճգնաւոր եկեղեցին այրող եւ հոն ապաստանած գիւղացիներու վրէժը:

1894-96 թուականներու զանգուածային կոտորածներէն յետոյ, թրքական վանտալիզմի առաջին ամենամեծ զոհը դարձաւ Սասունի Սպաղանք գիւղը: Այդ 30-35 տուն ունեցող փոքրիկ գիւղին վրայ յարձակումը տեղի ունեցաւ 1900 թուականի Յուլիս 3-ին: Գիշերը խալիլ Փաշայի, Քոռ Սլոյի, Ալի Փաշայի աւագակախումբերը, չորս աշիրաթուծիւն (մօտ հազար քիւրտ) եւ մի քանի վաշտ ոստիկաններ ու գինուորներ, կը շրջապատեն գիւղը: Քոռ Սլօն 500 քիւրտերու հետ դիրք կը գրաւէ Կելիէկուզանի եւ Տալուորիկի միջեւ ու կը կտրէ Սպաղանքի կապը աշխարհի հետ:

Արշալոյսին կը հնչէ յարձակման փողը, եւ քիւրտերն ու թուրքերը կը մտնեն Սպաղանք: Աղմուկին վրայ հայերը տուններէն դուրս կ'ելլեն, բայց ով ոտքը չեմէն դուրս կը հանէ, գնդակահար կ'իյնայ: Կիններ երեխաներուն հետ զօրքին ընդառաջ կ'երթան՝ կարծելով, թէ կը խնայեն, բայց բոլորը թրահատ կ'ընեն, չինայելով նոյնիսկ օրօրոցի երեխաներուն: Ամբողջ գիւղէն կը փրկուին 7 հօգի, որոնցմէ հինգը Մակարի գլխաւորութեամբ կը ճեղքեն թշնամիին օղակը եւ շրջապատումէն դուրս կու գան, իսկ երկուքը կիներ էին, որոնք գետը նետուեցան եւ քարերուն կանչելով կարողացան միւս ափը հասնիլ: Գիւղը թալանուեցաւ եւ հրդեհուեցաւ: Այս հրէշաւոր ոճրագործութիւնը աշխարհի աչքէն թաքցնելու համար՝ Սպաղանքը երկար ժամանակ շրջապատման մէջ կը պահուէր: Որոշ ժամանակ անց խալիլն ու Հիւսէյնը ոստիկաններու հետ կը վերադառնան Սպաղանք, հորերը կը քանդեն եւ դիակներ հանելով կ'այրեն:

Մակարի հայդուկային կեանքին մասին կ'անդրադառնան Ռուբէն Տէր Մինասեան, Հայաստանէն՝ մատենագիրներ Ս. Կ. Պօղոսեան եւ Կ. Ս. Պօղոսեան «Ինձ Բահ Տուէք» գիրքին մէջ, 1990-ին տպուած՝ Երեւան:

Սպաղանք գիւղը միշտ եղած է հայ աչքառու եւ դեկավար Ֆետայիներու կեդրոնն ու հաւաքավայրը, Մակարի, Գալէի, Յակէի, Կարոյի, Աղոյի եւ սպաղանցի բազմաթիւ Ֆետայիներու ծննդավայրը:

Այդ ֆետայիներու կարգին, Սպաղանք գիւղին մէջ տեղի ունեցող ժողովներուն միշտ ներկայ կը գտնուէր Անդրանիկ Փաշան, որ Մեղրագետին մէջ հօրս լողալ սորվեցուցած է, եւ թէեւ տակաւին պատանի՝ իրեն զէնք տուած:

Հայրս յաճախ պատմած է իր մասնակցած կամ լսած ֆետայական մարտնչումներուն մասին:

Հոս կ'ուզեմ անդրադառնալ Սուլուխի կռիւին մասին, ուր նահատակուեցան հայ ազատագրական ճակատամարտերու անվեհեր քաջեր Գէորգն ու Գալէն:

Սասունի հայդուկներու կռիւներու գլխաւոր սկզբունքն էր՝ ճակատամարտերու ժամանակ անընդմէջ տեղաշարժուիլ, բարձունքներու վրայ դիրքեր գրաւել՝ օգտագործելով լեռներու ծերպերը: Տեղահանքի միւս հնարաւորութիւններու ճիշդ օգտագործում՝ թշնամին հարուածելու անոր համար անսպասելի կէտերու մէջ, անակնկալ տեղաշարժներու եւ հարուածներու միջոցով անցնելու թշնամիին թրկունքը:

Սուլուխը այլ էր: Ան կը գտնուէր Բիւրակնի լեռներու եւ Տարօնի դաշտի սահմանագծին: Գիւղի թրկունքին կը բարձրանային լեռները, աջ թեւին կը հոսէր փրփրաբաշ Արածանին, իսկ ձախ կողմը նսփերու Դաշտի շարունակութիւնն էր:

Դիմացէն կու գար թշնամին 3000 հոգիէ բաղկացած զօրաբանակ մը: Իսկ հայդուկները՝ Գէորգն ու ուրիշներ Սուլուխ եկած էին առանց ձիերու:

Գէորգը, պաշտպանական երեք զիծ ստեղծելով, կը ձգտէր թշնամին ծուղակը ձգել եւ գիւղի փողոցներուն մէջ անոնց պատճառել մեծ կորուստներ: Եթէ թշնամին յաղթահարէր առաջին գիծի դիմադրութիւնը, կը մտածէր, որ յաղթած է հայդուկներու գլխաւոր ուժերուն, որովհետեւ առաջին գիծին վրայ կը կռուէր անձամբ Գէորգ Չաւուշը, հետեւաբար, ան, առաջին գիծը անցնելով, աւելի ինքնավստահ պէտք է գիւղ մտնէր: Այստեղ ան կ'իյնար Սուլուխի մարտական ջոկատներու, ինչպէս նաեւ գիւղի



Գէորգ Չաւուշ

միևս մասերուն զիրքեր բռնած հայդուկներու կրակին տակ: Ատիկա հնարաւորութիւն կու տար մինչեւ մթննալը զիմադրել եւ զիշերը հեռանալ Սուլուխէն: Գէորգ խստօրէն պատուիրեց, որ առանց իր ազգանշանին ոչ ոք կրակէ: Թրքական վաշտերը կը մօտենային: Անոնք արդէն 100 մետր հեռաւորութեան վրայ էին, իսկ հեծեալ զօրամասը սրարշաւ գնաց զէպի Ս. Գէորգ եկեղեցիին կողմը: Կը պայթի Գէորգի հրացանը: Բոլոր հայդուկները միաժամանակ կրակ կը բանան յառաջ եկող թրքական վաշտերուն վրայ: Թուրքերու մէկ մասը ճանապարհէն դուրս կու գայ ու կը պատսպարուի փոսերու մէջ: Ոմանք շփոթած կը վազեն զէպի գիւղ ու կը թաքնուին պատերու տակ, իսկ հիմնական մասը ետ դառնալով՝ կը հեռանայ, դուրս գալով մոսին հրացանի կրակի գօտիէն՝ զիրքեր գրաւելով:

Օրուան երկրորդ կէսէն կը լսուի թրքական բանակի փողերու կանչը, եւ Քէօսէ Պինպաշին երկրորդ անգամ յարձակման հրաման կու տայ իր զօրաբանակին: Այս անգամ թուրքերը յառաջ կը շարժին ոչ թէ շարասիւններու, այլ՝ ցրուած մարտակարգով՝ վազք-փորսող սկզբունքով: Կը սկսի կատաղի ճակատամարտը: Թուրքեր մեծ զոհեր



Գալէ

կու տան, բայց յամառօրէն յառաջ կը շարժին: Քէօսէ Պինպաշին անձամբ կը ղեկավարէր յարձակումը: Ան արդէն Քիւչիւկի տան պատին տակ էր, երբ գետին տապալեցաւ: Թուրքերու մէկ մասը, անոր մարմինը վերցուցած, նահանջեց, իսկ միւսները յառաջ շարժեցան ու մտան հայդուկներու դասաւորութեան մէջ:

Գէորգի աջ կողմը կը կրուուէր Գալէն: Յանկարծ անոր հրացանը կրակելէ դադրեցաւ: Գէորգը դարձաւ զէպի Գալէն: Իր հայդուկային պատանեկութեան ընկերը՝ Գալէն սպանուած էր: Ան յանձնարարեց Գալէն իջեցնել Քիւչուկի ախոռը, իսկ ինքը շարունակեց կրակել: Բայց յանկարծ դադրեցաւ կրակելէ նաեւ անոր հրացանը. զսպանակը փճացած էր: Ան ծունկը գետին իջեցուց եւ փորձեց կարգի բերել հրացանը,

բայց այդ վայրկեանին, ինչպէս Ռուբէն գրած է, անցնելով Գէորգի «աջ թիկունքէն խրուած էր անոր ծունկին մէջ»: Գէորգ ձեռով մը կտուրէն վար իջաւ, մտաւ արտոռ եւ գիտակցութիւնը կորսնցուցած ինկաւ զոհուած ընկերոջ՝ Գալէի կողքին: Քիչ անց, թուրքերը գրաւեցին Գէորգի զբաղեցուցած դիրքերը եւ Քիւլչիկի կտուրին վրայ կէս ժամէն աւելի կատաղի կռիւներ տեղի ունեցան, մինչեւ որ էլօն յաջողեցաւ իր խուճբով ետ գրաւել այդ տունը եւ շարունակելով հետապնդել թշնամին՝ հասնիլ մինչեւ խճուղի: Գիւղ մտած թուրքերէն շատերը շրջապատուեցան եւ ոչնչացուեցան: Նահանջող թրքական զօրամասերու ետեւէն հայդուկները շարժեցան դէպի կամուրջի թաղի տունները եւ նոր դիրքեր գրաւեցին:

Թուրքերը փորձեցին հեծելագօրով անցնիլ գիւղի հարաւային մասը եւ թիկունքէն հարուածել հայդուկները: Սակայն հայդուկները հասկցան անոնց մտադրութիւնը եւ շեշտակի հարուածով ցրուեցին այդ հեծեալ շոկատը:

Թշնամին աւելի քան 150 սպաննուած եւ շուրջ 250 վիրաւոր տալով՝ չկրցաւ գրաւել Սուլուխը: Թրքական հրամանատարութիւնը հարկադրուած եղաւ Մուշէն թնդանօթներ խնդրել:

\* \* \*

Լիբանանի Քուրայի շրջանին մէջ հօրս հետ իմ ունեցած պտոյտները, սառնորակ աղբիւրները եւ դրախտային գեղեցկութիւններն ու տեսարանները մեզ տարին Սասունի լիճերուն, լեռներուն, ձորերուն եւ մանաւանդ թուրք եւ քիւրտ պետութեան եւ աշիրաթապետերուն Սասնոյ հայութեան դէմ կատարած յարձակումներուն եւ տիրապետութեան դէմ ազատագրական մարտնչումներով յայտնի հայդուկապետեր Մակարի, Գալէի, Գէորգի եւ բազմաթիւ հայ ֆետայիներու հերոսութեան եւ կեանքին, մեր սրտերուն մէջ վառ պահելով անոնց ազգասիրական եւ հայրենասիրական ոգին, փոխանցելով զայն մեր նոր սերունդներուն, որպէսզի գիտական նոր միջոցներով ազատագրենք մեր կորսնցուցած հայրենի տարածքները:



## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ

Սերոբ Գաբրիէլեան, կինը՝ Զապէլ եւ մանչը՝ Զաւէն, կ'ապրէին Լիբանանի Թրիփոլի քաղաքի ծովեզերեայ Մինա շրջանին մէջ:

Սերոբ ձկնորսութեամբ կը զբաղէր, յատկապէս գիշերները իր փոքրիկ նաւակով ծովուն խորերը երթալով եւ յատուկ լուսաւորումով, մինչեւ առաւօտ, կարելոր քանակութեամբ ձուկ կ'որսար եւ առաւօտուն ձուկի շուկան տանելով կը ծախէր, այս ձեւով ապահովելով իր ընտանիքին ապրուստը, շուկային մէջ մրցակցելով արաբ ձկնորսներուն հետ, որոնք միշտ յանդգնութիւնը կ'ունենային իրենց որսացած ձուկերը բարձրաձայն գովելով եւ յաճախորդներուն ուշադրութիւնը գրաւելով Սերոբէն առաջ իրենց ձուկերը ծախելու:

Սակայն Սերոբ ունէր իր հայ յաճախորդները, որոնք յատուկ կու գային Թրիփոլի քաղաքամէջէն եւ յատկապէս Մինայի շրջանէն: Ան շատ կը ցաւէր, որ արաբերէն սահուն չէր կրնար խօսիլ, այլապէս իրեն համար դիւրին կ'ըլլար մրցելու արաբ ձկնորսներուն հետ:

Սերոբ Թրիփոլի հաստատուելէն առաջ կը բնակէր Սուրիոյ Սանճաք (Հաթայ) նահանգի Իսկենտերուն քաղաքին մէջ եւ հոն ալ ձուկնորսութեամբ կը զբաղէր, օգտակար հանդիսանալով իր ծնողքին, մինչեւ 1938 թուականը, երբ Ֆրանսացիները Սանճաքը յանձնեցին թուրքերուն, պատճառ դառնալով այս անգամ Սանճաքի հայութեան գաղթին ղէպի Սուրիա եւ Լիբանան: Այսպէս, պարպուեցան Իսկենտերունի, Գրըրգ Խանի, Ինչպէս նաեւ Մուսա Լերան հայկական գիւղերու բնակչութիւնները:

Սերոբ որպէս արհեստավարժ ձկնորս Թրիփոլի Մինա շրջանը հաստատուեցաւ եւ փոքրիկ նաւակ մը գնելով՝ ձեռնարկեց գործի, եւ իր աշխատասիրութեան շնորհիւ կրցաւ յաջողութիւն գտնել նոր միջավայրին մէջ:

Տարիներ ետք, իր տնտեսական եւ նիւթական կացութիւնը բարւոքելով՝ կ'ամուսնանայ իր հայրենակիցներէն Զապէլ Եսայեանի հետ եւ տարի մը վերջ կը բախտաւորուի մանչ զաւակով մը, որ մկրտուելով Թրիփոլի Ս. Հոգեգալստեան հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ մէջ՝ կը կոչուի Զաւէն՝ Սերոբի հօր անունով:

Գաբրիէլեան ընտանիքը, երջանիկ եւ ուրախ իր մանչ զաւակով,



կը շարունակէ ապրիլ Մինայի հայութեան շրջանակին մէջ, ստեղծելով իր բարեկամական շրջանակը՝ յարգուելով բոլորէն:

Փոքրիկ Զաւէն երբ հինգ տարեկան կ'ըլլայ, կ'արձանագրուի Մինայի ազգային Խրիմեան վարժարան: Իր հօր եւ մօր դուրգուրանքով եւ հոգածութեամբ կը մեծնայ եւ մանկապարտէզէն նախակրթարան յաջողութեամբ կ'անցնի, միեւնոյն ատեն Կիրակի օրերը ծնողքին հետ եկեղեցի կ'երթայ, ապա, որպէս կրօնասէր եւ եկեղեցասէր աշակերտ, կը յաճախէ տեղւոյն կիրակնօրեայ դպրոցը, ուր կը լսէ Աւետարանի կենարար պատգամները, Յիսուսի քարոզները, հրաշքները, չարչարանքները, խաչելութիւնը եւ յարութիւնը՝ դառնալով հաւատացեալ քրիստոնեայ: Զաւէն հոն յատուկ ուշադրութեամբ կը հետեւի կիրակնօրեայ դպրոցի տեսուչին հետաքրքրական մէկ պատմութեան Մեծն Ներսէս Պարթեւ Կաթողիկոսին մասին, թէ ան եղած է առաքելական հայրապետ մը, խոնարհաբար զիջանած է գիւղերու տանիքներու վերայ նստելով վիրաւոր գիւղացիներուն վէրքերը դարմանել, աղքատներուն օգնած է, Արշակաւան քաղաքի կործանումով ողջ մնացած որբերը հաւաքելով որբանոց բացած է, ինչպէս նաեւ ծերանոցներ, հիւանդանոցներ եւ անկեղանոցներ բանալով բարեգործ հայրապետ մը եղած է:

Զաւէն այնքան կը խանդավառուի եւ կ'ոգեւորուի Սուրբ Գիրքի դասաւանդութիւններէն եւ տեսուչին դաստիարակիչ պատմութիւններէն, որ կ'որոշէ հետեւիլ Մեծն Ներսէս Հայրապետին օրինակին՝ ըլլալու բարեգործ անձ մը եւ օգնելու իր նմաններուն, որոնք օգնութեան կարօտ են:

Գաբրիէլեան ընտանիքին երջանիկ կեանքը վերջ կը գտնէ Տիկ. Զապէլին անակնկալ հիւանդութեամբ: Բժշկական բոլոր միջոցները եւ դարմանումները չեն կրնար փրկել Զապէլին կեանքը: Ան կը մահանայ, անտանելի ցաւ պատճառելով Պրն. Սերոբին եւ որբ մնալու տառապանքին դատապարտելով Զաւէնը:

Այս դժբախտութիւնը խոր անդրադարձ կ'ունենայ Պրն. Սերոբին վրայ: Արդէն բաւական ծերացած ըլլալով եւ ձկնորսութիւնը շարունակելու ուժ եւ կարողութիւն չունենալով, կը ծախէ Մինայի իր տունը եւ որսորդական նաւակը եւ փոքրիկ տունն մը շինել կու տայ Թրիփոլիի եւ Շեքքայի միջեւ գտնուող բարձունքի մը վրայ, ուր հայր եւ որդի կ'ապրին վայելելով բնութիւնը, մաքուր օդը եւ միշտ ականջալուր՝ ծովի ալիքներու մակընթացութեան եւ տեղատուութեան հոգեպարար ձայներուն:

Ծերուկ հայրը իր տղան՝ Զաւէնը կը զգուշացնէ, որ եթէ լողալու համար ծով պիտի իջնէ, ուշադիր ըլլայ, որովհետեւ իրենց տան հանդիպակաց ջուրերուն մէջ ցից ժայռեր եւ խութեր կան, որոնք պատճառ կրնան դառնալ մարդոց եւ նաւերու դժուարութեան:



Ձկնորս հօր պատմած եւ թելադրած զգուշութիւնները արկածնե-  
րու առաջըր առնելու համար, Մեծն Ներսէս Հայրապետի տկարներուն  
հանդէպ ցուցաբերած զթոտ վերաբերումը, մեծ ազդեցութիւն գործած  
ըլլալով Ջաւէնի մտքին մէջ, ան իր հօր կողմէն իրեն տրուած դրամ-  
ները խնայելով լապտեր մը կը գնէ, որուն ապակին կարմիր կը ներկէ  
եւ գայն կը տեղաւորէ իրենց տունին ծովահայեաց պատուհանին մէջ,  
որպէս նշան վտանգի՝ ուղեկորոյս նաւերուն, մանաւանդ երբ ծովը  
փոթորկոտ ըլլայ:

Օրեր կ'անցնին եւ ձմեռնային ամպոտ եւ փոթորկոտ օր մը, ճամ-  
բորդներով եւ ապրանքներով լեցուն նաւ մը մուտք գիշերին ճամբան  
կորսնցուցած ըլլալով դէպի ձկնորսին տունը կը յառաջանար, բայց  
հեռուէն նշմարելով պատուհանի լոյսը՝ ծովուն բացերը խարխիս կը  
նետէ, այսպիսով ստոյգ կործանումէ փրկելով նաւը:

Յաջորդ առաւօտ ծովը կը հանդարտի: Նաւապետը կը տեսնէ, որ  
իրենց նաւը կործանումէ փրկողը իսկական նաւահանգիստի մը լոյսը  
չէ, այլ՝ տնակէ մը արձակուող լոյս: Նաւապետը ցամաք կ'ելլէ ստու-  
գելու համար իրականութիւնը: Երբ կը հասկնայ, թէ պարզապէս ճրկ-  
նորսի մը տղուն բարեգործութիւնն ու ծառայութիւնն է, կը տեղեկա-  
գրէ պատահածը իր նաւային ընկերութեան, որուն կեդրոնը կը գտ-  
նուէր Փարիզ (Ֆրանսա):

Նաւապետը կու գայ ձկնորս Սերոբին տունը եւ շնորհակալու-  
թիւն կը յայտնէ տան պատուհանին դրած լոյսին համար, որուն շնոր-  
հիւ փրկուեցան նաւուն մէջ գտնուող ճամբորդներն ու ապրանքները:  
Սերոբին կը յայտնէ նաւային ընկերութեան որոշումը՝ Գաբրիէլեան  
ընտանիքը առնելու իրենց պաշտպանութեան տակ եւ կ'առաջարկեն  
լոյսի գաղափարը յղացող Ջաւէնը ղրկելու Փարիզ՝ ուսանելու համար  
նաւային գիտութեան դպրոցի մը մէջ:

Պրն. Սերոբ խանդավառութեամբ կ'ընդունի իրենց եղած առա-  
ջարկը՝ քաջ գիտնալով, որ իր գաւազը Փարիզի մէջ ուսանելով՝ ապա-  
գային նշանաւոր անձ մը կրնայ ըլլալ, օգտակար դառնալով իր ազ-  
գին եւ հայրենիքին:

Ֆրանսացի նաւապետը, տեղեկանալով Ջաւէնին հայ ըլլալուն,  
թարգմանիչ մը բերած ըլլալով Ջաւէնին կը հարցնէ, թէ ո՞վ իրեն թե-  
լադրած է իրենց տան պատուհանին փարոսի նմանող փոքր սակայն  
տեսանելի լոյս մը դնել:

Ջաւէն կը պատասխանէ. «Ես երբ փոքր էի, կը յաճախէի հայկա-  
կան դպրոց եւ կիրակնօրեայ դպրոց: Կիրակնօրեայ դպրոցին մէջ մեզի  
կը սորվեցնէին կրօնական գիտելիքներ եւ մասնաւորաբար Հայաս-  
տանեայ Եկեղեցւոյ աղօթքները, շարականները, սաղմոսները, եկե-  
ղեցական պատմութիւն, ուր արձանագրուած են մեր եկեղեցւոյ սըր-  
բազան եւ մեծ կաթողիկոսներու եւ եկեղեցականներու կեանքն ու  
գործունէութիւնը, որովհետեւ հայ ժողովուրդը առաջին ազգն է, որ

301 Թուականին պետականորէն ընդունած է քրիստոնէութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Կաթողիկոսին կողմէ:

«Կիրակնօրեայ դպրոցին մէջ մեզի պատմուած էր Մեծն Ներսէս Հայրապետի բարեգործութիւններուն մասին: Օրինակուելով բարեգործ կաթողիկոսի կեանքէն եւ հետեւելով Քրիստոսի պատգամին՝ սիրէ ընկերդ քու անձիդ պէս, նոյնիսկ՝ քու թշնամիներդ, որոշեցի հօրս կողմէ ինծի տրուած դրամներով լապտեր մը գնել եւ դնել մեր տան պատուհանին, որպէսզի իրենց ուղղութիւնը կորսնցուցած նաւերը այդ լոյսը տեսնելով զգուշանան դէպի ցամաք յառաջանալէ, ուր կը գտնուին ժայռեր եւ խուլթեր»:

Զաւէն Գաբրիէլեան իր ծերունի հօր հետ կը մեկնի Փարիզ եւ կ'արձանագրուի Ֆրանսայի նաւային գիտութեան համալսարան: Տարիներու ընթացքին Զաւէն կը տիրապետէ Ֆրանսերէն լեզուին եւ նաւային գիտութեան: Որպէս սպայ, քանի մը տարի Ֆրանսական նաւատորմին ծառայելէ ետք, հրաւէր կը ստանայ առեւտրական նաւի մը նաւապետութեան եւ հայ դպրոցին ու կիրակնօրեայ դպրոցին մէջ ստացած հայաշունչ եւ քրիստոնէական դաստիարակութեամբ զինուած՝ կը ծառայէ մարդկութեան եւ հայ ժողովուրդին:



Այց՝ սպարապետ Վազգէն Սարգիսեանի գերեզմանին

**ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ**



**ՅԱՌԱՋԱԲԱՆ՝  
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՛ԱՊՐԻՆՔ»  
ՀԱՏՈՐԻՆ**

Երկար տարիներու արգասիքը հանդիսացող գրողթիւններու հատոր մըն է այս հատորը եւ հեղինակութիւնը կը վայելէ մէկու մը, որ պարզունակ, բայց տեսիլք ունեցող եւ այդ տեսիլքը հոգեշնչող նիւթեղէն էականերու վերածող հերոս մըն է։—

**ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ**

Ութսուն եւ առաւել տարիներու բեղմնաւոր եւ երախտարժան հոգիով զարդարուած այս հայորդին կարելի չէ դրուատել պարզապէս իր գրական ստեղծագործութիւններուն ընդմէջէն, որովհետեւ առանց ՄԱՐԴԸ ճանչնալու կարելի պիտի չըլլայ թափանցել խորքը բարոյական այն ճշմարտութիւններուն, որոնք քրիստոնեայ հաւատացեալի ապրելակերպին պատկերացումը կը բերեն մեզի:

Առանց ճանչնալու ՄԱՐԴԸ, կարելի պիտի չըլլայ համտեսել երկա՛ր ճանապարհորդութեան մը ճամբեզրին գտնուող քաղցրահամ ծառերու պտուղը. կարելի պիտի չըլլայ վայելել զանոնք, որովհետեւ Գրիգոր Հոթոյեան կոչուած այս մարդը երեւակայական ստեղծագործութիւններով չէ որ կը հարստացնէ մեր գրականութիւնը, այլ՝ ճշմարիտ եւ ապրուած կենդանի օրինակներով: Անոր համար ալ պէտք է ճանչնալ այս մարդը, որպէսզի կարելի ըլլայ ճանչնալ իր հերոսներուն հոգեկան ներկայութիւնը՝ գրական իր այս հատորին մէջ:

Այս առիթով կ'ուզեմ ընթերցողին յիշեցնել քանի մը ճշմարտութիւններ, որպէսզի նախ կարելի ըլլայ ճանչնալ 80-ամեայ երկար ճանապարհորդութեան բարի այս ճանապարհորդը եւ ապա հետեւիլ իր ոտնահետքերուն, որովհետեւ ամէն մէկ քայլափոխի ետին Գրիգոր Հոթոյեան կը ձգէ քաղցր, յուզիչ, երբեմն հոգեզուարթ, երբեմն հոգեխռով տիպարներ, որոնք կու գան մեր կեանքէն, մեր առօրեայ տագնապներով հրաբխացած, մեր առօրեայ հոգերով ծանրաբեռնուած, յաղթանակներով՝ հպարտութիւն առթող, եւ պարտութիւններով՝ դաստիարակութեան վերածուող:

1.— Գրիգոր Հոթոյեան իր գրականութիւնը մշակած է առանց զբաղէտ ըլլալու յաւակնութեան: Կեանքի փորձառութիւնը, իր ազգին հանդէպ ունեցած նուիրուածութիւնը, բարոյական արժէքներու հետամուտ ըլլալու իր արտօրանքը, իր առջեւ բացած են ճանապարհ մը, որուն գրեթէ աւարտին երբ մարդ նայի անցեալէն եկող եւ ցարդ իր կատարած ճանապարհորդութեան, կը տեսնէ, որ այդ ճանապարհոր-

դուլթիւնը եղած է ի շարս եկեղեցական եւ ազգային գործունէութեան, նաեւ գրական գործունէութեան ժամանակաշրջան մը:

Գեղազիտական, լեզուաբանական, արուեստագիտական ճախրող լեզու մը չունի այս պարզ գրողը, կարծէք ինք այդ բոլորով ալ հետաքրքրուած չէ, էականը իրեն համար յայտնել է ու արտայայտել այն հոգեվիճակը, գոր ինք կ'ապրի եւ կը սիրէ հաղորդակից դարձնել բոլոր անոնց, որոնք զգալու եւ զգացուելու սիրտ ու հոգի ունին:

Պարզ է իր լեզուն եւ ճիգ չի թափեր, որպէսզի բառ գտնէ ու նախադասութիւն կազմէ: Անոր համար ալ իր հերոսները կարծէք իրենց պարզունակութեամբ, բայց բացարձակ յարգելիութեամբ մեզի կը ներկայանան:

Հալէպի մէջ ծնած, հալէպական աւանդապահութեամբ սնուած, հոգեւոր հարուստ ներաշխարհով պարուրուած եւ ազգային արժանապատուութեան վառ գիտակցութեամբ ապրող գրիչ մըն է Գրիգոր Հոթոյեանը: Բառին ամբողջական հասկացողութեամբ՝ մեծ պարզութիւն մըն է Պարոն Հոթոյեան, եւ այդ պարզութեան համար իր գրութիւնները սիրելի են բոլորին կողմէ, բայց մանաւանդ անոնց կողմէ, որոնք իրենց կեանքին մէջ ցաւ տեսած են, զրկանք, նախատինք, հալածանք, ընտանեկան սրբութեան պակաս, եւ ով որ Հոթոյեանի գործերուն մէջ փորձէ փնտռել գեղարուեստական գրականութիւն, կը նշանակէ որ զրկած կ'ըլլայ Հոթոյեանին արժէքը իր բուն արժէքէն:

Հոթոյեանը «տէարտով» գրող անձ է, որովհետեւ ցաւած է իր հերոսներուն հետ, լացած է իր հերոսներուն հետ, աշխատած է իր հերոսներուն հետ, պայքարած է իր հերոսներուն հետ, պարտուած է իր հերոսներուն հետ, յաղթանակած է իր հերոսներուն հետ, խնդացած է իր հերոսներուն հետ, տազնապած է իր հերոսներուն հետ, եւ որքան ալ որ հեռացած է իր ծննդավայրէն, իր հերոսներու աշխարհէն, ո՛չ ժամանակները, ո՛չ նիւթական լաւ պայմանները արգելք չեն հանդիսացած, որպէսզի իր հերոսները մեռնին իր մէջ:

2.— Գրիգոր Հոթոյեան գրողը ուղղամիտ, ապագայատեսիլ եւ մանաւանդ անշահախնդիր հայ է: Որպէս Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հաւատարիմ գաւակ, պատանեկան հասակէն սկսեալ, ազգային գաղափարախօսութեամբ ճախրող եւ ազգային ինքնութեան պահպանութեան համար ջահակիր եղած է ոչ միայն խօսքով, այլ՝ գործով:

Երկա՛ր տարիներ ոչ միայն իր անուանական մասնակցութեամբ, այլ՝ գործօն մասնակցութեամբ անուղղակիօրէն եղած է պատմութիւն հիւսող եւ պատմութիւնը կենդանի վկայութեան վերածող անձ մը:

Եթէ նկատի ունենաք միայն իր թղթակից ըլլալու հանգամանքը, պէտք է գիտնաք, թէ Թորոնթոյի հայոց պատմութեան վերջին շուրջ 35 տարիներու պատմութեան հեղինակը ինքն է, եւ գաղութի մը հասարակական, մշակութային, եկեղեցական կեանքի պատմութեան գը-

րառուժը այնքան սիրով կատարած է Այբուբենի զինուորագրեալ այս մարդը, որ ապագային պատմագէտներ երախտագիրտութեամբ եւ գերագոյն աստիճանի յարգելիութեամբ շնորհակալ պիտի ըլլան 80-ամեայ ալեւոր այս ծերունիին:

Որպէս ազգային, կուսակցական եւ մշակութային առաքելութեանց հաւատացող մարդ, երբ իր հետ խօսիք, ինք չէ որ ձեզի կը պատասխանէ, այլ իր կեանքին գլխաւոր հերոսները: Հալէպի «Արեւելք» տպարանէն մինչեւ Պոսթոնի «Հայրենիք»-ի եւ Մոնթրէպլի «Հորիզոն», Անդրանիկ Ծառուկեանէն մինչեւ Համաստեղ, Կարապենցէն մինչեւ Թէօլէօլեան, Զարեհ Կաթողիկոսէն մինչեւ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս, Արամ Հայկազէն մինչեւ Ռոպեր Հատտէճեան: Եւ տակաւին, անօրինակ կերպով հպարտ սասունցի այս մարդը կարծէք իր հողին վրայ կ'ապրի: Սասունն է, որ իր մէջէն կը խօսի ու հալէպցիութեամբ հպարտացող այս բարի մարդը կը խօսի անշահախնդիր, հանդարտութեամբ, խոհուն խորհողութեամբ եւ հպարտ հայրենասիրութեամբ:

Իրեն համար հայրենասիրութիւնը հող, քար, ջուր, Արարատ, Արաքս եւ Սարդարապատ չէ, իրեն համար հայրենասիրութիւնը անցեալէն եկող եւ ապագային նայող, անցեալը, ներկան եւ ապագան իրար զօդող հոգեկան այնպիսի զգացում մըն է, որ երբեք չի կործանիր, ու հայրենի հողին կու տայ յաւիտենականութեան սխրանք, Արարատին կու տայ ճախրող խոյանք ու Սարդարապատին կու տայ սուրբ արիւնով նուիրագործուած հերոսներու արքայարանի վայելք: Այս է Հայաստանը պարտադրաբար Գանատա հաստատուած, բայց մահու աստիճան եւ հայրենիքը կեանքէն աւելի սիրող Հայ Հոթոյեանին համար:

3.— Գրիգոր Հոթոյեանը քրիստոնեայ եւ հաւատացեալ քրիստոնեայ գրող մըն է: Իր կեանքի վերջին շրջանին, երբ առիթ ընծայուեցաւ իրեն Թորոնթոյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ ՇՈՂԱԿԱԹ ամսագրին մէջ յօդուածներ ստորագրելու, «Սասուն Գաւառում» չձեռնող այս մարդը, Հալէպի մէջ աղքատութեամբ մեծցած, բայց պատիւով ընտանեկան սրբութիւնը պահպանած այս գրողը, սկսաւ գրել հոգեթով այնպիսի պատմուածքներ, որոնք խորքին մէջ բարոյական ճշմարտութիւններու փնտռութիւնն է, որ կը կատարեն:

Աղօթքի զօրութեան հաւատացող սիրտ ունի երկա՛ր տարիներու կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչ եւ տեսուչ եղած այս մարդը: Իր գրութիւններուն ընդմէջէն կ'ուզէ, որ մարդիկ ուրախ ապրին, կ'ուզէ, որ մարդիկ բարիք գործեն, երախտագիրտութեամբ դրսեւորեն իրենք զիրենք, միւռոնաբոյր եւ օրինակելի կեանք մը ունենան, պատուախնդիր, քաջ, քրտնաշահ եւ ընտանեկան սրբութեան հետամուտ ըլլան:

Գրիգոր Հոթոյեանը Հայ Առաքելական Եկեղեցւոյ որպէս հաւա-

տարի՛մ զաւակ, գերազանց նուիրուածութեամբ ծառայած է Հայ Եկեղեցւոյ՝ տարբեր բնագաւառներու մէջ եւ ցարդ, իր եկեղեցասիրութիւնը, քրիստոնէական հաւատքի վկայութիւնը միայն յարգանք կը պարտադրեն, կոկիկ, կարճահասակ, ժպտուն, պարզունակ այս պարզ եւ հանդարտաբարոյ մարդուն նկատմամբ:

\* \* \*

Այսօր, երբ այս հատորով ձեր առջեւ կը բացուի վեցերորդ հատորը Գրիգոր Հոթոյեանի հեղինակութեամբ,

Գիտցէ՛ք, որ այս բարի մարդը իր կեանքի բոլոր օրերուն իր սիրտը դրած է ափին մէջ ու նուիրած ազգին, հայրենիքին եւ սուրբ հաւատքին:

Գիտցէ՛ք, որ 1927-ին ծնած եւ հալէպցիական հայկականութեամբ մեծցած այս մարդուն կեանքը եղած է միայն նուիրում:

Գիտցէ՛ք, որ Գանատա գաղթած հայրերին կեանքին նպատակը եղած է բարոյական ճշմարտութիւններու փնտռուէքը եւ անոր կիրարկումը:

Գիտցէ՛ք, որ այս մարդուն ճանապարհը եղած է վարդալից, բայց միշտ փուշերով պարուրուած: Դո՛ւք ալ պիտի ցաւիք իր ցաւին հետ, դո՛ւք ալ պիտի հպարտանաք իր հերոսներու հաշւոյն, եւ պիտի կարենաք ըմպել ու համտեսել ա՛յն բաժակին համը, որուն մէջ լեցուած է ոչ միայն գինի, այլ՝ դառն ու լեղի:

Այս առիթով ես կը մաղթեմ, որ Գրիգոր Հոթոյեանի այս նոր հատորը՝ «Անցեալի Յուշերով Կ'ապրինք», ըլլայ ոչ միայն հաճոյք, այլ՝ տագնապ իւրաքանչիւր ընթերցողի համար եւ կ'ուզեմ մաղթել, որ մեր սիրելի Պարոն Հոթոյեանի սէրը, խնդութիւնը, խաղաղութիւնը, երկայնամտութիւնը, քաղցրութիւնը, բարութիւնը, հաւատարմութիւնը, հեզութիւնը, ժուժկալութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը ըլլայ յաւիտեան, որպէսզի իր հայրենիքին, հայութեան, հաւատքին երախտապարտ այս ազնուահոգին ըլլայ երախտարժան:

Վարձքդ կատար, սիրելի՛ Պարոն Հոթոյեան, թող Աստուծոյ շընորհքը, սէրը եւ սրբարար զօրութիւնը հետդ ըլլայ, այսօր եւ միշտ, մինչեւ կեանքիդ վախճանը:

Եւ բարի ընթերցման պահեր ձեզի՝ գրասէր հայրերին:

Աղօթարար՝

ՄԵՂՐԻԿ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՐԻՔԵԱՆ

Հովիւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ

եւ Հոգեւոր Տեսուչ Հարաւային Օնթարիոյի

ՏՕՆ ՇՈՂԱԿԱԹԻ

14 Օգոստոս 2010

Թորոնթօ



**ՅԱՌԱՋԱԲԱՆ՝  
«ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ»  
ԳԻՐՔԻՆ**

*Եօթներորդ անգամ ըլլալով կ'ողջունուինք Գրիգոր Հոթոյեանին կողմէ որպէս բարի, ազնիւ, խաղաղասէր, հայրենասէր, գրասէր ու մանաւանդ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հաւատարիմ գաւակ:*

*Գրիգոր Հոթոյեանը մեզի կը յիշեցնէ անցեալ դարու կէսերուն ապրած ա՛յն հերոսները մեր կեանքին, որոնք կը բնութագրուէին որպէս խոնարհներ:*

*Գրիգոր Հոթոյեանը իր պարզունակ բնութեամբ, ազգային եւ եկեղեցական իր բարի եւ հոգիով ըմբռնուած հասկացողութեամբ, հաճելի ներկայութիւն մըն է մեր կեանքին մէջ, որովհետեւ բարկութեան մէջ անգամ քաղցրութիւն ունի, բարկանալ չգիտնալուն համար:*

*Գրիգոր Հոթոյեանը իր պարզունակութեամբ յարգանք պարտադրող բարի մարդ է. առանց յետին հաշիւներու եւ նպատակներու, առանց ուրիշը թերագնահատելու, միշտ բարին տեսնելու, դրական արժեւորելու եւ մեր կեանքին մէջ դրական երեւոյթներով հպարտադրող ազնիւ հոգի է:*

*Թէ մեր կեանքին ցաւերը զինք կը նեղե՞ն. անկասկա՛ծ. որովհետեւ եթէ այդ պահուն իր աչքերուն նայիք, հոն ալեկոծ ծով կայ:*

*Թէ ազգին դժբախտութիւնները, ցաւերը զինք կը վշտացնե՞ն. անկասկա՛ծ. այդ պահուն նայեցէք իր դէմքին, ճարահատ եղնիկի մը ոստոստումը ունի:*

*Թէ այսօրուան մեր կեանքի վերիվայրումները զինք կը խելագարե՞ն. անտարակո՛յս. այդ պահուն նայեցէք իր ձեռքերուն, պիտի տեսնէք բացուած երկու ափեր, որոնց մէջ միայն մէկ սիրտ կայ: Սիրտ մը, որ հայութեան սիրտն է, սիրտ մը, որուն երակներէն կ'անցնի մեր դարձուոր սուրբերու, վկաներու, նահատակներու եւ հերոսներու արիւնը:*

*Պարոն Հոթոյեան իր այս հատորով մեզի կը ներկայանայ դարձեալ բարոյական արժէքներով, քրիստոնէական սկզբունքով եւ ազգային արժանապատուութեամբ զեղուն սրտով մը, որովհետեւ Գրիգոր Հոթոյեան, կը նշանակէ՝ բարոյական արժէքներով եւ սկզբունքներով առլցուն խորհուրդ:*

*Խորհուրդ է Պարոն Հոթոյեանը իր նուիրումի զգացումներով, ո-*

րոնց գազաթը ազգը, հայրենիքն ու մայրենի Եկեղեցին են: Իր շուրջ 85 եւ աւելի տարիներու կեանքի ճանապարհորդութիւնը պայքար մըն է ի խնդիր բարոյական ճշմարտութիւններու:

Ճանապարհ մը, որուն եզրին շողացող ճաճանչները իր երկնաբեր լոյսին պատճառ կը դառնան, որպէսզի մենք՝ զինք ճանչցողներս, յարգենք ու մեծարենք զայն, որպէս կենդանի յուշարձան, անցեալէն եկող ու անցեալի յուշերը մեզի բերող:

Հոթոյեանին հերոսները չմեռնող հերոսներ են: Անոնք չեն մեռնիր, որովհետեւ Հոթոյեան չ'ուզեր որ անոնք մեռնին, ընդհակառակը, Հոթոյեանին համար անցեալը եւ անցեալի պարունակին մէջ արող մեր ժողովուրդի հերոսները մնայուն սրբութիւններն են մեր կեանքին:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ չէ:

Գրիգոր Հոթոյեանը հպարտ սրտով լեցուն աշակերտն է Մեսրոպ Մաշտոցին, Սահակ Պարթեւ Հայրապետին, Սուրբ Նարեկացիին, Սուրբ Ծնորհալիին, ի՛ր իսկ բառերով՝ Սուրբ Զարեհ Սքանչելիին եւ բոլոր անոնց, որոնք պայքարեցան ի խնդիր հայ ժողովուրդի յաւիտենականութեան եւ գոյապահպանման:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ չէ:

Գրիգոր Հոթոյեանը հայ դպրութեան եւ գրագիտութեան մեծ հերոս է, որովհետեւ իրեն համար հայ մնալու, հայօրէն ապրելու եւ հայօրէն մեռնելու հպարտութիւնը հայ գրականութեան եւ գրչութեան զգլխիչ սէրն է:

Գրիգոր Հոթոյեանը գրագէտ ըլլալու ալ պէտք չունէր եւ չունի, որովհետեւ իրեն համար գրելը ո՛չ ջանք է եւ ո՛չ ճիգ, այլ՝ մղում, ճշմարտութեան փնտռութեւք, յաւիտենականութեան թափանցում, եւ այս բոլորէն ետք ի՞նչ փոյթ թէ ծիտերն հատիկները կ'աւարեն, տեղը Աստուած պիտի մարգարիտ սերմանէ:

Մարգարիտը մեր կեանքին Գրիգոր Հոթոյեանն է: Աստուած ի՛նք սերմանեց Գրիգոր Հոթոյեանը, որպէսզի մանաւանդ թորոնթահայ կեանքի հայելին իրմով շողարձակուի հայոց պատմութեան էջերուն մէջ:

Հետեւաբար, համբուրելով մեր սիրելի Հոթոյեանին ձեռքերը, կը շնորհաւորեմ պատուական հերոսը մեր համայնքին, անոր մաղթելով առողջ կեանք եւ երջանիկ ծերութեան օրեր:

Սիրելի ընթերցողներ.

Կարդացէ՛ք այս գիրքը, հոն դուք ձեզ պիտի տեսնէք՝ ձեր պատկերը, ձեր նմանատիպը, ձեր հոգին, ձեր միտքն ու զգացումը:

Կարդացէ՛ք այս գիրքը, որովհետեւ այս գիրքը արդիւնք է ալեկոծ սրտի մը խաղաղ նաւարկութեան աւարտին:

*Կարդացէ՛ք այս գիրքը, որովհետեւ այս գիրքը մեր անցեալի վեր-  
ջին մոհիկաններու բուրմունքը կը բերէ մեզի, մոհիկաններ, որոնք  
մանկութիւն չունեցան, երազային Հալէպի թաղերուն մէջ մեծցան  
աղքատիկ, բայց միշտ հայու արժանապատուութեամբ:*

*Կարդացէ՛ք այս գիրքը, որովհետեւ հաճոյք է զայն կարդալը:*

*Միշտ սիրով եւ աղօթարար՝  
ՄԵՂՐԻԿ Ծ. ՎՐԴ. ԲԱՐԻՔԵԱՆ*



Զախէն աջ՝ Կարօ Փաշայեան, գեղանկարիչ Բիւզանդ Կոնամալեան,  
Գրիգոր Հոթոյեան եւ Անդրանիկ Արթինեան

## ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԱՆԽՈՆՋ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

Մեր եկեղեցւոյ հովիւէն քաջալարուելով, ահաւասիկ երկար տարիներու դադարէ ետք, երկրորդ անգամ ըլլալով թուղթին կը յանձնեմ տպաւորութիւններու փունջ մը:

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, թողներու հետ ըլլալու պարտաւորութենէ զերծ մնալով, երբ պատահամբ օր մը այցելած էի Հայր Սուրբին, խճողուած գրասեղանին, պիտի ըսէի սենեակին մէջ, նշմարեցի հաստափոր գիրք մը: Գրականութեան նկատմամբ ունեցած հետաքրքրութեանս որպէս արդիւնք, ձեռքս երկարեցի քննելու համար գիրքը գէթ արտաքինապէս, քանի մը էջերու թերթատումով:

Հետաքրքրուեցայ. Հայր Սուրբը բացատրեց.

— Նոր ժամանակներու հայոց պատմութեան անբաժանելի ժամանակահատուածներէն միոյն պատմութիւնն է: Վատահ եմ, որ ապագային որպէս սկզբնաղբիւր ալ պիտի գործածուի: Լաւ գիրք է: Հաճոյք պիտի ստանաս: Ա՛ն... կարգա՛...

Բաւարարուեցայ:

Գիրքը առի, նոյն յետմիջօրէին իսկ սկսայ կարդալ:

Չճանձրացայ:

Մէկ էջը միւսին ետեւէն... քանի մը ժամ ետք... արդէն 110-րդ էջն էի... երբ տիկինս ընդմիջեց յիշեցնելու համար, որ Christmas-ի համար պէտք է պատրաստուիինք... որովհետեւ խոստացած էինք ժամը 5:00-ին մեծ աղջկանս տունը հաւաքուիլ:

Պատիժի պէս բան մը եղաւ այդ գիշեր: Ուտել, խմել, լեռնէն ձորէն խօսիլ:

Հապա՞ յղփացած թողներու գազանի նման եւ կարծէք կեանքերնուն մէջ նուէր տեսած չըլլալու հոգեբանութեամբ կոկիկ փաթթուած նուէրներու բզբտումը: Ահաւոր բան էր:

Ես ալ բազկաթոռին նստած՝ կամայ ակամայ կը հետեւէի անցուղարձերուն, երբ մտովի գացի 110 էջերուն, որոնք կարդացած էի:

Կէս գիշերուան ժամը 12:30-ն էր, երբ հոգեհատոր թողնուհիէս խնդրեցի, որ զիս տուն տանէր: Չագուկս այտերս համբուրելով եւ «մեծ մանուկ»-ի մը խնամք տանելու հոգեբանութեամբ ձեռքէս մըտաւ...

Առաւօտեան ժամը մէկն էր:

Հաստափոր գիրքը կրկին ձեռքս առի:

Տիկինս, ինչպէս միշտ, բարկացած էր.

— Չոճուխներուն քիթէն բերնէն բերիր: Եթէ արթուն պիտի մնայիր, տէրտղ ի՞նչ էր... կանուխէն տուն եկանք: Christmas է, դեռ Կ.ենք եւ Ս.ենք պիտի գային... Champagne պիտի բացուէր... Բայց ես գիտցա՛յ. այդ գիրքին համար եկար... փորդ պիտի ցաւէր, եթէ այդ գիրքը այս գիշեր չկարդայիր...

Տիկնոջս սովորութիւնն էր: Վարժուած էի, անոր համար ալ հանդարտութեամբ պատասխանեցի.

— Կնի՛կ, գործիդ նայէ՛: Կրնայիր մնալ: Մօրդ տո՞ւնը Christmas կը տօնէիր: Պրաւօ՛, «ուշ եկար Սասուն, շուտ եղար հասուն»:

Մեր վիճաբանութիւնը իր աւարտին հասաւ: Տիկինս ալ գիրք մը առաւ ձեռքը: Փառք Աստուծոյ. հիմա սկսանք Christmas տօնել:

\* \* \*

Ահա այս պայմաններու տակ համով հոտով կարդացի գանատա՜հայ մտաւորական եւ թղթակից Գրիգոր Հոթոյեանի «Ճանապարհ»-ը: Քանի մը օր, եւ արդէն Նոր Տարուան առաւօտուն աւարտած էի գրքի ընթերցումը առանց տող մ'իսկ փախցնելու:

Կարճուկ, ալեհէր եւ ծիծաղկուն աչքերով Գրիգոր Հոթոյեանին ծանօթ եմ միայն դէմքով: Լսած էի իր մասին: Այժմ ճանչցայ:

Պարզ լեզուով, կարճ նախադասութիւններով, յստակ մտածումներով եւ թափանցիկ ոլորտներով կազմուած գեղեցիկ փունջ մըն էր «Ճանապարհ»-ը:

Երբեմն հին յուշեր, երբեմն նոր եւ այժմէական մտահոգութիւններ, յաճախ յուզական, մերթ ընդ մերթ փոթորկալից ցաւերով լեցուն, մէջ ընդ մէջ նուաճումներով համեմուած եւ անցեալին հպարտութեամբ ակնարկ նետող գիրքի մը տպաւորութիւնը ձգեց վրաս:

Խաբուած չէի:

Քաջ վստահ եմ, որ «Ճանապարհ»-ը գեղեցիկ ծաղիկներով զարդարուած եւ ընթերցողին ներկայացուած յախճապակեայ ծաղկաման մըն է, զորս կարելի է հպարտութեամբ գործածել, որքան ալ հին ըլլայ անոր «պատմութիւնը»:

«Ճանապարհ»-ը պտղաման մըն է, հրամցուած բոլոր ընթերցասէրներուն, որոնք ուզած պտուղնին կրնան ճաշակել ու համտեսել:

«Ճանապարհ»-ը պարզունակ հոգիով, բայց տեսիլք ու հաւատք ունեցող ուխտաւորի մը ճանապարհորդութիւնն է, որ 40-ականներու վերջերէն սկսեալ մինչեւ մեր օրերը հասնող գիրքի ու գրչութեան «Առաքեալ» է:

«Ճանապարհ»-ը «Սրբազան Սերմնացան»-ի մը ցանքին պատմութիւնն է, որ իր դաշտը պտղաբեր դարձնելու համար ցանած է յանուն պատմութեան:

«Ճանապարհ»-ը «Անմահ հուլիսի ճանապարհով» ընթացողներուն դիմաց բացուած լուսատու ուղի մըն է:

«Ճանապարհ»-ը դէպի «Հո՛ն» տանող արահետն է:

«Ճանապարհ»-ը «Խորտակուած Սէր»-ն է անյոյս սրտերուն:

«Ճանապարհ»-ը «Հաւատքի Զօրութիւնը» իր մէջ խտացնող բաց մատեան է:

«Ճանապարհ»-ը հայոց պատմութեան ծով անդաստանին մէջ, իր դիրքով եւ պտուղներով արժէք ունեցող թանկագին ծառ է, որուն ճիւղերը հարուստ են ազգային, եկեղեցական եւ մշակութային անանցանելի յուշերով, երգերով ու վէրքերով:

«Ճանապարհ»-ը մեր ժողովուրդի մեծերէն ոմանց հանրագիտաբանն է, անոնց կեանքին ու գործին վրայ լոյս սփռող:

«Ճանապարհ»-ը յիշատակարան մըն է անցաւոր, բայց միշտ կենդանի արժէքներու:

«Ճանապարհ»-ը «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գլորուած՝ խոհերու եւ պարումներու գեղեցիկ յուշամատեանն է:

«Ճանապարհ»-ը երգերով, խօսքերով ու նուիրումներով՝ շունչ ու ոգի զգեցած պատկառելի հատոր մըն է:

Փառք Աստուծոյ, որ պարզունակ այս մարդը, իր կեանքի ալեւորութեան մէջ, կրցաւ վայելել մեր ժողովուրդի յարգանքը՝ Հայաստանի Գրողներու Միութեան գնահատանքն ու մանաւանդ Կիլիկեան Ս. Աթոռի արժանաւոր գահակալ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի սէրը, որուն հայրական գնահատանքին արժանացաւ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ» շքանշանի տուչութեամբ: Գրիգոր Հոթոյեան իր այս բերքահաւաքով բարիք կը դառնայ բոլոր անոնց, որոնք օր մը պիտի ուսումնասիրեն, մանաւանդ՝ թորոնթոհայութեան կեանքը:

Մեծարգոյ Պրն. Հոթոյեան,

Վարձքերնիդ կատար:

Վստահ եմ, որ եթէ ապրէիք այնպիսի միջավայրի մը մէջ, ուր կարենայիք միայն ստեղծագործել, գերազանցօրէն պիտի պտղաւորուէիք: Բայց Սփիւռքի մէջ մեծնալ եւ աշխատիլ ընտանիք պահելու համար եւ միաժամանակ գրել՝ մեծ գոհողութիւնն է:

Դուք կրցեր էք հաւատալ ձեր կոչումին, որպէս երկար տարիներու հայց. Առաքելական Եկեղեցւոյ քրիստոնէական դաստիարակութեան ծառայ, ուսուցիչ եւ դաստիարակ: Կրցեր էք ազգային վառ գիտակցութեամբ արմատացնել ազգային ու բարոյական բոլոր արժէքները:

Կրցեր էք ձեր գրիչին մէջ խտացնել ՀԱՅՈՒԹԻՒՆԸ իր սկզբունքներով, բարոյական արժէքներով եւ հաւատքով:

Ամէն մարդու չէ տրուած այս շնորհքը:

Դուք երանելի էք:

Որպէս գրեթէ ձեզի տարեկից հայ, ինքզինքս հպարտ կը զգամ, որ ես ալ երկա՛ր տարիներ ծառայեցի հայ մամուլին՝ լուռ ու մունջ:

Այսօր վարձքս կը ստանամ:

Այս օրերուն, մինչ ոմանք «իրենք զիրենք կը կերտեն» առանց ստեղծագործութեան, դուք պատմութիւն կը կերտէք:

Ահա ա՛յդ թող ըլլայ ձեր վարձքը:

Կը շնորհաւորեմ ձեր «Ճանապարհ»-ը, եւ բարի ճանապարհորդութիւն կը մաղթեմ ձեզի «մեծ»-երու աշխարհին մէջ, որպէսզի «մեծ»-երն ու մեծութիւնները հարազատ վկան դարձնէք մեր պատմութեան սխրագործութիւններուն:

ՏէՏէ

Ինքզինք խոնարհութեան եւ  
պարզութեան մէջ պահող  
սքանչելի մտաւորական մը

(«Ճանաչելի» գիրքէն)



Ջախէն աջ՝ արձակագիր Հրաչեայ Մաթեոսեան, Գրիգոր Հոթոյեան  
եւ Գեներալ-մայոր բանաստեղծ Սամուէլ Սաֆարեան

**ԳՐԱԽՕՍԱԿԱՆ**  
**ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ**  
**«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» ԳՐՔԻՆ**

Պրն. Գրիգոր Հոթոյեանի առաջարկը իր «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրուած գրքին գրախօսականը ընելու համար, իրօք անակնկալ մըն էր ինծի համար: Կինս՝ Արփինէն եւ Պրն. Գրիգորը պաշտօնակիցներ եղած են 1950-ական թուականներուն Հալէպի կիրակնօրեայ դպրոցին մէջ: Բայց ես զինք ճանչնալու առիթը ունեցած եմ միայն Թորոնթոյի մէջ, վերջին 10-15 տարիներու ընթացքին: Պրն. Հոթոյեան ազնուութիւնը ունեցաւ իր գրած եւ հրատարակած վերջին երեք գիրքերը նուիրելու, որոնց շնորհիւ պատեհօթիւնը ունեցայ ծանօթանալու իր տաղանդներուն, իր մտածումներուն եւ գործունէութեան: Շնորհակալ եմ Պրն. Հոթոյեանին, որ ինծի վստահեցաւ իր վերջին գրքին գրախօսականը ընել:

Բայց նախքան բուն գրախօսականին անցնիլս՝ թոյլ տուէք, որ պատմեմ երկու դրուագներ: Առաջին դրուագ: Օր մը, ութսուն տարիքը անց եւ հանգստեան կոչուած ծանօթի մը հանդիպեցայ: Քիչ մը դժգոհ նայուածքով հարցուց.— «Ինչպէ՞ս կ'անցընես օրդ»: Իրօք, տարիքը առած եւ գործէ քաշուած շատ մը անձերու մտահոգութիւնն է անվերջանալի եւ երկար թուող իրարայաջորդ օրերը զբաղեցնելը: Երբ Լիբանանի մէջ Պուրճ Համուտի փողոցներէն կը քալէի, մայթերու վրայ կը տեսնէի դէմ դիմաց նստած, տարիքը առած մարդիկ նարտ կը խաղային, կամ աթոռակի մը շուրջ բոլորուած՝ չորս-հինգ հոգի թուղթ կը խաղային, կայսպէս ըսած՝ ժամանակը անցընելու համար: Բայց եթէ հարցումը ուղղենք Պրն. Հոթոյեանին, թէ ինչպէ՞ս կը զբաղեցնէ ժամանակը, հաւանաբար պահ մը խորհելէ վերջ ան ըսէ.— «Տարօրինակ, օրս կարճ կու գայ, երանի օրս 25 ժամ ըլլար, կամ քիչ մըն ալ աւելի երկար»: Վերջին ինը տարիներու ընթացքին, երբ Պրն. Հոթոյեան 70-էն 80-ի սեմը կ'անցնէր, հրատարակած է հինգ գիրքեր, զուգահեռաբար իր միւս գրական եւ հասարակական բեղուն աշխատանքներուն, լաւագոյնս արժեւորելով իրեն շնորհուած ժամանակի իւրաքանչիւր րոպէն:

Երկրորդ դրուագ: Լիբանանի քաղաքացիական կռիւները սկսելէն չորս տարի ետք, մեր աշխատանքի հաստատութեան գլխաւոր հաշուապահը տեղեկացուց, որ ստիպուած էր իր պաշտօնը ձգել, որովհետեւ Գանատա պիտի գաղթէր: Հարկաւոր էր զինք փոխարինել: Յետ թերթերու մէջ դրուած ծանուցումներու, պաշտօնին համար դի-



մող թեկնածուներուն մէջ կար 30-էն 35 տարիքի մէջ երիտասարդ մը, բարձրահասակ եւ գրաւիչ երեւոյթով: Երբ հարցուցի, թէ ի՞նչ վկայականներ ունէր, սեղանին վրայ դրաւ պաքալորէայի վկայականը, ինչպէս նաեւ Լիբանանեան Համալսարանէն ստացած վաճառականական եւ հաշուապահական մասնագիտութեան վկայականները: Փափաքելով իր մասին աւելի ծանօթութիւն ունենալ, կարգ մը հարցումներ ուղղեցի, ի միջի այլոց՝ թէ ի՞նչ կը կարգար երեկոները: Պատասխանեց՝ «Ան-Նահար թերթը կը կարգամ»: Անոնք որոնք Լիբանան գտնուած են, անշուշտ ծանօթ են արաբերէն լեզուով այս որակաւոր օրաթերթին: Բայց պատասխանը զիս չգոհացուց: «Մասնագիտութեանդ վերաբերեալ ի՞նչ գիրքեր կը կարդաս» հարցուցի: Զարմացած երեսս նայեցաւ, ու քիչ մը ջղային շեշտով պատասխանեց.— «Ի՞նչ կ'ուզեք, որ կարդամ, պէտք եղած գիրքերը արդէն դպրոցը կարդացի»: Այս երիտասարդին համար իր ուսումնառութիւնը աւարտած էր դպրոցին հետ: Բայց այդ պահուն մտքիս մէջ կար Ֆրանսացի նշանաւոր բանաստեղծ Լամարթինի պատմութիւնը: Երբ Լամարթին դպրոցը աւարտած է, իր ծնողքին նամակ գրած է, որու մէջ, ի միջի այլոց, ըսած է.— «Դպրոցս աւարտեցաւ, ուսումս կը սկսի»:

Պրն. Գրիգոր Հոթոյեան բախտաւորութիւնը չէ ունեցած համալսարան յաճախելու, բայց երբ կը կարդանք իր գրութիւնները, յստակ կը տեսնենք, որ ազգային վարժարանի մը դասընթացքները բոլորելէ ետք, ան իր ուսումը աւարտած չէ նկատած: Ան շարունակած է ուսանիլ ու կը շարունակէ մինչեւ այսօր, ամենայն համեստութեամբ եւ իմաստութեամբ: Իր ամբարած աշխարհագրական, պատմական, ընկերաբանական, գրական եւ այլ հարցերու վերաբերեալ գիտելիքներու պաշարը կրնայ ամօթով ձգել շատ մը համալսարանաւարտներ, որոնք քիչ առաջ յիշուած հաշուապահին նման՝ պէտք չեն տեսներ շարունակելու իրենց ուսումնառութիւնը: Աւելին, այն ինչ որ ուշադրութիւնս գրաւեց մասնաւորապէս Պրն. Հոթոյեանի պարագային, իր հաղորդելիք պատմական դէպքերու, կամ աշխարհագրական տեղեկութիւններու ճշգրտութիւնը բծախնդրութեամբ ստուգելէ վերջ գրի առնելն է, գիտական միտքի մը յատուկ պարտաճանաչութեամբ:

Պրն. Գրիգոր Հոթոյեան հիմնովին գաղափարապաշտ մարդ մըն է: Ան իր գաղափարական տաճարի գմբէթը կառուցած է չորս հաստատուն մոյթերու վրայ, որոնք են՝ 1) իր անգրգուելի հայկականութիւնը, 2) իր հաւատաւոր պատկանելիութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ, 3) իր զգացական կապուածութիւնը սասունական արմատներուն եւ 4) իր անխախտ հաւատարմութիւնը Հ. Յ. Դաշնակցութեան: Այս չորս ազբիւրներէն հոսած գաղափարները ողողած են Պրն. Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրուած գրքին պատմուածքները: Ան միայն պատմութիւն մը պատմելու սիրոյն չէ, որ ձեռք առած է գրիչը: Իւրաքանչիւր պատմուածք կը հաղորդէ ազ-

գասիրական, կրօնաբարոյական, պատուախնդրական, ընտանեկան մաքուր բարքերու վերաբերեալ օրինակներ եւ պատգամներ:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գրքին մէջ կը մտնենք գեղեցիկ եւ յուզիչ պատմուածքով մը, խորագրուած՝ «Աղօթքի Զօրութիւնը»: Ան հոգեյոյզ պատմութիւնն է Պօղոս կոչեցեալ սասունցի պատանիի մը, որ 1915-ի պատերազմին բռնի կը զինուորագրուի թուրք զինուորականութեան կողմէ եւ բազմահարիւր այլ հայ պատանիներու եւ երիտասարդներու հետ կը տարուի ամայի նեղ կիրճի մը մէջ, ուր թուրք բարբարոսները կը ձեռնարկեն անոնց ամբողջական ջարդին: Արձակուած փամփուշտներու տարափը հրաշքով կը խնայէ միայն Պօղոսը, որ կը պահուի խոշոր ծառի մը բունին մէջ բացուած խոռոչը, ուր ան յուզումով կը յիշէ ընտանիքէն բաժանման սրտաճմլիկ պահուն իր մօրը թախանձանքը՝ «Աստուած, Յիսուս Քրիստոս, Քեզի կը յանձնեմ իմ միակ որդիս»: Իսկ Պօղոսին ուղղելով իր արտասուածքը աչքերը, ջերմօրէն կը թելադրէ, որ երբեք չմոռնայ իր հաւատքն ու եկեղեցին՝ միշտ յիշելով, որ ինք հայ քրիստոնեայ է: Եւ այն պահուն, երբ թուրք զինուորներ, որոնք բլուրին գագաթէն տեսած էին ողջ մնացած Պօղոսը ու վար իջած գայն սուինահար ընելու, Պօղոս, ծառի նեղ խոռոչին մէջ ծունկի եկած ջերմեռանդութեամբ կ'աղօթէր, արտասանելով Ներսէս Շնորհալիի «Հաւատով Խոստովանիմ»-ի 24 համարները, ինչպէս որ մայրը յանձնարարած էր իրեն: Զինուորները բազմաթիւ անգամներ կ'անցնին ծառին առջեւէն, կը պոռան, կը կանչեն, սակայն ի զուր: Անոնք չեն գտներ Պօղոսի թաքստոցը: Պօղոս իր փրկութիւնը կը պարտի աղօթքի զօրութեան, համոզումով կը պատգամէ Պրն. Հոթոյեան:

Կրօնաբոյր եւ հոգեպարար նման պատմուածքներ են «Փրկարար Խաչը», «Հաւատքի Զօրութիւնը», եւ տակաւին ուրիշներ, որոնք կ'արտայայտեն Պրն. Հոթոյեանի խորունկ կրօնասիրութիւնը: Որպէս իսկական քրիստոնեայ, ան կը խոստովանի.— «Հոգեկան այն վերացումը եւ գոհունակութիւնը զորս կը զգամ եկեղեցւոյ մէջ պատարագի ընթացքին, ուրիշ որեւէ տեղ չեմ գտներ, մանաւանդ երբ կ'ունկընդրեմ մեր հոգեգմայլ շարականները, որոնք թանկագին գոհարներ են միջազգային գրականութեան մէջ, թէ՛ յօրինուածքով եւ թէ՛ երաժշտութեամբ»:

Քրիստոնէական բարոյականութիւնը նմանապէս տիրական տեղ ունի Պրն. Հոթոյեանի պատմուածքներուն մէջ: Օժտուած լաւատես խառնուածքով, իրեն համար կրօնական պատուիրաններուն հետեւողը, բարոյալից վարքով գործողը, անպայման իր վարձատրութիւնը կը ստանայ, մինչ անդարձ մեղաւորը կը գտնէ իր պատիժը: Այս անշրջելի սկզբունքներուն վրայ հիւսուած պատմութիւն մըն է դասընկերներ Մկրտիչի եւ Սարգիսի պարագան: Մինչ Մկրտիչ պարկեշտ պատանի մըն է, լրջօրէն նուիրուած իր դպրոցական եւ ընտանեկան պարտակա-

նութիւններուն, եւ Կիրակի օրերն ալ եկեղեցւոյ ծառայող որպէս դըպիր, Սարգիս, ընդհակառակը, ծոյլ եւ անկարգ աշակերտ մըն է, որ ի վերջոյ կ'արտաքսուի դպրոցէն, եւ անտեսելով ծնողքին տուած խրատները, կ'որդեգրէ ապօրինի ընթացք մը: Մկրտիչ փայլուն կերպով կ'աւարտէ դպրոցը, կ'ուսանի իրաւաբանութիւն եւ տարիներու ընթացքին կը հասնի դատաւորի պաշտօնին: Իսկ Սարգիս կը միանայ աւագակախումբի մը եւ իր զբաղումը կ'ըլլայ գողութիւն, եւ նոյնիսկ ոճիր գործել: Ի վերջոյ Սարգիս կը ձերբակալուի եւ դառն ճակատագրի բերումով, ոճրագատ ատեանի մէջ իր նախկին ընկերոջ՝ այժմ դատաւոր՝ Մկրտիչի կողմէ կը դատուի ու կը դատապարտուի իր գործած ոճիրներուն համար: Դատապարտուած Սարգիսը, խօսքը ուղղելով դատաւոր Մկրտիչին, կը բացագանչէ.— «Սիրելի դասընկերս Մկրտիչ, հիմա այս պահուս կ'ըմբռնեմ քու խրատներուդ արժէքը եւ կը զղջամ: Ներկայիս ես օրինակ եմ ամէն անոնց, որոնք չեն սիրեր իրենց ծնողքը, ազգը, հայրենիքը, եկեղեցին, դպրոցը, եւ չեն հետեւի իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ ընկերներուն խրատներուն: Ես հարստանալու անպարկեշտ ձեւին հետեւեցայ եւ հիմա կը քաւեմ մեղքերս»:

Այս եւ նման պատմուածքներով, Պրն. Հոթոյեան կ'ընդգծէ անփոխարինելի տեղը, որ գրաւած են իր կեանքին մէջ, եւ որ պէտք է գրաւեն իւրաքանչիւր հայու կեանքին մէջ՝ ծնողք, ազգ, հայրենիք, եկեղեցի, դպրոց, ինչպէս նաեւ անխախտ բարոյականութիւն: Ասոնք կը կազմեն առողջ հաւաքականութեան մը հիմնական արժէքները:

Պրն. Հոթոյեան բուռն հաւատացող մըն է բարեգործութեան բարիքներուն: Բազմաթիւ պատմուածքներու մէջ դիպուկ օրինակներով ան կը ջատագովէ բարեգործութիւնը: Իր ամենագեղեցիկ օրինակներէն մէկն է դանիացի Միս Քարէն Եփփէի պարագան: 1903-ին, 27 տարեկան հասակին, ան կու գայ Ուրֆա քաղաքը, եւ մինչեւ իր մահը ամբողջական նուիրումով կը ծառայէ հայ ժողովուրդի բարօրութեան, հիմնելով որբանոց, դպրոց, գործատեղիներ, այս վերջին նախաձեռնութիւնը ըլլալով գաղթական հայուն հասութեաբար աշխատանք հայթայթելու տնտեսական առողջ քայլ մը:

Պրն. Հոթոյեան երախտագիտութեամբ կը յիշէ նաեւ Քարէն Եփփէ հիմնարկին ըրած նիւթական օժանդակութիւնը իրեն եւ բազմաթիւ ուրիշ աշակերտներու, դպրոցական տարեթոշակը կարենալ վճարելու համար:

Բարեգործութեան ուրիշ հետաքրքրական դրուագ մըն է «Մարդուս Կեանքը Կախուած Չէ Իր Ինչքերու Կուտակումէն» խորագրուած պատմուածքը, որու մէջ Պրն. Հոթոյեան կը պատմէ իր պատահական հանդիպումը Տիգրանուհի Սարգիսեան անունով տիկնոջ մը հետ: Տիկինը յուզումով կը տեղեկացնէ, թէ թէեւ իր հանգուցեալ ամուսինէն միլիոններ ժառանգած է, բայց դժբախտաբար յետ անբու-

ժելի հիւանդութեան մը, բժիշկները իրեն միայն վեց ամսուայ կեանք մը նախատեսած են: Կարեկցութեամբ Պրն. Հոթոյեան իր ցաւը կը յայտնէ եւ կը յորդորէ կարգալ աւետարանը, ի մասնաւորի Պօղոս Առաքեալի Առաջին Թուղթը ուղղուած Տիմոթէոսին՝ «Յորդոր Հարուստներուն».— «Այս աշխարհի մեծատուններուն պատուիրէ, որ չհպարտանան եւ յոյս չդնեն սնոտի հարստութեան վրայ, այլ՝ Աստուծոյ վրայ... Պատուիրէ որ բարիք գործեն, բարի գործերով հարստանան... իրենց համար բարի հիմ դնելով հանդերձեալին մէջ, որպէսզի ձեռք բերեն ճշմարիտ կեանքը»: Եւ Պրն. Հոթոյեան խրատ կու տայ տիկնոջ՝ ըսելով.— «Խնդրէ մեր բոլորին Փրկիչ՝ Յիսուս Քրիստոսէն, որ քու հիւանդութիւնդ բժշկէ: Աղօթէ՛ ամբողջ հաւատքով եւ ամէն օր»: Կը յորդորէ նաեւ ունեցած միլիոնաւոր տոլարներէն բաժին հանել ազգային հաստատութիւններուն, եկեղեցական կառոյցներուն, որբերուն, աղքատներուն: «Այդ բարեգործութիւնները քեզ պիտի անմահացնեն եւ երկնային անմահութեան արժանացնեն», կ'ըսէ Պրն. Հոթոյեան: Ութ ամիս վերջ ան Տիկին Սարգիսեանէն կը ստանայ նամակ մը, ուր տիկինը կը գրէր.— «Սիրելի բարեկամ, Պօղոս Առաքեալին խօսքը սրտիս շատ խօսեցաւ: Հարստութեանս մեծամասնութիւնը նըւերեցի ազգային հաստատութիւններուն, եկեղեցիներուն, դպրոցներուն, աղքատներուն: Ամէն օր հաւատքով աղօթեցի, որ Փրկիչը իր հրաշագործ գօրութեամբ բուժէ հիւանդութիւնս: Վեց ամիս ետք բժիշկը զիս քննելէ ետք՝ քաղցկեղի հետք չգտաւ մարմնիս մէջ: Զարմանքով հարցուց, թէ ինչպէ՞ս բուժուեցայ: Ըսի՝ "հաւատքով աղօթեցի մեր Փրկիչին եւ բոլոր սուրբերուն": Այսպէս է հաւատքի գօրութիւնը: «Եթէ մարդ իր պարտականութիւնը կատարէ եւ վստահի Աստուծոյ, ոչ մէկ բանէ կը վախնայ», կ'ըսէ Պրն. Հոթոյեան հաւատացեալի համոզումով, «թէ եւ երբեմն ամէն ինչ մութ ու չարագուշակ կը թուի, սակայն Ան ամէն ինչ կը փոխակերպէ բարիքի»:

Պրն. Հոթոյեանի հայրենասիրական զգացումներն ալ կը ցոլան գրքին գրեթէ բոլոր պատմուածքներուն մէջ: Դարերով իր գոյութեան եւ իր ազատութեան համար մարտնչած հայ ժողովուրդը ահաւոր ջարդի ենթարկուած էր 1915-ին, բայց յամառօրէն պայքարելով՝ ան յաջողած էր Առաջին Համաշխարհային Պատերազմի հետեւող թոհուբոհ մէջ կերտել անկախ հայրենիք մը: Ծնած եւ հասակ նետած այս ճակատագրական դէպքերուն անմիջապէս յաջորդող տարիներուն, Պրն. Հոթոյեանի սերունդը ապրած է այդ դէպքերուն պատճառած ըմբոստացուցիչ եւ միաժամանակ ոգեւորիչ մթնոլորտին մէջ:

Ահա այս տարամէտ զգացումներն են, որ կ'արտայայտուին «Հայրենասէր Գուրգէնը» խորագրուած պատմուածքին մէջ: Վան քաղաքի պատուական եւ յարգուած ընտանիքներէն մէկն է Իշխանեան ընտանիքը, բաղկացած հօրմէն, մօրմէն եւ չորս զաւակներէն, երեքը՝ մանչ, մէկը՝ աղջիկ: 1915-ին ջարդարար թուրք եւ քիւրտ հոր-

դաներու դէմ քաղաքի ինքնապաշտպանութեան ընթացքին հայրը եւ զաւակներէն երկուքը ճակատի վրայ գոհ կ'երթան իրենց հայրենասիրութեան: Բայց Վանը կը փրկուի շնորհիւ իր հարիւրաւոր մարտիրոսներու գոհողութեան, եւ քաղաքը կ'ապրի երկու տարի խաղաղ ու ապահով: Երբ քաղաքին օգնութեան հասած ռուսական բանակը 1917-ին կը քաշուի դէպի Կովկաս, Իշխանեաններու երրորդ մանչ զաւակը՝ Գուրգէն, կը յաջողի քաղաքէն դադրող ժողովուրդին հետ մայրն ու քոյրը ողջ հասցնել Երեւան: Կրկին ռազմաճակատ վերադառնալէ առաջ, Գուրգէն կ'ուզէ իրագործել պատանեկան շրջանին կատարած ուխտ մը՝ այցելելով Սուրբ Էջմիածին վանքը: Բայց երբ հոն կը տեսնէ աղետարար եւ սրտաճմլիկ պայմաններու ներքեւ հաւաքուած գաղթական բազմահազար ժողովուրդը, արցունքը կը քարանայ Գուրգէնի աչքերուն մէջ, կ'ըսէ Պրն. Հոթոյեան, սիրտը կը բզբտուի անծանօթ ուժերէ: Ինչո՞ւ այս ժողովուրդը, այս հնադարեան մշակոյթով քրիստոնեայ ժողովուրդը կը մեռնէր: Ու ծունկի գալով Էջմիածնայ տաճարի խորանին առջեւ, ան կը վերանորոգէ իր ուխտը՝ մինչեւ մահ կատարելու իր հայրենասիրական եւ ազգասիրական պարտականութիւնները, մանաւանդ, որ այդ միջոցին թշնամին մօտեցած էր Յիսուս Քրիստոսի իջեւանած տաճարին, հայ ժողովուրդի հաւատքի կեդրոնին: Մեր դարաւոր թշնամին, ամբողջ թրքահայութիւնը աքսորելէ եւ ջարդելէ ետք, կ'ուզէր Արեւելեան Հայաստանի հայութեան հաշիւն ալ մաքրել, հիմնայատակ կործանել մեր հաւատքի բերդը՝ Սուրբ Էջմիածինը:

Գուրգէն իր վանեցի մարտիկներուն հետ անձնուիրաբար կը կրճուէր Ղարաբաղիսայի ճակատին վրայ, երբ օր մը, ահաւոր մէկ վայրկեանին, թշնամի դաւաճան ռումբ մը իր քով պայթելով՝ ծանրօրէն վիրաւորեց Գուրգէնը: Հիւանդանոցին մէջ, բժշկական կազմի բոլոր ճիգերը հերոսին կեանքը փրկելու՝ ի դերեւ ելան: Գուրգէնի վերջին խօսքերը, ուղղուած իր արտասուող մօր, եղան.— «Սիրելի մայր, ես կատարեցի իմ պարտականութիւնս իմ հայրենիքիս, իմ ազգիս եւ իմ հաւատքիս հանդէպ: Ես քալեցի հօրս գծած ուղիէն: Կ'ուզեմ, որ դուն երբեք չտխրիս եւ չլսաս, այլ՝ հպարտ կանգնիս եւ քալես մեր անկախ հայրենիքի հողին վրայ, որովհետեւ դուն այն մայրն ես, որ սնուցիր ու դաստիարակեցիր երեք մանչ զաւակներ եւ ամուսինովդ միասին գոհեցիր մեր հայրենիքի անկախութեան բազինին»:

Հոյակապ պատմութիւն մըն է այս, գրաւիչ եւ յուզիչ կերպով ներկայացուած Պրն. Հոթոյեանի կողմէ:

Իր պատմութեան մէջ Պրն. Գրիգոր Հոթոյեան միշտ խոր գոհունակութեամբ կը յիշեցնէ, որ ինք հաւատացեալ հայ քրիստոնեայ է, երկար տարիներ հաւատարմութեամբ ծառայած է Հայ Առաքելական Եկեղեցւոյ որպէս դպիր, մանկութեան յաճախած է կիրականօրեայ դպրոց, եւ ապա պաշտօնավարած է այդ դպրոցին մէջ որպէս ու-

սուցիչ եւ տեսուչ: Պրն. Հոթոյեան հպարտութեամբ կը յիշէ նաեւ իր սասունական արմատները: Հայրը՝ Ղազար, այլ անունով՝ Խարզօ, ծնած ու հասակ նետած է Սասունի Սպաղանք կոչուած պղտիկ գիւղին մէջ: Իսկ Պրն. Գրիգորը, իր եղբայրներն ու քոյրերը, թէեւ ծնած են Սուրբոյ մէջ, բայց կազմաւորուած են իրենց հօր սասունցիի շունչին տակ: Պրն. Հոթոյեանի գրքին շատ մը պատմուածքներուն մէջ կը հանդիպինք սասունցի դերակատարներու: Սասունցիներէն շատեր արհեստով եղած են ջաղացպաններ ու փռապաններ, սակայն Սասուն տուած է նաեւ, կը յիշեցնէ Պրն. Հոթոյեան, արժէքաւոր մտաւորականներ, ինչպէս Սիմոն Սիմոնեանը, եւ ականաւոր քաղաքական գործիչներ՝ Կարօ Սասունիի նման:

Պրն. Հոթոյեան մասնաւոր հպարտութեամբ կը յիշէ նաեւ փոքր Սպաղանք գիւղի ծնունդ եղող հերոս Փետայիները, մէկը՝ Մակարը, Պրն. Գրիգորի հօր՝ Ղազարի կնքահայրը, եւ միւս երկուքը՝ Գալէն եւ Ակէն, Պրն. Ղազարի հօրեղբորդիները: Կը յիշէ նաեւ Զօր. Անդրանիկը, Գէորգ Չաուշը, Ռուբէնը եւ ուրիշ Փետայիներ, որոնք Սպաղանքի մէջ կը հաւաքուէին՝ ծրագրելու եւ համադրելու համար իրենց Փետայական գործունէութիւնը:

«Պատուախնդիր Եւ Քաջ Սասունցին» խորագրով պատմուածքի մը մէջ, Պրն. Հոթոյեան հպարտութեամբ կը պատմէ, թէ ինչպէ՞ս հայ սասունցի երիտասարդ մը հերոսաբար հայ աղջիկ մը կ'ազատէ թուրք ոստիկանի մը ճիրաններէն: Դէպքը պատահած է 1920-ին Քիլիս քաղաքին մէջ, Կիլիկիան ազատագրած Ֆրանսական բանակներու տիրապետութեան շրջանին: Ոստիկանը առեւանգած էր երիտասարդ ու գեղեցկադէմ աղջիկը եւ ձիաքարչ կառքով մը զայն կը տանէր արագավազ, անտեսելով խեղճ աղջկան բողոքի պոռչտուքները: Իսկ անցորդները, լսելով հանդերձ աղջկան օգնութեան կանչերը, կը մնային անտարբեր՝ տեսնելով, թէ գործը թուրք ոստիկանի հետ է: Բայց Սասնոյ Սպաղանք գիւղէն յանդուգն եւ պատուախնդիր հայ երիտասարդ մը, վազելով կառքին ետեւէն, կը հասնի կառքին եւ թուրք ոստիկանին հարուած մը տալով՝ կը տապալէ զայն եւ հայ աղջկան կը պատուիրէ, որ արագութեամբ հեռանայ: Երիտասարդը կը տարուի Ֆրանսական ոստիկանատուն, ուր երբ Ֆրանսացի սպան կ'իմանայ եղելութիւնը, կը շնորհաւորէ սասունցի երիտասարդը իր քաջութեան համար ու գովաբանական նպաստաւոր տեղեկագիր մը կը պատրաստէ:

Պրն. Հոթոյեանի հետաքրքրական պատմուածքներէն մէկն ալ խորագրուած է «Արաբական Առաքինութիւն», որու մէջ ան կը պատմէ Ուրֆա քաղաքի հայկական մեծ գաղութին պատկանող Սարգիսեան ընտանիքի պատմութիւնը, 1915-ի Մեծ Եղեռնին եւ անկէ վերջ: Ընտանիքին զաւակներէն որբ մնացած հինգ տարեկան Յակոբը կ'որդեգրուի ազնիւ եւ մեծոգի արաբ ընտանիքի մը կողմէ, ուր ան կը ստանայ հոգածութիւն եւ գուրգուրանք: Բայց երբ քանի մը տարի

ետք արդէն արաբացած Յակոբի մեծ եղբայրները կը գտնեն իրենց փոքր եղբայրը, Յակոբը որդեգրող արաբը, որ Սուլթան աշիրաթի գլխավորն էր, ազնուօրէն կը համաձայնի վերադարձնել պզտիկը իր եղբայրներուն՝ յարգելով ընտանեկան միութեան սրբութիւնը:

Պրն. Հոթոյեան չի սահմանափակեր իր գրութիւնը այս սրտաշարժ պատմութեան տեղեկագրութեամբ: Պատմուածքին որպէս ներածական, ան կու տայ Ուրֆա քաղաքի շատ համառօտ պատմականը Մեծն Աղեքսանդրի ժամանակէն սկսեալ, եւ կը նկարագրէ հոն գրտնուող հոծ հայ գաղութին կացութիւնը 1915-ի Մեծ եղեռնի նախօրեակին:

Պատմուածքներէն շատեր օժտուած են նման պատմական, աշխարհագրական, հասարակական նկարագրական ներածականներով: Նման պարագայ մըն է «Կարնեցի Հայ Ընտանիքի Մը Ողիսականը» խորագրուած պատմուածքը, որ կու տայ 1915-ի գաղթականութեան շրջանին Թոքաճեան ընտանիքին կրած տառապանքներուն նկարագրականը, բայց չի գոհանար յօդուածը սահմանափակելով միայն յիշեալ ընտանիքին ապրած ողիսականին, այլ պատմութիւնը կը տեղադրէ Կարին քաղաքի պատմական, ընկերային, կրթական եւ աշխարհագրական ճոխ տեղեկութիւններու շրջապատին մէջ:

Պրն. Հոթոյեանի այս կերպ շարադրումը վերեւ յիշուած եւ այլ բազմաթիւ պատմուածքներու պարագային, բարեբաստիկ մօտեցում մըն է, որ մեծապէս կ'աւելցնէ պատմուածքներու շահեկանութիւնը:

«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» խորագրով հատորը կը պարունակէ քանի մը պատմական գրուածքներ ներկայացնող պատմուածքներ, ինչպէս է. դարուն արաբ էմիր Աղպուղանի ճակատումը Արգաւան հայ իշխանի հետ, կամ ԺԴ. դարուն Լենկ Թիմուրի ունեցած փորձառութիւնը Իջեանի շրջանի Գօշալանքին մէջ, եւ այլն: Գիրքը կը պարունակէ նաեւ քանի մը հեքիաթային պատմուածքներ, ինչպէս ծպտուած թագաւորի մը հանդիպումը խելացի պատանի աշակերտի մը հետ: Սակայն պատմուածքներու մեծամասնութիւնը շատ հետաքրքրական ժամանակագրական պատկերներ են, ընդգրկելով 1915-էն մինչեւ մեր օրերը երկարող ժամանակաշրջանը, առաւելաբար հեղինակին մանկութեան, պատանեկութեան եւ երիտասարդութեան շրջանը: Աշխարհագրականօրէն պատմուածքները կ'ընդգրկեն Թուրքիան եւ Սուրիան, ի մասնաւորի Սասունը՝ Թուրքիոյ մէջ, եւ Հալէպը՝ Սուրիոյ մէջ, ինչպէս նաեւ Լիբանան, Եգիպտոս, Հայաստան, Ֆրանսա, Գանատա եւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները: Գրքին մէջ ականատեսի աչքով տրուած առօրեայ կեանքի համայնքային, հասարակական, տնտեսական, քաղաքական եւ այլ կարգի առատ լուրերը կրնան որպէս աղբիւր գործածուել ապագայ պատմագիրներու կողմէ:



Այս բոլորը գրուած են պարզ, շատ յստակ, բոլորին մատչելի խօսակցական արեւմտահայերէնով, առանց կնճռոտ դարձուածքներու, կամ բարդ ոճաբանութեան: Բայց Պրն. Հոթոյեան գրած է խոր զգացումով, սիրտը ափին մէջ եւ իր զգացումները ընթերցողին փոխանցող հաղորդական լեզուով:

Գրքին վերջին պատմուածքը կը վերաբերի Պրն. Հոթոյեանի գրոյցին Կոմիտասի աշակերտ եւ շատ սիրուած երգահան Բարսեղ Կանաչեանի հետ: Պրն. Կանաչեան շատ յառաջացեալ տարիքի մէջ էր այդ տեն եւ աչքերուն տեսողութիւնն ալ մեծ մասամբ կորսնցուցած: Երբ Պրն. Հոթոյեան կը հարցնէ իր որպիսութիւնը, Պրն. Կանաչեան կը պատասխանէ՝ ա՛խ քաշելով.— «Տղա՛ս, ինչպէ՞ս ըլլամ, անցեալի յուշերով կ'ապրիմ»: Պրն. Հոթոյեան կը շարունակէ իր պատմութիւնը՝ գրելով.— «Անհասկնալի թուեցաւ ինձի Պրն. Կանաչեանի պատասխանը, որուն իմաստը երիտասարդական տարիներուս չկրցայ ըմբռնել, մինչեւ որ ես ալ մտայ անցեալի յուշերով ապրողներու միութեան մէջ: Ես ալ ներկայիս «ինչպէ՞ս ես» հարցնողներուն իմ կարգին կը պատասխանեմ.— «Անցեալի յուշերով կ'ապրիմ»:

Բայց ո՛չ, Պրն. Հոթոյեան միայն անցեալի յուշերով չ'ապրիր: Այս պարագային, իր պատմուածքներու գիրքով ան կ'ապրեցնէ հին յու-



«Անցեալի Յուշերով Կ'ապրիմ» գիրքի շնորհահանդէսին,  
ձախէն աջ՝ Գրիգոր Հոթոյեան, Տիկ. Արփիկէ Ալթունեան,  
Հոգձ. Տ. Մեղրիկ Մ. Վրդ. Բարիքեան,  
Տիկ. Շաֆէ Հոթոյեան եւ Պրն. Յակոբ Ալթունեան



չերը, զանոնք կը վերակենդանացնէ, նոր կեանք կու տայ անոնց, փոխանցելու համար ապագայ սերունդներուն: Դուք, սիրելի Պրն. Հոթոյեան, միայն յուշերով չէ որ կ'ապրիք: Դուք տակաւին կը ծրագրէք այսօրը եւ յառաջիկայ օրերը: Դուք տարիքը առած գործունեայ երիտասարդ մըն էք, որ, ինչպէս ըսի այս զրոյցին սկիզբը, հաւանաբար փափաքէիք, որ օրերը ըլլային աւելի երկար՝ կարենալ գործադրելու համար ձեր բոլոր ծրագիրները:

Պրն. Հոթոյեանի «Անցեալի Յուշերով Կ'ապրինք» պատմուածքներու գիրքը օժտուած է կուռ եւ գեղեցիկ յառաջաբանով մը, խմբագրուած Հոգեշնորհ Հայր Մեղրիկ Ծայրագոյն Վարդապետի կողմէ, ուր ան հանգամանօրէն կը դրուատէ Պրն. Հոթոյեանի ձիրքերն ու առաքինութիւնները:

Գիրքը իր վերջաւորութեան կը վերադառնայ գրախօսականներու, գնահատականներու եւ վկայութիւններու հաւաքածոյ մը՝ վերաբերեալ Պրն. Հոթոյեանի «Ճաճանչներ» խորագրուած նախորդ գիրքին:


Գիրքը օժտուած է նաեւ արուեստագէտ Պրն. Յակոբ Ճանպազեանի կողմէ յղացուած եւ գործադրուած շատ գեղեցիկ կողքով մը, ուր Հալէպն ու Թորոնթօն իմաստալից կերպով եւ գրաւիչ գոյներով նրբօրէն գուգորդուած են իրենց յատկանշական յուշարձաններով:

Վերջապէս, կ'ուզեմ ջերմապէս շնորհաւորել Ժողի ընտանիքը՝ Մայքըլը, Անին, Քրիստափորը եւ Ստեփան-Արմէնը, որոնք սիրով ստանձնած են գրքին մեկենասութիւնը: Պրն. Գրիգորը եւ իր կողակիցը՝ Տիկին Շաքէն բախտաւոր են, որ ունին ձեզի պէս փեսայ, աղջիկ եւ թոռներ: Իսկ դուք ալ բախտաւոր էք, որ ունիք Պրն. Գրիգորին ու Տիկին Շաքէին նման ծնողներ: Իմ սրտագին մաղթանքս է, որ Քրիստափորն ու Ստեփան-Արմէնը միշտ ընթանան իրենց մեծ հօր ուղիով, եւ իրենց ուսումնառութիւնն ու մտաւորական աշխատանքը շարունակեն նոյնիսկ դպրոցի աւարտէն վերջ:

Սիրելի Պրն. Հոթոյեան, ձեզի ալ սրտանց կը մաղթեմ երկար, առողջ եւ տակաւին բեղմնաւոր տարիներ:

ՅԱԿՈՒ ԱԼԹՈՒՆԵԱՆ

(«Եօթներորդ Հանգրուան» գիրքէն)



## ԼՈՒՍԱՒՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻ 80-ԱՄԵԱԿ

Խօսուած Գրիգոր Հոթոյեանի 80-ամեակի  
եւ «Ճանապարհ» գիրքի շնորհահանդէսին՝ Երեւան, 2007

Ոչ միայն Հայաստանում, Սփիւռքում եւս կան գրական, մշակութային եւ հասարակական գործիչներ, որոնք միայն եւ միայն ծառայում են իրենց ազգասուրբ ուխտին, մատաղ սերնդի հայեցի դաստիարակութեանը, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան ստեղծելու տարածքային եւ գաղափարական միասնութեանը: Նման ազգանուիրեալներից է 1975 թուականից Գանատայի Թորոնթօ քաղաքում բնակուող բանասէր, բանաստեղծ, արձակագիր, մանկավարժ, լրագրող, հրապարակախօս, ազգագրագէտ Գրիգոր Հոթոյեանը:

Սասնոյ Տալուորիկի շրջանի Սպաղանք գիւղից Մեծ Եղեռնի պատճառով Սուրիա գաղթած Ղազարի (Խարզօ) եւ կիլիկիացի Մարիամի որդին, հայ ֆետայութեան փառքերից Սպաղանաց Մակարի, Սպաղանաց Գալէի, Սպաղանց քաջարի հայդուկապետ Յակէի (Յակոբի) շռուակիղը:

Այսօր ընթերցողի սեղանին է 80-ամեայ սասնորդու «Ճանապարհ» պատմաբանասիրական, արձակ, ժուռնալիստական երկերի ընտրանին: Նրա յօդուածները, հրապարակումները, թղթակցութիւնները, տարբեր առիթներով, յատկապէս Սուրիայում եւ Գանատայում, հայ համայնքին եւ հայ մեծանուն ու վաստակաշատ դէմքերին, պետական, կուսակցական, քաղաքական գործիչներին է վերաբերում: Դրանք երբեմն մեկնութիւններ են ու զրոյց-խորհրդածութիւններ, ճամբորդական տպաւորութիւններ:

Հապա՞ Հոթոյեանի գրախօսականները, նրա հոգեւոր, գրական եւ պատմաուսմական (արցախեան ազատամարտը ներառեալ) գործիչներին նուիրուած մեկնութիւնները, դրանց ընթերցողը կը հանդիպի ոչ միայն «Ճանապարհ»-ում, այլեւ «Արեւելք», «Հայրենիք», «Հորիզոն», «Շողակաթ», «Նոր Կեանք», «Մեր Կեանքը», «Դիտակ» եւ բազմաթիւ այլ թերթերում ու պարբերականներում: Կարողում ես վաստակաշատ սպաղանցու հրապարակումները, մտօք տեղափոխուում 20-րդ դարի Միջին Արեւելք՝ Սուրիա, Լիբանան, հասնում Գանատա, ԱՄՆ եւ այլուր: Եւ ամէնուր Գ. Հոթոյեան հրապարակախօսը յուշում է, որ «մշակոյթն է մեզ պահպան, հայ դպրոցը՝ լոյսի աղբիւր մեսրոպեան, մենք պէտք է վարդանանց ուղիով գնանք, հայ գիրքն է ճանապարհն հայուն»:

Հոթոյեանի յօդուածները կենսաճանաչողութեան դասեր են՝ լոյսով եւ հաւատով լեցուն դէպի հայ մարդը, դէպի հայ սիրտն ու հայ ուղեղը, դէպի հայ հանճարն ու հայ եկեղեցին: Հրապարակախօսութիւնը, այն էր օրուայ մամուլում, մերկապարանոց ճառասացութիւնն է, այն օրուայ պահանջ է, քննադատութիւնն եւ նպատակ յանուն ազգային վերելքի:

Եթէ ընդհանուր հանրագումարի բերենք «Ճանապարհ»-ում տրւած պատկերը նիւթերի բովանդակութիւնը, կը տեսնենք, որ սասունցի-հալէպցի-թորոնթոցի Գրիգոր Հոթոյեանը սուրիահայ եւ գանատահայ կեանքի մերօրեայ տարեգիրն է, տաղերգուն, բազմաքնար եւ բազմաժանր հայախօսը: Բաւական է թերթի «Ճանապարհ» հատորեակի «Թղթակցութիւններ» եւ «Հարցազրոյցներ» գլուխները, եւ դուք կը ծանօթանաք մեծանուն կոմպոզիտորների, երգիչների, խումբավարների, կաթողիկոսների, գրողների, գեներալների, գիտնականների, սովորական եւ հռչակաւոր մահկանացուների հետ:

Ամենակարեւորը, դրանք լինեն առիթով գրուած զրոյցներ, մահախօսականներ թէ ծանօթութիւններ, տպագրուած բոլոր յօդուածներում, դիմանկարներում Հոթոյեան լրագրողը, մեկնիչը մնում է իր խառնուածքին հաւատարիմ՝ ազնուութեան բարձունքին. չի կեղծում ո՛չ իրեն, ո՛չ դիմացիին, անկախ նրանց մեծութիւնից, գրաւած դիրքից: Հոթոյեանի գրքի բոլոր հերոսները, անկախ իրենց ազգային պատկանելիութիւնից (արաբ, եգիպտի, ֆրանսացի, հուլանտացի) առաքինի են, մարդասէր եւ ամենակարեւորը՝ գրչի, խղճի, վրձնի եւ հայապահ գէնքի ու խաչի ուխտանուիրեալներ են: Գրողը կարողացել է իր ամէն մի հերոսի հետ խօսել ողջերի լեզուով, լինի ան Մաշտոց թէ Գէորգ Չառուչ, Անդրանիկ թէ Դրօ, Գարեգին Ա. Կաթողիկոս թէ Հիւսէ-ի վարչապետ Յադէյ Սարգսեան, գեներալ-մայոր, Արցախի հերոս Սամուէլ Կարապետեան թէ Երկրորդ Աշխարհամարտում զոհուած բանաստեղծ Թաթուլ Հուրեան:

Թէեւ, իր խօսքերով ասած. «Կեանքը գնալով դառնում է դաժան», բայց 80-ամեայ սասունցի, բազմաժանր, բազմատաղանդ, բազմամեծար Գրիգոր Հոթոյեանը կեանքն ու աշխարհը դիտում է, գնում հոգու, մտքի, խղճի եւ սրտի աչքով: Գ. Հոթոյեանը ողջ կեանքում չի հետեւել գրական եւ ոչ մի ուղղութեան, նրա ուղին մէկն է՝ գրել պարզ եւ շիտակ, գրել ժողովրդի մասին՝ ժողովրդի համար: Նրա ցաւը հայացաւն է, խնդրութիւնը՝ հայեցի, ինքնայրումը՝ նախիրեան, ճանապարհը՝ դէպի էրզիր: Նա հայոց հին եւ գալիք քարտէզների միաձուլման, սահմանագծերի եւ գոյնի պահպանն է գրական եւ կեանքային մոդեռնից հեռու, ծառուկեանական, շիրագ-սեւակեան եւ Սիմոն Սիմոնեան, ինչպէս Դաշտենց ու Մուշեղ Գալչոյեան գաղափարագծի անխոտոր յետնորդ:

*Թերեւս այս բոլորը նկատել եւ գնահատել են ոչ միայն նրա ընթերցողները, այլեւ գրչընկերներն ու բարեկամները, որոնք այսօր էլ կրկնում են մեծանուն Յակոբ Կարապենցի խօսքերը. «Կեցցէ՛ Հալէպը, որ քեզ պէս բանաստեղծ է տուել»:*

*ՍԱՍՈՒՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ  
Բանաստեղծ, պատմաբան, հեղինակ,  
«Ուխտատուն»  
Թանգարան-հիմնարկի տնօրէն*

*23 Օգոստոս 2007,  
Երեւան*

*(«Ճանանչներ» գիրքէն)*



*Ձախէն աջ՝ Գրիգոր Հոթոյեան, Հայաստանի ազգային պաշտպանութեան փոխնախարար Գեներալ-լէյտենանտ Արթուր Աղաբէկեան եւ բանաստեղծ, պատմաբան, հրապարակագիր, հրատարակիչ Սասուն Գրիգորեան:*

ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՄՏԱԻՌՐԱԿԱՆ  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆԻՆ  
ԲԱՐԻ «ՃԱՆԱՊԱՐՀ»

Իմաստասէրներ՝ մտաւորականութեան մասին իրենց ուղղուած հարցումին կը պատասխանեն ըսելով, որ մտաւորականը ոչ միայն գիր ու գրականութեան նուիրուած ստեղծագործողն է, այլ ազգային, մշակութային, մարդկային արժէքներուն հետեւող, անոնց կերտումներուն եւ պաշտպանութեան նուիրուած առաջնակարգ յանձնառու անձնաւորութիւնն է:

Գրիգոր Հոթոյեանի կտրած կեանքի ուղին եւ զայն պարուրող հարուստ փորձառութիւնը թուղթին, պատմութեան ճակատագրին յանձնումի այս վկայագրութեան առթիւ՝ մեր յարգանքը յայտնելով, պիտի ջանանք կարգ մը հաստատումներ կատարել վերոյիշեալ բացատրութեան ուղեգրութեամբ:

Ան մեր մշակութային բազմաթիւ ներդրումներ իրագործող նըւերեալներէն է. հեղինակ՝ ստեղծագործական հատորներու, եւ գրականութեան մտերմութեամբ առաջին իսկ տարիներուն՝ մեզի իր նուիրումներով, իսկ այսօր այս հատորով մեզ հաճելի անակնկալի կը մատնէ այս բացառիկ եւ իր տեսակին մէջ եզակի վկայաշատ երաշխիքով: Հատոր մը, որ պիտի հանդիսանայ փաստական հեւքը հայկական գաղութի մը ժամանակի տարածքին կատարած իրագործումներուն:

Ականատես, ականջալուր, մասնակից պատմողն է ընթացքային երեւոյթներուն: Վերլուծողական փաստագրական քանդակող մը:

Բանաստեղծութեամբ «Սիրտը Ափին Մէջ» դրած, այդ սիրտը վերածեց համայնական «Նուիրում»-ի, եւ ահաւասիկ աւելի քան ութը հարիւր էջերէ բաղկացած կոթողական հատորով մը՝ իր ապրումներու գործնական գեղումներու մատուցումը: Կոթողական, ոչ միայն անոր ծաւալի գնահատանքով, այլեւ բովանդակութեան այլազանութեամբ, հայթայթուած հարուստ ստեղծութիւններով:

«Ճանապարհ» կ'ելլենք Ռազգայէն, Տէր Զօրի եւ Եփրատի հարեւանութենէն անցնելու համար, պատերազմի թոհոբոհին մէջէն, եւ ապրուած խաղաղութիւն, որքան այլաշարժային հանգրուաններ, որքան առատ շնչառութիւն, թոքերու ինչպիսի առագաստաւորումներ, յուշագրութեան հանգրիճումներ, սփիւռքագրութեան սքանչելի վրկայութիւններու պատկերներ, որոնք գրողի ներշնչումներուն կ'ենթարկուին իր շրջապատի հեռու եւ մօտ անցուղարձող իրադրութիւն-

ներով: Զգացականորէն իրապաշտ, հիացականորէն գրանցուած բացայայտումներ:

Գրականութիւն, այո, դպրոցներ, ձեռնարկներ, այո, այս բոլորը թղթակցութեան պատճառներով կը հասնին մեզի: Կը հասնին ջերմութեամբ, խանդաղատանքով, կենդանութիւն, ապրում եւ քերթողական մթնոլորտ բուրոյզ գգայնութիւններով:

Առաջին բաժնով մտաւորական գրողին հետ մուտք կը գործենք գաղութի եռեւեփուող աշխուժութեան մէջ շարժանկարային երանգներով:

Առանց գրական բոյրի հարստութեան վկայարան պիտի չկրնար ըլլալ Հոթոյեանի «Ճանապարհ»-ը, անոր անդաստանը պիտի այսպէս չլիցքաւորուէր ժամադրութիւններով, ուր այցի կու գան հայ գրականութեան մէջ արդէն իսկ տուն տեղ կերտած դասական դէմքեր: Զրոյցներ, որոնց կ'ընկերակցին, այդ մեծութիւնները վերարժեւորող իր դիտումներն ու դատումները, դէպքերու եւ դէմքերու գնահատանքային արձագանգներով, դէմքեր ու դէպքերու նորովի արտայայտութիւններու հաճոյալի արձանագրութիւններով:

Այս առաջին բաժնի բովանդակութեան գնահատանքը կը կայանայ երէկուայ եւ այսօրուայ ժամանակներու հասարակաց կտաւին վրայ միացած՝ միեւնոյն ազգակերտ երեւոյթներու ժամանակակցութիւնը: Երէկի եւ այսօրուայ դաստիարակչական լոզունգներու զօղումներով ստեղծուած մարտահրաւէրները կը վերածուին համընդհանուր գաղափարախօսութեան մը հիմնահարցի ճիւղաւորումներու:

Այստեղ կը միանան մշակոյթին, հայ մշակոյթին առնչուող իրականութիւններ, ուսումնասիրութիւններ, դիմաստուերներ եւ միջավայրային օրերու եւ պայմաններու թելադրութիւններ: Պատմուածքներ ըլլան անոնք կարծէք, կը կարդացուին հեղինակին հոգեշունչ նկարագրութեամբ, կ'արարուին այնպիսի ջերմութեամբ, կենդանութեամբ եւ մանաւանդ հաւատքով: Արձանագրութիւնները անցնելով հեղինակին հոգե-աշխարհի քուրայէն, կենդանութեան կը վերածուին, երբեմն կը հարստանան կամ կը պահպանեն ներկայացուածներուն որակային ճոխութիւնը:

Տրամադրութիւններու բարձր մթնոլորտի մէջ հաւատք կը դառնան եւ հաւատացէք այնքան գեղեցիկ եւ յարմար նկրտումներով ամբողջացած կը շղթայուին բաժինները մէկը միւսին:

Եւ մամուլին մէջ տեղ գտած գաղութը, Մերձ-Արեւելքի հայութեան նոր աշխարհի հոսքը չի կրնար ջերմ աշխուժութեան չվերածուիլ բանաստեղծի գրիչին տակ: Գաղութը անհանդարտ եռեւեփումի մէջ է, անխոնջ, անտեղիտալի, յարածուն: Ի պատիւ հայ ժողովուրդին եւ ի պատիւ անոր զաւակներէն Հոթոյեանին, որ պահերը, շարժումները, ընթացքները բռնել գիտցած է եւ զայն շնչող, ապրող, թելադրող վկայութիւններու վերածած:

Կը հասնինք այցելութիւններուն, յոբելեաններուն, մաղթանքներուն, որոնք իսկապէս մաղթանքային եռացող ներկայացումներու հանգամանքով տրուած են: Որքան ճիշդ կայ այնտեղ հայութեան ճիւղերը բեղմնաւորող, որքան հիացմունք կայ ժողովուրդիս հատնումները հոգեկան սնունդի վերածող: Մեր գաւակներուն տքնանքները գնահատող այդ էջերը, հայրենիքէն մինչեւ գանատական փերուն, կը դառնան հպարտութեան ովասիսներ, կը դառնան իրարու յաջորդող սերնդափոխութեան վերընձիւղումներ:

Ձեռնարկներ, գորս միայն հիացմունքով կարելի է կարգալ, իսկ անոնց յառաջացուցած խորհուրդներու զօրութիւնը մեզ պարզապէս կը մղեն ակամայ երկու մեծ պռաւօներով արտայայտելու մեր յուզումնախառն հպարտութիւնը, մէկը բնականաբար ուղղուած մեր աննման ժողովուրդին, իսկ միւսը իր արժանաւոր գաւակին՝ պատմողին, վկայողին, դէպքերը գնահատական ելոյթներու վերածող հեղինակին:

Հատորներու ստեղծագործութիւնները իրենց արձագանգը գտած են արտերկրի հայրենիքի այս փերուն, մտաւորականի հաւատքով, գրականութեան փորձառութեամբ, ժողովրդային շրջանակներէն արուեստի եւ մշակոյթի բարձրութեան հասնող երկնումներով:

Ինք է եւ իր անմիջական շրջապատը, անբաժան գիրն ու գրիչը: Կերտողն ու հիացողը, ժողովուրդն ու մշակները: Անձէն դէպի հաւաքական իրագործում, հաւաքական այնքան արժեւորումի հարստութեամբ օժտուածութիւն: Մեզի համար արդէն պարզ իրականութիւն է կարգալ անուններ, որոնք ժամանակի գնահատանքին հետ այժմէականացած են, եկած եւ մաս կազմած մեր օրերու պատմութեան, միաձուլուած երէկի պատգամով այսօրուայ պատմութեան:

Հայու անժամանցելի, անսահմանագծելի պատմութիւնը:

Նոյնքան գնահատելի է այս հաստատումով, երէկը այսօրուայ ճիւղերու վերածող գնահատական նամակներ, որոնք գրուած են կարծէք հեղինակէն պահանջելու այս գիրքին պատրաստութիւնը: Գըրուած են սիրողական հարկադրանքով, մտերմիկ ջերմութեամբ:

Ապրողներու եւ մեկնողներու մասին յատկացուած բաժինը նմանապէս հետաքրքրական մօտեցումով դասաւորուած է: Պարզ են մեզմէ յաւէտ բաժնուած մեծութիւններուն նուիրուած իր ջերմութիւնը, որուն ընդմէջէն անոնք կը դառնան յաւերժութեան ճամբորդներ, մեր օրերու ճիւղերուն մաս կազմող կամ ճանապարհի ընկերակիցներ հանդիսացող անմահներ:

Անոնք ոչ միայն կը յիշուին, այլ կ'անցնին մեր պատմութեան, կը դառնան մշակոյթի պատմութեան, գաղութային պատմութեան հիմնակէտերը: «Ի խնդիր բարոյական ճշմարտութեան» պիտի ըսէր ինք, իսկ մենք կ'ըսենք՝ ի խնդիր ազգային յաւերժականութեան:

Եկող ու գացող այցելուներ, որոնց հետ Հոթոյեան ցոյց տուած է հարցազրոյցներ արժեւորելու եւ ամէն հնարաւորութիւն ազգային մտահոգութեան թեմաներու վերածելու: Ամէն արժանաւորի հետ դարձնել պահի թելադրող էջը, ներկայի եւ ապագայի միջեւ ինկող հարցերու քննարկումներ կատարելու, պեղելու, անոնցմէ քաղուած արտայայտութիւնները իրարու միացնելով յառաջացնելու տեսակ մը յաճախապատում: Այդ բոլորին մէջ կան ազգային, կրթական, գրական, քաղաքական կարեւոր դիրքեր գրաւած անձնաւորութիւններ:

Գրիգոր Հոթոյեանի չափածոյ կամ արձակ գործերուն կողքին այս հատորը, իր կեանքի վերընձիւղումներուն պատմադրական գրաւականն է: Հարուստ հատոր մը, որ արժանաւորապէս կը ներկայացնէ գանատահայ գաղութի պատմութիւնը, տեսակ մը տարեգրքային:

Մեզի կը մնայ պարզապէս գնահատել նման մեծ աշխատասիրութիւն մը, որ գանատահայ կեանքին մէջ կեանքի թէժ ելեւէջներ ունեցած հեղինակը, օգտուելով ընծայուած այս հնարաւորութենէն, հայութեան հանդէպ իր ունեցած անհուն սիրոյ այս մատեանը կը մատուցանէ մեզի:

Հիմնուած իր գրական լայն պաշարին, խմբագրական ուժեղ գրիչին: Հարկ է կրկնել, որ անհրաժեշտ է շնորհաւորել հեղինակը, որ քաջութիւնը ունեցած է միեւնակը նման մեծածաւալ գործ մը իրականացընել:

Շնորհակալութիւն եւ շնորհաւորութիւն:

Ապրի՛ս Գրիգոր Հոթոյեան:

Ապրիս, որ ապրեցուցած ես տարիներու պատմութիւն մը, ի մի բերելով հինն ու նորը, հաւասարապէս քու եւ գրչի, մտքի ընկերներուդ արգասիքով:

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Գրող, հեղինակ, պատմաբան, խմբագիր,  
հրատարակիչ, դաստիարակ

(«Ճանապարհ» գիրքէն)





## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ ԲԱՐՈՅԱԽՕՍ ՈՒՍՈՒՑԻՉԸ

«Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ»

Պատմուածքներու, գրոյցներու, բանաստեղծական ճշմարտութիւններու այս հաւաքածոն անհրաժեշտութիւն մըն է հայ գրականութեան համար, որովհետեւ անոնց մէջ կը խտանայ հայ ժողովուրդի կենցաղի, ամէնօրեայ կեանքի փիլիսոփայութիւնը, ապրուած անձի մը կողմէ, որ լաւապէս կը ճանչնայ մեր ազգը Հալէպէն մինչեւ Գանատա եւ Հայաստան: Գրիգոր Հոթոյեան իր թեմաներուն ենթահողը առած է Աստուածաշունչի ջինջ ու պարզունակ պատկերներէն եւ մեր կեանքի բարոյական ճշմարտութիւնը վերածած է մնայուն արժէքներու եւ չափանիշերու:

Մեր ուրախութիւնը կը կրկնապատուի, երբ կը տեսնենք, որ մեր գրչեղբայրը այս հոգեկան տուայտումները դաստիարակչական բարոյախօսութեան կը վերածէ: Այդ ապրումները կը թանձրացնէ իր տարիներու փորձառութեամբ, տիպարներու խմբական կենցաղներով եւ անհատական դրսեւորումներով: Եւ այդ բոլորին կը միանայ մարդ անհատին հանդէպ իր հաւատքը, որ կու գայ իր լաւատեսութենէն: Այս գործընթացին մէջ հիմնական ներկայութիւն է Հայ Եկեղեցին, որուն սկզբունքները բարոյական ճշմարտութիւններու կիզակէտերն են:

Կը յիշենք գեղեցիկ էջերը Գրիգոր Օտեանին, գրուած Աղօթքին մասին: Այս անգամ մեր սիրելի Գրիգոր Հոթոյեանը անկեղծութեամբ հայուն կը բացատրէ զօրութիւնը աղօթքին:

Շատ բաներ կրցած են խլել՝ յափշտակել մեզմէ, բայց մնացած է մեր հոգիներու խորքը թաքնուած ապրելու, գոյատեւելու հաւատքը եւ կը զօրանայ իր պարզ, բայց բովանդակալից շեշտաւորումով:

«Ժամանակին թագաւորները ծպտուած հագուստներով կը շըրջէին իրենց ժողովուրդին մէջ, հասկնալու համար անոնց կենցաղը»:

Այսօր, մեր սիրելի հեղինակը, առանց ծպտուելու կը պտըտի հայութեան այլազան շրջանակներու մէջ, որոնելու համար մարդկային կեանքին մարդոց կողմէ ըմբռնուած ճշմարտութեան գործնականացումը: Ուրեմն հայութեան ներքին, հոգեւոր կեանքի պեղումներ են ներկայացուած պատկերները, պեղումներ, որոնք այնքան անհրաժեշտ են յաւերժացնելու համար հաւատքի, ճշմարտութեամբ՝ հոգեկան կեանքին հանդէպ մեր հոգիներէն ներս շողացող լոյսը:

Մեր ապրած 21-րդ դարը պէտք ունի նման դաստիարակչական շունչին: Մեր դպրոցները կրօնագիտութեան կողքին պարտին ներկայացնել նման բարոյախօսական գրոյցներ, որպէսզի մեր գալիք սերունդները ճանչնան ժողովուրդը, անոր առաքինութիւններով ջրը դեղուին, մտնեն Հաւատքի բանականերու շարքերէն ներս եւ դառնան ազգային, կրօնական եւ ճշմարտութեան դատի անդաւաճան զինուորներ:

Մենք միշտ հաւատացած ենք դաստիարակութեան եւ այդ հաւատքը վերապրեցանք այս հատորին ընթերցումով:

Շնորհակալ ենք մեզի ընծայած այս երջանկութեան համար: Ապրիս որ գրական գործունէութեանդ 60-ամեակը կ'իմաստաւորես նրման ստեղծագործ խոհունակութեամբ:

Սիրով՝  
ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ  
Գրագէտ, հրատարակիչ, խմբագիր  
«ՆԱԽԱՍԱՐԴ» ամսագրին

(«Ճանապարհ» գիրքէն)



Սիրելի ընկերս Գրիգոր Հոթոյեան,

Օտար արեւներու տակ, կը ջանանք ջերմ պահել մեր Ֆիզիքական էութիւնները, առանց զգայու թէ որքան հեռացած ենք մեր մայր ջերմութենէն, որ մեր արեան բջիջներուն կը ներարկէ ասդեանական թէ անդեանական սնունդը մեր գոյութեան:

Հայրենի հողին բոյրը որքան մխիթարական է, որքան ուժեղ կու գայ անոր բոյրը եթէ մանաւանդ քեզի նման անոր հողին ու երկնին կիզակէտային այրուցքով մեզի դողէրոցքով կը փոխանցես հայրենիքի արբեցումի ըմպումները:

Սիրելի գրչի եւ զգացական երկնումի երկուորեակ:

Տաք անձրեւի տակ յանկարծ ես զիս գտայ Սալիպէի օձապտոյտ ուղիներու մթութեան մէջ: Կը քալէի այնտեղ, ուր խումբ մը հասուն եւ «գիտակից» խենթեր՝ խմբագրատուն-հոգետունի մէջ, հայ գիրի հետ խաղով կը զուարճանային: Այնտեղ էիր դուն, այնտեղ էիր փայլուն, Տարօնի քաջ, այնողորդ, ներշնչող ու հաւատք ծնանող ժպիտովը: Նստեցայ մեծերու շարքին: Ներսը Մեսրոպ Մաշտոց ձեր վրայ

կը ծիծաղէր, հայրական օրհնութիւն տալով քաջալերական լուռ հը-  
պարտութեամբ:

Բարեւիս վախկոտ թրթռացումը հասաւ քու աչքերուդ, որոնք  
ինծի պատասխանեցին երէց եղբօր Հացեկացի հայրենակիցիդ բարի  
գալուստի հրաւերով:

Արեւելքի մէջ, Արեւելքի տղայ էինք, իսկ դուն արդէն մակոյկդ  
փոխարինած էիր անծով երկնքի տակ հոգեղէն առագաստանաւով:

Շատ մութ էր Հալէպի այդ փողոցը, որ սակայն չունէր ահ, այլ  
քեզ եւ այդ օրերուն ինծի կը ներշնչէր փառաւոր Մշոյ Սուլթանին  
հասնելու մեծամիտ հպարտութիւնը:

Միրելի, իսկապէս սիրելի ընկերս Գրիգոր,

Հալէպ, Թորոնթօ... Այ տնաշէն գիժ:

Այժմ ահա յենած թնդանօթի հզօրութեամբ գրասեղանիս, միշտ  
ոստումով աջ ձեռքիս, մատներուս մէջ խուժելու ճիգին կը հասնի  
Յայսմաւուրքդ: Երեւակայէ, որքան թափանցիկ եւ որքան փոխանցիկ  
են այնտեղ բազմած սիրոյ վէտվէտումները, որքան հպարտ, որքան  
հուժկու, որքան որքան... Գիրքդ թոյլ չի տար անզօր բեմագիրներով  
զգացական, տեսիլներով կենսագիր հիւսելու:

Իմ թանկագին Հալէպցի,

Կարճ ժամանակի մը համար եկած էի Թորոնթօ, Հոգիիդ հրաւե-  
րին ընդառաջելով, կը խօսէին քու մասիդ, իսկ ես աւելի ապաւինած  
էի աչքերուդ կայծկտումներուն, այո, սիրելիս, եւ ոստումնային խո-  
կումներուդ, ուր որքան անցեալի տառապանքներուն մեղմացումնե-  
րուն ի լուր՝ գրգանք կար, խոստում կար, գրութիւններդ երդմնագրի  
վերածած՝ ծառայութեան պատրաստակամութիւն կար: Կայսրութեան  
վրայ ուրախ եւ հպարտ նայուածքով թագաւորի մը նման նուիրա-  
բերուելու, տուածդ կրկնապատկելու աղուոր վեհապետութիւն կար,  
կար մտքիս պաստառին կերտուած պատկեր մը, ուր ամէն բանէ առաջ  
կը տեսնէի բանաստեղծի թագը ճակտիդ, խոպոպ մագերուդ անհան-  
դարտութիւնը գլխուդ եւ այնքան արագ եւ այնքան հոսող քրտինքը:

Զինուոր ընկերս Գրիգոր,

Անգաւազան հովիւ ընկերս՝ վշտակից, խնդակից, արիւնակից եւ  
մանաւանդ բախտաւոր ընկերս:

Վեհափառ ագամանդին վայել է հոգիդ,

Տեսնել քեզ, ըմպել քեզ հետ գինին դարաւոր օրհնութեան, բռնել  
ձեռքդ, գայն պահել ափիս մէջ եւ ներաշխարհիս փոխանցել, թէ ինչ-  
պէս անհնար է ծովին, հովին, լեռան ու մարդոց մեծ հոգիներու միա-  
ցումը խանգարել:

Թոյլ տուր այժմ ուղեկցել քեզի, ըլլալ ընկեր ճանապարհի, քալել  
ու քալել, քալել ու քալել:

Եւ շարունակել քալել, մինչեւ ո՞ւր, մինչեւ միանանք Յայսմա-  
ւուրքիդ ճանապարհ խաչին, հանել երազներու պարոյկները ու եղա-

նակներուդ բանով, մեղեդիներուդ արբունքով պարել Սասուն-ցինե-  
րու Պարը:

Դուռդ շուտ բաց որ չմըսիմ Թորոնթոյի ձիւներուն տակ:  
Համբոյրով՝

ԱՐՄԷՆ ՏՕՆՈՅԵԱՆ

Գրող, հեղինակ, պատմաբան,  
խմբագիր, հրատարակիչ, դաստիարակ

10 Յունիս 2008

(«Ճանանչներ» գիրքէն)



«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու գիրքի  
գինեձօնէն տեսարան մը

Շատ սիրելի Գրիգոր,

Կը յուսամ թէ մարմնապէս առողջ ես, ու ըստ սովորութեան կը շարունակես գրական աշխատանքներդ: Իբրեւ բժիշկ, կը փափաքիմ նկատողութեանդ յանձնել այն իրողութիւնը, որ անձի մը համար երկրորդական կարեւորութիւն ունի իր տարիքը, երբ ան մարմնապէս առողջ է ու մտքով պայծառ. շարունակէ գրութիւններդ, ու բոլորս հաճոյքով պիտի ըմբոշինենք զանոնք: Օտար շատ մը գրագէտներ իրենց գլուխգործոցները արտադրած են հասուն ու երբեմն յառաջացած տարիքին:

Պէտք է ամօթով խոստովանիմ, որ ցարդ գրութիւններդ մասամբ միայն կարդացած էի. սակայն անցնող 2-3 շաբաթներու ընթացքին, ամբողջութեամբ կարդացի հատորներու մէջ տեղ գտած բոլոր արձակ գրութիւններդ, ինչպէս նաեւ բանաստեղծութիւններդ. ու այժմ կարող եմ անվարան հաստատել, որ անոնք մեծապէս տպաւորիչ են թէ՛ իրենց քանակով եւ թէ՛ որակով: Անոնք կենդանի պատկերներն են հայ ժողովուրդի բեկորներուն աստանդական կեանքին երեսները ընդգրկող բոլոր դէպքերուն, գաղութներու կեանքը կերտող նուիրեալ վաստակաւոր անձերուն, ինչպէս նաեւ ապրումներու ու տառապանքներու, արտադրուած պարզ, սահուն ու մաքուր լեզուով. սպառիչ ու համբերատար աշխատանք՝ սքանչելիօրէն կատարուած:

Շատ ազդուած եմ կարդալով Հալէպի, ինչպէս նաեւ Սուրիոյ ձօնուած բանաստեղծութիւններդ, որոնք հայ ժողովուրդին սէրն ու երախտագիտական զգացումները կը վերահաստատեն սուրիացի ազնիւ ժողովուրդին հանդէպ, որ մօտ դար մը առաջ «ասպետական ոգիով» տէր եղաւ հայ որբերուն:

Մեր բոլորին սիրելի եւ պաշտելի երազային Հալէպի անցեալին կը պատկանի այլեւս...: Դէպքերու, կացութիւններու, ու նաեւ սրտիդ խորքէն բխած գրութիւններդ սքանչելի բերկրանք մը կարելի է նրկատել. կը շնորհաւորեմ քեզ ջերմապէս, յուսալով վերստին ըմբոշինել այլ գրութիւններդ:

Բարեւներով՝

ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆ

Թանկագին եւ սիրելի Գրիգոր Հոթոյեան,

Շնորհակալութեամբ ստացած եմ նօթագրեալ բանաստեղծութիւններուդ ու ներբողականներու հոյակապ հատորդ:

Հայեցի պահպանման միտող այս գործդ մեծապէս գնահատելի է ու ծափահարելի: Քու կեանքի վաստակը կը հիացնէ զիս: Իբրեւ ազնիւ մտաւորական, ուսուցիչ, տնօրէն եւ մեր մամուլի վեթերան աշխատակից, դուն այն ընտրեալներէն ես, որ մեր մշակոյթի ու գրի եւ գրականութեան սէրը եւ պաշտամունքը ներմուծեցիր մեր նորահաս սերունդներուն:

Յանձինս քեզի, մեր մշակոյթը ունի մշտարթուն դրօշակակիր մը, որ անսպառ եռանդով, տաղանդով ու մանաւանդ ազգային գիտակցութեամբ կը սատարէ մեր ժողովուրդի ազգային կենսունակութեան: Քու մէջ միաձուլուած է իրաւ մտաւորականը եւ հայրենասէր հայը, որու պաշտամունքի խորանը հայ գիրն ու գրականութիւնն է: Արդարեւ այս բացառիկ երեւոյթ մըն է մեր իրականութեան մէջ:

Վերջապէս, քեզ կը նկատեմ հետզհետէ նօսրացող մամուլի աշխատակիցներու փաղանգի ամէնէն փայլուն ներկայացուցիչներէն մին:

Գրիչդ միշտ դալար:

Շատ Սիրով՝  
ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆ  
Գրող, հրապարակագիր

Լոս Անճելըս Մօնթրօզ,  
Ապրիլ 12, 2010

(«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքէն)



## ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ...

Հաճոյքով եւ հիացումով հետեւեցայ «ՃԱՆԱՊԱՐՀ»-իդ եւ կը վկայեմ:

Շարժող անձ մը, ազգը շարժող անձ մը՝ Հոթոյեան Գրիգոր անուն, Տէր Զօրի աւագներէն կազմուած եւ Գանատայի սառոյցներուն վրայ թիւփար:

Սքանչելի եւ սքանչացող մարդ, հաւատաւոր եւ արմատական քրիստոնեայ, Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինապահ զաւակ եւ սպասաւոր, Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Աթոռին անվերապահ պահակ եւ անսակարկ զինուոր, Հայրենիքի անկախութեան «մեռնող» հերոս, Հայ մշակոյթի աւանդապահ սպարապետ եւ Հայ ոգիի անպատեան սուր:


«ՃԱՆԱՊԱՐՀ»-դ՝ ցեղիս փշապատ թէ գորգապատ շառաւիղներու շղթայ, ուր «Փոքր Ածու»-ին լուսեղէն թէ մթաստուեր հետքերը վայրկեաններու պէս կը սահին՝ կազմելով ցեղիս սեւ ու ճերմակ թէ գունագարդ պատմութիւնը վերջին մէկ դարուն:

Սիրելի եղբայր, Խորենացիին եւ Եղիշէին աշակերտ ու հիացող եղբայրդ, երբ խոր համոզումով եւ ակնածանքով կը հետեւի անոնց լուսեղէն ճանապարհին, քու «ՃԱՆԱՊԱՐՀ»-դ ընկալելէ ետք, անվերապահօրէն կը յայտարարէ իր յարգանքը մերօրեայ դժուարին եւ մութ պայմաններուն դիմաց նոր ճամբաներ կերտող Նոր Խորենացիներուն եւ Եղիշէներուն:

Վարձքդ կատար:

Մնամ սիրով եւ օրհնութեամբ՝  
ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Կաթողիկոսական Փոխանորդ  
Կիպրոսի Հայոց

(«Ճանանչներ» գիրքէն)



**«ՃԱՃԱՆՉՆԵՐ»**  
(ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ)

2010-ին, Թորոնթոյի «Փոսթնեթ» հրատարակչութեան կողմէ լոյս տեսաւ Գանատահայ բանաստեղծ, արձակագիր եւ հրապարակագիր Գրիգոր Հոթոյեանի «Ճաճանչներ» խորագրեալ վերջին հատորը, ուր ամփոփուած են հեղինակին հատորի վերածուած կամ անտիպ մընացած քերթողաչունչ ստեղծագործութիւնները: Սոյն ծաւալուն գործը հրատարակուած է մեկենասութեամբ Հոթոյեանի դուստրին եւ թոռներուն կողմէն:

Պէտք է ըսել, թէ «Ճաճանչներ» քերթողագիրքը կը հաստատէ այն իրողութիւնը, որ Գրիգոր Հոթոյեան, հակառակ իր բազում հոգերուն եւ զբաղումներուն, եղած է հաւատարիմ խնկարկուն հայ քերթողական արուեստին՝ ըմբոշխնելով մտերմութիւնը հայ գրականութեան եւ մշակոյթի երախտաւորներուն:

Հիմնականին մէջ, «Ճաճանչներ» խորագրեալ հատորը կը բաղկանայ 427 էջերէ եւ կ'ընդգրկէ հետեւեալ բաժինները. «Յառաջաբան երգերու հերկեր», «Երգեր» եւ «Բանաստեղծութիւններ» եւ «Գրախօսականներ եւ վկայութիւններ «Ճանապարհ»-ի հրատարակութեան առթիւ»:

Գրիգոր Հոթոյեանի քերթուածներուն գլխաւոր թեման սէրն է, որուն շուրջ կը թաւալին իր ազգային, հայրենասիրական եւ քնարաչունչ ապրումները: Ան կը հաւատայ, թէ առանց սիրոյ՝ բնութիւնը կը պարզէ յատկանշական ոչ մէկ իմաստ, եւ թէ սիրոյ բարերար ներգործութեամբ կը քաղցրանայ կեանքը՝ յուսադրիչ զեղումներով, ինչպէս կը վկայեն հետեւեալ տողերը.

Սիրատեցիկ ցայտաճփներով,  
Կամրջեցիր սիրտդ սրտիս,  
Իմաստ տուիր ունայն կեանքիս,  
Ըղձանցներուս մարմին տալով:

Հատորին երկրորդ բաժինը կը կրէ «Բանաստեղծութիւններ» խորագիրը, որուն բաղկացուցիչ տարրերը կը հանդիսանան հայրենիքը, հայ ժողովուրդի պատմական անցեալը, Սասունը, մանկութեան օրերը, մայրական սէրը եւ հայ մշակոյթը:

Գրիգոր Հոթոյեանի չափածոյ գործերէն ոմանք ունին կենսագրական բնոյթ, ինչպէս՝ «Արմատներս Հօրենական» խորագրեալ բա-



նաստեղծութիւնը, ուր հեղինակը կ'ըսէ, թէ ինք սասունցի է, թէեւ ծնած ու մեծցած արաբական Հալէպ քաղաքը, բայց իր ընտանիքին արմատները կը ստանան իրենց ոգեղէն աւիշը հայ քաջորդիներու արծուբերոյն Տարօն բնաշխարհէն: Այս առնչութեամբ, հեղինակը կու տայ հետեւեալ վկայութիւնը.

Իմ լեռնցի հայրս կու գար դիւցազնական այդ երկրէն,  
Մակար, Գալէ ծնունդ տուած քաջ Սպաղանք աւանէն,  
Ուր մեծցած էր ազգայնաշունչ մթնոլորտով հայկական,  
Ուսանելով Սուրբ Կարապետ վանքի լոյսով սրբազան:

Արգարեւ, Սասնոյ լեռնաշխարհին, դալարագեղ հովիտներուն եւ ծաղկածիծաղ վայրերուն վայելչութիւնը կը գովաբանէ նաեւ Հոթոյեան՝ «Սասունական», «Գէորգ Չաւուշ», «Գալէ Սպաղանցի» եւ «Տարօն Աշխարհ» խորագրեալ քերթուածներով:

Այս առումով, գաղափարապաշտ բանաստեղծն է ան, որ կ'ընթանայ Սասուցի Դաւիթներու, Մհերներու, Մամիկոնեաններու, Գէորգ Չաւուշներու, Սերոբ Աղբիւրներու, Դրօներու եւ արութեան վսեմ գործեր կատարած հայ մեծանուն հերոսներու գաղափարական ուղիէն:

Բանաստեղծ Հոթոյեան ազգասիրական խոր տենչերով կապուած է իր ցեղի արիւնոտ տառապանքին, որուն սրտայոյզ վկայութիւնն է «Զրոյց Եփրատին Հետ» խորագրեալ քերթուածը, ուր ան կ'ոգեկոչէ յիշատակը այն բիւրաւոր հայ կոյսերուն եւ մայրերուն, որոնք 1915 թուականի հեղեռնաշուք տարիներուն յանձնուեցան Եփրատ գետի մահազալար յորձանքներուն՝ իրենց պատիւն ու արժանապատուութիւնը անաղարտ պահելու նախանձախնդրութեամբ...:

Այս իրողութեամբ, բանաստեղծը կ'ըսէ, թէ 1915-ի արհաւիրքէն ճողոպրած տարագիր հայերը աշխարհի տարբեր գաղթօճախներու մէջ կերտեցին յուշարձանը Եղեռնի՝

Որպէս կոթող ու դամբարան արիւնի,  
Նահատակուած երկու միլիոն հայերու,  
Երկու միլիոն տառապահար սրտերու,  
Որոնց անթաղ մասունքները անտերունչ,  
Լո՛ւն կ'արտասուեն գիշեր-ցերեկ դառնաշունչ:

Հայրենասէր բանաստեղծն է Գրիգոր Հոթոյեան, որ կը հաւատայ մեր հայրենի երկրի լուսապայծառ ապագային: Ակնարկելով պատմական Հայաստանի բռնազրաւեալ հողերուն՝ կ'ըսէ, թէ պիտի գայ այն օրը, երբ հայկական դրօշը պիտի ծածանի Արարատի գագաթին եւ Տարօնն ու Վանը պիտի վերամիանան Մայր Հայրենիքին:

Կրօնասէր բանաստեղծ է նաեւ Գրիգոր Հովթոյեան, որ կ'ըսէ, թէ Սուրբ Էջմիածինը, Լուսաւորիչի կանթեղը, հայոց հնազարեան տաճարները, սրբատաշ խաչքարերը, Մեսրոպ Մաշտոցն ու հայոց լեզուն, հոգեւոր երաժշտութիւնն ու շարականները եւ հայ հոգին կը հանդիսանան սրբախորհուրդ իմացումները հայ ժողովուրդին:

Հատորին երրորդ եւ վերջին բաժինը յատկացուած է հայրենի եւ սփիւռքահայ կարգ մը գրողներու այն գրախօսականներուն, որոնք կը վերաբերին Հովթոյեանի «Ճանապարհ» խորագրեալ գործին:

Արդարեւ, կ'ուզենք հաստատել, թէ «Ճանապարհ» խորագրեալ հատորը վկայութիւնն է այն աշխատանքին, զոր կատարած է Գրիգոր Հովթոյեան երկար տարիներ՝ յարատեւ եւ անսակարկ նուիրումով...:

**ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ**  
Բանաստեղծ, արձակագիր,  
հրապարակագիր

**Պէյրութ-Լիբանան**

(«Անցեալի Յուշերով Կ'ապրինք» գիրքէն)



«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքի  
շնորհահանդէս-գինեձօնէն տեսարան մը

## ՇԱՏ ՍԻՐԵԼԻ ԳՐԻԳՈՐ

«Եօթներորդ Հանգրուանը» կարդալու հետաքրքրութիւնս մեծապէս աւելցաւ, երբ «ՀՈՐԻՉՈՆ»-ի մէջ նպաստաւոր յօդուած մը կարդացի եւ ընդհանուր գաղափար մը ունեցայ: «Հեղինակին կողմէ» մուտքի երկու էջերդ ալ կարդալով՝ ա՛լ աւելի իմաստալից դարձան կարդացած պատմուածքներս:

Մօտ հինգ հարիւր էջնոց գիրք մը ի՞նչ մեծ համբերութեամբ կրըցեր ես ձեռագրով գրել — փոխան համակարգիչի — իսկապէս զարմանալի կը գտնեմ: Եւ խորհիլ թէ աւելի քան վաթսուս տարիէ ի վեր մեր լեզուով կը գրես, միշտ նորը եւ հետաքրքրականը փնտռելով: Քու գըրածդ իսկական գրականութիւն է, ամբողջովին մտքէդ ու հոգիէդ ծնած եւ մի քանի տեղեր միայն ուսումնասիրութեան վրայ ապաւինելով:

Պատմած հէքեաթներդ անգամ — «Արդարութիւն, Քեզ Կը Սպասենք» — պարզ փոքրիկներու յարմար պատմութիւններ ըլլալէ անդին՝ հայրենասիրական ներշնչումով գրուած են եւ շատ իմաստալից են եզրակացութիւններդ: Կը մաղթեմ, որ ամէն հայ որ Հարիւրամեակի բողոքներուն մասնակցի՝ կարդացած ըլլայ այդ պատմութիւնը եւ գիրքդ ամբողջ, նախքան բողոքի շարքի մէջ մտնելը:

Ես ալ մի քանի ամիս առաջ՝ նկարներով ու քարտէսներով հարըստացած, մեր Դատի մասին պահանջներու շարք մը գիրքով մատնանշեցի: Մեր նախակրթարանի ուսուցիչներէն մէկուն թոյլ տուի, որ էջ-առ-էջ թերթատէ ու հասկնայ պարունակութիւնը: Երբ գինը տեսաւ, «Ես գալ տարի ալլեւս ուսուցիչ պիտի չըլլամ» ըսելով գիրքը վար ձգեց ու հեռացաւ...: Այսքան անտարբերութիւն մեր Դատի մասին հաւատալս չեկաւ:

Կը զարմանամ, թէ ինչո՞ւ կարգ մը գրութիւններուդ մէջ բոլոր հերոսներդ — բարի ըլլան թէ չար — օտար անուն ունին: Եթէ նոյնիսկ իրողութեան վրայ հիմնուած են այդ հերոսները, կ'արժէ երբեմն հայ անուններով կոչուիլ: Մանաւանդ Հալէպի բնակիչներ, իսկապէս զգացումներով ՀԱՅ են, ըստ Մելգոնեանի ծանօթներուս:

Բոլոր պատմածներուդ ամէնէն հայրենասիրական եւ իմաստալիցը նկատեցի Լենկթիմուրի յարձակման ընթացքին «Ձանգեզուր» նահանգին կոչումը եւ այդ շարժող սիւնը գոմէշներով փրկու փորձը: Երբ այդ սիւնի «երկրաշարժի ազդարար» յատկութիւնը իմացայ եւ իննբորդ դարուն հնարուած ըլլալը կարդացի՝ իսկապէս հիացայ մեր ազգի իմաստութեան վրայ: Այլ ազգեր սոսկալով երկրաշարժի ահեղ ուժին վրայ՝ միայն իրենց փախչելու մասին կը խորհին եւ ոչ՝ անոր մօտենալը իմացնող «ազդարար» մը հնարելու մասին:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ

Մտաւորական, դաստիարակ, գիտնական

(«Մայրամուտի Ցոլֆեր» գիրքէն)

*Սիրելի՛ եղբայր Գրիգոր,*

*Հաճելի էր եւ այլապէս բաւարարող հանդիպիլ քեզի թորոնթոյի մէջ, մանաւանդ խոհակից եւ ազնիւ դէմքերու հետ:*

*Յղբօրս մահուամբ ստեղծուած պայմաններուն մէջ, վերադարձիս միայն առիթը ունեցայ մուտք գործել «Եօթներորդ Հանգրուան»: Ի՛րա՛ւ եօթներորդ, կարծես՝ տեսակ մը խորհրդաւոր եօթներորդ երկինք, ուր կը գտնես հետաքրքիր պատումներ եւ ուր, մինչեւ հոն՝ հայուն Ոսկեղնիկը եւ անոր նկատմամբ հայ գրողին մտահոգութիւնները:*

*Գնահատանքի զգացումներ ունիմ բազմաշխատ եւ բազմերանգ նիւթերուն կապակցութեամբ: Ընդարձակ արտերկրին մէջ իբր գրող, այս քանի՛ տեսակ թեմաներ հայ մտաւորականը պէտք է շօշափէ, որ բաւարարուի իր յար տազնապող հոգին:*

*Ուրախ եմ, որ տարիներուն հետ կ'աճի նաեւ արարումներուդ հարստութիւնը: Հարստութիւն՝ որ անկորնչելի է եւ մնայուն:*

*Արդար հպարտանք պէտք է նկատել բովանդակալից եօթը հատորներու վաստակդ:*

*Կը բաժնեմ ուրախութիւնդ:*

*Ջերմօրէն կը գնահատեմ սիրով գեղուն ընտանեկան պարագաներուդ գուրգուրալից վերաբերմունքը:*

*Նոր տարուան սեմին՝ առողջութեան մաղթանքներով եւ լաւագոյն զգացումներով՝*

*ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆ  
Գիտնական, դաստիարակ,  
հեղինակ*

12-13-14

(«Մայրամուտի Ցոլֆեր» գիրքէն)



Միրելի ընկեր Գրիգոր Հովթոյան,  
Դասական դարձուածքով՝ շնորհակալութեամբ ստացայ «Նուիրում» վերնագրեալ գիրքդ:

Առաջին գիրքիդ ծանօթացայ «Նուիրում»-ի վկայութիւններ, կարծիքներ բաժինէն:

Սասուն, Հալէպ, Թորոնթօ... Օտարութիւն, օտարացում... Երբեք:

Աշուղ մը՝ Սասնոյ սարերէն փրթած կարծր ժայռաբեկոր մը, տափաստաններու վրայ փշրուած ու կտրուած... Հեռաւոր հորիզոններու, ցեղի, բարձունքի, մարդու, մարդկային կարօտով...

Եւ... ահա աշուղի մը ծնունդը:

Վստահ եմ որ տաղերը, բառերդ՝ զգացումներդ աւելի եւ աւելի գեղեցկացած են երաժիշտներու ալ թրթռացումներով եւ երանգներով: Կը շնորհաւորեմ. շնորհաւոր ծնունդ:

Բայց՝ վերի ըսածներուս հունցը՝ շաղելով խմորը միապաղաղ հաւասար զանգուած դարձնել: (Մալխասեան) Երկնուած է առաւելաբար Հալէպի «Սեւան» (Սիմոն Սիմոնեան) ուրիշ ժայռաբեկոր մը, «Նայիրի», «Արեւելք» տպարաններուն մէջ, Հալէպի «Ոսկեդար»-ի օրերուն, ուր խտացած էր Հալէպի հազարամեայ հայութեան «Սերուցքը», թագադրուած «Մէպիլի վրաններուն տակ» չարաբախտ օրերով ալ:

Դուն ապրեցար այդ օրերը:

Պարտաւորութիւններ, անշուշտ որ ունիս, ունիմ, ունիք:

«Երազային Հալէպը» ուռուցիկ գործէն ետք, կ'ուզեմ որ դուն ալ տաս քու արձակովդ, արձակ-համարձակ Հալէպի տպաւորութիւններդ՝ «Հալէպը»: Ուր պիտի ազատուիս քերթողական օրէնքներու կաշկանդումէն (ականջը խօսի Պրն. Պ. Թ. Կերոնեանին) ճիշդ մատնանշում մը:

Վերը միայն տպարանները յիշեցինք, հապա ակումբները, հայրենակցական միութիւնները, Տարօնական Շարժումները, ներգաղթը, հայրենասէրն ու հայրենադաւը, թատրոնները, դաշտահանդէսները, Հալէպի երեւելիները, սասունցի փոռապանները, քէմփերը, դպրոցները: Բոլ գրիչիդ բան մը չե՞ն ըսեր... Այո՛, արձակ-համաձակ, արձանագրէ, որ կորուստը իջնէ նոսրագոյնի, ինչե՛ր անհետ կը կորսուին:

Գոնէ փրթուծ մը եւս փրկենք:

Ընթերցող բարեկամի մը այսքան պահանջկոտութի՞ւն... ի սէր Հալէպի՝ մայր գաղութի:

Ծառուկեանը իրականութիւնն ու ճշմարտութիւնը գիտցողն էր, բայց... խօսիլը՝ յաճախ սակարկութեան առիթ իրեն համար...:

Առողջութեան մաղթանքներս, շէն մնաս, պայծառ մնաս, աղքատաց գանձանակն է: Նորութիւններուդ սպասող, ընթերցող

Սիրով՝

ՌՈՒԲԷՆ Գ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Գրագէտ, թատերագիր, պատմագիր

10 Սեպտեմբեր 2004, Հալէպ

(«Ճանապարհ» գիրքէն)

## ԳՐՈՂԻ ԿԵԱՆՔԸ ԱՇԽԱՏԱՆՔ Է

«Եօթներորդ Հանգրուան» գիրքի հրատարակութեան առթիւ

Մեծայարգ եւ սիրելի Պրն. Հոթոյեան, շնորհակալութեամբ ստացայ նոր գիրքդ՝ «Եօթներորդ Հանգրուան» հատորը՝ նուաստիս շուայլած խօսքերովդ մակագրուած, որը շոյեց անձս: Սակայն ձեր տաղանդի ուժով եւ վարպետութեամբ դուք ինձ ստիպեցիք այս անգամ եւս հետեւիլ ձեր հոգեկան աշխարհին:

Ճանապարհորդութեանդ եօթներորդ հանգրուանը ճանապարհորդութիւն է դէպի անիմանալին, ես, այնուամենայնիւ մտնելով ձեր՝ գրողի աշխարհը, մուտք գործեցի նաեւ իմանալիի ոլորտները: Գիրքդ կարգացի մէկ շունչով, որը աչքի կ'իյնար բազմաթեմայնութեամբ, կերպարներու այլազան բնոյթով եւ անոնց համապատասխան տարբեր ոճերով: Անոր բազմաթեմայնութիւնը կը բացատրուի գրողի, բանաստեղծի հոգեկան աշխարհի հարստութեամբ:

Գիրքիդ յառաջաբանին մէջ հետեւեալ միտքը կ'արտայայտէ Տէր Մեղրիկ Սրբազան Եպիսկոպոս Բարիքեան.

«Պրն. Հոթոյեան իր այս հատորով մեզի կը ներկայանայ դարձեալ բարոյական արժէքներով, քրիստոնէական սկզբունքով եւ ազգային արժանապատուութեամբ զեղուն սրտով մը, որովհետեւ Գրիգոր Հոթոյեան կը նշանակէ՝ բարոյական արժէքներով եւ սկզբունքներով առլցուն խորհուրդ»:

Պրն. Հոթոյեան, այդ առանձնայատկութիւնդ գրաւեց նաեւ իմ ուշադրութիւնը ընթերցման ժամանակ: Իմ կարծիքով, ձեր բոլոր գրութիւններուն մէջ, ըլլայ ան պատմութիւններ, յօդուածներ, բանաստեղծութիւններ, տարբեր գրութիւններ, ի սկզբանէ դրուած է հոն ինչ որ հոթոյեանական խորհուրդ: Այսպէս օրինակ՝ ձեր պատմուածքները մարդկային խորհուրդներու փոխանցման միջոց է, քանզի ընթերցողի մտքին կը ներշնչէ համակրելի, գրաւիչ եւ զօրաւոր մտածողութիւն մը, ներթափանց եւ մտերմիկ, որոնց մէջ դուք կրցած էք խորհուրդները արտայայտել ճշգրտօրէն, հարազատօրէն եւ պարզօրէն, անոնք մնայուն արժէք ունեցող բարոյական դաս մը կը պարունակեն, կարդացողին սրտին կը խօսին եւ անոր յիշողութեան կը փակչին դիւրութեամբ: Եւ այդ հիւսուած պատմութիւններուն մէջ բազմաթիւ են այն էջերը, ուր բնորոշ է հերոսի կամ հեղինակի դրական ու սրտակից վերաբերմունքը:

Այդպէս կը հնչեն ինձ համար նաեւ ձեր բոլոր բանաստեղծութիւնները: Գործերուդ մէջ կայ նաեւ թիւերու պոեզիա՝ 215-ամեայ, 50-ամեայ յոբելեան ունեցող պատմական իրադարձութիւններ, ծը-

ներնդեան թիւ, տարեդարձ: Ես գիտեմ, որ հայ ընթերցողին համար այդ թիւերը սուրբ են: Թիւը բանաստեղծութեան մէջ կը շարժի ո՛չ որպէս մարզադաշտի «թուատախտակ», ո՛չ որպէս լուսային ազդ տան վրայ, այլ որպէս գրողի, պատմողի կենդանի ձայն:

Սիրելի գրող, ձեր բանաստեղծութիւններուն մէջ դուք նաեւ գր-  
ծագրիչ էք. «Հալէպ Սիրասուն» գործին մէջ կ'ըսէք.

Ես կարօտցած եմ քու հնադարեան  
Բերդը տեսնելու սիրով անսահման...

Ես կարօտցած եմ անապատային  
Զով գիշերներդ՝ լուռ, երազային...

Ես կարօտցած եմ Քառասնից Մանկանց  
Առաքելական Սուրբ Եկեղեցին...

Հալէպ կամ Բերիա քաղաք տարանցիկ  
Կարաւաններու առեւտրական...

Այստեղ դուք խօսքի գծագրիչ էք: Այս բնանկարներու մէջ դուք կըրցած էք տալ դիմանկար, դիմանկարի մէջ՝ բնանկար: Այս բոլորը բառեր են, որ թուղթէն պիտի փոխադրուին կտաւի վրայ: Առանց այս արբեցուցիչ, զնգուն անուններու, ի՞նչ նշանակուածիւն պիտի ունենար Հալէպը կամ Բերիան, հնադարեան բերդը, բազմադարեան հայերէն լեզուն, կամ Քառասնից Մանկանց առաքելական սուրբ եկեղեցւոյ մասին ձեր յիշատակութիւնները...

Այս բոլորի աշխարհը չէր բացուեր, եթէ անոր հետ միաժամանակ չբացուէր ձեր աշխարհը, գրելու աշխարհը, ինչպէս Սուրբիան, անոր կոթողները, արեւը, լեռները շնչաւորած էք, իսկ մարդը՝ յաւերժացուցած: Ինչպէս՝ զաւակներուդ եւ թոռներուդ մասին, հոգեւորականներու մասին, բանաստեղծի մասին, Վարագի մասին: Եւ ինձ թուաց թէ ես ոչ միայն բանաստեղծութիւն կը կարդամ, այլ նաեւ կը գրուցեմ կեանքով ապրող ժամանակակից կերպարներու հետ: Գրելով այս տողերը, ես գրեթէ Փիզիքապէս զգացի պատասխանատուութիւն, պատասխանատուութիւն եւ երկիւղ, երկիւղ եւ ուրախութիւն: Այս աշխարհէն դացած բոլոր հոգիները կը լռեն, իսկ այս աշխարհի մէջ ողջ առողջ ապրողները կը յուզուին եւ կ'ուրախանան:

Եւ այս բոլորը կենդանի մարդու կենդանի ուղեկիցներն են, զգացումներու եւ խոհերու ճշմարիտ թարգմանները, եւ չխուճացող վաւերաթուղթերը միաժամանակ: Որքան մեծ է տաղանդը, այնքան աւելի աշխատանք կը պահանջէ: Կը նշանակէ՝ դուք աշխատած էք, ինչպէս «վաստակած սերմնացանները»:

Պրն. Հոթոյեան, ձեր հոգին նման է գինիով լի սափորի, ուր կ'ե-  
ռայ նոր քամուած գինին, կը թափի սափորի կաւէ շուրթերէն բնական  
խօսքով, պարզ ու խտացուած:

«Եօթներորդ Հանգրուան»-ի մէջ առկայ էր կեանք, կենդանի  
շունչ, ապրումի իսկութիւնն ու բանականութիւնը: Եւ վերջապէս,  
«Եօթներորդ Հանգրուան»-ը իսկական ստեղծագործութիւններու ու-  
ղեւորութեան հանգրուանն էր:

Սիրելի Պրն. Հոթոյեան, կը ցանկամ որ ձեր ջանքի թեթեւ ու խըն-  
դուն լոյսը շողայ երկար տարիներ եւ բազում սերունդներու ճանա-  
պարհին:

Կը մաղթեմ ձեզ, նաեւ համեստափայլ տիկնոջդ՝ Շաքէին, քաջա-  
ռողջ կեանք եւ արեւշատ օրեր:

Մնամ անկեղծ եւ ջերմ գգացումներով եւ յարգանքով՝

ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ  
Մտաւորական, դաստիարակ,  
հրապարակագիր

(«Մայրամուտի ծովեր» գիրքէն)

\*  
\*  
\*

## ՆԱՍԱԿ ՀԱՅ ԳՐԱԳԷՏԻՆ

Սիրելի Պրն. Գրիգոր Հոթոյեան,

Խորին շնորհակալութեամբ ստացայ «Ճանապարհ» հատորը:  
Գիրքդ վաղուց ստացած էի, սակայն երկու խօսք գրելու ուշացումիս  
պատճառը պատահած անակնկալ դէպքն էր, որ վիրաւոր ձեռքովս չէի  
կրնար միտքս շարադրել ու գրել:

Սակայն այդ երկար ժամանակահատուածը ինծի առիթ ընծայեց  
լրջօրէն, ծայրէ ի ծայր կարդալու գիրքդ: Սուտ խօսած պիտի ըլլամ,  
երբ ըսեմ, թէ մէկ շունչով կարդացի զայն: Լեցուն՝ որ է, գիրքդ կը  
պարտադրէ ուշադիր ընթերցում, որպէսզի ըմբռնես բոլորը իր բազ-  
մազան երեսակներով:

Սիրելի Պրն. Հոթոյեան, մասունքի պէս թանկ արժէք ինծի համար  
«Ճանապարհ» հատորը: Անշուշտ դժուար է գրութեան մը շրջանակին  
մէջ համապարփակ երկու խօսք ըսել քու «Ճանապարհ»-որդութեանդ  
համար, զոր կարդացի խորին գգուշութեամբ: Լեցուն, ինչպէս կրնայ  
լեցուն ըլլալ նուազ մը, իր սեղմ ու արնաներկ ամբողջութեան մէջ: Ան  
կատարեալ միաձուլումն է այն բոլոր տարրերուն, որոնք կը կերտեն



կեանքով բաբախուն սիրտը պատմական եղելութիւններու ընդմէջէն: Այդ տարրերը՝ յուշագրութիւն, տեղեկագրութիւն, դէպքեր, դէմքեր, յօդուածներ, վկայութիւններ, հարցազրոյցներ, երգեր, բանաստեղծութիւններ եւայլն, եւայլն... Այս բոլորը դուն մշակած ես հաւասար յաջողութեամբ, վարպետի մը նման: Քու ստեղծագործ ոգին կը տրոփէ այս հաստափորիկին ընդմէջէն, ուր շռայլօրէն կերտած ես բազմաաքանչելի գրութիւններ: Ընթերցողը ճանապարհ կ'ելլէ ոչ միայն տեսնելու Տէր Զօրը, Եփրատը, ճանչնալու Ռազգան, այլեւ զգալու զանոնք: Քու հոգիդ տրոփած է նաեւ բանաստեղծութիւններու մէջ: Լեզուդ համեղ է եւ ոճաւոր, մեծապէս հարուստ իր բառամթերքով: Համեղ կոչեցի լեզուդ, քանի որ բանաստեղծական երանգաւորումը ճկուն էր, ուր կ'երգես սիրոյ գեղեցկութիւնը:

Ուրեմն կը շնորհաւորեմ գրքին լոյս ընծայումը: Շատ շնորհակալ եմ Ձեր ինծի նուիրած օրինակին համար: Սրտառուջ սիրոյ եւ անհուն կարօտի կոթող մըն է «Ճանապարհ»-ը:

Այս սողերը գրեցի սիրողական հարկադրանքով:

Արեւշատութեան, քաջառողջութեան ու ստեղծագործական բեղուն գործունէութեան անկեղծ մաղթանքներով մնամ Ձերդ յարգալից՝

ՍԵՂԱ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ  
Մտաւորական, դաստիարակ

14 Դեկտեմբեր 2008

(«Ճանաչչներ» գիրքէն)



«Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանի ընկալումէն ետք,  
Գրիգոր Հոթոյեան տիկնոջ՝ Շափէին հետ

## Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Գրիգոր Հոթոյեան, ազդուած իր շրջանակէն եւ իր անձնական փորձառութիւններէն, գրած է «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» պատմուածքներու շարքը, ուր ներկայացուցած է ճիշդ ապրելու միջոցները: Ան այս պատմուածքներուն ընդմէջէն պատասխանած է զանազան հարցումներու, որոնք կը ծագին իւրաքանչիւր անհատի մտքին մէջ: Եւ աւելին, անոնք հայու մտածումները կը խճողեն, ըլլան անոնք բարոյական, ընկերային կամ ազգային: Գրիգոր Հոթոյեան կարծես այդ պարզ, բայց արժէքաւոր բառերուն տակ պահած է խաղաղութեան ու բարութեան բանալին, որ պիտի փրկէ մարդիկը սխալ ճամբաներէ: Գիրքին մէջ կան նախադասութիւններ, որոնք կարծես դարձած են մէյ մէկ թնդանօթներ եւ «ուբալիոճած» են այն հսկայ պարիսպները, որոնք պաշարելով մարդասիրութեան անդաստանը՝ կ'ուզեն խեղդել աստուածային սուրբ կանչը:

Պատմուածքներու այս շարքը կը թափանցէ մարդոց ամէնօրեայ գաղտնիքներուն, ընտանեկան ու ընկերային յարաբերութիւններու եւ ազգային ու հայրենասիրական մտահոգութիւններու մէջ: Հեղինակը ներկայացուցած է այս բոլոր հարցերուն պատճառներն ու լուծումները դէպի լաւին ձգտելու միտումով: Կարգ մը վերնազիրներու տակ ընթերցողը կրնայ զգալ Յիսուսի շունչը, կարծես ան հրաշքով մը շարժած է գրագէտին ձեռքը եւ կրկին անգամ ըլլալով փոխանցած է իր պատգամները, ինչպէս Պօղոսին փրկութիւնը «Աղօթքին զօրութիւնը» պատմուածքին մէջ, երբ թուրք զինուորներ իջան այն ձորը, ուր 500-է աւելի սասունցի երիտասարդներ արիւնլուսայ մեռած էին, թուրքերը տակնուվրայ ընելով այդ դիակները՝ չկրցան գտնել Պօղոսը, որ արտասանելով «Հաւատով խոստովանիմ»-ի 24 համարները՝ ազատած էր այդ հրէշներուն ձեռքէն: «Բարիք գործել ամէն օր» պատմուածքին մէջ կը տեսնենք փոքրիկ մասնջ մը՝ Սեդրակը, որ հրաշքով մը կրնայ ազատել իր երկու ընկերները՝ Քուէյք գետի յորդառատ ջուրերուն մէջ խեղդուելէն՝ օր մը առաջ ծիծեռնակներու բոյն մը փրկելուն, այսինքն բարիք մը գործելուն պատճառով:

Շարք մը պատմուածքներ կը զօրացնեն ընթերցողին հաւատքը՝ շեշտելով Յիսուս Քրիստոսի պատգամները, ներշնչելով բարիք գործելու շնորհքը եւ իւրացնելով իրաւ քրիստոնեայ ըլլալու տիպարը:

Ուրիշ փունջ մը պատմուածքներու մէջ կ'արտացոլան ընտանեկան ու ընկերային հարցերուն լաւ ու վատ դիմագիծերը՝ վատը միշտ

յաղթուած անհետանալով: Գրիգոր Հոթոյեան խօսած է հայ ընտանիքի արժէքին մասին՝ փառաբանելով հայ հայրերը, ներկայացնելով զանոնք իբրեւ հայ ընտանիքի առաջնորդներ: Ապա բացատրած է յարգանքի անհրաժեշտութիւնը տարեց հայրերուն նկատմամբ եւ խրատած է օգտուիլ անոնց իմաստութեանէն: Յետոյ ան ներկայացուցած է ընկերութեան մէջ լաւ անհատ մը ըլլալու միջոցները, ինչպէս՝ «Բարեգործութիւն եւ ընկերային սէր» պատմուածքին մէջ, ուր Պրն. Հայկ օգնած է աղքատ սաներու՝ շարունակելու համար իրենց ուսումը: Ուրեմն ան շեշտած է այն հաստատումը, թէ մարդ պէտք է ապրի միայն իր անձնական շահերուն համար, այլ նաեւ ընկերութեան շահերը հետապնդելով:

Վերջապէս, Գրիգոր Հոթոյեան ձօնելով այս գիրքը Հայկական Յեղասպանութեան նահատակներուն, ցաւով պատմած է 1915 թուականին պատահած իրողութիւններուն մասին, եւ անոնց ընդմէջէն հաստատած է հայուն վեհանձնութիւնը, հայրենասիրութիւնը եւ ազգասիրութիւնը: Ան շարունակած է բացատրելով, թէ թուրքերը ուզեցին բնաջնջել հայ ժողովուրդը, սակայն չկրցան իրագործել իրենց դժոխային ծրագիրը՝ հայու ապրելու զօրաւոր կամքին շնորհիւ: Աւելին, ան այս պատմուածքներուն ընդմէջէն կը թելադրէ հայ ժողովուրդին սիրել հայ ազգը, հայ եկեղեցին, հայ մշակոյթը եւ երբեք չմոռնալ մայրենի լեզուն, որովհետեւ այս ազգականներն են, որոնք պիտի պաշտպանեն հայ ժողովուրդը ձուլումէ: Ուստի հայ ժողովուրդը միայն պիտի գոյատեւէ, երբ կը սիրէ իր ազգն ու եկեղեցին, կը սորվի իր պատմութիւնն ու մշակոյթը եւ երբ չի մոռնար իր անցեալն ու մայրենի լեզուն:

ՎԱՐԴԻՆԷ ԷԹՈՅԵԱՆ (Վ. Է.)

«ԱԶԴԱԿ»

26 Սեպտեմբեր 2005

(«Ճանապարհ» գիրքէն)



## ՅՈՒՆԵՍԿՈ

Գրիգոր Հոթոյեանը սփիւռքահայ ժամանակակից գրականութեան առաւել շնորհալի եւ ճանաչուած դէմքերից է: Նրա ստեղծագործութիւնները պատանեկան տարիքից տպագրուել են Միջին Արեւելքի, յետագային՝ նաեւ Հիւսիսային Ամերիկայի եւ Եւրոպայի հայալեզու պարբերականներում:

Հոթոյեանի քերթուածների գողտրիկ պատկերները եւ երաժշտականութիւնն իրենց վրայ են բեւեռել երգահանների ուշադրութիւնը, իսկ նրա բառերով ստեղծուած երգերը հաւասարապէս սիրելի են թէ՛ մանուկների, թէ՛ երիտասարդների, եւ թէ՛ մեծահասակների համար:

Վերջին տարիներին Գրիգոր Հոթոյեանի գրական արուեստին հաղորդակից են դարձել նաեւ Հայաստանի ընթերցողները: Ինքը՝ բանաստեղծը 1997թ. եւ 2000թ. այցելել է իր հայրենիք եւ այս դժուարին պայմաններում աւելի սիրել եւ կապուել նրա հետ: Աւելին, Գրիգոր Հոթոյեանը հայ գրողներից եւ բանաստեղծներից շատերին օգնել է ներկայանալ Սփիւռքի ընթերցողին, միաժամանակ իր եւ իր բարեկամների սրտաբուխ նուիրատուութիւններով հովանաւորել այսօր արդէն հայ ընթերցողների կողմից սիրուած մի քանի գրքեր:

Հայրենիքից հեռու ձեւաւորուած, բայց խիստ աւանդապաշտ Հոթոյեանների ընտանիքի երրորդ սերունդն է շարունակում իր նախնիների պատգամած հայապահպանման սրբազան ուխտը Գանատայում: Արտերկրի հաւատացեալ, զգացմունքային եւ պահանջատէր հայութեանն իր անուրանալի վաստակը բերած բանաստեղծի փառապանծ յոբելեանին յղում ենք մեր բարեմաղթանքը՝ «վարձքը կատար, սիրելի Գրիգոր Հոթոյեան»:

ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ  
Տնտեսագէտ, բանաստեղծ,  
դոկտոր-փրոֆեսոր

Երեւան

(«Նուիրում» գիրքէն)



## ԽՕՍՔ ՀԱՅՐԱԿԱՆ

Գրիգոր Հոթոյեան, մեր թեմի ամէնէն հաւատաւոր, անձնուրաց եւ անշահախնդիր ծառաներէն մին է, որ արժանի է ամէն զնահատանքի: Արդարեւ, անցնող աւելի քան քսան տարիներու ընթացքին, մենք՝ որպէս հովիւ, առաջնորդական փոխանորդ եւ առաջնորդ, վկայեցինք ու այսօր կը վերահաստատենք, թէ Գրիգոր Հոթոյեանը եղաւ ճշմարտօրէն արժանի մշակ հայ գրականութեան անդաստանին մէջ, որպէս բանաստեղծ, յօդուածագիր եւ թղթակից, աշխատակցելով ըսփիււքեան եւ հայաստանեան բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու:

Որպէս կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչ, հաւատացեալ հայորդի եւ աստուածավախ քրիստոնեայ, ինքզինք խառնեց Հայ Եկեղեցւոյ կեանքին հետ, նոյնացաւ անոր առաքելութեան եւ տեսիլքներուն հետ:

Տագնապեցաւ ու պայքարեցաւ ի խնդիր հայ մշակոյթի պահպանման, անոր համար ալ, որպէս մշակ՝ արժանի է իր վարձքին:

Կը շնորհաւորենք ձեզ, որպէս քրիստոնէական դաստիարակութեան պահապաններ, ձեր այս գեղեցիկ մտածումին համար, եւ այս առիթով անգամ մը եւս բարձրօրէն կը զնահատենք Գրիգոր Հոթոյեանի գրական վաստակը, անոր մաղթելով երկար եւ առողջ կեանք՝ ի փառս Հայ Դպրութեան եւ ի պատիւ մեր ժողովուրդին:

Աղօթարար՝  
ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՅԱԿՈԲԵԱՆ  
Առաջնորդ Գանատայի Հայոց

(«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքէն)



## ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅԵԱՆ

Սփիւռքի մէջ կան գրական, մշակութային եւ հասարակական գործիչներ, որոնք միայն ու միայն կը ծառայեն իրենց ազգանուէր ուխտին, նոր սերունդի հայեցի դաստիարակութեան, Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տարածքային, լեզուական ու գաղափարական միասնութեան:

Անոնցմէ է բանաստեղծ, արձակագիր, դաստիարակ, լրագրող, հրապարակախօս, ազգագրագէտ, արմատներով սասունցի Գրիգոր Հոթոյեանը:

Ո՞վ է Գրիգոր Հոթոյեան:

Գրիգոր Հոթոյեան գլխագիր հայ մըն է: Հայ ըլլալը էութիւն է իր գոյութեան, եւ անհուն հայրենասիրութենէ մը բխող իր լաւատես հաւատքը անընկճելի է:

Անցած է կեանքի տառապանքի բոլոր ուղիներէն ու հասած է յարգելի դիրքի մը՝ բնաւ չկորսնցնելու հաւատքով իր հայու ոգին եւ բնաւ չհեռանալով հայութեան եւ հայ գրականութեան սէրերէն:

Գրիգոր Հոթոյեան միշտ ըսելիք ունի, լեզուն տոկուն է, ճիշդ, յաճախ բաբախուն, սովորաբար պատկերաւոր:

Ծնած է 5 Օգոստոս 1927-ին, Հալէպ, Սուրիա:

1941-ին աւարտած է Հալէպի Նոր Գիւղ թաղամասի ազգային Սահակեան երկսեռ վարժարանը:

Համաշխարհային Բ. Պատերազմի ընթացքին՝ 1943-ին, զինուորագրուած է Փրանսական բանակին եւ արձակուած 1946-ին՝ ենթասպայի աստիճանով:

Գրաչարութիւն սորված է Հալէպի Ուսուցչական Միութեան «Սեւան» տպարանին մէջ: Ապա որպէս գրաշար, սրբագրիչ եւ աշխատակից մաս կազմած է «Արեւելք» օրաթերթի անձնակազմին:

Տնօրէնութեան պաշտօն վարած է 1950-1951 տարեշրջանին Սուրիոյ Ռազգա քաղաքի ազգային վարժարանէն ներս, ուր նոյն շրջանին հիմնած է կիրականօրեայ դպրոց ու վարած տեսուչի պաշտօն:

1946-էն 1975 պաշտօնավարած է իբրեւ ուսուցիչ եւ տեսուչ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կիրականօրեայ դպրոցներուն մէջ եւ արժանացած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.-ի օրհնութեան եւ գնահատանքի գիրին:

1984-ին Թորոնթոյի մէջ վարած է Հայ Օգնութեան Միութեան ամառնային վարժարանի տնօրէնութիւնը:

Մինչեւ Գանատա հաստատուելը՝ 1975, իբր ելեկտրագէտ աշխատած է Սուրիոյ ու Լիբանանի զանազան ընկերութիւններէ ներս:

Գանատա հաստատուելէն ետք, Թորոնթոյի Հ. Յ. Դ. «Սողոմոն Թէհլիրեան» կոմիտէի կողմէ նշանակուած է պաշտօնական թղթակից «Հայրենիք» օրաթերթին, ապա՝ Գանատայի Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Կոմիտէի օրկան «Հորիզոն» շաբաթաթերթին, նոյն ժամանակ վարելով ներկայացուցիչի պաշտօն «Ազդակ-Շաբաթօրեակ»-ի, «Դրօշակ»-ի, «Բազին»-ի, Հայաստանի «Ազատամարտ»-ի եւ «Երկիր» օրաթերթերուն:

Երեք շրջան վարած է Համազգայինի Թորոնթոյի մասնաճիւղի վարչութեան ատենապետութեան պաշտօնը եւ երեք շրջան՝ Համազգայինի Գանատայի շրջանային վարչութեան փոխատենապետի եւ ատենադպրութեան պաշտօնները:

Երեք շրջան մաս կազմած է Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հոգաբարձութեան՝ իբրեւ ատենադպիր: Եկեղեցւոյ իր ծառայութեան համար արժանացած է Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան եւ Գանատայի Թեմի Առաջնորդարանի օրհնութեան ու գնահատանքի պաշտօնական գիրքին, ձեռամբ Առաջնորդ Մեսրոպ Արք. Աշճեանի (այժմ վախճանեալ):

1977-1987 ստանձնած է Թորոնթոյի Հայ Կեդրոնի «Լրատու» պաշտօնաթերթի խմբագրութիւնը շուրջ տասը տարի եւ եօթը տարի վարած է «Հայ Կեդրոնի Ձայն»-ի հեռաձայնային լուրերու յայտագիրը՝ որպէս խմբագիր եւ խօսնակ:

Գրիգոր Հոթոյեան իր հայերէնի հմտութիւնը ձեռք բերած է ինքնաշխատութեամբ, հետեւած է հայագիտական դասընթացներու, քաջալերուած՝ որպէս գրող դաստիարակուած է հայ գրագէտներ Անդրանիկ Ծառուկեանի, Սիմոն Սիմոնեանի, Եղուարդ Պոյաճեանի, Արմէն Անոյշի (Մարաշլեան), Մինաս Թէօլէօլեանի, Կարօ Սասունիի, Շաւարշ Միսաքեանի, եւ որպէս դաշնակցական՝ 1946-էն ի վեր դաշնակցական գործիչներ Հրաչ Փափագեանի, Միհրան Հերարդեանի, Լուստեր Մասպանաճեանի, Յարութիւն Չազրբեանի, հերոսածին Դրոյի եւ սասունցի Ֆետայիներու շուրջին տակ եւ ուխտած է ծառայել Հայ ազգին, դառնալով ուխտեալ դաշնակցական, միշտ մնալով գրականութեան պատնէշին վրայ աւելի քան 60 տարիներ:

Իր բանաստեղծութիւնները, յօդուածներն ու պատմուածքները լոյս տեսած են Սփիւռքի գանազան թերթերու մէջ:

Իր բանաստեղծութեան առաջին հատորը՝ «Սիրտը Ափին Մէջ» լոյս տեսած է Թորոնթօ, 1987-ին, ապա, 2002-ին՝ «Նուիրում» հատորը, 2004-ին՝ «Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» եւ 2007-ին՝ «Ճանապարհ» ծաւալուն հատորը՝ 874 էջ:

«Ճանապարհ» ծաւալուն հատորը չեմ կրնար որեւէ ձեւով վերլուծել, սակայն իբր արխիւային հրատարակութիւն՝ մեծ է անոր դերն ու արժէքն հայ գաղութներու կեանքին մէջ: Հոն հայ ընթերցողը կամ պատմաբանը կը գտնէ ու կը սուզուի պատմութեան գիրկը, գտնելով

աղբիւրը Թորոնթոյի Հայ գաղութին, պատմական, ազգային, կրօնական, գաղափարական, մշակութային կեանքին, ինչպէս նաեւ Միջին Արեւելքի գաղութային կեանքին, ուր մասնակից կը դառնան գաղութներու պատմութեան դէպքերուն:

Մասնակցած է Հայաստանի Գրողներու Միութեան Համահայկական Ա. եւ Բ. (2002, 2004) Համաժողովներուն:

2005-ին ան արժանացած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին: 2004-ին՝ իր գործունէութեան 60-ամեակին առթիւ՝ Հայաստանի Գրողներու Միութեան շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան անդամակցութեան շնորհագիրին, իսկ 2001-ին՝ Հայաստանի Գրողներու Միութեան «Գրական Վաստակ» ոսկեայ մետալին:

Ան ամուսնացած է Շաքէին Հետ եւ ունի երկու զաւակ՝ Անդրանիկ եւ Անի:

Գրիչդ դալար, ընկեր Հոթոյեան:

ՍԱԳՕ ՂԱԶԱՐԵԱՆ  
Ատենապետ Ս. Աստուածածին  
Հայց. Առաք. Եկեղեցւոյ  
Հոգաբարձութեան

(«Մայրամուտի Ցոլֆեր» գիրքէն)



«Ի Խնդիր Բարոյական Ճշմարտութեան» գիրքի  
շնորհահանդէս-գինեձօնէն տեսարան մը



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ .....	9
- ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿՈՂՄԷ .....	11
- ՅԱՌԱՋԱԲԱՆ .....	13

### ● ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

- ԱՂՕԹՔԻՆ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ .....	19
- ՀԱԻԱՏՔԻՆ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ .....	24
- ՅԱՐԳԵՆՔ ՍԵՐ ՏԱՐԵՅ ՀԱՅՐԵՐԸ .....	29
- ՀԱՅ ՀԱՅՐԵՐՈՒՆ .....	32
- ՀԱՅՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ .....	35
- ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԳՈՒՐԳԷՆԸ .....	41
- ՀԵՐՈՍԱԿԱՆ ՍԷՐ ԴԷՊԻ ՄԱՅՐԸ .....	46
- ԻՆՉՊԷՊ ՊՏԱՆՔ ԱՐԱԲԱՑԱԾ ՄՕՐԱԲՈՅՐՍ .....	50
- ՔՐՏՆԱՇԱՀ ՆՈՒԷՐԸ .....	56
- ԽՈՐՏԱԿՈՒԱԾ ՍԷՐ .....	60
- ՃԱՐՊԻԿ ՀՆԱԿԱՐԿԱՏԸ .....	72
- ԽՈՇՈՐ ԿՂՊԱՆՔԸ .....	78
- ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՅՈՒՄ ՕԴԱՆԱԻՆ ՍԷՋ .....	80
- ՀԱՅ ԳԻՐՔԸ՝ ԿԵԱՆՔԸ ՀԱՅՈՒՆ .....	87
- ՀԱԼԷՊԻ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ .....	91
- ԿԱՐԵՑՑԻ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ՈԴԻՍԱԿԱՆԸ .....	100
- ԱՐԴԱՐ ԴԱՏԱԻՈՐԸ .....	105
- ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ՔԵՉ ԿԸ ՍՊԱՍԵՆՔ .....	109
- ՊԱՏՈՒԱԽՆԴԻՐ ԵՒ ՔԱՋ ՍԱՍՈՒՆՑԻՆ .....	112

- ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԱՂՆԻՔ .....	116
- ԱՐԱՔԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆ .....	121
- «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» .....	127
- ԱՆՀԱԲԱՏ ԱԽԱԶԱԿԸ՝ ՔԱՍԱՂԻԷԼ, ՀԱԲԱՏԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ .....	130
- ԱՄԷՆ ՉԱՐԻՔԻ ՏԱԿ ԲԱՐԻՔ ՄԸ ԿԱՅ .....	136
- ԱՂՔԱՏԸ ԱՂՔԱՏԻՆ ՕԳՆԵԼՈՎ ՀԱՐՍՏԱՅԱԻ .....	140
- ԱՊՈՒ ՍԱՅԻՏ ՊԱՐԻԻ .....	145
- ԱՊԵՐԱԽՏ ԶԱԽԱԿԸ .....	153
- ԱՊՏԻՒԼ ԱՂԱՅԻ ԴՐԱԽՏԸ .....	157
- ՀԱԶԱՐԱՆ ՊԼՊՈՒԼ ՍՈԽԱԿԸ ԵՐԳԵԼՈՎ ԿԸ ԲՈՒԺԷ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԿԱՅՄԸ .....	161
- «ՄԱՐԴՈՒՄ ԿԵԱՆՔԸ ԿԱԽՈՒԱԾ ՉԷ ԻՐ ԻՆՉՔԵՐՈՒ ԿՈՒՏԱԿՈՒՄԷՆ» .....	166
- ՄԿՐՏԻՉ ԵՒ ՍԱՐԳԻՍ .....	171
- ՄՈՒՐԱՅԿԱՆԸ .....	176
- ՄԻՒՌՆԱԲՈՅՐ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԵԱՆՔ ՄԸ .....	179
- ՆԻԹԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ .....	185
- ՈՒԺԻ ՆԵՐՇՆՉՍԱՆ ԱՂՔԻԻՐԸ .....	190
- ԲԱՐԵԳՈՐԾ ՊԱՅՏԱՐԸ .....	194
- ԲԱՐԵԳՈՐԾ ՀԱՅՐՍ .....	199
- ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՍԷՐ .....	208
- ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԸ ՀԵՏԵԻԱՆՔՆԵՐԸ .....	211
- ԲԱՐԻՔ ԳՈՐԾԵԼ ԱՄԷՆ ՕՐ .....	215
- ԲԱՐԻՔ ՑԱՆՈՂԸ ԲԱՐԻՔ ԿԸ ՀՆՁԷ .....	219
- ՄԵՆՔ ԱԼ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՑԱՆՔ .....	222
- ՓՐԿԱՐԱՐ ԽԱՉԸ .....	227
- ՇՈՒՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ .....	232
- «ԴՈՒՔ ՀՐԱՇԱԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԷՔ» .....	237
- ԴՐԱՄԻՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱԶՆԻԻ ԶԳԱՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ .....	242

- ՑԱԽԱԼԻ ԱՐՁԱԿՈՒՐԳ ՄԸ .....	247
- ՉՈՒԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ .....	253
- ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԵՐՈՒՆ ՎՆԱՄՆԵՐԸ .....	257
- ԵՐԱԽՏԱԳԷՏ ՀԱՅԸ .....	262
- ԵՐԱՆԻ՝ ՉՏԵՍԱԾ ՀԱՒԱՏԱՑՈՂՆԵՐՈՒՆ .....	266
- ԶՕՐԵՂ՝ ԱԻԵԼԻ ՔԱՆ ԿՐԱԿԸ .....	271
- ԳՈՂ ԻՍԱՀԱԿԻՆ ՎԱԽՃԱՆԸ .....	275
- ԻՆՉՊԷ՞Ս ՀԻՄՆՈՒԵՑԱԻ ՌԱԳԳԱՅԻ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԸ .....	279
- ԵՕԹՆԱՆ ՅԱԿՈՔ .....	285
- ԹՈՐՈՆԹՈՅԷՆ ԵՐԵՒԱՆ, ԳՈՐԻՍ, ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ	290
- ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ, ՄՏԱԻՈՐԱԿԱՆ, ԳՐՈՂ, ՊԱՏՄԱՔԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ .....	299
- ՀԱՅԱՑԱԾ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ ՄԻՍ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ	307
- ԱՆՁՆՁԵԼԻ ՅՈՒՇԵՐ ԵՐԱՆԱՇՆՈՐՀ Տ. Տ. ԶԱՐԵՀ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ .....	313
- ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՉԱՐ ԵՂՈՂԸ ԵՐԲ ՄԵԾՆԱՅ՝ ԽԵԼՕՔ ԵՒ ԱՁՆԻՒ ԿԸ ԴԱՌՆԱՅ .....	318
- ԼԻԲԱՆԱՆԻ ՔՈՒՐԱՅԻ ՇՐՁԱՆԷՆ ՀՕՐՍ ՀԵՏ ՀԱՍԱՆՔ ՍԱՄՆՈՅ ԼԻՃԵՐԸ ԵՒ ՀԱՅԴՈՒԿԱՊԵՏԵՐ՝ ՄԱԿԱՐԻ, ԳԱԼԷԻ, ԳԷՈՐԳԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏՆՉՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՒ ԿԵԱՆՔԻՆ .....	322
- ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ .....	341

● **ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ**

- ՅԱՌԱՋԱՔԱՆ՝ «ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ՝ԱՊՐԻՆՔ» ՀԱՏՈՐԻՆ	347
- ՅԱՌԱՋԱՔԱՆ՝ «ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄԱՆ» ԳԻՐՔԻՆ .....	351
- ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԱՆԽՈՆՁ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ .....	354

- ԳՐԱԽՕՍԱԿԱՆ ՊՐՆ. ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅՅԵԱՆԻ  
«ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» ԳՐՔԻՆ ..... 358
- ԼՈՒՍԱԻՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ  
ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅՅԵԱՆԻ 80-ԱՄԵԱԿ ..... 368
- ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆ ԳՐԻԳՈՐ  
ՀՈԹՈՅՅԵԱՆԻՆ ԲԱՐԻ «ՃԱՆԱՊԱՐՀ» ..... 371
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅՅԵԱՆ ԲԱՐՈՅԱԽՕՍ ՈՒՄՈՒՑԻՉԸ 375
- ՆԱՍԱԿ՝ ԲԺ. ՕՀԱՆ ԹԱՊԱՔԵԱՆԵՆ ..... 379
- ՆԱՍԱԿ՝ ՎԱՐԴԳԷՍ ՍԻՆԱՆԵԱՆԵՆ ..... 380
- ՎԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ... ..... 381
- «ՃԱՃԱՆՉՆԵՐ» ..... 382
- ՆԱՍԱԿ ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆԵՆ ..... 385
- ՆԱՍԱԿ ԿԱՐՕ ՊԵՏՐՈՍԵԱՆԵՆ ..... 386
- ՆԱՍԱԿ՝ ՌՈՒԲԵՆ Գ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆԵՆ ..... 387
- ԳՐՈՂԻ ԿԵԱՆՔԸ ԱՇԽԱՏԱՆՔ Է ..... 388
- ՆԱՍԱԿ ՀԱՅ ԳՐԱԳԵՏԻՆ ..... 390
- Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ..... 392
- ՅՈՒՑԵԼԵԱՆ ..... 394
- ԽՕՍՔ ՀԱՅՐԱԿԱՆ ..... 395
- ԳՐԻԳՈՐ ՀՈԹՈՅՅԵԱՆ ..... 396



## Հեղինակին գործերը՝

1. «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՉ» 1987
2. «ՍԻՐՏԸ ԱՓԻՆ ՄԷՉ» (Բ. տպագրութիւն) 1990
3. «ՆՈՒԻՐՈՒՄ» (Երեւան) 2002
4. «ՆՈՒԻՐՈՒՄ» (Բ. տպագրութիւն, Թորոնթօ) 2003
5. «Ի ԽՆԴԻՐ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ» 2005
6. «ՃԱՆԱՊԱՐՀ» 2007
7. «ՃԱՆԱՊԱՐՀ» (Երեւան) 2007
8. «ՃԱՃԱՆՉՆԵՐ» 2010
9. «ԱՆՑԵԱԼԻ ՅՈՒՇԵՐՈՎ Կ'ԱՊՐԻՆՔ» 2011
10. «ԵՕԹՆԵՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒԱՆ» 2014
11. «ՍԱՅՐԱՄՈՒՏԻ ՅՈՒՔԵՐ» 2016
12. «ՀԱՅԱՇՈՒՆՉ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ» 2017

*Ստանալու համար դիմել՝*

Krikor Hotoyan  
34 Leith Hill Rd., Apt. 511  
North York, Ontario, Canada,  
M2J 1Z4

*Հեղինակի գիրքերուն կայքէջը՝*

[www.krikorhotoyan.ca](http://www.krikorhotoyan.ca)

*Հեռաձայն՝ (416) 494-1921*

*Բջիջային՝ (416) 420-2524*



## ՀԵՂԻՆԱԿԻՆ ՍԱՍԻՆ

Գրիգոր Հոթոյեան ծնած է Հալէպ, 5 Օգոստոս 1927-ին, արմատներով՝ Սասունցի: Աւարտած է Հալէպի ազգային Սահակեան վարժարանը, ապա հետեւած է հայագիտական դասընթացքներու: Եղած է գրաշար, խմբագիր, ուսուցիչ եւ տնօրէն ազգային ամէնօրեայ, ամառնային եւ կիրակնօրեայ վարժարաններու մէջ՝ Սուրիա եւ Գանատա:

Երիտասարդական տարիներէն սկսեալ, բանաստեղծութիւններով (ընդհանրապէս Գրիգոր Վարդգէս գրական անունով), յօդուածներով (զանազան անուններով), պատմուածքներով եւ թղթակցութիւններով աշխատակցած է Սփիւռքի եւ Հայաստանի բազմաթիւ օրաթերթերու, շաբաթաթերթերու, ամսագիրներու եւ պարբերաթերթերու:

Իր ազգային, գրական եւ եկեղեցական գործունէութիւններուն համար արժանացած է բազմաթիւ զնահատագրերու պետական եւ ազգային զանազան հաստատութիւններէ, որոնց շարքին Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետի «Գիր Օրհնութեան եւ Գնահատաց»-ին՝ 1984-ին:

Իսկ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Հայրապետի Թորոնթօ այցելութեան ընթացքին, 1 Հոկտեմբեր 2005-ին, արժանացած է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

4 Յուլիս 2004-ին, իր գրական գործունէութեան 60-ամեակին առթիւ, Հայաստանի Գրողներու Միութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի եւ Միջազգային Ռազմածովագիրներու Միութեան Հայաստանի կազմին կողմէ կազմակերպուած ցերեկոյթին, արժանացած է «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի շնորհագիրին եւ Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան անդամակցութեան:

Գրիգոր Հոթոյեանի ծննդեան 80-ամեակին եւ «Ճանապարհ» գրքի հրատարակութեան առթիւ, կազմակերպութեամբ Հայաստանի Գրողներու Միութեան, Միջազգային Ռազմածովագիրներու Ընկերակցութեան հայկական վարչութեան, Մեծ Եղեռնի եւ Հայոց Ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-հիմնարկի, «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան եւ «Աւետիք Իսահակեան» քաղաքային գրադարանին, Հինգշաբթի, 23 Օգոստոս 2007-ին, Հայաստանի Հանրապետութեան Գրականութեան Ակադեմիայի «Մանուկ Աբեղեան»-ի անուն զահիճին մէջ կատարուած ձեռնարկին, Հոթոյեան զնահատուած է Հայաստանի Գրողներու Միութեան նախագահութեան ոսկեայ մետալով եւ թիւ 44 փաստատետրով, ինչպէս նաեւ «Զօրավար Անդրանիկ» Հայոց Համազգային Միութեան ոսկեայ մետալով, միութեան ընտրեալ անդամի վաւերատետրով եւ Զօրավար Անդրանիկի եւ միութեան յուշանկարներով: